ՆԱԶՈՎՐԵՑՈՒ
ԵԿԵՂԵՑԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2017-2021

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ԾԵՍԵՐ

Copyright 2017
by Nazarene Publishing House
Published by the authority of
the Twenty- ninth General Assembly
held in Indianapolis, Indiana, USA
25-29 June 2017

Հրատարակչական հանձնաժողով
ԴԻՆ Դ. ԲԼԵՎԻՆՍ
ՍՏԵՆԼԻ Ջ. ՌՈԴԵՍ
ԹԵՐՐԻ Ս. ՍՈՎԴԵՆ
ՋԵՅՄՍ Վ. ՍՊԵԱՐ
ԴԱՎԻԴ Պ. ՎԻԼՍՈՆ

Հայերեն լեզվի թարգմանության հանձնաժողով
Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ԱՐԾՐՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ (1-99)

ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (100)

ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (200)

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱ (300)

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (400)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (500)

ԴԱՏԱԿԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ (600)

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ (700)

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՍԻԱՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ / ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ՕՐԵՆՔՆԵՐ
(800)

ՁԵՎԵՐ (800)

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ (900)

ՆԱԽԱԲԱՆ

«Նազովրեցու Եկեղեցում Միսիան սահմանվում է հետևյալ կերպ՝ պատրաստել Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում»:

Նազովրեցու Եկեղեցու գլխավոր արժեքներն այն են, որ մենք քրիստոնյաներ ենք, հավատում ենք սրբությանը և միսիային:

Նազովրեցու Եկեղեցու յոթ Բնութագրերն են՝ Գիտակցված Երկրպագությունը, Համահունչ Աստվածաբանությունը, Ավետարանելու Կրքոտ Ցանկությունը, Նպատակաուղղված Աշակերտություն, Եկեղեցու Զարգացում, Փոխակերպող Առաջնորդություն և Նպատակասլաց Գթասրտության Ծառայություն:

«Նազովրեցու Եկեղեցու գլխավոր նպատակն է ընդարձակել Աստծո Արքայությունը, քրիստոնեական սրբությունը պահպանելու և քարոզելու ճանապարհով, ինչպես գրված է Սուրբ Գրքում»:

«Նազովրեցու Եկեղեցու գլխավոր նպատակներն են. «քրիստոնյաների սուրբ հաղորդակցություն, մեղավորների դարձի գալ, հավատացյալների լիակատար սրբագործում, նրանց աճը սրբության մեջ, կյանքը նոր կտակարանային եկեղեցու հոգևոր ուժի պարզությամբ, ինչպես նաև Ավետարանի քարոզչությունը ամեն մարդու»: (19)

Նազովրեցու Եկեղեցին ծառայում է տարածելով ամբողջ աշխարհում Աստծո Արքայությունը, Ավետարանը քարոզելու և սովորեցնելու միջոցով: Մեր հստակ սահմանված առաքելությունն է պահպանել և հռչակել քրիստոնեական սրբությունը, որը ներկայացված է Սուրբ Գրքում, մեղավորների ապաշխարհությամբ, հավատքից ընկածների վերադարձով, ինչպես նաև հավատացյալների ամբողջական սրբացմամբ:

Մեր նպատակը հոգևոր է, ավելի ճիշտ ավետարանչություն, որպես պատասխան մեր Տիրոջ Մեծ Հանձնարարությանը. «Գնացե՛ք, սովորեցրեք բոլոր ազգերին» (Մատթեոս 28:19, Հովհաննու 20:21, Մարկոս 16:15): Մենք հավատում ենք, որ այդ նպատակը կարելի է իրականացնել համաձայնեցված քաղաքականության և մեթոդների միջոցով, ներառյալ հավատքի դրույթները և ժամանակի փորձությունը անցած բարոյականության չափանիշերը և ապրելակերպը:

2017–2021 թթ. Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի այս հրատարակությունը ամփոփում է եկեղեցու պատմության կարճ նկարագիրը, Եկեղեցու Սահմանադրությունը, եկեղեցու մասին մեր հասկացողությունը, Քրիստոնեական Վարքագծի Պատվիրաններ ժամանակակից հասարակության կարևոր հարցերի մասին, տեղական, շրջանային և ամբողջ եկեղեցու մակարդակով կառավարման և կազմակերպման հարցեր:

Գլխավոր Ասամբլեան հանդիսանում է Նազովրեցու Եկեղեցու իշխանության գերագույն օրենսդիր և ուսմունք ձևավորող մարմինը: Այս Ուղեցույցը պարունակում է պատգամավորների որոշումները և տեսակետները, որոնք ընտրվել են եկեղեցու այցելուներից և ծառայողներից Քսանիններորդ Գլխավոր Ասամբլեա, որը տեղի է ունեցել 2017 թվականի, Հունիսի 25–29 -ը Ինդիանա նահանգի Ինդիանապոլիս քաղաքում, այդ պատճառով այն հանդիսանում է պաշտոնական գործող ուղեցույց: Քանի որ, այստեղ պաշտոնապես ներկայացված է հավատքի դրույթները և եկեղեցու

պրակտիկ գործունեությունը, որոնք համապատասխան են Սուրբ Գրքի ուսմունքին և մենք ակնկալում ենք, որ ամբողջ աշխարհում մեր մարդիկ կընդունեն այս հավատքի դրույթները, և նրանցում պարունակող ուղեցույցներն ու օգնությունը սուրբ կյանք ապրելու համար: Ձևականորեն ընդունելով Նազովրեցու Եկեղեցու անդամության ուխտը և այս սկզբունքներին չհետևելը վնասում է եկեղեցու վկայությանը, պղծում է նրա խիղճը և քայքայում է հավատացյալների համայնքը, որոնք անվանում են իրենց Նազովրեցիներ:

Նազովրեցու Եկեղեցում կառավարումը ունի իր տարբերիչ առանձնահատկությունները: Այն ներկայացուցչական է, ոչ լրիվ եպիսկոպոսական, բայց և ոչ կոնգրեգացիոն: Քանի որ, այցելուները և ծառայողները ունեն հավասար հեղինակություն, եկեղեցու խորհրդակցական և օրենսդրական բաժիններում, ապա գոյություն ունի անհրաժեշտ արդյունավետ բալանս: Մենք դիտարկում ենք դա ոչ միայն որպես եկեղեցում ծառայության հնարավորություն, այլ այցելուների և ծառայողների պարտականություն:

Շատ կարևոր է նվիրվածությունը և նպատակի պարզությունը: Սակայն կրթված և գիտեցող մարդիկ, որոնք միաբան հետևում են համաձայնեցված կարգին և մեթոդներին, կարող են արագ և արդյունավետ լայնացնել Արքայությունը և բարելավել Քրիստոսի մասին իրենց վկայությունը: Հետևաբար, մեր եկեղեցու բոլոր անդամները պետք է ծանոթանան տվյալ Ուղեցույցի հետ, եկեղեցու պատմության, վարդապետությունների և կատարյալ նազովրեցու բարոյական վարքի կանոնների հետ: Էջերում ներկայացված կանոնագրերի պահպանումը, կդաստիարակի հնազանդություն և հավատարմություն Աստծո և եկեղեցու նկատմամբ, կուժեղացնի մեր հոգևոր աշխատանքի արդյունավետությունը և կատարողականությունը:

Աստվածաշնչով, որը հանդիսանում է մեզ համար բարձրագույն Հեղինակություն, որի վրա լույս է սփռում Սուրբ Հոգին և մեր Ուղեցույցով, պաշտոնապես համաձայնեցված հավատքի դրույթներով, համատեղ գործունեությամբ և կառավարմամբ, մենք ուրախությամբ և անկոտրում հավատքով դեպի Հիսուս Քրիստոսը, հայացք ենք ուղղում դեպի առաջիկա չորս տարիները:

***Գլխավոր Սուպերինտենդենտների Գլխավոր Խորհուրդ*՝ Ֆիլամաո Ֆ. Չամբո, Դավիթ Ու. Գրավես, Եվգենիո Ռ. Դուարտ, Դավիթ Ա. Բյուսիկ, Գուստավո Ա.Կրոկեր, Կարլա Դ. Սանբերգ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

ՄԱՍ I

Պատմական ակնարկ 12

ՄԱՍ II

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն 20

Հավատքի դրույթները 20

Եկեղեցի 29

Կազմակրպման և կառավարման մասին հոդվածներ 31

Փոփոխություններ և լրացումներ 35

ՄԱՍ III

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ

Ա. Քրիստոնեական կյանք 36

Բ. Մարդկային կյանքը սրբազան է 40

Գ. Մարդկային սեռականություն և ամուսնություն 43

Դ. Քրիստոնեական ծառայություն 46

Ե. Եկեղեցու ծառայողները 48

Զ. Ժողովների անցկացման կարգը 48

Է. Քրիստոնեական Վարքագծի պատվիրաններում փոփոխությունների ներմուծում 48

ՄԱՍ IV

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 50

1. ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ 51

Ա. Կազմակերպում, Անվանում, Գրանցում, Անշարժ Գույք, Սահմանափակումներ, Միավորում, Լուծարում 51

Բ. Անդամությունը տեղական եկեղեցում 55

Գ. Եկեղեցու անդամության և ավետարանչության հանձնաժողով 57

Դ. Անդամության փոփոխությունը տեղական եկեղեցում 57

Ե. Անդամության դադարեցումը տեղական եկեղեցում 58

Զ. Տեղական եկեղեցու ժողովներ 58

Է.Եկեղեցական տարի 61

Ը. Հովվի կանչ 61

Թ. Տեղական եկեղեցի/հովվական հարաբերություններ 64

Ժ. Տեղական եկեղեցի/հովիվ փոխհարաբերությունների թարմացում 65
Ի. Տեղական եկեղեցական խորհուրդ 67
Լ. Տեղական եկեղեցու ծառայողներ 72
Խ. Տեղական եկեղեցու հոգաբարձուներ 73
Ծ. Կիրակնօրյա դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Խորհուրդ 78
Կ. Տեղական եկեղեցու Միջազգային Երիտասարդական Կազմակերպության Խորհուրդ 78
Հ. Տեղական եկեղեցու մանկապարտեզներ և տարրական դպրոցներ 76
Ձ. Նազովրեցու Համաշխարհային Միսիաների Տեղական Ընկերակցություն 79
Ղ. Տեղական եկեղեցու համար ֆինանսական խնդրանքներ և արգելքներ 80
Ճ. Եկեղեցու անվան օգտագործում 80
Մ. Եկեղեցու կողմից հովանավորվող կազմակերպություն 80
Յ. Տեղական եկեղեցու աշխատակիցներ 81
2. ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 83
Ա. Շրջանի անվանումը և սահմանները 83
Բ.Ասամբլեայի անցկացման ժամանակը և անդամությունը 86
Գ. Շրջանային ասամբլեայի գործունեությունը 88
Դ. Շրջանային ասամբլեայի արձանագրությունները 92
Ե. Շրջանային սուպերինտենդենտ 93
Զ. Շրջանային քարտուղար 98
Է. Շրջանային գանձապահ 99
Ը. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդ 99
Թ. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդ 103
Ժ. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդ 105
Ի. Ավետարանչության Շրջանային Խորհուրդ կամ տնօրեն 106
Լ. Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդ 107
Խ. Շրջանային ասամբլեայի ֆինանսական հանձնաժողով 107
Ծ. Շրջանային խորհրդատվական հանձնաժողով 108
Կ. Շրջանային կապելլան 108
Հ. Կիրակնօրյա դպրոցի և աշակերտության Միջազգային ծառայության Շրջանային Խորհուրդ 108
Ձ. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Շրջանային Ընկերակցություն 110
Ղ. Նազովրեցու Համաշխարհային Միսիաների Շրջանային Ընկարեկցություն 111
Ճ. Շրջանի վճարովի աշխատակիցները 111
Մ. Շրջանի լուծարումը 112
3. ԳԼԽԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 112
Ա. Գլխավոր Ասամբլեայի կազմակերպումը և գործառույթները 112

Բ. Գլխավոր Ասամբլեայի Անդամները 113
Գ. Գլխավոր Ասամբլեայի անցկացման ժամանակը և տեղը 114
Դ. Գլխավոր Ասամբլեայի արտահերթ գումարումները 114
Ե. Գլխավոր Ասամբլեայի Նախապատրաստման Հանձնաժողով 114
Զ. Գլխավոր Ասամբլեայի գործունեությունը 115
Է. Գլխավոր Սուպերինտենդենտներ 116
Ը. Գլխավոր սուպերինտենդենտները թոշակում կամ պատվավոր թոշակ 117
Թ. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդ 118
Ժ. Գլխավոր քարտուղար 120
Ի. Գլխավոր գանձապահը 121
Լ. Գլխավոր Խորհուրդ 121
Խ. Կենսաթոշակային պլաններ 127
Ծ. Նազովրեցու Եկեղեցու” միավորման մասնաճյուղերը 128
Կ. Նազովրեցու Եկեղեցու Հրատարակչության Խորհուրդ 129
Հ.Քրիստոնեական վարքի հարցերով հանձնաժողով: 129
Ձ. Աստծուց կանչված ավետարանիչների հետաքրքրությունները ներկայացնող Հանձնաժողով 130
Ղ. Կրթության միջազգային Խորհրդատվական Խորհուրդ 130
Ճ. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցություն 130
Մ. Գլոբալ Նազովրեցու Համաշխարհային Միսիաների Գլոբալ Խորհուրդ 131
Յ. Ազգային Խորհուրդներ 132
Ն. Տարածաշրջան 133

ՄԱՍ V
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. Եկեղեցի քոլեջ/համալսարան 136
Բ. Նազովրեցու Միջազգային կրթական կոնսորցիումը 138
Գ. Կրթության Միջազգային Խորհուրդ 138

ՄԱՍ VI
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՆՉԸ ԵՎ ՈՐԱԿՆԵՐԸ 141
2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ 142
Ա. Այցելուների ծառայություն 142
Բ. Հոգևորականների ծառայություն 143

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԵՐԸ 144
Գ. Ադմինիստրատոր 144
Դ. Կապելլան 144
Ե. Սարկավագուհի 144

Զ. Ուսուցիչ 145
Է. Ավետարանիչ 145
Ը. Քրիստոնեական կրթության ծառայող 146
Թ. Երաժշտական ծառայություն 146
Ժ. Միսիոներ 146
Ի. Հովիվ 147
Լ. Մայր եկեղեցու հովիվ 149
Խ. Հովվի ժամանակավոր պաշտոնակատար 149
Ծ. Երաժշտական ծառայության ավետարանիչ 150
Կ. Հատուկ ծառայություն 150

IV. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒ 150
Ա. Կրթության Հիմունքները Ձեռնադրված Ծառայողների համար 150
Բ. Ծառայողների Ձեռնադրության համար Կրթական Հիմունքների Մշակութային Ադապտացիան. 153
3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ և ՄԱՆԴԱՏՆԵՐԸ 154
Ա. Տեղական ծառայող 154
Բ. Լիցենզավորված ծառայող 155
Գ. Սարկավագ 158
Դ. Երեցներ 159
Ե. Մանդատի ճանաչում 160
Զ. Ծառայողը թոշակի մեջ 160
Է. Ծառայողի տեղափոխություն 161
Ը. Ընդհանուր կանոններ 162
Թ. Մանդատի հանձնումը պահպանման համար, հրաժարական, պաշտոնաթողություն կամ մանդատի զրկում: 167
Ժ. Հոգևորականության ներկայացուցիչների վերականգնում 170

ՄԱՍ VII
ԴԱՏԱԿԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ

I. ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 176
II. ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔԻ ԴԵՄ ՊԱՏԱՍԽԱՆ 176
III. ԵԿԵՂԵՑՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԵՄՔԻ ԱՆՎԱՅԵԼ ԱՐԱՐՔԻ ԴԵՄ ՌԵԱԿՑԻԱ 177
IV. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԴԵՄ 171
V. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՄ 179
VI. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 182
VII. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ 182
VIII. ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ 183
IX. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ 183
X. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔ 183

ՄԱՍ VIII

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

I. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
700. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ 186
701. ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ 187
702. ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ 188
II. ԾԵՍԵՐ 189
703. ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ 189
704. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ 190
705. ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ 192
706. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 194
707. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼԸ 196
708. ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 198
709. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ 199

ՄԱՍ IX

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՍԻԱՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ / ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ՕՐԵՆՔՆԵՐ

1. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 202
2.ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՍԻԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 232
3.ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ և ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ 248

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

3. ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 258
4. ՄԵՐ ԺԱՄԱՆԿԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՑՔՆԵՐ 260

ՄԱՍ I

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՍԼԻԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ նա հանդիսանում է Քրիստոսի Եկեղեցու «միացյալ, սուրբ, տիեզերական և առաքելական» ճյուղերից մեկը: Նա համարում է, որ Աստծո ժողովրդի պատմությունը, որը գրված է Հին և Նոր Կտակարաններում իր սեփական պատմությունն է և իրեն համարում է, որ նա պատկանում է Աստծո ժողովրդին և Քրիստոսի Եկեղեցուն իր բոլոր արտահայտության ձևերով: Մեր հարանվանությունը ընդունում է քրիստոնեության առաջին հինգ դարերի վարդապետական ուսմունքները, որպես սեփական հավատքի արտահայտություն: Մենք մեզ նույնականացնում ենք պատմական եկեղեցու հետ, քարոզելով խոսքը, կատարելով խորհուրդներ, աջակցելով առաքելական հավատքի և գործունեության ծառայությունը և կոչ է անում Քրիստոսի նման կյանքի և ծառայության: Մեր հարանվանությունը հնազանդվում է սուրբ կյանքի և ամբողջապես Աստծուն նվիրվելու աստվածաշնչյան կոչին, որը մենք հռչակում ենք ամբողջական սրբագործման վարդապետության միջոցով:

Մեր քրիստոնեական ժառանգությունը մեզ փոխանցվել է 16-րդ դարի անգլիական Ռեֆորմացիայի և 18-րդ դարի Վեսլիական վերածննդի միջոցով: Շնորհիվ Զոն և Չարլզ Վեսլիների քարոզների, մարդիկ ամբողջ Անգլիայում, Շոտլանդիայում, Իռլանդիայում և Ուելսում հրաժարվում էին մեղքից և քրիստոնեական ծառայության համար ուժ էին ստանում: Այդ արթնությունը բնութագրվում էր այցելուների քարոզով, վկայությամբ, հետևելով քրիստոնեական դիսցիպլինաներին և անկեղծ աշակերտների խմբերին, որոնք հայտնի էին որպես “ընկերություններ”, “դասեր” և “խմբեր”:

Վեսլիական վերածնունդի աստվածաբանական կողմնորոշիչներն էին՝ հավատքով արդարացում շնորհքով, սրբագործում կամ քրիստոնեական կատարելություն նույնպես հավատքով շնորհքի միջոցով, և Սուրբ Հոգու վկայություն շնորհքի հավաստիացման մասին: Զոն Վեսլիի աստվածաբանության ընդգրկում էր ամբողջական սրբագործության մասին ուսմունքը, որպես քրիստոնեական կյանքի համար անհրաժեշտ Աստծո օրհնություն: Այդ ուսմունքը տարածվեց ամբողջ աշխարհով մեկ: 1784 թվականին Հյուսիսային Ամերիկայում կազմակերպվեց Մեթոդական Եպիսկոպոսական Եկեղեցին, որի նպատակն էր «փոխել այդ մայրցամաքը և տարածել սրբության մասին աստվածաշնչյան գաղափարը»:

Քրիստոնեական սրբության ուսմունքի մասին, կրկին ակտիվ քարոզչություն սկսվեց 19-րդ դարի կեսերին:
Տիմոթի Մերրիտը Բոստոնից, ԱՄՆ, լինելով «Քրիստոնեական Կատարելության Ուղեցույց» ամսագիրի խմբագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց այդ ուսմունքի նկատմամբ: Ֆիբի Պալմերը Նյու Յորքից ԱՄՆ, առաջնորդեց «Երեքշաբթի օրվա հանդիպումներ Սրբությունը տարածելու համար» և դարձավ պահանջված հեղինակ, խմբագրող և քարոզիչ: 1867 թվականին մեթոդիստական քարոզիչներ Զոն Ա. Վուդի և այլոց նախաձեռնությամբ Վայնլենդում, Նյու

Զերսի նահանգ, ԱՄՆ, տեղի ունեցավ առաջին շարունակական սրբության ծառայությունների շարքը, որոնք ամբողջ աշխարհում վեսլիական սրբության ուսմունքի մասին նոր հետաքրքրություն առաջացրին :

Վեսլիական և Ազատ Մեթոդիստները, Փրկության Բանակը, Եղբայրությունը, Մենոնիտները և Կվակերները հատուկ ուշադրություն էին դարձնում քրիստոնեական սրբության վրա: Ավետարանիչները հասցրեցին այդ շարժումը մինչև Գերմանիա, Անգլիա, Սկանդինավիա, Հնդկաստան և Ավստրալիա: Կազմավորվեցին նոր սրբության եկեղեցիներ, ներառյալ Աստծո Եկեղեցին (Անդերսոն, Ինդիանա, ԱՄՆ): Այդ ջանքերի շնորհիվ աճում էին սրբության եկեղեցի-ները, քաղաքային միսիաները և միսիոներական ասոցացիաները: Նազովրեցու Եկեղեցին ծնվեց, այդ սկսնակ խմբերը մեկ սուրբ եկեղեցու մեջ միաբանելու ձգտումով:

Միաբանությունը սրբության մեջ

1887 թվականի Ֆրեդ Հիլլերին կազմակերպեց Ժողովրդական Ավետարանական Եկեղեցին (Ռոդ Այլենդի, Պրովիդենս, ԱՄՆ): 1888-ին դրան հետևեց Միսիայի Եկեղեցին (Լինն, Մասաչուսետս , ԱՄՆ): 1890 թվականին նրանք Նոր Անգլիայի այլ ութ համայնքների հետ կազմեցին Սրբության Կենտրոնական Ավետարանական Ասոցացիան: 1892-ին ձեռնադրվել է Աննա Ս. Խենսկոմը, Նազովրեցու Եկեղեցու տոհմածառի առաջին կին հովիվը: 1894-1895 թվականներին Վիլիամ Հովարդ Հուպլը Բրուկլինում, Նյու Յորք, հիմնադրեց երեք սրբության համայնքեր, որոնք ձևավորեցին Ամերիկայի Հիսունական Եկեղեցիների Ասոցացիան: Նազովրեցու Եկեղեցու այդ և մնացած հիմնադիրների համար «հիսունական» բառը «սրբություն» բառի հոմանիշն էր: 1896 թվականին Հիլլարիի և Հուպլի խմբերը միաբանվեցին և աշխատանքեր կազմակերպեցին Հնդկաստանում (1899), Կաբո-Վերդեյում (1901), իսկ միսիոներական աշխատանքների ղեկավար Քիրամ Ռեյնոլդսը համայնքներ կազմակերպեց Կանադայում (1902): 1907-ի սկզբին այդ խումբը տարածվեց Նոր Շոտլանդիայից մինչև ԱՄՆ-ի Այովա նահանգ:

1894-ին Ռոբերտ Հարրիսը Միլանում, Թեննեսի նահանգ, ԱՄՆ, կազմակերպեց Քրիստոսի Նոր Կտակարանի Եկեղեցին: Նրա այրին՝ Մերի Լի Կագլը, 1895 թվականին այդ ծառայությունը տարածեց արևմտյան Տեխասում: 1901 թվականին Չ.Բ. Զերինգանը, կազմակերպեց առաջին Սրբության Անկախ Եկեղեցին, Վան Ալստինում, Տեխաս նահանգ, ԱՄՆ: 1904-ին բոլոր այս եկեղեցիները միավորվեցին Ռայզինգ Ստարում, Տեխաս նահանգ, ԱՄՆ և ձևավորեցին «Քրիստոսի Սրբության Եկեղեցին»: 1908-ին այդ եկեղեցին տարածվել էր Ջորջիայից մինչև Նյու Մեքսիկո նահանգ, ԱՄՆ, ծառայելով կարիքավորներին ու լքվածներին, օգնելով որբերին և միայնակ մայրերին, ինչպես նաև կատարելով ծառայություններ Հնդկաստանում և Ճապոնիայում:

1895-ին Ֆիննես Ֆ.Բրիզզին և Զոզեֆ Պ. Ուիդնին, Լոս Անջելոսում, ԱՄՆ, մոտ հարյուր ծառայողների հետ միասին, կազմակերպեցին Նազովրեցու Եկեղեցին: Նրանք հավատում էին, որ քրիստոնյաները, սրբագործված հավատով, պետք է հետևեն Քրիստոսի օրինակին և քարոզեն ավետարանը աղքատներին: Նրանք հավատում էին, որ Քրիստոսի ծառայության պես, իրենց ժամանակը և փողը պետք է տրամադրվեր ծառայություններին, հոգիների փրկության և կարիքավորների կյանքը թեթևացնելու համար: Նազովրեցու Եկեղեցին տարածվել էր հիմնականում Ամերիկայի Արևմտյան ափի երկայնքով, բայց Իլինոյիս նահանգի արևելքում

նույնպես կային համայնքներ: Նրանք աջակցում էին Կալկատայի, Հնդկաստանի տեղի ժողովուրդներին և միսիոներական ծառայությանը:

1907-ի Հոկտեմբերին Հիսունական Եկեղեցիների Ասոցացիայի և Նազովրեցու Եկեղեցու ներկայացուցիչները հանդիպեցին ԱՄՆ-ի Իլինոյիս նահանգի Չիկագո քաղաքում, որպեսզի ստեղծեն եկեղեցու նոր կառավարման ձև, որը կհավասարակշռեր սուպերինտենդենտի ղեկավարությունը համայնքի իրավունքների հետ: Նոր եկեղեցին պետք է ունենար սուպերինտենդենտներ, որոնք պետք է հոգս տանեին գոյություն ունեցող եկեղեցիների և նոր ստեղծվող եկեղեցիների համար: Սուպերինտենդենտները պետք է աջակցեին և հոգ տանեին ձևավորված եկեղեցիների համար, կազմակերպեին և աջակցեին նոր եկեղեցիներին, բայց չպետք է միջամտեին միանգամայն կազմակերպված եկեղեցիների անկախ գործողությունների մեջ: Քրիստոսի Սրբության Եկեղեցու պատգամավորները նույնպես մասնակցում էին այդ հանդիպմանը: Առաջին Գլխավոր Ասամբլեան որոշեց, որ եկեղեցու անունը կազմված կլինի երկու կազմակերպությունների անուններից. Նազովրեցու Հիսունական Եկեղեցի: Բրիզին և Ռեյնոլդսը ընտրվեցին առաջին սուպերինտենդենտներ:

1908-ի Սեպտեմբերին «Սրբության Եկեղեցիների Միությունը» առաջնորդվելով Հ.Գ. Տրումբաուերի կողմից միավորվեց Նազովրեցու Հիսունական Եկեղեցուն: Հոկտեմբերի 13-ին հավաքվեց երկրորդ Գլխավոր Ասամբլեան, Տեխասի նահանգ Փայլոտ Պոյնտում «Քրիստոսի Սրբության Եկեղեցու» Գլխավոր Խորհրդի հետ: Այդ հանդիպման արդյունքում երկու եկեղեցիները միավորվեցին: Երեքշաբթի Հոկտեմբերի 13-ի առավոտյան, Ռ.Բ. Միտչը առաջարկություն կատարեց, իսկ Կ.Ու. Ռուտը աջակցեց նրան, որ «երկու եկեղեցիների միավորման գործը ավարտվի»: Այդ ուղղությամբ Բրիզին հետագա ջանքեր գործադրեց և առավոտյան 10:40-ին միաբանության առաջարկությունը միաձայն ընդունվեց:

1898-ին, ՄակԿլուրկանը գլխավորում էր Նեշվիլում, ԱՄՆ, ձևավորված Հիսունական Միսիան: Այդ խումբը Թենեսի նահանգում և հարևան նահանգներում միավորում էր սրբության մարդկանց: Նրանք ուղարկում էին հովիվներ և ուսուցիչներ Կուբա, Գվատեմալա, Մեքսիկա և Հնդկաստան: 1906-ին Գլազգոյում, Շոտլանդիա, Պարկհեդ Կոնգրեգացիոնալ Եկեղեցուց, Ջորջ Շարպը դուրս վռնդվեց իր եկեղեցուց, որովհետև նա քարոզում էր քրիստոնեական սրբության մասին վեսլիական վարդապետությունը: Նա հիմնադրեց Պարկհեդ Հիսունական եկեղեցին, կազմավորվեցին այլ նոր համայնքներ, և վերջիվերջո 1909-ի հաստատվեց Շոտլանդիայի Հիսունական Եկեղեցին: 1915-ին Հիսունական Միսիան և Շոտլանդիայի Հիսունական Եկեղեցին միավորվեցին Նազովրեցու Հիսունական Եկեղեցու հետ:

Հինգերորդ Գլխավոր Ասամբլեան (1919) փոխեց հարանվանություն պաշտոնական անունը, որպես «Նազովրեցու Եկեղեցի», որովհետև «Հիսունական» բառի մեջ սկսեցին նոր իմաստ դնել:

Գլոբալ Եկեղեցի

Նազովրեցու Եկեղեցու բնորոշ գծերը ձևավորվեց այն հիմնադիր եկեղեցիներով, որոնք միաբանվեցին 1915 թվականին: Այդ հատկանիշներն ունեին միջազգային բաղադրիչ: Այդ ժամանակ, Նազովրեցու Եկեղեցին գոյություն ուներ Արգենտինայում, Մեծ Բրիտանիայում, Գվատեմալայում, Հնդկաստանում, Կանադայում, Կաբո-Վերդե-ում, Չինաստանում, Կուբայում, Մեքսիկայում, Պերույում, Սվիզելանդում, Ճապոնիայում և ԱՄՆ-ում: 1930 թվականին այս

եկեղեցին հայտնվեց նաև Բարբադոսում, Մոզամբիկում, Պաղեստինում, Սիրիայում, Տրինիդատում, և Հարավային Աֆրկայում: Ազգային առաջնորդները այդ պրոցեսում կարևոր մաս էին կազմում, ներառյալ սուպերինտենդենտներ՝ Վ.Գ.Սատին (Մեքսիկա), Հիրոշի Կիտագավա (Ճապոնիա), Սամուիլ Բույբալ (Հնդկաստան): Եկեղեցու միջազգային բնավորությունը զարգանում էր այնքանով, թե որքան ուրիշ խմբեր էին միանում այդ հարանվանությանը:

1922 թվականին Դ.Գ. Մորրիսոնը, շատ ծառայողներ բերեց «Ծխականների Սրբության Ասոցացիայից» և մոտ 1000 անդամներ միաբանվեցին այդ եկեղեցուն, Դակոտայում, Մինիստեյում և Մոնտանայում: 1930-ականներին Ռոբերտ Չանգը, Նազովրեցու Եկեղեցի բերեց մի քանի կորեական հովիվներ և համայնքներ: 1945-ին Ավստրալիայում եկեղեցիները Ա.Ա.Է. Բերգի ղեկավարությամբ, միաբանվեցին Նազովրեցու Եկեղեցուն: Ալֆրեդո Դել Ռոսսոն իտալական եկեղեցիներին բերեց Նազովրեցու Եկեղեցի 1948-ին: Հարավային Աֆրիկայում «Հավատքի Միսիոներների Խեֆցիբա Ասոցացիան» և նրա կենտրոնական գրասենյակը, որը գտնվում էր Այովա նահանգի Թաբոր քաղաքում, նազովրեցիներին միացան 1950 թվականին:

Սրբության միջազգային Միսիան, որը հիմնադրվել էր Լոնդոնում 1907 թվականին, Դավիդ Թոմասի կողմից, սկսեց ակտիվորեն աշխատել Աֆրիկայի հարավում, Դավիդ Ջոնսոնի ղեկավարությամբ: 1952-ին Անգլիայի և Աֆրիկայի եկեղեցիները Զ.Բ.Մակլիգանի գլխավորությամբ, միացան նազովրեցիներին: 1934-ին Մեյնարդ Ջեյմսը և Ջեկ Ֆորդը, Անգլիայում, հիմնադրեցին «Գողգոթայի Սրբության Եկեղեցին» և միացան նազովրեցիներին 1955-ին: 1918-ին Ֆրենկ Գոֆֆի կողմից հիմնադրված «Ավետարանի Ծառայողների Եկեղեցին», միավորվեց Նազովրեցու Եկեղեցուն 1958-ին: Նիգերիացիները 1940-ին Ջերիմի Ու. Էկայդի գլխավորությամբ կազմակերպեցին տեղական Նազովրեցու Եկեղեցի և միաբանվեցին միջազգային եկեղեցուն 1988-ին:

Նազովրեցիները գիտակցաբար զարգացնում էին եկեղեցու այն մոդելը, որը տարբերում էր նրանց մյուս բողոքական եկեղեցիներից: Հարանվանության ապագա ձևի ուսումնասիրության համար 1976 թվականին ստեղծվեց հետազոտական հանձնաժողով: 1980 թվականին նա հարանվանությանը խորհուրդ տվեց անցկացնել միջազգային ծառայություններ (ինտերնա-ցիոնալիզացիա), հիմնվելով երկու սկզբունքների վրա:

Առաջին՝ ընդունվեց, որ Նազովրեցու Եկեղեցին և նրա տարածաշրջանները ամբողջ աշխարհով մեկ ներկայացնում են «հավատացյալների միջազգային հաղորդակցություն, որտեղ գոյություն ունի ամբողջական համաձայնություն իրենց ներքին մշակութային կոնտեքստի մեջ»: Երկրորդ՝ սահմանվեց, որ բոլորը նվիրված են մեկ «Նազովրեցու Եկեղեցու հատուկ միսիային», այսինքն՝ «տարածելու աստվածաշնչյան սրբության գաղափարը … որպես հավատքի հիմքերի գլխավոր էլեմենտ, որոնք չեն քննարկվում, որոնք պարզաբանում են թե ի՞նչ է իրենից ներկայացնում Նազովրեցու Եկեղեցու նույնականացումը»:

1980 թվականի Գլխավոր Ասամբլեան ընդունեց «միջազգային աստվածաբանական համաձայնություն» Հավատքի Դրույթների վերաբերյալ: Նա հաստատեց աստվածաբանական կրթության կարևորությունը բոլոր ծառայողների համար և նա կոչ արեց, որ կատարվի համապատասխան աջակցություն, ամբողջ աշխարհի կրթական հաստատություններին: Այդ

Ասամբլեան նազովրեցիներին որպես մեկ փոխկապակցված կառույցի կոչ արեց լինել հասուն միջազգային սրբության հարանվանություն: Այդ համայնքը փոխկապակցված է այնպես, որ մարտահրավեր է նետում հին գաղութային մտածելակերպին, որը բաժանում էր մարդկանց և ազգերին երկու խմբերի. «ուժեղներ և թույլեր, դոնորների և ստացողների»: Այդ մոդելը իր տեղը զիջեց նրան, «որը ընդունում է բացարձակապես նոր հայացք աշխարհին, ընդունելով բոլոր մասնակիցների հավասարությունը և ուժեղ կողմերը»:[1]

Բողոքականների մեջ, Նազովրեցու Եկեղեցու մոտ հայտնվեց աճի ունիկալ մոդել: Արդեն 1998թ. նազովրեցիների կեսը չէր ապրում ԱՄՆ-ում և Կանադայում: 2001 թվականի Գլխավոր Ասամբլեայի ժամանակ պատգամավորների 41 տոկոսը անգլերենն օգտագործում էր որպես երկրորդ լեզու, կամ չէր խոսում: 2009-ին Աֆրիկայի բնակիչ Եվգենիյո Դուարտեն Կաբո-Վերդեյից ընտրվեց գլխավոր սուպերինտենդենտ: 2013-ին Գվատեմալայից (Կենտրոնական Ամերիկա) Գուստավո Կրոկերը ընտրվեց գլխավոր սուպերինտենդենտ: 2017թ. ևս մեկ աֆրիկացի Ֆիլիմոն Չամբոն Մոզամբիկից նույնպես ընտրվեց գլխավոր սուպերինտենդենտ և առաջին անգամ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կեսը մարդիկ են, ովքեր ծնվել և մեծացել են Հյուսիսային Ամերիկայի սահմաններից դուրս:

2017 թվականին աշխարհի 160 երկրների 471 շրջաններով, եկեղեցում հաշվվում էր 2,5 միլիոն անդամ: Նազովրեցիների 28 տոկոսը աֆրիկացիներ էին, 29 տոկոսը ապրում էին Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում, այն դեպքում երբ համարյա մեկ քառորդը ապրում էր Միացյալ Նահանգներում և Կանադայում:

Եվրոպական եկեղեցական շրջանների համագործակցությամբ սկսվեց նոր ծառայություն Արևելյան Եվրոպայում, իսկ Ասիայի եկեղեցին դուրս եկավ իր ավանդական շրջաններից, ինչպիսիք էին Կորեան, Ճապոնիան, Հնդկաստանը և տեղափոխվեց Հարավ Արևելյան Ասիա և այլ տարածքների: 2017 թվականին Նազովրեցու երեք ամենամեծ շրջանները գտնվում էին Ասիայում և Աֆրիկայում, իսկ երեք խոշորագույն համայնքները, եթե հաշվի առնենք ծառայությունների այցելությունների քանակը դա Հարավային Ամերկայում էր և Կարիբյան ավազանում:

Միջազգային ծառայության տարբերակող առանձնահատկությունները

Նազովրեցու Եկեղեցու ռազմավարական ծառայությունները կենտրոնացած են ավետարանչության, սոցիալական ծառայության և կրթության վրա: Այդ ծառայությունները ծաղկում են ի շնորհիվ միսիոներների, հազարավոր հովիվների, ծառայողների և եկեղեցու անդամների միացյալ ջանքերի, ովքեր իրենց մշակույթների մեջ ներդրում են Վեսլիական սկզբունքները և ադապտացրել են իրենց մշակույթի մեջ:

Ավետարանչություն: Երբ ստեղծվում էր Նազովրեցու Եկեղեցու միջազգային ծառայությունը, Քիրամ Ռեյնոլդսը ստրատեգիական մտածելակերպով մարդ էր: Քառորդ դար լինելով գլխավոր սուպերինտենդենտ, նա մշտապես ներկայացնում էր միսիաները և նա

[1] *Journal of the Twentieth General Assembly, Church of the Nazarene* (1980): 232. Franklin Cook, *The International Dimension* (1984): 49. (Նազովրեցու Եկեղեցու Քսաներրորդ Գլխավոր Ասամբլեայի գրառումներից)

օգնեց, որ միսիոներության համար աջակցությունը հարանվանությունում լիներ առաջնային հարց: Սկսած 1915-ից Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիան (ի սկզբանե Կանանց Միսիոներական Ընկերակցություն), ամբողջ աշխարհով մեկ միջոցներ էր հավաքում և պատմում էր միսիայի և միսիոներների մասին: Այն ժամանակ, երբ ներքին միսիան կենտրոնացած էր Հյուսիսային Ամերիկայի կենտրոնական մասի ավետարանչության վրա, այլազգի միսիոներները ինչպես՝ Զոն Դիասը (Կաբո -Վերդե), Սանտոս Էլիզոնդոն (Մեքսիկա), Սամվել Գրիգորյանը(Պաղեստին), Յ.Ի. Նագամացուն(Ճապոնիա) և Ռոբերտ Չունգը (Կորեա) իսկական պիոներներ առաջնորդներ էին:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո «Հոգիների Փրկության համար Ավետարանչական Արշավ» շարժումը ավետարանչության համար նոր էներգիայով կենտրոնացրեց իր ուժերը ամբողջ աշխարհում: Տնային միսիաները տարածվեցին ամբողջ Հյուսիսային Ամերիկայում: Ծառայության համար նոր միսիոներական շրջաններ բացվեցին նաև այլ մայրցամաքներում: 1970 թվականներին քաղաքային ավետարանչությունը եկեղեցուն ստիպեց կրկին ուշադրություն դարձնել քաղաքի վրա, որպես ծառայության համար հիմնական վայր: Զարգանում էին նոր տիպի քաղաքային ծառայություններ և 1980 - ականներին եկեղեցին հանդես եկավ միջազգային նախաձեռնությամբ «Նետվել դեպի Քաղաքները»: Նազովրեցու Եկեղեցին Արևելյան Եվրոպայում ծառայությունը սկսեց 1990 ական թվականներին: Նազովրեցիները սկսեցին մասնակցել Արևելյան Աֆրիկյան վերածննդի շարժմանը և սկսեցին ծառայել տարբեր երկրներում, ինչպես օրինակ՝ Բանգլադեշը, որտեղ 2010 թվականի Մարտի 24-ին մեկ ծառայության ժամանակ ձեռնադրվեցին 193 երեցներ, քրիստոնեական պատմության մեջ հրաշալի իրադարձություն:

Գթասրտություն:

Առաջին նազովրեցիները վկայել են Աստծո շնորհքը օգնություն ուղարկելով Հնդկաստանի սոված մարդկանց, կազմակերպելով մանկատներ և կացարաններ միայնակ կանանց համար, ովքեր ունեին երեխաներ, ստեղծելով քաղաքային միսիաներ, որոնք ծառայում էին անտուններին ու կախվածություն ունեցող մարդկանց: 1920 ականներին եկեղեցու սոցիալական ծառայությունների առաջնահերթությունը տեղափոխվեց դեպի բժշկություն: Նազովրեցու Եկեղեցին հիվանդանոցներ կառուցեց Չինաստանում, Սվիզելանդում, ավելի ուշ Հնդկաստանում և Պապուա Նոր Գվինեայում: Արհեստավարժ նազովրեցի բուժաշխատողները հոգ էին տանում հիվանդների համար, կատարում էին վիրահատություններ, կրթում էին բժշկական անձնակազմը, և աջակցում էին ամբուլատորիաների առաջընթացը աշխարհի ամենաաղքատ ազգերի մեջ: Եկեղեցին ստեղծել է մի քանի հատուկ կլինիկաներ, այնպիսին, ինչպես լեպրազորիաների կլինիկաները Աֆրիկայում:

1980 թվականին եկեղեցին ստեղծեց Նազովրեցու Գթասրտության Ծառայությունը: Այն թույլ տվեց մասնակցելու բազմապիսի սոցիալական ծառայությունների մեջ, որոնք շարունակվում են մինչև այսօր, ներառյալ երեխաների աջակցությունը, օգնություններ տարերային աղետների ժամանակ, կրթական ծրագրեր ՄԻԱ-ով վարակված մարդկանց համար, աջակցություն որբերին, խմելու ջրի արտահանում, սննդամթերքի համալիր ապահովում և զանազան այլ բաներ:

Կրթություն :

Կիրակնօրյա դպրոցը և Աստվածաշնչյան դասընթացները եղել են նազովրեցիների համայնքների կյանքի մի մասնիկը: Նրանք կարևոր դեր են կատարում Քրիստոսին նման աշակերտների կայացման գործընթացում: Իր գոյության առաջին տարիներից սկսած Եկեղեցին միջոցներ է ներդրել կրթության մեջ, ինչպես նաև անգրագիտությունը հաղթահարելու համար: Վաղ օրինակներից մեկն է Կալկաթայի իգական Հույսի Դպրոցը, որը հիմնվել է 1905 թվականին: Նազովրեցու դպրոցները աշակերտներ են պատրաստել ամբողջ աշխարհով, որպեսզի լիարժեք կարողանան մասնակցել կյանքի բոլոր ասպեկտներում, սոցիալական, տնտեսական, ինչպես նաև կրոնական: ԱՄՆ-ում նազովրեցու համալսարանների մեծամասնությունը ունեին իրենց միջնակարգ դպրոցները, որոց նրանք աջակցում էին մինչև քսաներորդ դարի կեսերը:

Նազովրեցու Եկեղեցու հիմնադիրները շատ ներդրումներ են կատարել բարձրագույն կրթության մեջ, համարելով որ հովիվների և քրիստոնեական ծառայողների կրթությունը շատ կարևոր է, ինչպես նաև այն կարևոր է այցելուների հոգևոր ձևավորման գործում: Կրթության Միջազգային Խորհրդի ցանկում կան 53 Նազովրեցու բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք սփռված են ամբողջ աշխարհով, ներառյալ 13 հումանիտար գիտությունների քոլեջները և համալսարանները Աֆրիկայում, Կանադայում, Կարիբյան կղզիներում, Կորեայում և ԱՄՆ-ում: 31 Աստվածաշնչյան քոլեջներ, ինստիտուտներ, բուժքույրերի պատրաստման դպրոցներ Հնդկաստանում և Պապուա Նոր Գվինեայում և բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք աստվածաբանություն են դասավանդում ավստրալիայում, Կոստա Ռիկայում, Անգլիայում Ֆիլիպիններում և Միացյալ Նահանգներում:

Նազովրեցու Եկեղեցին ժամանակի ընթացքում միջազգային ներկայության եկեղեցուց, դարձավ հավատացյալների միջազգային համայնք: Հիմնվելով վեսլիական ավանդույթների վրա, Նազովրեցիները ընկալում են իրենց, որպես Քրիստոնյա, Սուրբ և Միսիոներական ժողովուրդ, և տեսնում են իրենց միսիան՝ «Դաստիարակել Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերի մեջ»:

ՄԱՍ II

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի պահպանենք Աստծուց տրված մեր ժառանգությունը, հավատքը, երբեմնի տրված սրբերի միջոցով և հատկապես լիակատար սրբագործման վարդապետությունն ու փորձը, որպես շնորհքի երկրորդ գործողություն, ինչպես նաև, արդյունավետորեն համագործակցենք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ուրիշ ճյուղերի հետ, ընդարձակելու Աստծո Արքայությունը, մենք Նազովրեցու Եկեղեցու ծառայողներս ու այցելուներս, համաձայն օրենսդրության սահմանադրական նորմերի, մեր մեջ հաստատած սույն որոշմամբ, ընդունում և հաստատում ենք որպես հիմնական օրենք կամ Նազովրեցու Եկեղեցու Սահմանադրություն, հետևյալ Հավատքի Դրույթները, Քրիստոնեական Վարքագծի Պատվիրանները և Կազմակերպման և Կառավարման Մասին Հոդվածները, այսինքն

ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ծանոթագրություն: Աստվածաշնչյան հղումները, որոնք հաստատում են Հավատքի Դրույթները, տեղադրվել են 1976 թվականի Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ: Նրանք Եկեղեցական Սահմանադրության տեքստի մաս չեն համարվում:

I. Սուրբ Երրորդություն

1. Մենք հավատում ենք Միակ, Հավիտենական, Ամենազոյ Աստծուն, Տիեզերքի Սուվերեն Արարչին ու Պահապանին: Նա է միակ Աստվածը, Նրա էությունը, հատկանիշները ու նպատակները սուրբ են: Աստված՝ Որը սուրբ սեր ու լույս է, Նա իր բնությունով Եռանձնյա էություն է և մեզ բացահայտվեց, որպես Հայր, Որդի ու Սուրբ Հոգի:

(Ծնն.1, Ղևտ19:2,Եր.Օր6:4-5, Ես.5:16; 6:1-7; 40:18-31,Մատթ3:16-17; 28:19-20, Հովհ.14:6-27, 1Կոր. 8:6, 2 Կոր. 13:14,Գաղ. 4:4-6,Եփ. 2:13-18, 1 Հովհ. 1:5; 4:8)

II. Հիսուս Քրիստոս

2. Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին՝ Որը Սուրբ Երրորդության Երկրորդ Անձնավորությունն է: Մենք հավատում ենք, որ Նա Հոր հետ եղել է հավիտյան անբաժան, Նա մարդացավ Սուրբ Հոգու միջոցով և ծվեց Կույս Մարիամից: Այսպիսով, երկու ամբողջական և կատարյալ էություններ՝ Աստվածայինը և մարդկայինը, ամբողջությամբ միավորվեցին մեկ Անձնավորության մեջ. Ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ, մարդ- Աստված:

Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը մահացել է մեր մեղքերի համար և Նա իսկապես հարություն է առել մեռելներից և նորից ընդունելով Իր մարմինը՝ մարդկային կատարյալ

էության ողջ հատկություններով, համբարձվել է երկինք և այնտեղ Աստծո առջև բարեխոսում է մեզ համար:

(Մատթ. 1:20-25; 16:15-16, Ղուկ. 1:26-35, Հովհ. 1:1-18, Գործք 2:22-36, Հռ.8:3; 32-34, Գաղ. 4:4-5, Փիլ. 2:5-11, Կող. 1:12-22, 1 Տիմ. 6:14-16, Եբ. 1:1-5; 7:22-28; 9:24-28, 1 Հովհ. 1:1-3; 4:2-3, 15)

III. Սուրբ Հոգի

3. Մենք հավատում ենք Սուրբ Հոգուն, Որը Սուրբ Երրորդության Երրրորդ Անձնավորությունն է: Նա մշտապես ներկա է Քրիստոսի Եկեղեցու մեջ, գործում է այնտեղ Նրա միջոցով: Նա մերկացնում է աշխարհը իր մեղքի մեջ, վերածնում է նրանց, ովքեր հավատացել ու ապաշխարել են: Սրբագործում է հավատացյալներին և առաջնորդում է նրանց ամեն ճշմարտության մեջ, որը կա Քրիստոսի մեջ:

(Հովհ. 7:39; 14:15-18, 26; 16:7-15, Գործք 2:33; 15:8-9,Հռ. 8:1-27, Գաղ. 3:1-14; 4:6, Եփ. 3:14-21; 1 Թես. 4:7-8; 2 Թես. 2:13; 1 Պետր. 1:2; 1 Հովհ 3:24; 4:13)

IV. Սուրբ Գիրք

4. Մենք հավատում ենք, որ Սուրբ Գիրքը, որի տակ հասկանում ենք Հին և Նոր Կտակարանների 66 գրքերը, ամբողջությամբ ոգեշնչված են Աստծո Հոգով: Նրանք տրված են եղել Աստվածային ներշնչման միջոցով՝ առանց սխալի բացելով մեզ համար Աստծո կամքը այն ամենի վերաբերյալ, ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար: Հետևաբար, ինչը չի բովանդակում Սուրբ Գիրքը չի կարող մեկնաբանվել որպես հավատքի դոգմա:

(Ղուկ. 24:44-47, Հովհ 10:35; 1 Կոր. 15:3-4; 2 Տիմ 3:15-17; 1 Պետ. 1:10-12; 2 Պետ. 1:20-21)

V. Ադամական և անձնական մեղք

5. Մենք հավատում ենք, որ մեղքը և մեղքի պատճառով մահը, աշխարհ են մտել մեր նախահայրեր՝ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Մենք հավատում ենք, որ մեղքը ունի երկակի բնույթ՝ ադամական մեղք, որպես բարոյապես անկում ապրած բնություն և իրական, այսինքն՝ անձնական մեղք:

5.1. Մենք հավատում ենք, որ ադամական մեղքը՝ որպես բարոյապես անկում ապրած բնություն, ամփոփվում է Ադամի յուրաքանչյուր սերնդի էության ապականվածության մեջ: Դրա հետևանքով ամեն մարդ հեռացել է սկզբնական արդարությունից ու անարատությունից, որ մեր

նախահայրերը ունեին արարման պահին և հիմա գտնվում է Աստծո հետ հակասության մեջ, չունի հոգևոր կյանք և մշտապես հակված է դեպի չարը: Այնուհետև մենք հավատում ենք, որ ադամական մեղքը շարունակում է ազդել վերածնված մարդու նոր կյանքի վրա այնքան ժամանակ, մինչև որ հոգին չմաքրվի դրանից՝ Սուրբ Հոգու մկրտության միջոցով:

5.2. Մենք հավատում ենք, որ ադամական մեղքը տարբերվում է իրական մեղքից: Ադամական մեղքը իրենից ներկայացնում է ժառանգական հակում դեպի իրական մեղքը: Այդ հակվածության համար մարդը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, երբ նա մերժում կամ անտեսում է այդ հակվածությունից ազատագրվելու համար՝ Աստծո կողմից առաջարկված միջոցները:

5.3. Մենք հավատում ենք, որ իրական կամ անձնական մեղքը, Աստծո Օրենքի գիտակցաբար խախտումն է մարդու կողմից, որն ի զորու է կրել բարոյական պատասխանատվություն: Իրական մեղքին չեն վերաբերվում ակամա կամ անխուսափելի թերությունները, տկարությունները, սխալները, բացթողումները կամ ուրիշ շեղումներ կատարյալ վարքի օրինակից, որոնք հանդիսանում են մեղսագործության մնացորդային հետևանք: Սակայն այդ աննշան հետևանքները չպետք է ներառեն իրենց մեջ այնպիսի վերաբերմունք աշխարհին, կամ արձագանք տեղի ունեցող դեպքերին, որոնք հակասում են Քրիստոսի Հոգուն, հակառակ դեպքում, դրանք կարող ենք համարձակությամբ անվանել պիղծ ոգու մեղքեր:

Մենք հավատում ենք, որ անձնական մեղքը, ամենից առաջ Սիրո պատվիրանի խախտում է, իսկ Քրիստոսի նկատմամբ մեղքը կարելի է սահմանել որպես անհավատություն:

(Ադամական մեղք: Ծննդ.3; 6:5, Հոբ. 15:14, Սաղմոս 50:5, Եր. 17:9-10, Մարկ. 7:21-23, Հռ.1:18-25; 5:12-14, 7:1-8:9, 1Կոր. 3:1-4, Գաղ. 5:16-25;1 Հովհ. 1:7-8.

Անձնական մեղք: Մատթ. 22:36-40 և 1 Հովհ 3:4; Հովհ. 8: 34-36, 16:8-9, Հռ. 3:23; 6: 15-23; 8:18-24; 14:23; 1 Հովհ 1:9-2:4; 3:7-10)

VI. Քավություն

6. Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը Իր տանջանքների, Իր արյունը թափելու և խաչի վրա Իր մահվան միջոցով կատարեց լիակատար քավություն ողջ մարդկային մեղքի համար, և այդ քավությունն է փրկության միակ հիմքը և այն բավարար է յուրաքանչյուր մարդու փրկության համար, որը սերվել է Ադամից: Աստծո շնորհքով այդ քավությունը բավարար է նաև

բոլոր այն մարդկանց փրկության համար, ովքեր ի վիճակի չեն բարոյական պատասխանատվություն կրել իրենց արարքների համար (հոգեկան խանգարում ունեցող մարդիկ, հղումը թարգմանիչինն է), ինչպես նաև անմեղ երեխաների փրկության համար: Բայց բոլոր նրանց համար, ովքեր հասել են սեփական պատասխանատվության հասակին, այդ Քավությունը ուժի մեջ է մտնում միայն նրանց ապաշխարության ու հավատքի պահին:

(Ես. 53:5-6,11, Մարկ. 10:45, Ղուկ. 24:46-48, Հովհ. 1:29; 3:14-17, Գործք 4:10-12, Հռ.3:21-26; 4:17-25; 5:6-21; 1 Կոր. 6:20; 2Կոր. 5:14-21, Գաղ. 1:3-4; 3:13-14, Կող. 1:19-23; 1 Տիմ. 2:3-6, Տիտ. 2:11-14, Եբր. 2:9; 9:11-14; 13:12; 1 Պետր. 1:18-21; 2:19-25; 1Հովհ. 2:1-2)

VII. Նախնական շնորհք

7. Մենք հավատում ենք, որ Աստծո շնորհքը Հիսուս Քրիստոսի միջոցով, ազատ շնորհված է բոլոր մարդկանց, այն հնարավորություն է տալիս բոլորին, ով ցանկանում է մեղքից դառնալ արդարության, հավատալ Հիսուս Քրիստոսին, ստանալ ներում և մաքրվել մեղքերից, ինչպես նաև կատարել բարի գործեր՝ Նրա տեսակետին հաճելի ու բարենպաստ: Մենք նաև հավատում ենք, որ մարդու արարումը Աստծո պատկերով ու նմանությամբ, ներառում է բարու ու չարի միջև ընտրելու ունակությունը և այսպիսով մարդը օժտված էր բարոյական պատասխանատվություն կրելու ունակությամբ, որ Ադամի մեղսագործության հետևանքով մարդը դարձավ այնքան վատաբարո ու ապականված, որ նա չի կարող դիմել Աստծուն ու հավատալ, անել ինչ-որ բան վստահելով միայն իր սեփական ուժերին:

(Աստծո պատկերը և նմանությունը մարդու մեջ և նրա բարոյական պատասխանատվությունը: Ծնն. 1:26-27; 2:16-17, Երկր. Օր. 28:1-2; 30:19, Հեսու. 24:15, Սաղմոս 8:3-5, Ես. 1:8-10, Երեմ. 31:29-30, Եզեկ. 18:1-4, Միքիա 6:8, Հռ. 1:19-20; 2:1-16; 14:7-12,Գաղ. 6:7-8

Մարդու բնական անզորությունը: Հոբ14:4; 15:14; Սաղմոս 14:1-4, 50:5, Հովհ. 3:6ա, Հռ. 3:10-12, 5:12-14, 20ա; 7:14-25

Շնորհքի պարգևը և հավատքի գործերը: Եզ. 18:25-26, Հովհ. 1:12-13; 3:6ճ, Գործք 5:31, Հռ. 5:6-8, 18; 6:15-16, 23; 10:6-8; 11:22; 1 Կոր. 2:9-14; 10:1-12; 2 Կոր. 5:18-19, Գաղ. 5:6, Եփ. 2:8-10, Փիլ. 2:12-13, Կող. 1:21-23; 2 Տիմ. 4:10ա, Տիտ. 2:11-14, Եբր. 2:1-3; 3:12-15; 6:4-6; 10:26-31, Հակ. 2:18-22; 2 Պետր. 1:10-11; 2:20-22)

VIII. Ապաշխարություն

8. Մենք հավատում ենք, որ Աստծո Հոգին բոլոր ապաշխարողներին տալիս է շնորհալի օգնություն, որպեսզի սրտում ունենան ճշմարիտ ապաշխարություն և Աստծո ողորմության հույս, որով կարող են հավատալ, ստանալ ներում և հոգևոր կյանք: Ապաշխարությունը

հանդիսանում է մեղքի հանդեպ մտածելակերպի անկեղծ ու լիակատար փոփոխություն և այն իր մեջ ներառում է անձնական մեղքի գիտակցություն և կամավոր հրաժարում բոլոր տեսակի մեղքերից: Այն անհրաժեշտ է բոլորին, ով իր արարքներով կամ դիտավորություններով մեղանչել է Աստծո առաջ:

Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ կարող են ընկնել շնորհքից և հրաժարվել Աստծուց , և եթե նրանք չապաշխարեն իրենց մեղքերից, անհույս ու հավիտյան կորած կլինեն:

Մենք հավատում ենք, որ վերստին ծնված անձը կարիք չունի վերադառնալու դեպի մեղքը, այլ կարող է ապրել Աստծո հետ անկոտրում հաղորդակցության մեջ սուրբ Հոգու զորության միջոցով, Ով վկայում է մեր հոգիներին, որ մենք Աստծո զավակներ ենք:

(2 Մն. 7:14, Սաղ. 31:5-6; 51:1-17, Ես. 55:6-7, Եր. 3:12-14, Եզ. 18:30-32; 33:14-16, Մարկ. 1:14-15, Ղուկ. 3:1-14; 13:1-5; 18:9-14,Գործք 2:38; 3:19; 5:31; 17:30-31; 26:16-18, Հռ. 2:4; 2 Կոր 7:8-11; 1 Թես. 1:9; 2 Պետր. 3:9)

IX. Արդարացում, վերածնունդ, որդեգրում

9. Մենք հավատում ենք, որ արդարացումը Աստծո արդարության բարեշնորհ գործողություն է, որի միջոցով Նա լիովին ներում է հանցանքը և ազատագրում կատարված մեղքի պատժից, ինչպես նաև ընդունում և ճանաչում է բոլորին արդար, ով հավատացել է Հիսուս Քրիստոսին և ընդունել է Նրան որպես Տեր ու Փրկիչ:

9.1 Մենք հավատում ենք, որ վերածնունդը կամ վերստին ծնունդը Աստծո բարեշնորհ գործողություն է, որի միջոցով ապաշխարող մարդու բարոյական էությունը հոգևորապես վերափոխվում է և նրան նվիրվում է նոր հոգևոր կյանք, երբ նա ընդունակ է դառնում հավատալու, սիրելու և լինելու հնազանդության մեջ:

9.2 Մենք հավատում ենք, որ որդեգրումը Աստծո բարեշնորհ գործողություն է, որի միջոցով արդարացված և վերածնված հավատացյալը դառնում է Աստծո զավակ:

9.3 Մենք հավատում ենք, որ Աստծուն փնտրող մարդը միաժամանակ ստանում է արդարացում, վերածնունդ և որդեգրում և դրանք ձեռք են բերվում հավատքի միջոցով, որը նախորդում է ապաշխարությանը և Սուրբ Հոգին հավատացյալին վկայում է այդ բարեշնորհ վիճակի մասին:

(Ղուկ. 18:14, Հովհ. 1:12-13; 3:3-8; 5:24,Գործք.13:39, Հռ. 1:17; 3:21-26, 28; 4:5-9, 17-25; 5:1, 16-19; 6:4; 7:6; 8:1, 15-17; 1 Կոր. 1:30; 6:11; 2 Կոր. 5:17-21, Գաղ. 2:16-21; 3:1-14, 26; 4:4-7, Եփ. 1:6-7; 2:1, 4-5, Փիլ. 3:3-9, Կող. 2:13, Տիտ. 3:4-7; 1 Պետր. 1:23; 1 Հովհ. 1:9, 3:1-2,9; 4:7; 5:1, 9-13, 18)

X. Քրիստոնեական սրբություն և ամբողջական սրբագործություն

10. Մենք հավատում ենք, որ սրբագործումը Աստծո գործողություն է, որը հավատացյալին վերափոխում ու դարձնում է Քրիստոսի նման: Այն իրագործվում է Աստծո շնորհքով և Սուրբ

Հոգու միջոցով, նախնական սրբագործման, կամ վերստին ծննդի (միաժամանակ արդարացման) հետ, ամբողջական սրբագործման պահին և այն Սուրբ Հոգու շարունակվող գործողություն է, որը ավարտվում է մինչ փառավորվելու պահը (մահվանից հետո, հղումը թարգմանիչինն է): Փառավորված վիճակում մենք լիովին համապատասխանում ենք Որդու պատկերին:

Մենք հավատում ենք, որ ամբողջական սրբագործումը Աստծո գործողություն է, որը հետևում է վերստին ծննդից հետո և որի միջոցով հավատացյալը ազատագրվում է ադամական մեղքից կամ բարոյական ապականությունից, մտնում է Աստծուն լիակատար նվիրվածության դիրքի մեջ, դեպի սուրբ հնազանդություն և կատարյալ սեր:

Լիակատար սրբագործումը տեղի է ունենում Սուրբ Հոգով մկրտվելու կամ լցվելու միջոցով, որը ընկալվում է մարդու կողմից, որպես սրտի մաքրվելը մեղքից, և նրա մեջ Սուրբ Հոգու մշտական ներկայությունը, որը հավատացյալին տալիս է ուժ կյանքի ու ծառայության համար:

Ամբողջական սրբագործումը շնորհվում է Հիսուսի արյան շնորհիվ, այն իրագործվում է ակնթարթորեն, հավատքի միջոցով, նրան նախորդում է լիակատար նվիրվածությունը: Սուրբ Հոգին վկայում է հավատացյալին այդ գործողության և շնորհքի առկայության մասին:

Այդ հոգևոր փորձառությունը և նրա տարբեր փուլերը կարելի է անվանել տարբեր խոսքերով, ինչպես քրիստոնեական կատարելություն, կատարյալ սեր, սրտի մաքրություն, Սուրբ Հոգու մկրտություն կամ լեցունություն, լիակատար օրհնություն, քրիստոնեական սրբություն:

10.1 Մենք հավատում ենք, որ գոյություն ունի բացահայտ տարբերություն սրտի մաքրության և մարդու հոգևոր հասունության միջև: Սրտի մաքրությունը տեղի է ունենում ակնթարթորեն և հանդիսանում է լիակատար սրբագործման հետևանք, իսկ հոգևոր հասունությունը շնորհքով հասունանալու արդյունք է:

Մենք հավատում ենք, որ ամբողջական սրբագործման շնորհքը ընդգրկում է իր մեջ Աստծուց մղում դեպի շնորհքի մեջ հասունության, ինչպես աշակերտները Քրիստոսի նման: Սակայն այդ մղմանը անհրաժեշտ է գիտակցված համագործակցություն և հատուկ ուշադրություն է պետք հատկացնել նրան, ինչ պահանջվում է հոգևոր աճի ընթացքի և Քրիստոսին նմանվելու համար, ընդգրկելով մեր անձնական հատկանիշներն ու բնավորությունը: Հավատացյալի կողմից առանց նպատակասլաց ջանքերի, նրա վկայությունը կարող է կորցնի իր ուժը և շնորհքը չի գործի: Արդյունքում հավատացյալը կարող է շնորհքը կորցնել:

Մասնակցելով նրանցում, որ անվանվում են շնորհքի միջոցներ, հատկապես հաղորդակցվելով, մասնակցելով Եկեղեցական ծիսակատարություններում, հավատացյալները ամբողջ սրտով աճում են շնորհքի և սիրո մեջ՝ դեպի Աստված և դեպի մերձավորը:

Եր. 31:31-34, Եզ. 36:25-27, Մաղ. 3:2-3, Մատթ. 3:11-12, Ղուկ. 3:16-17, Հովհ. 7:37-39; 14:15-23; 17:6-20, Գործք 1:5; 2:1-4; 15:8-9, Հռ. 6:11-13,19; 8:1-4,8-14; 12:1-2; 2 Կոր. 6:14-7:1, Գաղ. 2:20; 5:16-25; Եփ. 3:14-21; 5:17-18, 25-27, Փիլ. 3:10-15, Կող.3:1-17; 1 Թես. 5:23-24, Եբր. 4:9-11; 10:10-17; 12:1-2; 13:12; 1 Հովհ 1:7,9

Քրիստոնեական կատարելություն, Կատարյալ Սեր: Երկ. Օր. 30:6, Մատթ. 5:43-48; 22:37-40, Հռ. 12:9-21; 13:8-10; 1 Կոր. 13, Փիլ. 3:10-15, Եբր. 6:1; 1 Հովհ. 4:17-18.

Սրտի մաքրություն: Մատթ. 5:8, Գործք 15:8-9; 1 Պետր. 1:22; 1 Հովհ 3:3.

Սուրբ Հոգու Մկրտություն: Եր. 31:31-34, Եզ. 36:25-27, Մաղ. 3:2-3, Մատթ. 3:11-12, Ղուկ. 3:16-17, Գործք 1:5; 2:1-4; 15:8-9.

Լիակատար օրհնություն: Հռ. 15:29.

Քրիստոնեական Սրբություն: Մատթ.5:1-7:29, Հովհ. 15:1-11, Հռ.12:1-15:3; 2 Կոր. 7:1, Եփ. 4:17-5:20, Փիլ. 1:9-11; 3:12-15, Կող. 2:20-3:17; 1 Թես. 3:13; 4:7-8; 5:23; 2 Տիմ. 2:19-22, Եբր. 10:19-25; 12:14; 13:20-21; 1 Պետր. 1:15-16; 2 Պետր. 1:1-11; 3:18, Հուդա 20-21

XI. Եկեղեցի

11. Մենք հավատում ենք Եկեղեցուն, նրանց հաղորդակցությանը, ովքեր դավանում են Հիսուս Քրիստոսին որպես Տիրոջ: Նրանք Աստծո ուխտի ժողովուրդ են, նոր արարածներ Քրիստոսի մեջ, Քրիստոսի մարմինը՝ Սուրբ Հոգուց կանչված Խոսքի միջոցով:

Աստված Եկեղեցուն կոչ է անում գործել միաբանությամբ և Սուրբ Հոգու հաղորդակցությամբ, Աստծուն երկրպագելով և Նրան փառաբանելով Խոսքի քարոզչությամբ, խորհուրդները պահպանելով, ծառայելով հանուն Նրա, հնազանդվելով Քրիստոսին, սրբության կյանքով, որը ներառում է փոխադարձ պատասխանատվություն մեկը- մյուսի նկատմամբ:

Եկեղեցու առաքելությունը աշխարհում հանդիսանում է Քրիստոսի ծառայության շարունակություն, որպես Սուրբ Հոգու զորությամբ փրկագնելու ու հաշտեցնելու : Եկեղեցին իրագործում է իր առաքելությունը պատրաստելով աշակերտներ, ավետարանչության, կրթության, գթասրտության, արդարության վերականգման և Աստծո Արքայության մասին վկայելու միջոցներով:

Եկեղեցին՝ դա պատմական իրականություն է, որը կազմակերպչական գործերում օգտագործում է այն ձևերը, որոնք հատուկ են տեղի մշակույթին: Այն գոյություն ունի, որպես տեղական Եկեղեցի, ինչպես նաև որպես Քրիստոսի Տիեզերական Եկեղեցի: Եկեղեցին ընտրում է այն մարդկանց, ում Աստված կանչել է հատուկ ծառայության: Աստված Եկեղեցուն կոչ է անում ապրելու իր Գերիշխանության տակ, Իր պատվիրաններին հնազանդ և սպասելով ամեն ինչի վերջանալուն, այն օրվան, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը կվերադառնա:

(Ելից 19:3, Եր.31:33, Մատթ. 8:11; 10:7; 16:13-19, 24; 18:15-20; 28:19-20, Հովհ. 17:14-26; 20:21-23, Գործք 1:7-8; 2:32-47; 6:1-2; 13:1; 14:23, Հռով. 2:28-29; 4:16; 10:9-15; 11:13-32; 12:1-8; 15:1-3; 1 Կոր. 3:5-9; 7:17; 11:1,17-33; 12:3, 12-31; 14:26-40; 2 Կոր. 5:11-6:1, Գաղ. 5:6, 13-14, 6:1-5, 15, Եփ. 4:1-17; 5:25-27, Փիլ. 2:1-16; 1 Թես. 4:1-12; 1 Տիմ. 4:13, Եբր. 10:19-25; 1 Պետր 1:1-2, 13; 2:4-12,21; 4:1-2,10-11; 1 Հովհ. 4:17, Հուդա 24, Հայտն. 5:9-10)

XII. Մկրտություն

12. Մենք հավատում ենք, որ քրիստոնեական մկրտությունը, որ պատվիրել է մեր Տերը, խորհուրդ է, որը նշանակում է Հիսուս Քրիստոսի կողմից կատարված քավության ընդունում և միաձուլում Քրիստոսի մարմնին: Մկրտությունը շնորհքի մի միջոց է, որով հռչակվում է հավատքի արտահայտությունը Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկիչ:

Այն կատարվում է հավատացյալների համար, ցուցադրելու նրանց նպատակը լիովին հնազանդվելու Նրան սրբությամբ ու արդարությամբ: Որպես Նոր Ուխտի մասնակիցներ, փոքր երեխաները և նրանք, ովքեր չեն կարող կրել բարոյական պատասխանատվություն, կարող են մկրտվել ծնողների կամ խնամակալների խնդրանքով: Եկեղեցին պետք է երաշխավորի քրիստոնեական դաստիարակությունը:

Մկրտությունը կատարվում է ցողելու, ջրելու կամ ջրում ամբողջապես ընկղմվելու միջոցով:

(Մատթ. 3:1-7; 28:16-20, Գործք 2:37-41; 8:35-39; 10:44-48; 16:29-34; 19:1-6; Հռով. 6:3-4, Գաղ. 3:26-28, Կող. 2:12; 1 Պետր. 3:18-22)

XIII. Տերունական Ընթրիք

13. Մենք հավատում ենք, որ Տերունական Ընթրիքը հաստատվել է մեր Տեր ու Փրկիչ, Հիսուս Քրիստոսի կողմից, որպես խորհուրդ, հռչակելու Նրա կյանքը, չարչարանքը, անձնազոհ մահը, հարությունը և Երկրորդ Գալուստի հույսը: Տերունական ընթրիքը շնորհքի միջոց է, որտեղ Քրիստոսը ներկա է Հոգով: Բոլորը հրավիրված են մասնակցելու Քրիստոսի հավատքով, վերափոխված կյանքով, փրկությամբ և Եկեղեցու հետ միաբանությամբ: Բոլորը պետք է գան ակնածանքով գնահատելու դրա նշանակությունը և ավետելու Տիրոջ մահը, մինչև Նա կգա:

Նրանք, ովքեր ունեն հավատ դեպի Քրիստոսը և սեր դեպի բոլոր սրբերը, Քրիստոսի կողմից հրավիրված են մասնակցելու այնքան հաճախ որքան հնարավոր է:

(Ելից 12:1-14, Մատթ. 26:26-29, Մարկ. 14:22-25, Ղուկ. 22:17-20, Հովհ. 6:28-58; 1 Կոր. 10:14-21; 11:23-32)

XIV. Աստվածային բժշկություն

14. Մենք հավատում ենք Աստվածային բժշկության Աստվածաշնչյան ուսմունքին, ուստի առաջարկում ենք մեր Եկեղեցու անդամներին հավատքով աղոթել հիվանդների բժշկության համար: Նաև մենք հավատում ենք, որ Աստված բժշկում է ժամանակակից բժշկական գիտությունների միջոցով:

(4 Թագ. 5:1-19, Սաղ 103:1-5, Մատթ. 4:23-24; 9:18-35, Հովի 4:46-54, Գործք5:12-16; 9:32-42; 14:8-15; 1 Կոր. 12:4-11; 2 Կոր. 12:7-10, Հակ. 5:13-16)

XV. Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ

15. Մենք հավատում ենք, որ Տեր Հիսուս Քրիստոսը կվերադառնա: Նրա վերադարձի ժամանակ առաջինը հարություն կառնեն Քրիստոսով մահացածները, հետո նրանք, ովքեր կենդանի են, եթե լինեն Նրա մեջ, կհափշտակվեն նրանց հետ ու կհանդիպեն Տիրոջը օդում, որպեսզի միշտ լինեն Նրա հետ:

(Մատթ. 25:31-46, Հովի. 14:1-3, Գործք 1:9-11, Փիլ. 3:20-21; 1 Թես.4:13-18, Տիտ. 2:11-14, Եբր. 9:26-28; 2 Պետր. 3:3-15, Հայտն. 1:7-8; 7-20)

XVI. Հարություն, դատաստան և հավիտենական կյանք

16. Մենք հավատում ենք մեռելների հարությանը, դա նշանակում է, որ ինչպես արդարների, այնպես էլ անարդարների մարմինները հարություն կառնեն և կմիանան իրենց հոգիներին և դուրս նրանք որ բարի են գործել կգնան դեպի կյանքի հարություն, և նրանք, որ չար են արել՝ դեպի դատաստանի հարություն:

16.1 Մենք հավատում ենք գալիք դատաստանին, որի ժամանակ ամեն մարդ կկանգնի Աստծո առաջ և կդատվի համապատասխան իրեն գործերի, որոնք նա կատարել է իր կյանքի ընթացքում:

16.2 Մենք հավատում ենք, որ բոլոր նրանց համար, ովքեր հավատացել են Հիսուս Քրիստոսին փրկության համար և խոնարհությամբ հետևում են մեր Տիրոջը, պատրաստված է փառավոր ու հավիտենական կյանք: Մինչև վերջ չապաշխարածները հավիտյան կտառապեն դժոխքում:

(Ծնն. 18:25; 1 Թագ. 2:10, Սաղ. 49:6, Ես. 26:19, Դան. 12:2-3; Մատթ. 25:31-46, Մարկ. 9:43-48, Ղուկ. 16:19-31; 20:27-38, Հովի.3:16-18; 5:25-29, 11:21-27, Գործք 17:30-31, Հռ. 2:1-16; 14:7-12; 1 Կոր. 15:12-58; 2 Կոր. 5:10; 2 Թես. 1:5-10, Հայտն. 20:11-15; 22:1-15)

ԵԿԵՂԵՑԻ

I. Համընդհանուր Եկեղեցի:

17. Աստծո եկեղեցին բաղկացած է հոգևորապես վերածնված մարդկանցից, որոնց անունները գրված են երկնքում:

II. Առանձին Եկեղեցիներ

18. Առանձին Եկեղեցիները (դենոմինացիաներ) պետք է բաղկացած լինեն, հոգևորապես վերածնված մարդկանցից, միավորված Աստծո կամքով, Սուրբ Հոգուց դրդված սրբության մեջ ծառայելու և շփվելու համար:

III. Նազովրեցու Եկեղեցին

19. Նազովրեցու Եկեղեցին բաղկացած է մարդկանցից, որոնք կամավոր միացել են նրան, համապատասխան նրա վարդապետության և կառավարման կանոնների: Նրանք ձգտում են քրիստոնեական սուրբ հաղորդակցությանը, մեղավորների դարձին, հավատացյալների լիակատար սրբագործությանը և նրանց սրբության աճին: Նրանք ցանկանում են ապրել պարկեշտությամբ, Նոր Կտակարանային Եկեղեցու հոգևոր ուժով և սրբությամբ, յուրաքանչյուր մարդու քարոզելով Ավետարանը:

IV. Դավանության հիմունքները

20. Եկեղեցու անդամությունը, դա յուրաքանչյուր վերստին ծնված մարդու արտոնությունն ու իրավունքն է: Հետևաբար, մենք պահանջում ենք հավատքի այնպիսի ուխտ, որը էական է քրիստոնեական կյանքի համար: Այսպիսով մենք հավատում ենք, որ հավատքի հետևյալ դավանությունը բավական է:

Մենք հավատում ենք.

20.1. Մեկ Աստծո՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

20.2. Աստծո ներշնչմամբ տրված Հին և Նոր ուխտերի գրվածքներին, որոնք հավատքի և քրիստոնեական կյանքի համար պարունակում են ամբողջ ճշմարտությունը:

20.3. Մարդը ծնվում է մեղավոր բնությամբ և հետևաբար միշտ հակված է դեպի չարը:

20.4. Իր մեղքերից չապաշխարած մարդը, հավիտյան և անհույս կորած է:

20.5. Խաչի վրա Հիսուս Քրիստոսի անձնազոհ մահը կատարվել է ամբողջ մարդկության համար և ամեն ապաշխարող և Տեր Հիսուս Քրիստոսին հավատացող, արդարացած և վերածնված է նոր կյանքի համար, հետևաբար ազատագրված է մեղքի իշխանությունից:

20.6. Վերստին ծննդից հետո հավատացյալին անհրաժեշտ է լիակատար սրբագործում, Տեր Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով:

20.7. Սուրբ Հոգին հավատացյալին վկայում է նրա վերստին ծննդի և լիակատար սրբագործման մասին:

20.8. Մեր Տիրոջ երկրորդ գալստին, մեռելների հարությանը և վերջին

դատաստանին:

V. Քրիստոնեական բնավորության մասին պատգամներ

21. Լինել տեսանելի Եկեղեցու մի մասնիկը, դա սրբազան պարտականություն ու օրհնված առավելությունն է բոլոր մեղքերից փրկվածների և Հիսուս Քրիստոսում կատարելություն փնտրողների համար: Յուրաքանչյուրին, ով ցանկանում է միանալ Նազովրեցու Եկեղեցուն և նրա հետ ունենալ հաղորդակցություն, անհրաժեշտ է մեղքից փրկված լինելու և բարեպաշտ կյանքով Աստծո հետ քայլելու վկայություն ունենալ, ինչպես նաև ունենալ աղամական մեղքերից մաքրվելու անկեղծ ցանկություն: Նրանք պետք է վկայություն ունենան այն մասին, որ իրենք իրենց նվիրաբերել են Աստծուն:

21.1. Առաջինը: Վարվել ըստ Աստծո Խոսքի, որով մենք առաջնորդվում ենք ինչպես հավատքում, այնպես էլ գործերում.

(1) Սիրել Աստծուն ամբողջ սրտով, հոգով, ուժով, բանականությամբ և մերձավորին քո անձի պես: (Ելից 20:3-6; Ղևտացիս 19:17-18; Երկրորդ Օրինաց 5:7-10, 6:4-5; Մարկոս 12:28-31; Հռովմեացիս 13:8-10):

(2) Չփրկվածներին ցույց տալ Ավետարանի իրավացիությունը, հրավիրել նրանց Աստծո տուն, փորձելով ցույց տալ նրանց փրկության ճանապարհը: (Մատթեոս 28:19-20; Գործք 1:8; Հռովմեացիս 1:14-16; 2 Կորնթացիս 5:18-20)

(3) Բոլոր *մարդկանց* հետ հարգանքով վերաբերվել: (Եփեսացիս 4:32; Տիտոսին 3:2; 1 Պետրոս 2:17; 1 Հովհաննես 3:18)

(4) Օգնել հավատացյալ քույր եղբայրներին, սիրով աջակցելով իրար: (Հռովմայեցիս 12:13; Գաղատացիս 6:2,10; Կողոսացիս 3:12-14)

(5) Զգտելով բարիք անել *մարդկանց* հոգու և մարմնի համար, կերակրել սոված, հագցնել աղքատին, այցելել հիվանդանոցները և բանտարկվածներին, օգնել կարիքավորներին ուժի և կարողության չափով: (Մատթեոս 25:35-36; 2 Կորնթացիս 9:8-10; Գաղատացիս 2:10; Հակոբոս 2:15-16; 1 Հովհաննես 3:17-18)

(6) Աջակցել եկեղեցու աշխատանքին ու ծառայությանը տասանորդով և զոհաբերություններով:(Մաղաքիա 3:10, Ղուկաս 6:38, 1 Կորնթացիս 9:14, 16:2, 2 Կորնթացիս 9: 6-10, Փիլիպպեցիս 4:15-19)

(7) Հավատարմորեն կատարել Աստծո բոլոր պատվիրանները և խորհուրդները, ներառյալ հրապարակայնորեն երկրպագել Աստծուն (Եբրայեցիս 10:25), Խոսքի ծառայություն (Գործք 2:42), Տերունական Ընթրիք (1 Կորնթացիս 11:23-30); Ուսումնասիրել Աստվածաշունչը և խորհրդածել նրա վրա (Գործք 17:11; 2 Տիմոթեոս 2:15, 3:14-16), աղոթել մենակ և ընտանիքով (Երկրորդ Օրինաց 6:6-7; Մատթեոս 6:6)

21.2. Երկրորդ: Խուսափել չարության ամեն ձևերից, ներառյալ.

(1) Զուր տեղը հիշատակել Աստծո անունը (Ելից 20:7; Ղևտացիս 19:12; Հակոբոս 5:12)

(2) Պղծել Տիրոջ օրը, մասնակցելով աշխարհիկ անօգուտ գործերին, խրախուսելով անձնական ցանկությունները և այսպես ժխտելով այդ օրվա սրբությունը: (Ելից 20:8-11; Եսայի 58:13-14; Մարկոս 2:27-28; Գործք 20:7; Հայտնություն 1:10)

(3) Սեռական սանձարձակությունից, ինչպես մինչ այնպես էլ արտ ամուսնական կապերից, կամ *միասեռական կապերից*, այլասեռվածության բոլոր ձևերից, սանձարձակ ու

անպատշաճ վարքից,[2] (Ելից 20:14; Մատթեոս 5:27-32; 1 Կորնթացիս 6:9-11; Գաղատացիս 5:19; 1 Թեսաղոնիկեցիս 4:3-7).

(4) Ֆիզիկական և մտավոր առողջությունը քայքայող սովորույթներից ու սովորություններից: Քրիստոնյան պետք է իրեն ընդունի որպես Սուրբ Հոգու տաճար (Առակաց 20:1, 23:1-3; 1 Կորնթացիս 6:17-20; 2 Կորնթացիս 7:1; Եփեսեցիս 5:18):

(5) Կռիվներից, չարին չարով պատասխանելուց, բամբասանքից, զրպարտությունից, մարդու բարի անունը վարկաբեկող լուրեր տարածելուց: (2 Կորնթացիս 12:20; Գաղատացիս 5:15; Եփեսեցիս 4:30-32; Հակոբոս 3:5-18; 1Պետրոս 3:9-10)

(6) Անազնվությունից, խարդախությունից, գնելու և վաճառելու ժամանակ սուտ վկայություններից և նմանօրինակ չար գործերից: (Ղևտացիս 19:10-11, Հռովմեացիս 12:17,1 Կորնթացիս 6:7-10)

(7) Խրախուսել իր անձի հպարտությունը, հագուստի և վարքի միջոցով: Մեզ անհրաժեշտ է հագնվել քրիստոնեական պարզությամբ և համեստությամբ, ձգտելով դեպի սրբության: (Առակաց 29:23; 1 Տիմոթեոս 2:8-10; Հակոբոս 4:6; 1 Պետրոս 3:3-4; 1 Հովհաննես 2:15-17)

(8) Աստծուն անարգող երաժշտությունից, գրականությունից և զվարճություններից (1 Կորնթացիս 10:31; 2 Կորնթացիս 6:14-17; Հակոբոս 4:4)

21.3. Երրորդ: Եկեղեցու հետ գտնվել սրտագին շփման մեջ չհակառակվելով, այլ վստահելով նրա ուսմունքներին և պրակտիկային, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել Բարի Լուրի տարածմանը և վկայությանը: (Եփեսեցիս 2:18-22, 4:1-3,11-16; Փիլիպպեցիս 2:1-8; 1 Պետրոս 2:9-10)

****

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հոդված 1. Կառավարման ձևը

22. Նազովրեցու եկեղեցին ունի ներկայացուցչական կառավարման ձև:

22.1. Մենք համաձայն ենք, որ Նազովրեցու Եկեղեցու կառուցվածքում կա երեք օրինական մակարդակ՝ տեղական եկեղեցի, շրջան և գլխավոր մակարդակ: Տարածաշրջանները ծառայում են որպես ադմինիստրատիվ կառուցվածքներ, միսիոներական ռազմավարության և նրա իրականացման համար:

[2] Շեղագիր բառերը, դա 2013թ. Ասամբլեայի ժամանակ ընդունված փոփոխություններն են, որոնք տարածաշրջանային ասամբլեաներում վավերացման ընթացքի մեջ են:

22.2. Մենք համաձայն ենք, որ եկեղեցուն անհրաժեշտ են սուպերինտենդենտներ (եպիսկոպոսներ), որոնք աջակցում են տեղական համայնքներին, հասնելու իրենց նպատակներին և կատարելու իրենց առաքելությունը: Սուպերինտենդենտները պետք է ամրապնդեն բարոյական ներուժը, ամբողջացնեն դրդապատճառները, աջակցեն եկեղեցու ղեկավարությանը, օգնեն ընտրելու ծառայության մեթոդներ, քաջալերեն միսիոներական գործունեությունը և նոր եկեղեցիների կազմակերպումը:

22.3. Մենք համաձայն ենք, որ սուպերինտենդենտների լիազորությունը, չպետք է արգելք հանդիսանա ամբողջապես կազմավորված եկեղեցիների անկախ գործունեություններին: Յուրաքանչյուր եկեղեցի իրավունք ունի ընտրելու իր հովվին համաձայն Գերագույն Ասմբլեայի մշակած հրահանգների: Յուրաքանչյուր եկեղեցի պետք է ընտրի պատվիրակություն ասամբլեայի համար, ղեկավարելու իր ֆինանսները և տնօրինելու այն ամենը, ինչ կապ ունի տեղական եկեղեցու կյանքի և աշխատանքի հետ:

Հոդված II. Տեղական եկեղեցիներ

23. Տեղական եկեղեցու անդամներ են հանդիսանում նրանք, ովքեր կազմել են եկեղեցական համայնքը նրա հաստատման ժամանակ, մարդիկ, ովքեր դրա համար ունեն համապատասխան լիազորություններ, ինչպես նաև նրանք, ովքեր հրապարակայնորեն ընդունվել են անդամ, արդեն հիմնադրված եկեղեցական համայնքի կողմից, վկայելով իրենց փրկության մասին, հռչակելով հավատք դեպի մեր վարդապետությունները և պատրաստակամություն հայտնելով հնազանդվելու մեր ղեկավարությանը: (100-107)

Հոդված III. Շրջանային Ասամբլեա

24. Գերագույն Ասամբլեան կազմակերպում է եկեղեցու անդամների ընդգրկումը Շրջանային Ասամբլեաների մեջ, սահմանելով անհրաժեշտ թվային հարաբերությունը եկեղեցու ծառայողների և հաճախողների միջև: Գլխավոր Ասամբլեայում սահմանվում են ներկայացվող պահանջներ Շրջանային Ասամբլեայի անդամներին: Ընդորում հաշվի է առնվում, որ բոլոր նշանակված և ձեռնադրված ծառայողները հանդիսանում են Շրջանային Ասամբլեայի անդամներ: Գերագույն Ասամբլեայի ժամանակ հաստատվում են նաև Շրջանային Ասամբլեաների պարտականությունները և պատասխանատվությունների աստիճանները: (200-207.6)

Հոդված IV. Գլխավոր Ասամբլեա

25. Կազմը: Գլխավոր Ասամբլեան պետք է ունենա ծառայողների և եկեղեցու հաճախողների հավասար քանակություն, ընտրված Նազովրեցու Եկեղեցու շրջանային

ասամբլեաներից: Պագամավորներ են նաև նրանք, ովքեր նշանակվել են Գերագույն Ասամբլեայի կողմից՝ ուղղորդվելով իրենց պաշտոնի դիրքից, համաձայն Գերագույն Ասամբլեայի նախատեսված կանոնների:

25.1. Պատգամավորների ընտրությունը: Շրջանային Ասամբլեայի ժամանակ պետք է պատգամավորներ ընտրվեն Գլխավոր Ասամբլեայի համար: Ինչպես նախատեսված է Գլխավոր Ասամբլեայի կողմից պետք է ընտրված լինի պատգամավորների հավասար քանակ ինչպես ծառայողներից, այնպես էլ եկեղեցի հաճախողների թվից: Պատգամավորների ընտրությունը պետք է կատարվի Գլխավոր Ասամբլեայի սկսվելուց 16 ամիս առաջ: Եթե կանխատեսվում են դժվարություններ ուղևորության վիզաներ ստանալու համար, ապա պատգամավորների ընտրությունը պետք է տեղի ունենա Գլխավոր Ասամբլեայի սկսվելուց 24 ամիս առաջ: Պետք է պահպանված լինի պայման, որի ուժի ներքո ծառայողներից պատգամավորներ են հանդիսանում Նազովրեցու Եկեղեցու ձեռնադրված ծառայողները: 3-րդ մակարդակի ցանկացած շրջան իրավունք ունի ուղարկելու ամենաքիչը մեկ պատգամավոր ծառայողներից և մեկ պատագամավոր այցելուներից, և ի լրացում դրան, պատգամավորների այնպիսի քանակ, ինչպես նախատեսված է Գլխավոր Ասամբլեայի կողմից, կախված շրջանի եկեղեցիների անդամների քանակից: Յուրաքանչյուր եկեղեցական շրջան պետք է ընտրի պատգամավորների փոխարինող կազմ, չգերազանցող պատգամավորների հիմնական կազմի թվին: Այն իրավիճակներում, եթե կա վիզաներ ստանալու պրոբլեմներ, ապա շրջանային ասամբլեան կարող է լիազորություն տալ խորհրդատվական խորհրդին ընտրելու լրացուցիչ այլընտրանքային պատգամավորներ: (205.23, 301-301.1)

25.2. Մանդատներ: Յուրաքանչյուր շրջանային Ասամբլեայի քարտուղար պետք է պատրաստի վավերացման վկայագրեր Գլխավոր Ասամբլեայի մասնակիցների հիմնական և փոխարինող պատգամավորների ընտրության կազմի համար, անուն առ անուն: Ընտրության արդյունքները և գրավոր հաստատումները անհրաժեշտ է ուղարկել Նազովրեցու Եկեղեցու գլխավոր քարտուղարին անմիջապես Շրջանային Ասամբլեայի փակումից հետո:

25.3. Քվորում: Գլխավոր Ասամբլեայի քվորումը պետք է կազմի քվեարկող պատվիրակների ձայների մեծամասնությունը, ովքեր գրանցվել են Գլխավոր Ասամբլեայի Մանդատային Խորհրդի կողմից: Եթե քվորումը մեկ անգամ արդեն ձեռք է բերվել, պատգամավորների քիչ քանակը կարող է հաստատել անցած նիստերի չհաստատված արձանագրությունները, ինչպես նաև իրավունք ունի փակելու ժողովը:

25.4. Գլխավոր Սուպերինտենդենտներ: Գլխավոր Ասամբլեան, քվեակրկության միջոցով ընտրում է եկեղեցու ձեռնադրված հովիվներից (երեցներից) վեց գլխավոր սուպերինտենդենտների, ովքեր կազմում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը: Գլխավոր Ասամբլեայի սեսիաների միջև, գլխավոր սուպերինտենդենտի պաշտոնը թափուր լինելու դեպքում, Գլխավոր Խորհուրդը լրացնում է բացը՝ ընտրելով թեկնածուին այդ

պաշտոնում իր ընդհանուր անդամների ձայների երկու երրորդով: (305.2, 316)

25.5. Նախագահությունը: Գլխավոր Ասամբլեայի բոլոր ժողովների ժամանակ նախագահում է գլխավոր սուպերինտենդենտը, որը նշանակվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Այն դեպքում, երբ գլխավոր սուպերինտենդենտ չի նշանակվել կամ բոլոր գլխավոր սուպերինտենդները բացակայում են, Գլխավոր Ասամբլեան ընտրում է պատգամավորներից մեկին՝ որպես ժամանակավոր նախագահող: (300.1)

25.6. Ժողովներ վարելու կարգը: Գլխավոր Ասամբլեան կիրառում է կանոններ, որոնք կարգավորում են Ասամբլեայի աշխատանքի բոլոր տեսանկյունները, ներառյալ Ասամբլեայի կազմակերպումը և անցկացումը, ինչպես նաև կոմիտեների և հանձնաժողովների ձևավորումը: Գլխավոր Ասամբլեան ինքն է որոշում ընտրությունների արդյունքները և իր անդամների անհրաժեշտ որակավորումը (ընտրական ցենզը): (300.2-0.3)

25.7. Գլխավոր Վճռաբեկ Դատարան: Գլխավոր Ասամբլեան, Նազովրեցու եկեղեցու անդամներից ընտրում է Գլխավոր Վճռաբեկ Դատարան և որոշում է նրա իշխանության և լիազորության սահմանները: (305.7)

25.8. Գլխավոր Ասամբլեայի լիազորությունները և նրա գործունեության սահմանափակումը:

(1) Գլխավոր Ասամբլեան Նազովրեցու Եկեղեցու համար օրենքներ հրապարակելու լիազորություններ ունի, ինչպես նաև կանոնոր և հրահանգներ բոլոր բաժինների համար, որոնք պատկանում են նրան, կամ համագործակցում են նրա հետ: Հրապարակվող օրենքները և հրահանգները չպետք է հակասեն սույն սահմանադրությանը: (300, 305-305.8)

(2) Ոչ մի տեղական եկեղեցի չի կարող զրկված լինի իր հովվին ընտրելու իրավունքից, եթե այդ ընտրությունը կատարվում է համաձայն Գլխավոր Ասամբլեայի կողմից հաստատված կանոնների համաձայն: (115)

(3) Բոլոր տեղական համայնքները, նրանց ծառայողները, աշխատողները և հաճախողները, իրավունք ունեն ցանկացած գործի արդար և կանոնավոր քննության, եթե այն կարիք ունի դատաքննության, ինչպես նաև ունեն բողոքարկման իրավունք:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

26. Այս Սահմանադրության կանոնադրությունը կարող են չեղյալ հայտարարվել կամ ուղղվել Գլխավոր Ասամբլեայի բոլոր ներկա գտնվող և քվեարկող անդամների ձայների երկու երրորդով և վավերացվել Նազովրեցու Եկեղեցու 3-րդ և 2-րդ մակարդակի Շրջանային Ասամբլեաների ոչ պակաս քան երկու երրորդով: Կանոնադրությունը փոխելու համար պահանջվում է 3-րդ և 2-րդ մակարդակի Շրջանային Ասամբլեաների ձայների երկու երրորդը:

Սահմանադրության կանոնադրության փոփոխությունների և ուղղումների համար առաջարկությունները կարող են ներկայացնել ինչպես Գլխավոր Ասամբլեան, այնպես էլ 3-րդ և 2-րդ մակարդակի Շրջանային Ասամբլեաները: Հենց որ փոփոխությունները կամ լրացումները ընդունվում են այս սահմանդրությամբ սահմանված կանոններով, քվեարկության արդյունքները հայտարարվում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Դրանից հետո փոփոխությունները կամ լրացումները ձեռք են բերում օրինական ուժ:

27. Հավատքի Դրույթների փոփոխության բանաձևերը (պարբերություն 1-16.2) պետք է փոխանցվեն Գլխավոր Ասամբլեայի միջոցով, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին, որպեսզի ուսումնասիրվի քննող հանձնաժողովի կողմից, որտեղ ընդգրկված են աստվածաբաններ և ձեռնադրված ծառայողներ, որոնք նշանակված են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից, և արտացոլում են մեր եկեղեցու համաշխարհային բնությունը: Այդ կոմիտեն, իր ցանկացած առաջարկների և լուծումների համար պետք է հաշվետու լինի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդին, որն էլ իր հերթին հաշվետու է Գլխավոր Ասամբլեային:

ՄԱՍ III

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՍՐԲԱԶԱՆ Է

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Քրիստոնեական Կյանք

28. Եկեղեցին ուրախությամբ ավետում է Բարի Լուրը այն մասին, որ մենք կարող ենք ազատ լինել ամեն տեսակի մեղքերից և Քրիստոսում ունենալ նոր կյանք: Աստծո շնորհքի միջոցով մենք՝ քրիստոնյաներս, թողնում ենք« նախկին ապրելակերպը», շրջվում ենք մարմնավոր մտածելակերպից և վարքի հին կանոններից: Մեզ անհրաժեշտ է «Եվ նոր մարդին հագնեք՝ որ Աստծո պատկերի պես ստեղծված է» և «նորոգվել մեր մտքի հոգովը»՝ դառնալով դեպի կյանքի նոր և սուրբ ճանապարհին (Եփեսացիս 4:17-24):

28.1. Նազովրեցու Եկեղեցին իր նպատակն է համարում պարզաբանելու ժամանակակից հասարակության մեջ Աստվածաշնչի հավիտենական սկզբունքները այնպես որ եկեղեցու վարդապետությունները և ուխտերը ճանաչվեն և հասկանալի լինեն շատ երկրներում և տարբեր մշակույթներում: Մենք համարում ենք, որ Նոր Կտակարանում կրկին հաստատված տաս պատվիրանները Քրիստոսի ուսմունքներն են, որոնք լիովին և համառոտ արտահայտվում են Լեռան Քարոզի և Մեծ Հանձնարարության մեջ, կազմելով քրիստոնեական էթիկայի հիմքը:

28.2. Նազովրեցու Եկեղեցին ընդունում է Սուրբ Հոգով ղեկավարվող և լուսավորվող կոլեկտիվ քրիստոնեական գիտակցության կոնցեպցիայի հիմնավորումը: Նազովրեցու Եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմին, միավորելով շատ երկրներ և ազգություններ, հաստատում է իր պատասխանատվությունը քրիստոնեական կյանքի սկզբունքների մանրազնին կատարման ճանապարհներ որոնելուն, որը կբերի բարոյականության սրբացման: Եկեղեցու պատմականորեն ձևավորված բարոյական չափանիշները մասամբ արտահայտված են ներքոհիշյալ կետերում: Այդ կետերին անհրաժեշտ է հետևել ուշադրությամբ և բարեխղճորեն, որպես սուրբ կյանքի համար առաջնորդություն և օգնություն: Նա, ով խախտում է եկեղեցու բարոյական կանոնները, անում է իր սեփական խիզախության հաշվին, և ի վնաս եկեղեցու վկայության: Մշակութային առանձնահատկություններից առաջացած բացառությունները պետք է համաձայնեցվեն Գլխավոր Սուպերինտենդների Խորհրդի հետ և հաստատվեն նրա կողմից:

28.3. Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ այդպիսի նոր սուրբ կյանքի կերպարը ընդգրկում է այնպիսի գործողություններ, որոնցից պետք է խուսափել, ինչպես նաև սիրո գործողություններ, որոնք պետք է կատարվեն մեր մերձավորների հոգիների, մարմնների, և շնչերիի բարիքի համար: Սիրո փրկագնող գործողությունները ընդգրկում են իրենց մեջ հատուկ հարաբերություններ, որոնք կային Հիսուսի մոտ, և որոնք նա ավանդել է Իր աշակերտներին կատարելու այս աշխարհի աղքատների հանդեպ, որ Նրա Եկեղեցին պետք է առաջին հերթին իրեն պահպանի համեստության մեջ և ազատ լինի հարստության և շքեղության տարվածությունից, երկրորդ՝ նվիրել իրեն նրան, որ հոգս տանի, կերակրի, հագցնի և ապաստան տա աղքատներին և մերժվածներին: Աստված նույնացնում է Իրեն Աստվածաշնչի և Հիսուս Քրիստոսի կյանքի և օրինակի միջոցով, օգնում է աղքատներին, ճնշվածներին, հասարակության մեջ նրանց, ովքեր չէին կարող իրենց պաշտպանել: Մենք նույնպես կանչված ենք մեզ նույնացնելու աղքատների հետ և լինել համերաշխ նրանց հետ: Մենք համարում ենք, որ գթասրտության ծառայությունը աղքատներին ընդգրկում է իր մեջ գթասիրտ գործողություններ, ինչպես նաև պայքար նրա համար, որպեսզի աղքատներին տրվի հավասարության և արդարության հնարավորություն: Մենք նաև հավատում ենք, որ աղքատների հանդեպ քրիստոնեական պատասխանատվությունը յուրաքանչյուր քրիստոնյաի կյանքում կարևոր տեսանկյուն է հանդիսանում, ով ձգտում է դեպի սիրով գործող հավատքի: Մենք հավատում ենք,

որ քրիստոնեական սրբությունը անբաժանելի է աղքատներին ծառայելուց, և որ այն տանում է ոչ միայն անձնական կատարելության, այլ նաև տանում է այս աշխարհում ստեղծելու ավելի արդար ու իրավահավասար հասարակություն: Հավատացյալներին սրբությունը ոչ միայն չի բաժանում մարդկանց տնտեսական կարիքներից այս աշխարհում, այլ մեզ մղում է օգտագործել մեր սեփական միջոցները բավարարելու այդ կարիքները և հարմարեցնելու մեր ցանկությունները համապատասխան ուրիշ մարդկանց կարիքների:

(Ել. 23:11; Եր.Օր.15:17; Սաղ. 40:1; 81:3; Առ. 19:17; 21:13; 22:9; Երեմ. 22:16; Մատթ. 19:21; Ղուկ. 12:33; Գործք 20:35; 2 Կոր. 9:6; Գաղ. 2:10)

28.4. Գործողությունների ցանկում որոնցից անհրաժեշտ է խուսափել, չկա շրջապատող աշխարհում գոյություն ունեցող չարիքների բոլոր ձևերի ամբողջական ցուցակ: Հետևաբար մեր եկեղեցու բոլոր անդամներին անհրաժեշտ է անդադար փնտրել Սուրբ Հոգու օգնությունը օրենքի տառը խախտող չարին ճանաչելու համար, հիշելով Պողոս Առաքյալի հորդորանքը. «Ամեն բան փորձեցեք, բարին ամուր բռնեցեք: Ամեն կերպ չար բանից հեռու կացեք»: (Ա.Թեսաղոնիկեցիս 5:21-22)

28.5. Մենք ակնկալում ենք, որ մեր առաջնորդները և հովիվները պարբերաբար և ամբիոնից ավելի շատ ուշադրություն կդարձնեն այնպիսի Աստվածաշնչյան ճշմարտությունների վրա, որոնք զարգացնում են բարին և չարը տարբերելու ունակություն:

28.6. Կրթությունը հասարակության հոգևոր և սոցիալական բարեկեցության կարևոր պայմաններից մեկն է: Մենք ակնկալում ենք, որ Նազովրեցու Եկեղեցու կրթական կազմակերպությունները և հաստատությունները, ինչպիսիք են կիրակնօրյա դպրոցները, դպրոցները (ծննդից մինչև 14 տարեկաններ), երեխաների և մեծահասակների համար սոցիալական ապահովության կենտրոնները, քոլեջները և սեմինարիաները կուսուցանեն երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին Աստվածաշնչյան սկզբունքներին և բարոյական չափանիշներին, այնպես, որ մեր ուսմունքը հայտնի լինի: Այդպիսի հաստատությունները կարող են գոյություն ունենալ ընդհանուր կրթական դպրոցների փոխարեն կամ ի հավելում լրացնեն նրաց: Հանրակրթական դպրոցների կրթություն, պետք է լրացվի ընտանիքում սրբության սկզբունքների ուսումնասիրությամբ: Քրիստոնյաները պետք է համագործակցեն հասարակական կազմակերպությունների հետ, որտեղ նրանք կկարողանային օրինակ ցույց տալ և վկայել Աստծո Արքայության մասին (Մատթեոս 5:13-14):

29. Մենք հատկապես ընդգծում ենք, որ ստորև թվարկած գործողություններից պետք է խուսափել:

29.1. Քրիստոնեական էթիկային հակասող զվարճություններից: Մեր եկեղեցու անդամները՝ որպես քրիստոնյա անձնավորություններ և որպես քրիստոնյա ընտանիքի անդամներ, պետք է առաջնորդվեն երեք սկզբունքներով. Առաջինը, ազատ ժամանակը օգտագործել քրիստոնեական ծառայության համար: Երկրորդ. Հետևել քրիստոնեական պարտավորություններին, այսինքն՝ ապրել համաձայն քրիստոնեական ամենաբարձր բարոյական սկզբունքներով: Քանի որ մենք ապրում ենք բարոյական ամենաթողության օրերում, ապա ամեն օր, մեր տների սահմաններից ներս, մենք գտնվում ենք չարության տարբեր տեսակների ներխուժման վտանգի առաջ, ժամանակակից գրականության, ռադիոյի, հեռուստատեսության, անհատական համակարգիչների և համացանցի միջոցով: Հետևաբար, շատ կարևոր է պահպանել զգուշության ամենախիստ կանոնները, որպեսզի աշխարհիկ չարիքը չթափանցի մեր ընտանիքների մեջ: Սակայն, մենք հակված ենք այն կարծիքին, որ զանգվածային լրատվության միջոցները, որոնք աջակցում և խրախուսում են Աստվածաշնչյան արժեքները և

սրբության կյանքը, պետք է արժանանան հավանության և աջակցության: Մենք խրախուսում ենք մեր երիտասարդներին, որպեսզի նրանք օգտագործեն իրենց տաղանդները զանգվածային լրատվական միջոցներում և արվեստի բնագավառում, որպեսզի մշակույթի այդ ամենաընդգրկող մասերի վրա ունենան դրական ներգործություն: Երրորդ սկզբունքը. Մեր պարտականությունն է ընդդիմանալ աստվածանարգություններին և գռեհիկություններին, որոնք ուղղված են Աստծո դեմ, ինչպես նաև հանդես գալ այնպիսի սոցիալական արատների դեմ, ինչպես բռնությունը, սանձարձակությունը, պոռնոգրաֆիան, աստվածհայոյությունը և օկուլտիզմը, որոնք ծնունդ են առնում զվարճությունների կոմերցիոն արտադրությունների և նրա դրսևորումների կողմից, ինչպես նաև, ձգտել դադարեցնել այն ձեռնարկությունների գործունեությունը, որոնք հայտնի են, որպես այդ զվարճությունների մատակարարողներ: Անհրաժեշտ է նաև խուսափել այն ժամանցային արտադրանքից, որոնք ծնում կամ բացահայտորեն ցուցադրում են բռնություն, սանձարձակություն, պոռնոգրաֆիա, աստվածհայոյություն կամ օկուլտիզմ, ինչպես նաև արտադրանք, որը փառաբանում և նկարագրում է աշխարհիկ սեկուլյարիզացիայի փիլիսոփայությունը, սենսուալիզմը, մատերիալիզմը, որոնք քանդում են սրտի և կյանքի սրբության Աստվածային օրենքները: Այս ամենը, անհրաժեշտ է դարձնում քրիստոնեական կյանքի բարոյական չափանիշների քարոզչությունը և ուսուցումը, այնպես, որ մարդիկ սովորած լինեն աղոթքով հասկանալ, ի՞նչ է նշանակում հետեւել սուրբ կյանքի «բարձր կոչման» ճանապարհին: Դրա համար մենք կոչ ենք անում մեր առաջնորդներին և հովիվներին, պարբերականորեն և քարոզների ժամանակ մատնանշել հավատքի այն աքսիոմների վրա, որոնք կօգնեն զարգացնել զանազանելու հմտություններ առ այն, թե՞ ինչն է օգտակար և ինչն է կործանարար նմանօրինակ զվարճություններում: Օգտակարն ու կործանարարը զանազանելու ունակության զարգացմանը և ուսուցմանը որպես հիմք, կարող է ծառայել Ջոն Վեսլիին, իր մոր կողմից պատգամված խրատները. «Այն ամենը, ինչը բթացնում է քո բանականությունը, ինչը վնասում է քո խղճի զգայնությունը, ինչը մթագնում է քո Աստված ընկալումը, ինչը խանգարում է վայելել հոգևոր կյանքի տեսանկյունները, ինչը նպաստում է մարմնի գերակայությանը բանականության նկատմամբ, քեզ համար մեղք է»: (28.2-24.4, 926-931)

(Հռովմ. 14:7-13; 1 Կոր.10:31-33; Եփես. 5:1-18; Փիլիպպ. 4:8-9; 1 Պետրոս 1:13-17; 2 Պետրոս 1:3-11)

29.2. Վիճակախաղերի և մոլախաղերի այլ տեսակներից անկախ նրանից՝ նրանք օրինականացված են թե ոչ: Եկեղեցին մնում է այն կարծիքին, որ այդպիսի գործունեության արդյունքը մարդու և հասարակության համար վտանգավոր է:

(Մատթ. 6:24-34; 2 Թես.3:6-13; 1 Տիմ. 6:6-11; Եբր. 13:5-6; 1 Հովհ. 2:15-17)

29.3. Գաղտնի միաբանությունների և կազմակերպությունների՝ուխտով և երդումով կապված անդամ լինելուց և դա չի վերաբերվում միայն Ազատ Մասոններին: Այդպիսի կազմակերպությունների կեղծ կրոնական բնույթը համահարթեցնում է քրիստոնեական պարտականությունները, իսկ գաղտնիությունը հակադրում է քրիստոնեական բաց վկայությանը: Այս հարցը կքննարկվի եկեղեցու անդամության մասին դրվագ 112.1-ում:
(1 Կոր.1:26-31; 2 Կոր.6:14—7:1; Եփ. 5:11-16; Հակոբ. 4:4; 1 Հովհ. 2:15-17)

29.4. Պարերի բոլոր տեսակներից, որոնք չեն նպաստում հոգևոր աճին և քանդում են բարոյական նորմերը:

(Մատթ. 22:36-39; Հռովմ. 12:1-2; 1 Կոր.10:31- 33; Փիլ. 1:9-11; Կոր. 3:1-17)

29.5. Ցանկացած տեսակի տոքսիկ նյութերի օգտագործումից, ինչպես սպիրտային խմիչքները,առևտրից կամ դրանց վաճառքի համար թույլտվություն տալու մասնակցությունից, թմրանյութերի օգտագործումից կամ դրանց վաճառքից, ծխախոտի տարբեր տեսակների

օգտագործումից և դրանց վաճառքից:

Սուրբ Գրքի լույսի ներքո և կյանքում ալկոհոլային խմիչքների օգտագործման կործանարար հետևանքների փորձից, ինչպես նաև մարմնի և բանականության վրա դրանց կործանարար ազդեցության բնագավառում բժշկակական հետազոտությունների արդյունքներից ելնելով, մենք որպես հավատքի համայնք, նվիրված և ձգտելով սրբության կյանքի կողմնակից ենք զսպվածության, այլ ոչ թե չափավորության: Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարմինը Սուրբ Հոգու տաճար է: Սիրելով մեզ և ուրիշներին, մենք մարդկանց կոչ ենք անում լիովին խուսափել բոլոր տեսակի ոգելից խմիչքներից: Ավելին, հասարակության առաջև մեր քրիստոնեական պատասխանատվությունը մեզ կոչ է անում օգտագործել բոլոր թույլատրելի և օրինական միջոցները, որպեսզի սպիրտային խմիչքները և ծխախոտը ուրիշների համար ավելի քիչ հասանելի լինի: Աշխարհում ալկոհոլի չարաշահման լայնատարած դեպքերը կոչ են անում մեզ բռնել այնպիսի դիրք, որը կծառայի որպես վկայություն ուրիշների համար: (929-931)

(Առ. 20:1, 23:29-24:2; Ովսե 4:10-11; Ամբ. 2:5; Հռովմ. 13:8, 14:15-21, 15:1-2; 1 Կոր. 3:16-17, 6:9-12, 19-20, 10:31-33; Գաղ. 5:13-14, 21; Եփես. 5:18)

(Միայն եփը նստած գինին կարող է օգտագործվել Հաղորդության խորհրդի մեջ) (515.4, 532.7, 533.2, 534.1, 700)

29.6. Խթանիչների, դեպրեսանտների և հալյուցինոգենների և այլ ոգելից միջոցների օգտագործումը առանց բժշկական խնամքի և ուղղորդման: Բժշկական տեսանկյունից նման սուբստանցիաների վտանգը, Սուրբ Գրային հորդորների հետ մեկտեղ պետք է մնան մարմնի և մտքի վերահսկողության ներքո: Մենք նախընտրում ենք հեռու մնալ ոգելիցներից, խթանիչներից, դեպրեսանտներից, հալյուցինոգեն միջոցներից առանց պատշաճ բժշկական խնամքի և ուղղորդության, անկախ այդ նյութերի օրինական և հասանելի լինելուց: (Մատթ. 22:37-39; Հռովմ. 12:1-2; 1 Կոր. 6:19-20, 9:24-27)

Բ. Մարդկային կյանքը սրբազան է

30. Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ մարդկային կյանքը սրբազան է, և պայքարում է հղիության ընդհատումների, սաղմի ցողունային բջիջների հետազոտության, էվտանազիայի և՛ ծերերին, և՛ անդամալույծներին, անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելուն:

30.1. Վիժեցումը, որպես հղիության ընդհատում: Նազովրեցու Եկեղեցին հիշեցնում է, որ մարդկային կյանքը ստեղծված է Աստծո կողմից և հետևաբար այն սրբազան է: Մենք հավատում ենք, որ դա վերաբերվում է նաև դեռ չծնված երեխաներին: Կյանքը, դա Աստծո պարգևն է: Ցանկացած մարդկային կյանք, ներառյալ մոր որովայնում զարգացող կյանքը, ստեղծված է Աստծո կողմից և Նրա պատկերով, հետևաբար պետք է աճի, գտնի պաշտպանություն և աջակցություն: Բեղմնավորման պահից, երեխան համարվում է մարդկային արարած՝ մարդկային զարգացող կյանքի բոլոր բնութագրումներով և այդ կյանքի հետագա զարգացումը կախված է մորից: Հետևաբար, մենք հավատում ենք, որ մարդկային կյանքը պետք է հարգել և պահպանել բեղմնավորման պահից: Մենք դեմ ենք վիժեցումներին, որոնք կատարվում են անձնական հարմարության կամ ծնելիությունը կարգավորելու համար: Մենք դեմ ենք այն օրենքներին, որոնք թույլատրում են վիժումները ըստ ցանկության: Եթե մոր կյանքին վտանգ է սպառնում, ապա վիժեցման միջոցով մարդու կյանքն ընդհատելու ցանկացած որոշում պետք է կատարվի

բժշկական ցուցումների հիման վրա և քրիստոնեական հոգաբարձության խորհրդատվությունից հետո: Վիժեցմանը գիտակցաբար հակադրվելու համար, մեզնից պահանջում է աջակցել այն ծրագրերին, որոնք անցկացվում են մոր և մանկան օգնության նպատակով:

Անցանկալի հղիության դեպքում, հավատացյալների համայնքը (ներկայացված նրանցով, ում հայտնի է ստեղծված իրավիճակը), պետք է ստեղծի սիրո մթնոլորտ, և աջակցի աղոթքով: Այդպիսի իրավիճակներում, աջակցությունը կարող է արտահայտվել խորհրդատվական կենտրոնների ձևով, հղի կանանց կացարան հատկացնելով, ինչպես նաև, ստեղծել կամ օգտագործել որդեգրման համար քրիստոնեական կազմակերպություններ:

Նազովրեցու Եկեղեցին համարում է, որ միայն այնտեղ, որտեղ անտեսվում են քրիստոնեական վարքի չափանիշները, վիժեցումը կարող է դիտվել, որպես անցանկալի հղիության սովորական ընդհատում: Նազովրեցու Եկեղեցին հիշեցնում է սեռերի միջև հարաբերությունների քրիստոնեական էթիկայի մասին և կոչ է անում վիժեցումը դիտարկել Աստվածաշնչյան սկզբունքների լույսի ներքո, որոնք կարող են քրիստոնեական բարոյականության չափանիշներին համապատասխան լուծումներ հուշել

(Ծնն. 2:7, 9:6; Ել. 20:13, 21:12-16, 22-25; Ղևտ. 18:21; Հոբ 31:15; Սաղմոս 21:9, 138:3-16; Ես. 44:2, 24, 49:5; Եր.1:5; Ղուկ. 1:15, 23-25, 36-45, Գործք 17:25; Հռովմ. 12:1-2; 1 Կոր. 6:16, 7:1; 1 Թես. 4:3-6)

Նազովրեցու Եկեղեցին նաև ընդունում է, որ շատերն են տուժել այնպիսի ողբերգությունից, ինչպիսին է՝ վիժեցումը: Յուրաքանչյուր տեղական համայնքի և յուրաքանչյուր հավատացյալի, կոչ է արվում Աստծո ներման լուրը հասցնել ամեն մարդու, ով վիժեցման խնդիր է ունեցել: Մեր տեղական համայնքները, պետք է պատմեն հույսի և ազատագրման մասին բոլոր նրանց, ովքեր կրել են ֆիզիկական ցավ՝ կամավոր կատարելով հղիության արհեստական ընդհատում:

(Հռովմ. 3:22-24; Գաղ. 6:1)

30.2. Գենային ինժեներիա և գենային թերապիա: Նազովրեցու Եկեղեցին աջակցում է գենային ինժեներիան, որը օգտագործվում է գենային թերապիայում: Մենք ընդունում ենք, որ գենային թերապիան, կարող է օգնել տարբեր հիվանդությունների կանխարգելման և բուժման գործում, ինչպես նաև կանխարգելել և բժշկել ֆիզիկական և հոգեկան շեղումները: Մենք դեմ ենք գենային ինժեներիայի ցանկացած կիրառմանը, որն իրականացվում է՝ նպաստելով սոցիալական անհավասարությանը, մարդկային արժանապատվության անարգմանը, կամ նպաստում է ռասսայական, ինտելեկտուալ կամ սոցիալական գերազանցությունը մյուսների հանդեպ (եվգենիկա): Մենք դեմ ենք հանդես գալիս ԴՆԹ-ի այնպիսի հետազոտություններին, որոնց արդյունքը նպաստում է վիժեցումներին և կանխածնությանը: Բոլոր դեպքերում, գենետիկական հետազոտությունները և գենային թերապիան, պետք է անցկացվեն խոնարհամտությամբ, մարդկային արժանապատվությունը հարգելով, այն մտքով, որ բոլոր մարդիկ հավասար են Աստծո առաջ գթասրտությամբ և արդարամտությամբ:

30.3. Սաղմի ցողունային բջիջների ուսումնասիրությունները և բժշկական/գիտական հետազոտություններ, որոնք քայքայում են բեղմնավորումից հետո մարդու կյանքը: Նազովրեցու Եկեղեցին վճռականորեն աջակցում է գիտական ընկերություններին, ցողունային բջիջների հետ կապված տեխնոլոգիայում առավելությունների ակտիվ որոնումների հարցում, երբ այդ բջիջները ստացվել են հասուն մարդու փափուկ հյուսվածքներից, ընկերքից, ընկերքային այրունից, կենդանիներից կամ այնպիսի աղբյուրներից, որոնք մարդկային սաղմեր չեն: Ցողունային բջիջների ուսումնասիրության մասին մեր տեսակետը հիմնվում է մեր այն հաստատման վրա, որ

մարդկային սաղմն արդեն մարդ է ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ: Հետևաբար, մենք դեմ ենք հանդես գալիս մարդկային սաղմից ստացված ցողունային բջիջների օգտագործմանը՝ բուժման, հետազոտության կամ այլ նպատակների համար:

Եթե ապագայում նոր գիտական հայտնագործությունները հնարավոր կդարձնեն նոր տեխնոլոգիաների օգտագործումը, ապա մենք վճռականորեն աջակցում ենք այդպիսի փորձարկումները, որոնք չեն խախտում մարդկային կյանքի սրբության օրենքը կամ Աստվածաշնչյան կամ այլ բարոյական օրենքներ: Սակայն, մենք դեմ ենք հանդես գալիս ցանկացած նպատակով և ցանկացած հետազոտության համար մարդկային սաղմի ոչնչացմանը, որոնք բեղմնավորումից հետո ոչնչացնում են մարդկային կյանքը: Այդ հայացքներին համապատասխան, մենք դեմ ենք հանդես գալիս ցանկացած նպատակի համար պտղի փափուկ հյուսվածքների օգտագործմանը, որոնք ստացվել են վիժեցումից հետո:

30.4. Մարդու կլոնավորումը: Մենք դեմ ենք հանդես գալիս առանձին մարդու կլոնավորմանը: Մարդն իրենից, Աստծո աչքերում արժեք է ներկայացնում, որը մեզ ստեղծել է Իր նմանությամբ և առանձին մարդու կլոնավորել նշանակում է վարվել նրա հետ որպես իրի, որը չունի սեփական արժանապատվության զգացողություն և այն արժեքները, որոնք տրվում են Արարչի կողմից:

30.5. Էվտանազիա (Ներառյալ ինքնասպանություն բժշկի օգնությամբ): Մենք հավատում ենք, որ էվտանազիան(անբուժելի հիվանդ մարդու, կյանքի դիտավորյալ դադարեցում, ով ունի ուժերը հյուծող անբուժելի հիվանդություն, որը անմիջապես մահով չի սպառնում) անհամատեղելի է քրիստոնեական հավատքի հետ: Դա վերաբերվում է նաև այն դեպքերին, երբ էվտանազիան արվում է անբուժելի հիվանդ մարդու խնդրանքով կամ համաձայնությամաբ (կամավոր էվտանազիա), ինչպես նաև երբ անբուժելի հիվանդը գտնվում է անգիտակից վիճակում և համաձայնություն չի կարող տալ (հարկադրական էվտանազիա): Մենք հավատում ենք, որ քրիստոնեական եկեղեցու և էվտանազիայի կիրառման պատմականորեն որոշված անհամաձայնությունը, հիմնավորվում է Աստվածաշնչի ուսմունքներից փոխ առնված քրիստոնեական համոզմունքներով, որոնք Հիսուս Քրիստոսին՝որպես Տիրոջ հավատալու եկեղեցական առանցքային դավանություններ են:

Էվտանազիան խախտում է քրիստոնյաի վստահությունը Աստծո՝ որպես կյանքի Ամենաբարձր Տիրակալի նկատմամբ, և մարդուն տալիս է սուտ վստահություն այն մասին, որ ինքն է կառավարում իր կյանքը, այն ժամանակ, երբ մենք մեր կյանքով պետք է ծառայենք Աստծուն: Էվտանազիան նպաստում է մարդկային կյանքի և հասարակության արժեզրկմանը: Տառապանքի դադարեցման անհրաժեշտությունը շափազանցված է: Էվտանազիայի կիրառումը արտացոլում է մարդու ինքնավստահությունը Գթասիրտ և Ամենակալ Աստծո դեմ: Մենք, մեր եկեղեցու այցելուներին կոչ ենք անում, ընդդիմանալ էվտանազիայի կիրառման օրինականացման բոլոր փորձերին:

30.6. Մահվան թույլտվություն: Մենք հավատում ենք, որ երբ մարդը մահամերձ է, կյանքի պահպանման արհեստական միջոցները կարելի է չօգտագործել, եթե դա համապատասխանում է քրիստոնեական հավատքին և կյանքին: Դա վերաբերվում է նրանց, ովքեր մշտապես գտնվում են անգիտակից վիճակում և ում համար կյանքի երկարացման համար հատուկ միջոցների օգտագործումը չի տալիս առողջացման հիմնավոր երաշխիքներ: Մենք հավատում ենք, որ եթե քրիստոնեական հավատքի տեսակետից արագ մահը անխուսափելի է, ապա արհեստական

մահվան գործընթացը կարելի է հետաձգել: Լինելով քրիստոնյաներ՝ մենք հավատում ենք Աստծո հավատարմությանը և ունենք հավիտենական կյանքի հույս: Հետևաբար, քրիստոնյաները մահանալիս ունեն հաստատուն հավատք դեպի Հիսուս Քրիստոսը, որը մեր փոխարեն հաղթել է մահին և մահվանից խլել է նրա հաղթանակը:

Գ. Մարդկային սեռականություն և ամուսնություն

31. Նազովրեցու եկեղեցին դիտարկում է մարդու սեռականությունը, որպես սրբության և գեղեցկության արտահայտություններից մեկը, որը ստեղծել է Աստված:

Քանի որ ամբողջ մարդկությունը ստեղծված է Աստծո պատկերով, նրանք ունեն անբեկանելի արժեք և հետևաբար մենք հավատում ենք, որ մարդկային սեռականությունը ընդգրկում է ավելին քան զգայական փորձառությունը և դա Աստծո պրգևն է արտահայտելու մեր ողջ ֆիզիկական և հարաբերական ստեղծագործությունը:

31.1. Նազովրեցու Եկեղեցին որպես սրբության ժողովուրդ հաստատում է, որ մարդկային մարմինը կարևոր է Աստո համար: Քրիստոնյաները կանչված և ընդգրկված են Սուրբ Հոգու վերափոխող ու սրբագործող աշխատանքի մեջ փառավորելու Աստծուն մեր մարմիններով: Մեր զգայարանները և մեր սեռական հակումները, հաճույքի փորձառության մեր կարողությունը, և մեր ցանկությունը կապ հաստատելու ուրիշի հետ գալիս է Աստծո բնավորությունից: Եվ Աստծո կողմից ստեղծված մեր մարմինը բարի է, շատ բարի:

31.2. Մենք հաստատում ենք մեր հավատքը այն Աստծուն, Ում արաչագործությունը սիրո գործողություն է: Ունենալով Աստծո սիրո փորձառությունը, մենք հասկանում ենք, որ Երրորդությունը սիրո միաբանություն է Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև: Հետևաբար մենք մեր էությամն ստեղծված ենք ուրիշների հետ կապ հաստատելու ձգտումով: Այդ ձգտումը վերջնականապես իրագործվում է Աստծո հետ համաձայնեցված հարաբերությամբ, արաչագործությամբ, և մերձավորին իր անձի պես սիրելով: Մեր արարչագործությունը, որպես սոցիալական էակներ, բարի է ու գեղեցիկ: Մենք արտացոլում ենք Աստծո պատկերը, մեր հարաբերվելու ընդունակությամբ, և այդպես անելու մեր ցանկությամբ:

31.3. Աստո ժողովուրդը ձևավորված Քրիստոսում, որպես մեկ ամբողջականություն, սիրո ու շնորհքի հարուստ համայնք է:

Այս համայնքում հավատացյալները կանչված են ապրելու որպես Քրիստոսի մարմնի հավատարիմ անդամներ: Աստծո ժողովրդի մեջ չամուսնացած մարդիկ պետք է արժեքավորվեն ու պաշտպանվեն եկեղեցու համայնքի և սրբերի առատ հաղորդակցությամբ: Ապրել որպես չամուսնացած մարդ ինչպես Քրիստոսը, նշանակում է ընդգրկված լինել համայնքում, շրջապատված ընկերներով, ընդունված և հյուրընկալված, արտահայտելով հավատարիմ վկայություն:

31.4. Նաև այս համայնքում մենք հաստատում ենք, որ որոշ հավատացյալներ կանչված են ամուսնանալու: Ինչպես սահմանված է Ծննդոց գրքում. «...մարդը կթողե իր հայրը և մայրը, և կհարե իր կնոջը, և մեկ մարմին կլինեն»: Ամուսնական ուխտը արտացոլում է Աստծո և Նրա ժողովրդի միջև բացառիկ սեռական հավատարմություն, անշահախնդիր ծառայություն և սոցիալական վկայություն: Կինը և տղամարդը հասարակայնորեն նվիրվում են միմյանց, վկայելով Աստծո սիրո ձևը: Ամուսնական մտերմությունը նպատակաուղղված է արտացոլելու Քրիստոսի և եկեղեցու միաբանությունը, շնորհքի խորհրդավորությունը: Աստծո մտադրությունն

է նաև, որ այս խորհրդավոր միաբանության մեջ տղամարդը և կինը փորձն կիրառել սեռական մտերմության ուրախությունն ու հաճույքը և այս սիրո մտերիմ գործողությունից կարող է նոր կյանք մտնել այս աշխարհ, և լինել հավատացյալների համայնքի խնամքի տակ: Քրիստոսակենտրոն ընտանիքը պետք է լինի առաջին վայրը, որտեղ տեղի է ունենում հոգևոր ձևավորումը: Եկեղեցին պետք է մեծապես հոգ տանի ամուսնության ձևավորման համար, նախամուսնական խորհրդատվության և ուսուցման միջոցով, որը սահմանում է ամուսնության սրբությունը:

31.5. Այնուամենայնիվ Աստվածաշնչյան պատմությունը նաև ներառում է մարդկության անկման ցանկության տխուր հատվածը, որպես վարքի արդյունք արտահայտվելով ինքնավստահությամբ, ուրիշին վնասելով, վարքաբեկելով և սևացնելով մարդկային ցանկութայն ուղին: Որպես անկում ապրած մարդկային էակներ, մենք այդ չարի փորձառությաունը կրում ենք ամեն մակարդակում՝ անձնական և ընդհանուր: Անկում ապրած աշխարհի սկզբունքայնությունը և զորությունը, հագեցրել են մեզ մեր սեռականության մասին ստերով: Մեր ցանկությունները խեղաթյուրվել են մեղքով և մենք պարփակվել ենք մեր մեջ: Մենք նաև մեր ազատ կամքով ունեցել ենք մեր ներդրումը արարչագործության փլուզման մեջ, չարաշահելով Աստծո սերը, ապրելով մեր սեփական կանոններով՝ առանձնացած Աստծուց:

31.6. Սեռականության մեջ մեր կոտրվածությունը ունի շատ ձևեր, որոշ մասը մեր անձնական ընտրության հետևանքով, որոշն էլ մեր կյանք է մտել կոտրված աշխարհի միջոցով: Այնուամենայնիվ Աստծո շնորհքը բավարար է մեր տկարություններում, կարող է բերել համոզվածություն, վերափոխում և սրբագործում մեր կյանքերում: Ուստի որպեսզի դիմակայենք մեղքի ավերվածությանը, և ի վիճակի լինենք վկայելու Աստծո սուրբ նպատակների գեղեցկությունը և բացառիկությունը մեր մարմինների համար, մենք հավատում ենք, որ Քրիստոսի մարմնի անդամները միաբանված հոգով, կարող են և պետք է ձեռնպահ մնան հետևյալից.

- **Արտամուսնական սեռական հարաբերություններ և այլ ոչ պատշաճ սեռական հարաբերությունների տեսակներ:** Որովհետև մենք հավատում ենք, որ մեր սեռական կյանքը պետք է լինի մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ուխտով հաստատված միաբանություն, և դա Աստծո մտադրությունն է, մենք հավատում ենք, որ այս կապից դուրս գործառույթը հաճախ առաջնորդում է մեզ հարաբերությունների մեջ անձի օբյեկտիվացմանը: Իր բոլոր կողմերով, այն նաև պոտենցիալորեն վնասում է մեր կարողությունը, ամբողջ էությամբ մտնելու Քրիստոնեական ամուսնության գեղեցկության և սրբության մեջ:
- **Սեռականությունը միևնույն սեռի մարդկանց միջև:** Որովհետև մենք հավատում ենք, որ մեր սեռական կյանքը պետք է լինի մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև ուխտով հաստատված միաբանություն, և դա Աստծո մտադրությունն է, մենք հավատում ենք, որ միևնույն սեռի մարդկանց սեռական մտերմությունը հակասում է մարդկային սեռականության համար Աստծո կամքը: Միչդեռ անձի հոմոսեքսուալ կամ բիսեքսուալ գրավչությունը կարող է ունենալ բարդ ու տարբեր սկզբնաղբյուրներ, և սեռական մաքրության կոչը կարող է ծանր հետևանք ունենալ, մենք հավատում ենք, որ Աստծո շնորհքը բավարար է նման կանչի համար: Մենք ընդունում ենք, որ Քրիստոսի մարմնում պատասխանատվություն ենք կիսում, լինելու ողջունող, ներող և սիրող համայնք, որտեղ հյուրընկալությունը քաջալերանքը և հաշվետու լինելը հասանելի է բոլորին:
- **Արտամուսնական սեռական հարաբերություններ:** Քանի որ մենք հավատում ենք, որ այս վարքագիծը խոստման չարաշահում է, որը մենք արել ենք Աստո առջև և

Քրիստոսի մարմնի ներսում: Շնությունը եսասիրական գործողություն է, ընտանիքի քայքայման ընտրություն և վիրավորանք Աստծուն, Ով սիրում է մեզ պարզ ու անձնվիրաբար:

- **Բաժանություն:** Քանի որ ամուսնությունը նպատակաուղղված է լինելու ուխտ ամբողջ կյանքի համար, ամուսնական ուխտի խզումը անկախ կողմերից մեկի ընտրության, ընկնում է Աստծո լավագույն մտադրություններից: Եկեղեցին պետք է հոգ տանի պահպանելու ամուսնական կապերը, որտեղ կա իմաստություն և հնարավորություն, առաջարկելով խորհրդատվություն և շնորհք բաժանությունից խոցվածներին:
- Սովորություններ ինչպիսիք են պոլիգամիան և պոլիանդրիան: Քանի որ մենք հավատում ենք, որ Աստծո ուխտային հավատարմությունը արտացոլված է տղամարդու և կնոջ մոնոգամ պարտավորվածությամբ, այս սովորությունները հեռացնում են ամուսնության բացառիկ և յուրահատուկ հավատարմության նպատակից:

31.7. Սեռական մեղքը և ավերումը ոչ միայ անձնական է այն տարածվում է աշխարհի համակարգերում և կառույցներում: Այդ իսկ պատճառով եկեղեցին կրում է Աստծո սուրբ նպատակների իրական գեղեցկության և բացառիկության վկայությունը: Մենք նաև հավատում ենք, որ եկեղեցին պետք է խուսափի և դեմ լինի հետևյալին.

- **Պոռնոգրաֆիան իր բոլոր տեսակներով, որը այլասերված ցանկություն է**: Դա մարդու օբյեկտիվացում է, եսասեր սեռական հաճույքների համար: Այս սովորույթը կործանում է մեր անշահախնդիր սիրելու ունակությունը:
- **Սեռական բռնությունը իր բոլոր տեսակներով, ներառյալ բռնաբարությունը, սեռական ոտնձգությունը, սպառնալիքները, նողկալի խոսքերը, ամուսնական բռնություն, արյունապղծությունը, թրաֆիկինգը, ստիպողաբար ամուսնությունը, կանանց թլփատությունը, վայրագությունը, սեռական զրպարտությունը, փոքրերի և հասարակության այլ խոցելի խավերի բռնությունը:** Բոլոր այն մարդիկ և կառույցները, ովքեր կատարում են սեռական բռնություն, խախտում են սիրիր մերձավորիդ պատվիրը: Քրիստոսի մարմինը միշտ պետք է լինի պաշտպանության, ապահովության և բժշկության վայր, ովքեր եղել են կան և շարունակում են մնալ սեռական բռնության զոհեր: Փոքր նշանակում է 18 տարին չլրացած մարդկային էակ, մինչդեռ մեծամասնության տարիքը, ընդունվում է նահանգի կամ երկրի սեփական ներքին օրենսդրությամբ:

31.8. Հետևաբար մենք հաստատում ենք, որ.

- Որտեղ մեղքը շատ է այնտեղ շնորհքը առավել է: Չնայած որ մեղքի ազդեցությունը համընդհանուր և բազմակողմանի է, շնորհքի ազդեցությունը նույնպես համընդհանուր և բազմակողմանի է: Քրիստոսում Սուրբ Հոգու միջոցով, մենք մենք վերածնվում ենք Աստծո պատկերով: Հներն անցնում են և նորն է գալիս: Չնայած որ մենք նոր արարածներ ենք, մեր կյանքի ձևավորումը կարող է լինել աստիճանական ընթացք, և Աստծո բժշկությունը արդյունավետ է երբ գործ ունենք մարդու սեռականության ավերման հետ:
- **Մարդկային մարմինը Սուրբ Հոգու տաճար է**: Մենք հաստատում ենք, որ մեր սեռականության կարիքը պետք է համապատասխանի Աստծ կարիքին: Մեր մարմինները մեզ չեն պատկանում այլ մարմնի համար գին է վճարվել: Հետևաբար մենք կանչված ենք փառավորելու Աստծուն մեր մարմիններով, հնազանդ կյանքի միջոցով:
- **Աստծո ժողովուրդը դրոշմված է սուրբ սիրով**: Մենք հաստատում ենք, որ առավել բոլոր արժանիքներից իր վրա պետք է կրի Աստծո սերը: Աստծո ժողովուրդը միշտ պետք է

ողջունի կոտրված մարդկանց իրենց ծառայությունների մեջ: Նման քրիստոնեական հյուրընկալությունը ո՛չ անհատի անհնազանդության ներումն է, և ո՛չ էլ վերականգնման մերժումը ավերման խորը արմատների մեջ: Մարդկության վերականգնումը Հիսուսի նմանությանը, պահանջում է խոստովանություն ներողամտություն, ձևավորվող սովորույթներ, սրբագործում, և Աստվածային խորհրդատվություն, բայց ամենից առավել այն ներառում է սիրո ընդունումը, որը հրավիրում է կոտրված մարդուն շնորհքի այն շրջանակի մեջ, որը կոչվում է եկեղեցի: Եթե մենք ձախողենք անկեղծորեն հակադրվել մեղքին և ավերվածությանը, ուրեմն սեր չունենք: Եվ եթե մենք ձախողվենք սիրելու մեջ, մենք չենք կարող այդ կոտրվածությունից մասնակից լինել Աստվածային բժշկությանը:

31.9. Քանի որ գլոբալ եկեղեցին ծառայում է բոլոր աշխարհի մարդկանց, ապա այս պնդումների հավատարիմ գործադրումը որպես համայնք համալիր է և պետք է ուղղորդվի խնամքով, խոնարհությամբ, քաջությամբ և խելամտությամբ:

Դ. Քրիստոնեական ծառայություն

32. Ծառայության նշանակությունը: Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է այն, որ Աստված բոլոր անձերի և ամեն ինչի Տիրակալն է: Դրա համար մենք Նրա տնտեսներն ենք և ծառայում ենք Նրան ինչպես մեր կյանքով, այնպես էլ մեր ունեցվածքով: Մենք պետք է ճանաչենք Աստծո գերիշխանությունը և մեր ծառայությունը, որովհետև մենք անձնական պատասխանատվություն ենք կրում նրա համար, որ մենք կառավարում ենք այն, ինչ մեզ վստահված է Աստծուց: Աստված որպես տիեզերքի Տիրակալ, որ ստեղծել է բոլոր գոյություն ունեցողների օրենքները և կարգերը, սահմանել է զոհաբերությունների համակարգը, որը հաստատում է Նրա տիրապետությունը մարդկային բոլոր ռեսուրսների և փոխհարաբերությունների վրա: Դրան համապատասխան, Նրա բոլոր երեխաները պետք է հավատարմորեն օժանդակեն Ավետարանին և Բարի Լուրի տարածմանը, տասանորդով և ուրիշ զոհաբերություններով:(140)

(Մաղ.3:8-12; Մատթ. 6:24-34, 25:31-46; Մարկ. 10:17-31; Ղուկ. 12:13-24, 19:11-27; Հովհ.15:1-17; Հռովմ. 12:1-13; 1 Կոր. 9:7-14; 2 Կոր.8:1-15; 1 Տիմ. 6:6-19; Եբր. 7:8; Հակ. 1:27; 1 Հովհ. 3:16-18)

32.1. Տասանորդ: Տասանորդի զոհաբերությունը, բոլոր եկամուտների տասներրորդ մասի՝ եկեղեցուն հավատարիմ և մշտական նվիրաբերման իրագործումն է, որի անդամներն ենք մենք՝ հավատացյալներս: Հետևաբար եկեղեցու ֆինանսական ապահովումը պետք է հիմնավորվի զոհաբերությունների համակարգով և տեղական Նազովրեցու Եկեղեցին պետք է օժանդակվի բոլոր մարդկանց կողմից, ովքեր պատկանում են այդ եկեղեցու համայնքին: Բոլոր նրանց, ովքեր հաճախում են Նազովրեցու Եկեղեցի, կոչ է արվում զոհաբերել ամբողջ եկամտի մեկ տասներրորդ մասը՝ որպես նվազագույն դրամական նվիրաբերություն Տիրոջը: Եկեղեցին խրախուսում է նաև այլ կանավոր զոհաբերությունները, եթե Աստված նրանց մղում է զոհաբերելու ամբողջ եկեղեցու, շրջանի, տարածաշրջանի, կրթության կամ ուրիշ կարիքների համար:

Տեղական եկեղեցու համար տասանորդների զոհաբերությունը պետք է կանգնած լինի առաջին տեղում, համեմատած համեմատած ցանկացած ուրիշ զոհաբերությունների հետ, որոնք Աստված կարող է դնել Իր հավատարիմ ծառայողների սրտերում՝ եկեղեցուն ամբողջապես աջակցելու համար:

32.2. Դրամական միջոցների հանգանակումը և դրանց բաշխումը: Ինչպես հստակ

սովորեցնում է Աստվածաշունչը, տասանորդը և այլ զոհաբերություններ, նվիրաբերվում են Ավետարանի տարածման և նոր եկեղեցաշենքերի կառուցման համար: Բայց ոչ մի եկեղեցի չպետք է ներգրավված լինի դրամահավքի մեջ, որը մարդկանց հեռացնում է Աստվածաշնչի սկզբունքներից և քարոզչությունից, խոչընոտում է Ավետարանի տարածմանը, վարկաբեկում է եկեղեցու անունը, չունևորներին դնում է վատ վիճակի մեջ:

Որպեսզի ծածկվի տեղական եկեղեցու, շրջանի, կրթության, Նազովրեցու Եկեղեցու այլ ծրագրերի համար պահանջվող ծախսերը, տեղական եկեղեցիներին անհրաժեշտ է ընդունել և օգտագործել բյուջետային պլան, որը հաշվի է առնում համազոր ֆինանսական փոխանցումները, որոնք տեղական եկեղեցիները ամեն ամիս փոխանցում են աջակցելու շրջանի, կրթության և եկեղեցու ծառայությանը ամբողջապես:

(130, 153, 154, 154.2, 516.13)

32.3. Ծառայության աջակցություն: Այնպես էլ Տերը հրաման տվեց ավետարանը քարոզողներին, ավետարանիցն ապրել» (1 Կորնթ. 9:14) Եկեղեցին պարտավորվում է աջակցել իր ծառայողներին, որոնք արձագանքել են Տիրոջ կանչին և որոնք եկեղեցու հովանու ներքո ամբողջությամբ իրենց նվիրել են հոգևոր ծառայությանը: Հետևաբար մենք կոչ ենք անում եկեղեցու անդամներին, կամավոր աջակցել այդ սրբազան աշխատանքին դրամական զոհաբերությունների ճանապարհով, որպեսզի հովվի աշխատավարձը ամեն շաբաթ կանոնավոր վճարվի; (115.4, 115.6, 129.8)

32.4. Նվիրաբերության հարցեր, պլանավորված և հետաձգված նվիրաբերություններ: Քրիստոնեական ծառայության մեջ անհրաժեշտ է ուշադիր լինել քրիստոնյաների եկամուտներին վերաբերվող հարցերին, դրամով կամ ուրիշ սեփականությունով, որոնք Աստված տվել է նրան տնօրինելու ամբողջ կյանքի ընթացքում: Նազովրեցու Եկեղեցին, ընդունելով այս կյանքում հավատարիմ ծառայելու անհրաժեշտությունը և Աստծուց տրված տեսիլքը, հիմնել է Նազովրեցու Եկեղեցու Ֆոնդ, որպեսզի բարելավի քրիստոնեական ծառայությունը պլանավորված և հետաձգված նվիրատվությունների տեսքով: Հաճախ քաղաքացիական օրենքները չեն ապահովվում գույքի բաշխման հնարավորությունը այնպես, որ այն կատարվի Աստծո փառքի համար: Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է շատ ուշադիր լինի իր կտակը կազմելիս, որպեսզի դա կատարվի ճիշտ և օրինական եղանակով, դրա հետ մեկտեղ առաջարկվում է ուշադրություն դարձնել Նազովրեցու Եկեղեցու ծառայության կարիքների տարբեր ուղղությունների վրա, միսիոներական, կրթական ինչպես նաև ավետարանչություն և բարեգործություններ, տեղական, շրջանային, կրթական և համընդհանուր մակարդակներով:

32.5. Հարանվանական միսիայի բաշխված պատասխանատվություններ: Նազովրեցու Եկեղեցու կառավարումը ներկայացուցչական է: Ամեն տեղական համայնք, աջակցում է եկեղեցու միսիային,ինչպես սահմանված է Գլխավոր Ասամբլեայի կողմից, և այն տեղի է ունենում ի շնորհիվ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի ղեկավարության, համաշխարհային ավետարանչության, կրթության, ծառայողներին և շրջանի ծառայություններին աջակցելու միջոցով: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը և Գլխավոր Խորհուրդը իշխանություն ունեն զարգացնելու, վերանայելու և պահպանելու Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդի գումարներ բարձրացնելու համակարգը, և տեղական եկեղեցիների համար հաստատելու ֆինանսավորման նպատակները և պատասխանատվությունները շրջանային ասամբլեաների միջոցով:

Համաձայն պարագրաֆ 337.1, ազգային խորհուրդները կամ շրջանային խորհրդատվական

խորհուրդները լիազորված են իշխանությամբ՝ ծառայողների համար պլաններ ստեղծելու, ովքեր իրենց շրջաններում թոշակի են գնում: Այդ պլանների հաշվետվությունը պետք է համապատասխանեն պարագրաֆ 337.2. Ըստ պարագրաֆ 32.5-ի հրահանգների, այն չի վերաբերվում ԱՄՆ-ի թոշակների և աջակցությունների Խորհրդին:

Ազգային կամ շրջանային խորհուրդները նույնպես լիազորված են իշխանությամբ աջակցելու քոլեջներին և ինստիտուտներին նրանց շրջաններում:

Յուրաքանչյուր շրջան տեղական եկեղեցիների համար լիազորված է հաստատելու ֆինանսավորման նպատակներ և պատասխանատվություններ շրջանային ծառայության աջակցման համար՝ Շրջանային Ասամբլեայի Ֆինանսական Կոմիտեի օգնությամբ: (238.1. 317.10, 345, 346.3)

Ե. Եկեղեցու ծառայողները

33. Մենք տեղական եկեղեցիներին խորհուրդ ենք տալիս, ծառայության համար ընտրել եկեղեցու ակտիվ անդամների, այսինքն՝ ով վկայել է լիակատար սրբագործվելու փորձի մասին, ում կյանքը Աստծո շնորհքի վկայություն է, որը մեզ կոչ է անում սրբության կյանքի, ով համաձայն է Նազովրեցու Եկեղեցու վարդապետությունների, կառավարման ձևի, կերպի և գործունեության հետ, հավատարմորեն հաճախել տեղական եկեղեցի և աջակցել նրան տասանորդով և ուրիշ զոհաբերություններով: Եկեղեցու ծառայողները պետք է իրենց լիակատար նվիրեն «դաստիարակելու Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում»: (113.11, 127, 145-147)

Զ. Ժողովների անցկացման կարգը

34. Նկատի ունենալով գոյություն ունեցող օրենսդրությունը, ինչպես նաև Ուղեցույցից վերցրած եկեղեցու կանոնադրությունն և կառավարման կանոնները, Նազովրեցու Եկեղեցու անդամների տեղական, շրջանային և համընդհանուր հանդիպումները և ժողովները, և Նազովրեցու Եկեղեցու հանձնաժողովների նիստերը պետք է անցկացվեն և վերահսկվեն համաձայն պառլամենտական արարողակարգերի կանոնների համաձայն (Robert’s Rules of Order Newly Revised, վերջին հրատարակություն): (113, 205, 300.3)

Է.Քրիստոնեական վարքագծի պատվիրաններում փոփոխությունների ներմուծում

35. Քրիստոնեական վարքագծի պատվիրաններում դրույթները կարող են չեղյալ համարվել կամ փոխվել, միայն տվյալ Գերագույն Ասամբլեայի բոլոր անդամների ձայների ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնության դեպքում:

ՄԱՍ IV

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՇՐՋԱՆՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԵԿԵՂԵՑԵՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նազովրեցու Եկեղեցու խնդիրն է բոլոր ազգերին ազդարարել Աստծո փոխակերպող շնորհքի մասին, Հիսուս Քրիստոսով մեղքերի թողությամբ և սրտի մաքրության միջոցով: Մեր միսիան առաջին հերթին կայանում է նրանում, որպեսզի «դաստիարակենք Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում», ընդունել հավատացյալներին եկեղեցական համայնքի անդամության և հաղորդակցության մեջ, բոլորին կարգել ծառայության մեջ, ով կպատասխանի հավատքով: Վերջնական նպատակն է. «հավատքի համայնքը», վերջին օրը ամեն մարդու կատարյալ կանգնեցնել Հիսուս Քրիստոսի մեջ (Կող.1:28):

Հենց տեղական եկեղեցում է տեղի ունենում հավատացյալի փրկությունը և կատարելությունը, կրթությունը և ծառայության նշանակվելը: Տեղական եկեղեցին, Քրիստոսի Մարմինն է, որը մեր հավատքի և միսիայի տեսանելի պատկերացումն է: Այդպիսի տեղական եկեղեցիները միավորված են վարչական շրջանների և տարածաշրջանների մեջ:

Նազովրեցու Եկեղեցու միաբանության հիմքն է հավատամքը, եկեղեցու կառուցվածքը, սահմանումները և կանոնները, որոնք արտահայտված են Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցում:

Այդ միաբանության էությունը, հռչակված է այս Ուղեցույցի Հավատքի Դրույթներում: Մենք ամեն երկրներում, եկեղեցիներին կոչ ենք անում մշտապես թարգմանել և տարածել այս հավատամքները, ինչպես նաև սովորեցնել համաձայն նրանց: Դա ոսկե թել է, որը միահյուսված է այն ամեն կտավի մեջ, ինչով մենք ապրում ենք և ի՞նչ ենք անում մենք, որպես Նազովրեցու Եկեղեցու անդամներ:

Այդ միաբանության տեսանելի արտացոլումն է Գլխավոր Ասամբլեան, Նազովրեցու Եկեղեցու իշխանության գերագույն, ընտրական, օրենսդիր և վարդապետություն ձևավորող մարմինն է:

Այդ միաբանության հետևյալ արտացոլումն է միջազգային Գլխավոր Խորհուրդը, որը ներկայացնում է ամբողջ Եկեղեցին:

Երրորդ արտացոլումն է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը, որը բացատրում է Եկեղեցական Սահմանադրության դրույթները, ընդունում է անհրաժեշտ ուղղումները, հիմնավորված տարածաշրջանի մշակութային առանձնահատկություններով, և ձեռնադրում է ծառայության համար:

Նազովրեցու Եկեղեցու կառավարումը ներկայացուցչական է, դրանով հեռանում ենք այնպիսի ծայրահեղություններից, ինչպես կառավարման եպիսկոպոսական ձևը, ինչպես նաև այն անսահմանափակ համայնականությունը:

Եկեղեցու ծառայությունը տեղի է ունենում աշխարհի տարբեր շրջաններում: Այնտեղ, որտեղ դա պայմանավորված է քաղաքական և մշակութային առանձնահատկություններով, կարող են կատարվել տեղական, շրջանային և տարածաշրջանային կառավարման կանոնների ուղղումներ, որոնք պարունակում են IV մասում, բաժիններ 100, 200, 300: Այդպիսի ուղղումների խնդրանքները պետք է գրավոր ներկայացվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին և այն պետք է հաստատվի նրանց կողմից: (300)

I. ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ա. ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, ԱՆՎԱՆՈՒՄ, ԳՐԱՆՑՈՒՄ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ՄԻԱՎՈՐՈՒՄ, ԼՈՒԾԱՐՈՒՄ

100.Կազմավորում: Տեղական եկեղեցիները կարող են կազմակերպվել շրջանային սուպերինտենդենտի կողմից, որը լիազորված է գլխավոր սուպերինտենդենտից, կամ ձեռնադրված հովվի (երեցի) կողմից, որը իր համապատասխան լիազորությունները ստացել է գլխավոր կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից: Եկեղեցու ստեղծման պաշտոնական ծանուցագիրը պետք է պահպանվի Գլխավոր Քարտուղարի գրասենյակում, համապատասխան իրավաբանական գործընթացների: (23, 107, 211.1, 538.15)

100.1. Եկեղեցական տիպի միսիա: Հավատացյալների համայնքի կողմից ստեղծված նոր խմբերը, որոնք գրանցված չեն պարագրաֆ 100-ին համապատասխան, կարող են գրանցված լինել Գլխավոր Քարտուղարի կողմից, տեղական սուպերինտենդենտի համաձայնությամբ, որպես եկեղեցական տիպի միսիա, որտեղ որ գտնվում է այդ խումբը: Ծառայողը, որը աշխատում է այդ միսիայում, որպես հովիվ կամ օգնական, տեղական սուպերինտենդենտի համաձայնությամբ պետք է համարվի, որպես նշանակված ծառայող: Եկեղեցական տիպի միսիան պետք է հաշվառվի համաձայն պարագրաֆ 102-ի, և անդամություն ընդունել և հաշվետվություն տալ: (100.2, 107.2, 138.1, 159, 211.6)

100.2. Բազմահամայնքային եկեղեցի: Կազմակերպված տեղական եկեղեցիները կարող են լայնացնել իրենց ծառայությունը, հիմնելով տարբեր լեզուներով Աստվածաշնչի ուսումնասիրության խմբեր, օգտագործելով տեղական եկեղեցու շենքը: Աստվածաշնչի ուսումնասիրության այդ խմբերը, հետագայում կարող են ձևափոխվել եկեղեցական տիպի միսիաների, կամ լրիվ ձևավորված եկեղեցիների: Արդյունքում, կարող են առաջանալ համայնքներ թվով մեկից ավելի, ունենալով նույն անունը, եթե այն հաստատված է շրջանային սուպերինտենդենտի կողմից: Այդպիսի բազմահամայնքային եկեղեցիներում, որտեղ ոչ բոլոր համայնքներն են լրիվ ձևավորված եկեղեցիներ, կարող են տրվել կազմակերպված տեղական եկեղեցիների արտոնություններ: Այդ իրավունքները տրվում են Շրջանային Խորհրդատվական Խորհրդի միջոցով, շրջանային սուպերինտենդենտի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի աջակցությամբ: Այդ կանոնները և արտոնությունները պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին.

1. Տեղական կազմակերպված եկեղեցիներից առանձին, նման համայնքները չեն կարող գրանցվել:

2. Տեղական կազմակերպված եկեղեցիներից առանձին, նման համայնքները չեն կարող ունենալ անշարժ գույք,:

3. Առանց շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և կազմակերպված եկեղեցու եկեղեցական խորհրդի հավանության, նմանօրինակ համայնքները չեն կարող պարտք վերցնել:

4. Ոչ մի նման համայնք չի կարող առանձնանալ կազմակերպված տեղական եկեղեցուց, կամ ինչ-որ ձևով փոխել իր վերաբերմունքը նրա նկամամբ, առանց շրջանային սուպերինտենդենտի փաստատթղթային թույլտվության և տեղական եկեղեցու հովվի հետ խորհրդատվությունից հետո: (100-100.1)

101. Եկեղեցու անվանումը: Նոր կազմակերպված եկեղեցու անվանումը որոշվում է տեղական եկեղեցով, խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային

Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ: (102.4)

101.1. Անվան փոփոխությունը: Նազովրեցու Եկեղեցու տեղական եկեղեցին կարող է իր անունը փոխել, հետևելով հետևյալ արարողակարգին.

1. Տեղական եկեղեցական խորհուրդը, անվանափոխության համար առաջարկություն է ներկայացնում շրջանային սուպերինտենդենտին, որը իր հերթին պետք է Շրջանային Խորհրդատվական Խորհրդից գրավոր հավանություն ստանա:

2. Ամենամյա անդամական ժողովի ժամանակ, տեղական եկեղեցին պետք է քվեարկի ձայների մեծամասնությամբ:

3. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը փոփոխության մասին զեկուցում է շրջանային ասամբլեային և շրջանային ասամբլեան քվեարկում է դրա օգտին: (102.4)

102. Միության գրանցումը: Ամենուրեք, որտեղ որ հնարավոր է, եկեղեցու վստահելի դեմքերը պետք է տեղական եկեղեցին գրանցեն որպես միություն: Ընդ որում, եկեղեցու այդ վստահելի դեմքերը և նրանց իրավահաջորդները, դառնում են տվյալ գրանցված կազմակերպության կառավարման անդամներ: Եթե այն հակասության մեջ չի մտնում քաղաքացիական օրենսդրության հետ, այդ միության կանոնադրությունը պարզաբանում է, որ կազմակերպությունը հաշվետու է Նազովրեցու Եկեղեցուն: Դա ժամանակ առ

ժամանակ, հաստատվում է Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Ասամբլեայի ժամանակ և հռչակված է Նազովրեցու Եկեղեցու այս Ուղեցույցում: Բոլոր սեփականությունը, տեղական եկեղեցու աջակցությամբ և հավանությամբ, կառավարվում և հսկվում է կառավարման անդամների կողմից:

102.1. Այն դեպքում, երբ Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, տեղական եկեղեցու կամ նոր հիմնված եկեղեցու համար սեփական հողային տեղամաս է ձեռք բերում և պատրաստվում շինարարության համար, համառորեն խորհուրդ է տրվում, որ Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, հողի սեփականության իրավունքը տա տեղական եկեղեցուն, եթե տեղական եկեղեցին հատուցի Շրջանային Խորհրդատվական Խորհուրդի կողմից նախապես կատարված ներդրումները:

102.2. Միշտ, երբ հնարավոր է, տեղական եկեղեցու գրանցման ժամանակ, անշարժ գույքը ամրացվում է գրանցված միության անունով: (102.6)

102.3. Հովիվը և եկեղեցական խորհրդի քարտուղարը պետք է լինեն պրեզիդենտ և քարտուղար ինչպես գրանցված, այնպես էլ չգրանցված եկեղեցու համար: Նրանք կազմում և ստորագրում են անշարժ գույքի հանձնման պայմանագրերը, գրավաթղթերը, գրավի մարման փաստաթղթերը, պայմանագրերը և եկեղեցու մյուս պաշտոնական թղթերը, եթե նրանք համաձայնեցված չեն Ուղեցույցի այս կամ այն ձևով, և չեն սահմանափակվում կանոններով, պարագրաֆներ 104 – 104.3:

102.4. Յուրաքանչյուր գրանցված տեղական եկեղեցու կանոնադրությունը պետք է ներառի հետևյալը:

1. Գրանցված կազմակերպության անվանումը պետք է ներառի «Նազովրեցու Եկեղեցի» բառը:

2. *Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի Հոդվածները* պետք է լինեն այն կանոնները, որով ղեկավարվում է գրանցված միությունը:

3. Գրանցված միության կանոնադրությունը չպետք է ունենա այնպիսի դրույթներ, որոնք տեղական եկեղեցուն կխանգարեն ազատվել որոշակի հարկերից, որը հնարավոր է այդ շրջանի ուրիշ եկեղեցիների համար:

4. Լուծարման դեպքում, գրանցված միության միջոցները, փոխանցվում են Շրջանային Խորհրդատվական Խորհրդին:

Միության կանոնադրությունը, կարող է ունենալ լրացուցիչ դրույթներ, որոնք ուշադրություն են դարձնում տեղական օրենսդրությանը: Սակայն, չպետք է ներառվեն այնպիսի դրույթներ, որոնք կարող են հանգեցնել Նազովրեցու Եկեղեցու ունեցվացքի կորստին: (101-101.1, 104.3, 106.1-106.3

102.5. Բազմահամայնք եկեղեցիներում, որտեղ կան մեկից ավել կազմակերպված եկեղեցիներ, օգտվում են եկեղեցական շենքից, գրանցումը կարող է իրականանալ համատեղ, համագործակցության ձևով, եթե տեղական օրենքները դա թույլատրում են:

102.6. Այն տեղերում, որտեղ եկեղեցու գրանցումը հնարավոր չէ, եկեղեցու անվանումը պետք է ունենա «Նազովրեցու Եկեղեցի» անվանումը, ներառյալ բոլոր տեսակի իրավական փաստաթղթերի վրա, չսահմանափակվելով անշարժ գույքի սեփականության և ավանդների պահպանման ակտերը: (102. 2)

103. Անշարժ գույքը: Այնպիսի հարցերում ինչպես անշարժ գույք ձեռք բերելու, եկեղեցական կարիքների համար շենքերի կառուցման, կապիտալ նորոգման, վերակառուցելու կամ տեղական եկեղեցու ցանկությամբ, ինչ-որ կարիքի համար հողակտորի վարձակալության դեպքում, առաջարկությունը պետք է փոխանցել շրջանային սուպերինտենդենտին և Եկեղեցական Անշարժ գույքի Շրջանային Խորհրդին, քննարկելու և նրանցից ստանալու խորհուրդ և հավանություն: Անշարժ գույք ձեռք բերելու, եկեղեցական շենքեր կառուցելու, կապիտալ վերանորոգման կամ եկեղեցու վերակառուցելու դեպքում, չպետք է ունենալ ոչ մի պարտքեր, վարկերով կամ առանց վարկ, առանց շրջանային սուպերինտենդենտի և Եկեղեցական Անշարժ գույքի Շրջանային Խորհրդի նախնական գրավոր հավանության: Տեղական եկեղեցին այս խորհրդին տարեկան չորս անգամ պետք է ներկայացնի ֆինասական և ընթացքային հաշվետվություն: (236- 237.5)

103.1. Այն դեպքում, եթե համաձայնություն չի լինում եկեղեցու խորհրդի, շրջանային սուպերինտենդենտի և Եկեղեցական Անշարժ գույքի Շրջանային Խորհրդի միջև, կարցը կարող է ներկայցման դրվել լիազորված գլխավոր սուպերինտենդենտին: Եկեղեցին կամ շրջանային սուպերինտենդենտը կարող են բողոքարկել (եթե համաձայն չեն գլխավոր սուպերինտենդենտի որոշման հետ) Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին, որպեսզի կայացվի վերջնական որոշում: Բոլոր նման բողոքարկումները, հերքումները, տվյալ հարցի վերաբերյալ բանավեճերը, պետք է գրավոր ներկայացվեն լիազորված գլխավոր սուպերինտենդենտին կամ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին: Եկեղեցական խորհուրդին կամ շրջանային սուպերինտենդենտին անհրաժեշտ է ընդիմախոսներին ուղարկել բողոքարկման պատճեն, հերքման կամ տվյալ հարցի բանավեճի վերաբերյալ: Եկեղեցական խորհրդի բողոքարկման արձանագրությունները, պետք է ընդգրկեն ներման որոշումը, փաստարկներ, որոնք վերաբերվում են քննարկվող հարցին, անցկացված քվեարկության քաղվացքները:

104. Սահմանափակումներ: Տեղական եկեղեցին չի կարող ձեռք բերել անշարժ գույք, ինչպես նաև վաճառել, գրավ դնել, փոխել վարկային պայմանները, կամ ինչ- որ ուրիշ ձևով գրավ դնել անշարժ գույքը, փոխել կամ ուրիշ կերպ տնօրինել անշարժ գույքով առանց բոլոր անդամների ձայների երկու երրորդով, որոնք ներկա են տարեկան ժողովին կամ հատուկ այդ նպատակով կանչված ժողովին: Եթե եկեղեցին վերաֆինանսավորում է գոյություն ունեցող պարտքը և այն չի ավելացնում եկեղեցու պարտքը և հետագայում չի ազդում եկեղեցու անշարժ գույքի վրա, վերաֆինանսավորումը կարող է հաստատվել խորհրդի ձայների երկու երրորդով, առանց համայնքային քվեարկության: Տեղական եկեղեցուն ֆինանսական միջոցներով ապահովելու համար, անշարժ գույքը տրվում է հատուկ նպատակով, երբ կա եկեղեցական խորհրդի ձայների երկու երրորդի համաձայնությունը: Բոլոր այդ դեպքերում անհրաժեշտ է շրջանային սուպերինտենդենտի և Եկեղեցական Անշարժ գույքի Շրջանային Խորհրդի գրավոր

հաստատությունը: (113.3-113.4, 113.7-113.8, 237.3-237.4)

104.1. Տեղական եկեղեցուն պատկանող անշարժ գույքը չի կարող տրվել որպես գրավ, ընթացիկ ծախսերը ծածկելու համար:

104.2. Տեղական եկեղեցին, որը գրավ է դնում կամ վաճառում է անշարժ գույքը, կամ ապահովագրական փոխհատուցում է ստանում անշարժ գույքի համար, պետք է օգտագործի այդ միջոցները անշարժ գույք ձեռք բերելու կամ անշարժ գույքի պայմանները բարելավելու համար, և հենց դրանով ավելացնելով նրա արժեքը կամ անշարժ գույքի հետ կապված պակասեցնել պարտքերը կամ հիմնի նոր եկեղեցի:

Այդ միջոցները կարող են օգտագործվել ուրիշ նպատակներով, միայն շրջանային սուպերինտենդենտի և Եկեղեցական Անշարժ գույքի Շրջանային Խորհրդի հավանության դեպքում:

104.3. Եկեղեցու վստահելի դեմքերը և/կամ տեղական եկեղեցին չեն կարող շեղել իրավիճակը, որը կբերի Նազովրեցու Եկեղեցու անշարժ գույքի կորստին: (113-113.1):

104.4. Եկեղեցիների առանձնացումը: Ոչ մի տեղական եկեղեցի, որպես ամբողջական կազմակերպություն, չի կարող բաժանվել Նազովրեցու Եկեղեցուց, և ոչ մի կերպ չի կարող նրա հետ խզել իր կապերը, բացառությամբ Գլխավոր Ասամբլեայի որոշումների, եթե կան համապատասխան պայմաններ և պլաններ: (106.2-106.3)

105. Միավորում: Երկու և ավել եկեղեցիներ կարող են միաբանվել, եթե տվյալ որոշման աջակցության համար կա եկեղեցիների ներկա անդամների ձայների երկու երրորդը: Քվեարկությունը տեղի է ունենում տվյալ եկեղեցիների հատուկ ժողովի ժամանակ: Ընդ որում, պետք է պահպանվեն հետևյալ պայմանները. Եկեղեցիների միաբանությունը պետք ձայների մեծամասնությամբ հավանություն տրվի տվյալ եկեղեցիների եկեղեցական խորհրդների բոլոր անդամների գաղտնի քվեարկության ժամանակ և եկեղեցիների միաբանությունը գրավոր պետք է հաստատվի շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից:

Նոր համայնքի հատուկ ժողովի ժամանակ, եկեղեցիների միաձուլման որոշումը դառնում է վերջնական, հրավիրվում է հովիվ և ընտրվում են ծառայողներ: Ժողովը առաջնորդում է շրջանային սուպերինտենդենտը կամ նրա կողմից նշանակված ձեռնադրված հովիվը (երեցը):

Ստեղծված կազմակերպությունը ընդգրկում է միավորված եկեղցիների բոլոր բաժինները, այդ եկեղեցիների բոլոր անդամները, այն կարող է նաև միավորել բոլոր ակտիվները և պասիվները, կամ նրանց մի մասը, այսինքն՝ բոլոր ունեցվածքը և միավորված եկեղեցիների բոլոր պարտավորությունները, շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի, և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հաստատմամբ: Եկեղեցիների միավորումը նաև կմիաձուլի նրանց ներդրումները գլխավոր, կրթական, և շրջանային բյուջեների մեջ:

Շրջանային սուպերինտենդենտի հայտարարությունից հետո, Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Քարտուղարը, եկեղեցիների ընդհանուր ցուցակից, հանում է նախկին միավորված եկեղեցիների անունները:

106. Եկեղեցու գործունեության ժամանակավոր դադարեցում/եկեղեցու լուծարումը: Պայմանավորված եկեղեցու կյանքի անցումային շրջանով, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, եկեղեցու գործունեությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել:

106.1. Տեղական եկեղեցին կարող է լուծարվել, եթե կա.

1. շրջանային սուպերինտենդենտի հանձնարականը,
2. իրավասու գլխավոր սուպերինտենդենտի հաստատող պատասխանը,
3. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամների ձայների երկու երրորդի

առկայությունը:

106.2. Տեղական եկեղեցու լուծարման, ինչպես նաև Նազովրեցու Եկեղեցու կազմից դուրս գալու կամ փորձ կատարելու ժամանակ (վկայված Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից), նրա բոլոր գույքը ոչ մի դեպքում չի կարող օգտագործվել ուրիշ նպատակներով: Այդպիսի դեպքերում սեփականության իրավունքը պետք է փոխանցվի Շրջանային Խորհրդատվական Խորհրդին, որը գործում է որպես շրջանի ներկայացուցիչ, որտեղ տվյալ եկեղեցին գրանցված է եղել, կամ շրջանային ասամբլեայի ցուցումով օգտագործման համար փոխանցվի Նազովրեցու Եկեղեցու այլ պաշտոնական ներկայացուցիչների: Եկեղեցու վստահված անձինք տնօրինում են լուծարված եկեղեցու ունեցվածքը, նրանք կարող են վաճառել կամ մեկ ուրիշ ձևով տնօրինել գույքը միայն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կամ շրջանային ասամբլեան ներկայացնող պաշտոնական անձի ցուցումով կամ ղեկավարությամբ, եթե կա լիազորված գլխավոր սուպերինտենդենտի գրավոր համաձայնությունը: Յուրաքանչյուր սեփականության իրավունքի կամ գումարի փոխանցումը, որը գոյացել է սեփականության վաճառքից, կատարվում է շրջանային Ասամբլեայի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի գիտությամբ և ղեկավարությամբ: (104.4, 106, 225.23)

106.3. Նազովրեցու Եկեղեցու լուծարված, դուրս եկած կամ դուրս գալու մտադրություն ունեցող ոչ մի վստահված անձնավորություն/անձնավորություններ չեն կարող որոշել իրավիճակ, որը կարող է բերել Նազովրեցու Եկեղեցու ունեցվածքի կորստին: (104.4, 141-144, 225.23)

106.4. Միայն պաշտոնապես լուծարված եկեղեցիները կարող են հեռացվել Գլխավոր Քարտուղարի ցուցակից:

106.5. Եթե եկեղեցու գործունեությունը դադարեցված է, եկեղեցու բանկային փաստաթղթեր ստորագրելու համար լիազորված անձինք, պետք է բոլոր դրամական միջոցները և/կամ հաշվեհամարները փոխանցեն Շրջանային Խորհրդատվական Խորհրդին, որպես պահպանելու ավանդ: Անհամաձայնության դեպքում Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է բոլոր հաշվեհամարների փակման որոշում կայացնել և լիազորված է տնօրինելու եկեղեցու բոլոր միջոցները այնտեղ, որտեղ այն թույլատրված է օրենքով:

Բ. Անդամությունը տեղական եկեղեցում

107. Լրիվ անդամություն: Բոլոր նրանք, ովքեր կազմակերպված են տեղական եկեղեցում համաձայն եկեղեցու կանոնակարգի, նաև բոլոր նրանք, ովքեր պաշտոնապես ընդունվել են եկեղեցու հովվի, շրջանային սուպերինտենդենտի կամ գլխավոր սուպերինտենդենտի կողմից, և վկայել են իրենց փրկության, իրենց հավատքի մասին դեպի Նազովրեցու Եկեղեցու վարդապետությունները և պատրաստակամություն են հայտնել հնազանդվելու եկեղեցու կառավարմանը, դառնում են եկեղեցու լիակատար անդամներ: Տեղական եկեղեցու առաջնորդները աշխատում են եկեղեցու ամեն անդամի ծառայելու հնարավորություն տալ, ինչպես նաև ցուցաբերում են հոգատարություն և աջակցություն: (23, 107.2, 111, 113.1, 516.1, 520, 532.8, 538.8-538.9)

107.1. Թեկնածուներին, որոնք ցանկություն են հայտնում միաբանվելու եկեղեցուն, հովիվը պետք է բացատրի եկեղեցու անդամների պատասխանատվությունները և առավելությունները, Հավատքի Դրույթները, Քրիստոնեական Վարքագծի Պատվիրանները և Քրիստոնեական Բնավորության Պատվիրանները, ինչպես նաև Նազովրեցու Եկեղեցու նպատակի և առաքելության մասին:

Խորհրդակցելով Ավետարանչության և Անդամության Կոմիտեի հետ, հովիվը ընդհանուր ծառայության ժամանակ, երաշխավորված թեկնածուներին ընդունում է որպես եկեղեցու անդամներ, օգտագործելով եկեղեցու անդամության ընդունելու ձևը: (21, 28-33, 110-110.4, 228, 704)

107.2. Եկեղեցական տեսակի միսիաներ: Այնտեղ, որտեղ տեղական եկեղեցին դեռ ձևավորված չէ, եկեղեցական տեսակի միսիան ընդունում է եկեղեցու անդամ, համաձայն պարագրաֆ 107 և 107.1–ի, ինչպես նաև, ներկայացնում է տեղեկություններ տարեկան վիճակագրության համար:

107.3. Քվեարկություն և ծառայության նշանակում: Միայն նրանք, ովքեր հանդիսանում են եկեղեցու լիարժեք անդամներ և արդեն 15 տարեկան են, կարող են նշանակվել ծառայության: Եվ եթե տեղական օրենքները թույլատրում են քվեարկել ամենամյա ժողովների ժամանակ, կամ ներկայացնել եկեղեցին որպես պատվիրակներ շրջանային ասամբլեաների ժամանակ:

108. Դեմքեր, ովքեր ունեն եկեղեցու անդամության թեկնածության կարգավիճակ: Այնտեղ, որտեղ շրջանը հնարավորություն է տալիս, տեղական եկեղեցին կարող է հետաքրքրված մարդկանց տալ եկեղեցու անդամության թեկնածության կարգավիճակ: Տվյալ դեպքում, այդ մարդիկ ունեն եկեղեցու անդամության բոլոր արտոնությունները և առավելությունները, բացառությամբ քվեարկելու և եկեղեցում պաշտոն զբաղեցնելու իրավունքից: (205.24)

108.1. Մարդիկ, ովքեր ունեն եկեղեցու անդամության թեկնածության կարգավիճակ, կարող են դառնալ եկեղեցու լիիրավ անդամներ, կամ հովվի և Ավետարանչության և Անդամության Կոմիտեի հայեցողությամբ, կրճատվեն այն մարդկանց ցուցակից, ովքեր ունեն եկեղեցու անդամության թեկնածության կարգավիճակ:

109. Եկեղեցում ոչ ակտիվ անդամություն: Տեղական եկեղեցին կարող է որոշ անդամների դասակարգել, որպես եկեղեցու ոչ ակտիվ անդամներ, համաձայն պարագրաֆներ 109.1 և 109.2: (112.3, 133)

109.1. Տեղական եկեղեցու անդամը, ով տեղափոխվել է ուրիշ տեղ ապրելու և մասնակցություն չունի եկեղեցու գործունեության մեջ, որի անդամն էր նա, կարելի է հիշեցնել նոր տեղում Նազովրեցու Եկեղեցի այցելելու հնարավորության մասին և որպես անդամ տեղափոխվել այդ եկեղեցի:

109.2. Եթե եկեղեցու անդամը, մշտապես առանց պատճառի վեց ամիսների ընթացքում բացակայել է եկեղեցու կրոնական ծառայություններից, և նրա բացակայությունը եկեղեցու խորհրդի կողմից համարվել է հարգելի, և փորձեր են կատարվել նրան ոգեշնչելու ավելի ակտիվ գործունեության, ապա Ավետարանչության և Անդամության Կոմիտեի երաշխավորությամբ, և եկեղեցական խորհրդի որոշմամաբ, նրա անդամությունը եկեղեցում կարող է հայտարարվել ոչ ակտիվ: Հովիվը, եկեղեցու խորհրդի որոշումից հետո, 7 օրվա ընթացքում, որոշումը նամակով պետք է տեղյակ պահի այցելուին, հաշտեցնելու կամ թյուրիմացությունները պարզաբանելու նպատակով: Այնուհետև, տեղական եկեղեցու անդամական ցուցակում հովիվը կատարում է թարմացում եկեղեցու անդամի անվան դիմաց, և կատարում է հետևյալ գրառումը. §եկեղեցու խորհրդի որոշմամբ, մտցված է ոչ ակտիվ անդամների ցուցակի մեջ¦ (ամսաթիվ):

109.3. Ակտիվ և ոչ ակտիվ եկեղեցու անդամները, ընգրկված են տեղական եկեղեցու բոլոր անդամների թվի մեջ, և շրջանային ասամբլեայի ժամանակ նրանք դիտարկվում են առանձին կարգերով. 1) ակտիվ, 2)ոչ ակտիվ:

109.4. Եկեղեցու հատուկ և ամենամյա ժողովների ժամանակ, ոչ ակտիվ անդամները չեն կարող քվեարկել, ինչպես նաև եկեղեցում պաշտոններ զբաղեցնել:

109.5. Եկեղեցու ոչ ակտիվ հայտարարված անձը, կարող է նամակով դիմել եկեղեցական

խորհրդին, խնդրելով վերականգնել իրեն ակտիվ անդամների ցուցակի մեջ: Այդ խնդրանքը պետք է ընդգրկի տվյալ եկեղեցուն կատարված ուխտի հաստատումը: Եկեղեցական խորհուրդը, հարցումին պետք է պատասխանի 60 օրվա ընթացքում: Իրական եկեղեցու անդամությունը կարող է վերականգնվել եկեղեցու Ավետարանչության և Անդամության Հանձնաժողովի երաշխավորությամբ, և եկեղեցական խորհրդի որոշմամբ:

Գ. Տեղական եկեղեցու Ավետարանչության և Անդամության Հանձնաժողով

110. Եկեղեցական խորհուրդը ստեղծում է եկեղեցու Ավետարանչության և Անդամության Հանձնաժողով, բաղկացած ոչ պակաս 3 անդամներից և որոնք պատասխանատվություն են կրում, որպես հովվի օգնականներ: Հովիվը այդ Հանձնաժողովի նախագահն է (138.3) Հանձնաժողովի պարտականություններն են.

110.1. Տեղական եկեղեցում զարգացնել ավետարանչական ծրագրեր և աջակցել ձեռք բերված արդյունքները: (107-107.1, 129.24)

110.2. Ուսումնասիրել հնարավորություններն և միջոցները, առաջարկել դրանք եկեղեցական խորհրդին և այլ եկեղեցական բաժիններին, ամբողջ եկեղեցու կյանքի ակտիվ ավետարանչական աշխատանքների համար:

110.3. Նազովրեցու Եկեղեցու շրջանային և համընդհանուր ավետարանական ծրագրերի իրականացման համար, կատարել տեղական հանձնաժողովի պարտականությունները:

110.4. Նորահավատներին մղել հոգևոր հասունացման, որպեսզի հետագայում նրանք դառնան եկեղեցու անդամ, հիշեցնելով նրանց հոգևոր կյանքում հարատևության անհրաժեշտության մասին, ուսումնասիրելու Աստվածաշունչը և այս Ուղեցույցը ինքնուրույն, և/կամ հաճախելով հովվի կողմից անցկացվող անդամության համար նախատեսված ընդհանուր դասընթացներին: Ընդ որում պետք է հիշել, որ հավատքով խոստովանվելու միջոցով, հավատացյալներին ընդունելով եկեղեցու անդամության մեջ, օգնում է պահպանելու ավետարանչական ծառայության արդյունքները (20-21):

110.5. Գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի եկեղեցու նոր անդամները նվիրեն իրենց եկեղեցու ծառայությանը և հաղորդակցությանը:

110.6. Համագործակցել հովվի հետ զարգացնելու նոր ծրագրեր, եկեղեցու նոր անդամների հոգևոր ղեկավարության համար:

110.7. Տեղական ծառայության համար, եկեղեցական խորհրդին երաշխավորել հովվի կողմից առաջադրված ավետարանիչներին: Ընդ որում, պետք է հիշել, որ ամենաքիչը տարին մեկ անգամ, ավետարանչական ծառայությունը պետք է անցկացնի պաշտոնավարող, նշանակված կամ գրանցված ավետարանիչը:

110.8. Տեղական եկեղեցու լիիրավ անդամություն կարող են ստանալ այն մարդիկ, որոնց թեկնածությունը քննարկվել է հովվի և եկեղեցու Ավետարանչության և Անդամության Հանձնաժողովի հանդիպման ժամանակ (107.1):

Դ. Անդամության փոփոխությունը տեղական եկեղեցում

111. Անդամակցության փոխանցումը այլ եկեղեցի: Անդամի խնդրանքով հովիվը կարող է տրամադրել անդամակցության փոխանցում, ցանկացած մեկ ուրիշ տեղական Նազովրեցու

Եկեղեցի (տես փոխանցման համար օգտագործվող բլանկի ձևը պարագրաֆ 813.5): Այդպիսի անդամության փոխանցումը վավեր է միայն 3 ամիսների ընթացքում: Երբ ընդունող տեղական եկեղեցին ճանաչում է փոխանցումը, նախորդ եկեղեցու անդամությունը դադարեցվում է: (818)

111.1.Երաշխավորություն: Եկեղեցու անդամի խնդրանքով, եկեղեցու հովիվը կարող է տալ երաշխավորություն (տես բլանկի ձևը պարագրաֆ 813.3), տվյալ անդամին ցանկացած ավետարանական եկեղեցու համար, որից հետո նրա անդամությունը տվյալ տեղական եկեղեցում, անմիջապես դադարում է: (112.2, 539.5, 815)

Ե. Անդամության դադարեցումը տեղական եկեղեցում

112. Ծառայողները: Եթե Նազովրեցու Եկեղեցու լիցենզավորված կամ նվիրված ծառայողը դառնում է եկեղեցական համայնքի ծառայող կամ անդամ, որը չի հանդիսանում Նազովրեցու եկեղեցի, տեղական եկեղեցու հովիվը, որի անդամն էր ծառայողը, պետք է անմիջապես դրա մասին տեղեկացնի շրջանի ծառայողների Մանդատային Խորհրդին կամ Ծառայողների Շրջանային Խորհրդին: Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը պետք է քննարկի և հաստատի հոգևորականի կարգավիճակը: Եթե Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը պարզի, որ հոգևորականը պետք է կրճատվի ծառայողների ցուցակից, ապա տեղական եկեղեցու հովիվը ծառայողի անունը նույնպես պետք է հեռացնի եկեղեցու անդամների ցուցակից և կատարի թարմացում: Այս կապակցությամբ, նրա անվան դիմաց կատարվում է հետևյալ գրառումը. §Հեռացված է ուրիշ հարանվանություն տեղափոխվելու պատճառով¦: (532.9, 538.10, 538.13-538.14)

112.1. Այցելուներ: Եթե տեղական եկեղեցու այցելուն դառնում է ցանկացած ուրիշ կրոնական կազմակերպության անդամ, նրանից ստանում է ծառայողական լիցենզիա, դառնում է այդ կազմակերպության նվիրյալ ծառայող, կամ ներքաշվում է անկախ եկեղեցական կամ միսիոներական գործունեությամբ, ապա այդ փաստի հիման վրա, նրա անդամությունը տեղական եկեղեցում անմիջապես դադարեցվում է: Բացառություն կարող է լինել այն դեպքում, եթե եկեղեցու անդամը կապահովի տեղական եկեղեցու խորհրդի տարեկան գրավոր հավանությունը, որի անդամն է ինքը և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդի գրավոր հավանությունը, որտեղ գտնվում է տվյալ եկեղեցին:

112.2. Հրաժարություն եկեղեցու անդամությունից: Եկեղեցու անդամի խնդրանքով, հովիվը կարող է գրավոր թույլտվություն տալ անդամությունից դուրս գալու համար (տես բլանկի ձև պարագրաֆ 816), որտեղ այն անմիջապես դադարեցվում է (111.1, 112):

112.3. Այն բանից հետո, երկու տարի անց, երբ եկեղեցու անդամը համարվել է ոչ ակտիվ, նրա անունը եկեղեցական խորհրդի որոշմամբ, հեռացվում է ցուցակներից: Դրանից հետո, հովիվը անդամական ցուցակում կատարում է հետևյալ թարմացումը. §Հեռացված է եկեղեցու խորհրդի որոշմամբ¦ (ամսաթիվ) (109, 133):

Զ. Տեղական եկեղեցու ժողովներ

113. Տեղական եկեղեցու բոլոր ժողովները, որոնց նպատակն է մտքերի փոխանակությունները և եկեղեցում ընթացիկ աշխատանքների վերաբերյալ որոշումներ կայացնելը, կոչվում են եկեղեցական ժողովներ: Նկատի ունենալով գոյություն ունեցող օրենսդրությունը, ինչպես նաև այս Ուղեցույցից եկեղեցու կանոնադրությունը և կառավարման կանոնները, Նազովրեցու Եկեղեցու անդամների հանդիպումները և նիստերը, տեղական,

շրջանային, համաշխարհային, և Նազովրեցու Եկեղեցու հանձնաժողովների նիստերը պետք է անցկացվեն և վերահսկվեն համաձայն խորհրդարանական ընթացակարգերի կանոնների (Robert's Rules of Order, վերջին հրատարակություն): (34, 104, 113.7-113.8, 115, 518):

113.1. Եկեղեցական ժողովներում կարող են միայն քվեարկել նրանք, ովքեր եկեղեցու ակտիվ անդամներ են և ում 15 տարին արդեն լրացել է: (107.3, 109-9.4)

113.2. Անկախ պատճառաբանությունից, եկեղեցական ժողովներից բացակայողները չեն կարող օգտագործել իրենց ձայնը:

113.3. Ընթացիկ աշխատանքների վարումը: Բոլոր գործնական աշխատանքները, ներառյալ ընտրությունները, կարող են լուծվել եկեղեցու ժողովների ժամանակ, եթե այն անցկացվում է համապատասխան եկեղեցու հոգու և կանոնակարգի, և եթե այդ հարցերի լուծումները չեն պահանջում հատուկ հրահանգներ:

113.4. Քաղաքացիական օրենսդրության համապատասխանությունը: Եթե քաղաքացիական օրենսդրությունը, պահանջում է եկեղեցական ժողովների և նիստերի ժամանակ պահպանել հատուկ արարողակարգ, ապա այդպիսի պահանջները պետք է խստորեն պահպանվեն: (142)

113.5. Նախագահողը: Ամենամյա կամ եկեղեցական հատուկ ժողովների ժամանակ նախագահում է հովիվը, որը իր դիրքով տեղական եկեղեցու գլուխն է, կամ շրջանային սուպերինտենդենտը, կամ լիազորված սուպերինտենդենտը, կամ ինչ-որ մեկ ուրիշը, նշանակված գլխավոր կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից: (213.1, 307.10, 516.15)

113.6. Քարտուղարը: Եկեղեցական խորհրդի քարտուղարը, պետք է բոլոր եկեղեցական ժողովների ժամանակ քարտուղար լինի, իսկ նրա բացակայության ժամանակ անհրաժեշտ է ընտրել ժամանակավոր քարտուղար: (135.4)

113.7. Տարեկան ժողովները: Եկեղեցու տարեկան ժողովը, գումարվում է շրջանային ասամբլեայի անցկացման սկզբից 90 օր առաջ: Եկեղեցու ժողովի անցկացման հայտարարությունը, կատարվում է ամենաքիչը երկու ծառայությունների, այսինքն՝ ժողովից երկու կիրակի առաջ: Այդ տարեկան ժողովները, եկեղեցու խորհրդի հավանությամբ, կարող են անցկացվել մի քանի օրերի ընթացքում, կամ մի քանի ծառայությունների ժամանակ:

113.8. Հատուկ ժողովներ: Եկեղեցական հատուկ ծառայությունները, ցանկացած պահի կարող են գումարվել հովվի կողմից, կամ եկեղեցական խորհրդի կողմից, ստանալով հովվի համաձայնությունը կամ շրջանային սուպերինտենդենտի, կամ գլխավոր սուպերինտենդենտի, ով ունի իրավասություն: Այդ ժողովի մասին պետք է հայտարարվի կիրակնօրյա ծառայության ժամանակ, այն սկսվելուց 2 շաբաթ առաջ, կամ համաձայն պետության սովորական օրենքների: (104, 113.1, 115-115.1, 123-123.7, 137, 139, 142.1, 144)

113.9. Հաշվետվություններ: Ամենամյա եկեղեցական ժողովի ժամանակ, պետք է ներկայացվի հովվի հաշվետվությունները, կիրակնօրյա դպրոցի և միջազգային աշակերտության ղեկավարի, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Միության պրեզիդենտի, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության պրեզիդենտի, եկեղեցու սարկավագուհիների, տեղական ծառայողների, քարտուղարի և գանձապահի եկեղեցական խորհրդի: (135.2, 136.5, 146.6, 152.2, 508, 516.7, 531.1)

113.10. Թեկնածուներ առաջադրող հանձնաժողով: Թեկնածուներ առաջադրող հանձնաժողովը, թեկնածուներ է առաջադրում եկեղեցական կոնկրետ պաշտոններ զբաղեցնելու, խորհրդի կազմի, շրջանային ասամբլեայի պատվիրակների համար, որոնք ուրիշ կերպ չեն առաջադրվել: Թեկնածուներ առաջադրող հանձնաժողովը բաղկացած է ոչ պակաս երեք և ոչ ավել յոթ եկեղեցու անդամից, ներառյալ հովիվը: Թեկնածուներ առաջադրող հանձնաժողովը նշանակվում է հովվի կողմից և ամեն տարի հաստատվում է եկեղեցական

խորհրդի կողմից: Հովիվը այդ հանձնաժողովի նախագահն է: Այդ հանձնաժողովի կողմից առաջադրված բոլոր թեկնածուները, պետք է հաստատեն, որ նրանք կարող են համապատասխան լինել այն պահանջներին, որոնք պահանջվում են եկեղեցական պաշտոններում ծառայողների համար, համապատասխան պարագրաֆ 33-ի:

113.11. Ընտրություններ: Տարեկան ժողովի ժամանակ (գաղտնի քվեարկությամբ) կատարվում են ադմինիստրատորների, վստահված անձանց, կիրակնօրյա դպրոցների ղեկավարների, կիրակնօրյա դպրոցի աշխատանքների համար խորհրդի անդամների ընտրություններ, մինչև հաջորդ եկեղեցական տարվա, նրանց վերընտրություն և փոխարինողների նոր նշանակում: Եթե օրենքը թույլ է տալիս, և եթե դա քվեարկության ժամանակ հաստատվում է ներկաների ձայների մեծամասնությունով, ապա նրանց, ում ընտրել են, ծառայում են 2 տարի: Բոլոր ընտրվածները պետք է լինեն մեկ տեղական Նազովրեցու Եկեղեցու անդամ:

Տեղական եկեղեցիներին, մենք խորհուրդ ենք տալիս, ծառայության համար ընտրել այնպիսի մարկանց, ովքեր վկայել են իրենց լիակատար սրբագործման փորձի մասին, ում կյանքը հանդիսանում է Աստծո շնորհքի դրսևորում, որը մեզ կոչ է անում սուրբ կյանքի, և ով համաձայն է Նազովրեցու Եկեղեցու վարդապետություններին, կարգին (ձևին/կառավարման կարգին), գործունեությանը, և հավատարմորեն այցելում է տեղական եկեղեցի, աջակցում է նրան տասանորդով և այլ զոհաբերություններով: Եկեղեցու ծառայողները, պետք է ամբողջապես ներգրավված լինեն §դաստիարակելու Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում¦: (33, 127, 137, 141, 142.1, 145-147)

113.12. Այնտեղ, որտեղ օրենսդրությունը թույլ է տալիս և այն եկեղեցիներում, որտեղ նման արարողակարգը և ընտրվածների քանակը աջակցվում է ներկա գտնվող եկեղեցու քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ, ընտրվում է եկեղեցու խորհրդի կողմից, որը ի վերջո բաժանվում է ադմինիստրատորների և վստահված անձերի, համապատասխան պարագրաֆներ 137 և 141: Երբ եկեղեցու խորհուրդը ընտրվում է նմանօրինակ կերպ, այն իր ֆունկցիաները կատարելու համար կազմակերպվում է հանձնաժողովների մեջ: Եթե եկեղեցին ընտրում է կրթության հանձնաժողով՝ որպես խորհրդի մի մասնիկ, համաձայն պարագրաֆ 145-ի, ապա հենց այդ հանձնաժողովն է կազմում Կրթության Հանձնաժողովը, որը մտնում է եկեղեցական խորհրդի կազմի մեջ: Տեղական եկեղեցին կարող է օգտագործել ժամանակավոր գործող եկեղեցական խորհուրդը և հանձնաժողովները, որպեսզի կազմակերպի ծառայությունը և միսիոներական գործունեությունը: Այն գրավոր ձևով պետք է հաստատի շրջանային սուպերինտենդենտը և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը: Կառուցվածքները նույնպես պետք է համապատասխանեն քաղաքացիական նորմերին: (145-145.10)

113.13. Այնտեղ, որտեղ օրենսդրությունը թույլ է տալիս և այն եկեղեցիներում, որտեղ նման արարողակարգը և ընտրվածների քանակը աջակցվում է տարեկան ժողովի ժամանակ, ներկա գտնվող եկեղեցու քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ, շրջանային սուպերինտենդենտի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո, եկեղեցին կարող է եկեղեցու խորհրդի երկու երրորդն ընտրել երկու տարով, և մեկ երրորդը երեք տարի ժամանակով: Առաջին դեպքում, մեկ երկրորդը և երկրորդ դեպքում երկու երրորդ մնացած անդամները, ընտրվում են մեկ տարի ժամանակահատվածով: Երբ եկեղեցու խորհուրդը ընտրվում է նման ձևով, ադմինիստրատորների և վստահված անձերի քանակը պետք է համապատասխանի այն թվին, որը նախատեսված է պարագրաֆ 137 - կամ 141-ի:

113.14. Եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ (գաղտնի քվեարկությամբ) տեղի է ունենում այցելուներից, շրջանային ասամբլեայի պատվիրակների ընտրություն: Պատվիրակները կարող են առաջադրվել հովվի կողմից, և հաստավեն եկեղեցական խորհրդի կողմից, համաձայն

ներկայացուցչական կանոնների, որը հաստատվել է Գլխավոր Ասամբլեայի կողմից համապատասխան պարագրաֆներ 201-201.2. Բոլոր նրանք, ովքեր ընտրվել են պատգամավորներ, պետք է լինեն տվյալ Նազովրեցու Եկեղեցու ակտիվ անդամներ: (107.3, 113.11)

113.15. Շրջանային ասամբլեայի, եկեղեցական տիպի միսիայի (ԵՏՄ)պատգամավորները, կարող են նշանակվել նրա հովվի կողմից համապատասխան պարագրաֆներ 33, 201.1 և 201.2-ի չափանիշների: Շրջանային ժողովների համար, պատգամավորները կարող են ընտրվել նաև ԵՏՄ հովվի կողմից, համապատասխան, սահմանադրության Նազովրեցու Միջազգային Երիտասարդական Ծառայության, Ծառայության Կանոնադրության, Կիրակնօրյա Դպրոցի Ծառայության և Աշակերտության Միջազգային Ծառայության սահմանադրության: (100.1, 810, 811, 812)

Է. Տեղական Եկեղեցական տարի

114. Ադմինիստրատիվ տարին, համապատասխանում է տեղական եկեղեցու վիճակագրական տարվա հետ և դիտարկվում է որպես եկեղեցական տարի:

114.1. Վիճակագրական տարին, ավարտվում է շրջանային ասամբլեայի սկսվելուց 90 օր առաջ: Նոր վիճակագրական տարին սկսվում է հին տարին վերջանալուց մեկ օր անց: Վիճակագրական տարվա սկզբի և ավարտի ամսաթվերը որոշվում են Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: (225.1)

Ը. Հովվի կանչ

115. Ձեռնադրված երեցը կամ լիցենզավորված ծառայողը (որը պատրաստվում է ձեռնադրության), կարող է կանչվել որպես եկեղեցու հովիվ, եթե տարեկան կամ հատուկ ժողովի քվեարկության ժամանակ կա եկեղեցու անդամների ձայների երկու երրորդ առավելությունը, ինչպես նաև հետևյալ պայմանները.

1. Առաջադրվող թեկնածությունը պետք է հաստատվի շրջանային սուպերինտենդենտի կողմից:

2. Առաջադրվող թեկնածությունը պետք է հաստատվի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, երբ առաջադրվող անձը միևնույն տեղական եկեղեցու վճարվող կամ չվճարվող անդամ է:

3. Անհատը պետք է առաջադրվի եկեղեցական խորհրդի կողմից, անդամների երկու երրորդ ձայների քվեարկությամբ:

Հովվի կանչը, պետք է համապատասխանի հետևյալ կանոններին: (119, 122, 125.4, 129.2, 159.8, 211.10, 225.16, 514, 532, 533.4, 534.3)

115.1. Տեղական եկեղեցու քվեարկությունից և հովվի թեկնածությունը հաստատելուց հետո, ծառայողը իր որոշման մասին, պետք է տեղյակ պահի 15 օրերի ընթացքում:

115.2. Եկեղեցու խորհուրդը և հովիվը պետք է գրավոր ձևով միմյանց տեղյակ պահեն իրենց նպատակների և սպասումների մասին: (122, 129.3-29.4)

115.3. Այն բանից հետո, երբ հովիվը ստանձնել է իր պարտականությունները, հովիվը և եկեղեցու համայնքը, կարող են անցկացնել համախմբող ծառայություն, որի նպատակն է տոնել միաբանությունը և ուրվագծել Աստծո կամքի կատարման ճանապարհը: Որտեղ ընդունված է, ծառայությունը կարող է կատարվել շրջանային սուպերինտենդենտի կողմից:

115.4. Հովվի կանչի ժամանակ, տեղական եկեղեցին որոշում է նրա աշխատավարձի չափը: Այն որոշվում է եկեղեցական խորհրդի կողմից, կամ նրա երաշխավորությամբ, եկեղեցու բոլոր

անդամների ընդհանուր քվեարկությամբ: Երբ եկեղեցին ամբողջապես, կամ եկեղեցական խորհուրդը և հովիվը համաձայնության են գալիս, հովվի աշխատավարձի ամբողջական վճարումը դառնում է եկեղեցու բարոյական պարտականությունը: Եթե ինչ-որ պատճառներով եկեղեցին չի կարողանում վճարել նշված աշխատավարձը, հովիվը չի կարող օգտագործել այն որպես հիմք, որպեսզի եկեղեցուն համապատասխան քաղաքացիական օրենսդրությամբ, ենթարկի պատասխանատվության: Եկեղեցին և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, ոչ մի կերպ, օրենքով պատասխանատվություն չեն կրում հովվի կողմից, միջոցների վատման համար, որը գերազանցել է եկամուտները: Եթե հովիվը եկեղեցուն, կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդին դատի է տալիս, ապա շրջանը կարող է հովվին լիցենզիայից և ձեռնադրությունից զրկելու միջոցներ ձեռնարկել և հեռացնել Ծառայողների Ցուցակից:

Տեղական եկեղեցին իր վրա է վերցնում հովվի տեղափոխության և ծառայողական ուղևորությունների ծախսերը: (32-32.3, 129.8-129.9)

115.5. Հովվական աշխատավարձի փոխանցումը տեղի է ունենում երկուշաբթի, որը նախորդում է առաջի կիրակի օրվան, երբ հովիվը տեղական եկեղեցում պետք է անցկացնի առաջին պաշտոնական ծառայությունը:

115.6. Տեղական եկեղեցիները պետք է մտածեն այլընտրանքային ծառայություններ, համագործակցելով իրենց տեղական շրջանների հետ: (32.3, 129.8)

116. Հաստատելով ընտանիքի և հովիվների խաղաղ և ինտեգրված կյանքի օրինակի կարևորությունը, տեղական եկեղեցին պետք է մտածի նրա մասին, որպեսզի երեխաներին խնամելու նպատակով, հովվին և օգնականներին տրամադրվի վճարովի արձակուրդ: Շրջանային սուպերինտենդենտը պետք է խրախուսի եկեղեցիներին նրա համար, որպեսզի նրանք կատարեն հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդի մասին օրենքը, և ապահովի նրանց զարգացումը: Նման օրենքները կարող են պարունակել հետևյալ դրույթները.

1. Հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդի ժամանակը և տեղությունը պետք է որոշվի հովվի և եկեղեցու խորհրդի համաձայնության միջոցով, մինչև սպասվող ծծնդաբերությունը կամ որդեգրման իրականացումը:
2. Հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդը պետք է լինի ի հավելում առանձին արձակուրդին:
3. Տեղական եկեղեցին պետք է խորհրդացի հովվի և շրջանային սուպերինտենդենտի հետ ապահովելու համար փոխարինող հովիվ, հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդի ընթացքում:
4. Հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդի ընթացքում հովվի ամբողջական աշխատավարձը և եկամուտները շարունակվում են վճարվել: Ցանկացած այլ պայմանավորվածություն պետք է կատարվի գրավոր և ստորագրվի հովվի, եկեղեցու խորհրդի քարտուղարի և շրջանային սուպերինտենդենտի կողմից:

117. Եկեղեցու հովիվը, որը կազմակերպվել է ամենաքիչը 5 տարի առաջ, կամ ունեցել է 35 հոգուց պակաս անդամ, քվեարկել է անցած տարեկան ժողովի ժամանակ, կամ շրջանից պարբերաբար ստանում է ֆինանսական աջակցություն, կարող է նշանակվել կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի աջակցությամբ, նշանակվել շրջանային սուպերինտենդենտի կողմից: (211.17)

117.1 Երբ եկեղեցին բաղկացած է ավելի քան 35 անդամներից, որոնք ունեն քվեարկության իրավունք, կամ կազմակերպվել է ավելի քան 5 տարի առաջ, և հովիվը ամենաքիչը երկու տարի ծառայել է որպես նշանակված հովիվ, ապա, նշանակված կարգավիճակից կարելի է սկսել անցում: Այդպիսի գործընթացը պետք է ներառի եկեղեցի/հովիվ հարաբերությունների վերանայում, եկեղեցու խորհրդի մեծամասնական քվեարկությամբ, շրջանային

սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հաստատումով: Ամեն 4 տարին մեկ, հովվի/եկեղեցի հարաբերության վերանայումը, հանդիսանում է այդ որոշման վերջնական հաստատման ամսաթիվ:

118. Եթե եկեղեցու խորհրդի և շրջանային սուպերինտենդենտի միջև հակասություն կա կապված եկեղեցու հովվի կանչի հետ, ապա եկեղեցու խորհուրդը կամ շրջանային սուպերինտենդենտը կարող են այդ հարցի լուծումը ներկայացնեն լիազորված գլխավոր սուպերինտենդենտին: Լիազորված գլխավոր սուպերինտենդենտի որոշման հետ անհամաձայնության դեպքում, եկեղեցու խորհորդը կամ շրջանային սուպերինտենդենտը կարող են դիմել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին: Բոլոր այդպիսի վերաքննությունները, հերքումները, քննարկումները, որոնք վերաբերվում են տվյալ հարցերին, գրավոր ձևով, պետք է ներկայացվեն լիազորված գլխավոր սուպերինտենդենտին, կամ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին: Եկեղեցական խորհրդին կամ շրջանային սուպերինտենդենտին խորհուրդ է տրվում ներքաշված կողմերին ուղարկել տվյալ հարցերի վերաքննությունների, հերքումների կամ քննարկումների պատճենները: Եկեղեցական խորհրդի վերաքննության արձանագրությունը պետք է բաղկացած լինի ներման բանաձևից, քննարկվող հարցի փաստարկներից, անցկացված քվեարկության արձանագրությունից: Եթե տվյալ ծառայողը հանում է իր թեկնածությունը, կամ հովվի պաշտոնի թեկնածուն ինչ-որ պատճառով այլևս չի կարող մասնակցել հովվի կանչի գործընթացին, բոլոր վերաքննությունները և միջնորդագրերը պետք է անմիջապես հանվեն, իսկ շրջանային սուպերինտենդենտին և եկեղեցական խորհրդին անհրաժեշտ է շարունակել հովվի կանչի գործընթացը:

119. Եթե եկեղեցու ծառայողի մեկ տարի ժամկետով լիցենզիան հաջորդ տարի չի երկարաձգվում, նրա հովվական գործառույթները ավարտվում են շրջանային ասամբլեայի ավարտի հետ:

120. Իր ծառայությունը ավարտած հովիվը պետք է.

1. Խորհրդակցի շրջանային սուպերինտենդենտի հետ:

2. Տա իր հրաժարականը եկեղեցական խորհրդին, հովվական գործունեության ավարտից 30 օր առաջ:

3.Հրաժարականի պատճեն ուղարկել շրջանայի սուպերինտենդենտին:

Հովվական ծառայության ավարտը կարելի է համաձայնեցվել 30 օրերի ընթացքում, եթե հրաժարականը ընդունվել է եկեղեցական խորհրդի կողմից, և ստացվել է շրջանային սուպերինտենդենտի գրավոր հաստատումը:

120.1 Հրաժարական ներկայացրած հովիվը, եկեղեցական խորհրդի քարտուղարի օգնությամբ, պետք է ներկայացնի եկեղեցու անդամների մանրամասն ցուցակը և նրանց հասցեները: Այդ ցուցակը, պետք է իր թվաքանակով համապատասխանի շրջանի վերջին հրատարակված արձանագրությանը, որը ցույց է տալիս անդամների վերջին տարվա աճը և նվազումը:

121. Եկեղեցական խորհրդի հավանությամբ և շրջանային սուպերինտենդենտի համաձայնությամբ, համայնքը կարող է ծառայության համար ընտրել նախագահող հովիվների (հովվի օգնականները): Այդ դեպքում, պետք է կատարվեն հետևյալ պայմանները:

1. Նախագահող հովիվները, շրջանային սուպերինտենդենտի ղեկավարությամբ պետք է աշխատեն եկեղեցական խորհրդի հետ, որպեսզի հատուկ պլան մշակեն գործնական պարտականությունների և իշխանությունների բաժանման համար:

2. Չնայած նախագահող հովիվները, հովվական գործունեության մեջ ունեն հավասար իրավունքներ, նրանցից մեկը պետք է եկեղեցական խորհրդի կողմից նշանակվի որպես ծառայության առաջնորդ, համայնքի պրեզիդենտի ֆունկցիաներով, և եկեղեցական խորհրդի

նախագահ:

3. Հովիվ/եկեղեցի հարաբերության վերանայումը պետք է պետք է անցկացվի համաձայն տվյալ Ուղեցույցի պարագրաֆ 123-127.7-ի հրահանգների:

4. Այն տեղական եկեղեցու հովիվը, ով նշանակված չի եղել և ծառայել է ամենաքիչը երկու տարի կարող է ավելացնել մեկ կամ երկու ծառայողների, որպես փոխարինող հովիվների, ըստ պարագրաֆներ 115-ի: Շրջանային սուպերինտենդենտի և եկեղեցու խորհրդի անդամների ձայների երկու երրորդի հաստատմամբ, եկեղեցին կարող է ընտրել հովվի փոխարինող: Հովվի փոխարինողի թեկնածուն պետք է ստանա համայնքի ձայների երկու երրորդի քվեարկությունը, ոպեսզի հաստատվի հովվին փոխարինող տեղական եկեղեցում ծառայելու համար:

5. Եթե անհրաժեշտ երկու երրորդ ձայները ստացվի, այնուհետև յուրաքանչյուր ծառայողի համար երկամյա ժամանակահատվածը կսկսվի ճիշտ նույն օրը: Փոխարինող հովիվ ծառայության, եկեղեցի/հովիվ հարաբերության վերանայումը պետք է նշանակվի մինչև երկու տարին լրանալը 60 օրերի ընթացքում:(115, 123- 123.7)

121.1. Փոխարինող հովվի հրաժարականի կամ ժամկետի ավարտի դեպքում, 60 օրերի ընթացքում շրջանային սուպերինտենդենտը կամ նշանակված ներկայացուցիչը պետք է անցկացնի հովիվ/եկեղեցի հարաբերությունների վերանայում, ինչպես նշված է պարագրաֆներ 123- 123.7: Եթե եկեղեցու խորհուրդը որոշում է չկանչել փոխարինող հովվի, այս որոշումը պահանջում է շրջանային սուպերինտենդենտի և տեղական եկեղեցու անդամների երկու երրորդի հաստատումը:

Թ. Տեղական եկեղեցի/հովվական հարաբերություններ

122. Ամեն տարի եկեղեցական խորհուրդը և հովիվը պետք է անցկացնեն պլանավորման սեսիաներ, ծրագրերի քննարկման, եկեղեցու և հովվի նպատակների համար: Եկեղեցու և համայնքի միջև, գրավոր համաձայնագիրը նպատակների, խնդիրների և ծրագրերի մասին, պետք է թարմացվեն: Թարմացված համաձայնագիրը պետք է պահպանվի շրջանային սուպերինտենդենտի մոտ: (115.2, 129.4)

122.1. Հովիվը և համայնքը, եկեղեցական հարցերում պետք է ձգտեն փոխըմբռման և եկեղեցու ներսում տարաձայնությունները լուծելու համար, հաշտեցման և համագործակցության ոգով, ազնվորեն հետևեն աստվածաշնչյան սկզբունքներին: Տարաձայնությունները լուծելու աստվածաշնչյան սկզբունքները շարադրված են Մատթ.18:15-20 և Գաղ. 6:1-5, որոնք ներառում են.

1. Կոնկրետ մարդը կամ համայնքի մի քանի մարդիկ, պետք է աջակցվեն, որպեսզի լուծվեն տարաձայնությունները, դրանք քննարկվեն առ երես հովվի կամ եկեղեցական խորհրդի անդամի հետ: Կոնկրետ մարդը կամ համայնքի մի քանի մարդիկ, պետք է ձգտեն լուծել տարաձայնությունները, քննարկելով դրանք հովվի հետ առ երես:

2. Եթե առ երես չեն օգնել հասնելու փոխշահավետ լուծման, ապա չբավարարված կողմը տարաձայնությունները լուծելու համար, պետք է դիմի մեկ կամ երկու հոգևորապես հասուն եկեղեցու անդամների կամ եկեղեցական խորհրդին:

3. Մարդը,ով փոքր խմբերում մասնակցում է այդպիսի քննարկումների, տարաձայնությունների պատճառը կարող է հայտնել եկեղեցական խորհրդին, եթե արդեն ձեռնարկած միջոցները չեն օգնել: Քրիստոնյաները տարաձայնությունները լուծելու համար, պետք է աշխատեն սիրո հոգով, փոխադարձ հարգանքով, ներումով և համաձայն եկեղեցական կարգապահությամբ: (123-126.2, 129.1)

Ժ. Տեղական եկեղեցի/հովիվ փոխհարաբերությունների թարմացում

123. Եկեղեցի/հովվական հարաբերությունների վերանայում: Եկեղեցու և հովվի հարաբերությունների գնահատումը կատարվում է եկեղեցական խորհրդի կողմից, շրջանային սուպերինտենդենտի կամ նվիրված ծառայողի, կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից նշանակված եկեղեցու հաճախողի հետ հանդիպման ժամանակ, 60 օրերի ընթացքում, մինչ կլրանա հովվի ծառայության երկու ամյակը, և յուրաքանչյուր հաջորդող չորս տարիները: Նպատակն է համաձայնության գալ առանց եկեղեցու ձևական քվեարկության:

123.1 Շրջանային սուպերինտենդենտը, ձեռնադրված ծառայողը, կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից նշանակված եկեղեցու հաճախողը, պատասխանատու են եկեղեցու խորհրդի հետ հանդիպումների հրավիրման և անցկացման համար: Շրջանային սուպերինտենդենտը պետք է որոշի վերանայման մեթոդաբանությունը: Վերանայվող հանդիպումների պլանավորումը կատարվում է հովվի հետ խորհրդակցությամբ: Եկեղեց/հովիվ հարաբերությունների վերանայումը, կատարվում է փակ նիստի ժամանակ (եկեղեցական խորհուրդը, ներառյալ հովիվը): Հովվի բացակայության ժամանակ, այդպիսի նիստերը մասամբ անցկացվում են շրրջանային սուպերինտենդենտի ղեկավարությամբ: Այն դեպքում, եթե հովիվը կամ հովվի կինը եկեղեցական խորհրդի անդամ են, նրանք չպետք է մասնակցեն այդ քննարկմանը: Շրջանային սուպերինտենդենտի կամ նշանակված ներկայացուցիչի խնդրանքով, հովվի գնահատման աշխատանքներից, կարող են հեռացվել նաև հովվի մնացած մոտիկ բարեկամները:

123.2. Եկեղեցական հանձնաժողովի նիստի նպատակների մասին, գրավոր կամ բանավոր տեղյակ է պահվում կիրակնօրյա ծառայության ժամանակ, հովվի աշխատանքի կանոնավոր եկեղեցի/հովիվ հարաբերությունների վերանայման համար, նախքան եկեղեցական խորհրդի և շրջանային սուպերինտենդենտը հանդիպումը:

123.3. Եթե եկեղեցական խորհուրդը, համայնքում հովվի ծառայությունը շարունակելու համար, ընդհանուր եկեղեցական քվեարկության որոշում չի կայացնում, եկեղեցի/հովիվ հարաբերությունների ծառայությունը երկարացվում է:

123.4. Եկեղեցական խորհուրդը կարող է քվեարկել, որպեսզի հարց առաջադրվի հովվի ծառայությունը շարունակելու համար, ընդհանուր եկեղեցու անդամների քվեարկություն անցկացնելու համար: Խորհուրդը գաղտնի քվեարկությամբ քվեարկում է, որը օրինական է ճանաչվում, եթե ներկա գտնվող եկեղեցական խորհրդի անդամների երկու երրորդը կողմ է քվեարկել:

123.5. Եթե եկեղեցական խորհուրդը, քվեարկության արդյունքով որոշում է հովվի ծառայության շարունակության հարցը դնել ընդհանուր եկեղեցական քվեարկության, ապա այն տեղի է ունենում այդ նպատակով հատուկ հրավիրված եկեղեցական ժողովի ժամանակ, այդ որոշումը կայացնելուց հետո, 30 օրերի ընթացքում: Հարցադրումը հնչում է այսպես. §Տվյալ եկեղեցում հովիվը շարունակելո՞ւ է իր գործունեությունը!: Անցկացվում է գաղտնի քվեարկություն, որը օրինական է համարվում եկեղեցու բոլոր անդամների ձայների երկու երրորդով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ երկրի օրենսդրությունը պահանջում է ուրիշ լուծում:

123.6. Եթե եկեղեցու անդամները կողմ են քվեարկում հովվի գործունեությանը, այն շարունակվում է, ասես քվեարկություն չի եղել: Հակառակ դեպքում, հովվի գործունեությունը դադարեցվում է շրջանային սուպերինտենդենտի նշված օրը, քվեարկությունից հետո ոչ

պակաս 30 օրից և ոչ ուշ, քան 180 օրից: Եթե հովիվը որոշում է չհետևել համայնքի որոշմանը, նա կարող է հեռանալու դիմում տալ: Այդ դեպքում, հովվի գործունեությունը վերջանում է շրջանային սուպերինտենդենտի նշանակած օրը ոչ շուտ, քան 30 օր և ոչ ուշ, քան 180 օր, համայնքի որոշմանը չհետևելու հովվի կայացրած որոշումից հետո: (120)

123. 7.Հովվի/համայնք հարաբերությունների վերանայման մասնիկն է կազմում, շրջանային սուպերինտենդենտին ուղղված գրավոր հաշվետվությունը, պատրաստված հովվի և եկեղեցու խորհրդի կողմից, եկեղեցու միսիայի և տեսիլքի առաջընթացի մասին, ինչպես նաև եկեղեցու գլխավոր սկզբունքների և արժեքների մասին:

124. Ձայները հաշվող հանձնաժողովի նախագահը, մինչ հանրային հայտարարություն անելը, անձամբ հովվին տեղյակ է պահում անցկացված քվեարկության արդյունքների մասին:

125. Եկեղեցու և հովվի հարաբերությունների հատուկ վերանայում: Եկեղեցու և հովվի հարաբերությունների վերանայման ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, տեղական եկեղեցու խորհրդի հանդիպումներից մեկը, կարող է եկեղեցու և հովվի հարաբերությունների արտահերթ վերանայման առիթ ծառայել, եթե այդ որոշումը կայացվում է ներկա գտնվող եկեղեցու խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ և շրջանային սուպերինտենդենտի կամ ձեռնադրված հովվի (երեցի) ներկայությամբ, որին շրջանային սուպերինտենդենտը նշանակել է նիստի նախագահ:

125.1. Եկեղեցու և հովվի հարաբերությունների վերանայումը կատարվում է փակ նիստի ժամանակ (եկեղեցական խորհուրդը, ներառյալ հովիվը): Հովվի բացակայության ժամանակ, այդպիսի նիստերը մասամբ անցկացվում են շրջանային սուպերինտենդենտի ղեկավարությամբ: Այն դեպքում, եթե հովիվը կամ հովվի կինը եկեղեցական խորհրդի անդամ են, նրանք չպետք է մասնակցեն այդ քննարկմանը, ի հավելում շրջանային սուպերինտենենտը կամ նշանակված ներկայացուցիչը կարող են հեռացնել հովվի այլ անմիջական բարեկամներին վերանայումից:

125.2. Եթե շրջանային սուպերինտենդենտը և եկեղեցական խորհուրդը, անհրաժեշտ կհամարեն հովվի հետագա ծառայության հարցը ներկայացնել եկեղեցուն, շրջանային սուպերինտենդենտը և եկեղեցական խորհուրդը, խորհրդի ներկա անդամների ձայների երկու երրորդով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ երկրի օրենսդրությունը պահանջում է ուրիշ լուծում, կարող են ներկայացնել հարցը եկեղեցու հատուկ ժողովին: Հարցադրումը պետք է ներկայացվի այսպես. §Հովիվ/եկեղեցի ներկա հարաբերությունը պետք է շարունակվի թե ոչ!:

125.3. Եթե ընտրության իրավունք ունեցող և ներկա գտնվող անդամների ձայների երկու երրորդը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ երկրի օրենսդրությունը պահանջում է ուրիշ լուծում, որոշում է կայացվում շարունակել այդ հովվի գործունեությունը տվյալ եկեղեցում, այն շարունակվում է, ասես քվեարկություն չի եղել:

125.4. Սակայն եթե եկեղեցին, որոշի դադարեցնել հովվի ծառայությունը տվյալ եկեղեցում, ապա նրա գործունեությունը դադարեցվում է շրջանային սուպերինտենդենտի նշված օրը, քվեարկությունից հետո ոչ ուշ, քան 180 օրից:

125.5. Եթե հովիվը որոշում է չհետևել համայնքի որոշմանը նա կարող է հեռանալու դիմում տալ: Այդ դեպքում հովվի գործունեությունը վերջանում է շրջանային սուպերինտենդենտի նշանակած օրը ոչ շուտ քան 30 օրից և ոչ ուշ քան 180 օրից համայնքի որոշմանը չհետևելու հովվի կայացրած որոշումից հետո: (113.8, 123-124)

126. Տեղական եկեղեցին ճգնաժամիային իրավիճակում: Եթե շրջանային սուպերինտենդենտը իմանում է, որ ինչ-որ տեղական եկեղեցի մոտենում է ճգնաժամային իրավիճակի, ապա նա Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ, լիազորված է կազմելու հանձնաժողով, որը պետք է վերանայի իրավիճակը և հաստատել գործողությունների

կարգ, որոնք կարող են կանխարգել ճգնաժամը: Այդ հանձնաժողովը պետք է բաղկացած լինի երկու ձեռնադրված հովիվներից (երեցներից) և երկու այցելուներից, որոնք Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամ են, ինչպես նաև շրջանային սուպերինտենդենտը, որը հանդիսանում է հանձնաժողովի նախագահը: (211.3)

126.1. Երբ շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և լիազորություններով հաստատված գլխավոր սուպերինտենդենտի կարծիքով, տեղական եկեղեցին գտնվում է ճգնաժամային իրավիճակում, բարոյական ֆինանսական կամ մեկ այլ ուրիշ, և այդ իրավիճակը լրջորեն ազդում է եկեղեցու կայունությանը և ապագային, ապա **(ա)** հովվի ծառայությունը շարունակելու հարցը կարող է ներկայացվել տեղական համայնքին, շրջանային սուպերինտենդենտի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամի միջոցով, որը նշանակվել է շրջանային սուպերինտենդենտի կողմից այնպես, ինչպես եկեղեցական խորհուրդը կպահանջեր քվեարկություն, համաձայն 123-123.7 պարագրաֆի, կամ **(բ)** հովվի պաշտոնավարելու ժամանակը և/կամ եկեղեցական խորհրդի գործունեության ժամկետը կարող է դադարեցվել, լիազորված գլխավոր սուպերինտենդենտի համաձայնությամբ և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ձայների մեծամասնության որոշմամբ: Շրջանային սուպերինտենդենտը, լիազորված գլխավոր սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի համաձայնությամբ, ցանկացած ճգնաժամային իրավիճակում գտնվող եկեղեցու համար, կարող է նշանակել եկեղեցական խորհրդի անդամներ: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը իր գործունեության ծանուցումը պետք է ուղարկի իրավասու գլխավոր սուպերինտենդենտին 30 օրերի ընթացքում: (211.3)

126.2. Երբ շրջանային սուպերինտենդենտի կարծիքով, տեղական եկեղեցին գտնվել է ճգնաժամային իրավիճակում, համաձայն պարագրաֆ 126.1-ի, կատարել է բոլոր պահանջները և պատրաստ է շարունակելու ծառայությունը սովորական հանգամանքներում, ապա կարելի է համարել, որ այդպիսի եկեղեցին դուրս է եկել ճգնաժամից, համաձայն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ձայների մեծամասնության որոշման: Շրջանային Խորհրդատվական Խորհրդը պետք է գլխավոր սուպերինտենդենտին տեղյակ պահի իր որոշման մասին, 30 օրերի ընթացքում: (211.4)

Ի. Տեղական Եկեղեցական խորհուրդ

127. Անդամությունը: Ամեն եկեղեցի, պետք է ունենա եկեղեցական խորհուրդ, բաղկացած եկեղեցու հովվից, կիրակնօրյա դպրոցի առաջնորդից, աշակերտության միջազգային ծառայության առաջնորդից, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Ընկերակցության նախագահից, ադմինիստրատորներից, եկեղեցու վստահված անձնավորություններից, կիրակնօրյա դպրոցների խորհրդի անդամներից, եթե նրանք տարեկան ժողովի ժամանակ ընտրվել են որպես եկեղեցու խորհրդի մեջ մտնող կրթության Հանձնաժողով: Եթե Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի նախագահը հովվի կինն է կամ ամուսինը և նա նախընտրում է չմասնակցել եկեղեցական խորհրդի աշխատանքներին, ապա եկեղեցական խորհրդի անդամ կարող է լինել փոխնախագահը, եթե հովվի կինը կամ ամուսինը, պահպանում է եկեղեցական խորհրդի անդամությունը, ապա նա չի կարող մասնակցել հովվի/եկեղեցի հարաբերությունների վերանայմանը:

Եկեղեցական խորհուրդը պետք է բաղկացած լինի ոչ ավել, քան 25 մշտական անդամներից: Ձեռնադրված և լիցենզավորված ծառայողները, բացառությամբ հովվի և շրջանային սուպերինտենդենտի ողմից հաստատված անհատների և տեղական եկեղեցու վճարովի

ծառայողները չեն կարող առաջադրվել, որպես տեղական եկեղեցու խորհրդի անդամներ: Շրջանային սուպերինտենդենտը եկեղեցու խորհրդի ու հովվի լիազորությամբ կարող է ընդառաջել չնշանակված լիցենզավորված ծառայողներին, ովքեր ուսումնական կենտրոնի կամ Նազովրեցու Եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողներ են: Այսպիսի ծառայողները հեռացվում են եկեղեցու խորհրդի գործունեությունից, լիազորելով ծառայողի շրջանային լիցենզիայի վերանայումը, շրջանային ասամբլեայում:

Մենք տեղական եկեղեցիներին խորհուրդ ենք տալիս ընտրել միայն նրանց, ովքեր վկայել են լիակատար սրբագործության փորձառության մասին, ում կյանքը հանդիսանում է Աստծո շնորհքի արտացոլում, որը մեզ կոչ է անում սուրբ կյանքի, ովքեր համաձայն են Նազովրեցու Եկեղեցու վարդապետությունների, կառուցվածքի (կառավարման ձևի/ եղանակի) հետ, հավատարմորեն հաճախում է տեղական եկեղեցի և նրան աջակցում է տասանորդով և զոհաբերություններով: Եկեղեցու ծառայողները պետք է իրենց նվիրեն §դաստիարակելու Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերի մեջ¦: (33, 113.11, 137, 141, 145-147, 152.2, 159.4)

127.1. Երբ տեղական եկեղեցու տարեկան ժողովները տեղի են ունենում հովվի փոփոխության ընթացքում, ապա տեղական նշանակող հանձնաժողովը, շրջանային սուպերինտենդենտի նախագահությամբ և շրջանային սուպերինտենդենտի համաձայնությամբ, կարող է հայտնել համայնքին, որ քարոզող եկեղեցական խորհուրդը մնում է ևս մեկ տարի, բայց ոչ ուշ, քան 30 օր տարեկան ժողովից առաջ: Այդ որոշումը, եկեղեցու հատուկ ժողովի ժամանակ կարող է հաստատվել գաղտնի քվեարկությամբ, ներկա գտնվող եկեղեցու անդամների ձայների մեծամասնությամբ: Եթե այդ որոշումը չի անցնում, ապա տարեկան ժողովի ժամանակ, եկեղեցական խորհուրդը ընտրվում է սովորական ձևով:

128. Նիստերը: Եկեղեցական խորհուրդը իր աշխատանքները սկսում է եկեղեցական տարվա սկզբին և հավաքվում է ամեն ամիս: Հովիվը կարող է հրավիրել արտակարգ նիստ: Արտակարգ նիստ հրավիրելու արտոնություն ունի նաև շրջանային սուպերինտենդենտը, իսկ քարտուղարը հովվի կամ շրջանային սուպերինտենդենտի թույլտվությամբ՝ եթե տվյալ պահին եկեղեցին հովիվ չունի: Եկեղեցու խորհրդի հանդիպումները ներառյալ քվեարկությունները կարելի է կազմակերպել էլեկտրոնային տարբերակով: Այսպիսի հանդիպումները և քվեարկությունները պետք է ունենան նույն ուժն ու ազդեցությունը, ինչպես սենյակում հավաքված անդամների քվեարկությունը: Տարեկան եկեղեցու ժողովի և եկեղեցական տարվա միջև ընկած ժամանակահատվածում, նոր ընտրված եկեղեցական խորհուրդը կարող է հանդիպել կազմակերպչական նպատակների համար: Ընտրվում է եկեղեցական խորհրդի քարտուղար և գանձապահ, ինչպես նշված է ներքևում, ինչպես նաև եկեղեցական խորհրդի կողմից ընտրվում են ուրիշ ծառայողներ: (129.19-130)

129. Պարտականությունները: Եկեղեցու խորհրդի պարտականությունների մեջ մտնում են.

129.1. Հոգ տանել եկեղեցու շահերի և նրա գործունեության համար, եթե դա նախատեսած չէ ուրիշ կերպ, ներդաշնակությամբ աշխատելով հովվի հետ: (155, 518)

129.2. Շրջանային սուպերինտենդենտի հետ խորհրդակցելուց հետո, հովվի պաշտոնում առաջադրել ձեռնադրված հովվի (երեցի) կամ լիցենզավորված ծառայողի, եթե այդ պաշտոնի համար թեկնածուն նրանց համար կթվա հարմար համաձայն պարագրաֆ 115, 159.8, 211.10, 225.16:

129.3. Համագործակցել նոր ընտրված հովվի հետ, որպեսզի գրավոր ձևով զարգացվեն նպատակները և սպասումները: (115.2)

129.4. Ամենաքիչը տարին մեկ անգամ, հովիվը և եկեղեցու խորհուրդը պետք է անցկացնեն պլանավորման նիստ, որպեսզի թարմացվի եկեղեցու սպասումներին, նպատակներին,

խնդիրներին վերաբերվող պարզ գրավոր համաձայնագիրը: (122)

129.5. Եթե եկեղեցին չունի մշտական հովիվ, շրջանային սուպերինտենդենտի համաձայնությամբ, ներկայացնել փոխարինող հովիվ, մինչև եկեղեցին սահմանված ձևով կանչի մշտական հովիվ: (212, 524)

129.6. Նպաստել եկեղեցու ամենամյա բյուջեի, աջակցող ստորաբաժանումների (կիրակնօրյա դպրոց, երիտասարդական ծառայություն, միջազգային միսիա), մանկապրտեզների և նախապատրաստական դպրոցների, բյուջեների մշակմանը և ընդունմանը, հաշվի առնելով հնարավոր մուտքերը և ծախսերը:

129.7. Նշանակել խորհրդի անդամներ, որոնք պատասխանատվություն են կրում. **(ա)** Եկեղեցական բյուջեի մոնիտորինգ. **(բ)** եկեղեցական խորհրդին ներկայացնել հաշվետվություն եկեղեցու ֆինանսական վիճակի մասին:

129.8. Սահմանել հովվի աշխատավարձի և եկամուտների չափը, ներառյալ կենսաթոշակային նպաստները և վերանայել այն առնվազն տարին մեկ անգամ: (32.3, 115.4, 115.6, 123-123.7)

129.9. Գտնել ճանապարհներ և միջոցներ, հովվին և մյուս վարձատրվող ծառայողներին վարձատրելու համար, խրախուսել և աջակցել հովվի և եկեղեցու ծառայողների կրթվելու ձգտումը, դրա համար տրամադրել անհրաժեշտ միջոցներ: (115.4)

129.10. Որպեսզի ամբողջ կյանքի ընթացքում, աջակցվի հովվի առողջ ծառայությունը և կրթությունը, եկեղեցական խորհուրդը, շրջանային սուպերինտենդենտի հետ խորհրդակցելով, հովվի համար, ամեն յոթ տարին մեկ, մեկ համայնքում ծառայելու դեպքում, պետք է ներկայացնի ստեղծագործական արձակուրդ: Հովվի աշխատավարձը լիովին պաշտպանվում է և եկեղեցական խորհուրդը, հովվի բացակայության ժամանակ նշանակում է փոխարինող քարոզիչ: Շրջանային սուպերինտենդենտի կողմից, այս հարցը նույնպես պետք է քննարկվի հովիվ/եկեղեցի փոխհարաբերությունների վերանայման շրջանում, որը պետք է տեղի ունենա ծառայության երկրորդ տարում, և հետո ինչպես նախատեսված է, եթե այդ փոխհարաբերությունները շարունակվեն, նորից վեցերորդ տարում: Հոգևորականության Զարգացման Համաշխարհային Գրասենյակը, տեղական համայնքի համար, պետք է պատրաստի և բաժանի նյութեր և փաստաթղթեր, հովվի շարունակական արձակուրդի և այդ հարցի հետ առնչվող ընթացակարգերի մասին: Եկեղեցական խորհրդի որոշմամբ, այդպիսի արձակուրդ կարող է տրամադրվել նաև հովվական խմբի անդամներին (ուրիշ ծառայողների):

129.11. Սահմանել ֆինանսական աջակցության սահմանը և այն գումարը որը անհրաժեշտ է ավետարանիչի տան վարձակալման համար և այդ ծառայության համար, եկեղեցու խորհրդի կանչի դեպքում, նրան տեղյակ պահել այդ մինիմալ աջակցության մասին:

129.12. Հովվի երաշխավորությամբ, սեփական հայացողությամբ, տալ կամ թարմացնել լիցենզիա (ա) տեղական ծառայության, և (բ) այցելուների ծառայության համար (503.3-503.5, 531.1-531.3, 813):

129.13. Հովվի կողմից համապատասխան թեկնածուի առաջադրման ժամանակ, սեփական հայացողությամբ շրջանային ասամբլեային առաջադրել ծառայողի, ով կուզենա ձեռք բերել ծառայողի սերտիֆիկատ: Այստեղ ընդգրկված են եկեղեցու ծառայողներից և այցելուներից առաջադրված բոլոր թեկնածուները, ովքեր ցանկանում են ծառայել տեղական եկեղեցու սահմաններից դուրս, եթե եկեղեցական խորհրդի հանձնարարականը համապատասխանում է եկեղեցական Ուղեցույցին:

129.14. Հովվի կողմից համապատասխան թեկնածուի առաջադրման ժամանակ, սեփական հայացողությամբ, շրջանային ասամբլեային առաջադրել բոլոր ցանկացողներին, թարմացնել կամ ձեռք բերել ծառայողի լիցենզիա: (531.5, 532.1)

129.15. Հովվի կողմից համապատասխան թեկնածուի առաջադրման ժամանակ, սեփական հայացողությամբ շրջանային ասամբլեայում բոլոր ցանկացողներին առաջադրել թարմացնելու եկեղեցու սարկավագուհու լիցենզիան համաձայն պարագրաֆ 508-ի:

129.16. Հովվի աջակցությամբ, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Խորհրդի աշխատանքների համար թեկնածուներ առաջադրելու ընթացքում, ընտրել երեխաների և մեծերի հետ աշխատանքների համար ղեկավարներ: (145.6)

129.17. Հավանություն տալ, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Կազմակերպության տեղական նախագահի թեկնածությունը (ՆԵՄԵԿ), որը ընտրվել է տեղական եկեղեցու երիտասարդական կազմակերպության կողմից, համապատասխան ՆԵՄԵԿ-ի կանոնադրության:

129.18. Հավանություն տալ, Նազովրեցու Եկեղեցու մանկա պարտեզների /նախապատրաստական դպրոցների ադմինիստրատորների թեկնածությունները: (152, 160.1, 208.13, 515.10)

129.19. Եկեղեցու անդամներից ընտրել քարտուղար, որոնք համապատասխանում են եկեղեցու ծառայողների նկատմամբ կիրառվող պահանջներին, համապատասխան պարագրաֆ 33-ի: Այդպիսի ընտրությունները պետք է անցկացվեն, նոր ընտրված խորհրդի առաջին նիստին: Ընտրված մարդը պետք է ծառայի մինչև եկեղեցական տարվա ավարտը, մինչ նրան հաջորդողի վերջնական ընտրությունը և հաստատումը, և նա հնարավորություն ունի քվեարկելու, եթե եկեղեցական ժողովի ժամանակ ընտրվել է եկեղեցական խորհրդի մեջ: (33, 113.6-113.8, 113.11, 128, 135.1-135.7)

129.20. Եկեղեցու անդամներից ընտրել գանձապահ, որը համապատասխան է պարագրաֆ 33-ի համաձայնեցված պահանջներին: Այդպիսի ընտրությունները պետք է անցկացվեն նոր ընտրված խորհրդի առաջին նիստին: Ընտրված մարդը պետք է ծառայի մինչև եկեղեցական տարվա ավարտը, մինչ նրան հաջորդողի վերջնական ընտրությունը և հաստատումը, և նա հնարավորություն ունի քվեարկելու, եթե եկեղեցական ժողովի ժամանակ ընտրվել է եկեղեցական խորհրդի մեջ: Հովվի ընտանիքի ոչ մի անդամ առանց շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանության, չեն կարող ծառայել որպես եկեղեցական գանձապահ: անմիջական ընտանիքը ներառում է կանանց, երեխաներին, եղբայրներին քույրերին կամ ծնողներին: (33, 113.7-113.8, 113.11, 128, 136.1-136.6)

129.21. Հետևել, որպեսզի բոլոր միջոցների համար կատարվեն հստակ ֆինանսական հաշվետվություններ, որոնք ստացվել ու բաշխվում են եկեղեցու կողմից, ներառյալ եկեղեցու բոլոր բաժինները՝ կիրակնօրյա դպրոց, աշակերտություն և դպրոց, երիտասարդական ծառայություն, միջազգային միսիա, մանկապարտեզներ և տարրական դպրոցներ, և ներկայացնել այդ հաշվետվությունները խորհրդի ամենամսյա նիստերի և եկեղեցու տարեկան ժողովների ժամանակ: (136.3-136.5)

129.22. Ձևավորել կոմիտե, որից ոչ պակաս քան երկու անդամը, պատասխանատու են եկեղեցու ստացած բոլոր փողերի ծախսելու և հաշվետվության համար:

129.23. Նշանակել վերահսկող հանձնաժողով, որը ամենաքիչը տարին մեկ անգամ ստուգում է եկեղեցու գանձապահի, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Կազմակերպության, կիրակնօրյա դպրոցի և աշակերտության Խորհրդի, Նազովրեցու Եկեղեցու տարրական դպրոցների և մանկապարտեզների հաշվետվությունները, ինչպես նաև եկեղեցու ցանկացած հաշվետվություն: Տեղական եկեղեցու բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է հովվի համար մատչելի լինեն:

129.24. Ձևավորել Ավետարանչության և Եկեղեցու Անդամության, թվով 3-ից ոչ պակաս անդամներով: (110)

129.25. Գործել որպես կիրակնօրյա դպրոցի խորհուրդ այնտեղ, որտեղ նպատակահարմար է, և որտեղ եկեղեցու անդամների թիվը չի գերազանցում 75 մարդը: (145)

129.26. Նշանակել դատական հանձնաժողով 5 անդամից այն դեպքում, եթե եկեղեցու անդամի դեմ ներկայացվել է գրավոր մեղադրանք: (605)

129.27. Ընտրել եկեղեցուն անհրաժեշտ ծառայողներ, որոնց վճարվում է աշխատավարձ, եթե հովվի կողմից այդ թեկնածուների համար կան համապատասխան առաջադրումներ և շրջանային սուպերինտենդենտի գրավոր համաձայնությունը: (151, 159-159.1, 211.13)

129.28. Ընտրել տեղական կամ լիցենզավորված ծառայողի, որպես հովվի չվարձատրվող օգնական, միայն շրջանային սուպերինտենդենտի գրավոր համաձայնության դեպքում:(115.6)

129.29. Երկարաժամկետ պլանավորման համար կազմավորել հանձնաժողով, որտեղ եկեղեցու հովիվը պաշտոնով հանդիսանում է նրա նախագան:

129.30. Ռիսկի նվազման համար ընդունել և հաստատել պլաններ, որը կայանում է նրանում, որ եկեղեցում կարևոր պոստեր զբաղեցնող դեմքերը կօգտագործեն իրենց դիրքը անպատշաճ նպատակներով: Տեղական եկեղեցիների համար կազմված պլանը, պետք է ուշադրություն դարձնի այս կամ այն համայնքի սպեցիֆիկ հատկությունները:

130. Եկեղեցական խորհուրդը հովվի հետ միասին, հետևում է միջոցներ հավաքելու պլանին, որը տեղական եկեղեցին որպես ֆինանսական վճարումներ փոխանցում է Համաշխարհային Ավետարանչության և Շրջանային Ծառայության ֆոնդերին: Վերը հիշված պլանը, ընդունվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի և Գլխավոր Խորհրդի կողմից, բարձրացնելու Համաշխարհային Ավետարանչական Ֆոնդը, և Շրջանային Ծառայության Ֆոնդը, տեղական եկեղեցու կողմից, և կանոնավոր կերպով համապատասխանաբար պետք է փոխանցվի գլխավոր և տեղական անձապետներին: (317.10, 335.7)

131. Ծառայության նշանակությունը: Համապատասխանում է պարագրաֆներ 32-32.5:

132. Եկեղեցական խորհուրդը, նոր կազմակերպված եկեղեցում կատարում է կիրակնօրյա դպրոցի աշխատանքների Խորհրդի ֆունկցիաները, մինչ տվյալ Խորհրդի օրինական ընտրություն: (145)

132.1. Նոր կազմակերպված եկեղեցական խորհուրդը և հովիվը, կայացնում են կիրակնօրյա դպրոցի և աշակերտության առաջնորդի ընտրության ժամանակը: (129.25, 145, 146)

133. Եկեղեցու անդամին ոչ ակտիվ հայտարարելուց երկու տարի անց, եկեղեցական խորհուրդը, կարող է ցուցակից հեռացնել նրա անունը: (109-109.4, 112.3)

134. Եկեղեցական խորհուրդը, կարող է դադարեցնել կամ հետաձգել տեղական ծառայողի լիցենզիան:

135. Եկեղեցու քարտուղարը. Եկեղեցական քարտուղարի պարտականություն_ ներն են՝

135.1. Զգուշորեն վարել և պահպանել եկեղեցու և եկեղեցական խորհրդի ժողովների արձանագրությունները, ինչպես նաև կատարել ցանկացած այլ ֆունկցիաներ, որոնք վերաբերվում են այդ պաշտոնին: Եկեղեցական արձանագրությունները պետք է պարունակեն բոլոր նրանց անունները, ովքեր քվեարկելու ժամանակ ներկա կամ բացակա են եղել, որպեսզի լինի քվորում: (120.1, 129.19)

135.2. Եկեղեցական տարեկան ժողովների ժամանակ, ներկայացնել տարեկան հաշվետվություն տեղական եկեղեցու գործունեության մասին, ներառյալ եկեղեցու անդամության վիճակագրությունը: (113.9)

135.3. Հետևել, որպեսզի տեղական եկեղեցու գործունեությանը վերաբերվող բոլոր պաշտոնական թղթերը, գրառումները, ակտերը, սեփականության վկայագրերը, իրավական տիտղոսների մասին փաստաթղթերը, ապահովագրությունները, վարկային կտրոնները,

եկեղեցու անդամների ցուցակները, պատմական գրառումները, անդամների ցուցակները, եկեղեցական ժողովների արձանագրությունները, գրանցման փաստաթղթերը, որոնք վստահված են նրան, պահվեն տեղական եկեղեցու չհրկիզվող կամ ամուր պահարանում, կամ էլ տեղական բանկերի սեյֆերում: Թղթերի մուտք ունեն միայն հովիվը և գանձապահը, այդ թղթերի պատասխանատվությունը անմիջապես փոխանցվում է քարտուղարի հաջորդին:

135.4. Եկեղեցական տարեկան և հատուկ ժողովների ժամանակ, կատարել քարտուղարի պարտականությունները, այդպիսի ժողովների ժամանակ վարել և պահպանել արձանագրություններն և այլ փաստաթղթերը: (113.6)

135.5. Շրջանային սուպերինտենդենտին գրավոր տեղեկացնել հովվի ընտրության քվեարկության, կամ հովվական ծառայության ժամկետի երկարացման արդյունքները: Դա տեղի է ունենում քվեարկությունից մեկ շաբաթվա ընթացքում:

135.6. Եթե տեղական եկեղեցին հովիվ չունի, ժողովներից երեք օր անց, շրջանային սուպերինտեդենտին ուղարկել եկեղեցու և եկեղեցական խորհրդի ժողովների արձանագրությունների կրկնօրինակները:

135.7. Հովվի հետ ստորագրել անշարժ գույքի հանձման, հիպոթեքային և պարտքերի մարման փաստաթղթերը, պայմանագրերը և եկեղեցու այլ պպաշտոնական թղթերը, եթե նրանք այս կամ այն ձևով չեն հակասում եկեղեցական Սահմանադրությանը: (102.3, 103-4.2)

136. Եկեղեցու գանձապահը: Եկեղեցական խորհրդի գանձապահի պարտականություններն են՝

136.1. Ստանալ և կառավարել եկեղեցու բոլոր ֆինանսական միջոցները, որոնք նախապես նախատեսված չեն եղել այլ նպատակների համար, և դրանք բաշխել եկեղեցական խորհրդի ցուցումով: (129.21)

136.2. Կատարել ամենամսյա բոլոր միջոցների փոխանցումները, որոնք նախատեսված են շրջանին, շրջանային գանձապահին, և բոլոր ընդհանուր միջոցները գլխավոր գանձապահին, բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են ուրիշ նպատակների համար: (516.9)

136.3. Բոլոր ստացված և ծախսված միջոցների համար, պահպանել ճշգրիտ գրառումներ: (129.21).

136.4. Եկեղեցական խորհրդի յուրաքանչյուր անդամին, ներկայացնել ամենամսյա մանրամասն ֆինանսական հաշվետվություն: (129.21)

136.5. Եկեղեցական տարեկան ժողովի ժամանակ, ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվություն: (113.9, 129.21).

136.6. Եկեղեցական խորհրդին փոխանցել գանձապահի գրառումները, երբ նա դադարեցնում է իր պարտականությունները:

Լ. Տեղական եկեղեցու ծառայողներ

137. Եկեղեցու ծառայողները պետք է լինեն ոչ պակաս, քան երեք մարդ և ոչ ավել, քան տասներեքը: Եկեղեցու տարեկան կամ հատուկ ժողովի ժամանակ, գաղտնի քվեարկությամբ, եկեղեցու անդամներից ընտրվում են ծառայողներ, մինչև հաջորդ եկեղեցական տարին, երբ կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց հաջորդները: (33, 113.7, 113.11, 127)

138. Ծառայողների պարտականություններն են՝

138.1. Կատարել Եկեղեցու Աճի Հանձնաժողովի ֆունկցիաները, եթե դրանք չեն կատարվում ուրշ եղանակներով, ներառյալ ավետարանչությունը և միսիոներական գործունեությունը, նոր եկեղեցիների և եկեղեցական տիպի միսիաների նյութական աջակցությունը: Իր դիրքով, հովիվը հանդիսանում է այդ հանձնաժողովի նախագահը:

138.2. Կարիքավոր մարդկանց տրամադրել նյութական և բարոյական աջակցություն:

Ծառայողների Աստվածաշնչյան դերն է՝ աշխատել մարդկանց համար (Հռ.12.6-8): Ծառայողները պետք է ջանք գործադրեն և օգտագործեն իրենց հոգևոր պարգևները, կառավարման, ծառայության, գթասրտության, այցելությունների քաջալերության և աջակցության և նմանօրինակ այլ գործունեությունների համար:

138.3. Եկեղեցու խորհրդի որոշմամբ, կատարել Ավետարանչության և Եկեղեցական Անդամության Հանձնաժողովի պարտականությունները, համաձայն պարագրաֆներ 110-110.8:

138.4. Եկեղեցու կազմակերպման գործում օգնել հովվին այնպես, որպեսզի եկեղեցում քրիստոնեական ծառայության հնարավորությունը բաց լինի բոլոր քրիստոնյաների համար: Հատուկ ուշադրություն դարձնել ուրիշ մշակույթ և սոցիալ- տնտեսական ծագում ունեցող մարդկանց վրա, որոնք ապրում են եկեղեցու գործունեության շրջակայքում:

138.5. Պահպանել կապեր այլ քրիստոնյաների, հասարակական և սոցիալական ծառայությունների հետ:

138.6. Տեղական եկեղեցում հովվին օգնել ծառայությունների անցկացման և քրիստոնեական աճի գործերում:

138.7. Հոգ տանել, որպեսզի Հաղորդության համար առկա լինեն սուրբ պարգևները, ինչպես նաև հովվի խնդրանքով օգնել նրան անցկացնելու Հաղորդության խորհուրդը: (29.5, 515.4)

139. Ծառյողների թափուր տեղերը լրացվում են տեղական եկեղեցու կողմից, եկեղեցու հատուկ ժողովի ժամանակ: (113.8)

140. Ծառայողները կազմում են ծառայության հանձնաժողով, որի պարտականությունն է, տեղական եկեղեցում բոլոր հնարավոր միջոցներով նպաստել քրիստոնեական կառավարման հասկացողությանը: Միաժամանակ ծառայողները համագործակցում են հովվի և Ծառայողների Հանձնաժողովի Գրասենյակի հետ: (32-32.5)

Խ. Տեղական Եկեղեցու վստահելի անձինք (հոգաբարձուներ)

141. Եկեղեցու վստահելի անձիք, պետք է լինեն երեքից ոչ պակաս և ոչ ավել, քան իննը: Նրանք ընտրվում են տեղական եկեղեցու անդամներից, մինչև հաջորդ եկեղեցական տարվա սկիզբը, մինչև կընտրվեն և վերջնականապես հաստատվեն նրաց հաջորդները: (33, 113.11, 127)

142. Եթե քաղաքացիական օրենսդրությունը պահանջում է վստահելի անձանց ընտրության հատուկ ձև, ապա անհրաժեշտ է խստորեն հետևել օրենքին: (113.4)

142.1. Այնտեղ, որտեղ օրենսդրությունը չի պահանջում վստահելի անձանց ընտրության հատուկ ձև, նրանք գաղտնի քվեարկությամբ ընտրվում են տեղական եկեղեցու տարեկան կամ հատուկ ժողովի ժամանակ, որը հրավիրվել է հատուկ այդ նպատակով: (113.7, 113.11)

143. Վստահելի անձանց պարտականություններն են՝

143.1. Տնօրինել եկեղեցու անշարժ գույքի սեփականության իրավունքը և կառավարել այն որպես վստահելի անձինք այնտեղ, որտեղ տեղական եկեղեցին չունի գրանցում, կամ այդ է պահանջում տեղական օրենսդրությունը կամ այնտեղ, որտեղ շրջանային սուպերինտենդենտը կամ Շրջանային Խորհրդակցական Խորհուրդը անհրաժեշտ կհամարի, համաձայն պարագրաֆներ 102-104.4:

143.2. Ղեկավարել եկեղեցական շենքերի շինարարությունների և կահավորումների զարգացման պլանները, ինչպես նաև դրանց անհրաժեշտ ֆինանսական պլանները, եթե եկեղեցական խորհրդի կողմից այդ հարցերի լուծումը ուրիշ կերպ չի նախատեսվել:

144. Վստահելի անձի թափուր պաշտոնը լրացվում է տեղական եկեղեցու կողմից, համապատասխան գումարված եկեղեցական ժողովի ժամանակ: (113.8)

Ծ. Տեղական Եկեղեցու Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Խորհուրդ

145. Եկեղեցում քրիստոնեական կրթություն կազմակերպելու համար, յուրաքանչյուր տեղական եկեղեցի, տարեկան եկեղեցական ժողովի ժամանակ, պետք է կազմակերպի Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Խորհուրդ, որը կազմում է եկեղեցական խորհրդի մեկ մասը: Այն եկեղեցիներում, որտեղ անդամների քանակը չի անցնում 75-ը, նրա պարտականությունները կատարում է եկեղեցական խորհուրդը: Ըստ պաշտոնի նրա անդամներն են կիրակնօրյա դպրոցի ղեկավարը, հովիվը, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության նախագահը, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության նախագահը, տարեցների հետ աշխատանքների ղեկավարը և եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ, եկեղեցու անդամներից ընտրված ևս երեքից, մինչև ինը մարդ: Խորհրդի անդամները կարող են ընտրվել մինչև երկու տարի սահմանափակ ժամանակահատվածով, միչև որ ընտրվեն և վերջնականորեն հաստատվեն նրանց հաջորդները: Երբ խորհրդի ընտրված անդամի պաշտոնի համար առաջանում է թափուր տեղ, ապա այն կարող է պատշաճ կերպով լրացվել եկեղեցու հրավիրված ժողովի ժամանակ: Եթե եկեղեցին ընտրում է Կրթության Հանձնաժողովը, որպես եկեղեցական խորհրդի մի մասնիկ, ապա անհրաժեշտ է առաջնորդվել այս *Ուղեցույցով*, որտեղ նախատեսված է ծառայողների և վստահելի անձերի մինիմալ քանակը: Մարդիկ՝ որոնք իրենց դիրքով հանդիսանում են հանձնաժողովի անդամ, չեն կարող լինել եկեղեցական խորհրդի անդամ:

Մենք, տեղական եկեղեցիներին խորհուրդ ենք տալիս եկեղեցու ծառայության համար ընտրել միայն այն մարկանց, որոնք վկայել են լիակատար սրբագործության իրենց փորձառության մասին, ում կյանքը հանդիսանում է Աստծո շնորհքի դրսևորում, որը մեզ կոչ է անում սրբության կյանքի, ովքեր համաձայն են Նազովրեցու Եկեղեցու գործունեության, վարդապետությունների և կառուցվածքի (կառավարման ձևի/եղանակի) հետ, հավատարմորեն այցելում է տեղական եկեղեցի և աջակցում տասանորդով և այլ զոհաբերություններով: Եկեղեցու ծառայողները պետք է իրենց լիակատար նվիրեն §դաստիարակելու Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում¦: (33, 137,141,146)

Կիրակնօրյա դպրոցի և աշակերտության միջազգային ծառայության ծառայողների խորհրդի կամ կրթության հանձնաժողովի պարտականություններն են՝

145.1. Տեղական եկեղեցում պլանավորել, կազմակերպել, տարածել, և ղեկավարել քրիստոնեական կրթությունը: Այն տեղի է ունենում անմիջականորեն հովվի հսկողության տակ, ինչպես նաև եկեղեցու խորհրդի և Կիրակնօրյա Դպրոցի, և Աշակերտության Միջազգային Ծառայության տնօրենների ղեկավարությամբ: Աշխատանքները իրականացվում են համաձայն հարանվանության նպատակների և չափորոշիչների, որոնք հաստատվել են Գլխավոր Խորհրդի և Կիրակնօրյա Դպրոցների Խորհրդի՝ տարեցների, երիտասարդների և երեխաների ծառայողների համագործակցության միջոցով: Այստեղ են մտնում կրթական պլանները և երեխաների և տարեցների հետ աշխատանքների սոցիալական ծրագրերը: Եկեղեցում, Սուրբ Գրքի և վարդապետությունների ուսումնասիրության հիմքն են կազմում, Կիրակնօրյա Դպրոցը

և քարոզը:

Աստվածաշնչի վարդապետությունները դառնում են եկեղեցական կյանքի մի մասնիկը տարբեր ծառայությունների շնորհիվ՝ ինչպես մանկապարտեզներ, տարրական դպրոցներ, ծառայության համար տարեկան/հատուկ ծրագրեր, Կիրակնօրյա Դպրոցի ավագ խմբերի հանդիպումները, ամուրիների համար հանդիպումներ, արձակուրդների ժամանակ Աստվածաշնչի ուսումնասիրություններ: (516.15)

145.2. Վկայել Քրիստոսի մասին նրանց, ովքեր դեռ Նրան չգիտեն, մարդկանց կոչ անել շփվելու, սովորեցնելով նրանց Աստծո Խոսքը, ուղղորդելով նրանց դեպի փրկություն: Սովորեցնել քրիստոնեական հավատքի վարդապետությունները, ձևավորել Քրիստոսի նման բնավորություն, սովորություններ և վերաբերմունքներ: Օգնել կառուցելու քրիստոնեական ընտանիքներ, հավատացյալներին նախապատրաստել եկեղեցու անդամության և քրիստոնեական ծառայության:

145.3. Կազմել կրթական ծրագրեր տարբեր տեսակի ծառայությունների համար, անպայման օգտագործելով Նազովրեցու Եկեղեցու նյութերը, որպես Աստվածաշունչ ուսումնասիրելու և վարդապետությունները մեկնաբանելու հիմք:

145.4. Տեղական Եկեղեցում պլանավորել և կազմակերպել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության բոլոր ծառայությունները, համապատասխան Կիրակնօրյա Դպրոցի կանոնների: (812)

145.5. Եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ, հովվի հավանությամբ առաջադրել մեկ, կամ ավելի մարդկանց թեկնածություններ՝ Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության տնօրենի պաշտոնի համար: Թեկնածուի առաջադրումը, տեղի է ունենում ժողովի ժամանակ, եթե այդ պահին չկա տվյալ ծառայության ղեկավար:

145.6. Եկեղեցական խորհրդին, առաջադրել հովվի կողմից հաստատված թեկնածուներ, երեխաների և մեծահասակների հետ աշխատող առաջնորդների ընտրության համար:

145.7. Հովվի, Կիրակնօրյա Դպրոցի տնօրենի և Աշակերտության Միջազգային Ծառայության տնօրենի հավանությամբ, առաջադրված թեկնածուներից ընտրել երեխաների հետ աշխատելու խորհուրդ և մեծահասակների հետ աշխատելու խորհուրդ:

145.8. Տարիքային խմբերով ընտրել Կիրակնօրյա Դպրոցի բոլոր առաջնորդներին, ուսուցիչներին և ծառայողներին, որոնք պետք է դավանեն քրիստոնեական հավատքը, վարել օրինակելի կյանք, համաձայն լինել Նազովրեցու Եկեղեցու գործունեության և վարդապետությունների հետ: Նրանք ընտրվում են Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության նախագահի և երեխաների, և մեծահասակների հետ աշխատանքների, ղեկավարների կողմից առաջադրված թեկնածուներից: Թեկնածուները պետք է հաստատվեն հովվի և Կիրակնօրյա Դպրոցի ղեկավարի կողմից:

145.9. Այցելուների կրթության համար ընտրել տնօրեն, որը ղեկավարում, նպաստում և կազմակերպում է շարունակական կրթական միջոցառումներ, Կիրակնօրյա Դպրոցի աշխատողների և մնացած բոլոր եկեղեցու անդամների համար: Կիրակնօրյա Դպրոցի ծառայողների խորհուրդը, կարող է այցելուների կրթության տնօրենին, կանչել նրան իր դիրքով որպես այդ խորհրդի անդամ:

145.10. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության, ուսումնական տարվա սկզբին, անցկացնել շարունակական ժողովներ, որտեղ ընտրվում են քարտուղար և մյուս մնացած անհրաժեշտ ծառայողներ, և այն պետք է համընկնի եկեղեցական տարվա սկզբին: Հովիվը կամ Կիրակնօրյա Դպրոցի ղեկավարը, կարող է հրավիրել հատուկ ժողովներ: (114)

146. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության առաջնորդը:

Եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ, ընտրվում է Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության (ԿԴԱՄԾ) ղեկավար՝ մեկ տարի ժամկետով, կամ մինչև նրա հաջորդի ընտրությունը: Նա ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, ներկա գտնվող և քվեարկող եկեղեցու իրական անդամների ձայների մեծամասնությամբ: (ԿԴԱՄԾ) խորհուրդը հովվի համաձայնությամբ, կարող է առաջարկություն մտցնել ԿԴԱՄԾ առաջնորդին վերընտրելու համար, որը այդ պահին զբաղեցնում է պաշտոնը, պարզ քվեարկությամբ՝ «կողմ» կամ «դեմ»: Թափուր պաշտոնը լրացվում է տեղական եկեղեցու կողմից, եկեղեցու համապատասխան ձևով հավաքված ժողովի ժամանակ: ԿԴԱՄԾ նորընտիր ղեկավարը հանդիսանում է շրջանային ասամբլեայի, տեղական եկեղեցու խորհրդի և ԿԴԱՄԾ խորհրդի անդամ:

Մենք տեղական եկեղեցիներին խորհուրդ ենք տալիս եկեղեցու ծառայության համար ընտրել միայն այն մարդկանց, որոնք վկայել են լիակատար սրբագործության իրենց փորձառության մասին, ում կյանքը հանդիսանում է Աստծո շնորհքի դրսևորում, որը մեզ կոչ է անում սրբության կյանքի, ովքեր համաձայն են Նազովրեցու Եկեղեցու գործունեության, վարդապետությունների և կառուցվածքի (կառավարման ձևի/եղանակի) հետ, հավատարմորեն այցելում է տեղական եկեղեցի և աջակցում տասանորդով, և այլ զոհաբերություններով: Եկեղեցու ծառայողները պետք է իրենց լիակատար նվիրեն «դաստիարակելու Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում»: (33,113.11,127,145,145.5,201)

Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության առաջնորդի պարտականություններն են՝

146.1. Տեղական եկեղեցում ղեկավարել Կիրակնօրյա Դպրոցը և Աշակերտության Միջազգային Ծառայությունը (ԿԴԱՄԾ):

146.2. Ղեկավարել Կիրակնօրյա Դպրոցը և Աշակերտության Միջազգային Ծառայությունը (ԿԴԱՄԾ), համաձայն ԿԴԱՄԾ-ի կանոնադրության: (812)

146.3. Աջակցել առաջնորդների պատրաստման, Կիրակնօրյա Դպրոցի հաճախականության և այցելուների աճի համար նախատեսված ծրագրերի անցկացմանը:

146.4. Նախագահել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության և Կրթության Հանձնաժողովի ծառայողների պարբերական ժողովներին, որը հանդիսանում է եկեղեցական խորհրդի մի մասնիկը և ղեկավարում է ԿԴԱՄԾ-ի ծառայողների գործունեության խորհուրդը:

146.5. Կազմել տարեկան բյուջե, որը անհրաժեշտ է Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության գործունեության համար և ներկայացնել այն եկեղեցական խորհրդին, քննարկման համար:

146.6.Եկեղեցական խորհրդին ներկայացնել ամենամսյա հաշվետվություն և տարեկան հաշվետվություն եկեղեցու տարեկան ժողովի համար:

147. **Երեխաների/տարեցների հետ աշխատելու խորհուրդները և ղեկավարները**: Կիրակնօրյա Դպրոցի աշխատանքը պետք է կազմակերպվի տարիքային խմբերով. Երեխաներ, երիտասարդներ, մեծահասակներ: Ամեն տարիքային խմբի համար, անհրաժեշտ է ստեղծել խորհուրդ, որը այդ խմբում կազմակերպում և ղեկավարում է աշխատանքները: Այդպիսի խորհուրդը, բաղկացած է տարիքային խմբի առաջնորդից, Կիրակնօրյա Դպրոցի ներկայացուցիչներից, և այդ տարիքային խմբի համար եկեղեցու կողմից ներկայացրած ծառայության այլ խմբերից: Խորհրդի նպատակն է՝ համագործակցել տարիքային խմբի առաջնորդի հետ, այդ խմբում աշխատանքները պլանավորելու համար, և այդպիսի աշխատանքի համար ապահովել պայմաններ: Երեխաների և մեծահասակների հետ աշխատելու խորհուրդների գործունեությունը պետք է հավանության արժանանա ԿԴԱՄԾ-ի ծառայողների խորհրդի առաջնորդի կողմից:

Տարիքային խմբերի առաջնորդների պարտականություններն են՝

147.1. Նախագահել սեփական տարիքային խմբի խորհրդում, ղեկավարել խորհրդի կազմակերպումը, համակարգել և աջակցել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության ծառայությունները, այդ տարիքային խմբի մարդկանց համար:

147.2. Համագործակցելով Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության խորհրդի հետ, ղեկավարել սեփական տարիքային խումբը, աջակցել այն ծրագրերին, որոնք կնպաստեն տեղական եկեղեցու Կիրակնօրյա Դպրոցի աճին և այցելությանը՝ երեխաներով, երիտասարդներով կամ մեծահասակներով:

147.3. Առաջնորդել լրացուցիչ կիրակնօրյա, շաբաթական, տարեկան և հատուկ ծառայությունները, ավետարանական ժողովները և շփումը, տարիքային խմբերում:

147.4. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության ծառայողական խորհրդին առաջադրել թեկնածուներ՝ ծառայության տարբեր տարիքային ոլորտների համար, ներառյալ Կիրակնօրյա Դպրոցի առաջնորդներ, ուսուցիչներ և ծառայողներ, բացառությամբ Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդական Միջազգային Ընկերակցության ղեկավարների: Երիտասարդական Կիրակնօրյա Դպրոցի համար, այդ կազմակերպությունը ինքն է առաջադրում առաջնորդներ, ուսուցիչներ և ծառայողներ: Թեկնածուները պետք է հաստատվեն հովվի և Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության առաջնորդի կողմից: (33)

147.5. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության համար լրացուցիչ նյութեր օգտագործելուց առաջ, ստանալ Կիրակնօրյա Դպրոցի ծառայողների խորհրդի թույլտվությունը:

147.6. Աջակցել տարիքային խմբերի առաջնորդների պատրաստման ծրագրերում, համագործակցելով Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության խորհրդի և այցելուների կրթության տեղական տնօրենների հետ:

147.7. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության խորհրդին և/կամ եկեղեցական խորհրդին ներկայացնել բյուջետային հարցում և միջոցները բաշխել համաձայն այդ բյուջեի:

147.8. Տեղական եկեղեցում իր ղեկավարության տակ գտնվող բոլոր տարիքային ծառայություններից ընդունել հաշվետվություններ, անցկացված ծառայությունների համար: Կիրակնօրյա Դպրոցի տնօրենին ներկայացվում է ամսեկան հաշվետվություն, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության հաճախող անդամների քանակի, և նրա գործունեության մասին:

147.9. Տեղական եկեղեցում, Կիրակնօրյա Դպրոցի բոլոր աշխատանքները համակարգելու համար, ԿԴԱՄԾ-ի ծառայողների գործունեության խորհուրդին երեք ամիսը մեկ անգամ ներկայացվում է Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության տարիքային գործունեության օրացույց:

148. Երեխաների հետ աշխատելու խորհուրդ: Երեխաների հետ աշխատելու խորհուրդը պատասխանատու է տեղական եկեղեցում միչև 12 տարեկան երեխաների համար, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության, գործունեության պլանավորման համար: Խորհուրդը բաղկացած է, Կիրակնօրյա Դպրոցի և երեխաների մեջ ծառայության առաջնորդներից՝ մանկական եկեղեցու, Կիրակնօրյա Դպրոցի ավագ խմբերի հանդիպման, ամառային արձակուրդների ժամանակ Աստվածաշնչի ուսումնասիրության, Աստվածաշնչային վիկտորինայի, միսիայի, մսուրային խմբի և այլ խմբերի ծառայողներից առնվազը մեկ ներկայացուցիչ: Խորհրդի անդամների քանակը փոփոխվում է, կախված

տեղական եկեղեցում երեխաների հետ աշխատելու տարբեր ծրագրերի քանակից և ըստ անհրաժեշտության աստիճանի, եթե կա նոր ծրագիր և համապատասխան առաջնորդ:

Երեխաների հետ աշխատելու առաջնորդի պարտականություններն են՝

148.1. Տարիքային խմբում կատարել ղեկավարի պարտականությունները համապատասխան պարագրաֆներ 147.1-147.9:

148.2. Տեղական եկեղեցում, երեխաների մեջ միսիոներական ծառայության ղեկավար նշանակելու ժամանակ, համագործակցել Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության գործադիր հանձնաժողովի հետ (ՆԵՀՄԸ): Նշանակված անձը միաժամանակ հանդիսանում է ՆԵՀՄԸ-ի խորհրդի անդամ և երեխաների հետ աշխատելու խորհրդի անդամ: Այս պաշտոնի համար առաջադրված թեկնածուները, պետք է հաստատվեն հովվի և Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության առաջնորդի կողմից:

149. Մեծահասակների հետ աշխատելու խորհուրդ: Մեծահասակների հետ աշխատելու խորհուրդը պատասխանատու է տեղական եկեղեցում մեծահասակների համար, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության գործունեության պլանավորման համար: Խորհուրդը բաղկացած է Կիրակնօրյա Դպրոցի և տեղական եկեղեցու կողմից առաջարկվող մեծահասակների մեջ ծառայությունների առաջնորդներից, ինչպես՝ ամուսնություն և ընտանեկան կյանք, ծառայություն տարեցների համար, ծառայություն ամուրիների համար, փոքր խմբերում Աստվածաշնչի ուսումնասիրություն, տղամարդկանց ծառայություն, կանանց ծառայություն և այլ ծառայությունների ծառայողներից առնվազը մեկ ներկայացուցիչ: Խորհրդի անդամների քանակը կախված է տեղական եկեղեցու կողմից մեծահասակներին առաջարկվող ծրագրերի քանակից:

Մեծահասակների հետ աշխատելու առաջնորդի պարտականություններն են՝

149.1. Մեծահասակների խմբում, կատարել ղեկավարի պարտականությունները համապատասխան պարագրաֆներ 147.1-147.9:

Կ. Տեղական եկեղեցու Երիտասարդական Միջազգային Ընկերակցության Խորհուրդ

150. Նազովրեցու Եկեղեցու երիտասարդական ծառայությունները, տեղական եկեղեցիներում կազմակերպվում է Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության ղեկավարությամբ: Ընկերակցության տեղական կազմակերպությունները կազմակերպված են համապտասխան Ընկերակցության Կանոնադրության և գտնվում են եկեղեցական խորհրդի ղեկավարության տակ:

150.1. Ընկերակցության տեղական կազմակերպությունները, կազմակերպված են համապտասխան ՆԵՄԵԸ-ի ծառայության պլանի, ¥պարագրաֆներ 810.100-810.118¤ որը կարող է փոփոխվել համապատասխան տեղական ծառայությունների կարիքների հետ, ¥պարագրաֆներ 810.103¤ բայց դրա հետ մեկտեղ մնալով, ՆԵՄԵԸ-ի Կանոնադրության և Նազովրեցու Եկեղեցու տվյալ Ուղեցույցի հետ համաձայնության մեջ:

Հ. Տեղական եկեղեցու մանկապարտեզներ և տարրական դպրոցներ

151. Նազովրեցու Եկեղեցու մանկապարտեզները և տարրական դպրոցները կարող են կազմակերպվել եկեղեցական խորհրդի/տեղական համայնքների խորհրդների կողմից,

շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ: Հետևելով Կիրակնօրյա դպրոցում երեխաների հետ աշխատելու վարչության հաստատած չափանիշներին, նրանք պետք է տեղական եկեղեցու խորհրդին ներկայցնեն տարեկան հաշվետվություն, իրենց գործունեության մասին: (129.18, 211.13-211.14, 225.14, 516.15, 517)

151.1. Դպրոցի փակումը: Այն դեպքերում, երբ տեղական եկեղեցին անհրաժեշտ է համարում կանգնեցնել իր մանկապարտեզների և տարրական դպրոցների գործունեությունները, ապա այն պետք է հաջորդի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ խորհրդակցելուց և ֆինանսական հաշվետվություն ներկայացնելուց հետո:

Զ. Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Տեղական Ընկերակցություն

152. Եկեղեցու խորհրդի որոշման առկայության դեպքում, եկեղեցում կարող է ձևավորվել Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի տեղական ընկերակցությունը: Դրանք կարող են հիմնադրվել ցանկացած տարիքային խմբում, համապատասխան այդպիսի տեղական ընկերակցությունների սահմանադրությունների, հաստատված Միսայի / Ավետարանչության Համաշխարհային Հանձնաժողովի կողմից: (811)

152.1. Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի տեղական ընկերակցությունը հանդիսանում է տեղական եկեղեցու մի մասնիկը, գտնվում է հովվի և եկեղեցական խորհրդի ղեկավարության տակ: (516)

152.2. Տեղական ընկերակցության նախագահը առաջադրվում է երեքից մինչև յոթ հուգուց բաղկացած հանձնաժողովի կողմից, որոնք Նազովրեցու Համաշխարհային Միսիայի անդամ են: Նրան նշանակում են հովվի կողմից, որը նախագահում է: Այդ հանձնաժողովը նախագահի պաշտոնի համար ներկայացնում է մեկ, կամ մի քանի թեկնածություններ, որոնք պետք է հաստատվեն եկեղեցական խորհրդի կողմից: Նախագահը ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, ներկա գտնվող և քվեարկող անդամների (բացառությամբ նրանց, ովքեր ունեն եկեղեցու անդամության թեկնածուի կարգավիճակ) ձայների մեծամասնությամբ: Այդ ընտրությունները պետք է հաստատվեն եկեղեցական խորհրդի կողմից: Նախագահը պետք է լինի տեղական եկեղեցու անդամ, այն հասարակությանը որ նա ծառայում է, ի պաշտոնե եկեղեցական խորհրդի անդամ է (այն եկեղեցիներում, որտեղ նախագահը հովիվի կինն/ամուսինն է, եկեղեցական խորհրդի մեջ կարող է ընդգրկվել փոխնախագահը) և շրջանային ասամբլեայի անդամ է, որը անցկացվում է անմիջապես նրա ընտրությունից առաջ: Նախագահը ներկայացնում է հաշվետվություն տեղական եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ: (113.9, 114, 123, 127, 201)

153. Նազովրեցու Եկեղեցու ընդհանուր գործունեության համար, տեղական ընկերակցության կողմից հավաքված բոլոր միջոցները պետք է փոխանցվեն Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդին, բացառությամբ տասանորդի Հանձնաժողովի կողմից հաստատված զոհաբերությունների ծրագրերին:

153.1. Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդին կատարված վճարումներից հետո, տեղական եկեղեցիները խրախուսվում են աջակցել այլ գլոբալ միսիոներական ծառայություններին հատուկ հաստատված զոհաբերությունների միջոցով:

154. Նազովրեցու Եկեղեցու ընդհանուր գործունեության աջակցության ֆոնդերը

հավաքվում են հետևյալ կերպ.

154.1. Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդի և նրա ընդհանուր գործունեության համար նախատեսված զոհաբերություններից և նվերներից:

154.2. Հատուկ զոհաբերություններից, ինչպես օրինակ՝ Զատիկը կամ Գոհունակության զոհաբերությունները:

154.3. Վերը հիշատակված ոչ մի միջոց չի կարող օգտագործվել, որպես տեղական կամ շրջանային կարիքների համար կամ այլ բարեգործական նպատակների համար:

Ղ. Տեղական եկեղեցու ֆինանսական խնդրանքների արգելք

155. Տեղական եկեղեցուն, նրա անդամներին և ծառայողներին չի թույլատրվում կատարել ֆինանսական աջակցության հարցում ուրիշ տեղական եկեղեցիների, նրա անդամներին, ծառայողներին տեղական եկեղեցու կարիքների բավարարման համար կամ նրա կողմից աջակցվող այլ նպատակների իրականացման համար: Սակայն ֆինանսական աջակցության հարցում կարող է ուղարկվել տեղական եկեղեցուն, եթե այն և հարցում կատարող եկեղեցին գտնվում են միևնույն շրջանում և եթե առկա է շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի գրավոր աջակցությունը:

156. Նազովրեցու Եկեղեցու անդամները, ովքեր չունեն Գլխավոր Խորհրդի կամ նրա բաժիններից մեկի լիազորությունները, չեն կարող միջոցներ խնդրել միսիոներական կամ այլ կարիքների համար, բացի Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդից կամ տեղական եկեղեցիների համայնքից կամ տեղական եկեղեցիների անդամներից:

Ճ. Տեղական Եկեղեցու անվան օգտագործում

157. Նազովրեցու Եկեղեցու անունը կամ անվան մի մասնիկը, տեղական եկեղեցու, կազմակերպության կամ հաստատության, որը հանդիսանում է Նազովրեցու Եկեղեցու մի մասը, կամ ինչ-որ ձևով կապված է նրա հետ, չի կարող օգտագործվել Նազովրեցու Եկեղեցու ինչ-որ կազմակերպության, կամ նրա անդամի/անդամների, կամ ինչ-որ կազմակերպության, գործընկերության, ասոցացիայի, խմբի կամ ուրիշ ընկերակցության կողմից ցանկացած գործունեության համար (լինի դա կոմերցիոն, սոցիալական, կրթական կամ բարեգործական) առանց Նազովրեցու եկեղեցու Գլխավոր Խորհրդի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի նախնական գրավոր աջակցության: Այդ կանոնը չի տարածվում Նազովրեցու Եկեղեցու գործունեության վրա, որը նախատեսված է այս *Ուղեցույցով*:

Մ. Եկեղեցու կողմից հովանավորվող կազմակերպություն

158. Ոչ մի տեղական եկեղեցի, տեղական եկեղեցու խորհուրդ, շրջանային խորհուրդ, շրջանային կազմակերպություն, ինչպես նաև նրանց անդամները միասին կամ առանձին, ուղղակի կամ անուղղակի չեն կարող միանալ կազմակերպության, ասոցացիայի, գործընկերության, խմբի, կամ ընկերակցության, որը նպաստում, աջակցում կամ հովանավորում

է կամ ինչ-որ ձևով Նազովրեցու Եկեղեցիների անդամներին ներքաշում է ցանկացած տիպի գործունեության մեջ (դա լինի կոմերցիոն սոցիալական, կրթական կամ բարեգործական), որտեղ եկեղեցու անդամներին դիմում են աջակցության խնդրանքով, կամ եկեղեցու անդամները դիտարկվում են որպես պոտենցիալ գնորդներ, մասնակիցներ, վարձակալներ (ապրողներ), հաճախորդներ, անդամներ կամ գործընկերներ: Չի թույլատրվում նաև ներքաշվել գործողությունների մեջ (դա լինի կոմերցիոն սոցիալական, կրթական կամ բարեգործական), որը ուղղակի կամ անուղղակի ենթադրում է հովանավորություն կամ մասնակցություն, առաջնահերթ կամ բացառությամբ եկեղեցու անդամների համար, կամ էլ ծառայում են եկեղեցու անդամների կարիքներին, առանց շրջանային սուպերինտենդենտի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի նախնական գրավոր աջակցության:

Ն. Տեղական եկեղեցու աշխատակիցներ

159. Եկեղեցու որոշ անդամներ, տեղական եկեղեցու այցելուների կենսականորեն անհրաժեշտ ծառայությունների մեջ, զգում են նախապատրաստվելու և մասնակցելու հատուկ կանչ, որը կարող է լինել մասնակի կամ ամբողջական ներգրավվածությամբ: Այդպիսի աշխատողների մասնակցությունը եկեղեցու համար կարևոր է, սակայն չպետք է մոռանալ, որ Աստծուն կամավոր ծառայելը, բոլոր անդամների արտոնությունն ու պարտականությունն է համաձայն իրենց հնարավորությունների: Երբ տեղական եկեղեցին, կամ նրա հաստատությունները և/կամ մասնաճյուղերը, եկեղեցու աշխատանքները արդյունավետ դարձնելու համար, կարիք են զգում ավելացնելու վճարովի աշխատողների քանակը այցելուներից կամ քահանայությունից, ապա նրանք չպետք է մոռանան եկեղեցու անդամների ազատ ծառայության հոգու մասին, ինչպես նաև խնայել եկեղեցու ռեսուրսները, հիշելով բոլոր անհրաժեշտ ֆինանսական փոխանցումների վճարման մասին: Սակայն բացառիկ դեպքերում շրջանային սուպերինտենդենտին և Շրջանային Խորհրդատվական Խորհրդին կարելի է ներկայացնել գրավոր հարցում: (129.27)

159.1. Տեղական եկեղեցու բոլոր վճարովի և չվճարվող ծառայողները, որոնք մասնակցում են հատուկ տեսակի ծառայություններում՝ ներառյալ ցերեկային դպրոցի տնօրենները, ընտրվում են եկեղեցական խորհրդի կողմից, մինչդեռ թեկնածուները առաջադրվում են հովվի կողմից: Բոլոր առաջադրված թեկնածուները պետք է գրավոր ձևով հաստատվեն շրջանային սուպերինտենդենտի կողմից, որը հարցումներին պետք է պատասխանի ստացված հարցումից հետո, 15 օրերի ընթացքում: (1**59**.4, 211.13)

159.2. Այդպիսի զբաղվածությամբ աշխատակիցները կարող են գործի ընդունվել մեկ տարի ժամկետով, սակայն այդ ժամկետը կարող է երկարացվել հովվի երաշխավորությամբ և շրջանային սուպերինտենդենտի գրավոր հավանությամբ, ինչպես նաև եկեղեցական խորհրդի դրական քվեարկության միջոցով: Հովիվը պետք է պատասխանատու լինի ամեն աշխատակցի ամենամյա գնահատման գործում: Հովիվը խորհրդակցելով եկեղեցական խորհրդի հետ, կարող է կատարել առաջարկություններ աշխատակիցների հաստիքի ավելացման, կամ նրանց պարտականությունների փոփոխությունների մասին: Պայմանագրի ժամանակից շուտ, այդպիսի աշխատողներին աշխատանքից հեռացնելը կամ պայմանագրի չերկարացնելը, տեղի է ունենում ստանալով հովվի երաշխավորությունը, շրջանային սուպերինտենդենտի գրավոր հավանությամբ, ինչպես նաև եկեղեցական խորհրդի դրական քվեարկության միջոցով: Աշխատակցիներին աշխատանքից հեռացնելու կամ պայմանագրի չերկարացնելու գրավոր

ծանուցումը, պետք է փոխանցվի նրանց ծառայության ժամկետը լրանալուց ոչ ուշ քան 30 օր առաջ: (129.27)

159.3. Այդպիսի աշխատակիցների պարտականություններն ու ծառայությունները որոշվում են հովվի կողմից, որը նույնպես ղեկավարում է նրանց աշխատանքը: Պարտականությունների պարզ և հստակ ցուցակը պետք է ներկայացվի այդպիսի աշխատակիցներին, իրենց ծառայության անցնելուց 30 օր առաջ:

159.4. Վճարվող եկեղեցական ծառայողը, չի կարող ընտրվել եկեղեցական խորհուրդ: Եթե եկեղեցական խորհրդի անդամը դարձել է եկեղեցու վճարովի աշխատակից, նա կարող է մնալ եկեղեցական խորհրդի անդամ:

159.5. Հովվի փոփոխվելու ժամանակ կայունությունը, միաբանությունը և ծառայության շարունակությունը տեղական եկեղեցու համար, ունի առանցքային նշանակություն: Հետևաբար, շրջանային սուպերինտենդենտը (կամ նրա նշանակած ներկայացուցիչը) պետք է աշխատի եկեղեցական խորհրդի հետ, որպեսզի կատարի հետևյալ քայլերը, որոնք (ա) տեղական եկեղեցուն կարող են օգնել պահպանելու բոլոր աշխատակիցներին, գոնե անցումային ժամանակահատվածում; (բ) եթե պահանջվում է, առաջվա պես նոր հովվին հնարավորություն տալ զարգացնելու իր թիմը; (գ) այն եկեղեցական խորհրդին և շրջանային սուպերինտենդենտին թույլ կտա աշխատակիցներին տալ ողջամիտ քանակությամբ ժամանակ, անցումային ժամանակին նախապատրաստվելու և հարմարվելու համար: Առաջինը. Հովվի հրաժարականի հետ, բոլոր աշխատակիցները պետք է հրաժարական տան: Երկրորդ. Տեղական եկեղեցական խորհուրդը կարող է խնդրագիր ներկայացնի շրջանային սուպերինտենդենտին, տեղական եկեղեցու բոլոր աշխատակիցների հաստիքները պահպանելու համար: Եթե շրջանային սուպերինտենդենտի համաձայնությունը ստացվել է, եկեղեցու աշխատակիցները կարող են շարունակել կատարել իրենց պարտականությունները, նոր հովվի նշանակումից հետո, 90 օրերի ընթացքում, կամ մինչև նոր հովիվը համաձայն պարագրաֆ 159-ի դրույթների, հաջորդ տարվա համար չնշանակի նոր վճարովի աշխատակիցների: Ուսումնական տարվա ավարտին, երբ նոր հովիվը ստանձնում է իր պարտականություններին, մանկապարտեզների և տարրական դրոցների տնօրենները պետք է ներկայացնեն իրենց հրաժարականները: Տեղական համայնքի հաստատության և/կամ մասնաճյուղի կատարողական տնօրենը, պայմանագրի ժամանակահատվածի ավարտին տալիս է իր հրաժարականը, երբ նոր հովիվը ստանձնում է իր պաշտոնը: Նոր ընտրված հովիվը իրավունք ունի աշխատակիցների հետ նորոգելու աշխատանքային պայմանագրերը:

159.6. Աշխատակիցների, համայնքի և եկեղեցական խորհրդի ծանուցագրերի ուժի մեջ մտնելը, նախատեսված է պարագրաֆ 159.5-ով, հովիի փոփոխության ժամանակ, աշխատակիցների հաստիքների պատասխանատվությունը շրջանային սուպերինտենդենտի պատասխանատվությունն է: (211.13)

159.7. Համայնքի հովիվը, որը տեղական եկեղեցու կարգավիճակ է ստացել համաձայն պարագրաֆ 100.2-ի, չպետք է համարվի հաստիքային աշխատակից:

59Աշխատակազմի վճարվող աշխատակիցը, առանց շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանության, չի կարող կանչվել որպես եկեղեցու հովիվ, որի անդամն է հանդիսանում նա: (115, 129.2, 211.10, 225.16)

II. ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ա. ՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

200. Գլխավոր Ասամբլեան համաշխարհային Նազովրեցու Եկեղեցու ընդհանուր անդամների թվից կազմակերպում է եկեղեցական շրջաններ:

Շրջանը լիովին կազմակերպվում է անկախ տեղական եկեղեցիներից նրա համար, որպեսզի օգնեն յուրաքանչյուր եկեղեցու կատարելու ընդհանուր առաքելությունը փոխադարձ աջակցությամբ, բաժանելով ռեսուրսները և համագործակցելով:

Շրջանի անվանումը և սահմանները որոշվում են Սահմանների Գլխավոր Հանձնաժողովի կողմից և հաստատվում են շրջանային ասամբլեաներում, ձայների մեծամասնությամբ: Վերջնական հաստատումը ստացվում է լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտից կամ սուպերինտենդենտներից:

Այնտեղ, որտեղ շրջանները պատկանում են մեկից ավել կրթական տարածաշրջանի, մտածում են միաբանվելու մեկ շրջանի մեջ, Սահմանների Գլխավոր Հանձնաժողովը լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ որոշում է տարածաշրջանը որին այդ նոր շրջանը կպատկանի: (24)

200.1. Նոր տարածաշրջանների ստեղծումը: Նազովրեցու Եկեղեցում տարածաշրջանները կարող են ստեղծվել.

1. Տարածաշրջանը բաժանելով երկու կամ ավել շրջանների (պահանջվում է շրջանային ասամբլեայի ձայների երկու երրորդը);
2. Միացնելով երկու կամ ավելի տարածաշրջաններ, որոնցից կարող է ստացվել տարածաշրջանների ուրիշ քանակ:
3. Նոր տարածաշրջանի ձևավորումը մի շրջանում, որը չի մտնում գոյություն ունեցող ոչ մի տարածաշրջանի մեջ:
4. Միավորելով մեկ կամ մի քանի տարածաշրջաններ; կամ
5. Նոր տարածաշրջանի հիմնադրման հավանությունը պետք է փոխանցվի լիազորված գլխավոր սուպերինտենդենտին կամ սուպերինտենդենտներին: Շրջանային սուպերինտենդենտները և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կամ ազգային խորհուրդը/ները կարող են հաստատել և տվյալ առաջարկությունը ներկայացնել շրջանային ասամբլեա/ներ, լիազորված գլխավոր սուպերինտենդենտներին և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին, քվեարկության և հաստատման համար: (24,200,200.4)

200.2. Նոր շրջանում Նազովրեցու Եկեղեցու գործունեությունը կարող է սկսվել և բերել նոր շրջանների և նոր շրջանային ասամբլեաների սահմաններ առաջացմանը: Ցանկալի է, որ 3-րդ մակարդակի շրջանը ձևավորվի այնքան արագ որքան հնարավոր է համաձայն հետևյալ մոդելի:

Մակարդակ 1: Առաջին մակարդակի շրջանը կարող է հիմնվել, երբ նոր շրջանում եկեղեցուն աշխատելու հնարավորություն կա: Դրա հետ մեկտեղ, հաշվի է առնվում եկեղեցու զարգացման ռազմավարությունը և ավետարանչությունը: Նոր շրջանի ստեղծման հարցումը, գոյություն ունեցող տարածաշրջանում, կարող է անել տարածաշրջանային տնօրենը, Տարածաշրջանային Խորհրդատավական Խորհրդի միջոցով, կամ ֆինանսավորվող շրջանային սուպերինտենդենտը և/կամ Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, գլխավոր սուպերինտենդենտի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի վերջնական հաստատման համար:

Տարածաշրջանում, առաջին մակարդակի շրջանի շրջանային սուպերինտենդենտը, պետք

է երաշխավորվի տարածաշրջանային տնօրենի կողմից, խորհրդակցելով տնօրենի հետ: Երաշխավորությունը հասնում է լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտին, որը նշանակում է առաջին մակարդակի շրջանային սուպերինտենդենտին: Տարածաշրջանը նպաստում է առաջին մակարդակի շրջանի զարգացմանը, նշելով այն ամենը, ինչ անհրաժեշտ է դրա համար: Հովանավորվող շրջանների դեպքում շրջանային սուպերինտենդենտը նշանակվում է իրավասու Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից, նախապես խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի/ների և տարածաշրջանը հովանավորող Խորհրդատավական Խորհրդի հետ:

Երբ տարածաշրջանային միավորումների ռազմավարական համակարգողի և տարածաշրջանային տնօրենի կարծիքով, տարածաշրջաններում առաջին մակարդակի ինչ-որ շրջան, գտնվում է ճգնաժամային իրավիճակում՝ Ֆինանսական, բարոյական, կամ մեկ ուրիշ և այդ իրավիճակը լրջորեն ազդում է շրջանի կայունության և ապագայի վրա, ապա այդ դեպքում, խորհրդակցելով Համաշխարհային Միսիայի/Ավետարանչության տնօրենի հետ և լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի հավանությամբ, այդ շրջանը կարող է հայտարարվել որպես ճգնաժամային: Այդպիսի շրջանը կառավարելու համար տարածաշրջանային տնօրենը Գլխավոր Սուպերինտենդենտի հավանությամբ, կարող է նշանակել ժամանկավոր խորհուրդ, որը կփոխարինի մինչ այդ պահը գործող բոլոր խորհուրդներին և կատարում է իր պարտականությունները մինչև հաջորդ պարբերաբար նախատեսված շրջանային ասամբլեան:

Մակարդակ 2: Երկրորդ մակարդակի շրջանը կարող է հիմնվել լիովին կազմավորված եկեղեցիների և ձեռնադրված ծառայողների առկայության դեպքում այն պայմանով, որ շրջանի ենթակառուցվածքները բավականին զարգացած են և դրանք թույլ են տալիս կազմակերպել այդ մակարդակի շրջան:

Երկրորդ մակարդակի շրջանի այդպիսի կազմավորումը տեղի է ունենում լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտների երաշխավորությամբ, խորհրդակցելով Համաշխարհային Միսիայի/Ավետարանչության տնօրենի, տարածաշրջանային տնօրենի և ուրիշ անձանց ու խորհուրդների հետ, ովքեր մասնակցում են շրջանային սուպերինտենդենտի նշանակման գործում: Շրջանային սուպերինտենդենտը նշանակվում է կամ էլ ընտրվում:

Երկրորդ մակարդակի շրջանի կազմակերպման համար, որպես քանակական չափանիշ, կարող է հանդիսանալ մինիմում 10 կազմակերպված եկեղեցիների, Նազովրեցու Եկեղեցու 500 լիիրավ անդամների և 5 ձեռնադրված ծառայողների առկայությունը, և այդ պահին ադմինիստրատիվ ծախսերի ամենաքիչը 50% պետք է կատարվեն շրջանային ծառայության ֆոնդեր մուտք գործող միջոցներից: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կամ Ազգային Խորհուրդը կարող են հարցում անել լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտին, այս չափանիշների ընդունելուց ուշադրություն դարձնել բացառությունների հնարավորության համար:

Երբ տարածաշրջանային միավորումների ռազմավարական համակարգողի և տարածաշրջանային տնօրենի կարծիքով, տարածաշրջաններում երկրորդ մակարդակի ինչ-որ շրջան, գտնվում է ճգնաժամային իրավիճակում՝ Ֆինանսական, բարոյական, կամ մեկ ուրիշ և այդ իրավիճակը լրջորեն ազդում է շրջանի կայունության և ապագայի վրա, ապա այդ դեպքում իրավասու Գլխավոր Սուպերինտենդենտի հավանությամբ, այդ շրջանը կարող է հայտարարվել, որպես ճգնաժամային: Այդպիսի շրջանը կառավարելու համար, տարածաշրջանային տնօրենը Գլխավոր Սուպերինտենդենտի հավանությամբ, կարող է նշանակել ժամանկավոր խորհուրդ, որը կփոխարինի մինչ այդ պահը գործող բոլոր խորհուրդներին, և կատարում է իր պարտականությունները մինչև հաջորդ պարբերաբար նախատեսված շրջանային ասամբլեա:

Մակարդակ 3: Երրորդ մակարդակի շրջանը, կարող է հռչակվել բավական քանակության

լիովին կազմավորված եկեղեցիների, ձեռնադրված հովիվների (երեցների) և եկեղեցու անդամների առկայության դեպքում, դրանով արդարացնելով նոր կարգավիճակի անհրաժեշտությունը: Շրջանին անհրաժեշտ է ներկայացնել կոմպետենտ եկեղեցական ղեկավարում, եկեղեցիների զարգացած ենթակառուցվածքներ, բյուջետային պարտավորությունների կատարում, ինչպես նաև վարդապետական ամբողջականություն և անթերություն: Երրորդ մակարդակի շրջանը պետք է ի վիճակի լինի կրել այդպիսի պատասխանատվություն և համաշխարհային եկեղեցում, գլոբալ մասշտաբով մասնակցել Քրիստոսի Մեծ Հանձնարարության կատարմանը:

Երրորդ մակարդակի շրջանի այդպիսի կազմավորումը տեղի է ունենում լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտների երաշխավորությամբ, խորհրդակցելով Համաշխարհային Միսիայի/Ավետարանչության տնօրենի, տարածաշրջանային տնօրենի և ուրիշ անձանց ու խորհուրդների հետ, ովքեր մասնակցում են շրջանային սուպերինտենդենտի նշանակման գործում: Շրջանային սուպերինտենդենտը ընտրվում է համաձայն *Ուղեցույցի* կանոնների:

Երրորդ մակարդակի շրջանի կազմակերպման համար, որպես քանակական չափանիշ, կարող է հանդիսանալ մինիմում 20 կազմակերպված եկեղեցիների, Նազովրեցու Եկեղեցու 1000 լիիրավ անդամների և 10 ձեռնադրված ծառայողների առկայությունը: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կամ Ազգային Խորհուրդը կարող են դիմել լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտին, այս չափանիշների ընդունելուց ուշադրություն դարձնել բացառությունների հնարավորության համար:

Ինչ վերաբերվում է շրջանային ադմինիստրացիային, ապա երրորդ մակարդակի շրջանը պետք է ունենա 100% ինքնաֆինանսավորում:

Երրորդ մակարդակի շրջանները, իրենց տարածաշրջանների անբաժանելի մասն են:

Երբ իրավասու Գլխավոր Սուպերինտենդենտի կարծիքով շրջանը գտնվում է ճգնաժամային իրավիճակում՝ ֆինանսական, բարոյական, կամ մեկ ուրիշ, և այդ ճգնաժամը լրջորեն ազդում է շրջանի կայունության և ապագայի վրա, ապա այդ դեպքում Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ, այդ շրջանը կարող է հայտարարվել, որպես ճգնաժամային: Լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտը, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ, կարող է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

1. պաշտոնից հեռացնել շրջանային սուպերինտենդենտին;

2. շրջանը կառավարելու համար ձևավորել ժամանակավոր խորհուրդ, որը կփոխարինի բոլոր ժամանակավոր խորհուրդները, մինչև հաջորդ օրացուցային ասամբլեան:

3. կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են շրջանի առողջության և արդյունավետ ծառայության համար: (200.1, 205.12, 206.2, 209.1, 307.9, 322)

200. 3. Շրջանի բաժանման կամ շրջանի սահմանների փոփոխությունը: Շրջանի ստեղծման առաջարկությունը կամ շրջանի սահմանների փոփոխությունները կարող են լինել տարածաշրջանային գրասենյակից, Ազգային Խորհրդից կամ Շրջանային Խորհրդատվական Խորհուրդից: Այն հանձնվում է լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտին: Այդ ծրագիրը կարող է հաշվի առնել հետևյալ տեսակետները.

1. Հեռանկար ունեցող նոր շրջաններում կա՞ն արդյոք խոշոր քաղաքներ, որոնց գոյությունը արդարացնում է այդպիսի շրջանների ստեղծումը:

2. Մատչելի՞ են արդյոք կապի գծերը և տրանսպորտը, որոնք այդ շրջանի աշխատանքի համար կստեղծեն բարենպաստ պայմաններ:

3. Շրջանում աշխատելու համար, այցելուներից կա՞ն արդյոք բավական քանակությամբ հոգևորապես հասուն առաջնորդներ և ծառայողներ:

4. Կլինե՞ն արդյոք նոր շրջանը հիմնադրող, հաստատող և աջակցող տարածաշրջաններ, շրջանային ծառայության ֆոնդի բավարար մուտքեր, բավական քանակով անդամներ և կազմակերպված եկեղեցիներ պահպանելու նրանց երրորդ մակարդակի շրջանի կարգավիճակը:

200.4. Միավորում: Երրորդ մակարդակի երկու կամ ավել շրջաններ կարող են միաբանվել, եթե ներգրավված յուրաքանչյուր շրջանային ասամբլեայի բոլոր անդամները քվեարկել են այդ որոշման օգտին, ձայների երկու երրորդով: Ընդ որում, պետք է պահպանեն հետևյալ պայմանները. շրջանների միավորումը պետք է երաշխավորվի համապատասխան Շրջանային Խորհրդատվական Խորհուրդների (և ազգային խորհորդների, որտեղ դրանք կիրառելի են) կողմից, ինչպես նաև գրավոր հաստատվի, լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից: Միավորման մասին վերջնական որոշումը և դրա հետ կապված բոլոր հարցերը ընդունվում են հատուկ ժողովի ժամանակ, որի տեղը և ժամանակը որոշվում է համապատասխան ասամբլեաներով և լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից:

Ստեղծված կազմակերպությունը միավորում է բոլոր ակտիվները և պասիվները, այսինքն՝ ամբողջ ունեցվածքը և միավորվող շրջանների պարտավորությունները:

Առաջին և երկրորդ մակարդակի շրջանները կարող են միավորվել համաձայն նոր շրջանի ձևավորման կարգի, որը նկարագրված է պարագրաֆ 200.2-ի: (200.1)

200.5. Եթե այդ գործընթացքում ներգրավված մեկ կամ բոլոր շրջանային ասամբլեաները չեն ընդունել կոնկրետ որոշում, կամ մի քանի շրջանային ասամբլեաներ ընդունել են տարբեր որոշումներ, ապա նոր շրջան ձևավորելու հարցումը կարող է ուղղվել հաջորդ Գլխավոր Ասամբլեային, համապատախան որոշում կայացնելու համար: Սակայն դրա համար պահանջվում է հարցված բոլոր Խորհրդատվական Խորհուրդների ընդհանուր թվի երկու երրորդ մեծամասնությունը:

200.6. Շրջանային սուպերինտենդենտը կարող է նշանակել շրջանային տնօրեններին կամ ղեկավարներին և օգնել նրանց հետևյալ հարցերում.

1. Այդ շրջանի կամ միսիայի հովիվների մեջ ստեղծել համայնականության և բարեկամության զգացողություն:
2. Հետևել Քրիստոսի օրինակին, աջակցել և զարգացնել ծրագրեր, որոնք կնպաստեն առաջնորդների զարգացմանը, եկեղեցու աճին, ավետարանչությանը, եկեղեցիների վերածնունդին և նոր եկեղեցիների հիմնադրմանը:
3. Կատարել շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից տրված հատուկ հանձնարարություններ; և
4. Ծառայողը միջանկյալ օղակ է տեղական համայնքների և շրջանի միջև:

Բ. Ասամբլեայի անցկացման ժամանակը և անդամությունը

201. Անդամությունը: Շրջանային ասամբլեան բաղկացած է բոլոր նշանակված ձեռնադրված երեցներից, բոլոր նշանակված սարկավագներից, բոլոր նշանակված լիցենզավորված ծառայողներից, բոլոր նշանակված ծառայողներից, որոնք թոշակի մեջ են, շրջանային քարտուղարից, շրջանային գանձապահից, մշտական շրջանային հանձնաժողովների ներկայացուցիչներից, որոնք հաշվետու են շրջանային ասամբլեային, Նազովրեցու Եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկացած նախագահ, որը Նազովրեցու Եկեղեցիներից մեկի անդամն է և չունի հոգևոր աստիճան, Կիակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության շրջանային ներկայացուցչից, տարիքային խմբերի (մանկական և մեծահասակների) շրջանային բաժինների ղեկավարներից, Կիակնօրյա Դպրոցի

և Աշակերտության Միջազգային Ծառայության շրջանային խորհրդի բոլոր ներկայացուցիչներից,Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդության Միջազգային Ընկերակցության շրջանային բաժնի նախագահից, Նազովրեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության շրջանային նախագահից, Կիրակնօրյա Դպրոցի աշխատանքների բոլոր տեղական հանձնաժողովների նորընտիր առաջորդները և նրա տեղակալները, Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդական Ընկերակցության բոլոր տեղական բաժինների նորընտիր նախագահները կամ փոխնախագահները, Նազովրեցու եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության բոլոր տեղական բաժինների նորընտիր նախագահները կամ փոխնախագահները, կամ ընտրված տեղակալները կարող են ներկայացնել այդ օգնող կազմակերպությունները շրջանային ասամբլեայում ծառայողների, որոնք նշանակվել են որոշակի ծառայության: Շրջանայի Խորհրդակցական Խորհրդի անդամներից, որոնք չունեն հոգևոր աստիճան, բոլոր ակտիվ միսիոներներից, որոնք շրջանի եկեղեցիներից մեկի անդամ են, բոլոր թոշակառու միսիոներներից, որոնք շրջանի եկեղեցիներից մեկի անդամ են, որոնք ակտիվ միսիոներներ են եղել թոշակի գնալու ժամանակ, ինչպես նաև եկեղեցական շրջանի, տեղական համայնքների այցելուներից պատգամավորներից (24, 113.14-113.15, 146, 152,2 201.1-201.2, 219.2, 222.2, 224.4, 242.2, 244.2, 505-528.1, 532.8, 533-533.4, 534-534.3, 535-535.1, 536-536.2, 538.9):

201.1. Շրջաններում տեղական եկեղեցիները և եկեղեցատիպ միսիաները, որոնք շրջանում ունեն 5000-ից պակաս իրական անդամներ, շրջանային ասամբլեայում ներկայացված են հետևյալ կերպ՝50-ից պակաս իրական անդամ ունեցող տեղական եկեղեցիներից և եկեղեցանման միսիաներից երկու պատգամավոր և լրացուցիչ մեկ պատգամավոր, հաջորդ 50 իրական անդամների համար, նույնը նաև, լրիվ 50 իրական անդամներ ունեցող եկեղեցու համար: (24, 113.14-113.15, 201)

201.2. Շրջաններում տեղական եկեղեցիները և եկեղեցատիպ միսիաները, որոնք շրջանում ունեն 5000 և ավել իրական անդամներ, շրջանային ասամբլեայում ներկայացված են հետևյալ կերպ՝50-ից պակաս իրական անդամ ունեցող տեղական եկեղեցիներից և եկեղեցանման միսիաներից մեկ պատգամավոր, և լրացուցիչ մեկ պատգամավոր հաջորդ 50 իրական անդամների համար, նույնը նաև լրիվ 50 իրական անդամներ ունեցող եկեղեցու համար: (24, 113.14-113.15, 201).

202. Անցկացման ժամանակը: Շրջանային ասամբլեան հավաքվում է տարին մեկ անգամ, լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից նշանակված ժամանակահատվածում: Ասամբլեայի անցկացման տեղը որոշում է շրջանային սուպերինտենդենտը կամ Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը:

203.1. Թեկնածուներ առաջադրող հանձնաժողովը: Շրջանային ասամբլեայի գումարումից առաջ, շրջանային սուպերինտենդենտը խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, նշանակում է շրջանային ասամբլեայի համար թեկնածուներ առաջադրող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը առաջադրում է թեկնածուներ սովորական հանձնաժողովների և պաշտոնների համար, մինչև շրջանային ասամբլեայի գումարումը: (215.2)

204. Բոլոր շրջանային կառույցները, պետք է լիազորություն ունենան էլեկտրոնային տարբերակով հանդիպելու համար: Քվեարկության մեթոդները պետք է հաստատվեն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: Բոլոր պահանջված հաղորդակցությունները և քվեարկությունները կարող են իրականացվել էլեկտրոնային տարբերակով:

Գ. Շրջանային ասամբլեայի գործունեությունը

205. Ժողովների անցկացման կարգը: Հաշվի առնելով գոյություն ունեցող օրենսդրությունը, ինչպես նաև եկեղեցու կառավարման կանոնները, եկեղեցու անդամների հանդիպումները և ժողովները, տեղական, շրջանային, գլխավոր և Նազովրեցու Եկեղեցու հանձնաժողովները, պետք է անցկացվեն և վերահսկվեն համաձայն պառլամենտական կանոնակարգի անցկացման կանոնների (Robert's Rules of Order, վերջին հրատարակություն): (34)

205.1. Շրջանային ասամբլեայի պարտականություններն են.

205.2. Շրջանային սուպերինտենդենտի հաշվետվությունների լսումներ, որոնք կարճ նկարագրում են շրջանի ծառայությունը, ներառյալ նոր եկեղեցիների հաստատումը:

205.3 Բոլոր ձեռնադրված և լիցենզավորված ծառայողների հաշվետվությունների լսումներ, որոնք ծառայում են որպես հովիվներ կամ լիազորված ավետարանիչներ, դիտարկել անձերի և բոլոր երեցների սարկավագների և սարկավագուհիների հոգևոր զարգացումը: Շրջանային ասամբլեայի բոլոր անդամների ընդհանուր որոշմամբ, շրջանային քարտուղարին տրված գրավոր հաշվետվությունները, կարող են ընդունվել բանավոր հաշվետվությունների փոխարեն բոլոր մնացած երեցների, սարկավագների, սարկավագուհիների, լիցենզավորված ծառայողների և նրանք, ովքեր չեն նշանակվել ակտիվ ծառայության, ինչպես նաև ծառայողներ, ովքեր նշանակվել են ակտիվ ծառայության, ինչպես նաև ծառայողներ, ովքեր համապատասխանաբար նշանակվել են որոշակի ծառայության, համաձայն պարագրաֆներ 505-528.2: (521, 532.8, 538.9)

205.4. Եկեղեցիների ծառայության համար, հանձնել շրջանային լիցենզիաներ: Այդ որոշումը ընդունվում է բոլոր թեկնածությունների մանրակրկիտ քննարկումից հետո, որոնք երաշխավորվել են եկեղեցական խորհրդի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից և եթե քրիստոնեական ծառայության համար ունեն հստակ տեսանելի կանչ: Լիցենզիայի թարմացումը հնարավոր է շրջանի Շրջանային Ծառոյողների Մանդատային Խորհրդի, կամ Շրջանային Ծառայության Խորհրդի համապատասխան երաշխավորությամբ: (129.14. 531.5, 532.1, 532.3)

205.5. Սարկավագուհիների լիցենզիաների թարմացումը: Այդ որոշումը ընդունվում է թեկնածուների մանրակրկիտ քննարկումից հետո, որոնք սարկավագուհիների լիցենզիայի թարմացման համար երաշավորվել են եկեղեցական խորհրդի կողմից և այդ տեսակի ծառայության համար ունեն հստակ տեսանելի կանչ: Լիցենզիայի թարմացումը հնարավոր է Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայության Խորհրդի համապատասխան երաշխավորությամբ: (129.15)

205.6. Ձեռնադրված երեցի կամ սարկավագի հոգևոր աստիճանի նվիրաբերումը: Հոգևոր աստիճանի կարող են նվիրաբերվել այն ծառայողները, ովքեր կատարել են նվիրաբերման բոլոր պահանջները, Շրջանային Ծառոյողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայության Խորհրդի համապատասխան երաշխավորությամբ: (533.3, 543.3)

205.7. Ճանաչել ուրիշ հարանվանություններից եկած ծառայողների հոգևոր աստիճանները և մանդատները, եթե նրանց ծառայությունը Նազովրեցու Եկեղեցում ցանկալի է, նրանց որակավորումը ճանաչված է, և եթե Շրջանային Մանդատային Խորհուրդը կամ Շրջանային Ծառայության Խորհուրդը տվել է համապատասխան երաշխավորություն: (532.2, 535-535.2)

205.8. Ուրիշ շրջաններից տեղափոխված մանդատ ունեցող ծառայողների ընդունելությունը, ովքեր հոգևորության ներկայացուցիչներ են և բոլոր նրանք, ովքեր ունեն ծառայության համար հանձնարարված դերեր, ներառյալ ժամանակավոր տեղափոխությունները, եթե դրա համար կա

Շրջանային Խորհրդատվական Խորհրդի թույլտվությունը: Վերը նշված մարդիկ ընդունվում են, եթե նրանց մասնակցությունը շրջանային ասամբլեայում ցանկալի է ընդունվում, և եթե կա Շրջանայի Մանդատային Խորհուրդի կամ Շրջանային Ծառայության Խորհրդի համապատասխան երաշխավորությունը: (231.9-231.10, 505, 508-511.1, 537-537.2)

205.9. Հոգևորության ներկայացուցիչների և այն մարդկանց տեղափոխությունը և բոլոր նրանք, ովքեր ունեն ծառայության համար հանձնարարված դերեր, ներառյալ ժամանակավոր տեղափոխությունները, հաստատված Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: Այդ գործընթացը իրականացվում է, եթե ծառայողը ցանկություն է հայտնում տեղափոխվել ուրիշ շրջան և եթե կա Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհուրդի համապատասխան երաշխավորությունը: (505, 508-511.1, 231.9-231.10, 537-537.1)

205.10. Անձինք, ովքեր ի վիճակի են մեկ տարով այս կամ այլ ոլորտներում ծառայելու, նրանց նշանակումը և երաշխավորությունը կատարվում է համաձայն պարագրաֆներ 505-528.2-ի թվարկումների, կատարվում է Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհուրդի կամ Շրջանային Ծառայության Խորհրդի համապատասխան երաշխավորությամբ:

205.11. Ձեռնադրված երեցի ընտրությունը շրջանային սուպերինտենդենտի պաշտոնում:

Շրջանային սուպերինտենդենտը, ընտրվում է գաղտնի քվեարկությամբ շրջանային ասամբլեայի բոլոր ձայների երկու երրորդով և գտնվում է պաշտոնում երկրորդ ասամբլեայից վերջնական փակումից հետո, մինչև 30 օրը լրանալը, որին հետևում է կամ նրա կրկին ընտրվելը, կամ նրա փոխարինողի ընտրվելը և վերջնական հաստատվելը:

Շրջանային սուպերինտենդենտի վերընտրության արարողակարգը տեղի է ունենում շրջանային ասամբլեայի գաղտնի քվեարկությամբ, քվեարկելով « կողմ» կամ «դեմ»:

Ոչ մի ձեռնադրված երեց, որը ինչ-որ ժամանակ կարգապահական պատճառներով զրկված է եղել մանդատից, չի կարող ընտրվել այդ պաշտոնում: Ոչ մի սուպերինտենդենտ չի կարող վերընտրվել եթե լրացել է նրա 70 ամյակը:

205.12. Ոչ պակաս քան երկու տարի մնալով շրջանային սուպերինտենդենտի պաշտոնում, երկրորդ կամ երրորդ մակարդակի շրջաններում այդ սուպերինտենդենտը շրջանային ասամբլեայի կողմից և լիազորված Գլխավոր Սոպերինտենդենտի հավանությամբ, կարող է ընտրվել 4 տարի ժամկետով: Լրացուցիչ ժամանակահատվածի ընտրության արարողակրգը տեղի է ունենում ընդհանուր քվեարկողների՝ ձայների երկու երրոդով, քվեարկելով §կողմ¦ կամ §դեմ¦: (200.2)

205.13. Եթե Գլխավոր Սուպերինտենդենտը և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը համարում են, որ հաջորդ տարի շրջանային սուպերինտենդենտի պաշտոնին մնալը անցանկալի է, ապա լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտը և շրջանային ծառայողները կարող են շրջանային ասամբլեայի քվեարկելու հարց դնել: Այդ հարցը պետք է ներկայացնել հետևյալ կերպ. «Պե՞տք է արդյոք ներկայիս շրջանային սուպերինտենդենտին մնալ իր պաշտոնում այս շրջանային ասամբլեայից հետո»:

Եթե շրջանային ասամբլեան, գաղտնի քվեարկությամբ, բոլոր ձայների երկու երրորդով, կկայացնի որոշում թողնել շրջանային սուպերինտենդենտին իր պաշտոնում, ապա նրան հետևում է շարունակել իր գործունեությունը, ասես նման քվեարկություն երբեք չի անցկացվել:

Եթե շրջանային ասամբլեան, այդ քվեարկության ժամանակ որոշում է, որ իր պաշտոնում շրջանային սուպերինտենդենտի մնալը անցանկալի է, ապա նրա պաշտոնին մնալը սահմանափակվում է 30-180 օրերում, տվյալ շրջանային սուպերինտենդենտի փակելուց հետո և ամսաթիվը որոշվում է լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից, նախապես խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ: (206.2, 208, 239)

205.14. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդ գաղտնի քվեարկությամբ ընտրվում են,

մինչև 3 ձեռնադրված ծառայողներից և մինչև 3 ներկայացուցիչներ այցելուներից 4 տարին չգերազանցող ժամանակով, որը սահմանված է շրջանային ասամբլեայի կողմից, մինչև կընտրվեն և կհաստատվեն նրանց հաջորդները: Սակայն, երբ եկեղեցու անդամները շրջանում գերազանցում են 5000-ը, շրջանային ասամբլեան կարող է ընտրել լրացուցիչ մեկ ձեռնադրված ծառայողի և մեկ ներկայացուցիչ այցելուներից հաջորդ 2500 եկեղեցու անդամներից, ինչպես նաև մնացած 2500 անդամների մեծամասնության համար: (224)

205.15. Շրջանի Մանդատային Խորհրդի ընտրությունը, որը ընդգրկում է ամենաքիչը 5 ձեռնադրված ծառայողներ, որոնցից երկուսը հանդիսանում են շրջանային սուպերինտենդենտը և շրջանային քարտուղարը, եթե նա ձեռնադրված է: Շրջանայի քարտուղարը, ով սովորական ծառայող է, և հանդիսանում է խորհրդի ոչ քվեարկող անդամ: Խորհրդի ընտրությունը կատարվում է 4 տարով և նրա անդամները մնում են պաշտոնում, մինչև նրանց հաջորդների ընտրվելը և վերջնական հաստատվելը: Այդ խորհրդին անհրաժեշտ է հավաքվել մինչ շրջանային ասամբլեան, նրա իրավասության մեջ մտնող բոլոր հարցերը քննարկելու, և հնարավորության դեպքում վերջացնել աշխատանքը, մինչև շրջանային ասամբլեայի սկսվելը: (229-231.10)

205.16. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհրդի ընտրությունը 4 տարով, բաղկացած 5 կամ ավել ձեռնադրված ծառայողներից, մինչև նրանց հաջորդների ընտրությունը և վերջնական հաստատումը: (232)

205.17. Շրջաններին աջակցել նախապատրաստելու թեկնածուներին ձեռնադրության համար, աջակցելով և նրանց տալով հոգևոր զարգացման հնարավորություններ: Շրջանային խորհուրդը կարող է ընտրել ծառայողների համապատասխան քանակ հետևյալ խորհուրդներում ծառայելու համար՝ Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրուրդ, և Շրջանային Կրթական Խորհուրդ, Ծառայության Շրջանային Խորհուրդ: Այս ընտրված ծառայողները կարող են ծառայել չորս տարի ժամկետով:

Ծառայության Շրջանային Խորհուրդը, շրջանային սուպերինտենդենտը և խորհրդի նախագահը պետք է կազմեն Շրջանային Ծառայության Խորհուրդը, որը պետք է իրականացնի Շրջանային Ծառայողական Մանդատային Խորհրդի և Շրջանային Կրթական Խորհրդի պարտականությունները ու պատասխանատվությունները: (216, 229-234.4)

205.18. Եկեղեցու անշարժ գույքի գործերով Շրջանային Հանձնաժողովի ընտրություն համաձայն պարագրաֆ 236(206.1)-ի մեջ նշված դրույթների:

205.19. Հետևյալներից մեկի կամ երկուսի ընտրությունը.

1. Ավետարանչության Շրջանային Խորհուրդը ոչ պակաս, քան 6 անդամով, ներառյալ շրջանային սուպերինտենդենտը:
2. Ավետարանչության շրջանային տնօրեն:

Նրանք, ովքեր ընտրվել են այդ պաշտոնում, աշխատում են մինչև հաջորդ ասամբլեայի վերջնական փակումը և մինչև որ չընտրվեն և վերջնականապես չհաստատվեն նրանց փոխարինողները: (206.1, 215)

205.20. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության գործերով Շրջանային Խորհրդի ընտրությունը համապատասխան պարագրաֆ 241-ի ընթացակարգի, որպեսզի կատարեն իրենց աշխատանքները, մինչև որ չընտրվեն և վերջնականապես չհաստատվեն նրանց փոխարինողները: (206.1, 215)

205.21. Շրջանային ասամբլեայի Ֆինանսական Հանձնաժողովի ընտրությունը, բաղկացած եկեղեցու ծառայողների և այցելուների հավասար թվով անդամներից, չպետք է գերազանցի 4 տարին, ինչպես սահմանված է շրջանային ասամբլեայի կողմից, և մինչև որ չընտրվեն և վերջնականապես չհաստատվեն նրանց փոխարինողները: Շրջանային սուպերինտենդենտը և

շրջանային գանձապահը ի պաշտոնե հանդիսանում են հանձնաժողովի անդամ: (238-238.3)

205.22. Շրջանային Վճռաբեկ Դատարանի ընտրությունը, բաղկացած 3 ձեռնադրված ծառայողներից, ներառյալ շրջանային սուպերինտենդենտից և երկու այցելուներից, 4 տարին չգերազանցող ժամկետով, մինչև որ չընտրվեն և վերջնականապես չհաստատվեն նրանց փոխարինողները: (610)

205.23. Գլխավոր Ասամբլեայի անցկացնելուց 16 կամ 24 ամիս առաջ, այն տեղերում, որտեղ անհրաժեշտ է վիզաներ և այլ փաստատթղթեր ստանալ Ասամբլեայի աշխատանքներին մասնակցելու համար, շրջանային ասամբլեայի ժամանակ գաղտնի քվեարկությամբ ընտրել Գլխավոր Ասամբլեայի պատգամավորներ այցելուներից և ձեռնադրված ծառայողներից, բացի մեկից, քանի որ ծառայող պատգամավորներից մեկը շրջանային սուպերինտենդենտն է: Յուրաքանչյուր 3-րդ մակարդակի շրջանային ասամբլեա, պետք է Գլխավոր Ասամբլեայում ներկայացվի պատգամավոր ծառայողների և այցելուների հավասար թվով: Գլխավոր Ասամբլեայում, եկեղեցու ծառայող պատգամավորներից մեկը պետք է լինի շրջանային սուպերինտենդենտը, որը ասամբլեայի անցկացման ժամանակ զբաղեցնում է այդ պաշտոնը: Ծառայողներից մնացած պատգամավորները, պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու ձեռնադրված ծառայողներ: Եթե շրջանային սուպերինտենդենտը ի վիճակի չէ ներկա լինել Գլխավոր Ասամբլեային կամ շրջանային սուպերինտենդենտի թափուր պաշտոնի դեպքում, երբ նոր շրջանային սուպերինտենդենտը դեռ չի նշանակվել, նրա ներկայացուցիչն է հանդիսանում ընտրված տեղակալը:

Թեկնածուներ Ներկայացնող Հանձնաժողովը ներկայացնում է ընտրական բյուլետենները, որոնք պարունակում են ամենաքիչը 6 անգամ ավելի թեկնածուներ, քան շրջանից Գլխավոր Ասամբլեայի թեկնածուների քանակը, բոլոր պատգաավորների կատեգորիաներից, եկեղեցու ծառայողներից և այցելուներից: Այդ թեկնածուներից, Գլխավոր Ասամբլեաայի համար ընտրվում են պատգամավորների և նրանց փոխարինողների թույլատրելի թիվը, համաձայն պարագրաֆներ 301.1-1.3: Ընտրված պատգամավորները պետք է այցելեն Գլխավոր Ասամբլեայի բոլոր ժողովները սկզբից մինչև փակումը, և միայն նախատեսված հանգամանքներում այդ կանոնը կարող է խախտվել: (25-25.2, 301.1-301.3. 303, 332.1)

205.24. Կազմակերպել եկեղեցու կյանքում մասնակցության և հաշվառման սիստեմ մարդկանց համար, ովքեր ունեն տեղական եկեղեցու անդամության փեկնածություն, բայց այդ թեկնածուները չեն կարող համարվել լիարժեք անդամներ և չեն կարող լինել ներկայացուցիչներ: (108)

205.25. Շրջանային գանձապահը պետք է տրամադրի բոլոր հաշիվները և հաշվապահական հաշվետվություններ, տարեկան ստուգման համար: Վերստուգումը կարող է անցկացվել ընտրված Շրջանային Վերստուգող Հանձնաժողովի, աուդիտորական կազմակերպության կամ լիցենզավորված հաշվապահի կողմից: (225.24)

205.26. Շրջանային քարտուղարը ներկայացնում է եկեղեցու անցած 4 տարիների աշխատանքի ամբողջական պաշտոնական քաղվածք, որը փոխանցվում է Գլխավոր Ասամբլեային պահպանության և գրանցման համար: (207.3-207.4, 220.7)

205.27. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողների Խորհրդի երաշխավորությամբ, եկեղեցու ծառայողներին տրամադրել թոշակառուի կարգավիճակ: Կարգավիճակի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի շրջանային ասամբլեայի կողմից և Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողների Խորհրդի երաշխավորությամբ: (231.8, 536)

205.28. Շրջանի սահմաններում, հոգս տանել և ուշադրության կենտրոնում պահել Նազովրեցու Եկեղեցու համընդհանուր գործունեությունը:

205.29. Նազովրեցու Եկեղեցու աշխատանքին վերաբերվող այլ հարցերի լուծումը, այդ շրջանի սահմաններում:

206. Շրջանային ասամբլեայի անցկացման այլ կանոններ: Հաշվի առնելով քաղաքացիական օրենսդրությունը, շրջանային ասամբլեան կարող է թույլատրել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի պաշտոնական գրանցումը: Այդ դեպքում, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, իրավունք ունի տնօրինել գույքը իր հայացողությամբ, այսինքն՝ գնել, տնօրինել, վաճառել, վերցնել հիփոթոք, տնօրինել լիազորագրով, անշարժ գույքը գրավ դնել, վարձով տալ, գրանցված ընկերակցության նպատակների համար փոխանցել գույքը կամ շարժական կամ անշարժ գույքի տնօրինման իրավունքը:(225.6)

206.1. Ինչքան հնարավոր է, բոլոր շրջանային խորհուրդներում և հանձնաժողովներում, պետք է լինեն եկեղեցու ծառայողների և այցելուների ներկայացուցիչների հավասար քանակություն, եթե միայն այդ բաշխումը հիմնված չէ եկեղեցական Ուղեցույցի հատուկ կետերի վրա:

206.2. 1-ին և 2-րդ մակարդակի շրջանների շրջանային սուպերինտենդենտները ընտրվում են համաձայն պարագրաֆ 200.2-ի դրույթների: Երկրորդ մակարդակի շրջանը կարող է վերադարձվել առաջին մակարդակի, մինչև որ չբավարարի երկրորդ մակարդակի շրջանին անհրաժեշտ պահանջներին:

206.3. Եթե շրջանային ասամբլեայի նախագահողը համարում է, որ ասամբլեայի գործունեությունը անհնար է շարունակել անկառավարելի բնական երևույթներով, կամ շրջանում քաղաքական հուզումների պատճառով, ապա նա կարող է դադարեցնել նիստը և արձակել ասամբլեան: Այդ դեպքում եկեղեցական շրջանի բոլոր ծառայողները, որոնք չեն ընտրվել մինչև ասամբլեայի փակումը, նշանակվում են ծառայության մեկ տարի ժամանակով: Այդ նշանակումը տեղի է ունենում լիազորված Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից, խորհրդակցելով Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հետ:

Դ. Շրջանային ասամբլեայի արձանագրությունը

207. Շրջանային ասամբլեայի արձանագրություններում կատարվում են գրառումներ, շրջանային ասամբլեայի բոլոր կանոնավոր գործունեությունների մասին:

207.1. Արձանագրությունը պետք է պատրաստվի Գլխավոր Քարտուղարի գրասենյակի թույլատրված ձևաչափի: Թղթե պատճենները կարող են տեղում տպվել:

207.2. Շրջանային ասամբլեայում քննարկվող առանձին հարցերի գրառումները, անհրաժեշտ է ունենալ առանձին պարագրաֆներ:

207.3. Արձանագրությունները պետք է լրացվեն զգուշորեն, քանի որ այն քննարկման համար ներկայացվում է Գլխավոր Ասամբլեային: (205.26, 220.7)

207.4. Եկեղեցու աշխատանքների ամեն 4 տարվա արձանագրությունների պաշտոնական ամբողջական մատյանը, պետք է պահպանվի և գրանցվի շրջանային և Գլխավոր ասամբլեաների փստաթղթերի հետ: (220.5, 220.7)

207.5. Արձանագրությունների գրառումները պետք է կազմակերպվեն ինչքան հնարավոր է մոտ, համաձայն Գլխավոր Քարտուղարի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի խորհրդակցությամբ պատրաստված բովանդակության: Այդ բովանդակությունը ներկայացվում է շրջանային քարտուղարին, մինչև շրջանային ասամբլեայի գումարումը:

207.6. Արձանագրությունը ոչ միայն պետք է պարունակի գրառումներ տեղական եկեղեցիներում հովիվների նշանակման մասին, այլև ցանկացած այլ գործունեություն՝ մշտական կամ ժամանակավոր, շրջանային ասամբլեայի պատգամավորների եկեղեցու ծառայողներից և այցելուներից, ովքեր ներքաշված են Նազովրեցու Եկեղեցու ծառայության

ցանկացած ոլորտ: Այն կօգնի քննարկել նրանց հայտարարությունները, երբ նրանք կդիմեն թոշակի համար Կենսաթոշակային Խորհրդին, որը պատասխանատու է այդ շրջանում կենսաթոշակների բաշխման գործում: (115)

Ե. Շրջանային սուպերինտենդենտ

208. Շրջանային ասամբլեայի ժամանակ, ընտրված շրջանային սուպերինտենդենտի նախնական պաշտոնավարման ժամանակը սկսվում է ասամբլեայի արձակումից 30 օր անց: Այն շարունակվում է 2 եկեղեցական տարի և ավարտվում է ասամբլեայի արձակումից 30 օր անց, որը նշանավորում է շրջանային սուպերինտենդենտի ընտրության երկու տարին: Այդ ասամբլեայի ժամանակ սուպերինտենդենտը կարող է վերընտրվել, կամ կարող է ընտրվել և վերջնականապես հաստատվել նրա փոխարինողը: Գլխավոր Սուպերինտենդենտի կողմից նշանակված շրջանային սուպերինտենդենտի նախնական պաշտոնավարման ժամանակը սկսվում է նշանակման պահից, ընդգրկում է եկեղեցական տարվա մնացորդը, որում սուպերինտենդենտը նշանակվել է և շարունակվում է հաջորդ երկու եկեղեցական տարիների ընթացքում: Շրջանային սուպերինտենդենտի պաշտոնավարման ժամկետը վերջանում է ասամբլեայի արձակումից 30 օր անց, որը նշում է ծառայության երկրորդ տարվա ավարտը: Այդ ասամբլեայի ժամանակ, սուպերինտենդենտը կարող է վերընտրվի ևս մեկ ժամանակաշրջան, կամ կարող է ընտրվել և վերջնականապես հաստատվել նրա փոխարինողը: Շրջանային գրասենյակի կողմից վարձված ոչ մի վարձված երեց, շրջանում որտեղ նա ծառայում է, չի կարող ընտրվել կամ նշանակվել շրջանային սուպերինտենդենտի պաշտոնում, առանց Խորհրդատվական Խորհրդի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հավանությամբ (համաձայն պարագրաֆ 115), (205.11-205.13):

209. Շրջանային սուպերինտենդենտի թափուր պաշտոնի դեպքում, որը առաջացել է շրջանային ասամբլեաների ընդմիջումների ժամանակ, գլխավոր սուպերինտենդենտները միասին և առանձին կարող են լրացնել այդ թափուրը, խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ: Այդպիսի խորհրդակցությունը իր մեջ ընդգրկում է այդ հանձնաժողովի գումարումը, քննարկման համար անունների տրամադրումը ի լրացում այն անունների, որը առաջադրել է իրավասու գլխավոր սուպերինտենդենտը: (239, 307.7)

209.1. Առաջին և երկրորդ մակարդակի շրջանների շրջանային սուպերինտենդենտի պաշտոնը, իրավասու գլխավոր սուպերինտենդենտի որոշմամբ կարող է հայտարարվել թափուր: Երրորդ մակարդակի շրջանի շրջանային սուպերինտենդենտի պաշտոնը համարվում է թափուր, եթե Շրջանային Խորհրդատվական Հանձնաժողովը դրա համար քվեարկել է ձայների երկու երրորդով: (239, 321)

209.2. Շրջանային սուպերինտենդենտի ժամանակավոր անաշխատունակության դեպքում, լիազորված գլխավոր գուպերինտենդենտը խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, կարող է նշանակել այդ պաշտոնին համապատասխան ձեռնադրված երեցի, որպես շրջանային սուպերինտենդենտի ժամանակավոր պարտականությունների կատարող: Անաշխատունակության հարցը որոշվում է լիազորված գլխավոր սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: (307.8)

209.3. Եթե շրջանային սուպերինտենդենտը հեռանում է իր պաշտոնից, ապա շրջանային գրասենյակի աշխատողները՝գլխավոր ադմինիստրատորը կամ ցանկացած դուստր և/կամ միացված կազմակերպությունները, վճարվող կամ չվճարվող, ինչպես՝ սուպերինտենդենտի օգնականը կամ գրասենյակի քարտուղարը նույնպես պետք է տան իրենց հրաժարականը, մինչև տվյալ սուպերինտենդենտի հեռանալու վերջնական ամսաթիվը: Սակայն գրասենյակի մեկ կամ մի քանի աշխատողներ կարող են մնալ գլխավոր սուպերինտենդենտի և Շրջանային

Խորհրդատվական Խորհրդի գրավոր համաձայնության դեպքում, բայց մինչև այն ժամանակը երբ նոր սուպերինտենդենտը կստանձնի իր պաշտոնը: (245.3)

209.4. Խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ և ստանալով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի համաձայնությունը, նոր ընտրված կամ նշանակված շրջանային սուպերինտենդենտը, արտոնություն ունի երաշխավորելու գրասենյակի անդամների և աշխատողների նշանակումը, որոնք մինչ այդ աշխատել են: (245.3)

210. Շրջանային սուպերինտենդենտի դերն է ապահովել վերահսկողություն և հոգևոր առաջնորդություն շրջանի հովիվների և համայնքների համար՝

- Աղոթելով և Աստծո հետ ժամանակ անցկացնելով օրինակ ծառայի ուրիշներին:
- Նպաստի Աստվածաշնչյան հովվական աստվածաբանությանը և սովորույթներին, շրջանային հոգևորության մեջ:
- Նպաստի վեսլիական աստվածաբանությանը և սովորույթներին ամբողջ շրջանում:
- Ունենալ տեսիլք, շրջանում ավետարանչության և նոր եկեղեցիների հիմնադրման համար:
- Աջակցել շրջանային համայքների առողջ կազմավորմանը:

211.Շրջանային սուպերինտենդենտի պարտականությունները:

211.1. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հավանությամբ կազմակերպել, ճանաչել, և ղեկավարել տեղական եկեղեցիները, նրա շրջանի սահմաններում: (100, 538.15)

211.2. Իր շրջանի սահմաններում հասանելի լինել տեղական եկեղեցիներին, եթե դրա կարիքը կա, և անհրաժեշտության դեպքում հանդիպել եկեղեցական խորհրդի հետ խորհրդակցելու հոգևոր, ֆինանսական և հովվական հարցերով: Այդ դեպքում, սուպերինտենդենտը առաջարկում է օժանդակություն և անհրաժեշտ օգնություն:

211.3. Որոշակի հանգամանքների առկայության դեպքում, եթե շրջանային սուպերինտենդենտը որոշել է, որ ինչ-որ եկեղեցի անկում է ապրել և գտնվում է անառողջ վիճակում, և այդ վիճակում գոյատևելը սպառնում է եկեղեցու կենսունակությանը և նրա միսիայի արդյունավետությանը, ապա նա կարող է համառորեն հետամուտ լինել հանդիպելու հովվի կամ հովվի և եկեղեցական խորհրդի հետ, պարզելու և գնահատելու հանգամանքները: Անհրաժեշտ է ներդնել բոլոր ուժերը, որպեսզի հովվի և եկեղեցական խորհրդի հետ համատեղ լուծել այն հարցերը, որոնք բերել են եկեղեցու միսիային արդյունավետությանը սպառնացող հանգամանքներին:

Եթե հովվի և եկեղեցական խորհրդի հետ հանդիպումից հետո, շրջանային սուպերինտենդենտը որոշում է ընդունում հետագա քայլերի ընդունման անհրաժեշտության մասին, որպեսզի փոփոխվի ստեղծված իրավիճակը, ապա նա ստանալով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությունը կարող է ձեռնարկել հետագա գործողությունները: Այդ գործողությունները ընդգրկում են, բայց չեն սահմանափակվում հետևյալ քայլերով.

1. հեռացնել հովվին իր պաշտոնից;
2. եկեղեցական խորհրդի արձակումը;
3.ձեռնարկել ցանկացած ուրիշ գործողություններ, որոնք անհրաժեշտ են վերականգնելու եկեղեցու առողջ վիճակը և նրա ծառայության միսիայի արդյունավետությունը:(124-24.1)

Կազմակերպված եկեղեցու գույքը մնում է գրանցված եկեղեցու հսկողության տակ, եթե նա հայտարարված չէ ոչ ակտիվ համաձայն պարագրաֆ 106.5-ի, կամ եկեղեցի արձակել են համաձայն պարագրաֆ 106.1-ի: Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը 30 օրերի ընթացքում պետք է տեղեկացված լինի ձեռնարկված գործողությունների մասին:

211.4. Եթե շրջանային սուպերինտենդենտի կարծիքով, ճգնաժամի մեջ հայտնված

եկեղեցին համաձայն պարագրաֆ 126.1-ի, կատարել է ժամանակավոր պահանջները և պատրաստ է վերսկսել իր ծառայությունները նորմալ պայմաններում, ապա այդ եկեղեցին, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ձայների մեծամասնության քվեարկության որոշումով, կարող է հռչակվել ճգնաժամից դուրս եկած: Որոշման մասին 30 օրերի ընթացքում շրջանային սուպերինտենդենտը պետք է տեղյակ պահի լիազորված գլխավոր սուպերինտենդենտին:

211.5. Որոշել, հովիվ/եկեղեցի հարաբերությունների վերանայման ժամանակը և ղեկավարել այդ ստուգումները եկեղեցական խորհրդի հետ համաձայն պարագրաֆ 123-123.7-ի կանոնների: Շրջանայի սուպերինտենդենտը Շրջանային Խորհրդատվական Խորհրդին և իրավասու գլխավոր սուպերինտենդենտին պետք է ապահովի տարեկան հաշվետվությամբ եկեղեցի/հովիվ հարաբերության վերանայման մասին:

211.6. Իր շրջանի սահմաններում ղեկավարել Նազովրեցու Եկեղեցու եկեղեցական տիպի միսիաները (Նոր խմբեր)

211.7. Շրջանային քարտուղարի թափուր տեղի քվեարկության համար առաջարկել թեկնածու: (219.1)

211.8. Շրջանային գանձապահի թափուր տեղի համար, Խորհրդատվական Խորհրդի ընտրությանը առաջարկել թեկնածու: (222.1)

211.9. Նշանակել շրջանային կապելլանին, որպեսզի նրա հատուկ ծառայության աջակցության միջոցով, տարածվի սրբության մասին ուսմունքը: (240)

211.10. Տեղական եկեղեցիներում ծառայության համար, խորհրդակցելով եկեղեցական խորհրդի հետ անհրաժեշտության դեպքում առաջարկել թեկնածուներ երեցներից կամ լիցենզավորված ծառայողներից, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի լրացուցիչ հաստատմաբ, որը հաստատում կամ մերժում է նրա թեկնածությունը, համաձայն պարագրաֆ 115-ի: (129.2, 159.8, 225.16)

211.11. Նշանակել, հովվի և եկեղեցու միջև հարաբերությունների արտահերթ վերանայման ժամանակ 90 օրերի ընթացքում այն բանից հետո, երբ եկեղեցական խորհուրդը կկատարի հարցում, տվյալ հովվի գործունեությունը շարունակելու համար: (125)

211.12. Հաստատել կամ մերժել, տեղական եկեղեցու խորհրդի կողմից ստացված Նազովրեցու Եկեղեցու ցանկացած անդամի հարցումը, ով հովվական ծառայության համար, չունի երեցի ձեռնադրություն տեղական եկեղեցու ծառայողի լինցենզիայի տրամադրման կամ թարմացման համար: (531.1, 531.3)

211.13. Գրավոր ձևով հաստատել կամ մերժել հովվից կամ եկեղեցական խորհրդից ստացված հարցումները, վճարվող կամ չվճարվող աշխատակիցների ընդունման մասին, այնպիսիք՝ ինչպես հովվի օգնականը, երեխաների, երիտասարդների, և մեծահասակների հետ աշխատանքի քրիստոնեական կրթության ղեկավարը, երաժշտության ծառայության, ցերեկային դպրոցների ղեկավարը և այլն: Այդ հարցման գլխավոր չափանիշը հիմնականում կլինի տեղական եկեղեցու պատրաստակամության և կարողության դրսևորումը, կատարելու իր տեղական շրջանային և ընդհանուր ֆինանսական պարտավորությունները: Եկեղեցու ավագ հովիվը պատասխանատու է հովվի օգնականի պաշտոնի թեկնածուների մանրակրկիթ ընտրության համար, սակայն շրջանային սուպերինտենդենտը իրավունք ունի մերժելու որոշակի թեկնածուի: (129.27, 159-159.8)

211.14. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի օգնությամբ, հաստատել կամ մերժել ցերեկային դպրոցների կազմակերպման մասին տեղական եկեղեցիների հարցումները: (151, 225.14, 517)

211.15. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի օգնությամբ, ձևավորել և ստորագրել

շրջանի բոլոր իրավաբանական փաստաթղթերը: (225.6)

211.16. Խորհրդատվական Խորհրդի ընտրությանը առաջարկել, շրջանի վճարովի հաստիքների համար աշխատակիցների թեկնածություններ: (245)

211.17. Նշանակել հովիվներ համապատասխան պարագրաֆ 117-ի:

211.18. Եթե եկեղեցու գոյությունը հինգ տարուց պակաս է, անցած տարեկան եկեղեցական ժողովի քվեարկության ժամանակ ունեցել է 35-ից պակաս քվեարկող անդամներ, շրջանից ստանում է շարունակական ֆինանսական օգնություններ, կամ գտնվում է ճգնաժամային իրավիճակում, շրջանային Շրջանային Խորհրդատվական Խորհրդի աջակցությամբ կարող է նշանակել եկեղեցական խորհրդի անդամներ (ադմինիստրատորներ, եկեղեցու հոգաբարձուներ), Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության առաջնորդի, և եկեղեցու այլ ծառայողների (քարտուղար, գանձապահ): Տվյալ խորհրդում անդամների թիվը կարող է լինել ոչ պակաս քան 3 մարդ: (117, 126)

211.19. Համապատասխան պարագրաֆներ 606-606.3–ի, կարգադրել հետաքննելու շրջանում ծառայողի կամ աշխատողի վրա գրված գրավոր բողոքները:

211.20. Խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ նշանակել ծառայողներ հոգևորականներից ու այցելու անդամներից, ծառայելու որպես վերանայող թիմ, պատրաստ լինելու ապահովելու ճիշտ ժամանակային և փրկարարական ծառայություն, ամուսնու/կնոջ և ընտանիքի, եկեղեցու, համայնքի հոգևոր ոչ պատշաճ վարքագծի իրավիճակներում: Նման իրավիճակում շրջանային սուպերինտենդենտը պետք է հրահանգի վերականգնողական թիմի աշխատանքի սկիզբը, որքան հնարավոր է շոշտ համաձայն շրջանային պլանի: (225.5, 540.1)

211.21. Շրջանային սուպերինտենդենտը պետք է հաստիքում գտնվող ավետարանիչի հետ պլանավորի և իրականացնի ինքնագնահատման և վերանայման գործունեության գնահատում, համաձայն պարագրաֆ 510.4:

211.22. Շրջանայի առաջնորդության հետ մեկտեղ խստորեն քաջալերել յուրաքանչյուր տեղական եկեղեցու անհատական գլխավոր, շրջանային և կրթական ֆոնդային նպատակներին հասնելու համար:

212. Հովվի թափուր հաստիքի առաջացման ժամանակ, շրջանային սուպերինտենդենտը եկեղեցական խորհրդի համաձայնությամբ, կարող է հովիվ նշանակել, ժամանակավոր կատարել նրա պարտականությունները մինչև հաջորդ ասամբլեայի գումարումը: Պարտականություններ կատարող ժամանակավոր հովիվը կարող է շրջանային սուպերինտենդենտի կողմից հեռացվել, եթե նրա գործունեությունը չի բավարարում տեղական եկեղեցու այցելուներին և եկեղեցական խորհրդին: (129.5, 524, 531.6)

212.1 Շրջանային սուպերինտենդենտը, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և եկեղեցական խորհրդի համաձայնությամբ, կարող է նշանակել հովվի պարտականությունները ժամանակավոր կատարողի, քանի դեռ չի կանչվել մշտական հովիվ: Շրջանային սուպերինտենդենտը նաև իրավունք ունի երկարացնելու ժամնակավոր հովվի ծառայությունը, եթե նա համարում է, որ դա անհրաժեշտ է, խորհրդակցելով եկեղեցական խորհրդի հետ: Հովվի պարտականությունները ժամանակավոր կատարող մարդը իրավունք ունի կատարելու հովվի բոլոր պարտականությունները: Հովվի պարտականությունները ժամանակավոր կատարող մարդը նաև պատգամավոր է այդ եկեղեցուց շրջանային ասամբլեայում, եթե նա այդ շրջանի սահմաններում, այդ եկեղեցու անդամ է: Այդպիսի ժամանակավոր նշանակված հովիվը հաշվետու է ամեն ինչի համար, շրջանային սուպերինտենդին և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի առաջ: Ժամանակավոր նշանակված հովիվը կարող է հեռացվել պաշտոնից շրջանային սուպերինտենդենտի կողմից, նախապես խորհրդակցելով եկեղեցական խորհրդի

հետ: (526)

213. Այն դեպքում, երբ տեղական եկեղեցին չունի հովիվ կամ նրա ժամանակավոր փոխարինողը, շրջանային սուպերինտենդենտը լիազորություն ունի իր շրջանի տեղական եկեղեցիներում կատարելու հովվի բոլոր ֆունկցիաները (514)

213.1. Շրջանային սուպերինտենդենտը կարող է նախագահել տեղական եկեղեցու տարեկան և հատուկ ժողովների ժամանակ, կամ նշանակել փոխարինող այդ պարտականությունը կատարելու համար: (113.5)

214. Եթե ինչ-որ պատճառով, լիազորված գլխավոր սուպերինտենդենտը չի կարող ներկա լինել շրջանային ասամբլեայի ժամանակ, կամ նշանակել իր ներկայացուցչին, ապա շրջանային ասամբլեան կարող է ղեկավարել շրջանային սուպերինտենդենտը և նախագահել ողջ ասամբլեայի ընթացքում, եթե շրջանային ասամբլեայի կողմից չի նախատեսվել ուրիշ կառավարիչի ընտրությունը: (307.5)

215. Շրջանային սուպերինտենդենտը կարող է թեկնածուներ նշանակել լրացնելու հետևյալ հանձնաժողովների թափուր տեղերը.

1. Շրջանային Ասամբլեայի Ֆինանսական Հանձնաժողով
2. Շրջանային Ֆինանսական Աուդիտային Հանձնաժողով
3. Շրջանի Ծառայողական Մանդատային Խորհուրդ կամ Շջանային Ծառայողների խորհուրդ:
4. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդ:
5.Ավետարանչության Շրջանային Խորհուրդ կամ ավետարանչության շրջանային տնօրենի պաշտոնը:
6. Եկեղեցու Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդ:
7. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհուրդ»:
8. Շրջանային Վերաքննիչ Դատարան:
9. Շրջանային Վճռաբեկ Դատարան և այլ խորհուրդներում և հանձնաժողովներում, որոնք նշված չեն *Ուղեցույցում*: (205.21, 205.25, 229.1, 232.1, 235, 236, 241, 610)

215.1. Շրջանային սուպերինտենդենտը կարող է նշանակել շրջանային խորհուրդների և մշտական շրջանային հանձնաժողովների բոլոր ներկայացուցիչներին և քարտուղարներին, եթե նրանց նշանակումը ամրագրված չէ *Ուղեցույցով*, կամ շրջանային ասամբլեայի գործունեության մասը չի կազմում:

215.2. Խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, նշանակել թեկնածուներ առաջադրող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը առաջադրում է թեկնածուներ սովորական հանձնաժողովների և հաստիքների համար, մինչև շրջանային ասամբլեայի գումարումը: (203.1)

216. Շրջանային սուպերինտենդենտը, ի պաշտոնե Շրջանային Խորհրդատվական Խորհրդի, Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդի, կամ Շրջանային Ծառայողների Խորհրդի անդամ է: (224.2, 230.1)

216.1. Շրջանային սուպերինտենդենտը, շրջանում, որտեղ նա ծառայում է, ի պաշտոնե հանդիսանում է բոլոր ընտրված և մշտական խորհուրդների անդամ: (205.20-205.21, 237, 241, 810, 811)

217. Շրջանային սուպերինտենդենտը չպետք է իր վրա վերցնի ֆինանսական պարտավորությունները, հաշվել փողերը կամ բաշխել շրջանի ֆոնդերը, առանց Շրջանային Խորհրդատվական Խորհրդի թույլտվության, որը որոշում է կայացրել ձայների մեծամասնությամբ: Եթե այդպիսի գործողություններ ձեռնարկվել են, ապա դրանք պետք է

հստակ գրանցվեն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ժողովի արձանագրություններում: Ո'չ շրջանային սուպերինտենդենտը, նրա մոտիկ բարեկամներից ո'չ մեկը, շրջանի անունից չունի անսահմանափակ մուտք ֆինանսական ակտիվներին և հաշիվներին առանց Շրջանի Խորհրդատվական Խորհրդի կողմից տրված ներքին պարզորոշ և գրավոր թույլտվության: Մոտ բարեկամները դրանք ամուսիններն են, երեխաները, բարեկամները, եղբայրները և քույրերը կամ ծնողները: (218, 222-223.2)

218. Շրջանային սուպերինտենդենտի բոլոր պաշտոնական գործողությունները ենթակա են ստուգման և շրջանային ասամբլեայի վերանայմանը, և կարող են բողոքարկվել: (510.3

218.1. Շրջանային սուպերինտենդենտը հովիվներ նշանակելու և իր գործունեության իրավասության տիրույթում ներառված հարցերում, պետք է ուշադրություն դարձնի լիազորված գլխավոր սուպերինտենդենտի, ինչպես նաև Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հանձնարարականներին:

Զ. Շրջանային Քարտուղար

219. Շրջանային քարտուղարը, ընտրվում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից 1-3 տարի ժամանակով մինչև այն պահը, երբ կընտրվի և վերջնականապես կհաստատվի նրա փոխարինողը: (225.22)

219.1. Եթե ինչ-որ պատճառով, շրջանային քարտուղարը դադարեցնում է իր գործունեությունը շրջանային ասամբլեաների սեսիաների ընդմիջման ժամանակ, ապա այդ դեպքում Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը ընտրում է նրա հետնորդին, որը առաջադրվել է շրջանային սուպերինտենդենտի կողմից: (211.7)

219.2. Շրջանային քարտուղարը, ի պաշտոնե շրջանային ասամբլեայի անդամ է: (201)

220. Շրջանային քարտուղարի պարտականությունները.

220.1. Մանրակրկիտ գրառել և պահպանել շրջանային ասամբլեայի արձանագրությունները:

220.2. Մանրակրկիտ գրառել և պահպանել շրջանի վիճակագրությունը:

220.3. Բոլոր վիճակագրական տվյալները, ստուգման համար տրամադրել գլխավոր քարտուղարին, մինչև այդ տվյալների հրապարակումը պաշտոնական արձանագրություններում: (326.6)

220.4. Պահպանել շրջանային ասամբլեայի բոլոր փաստաթղթերը և անհապաղ փոխանցել դրանք իր հետնորդին:

220.5. Պահպանել և գրանցել եկեղեցու վերջին 4 տարիների աշխատանքների լրիվ պաշտոնական մատյանը: (207.4)

220.6. Շրջանային ասամբլեայի տպված քաղվածքի բավականաչափ օրինակներ տրամադրել Ծառայության Համաշխարհային Կենտրոնին (Գլխավոր վարչություն), Նազովրեցու եկեղեցու գլխավոր ծառայողների մեջ բաժանելու համար:

220.7. Գլխավոր Ասամբլեային տրամադրել շրջանի աշխատանքների, ասամբլեայի վերջին 4 տարիների աշխատանքների արձանագրությունների լրիվ պաշտոնական մատյանը: Արձանագրությունը տրվում է Գլխավոր Ասամբլեային գրանցելու և պահպանելու համար: (205.26, 207.3-207.4)

220.8. Կատարել ցանկացած այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են պաշտոնական պարտականությունները կատարելու համար:

220.9. Փոխանցել բոլոր գործնական հարցերը, որոնք նա ստացել է տարվա ընթացքում, համապատասխան հանձնաժողովներին և մշտական խորհուրդներին քննարկման համար:

221. Շրջանային ասամբլեան ընտրում է այնքան թվով օգնականներ, որքան անհրաժեշտ կհամարի, որոնք կարող են օգնել շրջանային քարտուղարին:

Է. Շրջանային Գանձապահ

222. Շրջանային գանձապահը ընտրվում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, 1-3 տարի ժամանակով մինչև այն պահը, երբ կընտրվի և վերջնականապես կհաստատվի նրա փոխարինողը: (222.21)

222.1. Եթե ինչ-որ պատճառով, շրջանային գանձապահը դադարեցնում է իր գործունեությունը շրջանային ասամբլեաների սեսիաների ընդմիջման ժամանակ, ապա այդ դեպքում, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը ընտրում է նրա հետնորդին, որը առաջադրվել է շրջանային սուպերինտենդենտի կողմից: (211.8)

222.2. Շրջանային գանձապահը, ի պաշտոնե շրջանային ասամբլեայի անդամ է: (201)

223. Շրջանային գանձապահի պարտականությունները.

223.1. Իր շրջանից ստանալ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք կարող են նշանակված լինել Գլխավոր կամ շրջանային ասամբլեայի, կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, ինչպես նաև կախված Նազովրեցու Եկեղեցու կարիքներից, և բաժանել այդ միջոցները շրջանային ասամբլեայի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կանոններին համապատասխան:

223.2. Պահպանել բոլոր ստացված և ծախսված միջոցների ճշգրիտ գրառումները, և ներկայացնել ամենամյա հաշվետվություն շրջանային սուպերինտենդենտին, որպեսզի նա փոխանցի Շրջանային Խորհրդատվական Խորհրդին, ինչպես նաև տարեկան հաշվետվություն շրջանային ասամբլեային:

Շրջանային գանձապահը հաշվետու է շրջանային ասամբլեային:

Ը. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդ

224. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կազմված է ի աշտոնե շրջանային սուպերինտենդենտից, ոչ ավել 3 եկեղեցու ձեռնադրված ծառայողներից, և ոչ ավել 3 այցելուներից, որոնք գաղտնի քվեարկությամբ ընտրվել են շրջանային ասամբլեայի ժամանակ: Խորհրդի անդամները ընտրրվում են 1-4 տարի ժամանակով, մինչև շրջանային ասամբլեայի վերջնական արձակումը, որը սահմանափակում է նրանց ծառայության ժամանակը և երբ կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց փոխարինողները: Սակայն, նրանց ծառայության ժամկետը կարող է կարգավորվել, Խորհրդում որոշ պաշտոնների համար տարեկան անցկացվող ընտրություններով:

Այն դեպքում, եթե շրջանի եկեղեցիների անդամների թիվը գերազանցում է 5000-ը, շրջանը կարող է ընտրել լրացուցիչ մեկ ձեռնադրված ծառայող և մեկ այցելու եկեղեցու հաջորդ 2500 անդամի համար, կամ նույնը նաև մնացած 2500 անդամների մեծամասնության համար: (205.14).

224.1. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի թափուր տեղերը լրացվում են Խորհրդի մյուս անդամներով:

224.2. Շրջանային սուպերինտենդենտը, ի պաշտոնե նախագահում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդում:

224.3. Խորհուրդը իր անդամներից ընտրում է քարտուղարի, որը մանրամասնորեն գրառում է խորհրդի բոլոր գործողությունները և ճշտորեն փոխանցել այն իր հետևորդին:

224.4. Այցելուներից եղող Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամները, ի պաշտոնե պետք է լինեն շրջանային ասամբլեայի, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Կոնվենցիայի, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության Շրջանային Կոնվենցիայի, և Նազովրեցու Եկեղեցու Միջազգային

Երիտասարդական Ընկերակցության Շրջանային Կոնվենցիայի անդամ: (201, 224)

225. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի պարտականությունները.

225.1. Սահմանել վիճակագրական տարվա ամսաթվերի սկիզբը և վերջը: Այն կատարվում է համաձայն պարագրաֆ 114.1-ի դրույթների:

225.2. Ներկայացնել տեղեկատվություններ և խորհրդակցել շրջանային սուպերինտենդենտի հետ հարգելով ծառայողներին և շրջանային ասամբլեայի տեղական եկեղեցիներին: (115.6, 519)

225.3. Հոգևորականության ներկայացուցչի դեմ բողոքելու դեպքում, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կազմում է 3 և ավելի ձեռնադրված ծառայողներից և 2-ից ոչ պակաս այցելուներից կազմված հանձնաժողով: (606-606.3)

225.4. Հոգևորականության ներկայացուցչի դեմ մեղադրանք ներկայացնելու դեպքում, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը դատական նիստի համար ընտրում է 2 անդամների: (606.5-606.6.)

225.5. Ամեն տարի, վերանայելով և զարգացնելով գրավոր սպառիչ պլան, որը ներդաշնակ է Ուղեցույցի հրահանգներին, որը առաջնորդում է ապահովելու ժամանակային, կարեկից և տեղեկացված պատասխան այն հոգևոր անդամներին, ովքեր ունեցել են վատ վարքագիծ, նաև նրանց ընտանիքներին և համայնքին, որում նրանք ընդգրկված են: (538.20, 539-539.13)

225.6. Նկատի ունենալով քաղաքացիական օրենսդրությունը և շրջանային ասամբլեայի համապատասխան որոշումներով, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է գրանցվել, որպես պաշտոնական ընկերակցություն: Այդ դեպքում, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը իրավունք ունի իր հայացողությամբ տնօրինելու ցանկացած գույք, մասնավորապես՝ ձեռք բերել, տնօրինել, վաճառել, փոխանակել, գրավ դնել, տնօրինել լիազորագրով, հիփոթեքի համար գրավ դնել, վարձով տալ, փոխանցել գույքը կամ ցանկացած գույքի օգտագործման իրավունքը, շարժական և անշարժ, գրանցված կազմակերպության օգտին: Շրջանային Խորհրդատվական Խորհրդի բոլոր փաստաթղթերը (գրանցված կամ չգրանցված), անշարժ գույքի հանձման հավաստիացող փաստաթղթերը, հիփոթեքները, հիփոթեքի մարման փաստաթղթերը, համաձայնությունները և պայմանագրերը և այլ պաշտոնական եկեղեցական թղթերը, պետք է ձևավորվեն և ստորագրվեն շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի քարտուղարը կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից լիազորված այլ անձինք: (206)

225.7. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը պետք է ապահովի միավորման դրույթները, կանոնադրությունները, կամ համեմատական օրինական թղթաբանությունը, որ կազմակերպությունը ղեկավարվում է Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի դրույթներին համապատասխան: Դրանք պետք է ներառեն իրավասու գլխավոր սուպերինտենդենտի կողմից հաստատված դրույթները, որոնք հաստատում են, որ լուծարման, կամ Նազովրեցու եկեղեցուց հեռացման փորձի դեպքում Եկեղեցին չի կորցնի իր ֆինանսական ակտիվները: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի և իրավասու գլխավոր սուպերինտենդենտի կողմից հաստատվելուց անմիջապես հետո, առաջարկված միավորման դրույթները պետք է անմիջապես ուղարկվեն գլխավոր քարտուղարի գրասենյակ, դրանք վերանայելու և լրացնելու համար, համապատասխան պարագրաֆներ 102.4, (225.6) դրույթների:

225.8. Եթե քաղաքացիական օրենսդրությունը չի թույլատրում պաշտոնապես գրանցել նման միավորումը, շրջանային ասամբլեան կարող է ընտրել Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը որպես վստահելի անձ, որպեսզի տնօրինի ցանկացած գույք իր հայացողությամբ, մասնավորապես՝ ձեռք բերել, տնօրինել, վաճառել, փոխանակել, գրավ դնել, տնօրինել լիազորագրով, հիփոթեքի համար գրավ դնել, վարձով տալ, փոխանցել գույքը կամ ցանկացած

գույքի օգտագործման իրավունքը, շարժական և անշարժ, անհրաժեշտության դեպքում կամ եթե այն նպաստում է շրջանում աշխատանքների շարունակությանը: (102.6, 106.2, 225.6)

225.9. Այնտեղ, որտեղ տեղական եկեղեցիները կարող են պաշտոնապես գրանցվել, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը ներկայացնում է պաշտոնական գրանցման նմուշ: Այդ նմուշը մշակվում է իրավաբանի միջոցով, և պետք է համապատասխանի շրջանի իրավաբանական նորմերին: Այն պետք է ընդգրկի պարագրաֆներ 102-102.5 –ում թվարկված դրույթները:

225.10. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը օգնում է շրջանային սուպերինտենդենտին ղեկավարելու բոլոր բաժինները, խորհրդատվությամբ և շրջանի հանձնաժողովների միջոցով:

225.11. Որպեսզի պահպանվի շրջանի առողջ կառավարումը և շրջանային սուպերինտենդենտի ճիշտ հոգևոր կյանքը, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը խորհրդակցելով գլխավոր սուպերինտենդենտի հետ, պետք է շրջանային սուպերինտենդենտին տրամադրի «ստեղծագործական» արձակուրդ, շրջանում յոթը տարի ծառայելուց հետո կամ ընթացքում: «Ստեղծագործական» արձակուրդի ժամանակ, շրջանային սուպերինտենդենտը ստանում է աշխատավարձ և օգտվում է բոլոր արտոնություններից: Շրջանային սուպերինտենդենտը, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ պետք է առաջարկություն մշակի այդպիսի «ստեղծագործական» արձակուրդի համար ներառյալ նրա ժամկետը, զարգացման անձնական ծրագիրը, նաև ծրագիր այն բանի մասին, թե ինչպես պետք է այդ արձակուրդի ընթացքում կատարվեն կարևոր պարտականությունները:

225.12. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը ներկայացնում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի քննարկմանը, շրջանային կենտրոնի կազմակերպման մասին: Այդ ծրագրերը պահանջում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի գրավոր հավանությունը: (319)

225.13. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը երաշխավորում է հովվի պաշտոնը գրավող լիցենզավորված ծառայողի լիցենզիայի ստանալը կամ թարմացնելը: (532.5)

225.14. Հաստատել կամ մերժել եկեղեցիների հարցումները կապված Քրիստոնեական Ցերեկային Մանկապարտեզների/Դպրոցների կազմակերպման հետ: Շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհուրդի հայեցողությամբ, կարող է կազմավորվել Քրիստոնեական Ցերեկային Մանկապարտեզների/Դպրոցների աշխատանքների հետ կապված շրջանային հանձնաժողով: Այդ հանձնաժողովը Շրջանային Խորհրդատվական Խորհրդին հանձնարարում է կանոններ, գործողության ձևեր և վարդապետություններ, որոնք օգնում են Քրիստոնեական Ցերեկային Մանկապարտեզների/Դպրոցների կազմակերպման գործում, ինչպես նաև աջակցում և ստուգում է այդպիսի մանկապարտեզների և դպրոցների գործունեությունը: (151, 211.14, 517)

225.15. Հաստատել Գթասրտության Ծառայության Կենտրոնների (ԳԾԿ) տարեկան աշխատանքը համապատասխան ուղեցույցի, որը մշակվել է տարածաշրջանում: Միայն շրջանի կողմից հաստատված ԳԾԿ-ները կորակավորվեն որպես բարի նպատակների համար ներդրված «հատուկ հաստատված առաքելություններ», համապատասխան պարագրաֆ 153.1-ի կետերի:

225.16. Հաստատել կամ մերժել տեղական եկեղեցու հարցումը, կապված մարդու թեկնածության հետ, որը ձեռնադրված երեց է կամ լիցենզավորված ծառայող և այդ տեղական եկեղեցու անդամ է, կամ ծառայում է որպես վճարվող կամ չվճարվող օգնական և նա կանչված է լինելու այդ տեղական եկեղեցում, որպես հովիվ: Որոշումը պետք է կայացվի խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ: (115, 129.2, 159.8, 211.10)

225.17. Հաստատել կամ մերժել հոգևորականության անդամի խնդրանքը կանոնավոր կերպով անցկացնելու անկախ եկեղեցական գործողություններ, որոնք չեն գտնվում Նազովրեցու Եկեղեցու ղեկավարության ներքո, կամ շարունակել անկախ առաքելություններ և չարտոնված եկեղեցական գործողություններ, կամ կապ ունենալ անկախ եկեղեցու կամ այլ կրոնական խմբերի կամ հարանվանությունների գործող կազմի հետ: Նման խնդրանքի հաստատումը պետք է իրականացնի տարեկան: (528,538.13)

225.18. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը վարձում և աշխատանքից հեռացնում է վճարովի աշխատակիցների: (245-245.1)

225.19. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը շրջանային ասամբլեայի ժողովների ընդմիջումների ժամանակ, խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, կատարում է ֆինանսական հանձնաժողովի պարտականությունները և անհրաժեշտության դեպքում լիազորություններ ունի կարգավորելու ընթացիք ծախսերի բյուջեն: (223.1)

225.20. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը պատասխանատու է շրջանի շարժական և անշարժ սեփականության պահպանության համար, ներառյալ այդ սեփականության մեջ ներդրած ողջ կապիտալը և պաշտպանում է դրա օգտագործումը անձնական և ընդհանուր նպատակներով, որը Նազովրեցու Եկեղեցու հետ կապ չունի: (102.4, 106.5, 206)

225.21. Շրջանային գանձապահի տարեկան ընտրությունը, որպեսզի ծառայի մեկից երեք տարի, մինչև չի ընտրվի և հաստատվի նրա հետնորդը: (222)

225.22. Շրջանային քարտուղարի ընտրությունը, մեկից երեք տարի ժամկետով, մինչև այն պահը, երբ կընտրվի և վերջնականապես կհաստավի նրա հաջորդը: (219)

225.23. Հաստատել տեղական եկեղեցու ելքը կամ ելքի ընթացքը Նազովրեցու Եկեղեցուց, սեփականության փոխանցման և անվան հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով, համաձայն պ. 106.2:

225.24. Եթե պահանջվում է համապատասխան պ. 205.25-ի, ընտրել շրջանային աուդիտային հանձնաժողով, որպեսզի աշխատեն մինչև հաջորդ շրջանային ասամբլեա: (205.25)

225.25. Շրջանային ասամբլեային ներկայացնել տարեկան հաշվետվություն խորհրդի աշխատանքների հետ կապված, ներառյալ գումմարված ժողովների թիվը:

226. Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը թույլատրում է անդամության փոխանցումը այլ եկեղեցական շրջաններ, հոգևորականության անդամներին, քրիստոնեական կրթության ոլորտի ծառայողներին , սարկավագուհիներին , եթե նրանք ցանկանում են տեղափոխվել այլ շրջան մինչև շրջանային ասամբլեայի գումարումը, որին նրանք անդամակցում են այդ պահին: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը ընդունելով նոր անդամ, նրան տալիս է շրջանի անդամության բոլոր արտոնություններն ու իրավունքները: Շրջանային ասամբլեան, ով ընդունում է Շրջանային Խորհրդատվական Խորհուրդի կողմից ուղարկված նոր անդամին, վերջնականապես վավերացնում է ընդունումը, համաձայն Շրջանայի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողների Խորհրդի հավանությամբ համապատասխան հավանության: (205.8-205.9, 231.9-231.10, 508, 511, 537-537.2)

226.1. Եթե շրջանային ասամբլեայի անդամը ուզում է միանալ մեկ այլ հարանվանության, ապա Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է նրան տալ երաշխավորության նամակ: (815)

227. Շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է դադարեցնել լիցենզավորված սարկավագուհու գործունեությունը, եթե դա անհրաժեշտ է եկեղեցու բարեհաջող ծառայության համար: Այն կարող է տեղի ունենալ տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդում, սարկավագուհու գործը անկողմնակալ լսելուց և քննարկելուց հետո:

228. Եթե ձեռնադրված կամ լիցենզավորված ծառայողը, ով ներկայացնում է այլ ավետարանական հարանվանության ծառայողի մանդատ և շրջանային ասամբլեայի ժողովների ընդմիջումների ժամանակ ցանկանում է միանալ Նազովրեցու Եկեղեցուն, նրա մանդատը քննարկվում է Շրջանային Խորհրդատվական Խորհիդի կողմից: Միայն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ նա կարող է ընդունվել, որպես տեղական եկեղեցու անդամ: (520, 532.2, 535)

Թ. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդ

229. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը, պետք է ունենա ոչ պակաս, քան 5 ձեռնադրված ծառայող: Խորհրդի անդամներից երկուսը, պետք է լինեն շրջանային սուպերինտենդենտը և շրջանային քարտուղարը եթե նա ձեռնադրված է: Շրջանային քարտուղարը, եկեղեցու հասարակ անդամ է և խորհրդում ծառայում է որպես չքվեարկող անդամ: Խորհրդի անդամները աշխատում են 4 տարի ժամանակով, մինչև նրանց հետնորդների ընտրությունը և վերջնական հաստատումը: Սակայն, նրանց ծառայության ժամկետը կարող է կարգավորվել Խորհրդում,(205.15) որոշ պաշտոնների համար անցկացվող տարեկան ընտրություններով:

229.1. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդում, շրջանային ասամբլեայի ժողովների ընդմիջման ժամանակ թափուր տեղի առաջացման դեպքում, շրջանային սուպերինտենդենտի նշանակմամբ թափուրը կարող է լրացվել շրջանի ծառայողներից: (215)

230. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի ընտրությունից հետո, շրջանային սուպերինտենդենտը կազմակերպչական գործունեության համար, գումարում է խորհուրդ:

230.1. Շրջանային սուպերինտենդենտը ի պաշտոնե խորհրդի նախագահն է, սակայն նրա խնդրանքով, խորհուրդը կարող է ընտրել նախագահի պարտականությունների ժամանակավոր կատարողի, որը կծառայի մինչև հաջորդ շրջանային ասամբլեայի փակումը: (216)

230.2. Խորհուրդը իր անդամներից ընտրում է մշտական քարտուղարի, ով պետք է ներկայացնի գրառումների համապատասխան համակարգ: Գրառումների հետ կապված ծախսերը փակվում են շրջանային ասամբլեայի կողմից և հանդիսանում են շրջանի սեփականությունը: Քարտուղարը պետք է մանրակրկիթ գրառի խորհրդի բոլոր գործունեությունը և դրանք բարեխղճորեն պահպանի ուրիշ գրառումների հետ միասին, որոնք անհրաժեշտ են խորհրդի աշխատանքներին: Այդ գրառումները խորհրդի քարտուղարը անմիջապես փոխանցում է իր հաջորդին:

231. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի պարտականությունները հետևյալն են.

231.1. Ուշադրությամբ քննարկել թեկնածությունները, որպեսզի պատշաճ կերպով ներկայացվեն շրջանային ասամբլեային, որպեսզի նրանցից ընտրեն ձեռնադրված երեցներ, սարկավագներ և լիցենզավորված ծառայողներ:

231.2. Ուշադրությամբ քննարկել բոլոր նրանց թեկնածությունները, ովքեր ցանկանում են ստանալ եկեղեցու որոշակի ծառայությունների շրջաններում գործելու իրավունքի վկայագիր: Սրան են նաև վերաբերվում եկեղեցու ծառայողների և այցելուների բոլոր թեկնածուները, ովքեր ձգտում են ծառայության հնարավորություն ունենալ տեղական եկեղեցու սահմաններից դուրս, ինչպես նաև *Ուղեցույցում* համաձայնեցված այլ գործունեության տեսակներից:

231.3. Ուշադրությամբ քննարկել, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրել

յուրաքանչյուր թեկնածուի անձնական փորձը, նրա փրկության անձնական փորձը, Սուրբ Հոգու մկրտության միջոցով լիակատար սրբագործության անձնական փորձը, Աստվածաշնչի ուսմունքների մասին գիտելիքները, լիակատար համաձայնություն վարդապետությունների, Քրիստոնեական Վարքագծի և Քրիստոնեական Բնավորության Պատվիրանների, եկեղեցու կառավարման ձևի մասին, Աստծո օրհնության առկայությունը նրա կյանքում հոգևոր պարգևների, ինտելեկտուալ մակարդակի, բարոյական, քրիստոնյային հարիր հոգևոր որակները: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել թեկնածուի ունակություններին և նրա համապատասխանությունը տվյալ ծառայությանը, որում նա իրեն կանչված է զգում:

231.4. Մանրակրկիթ ուսումնասիրել ամեն թեկնածուի վարքագիծը, պարզելու, արդյո՞ք թեկնածուն չի զբաղվում կամ հակում չու՞նի գործողությունների այնպիսի մոդելի, որոնք եթե չդադարեցնի անհամատեղելի կլինեն այն ծառայության հետ, որին նա ցանկանում է նշանակված լինել:

231.5. Հովվի ժամանակավոր պարտականությունները շարունակելու համար քննարկելու և գնահատելու տեղական եկեղեցու ցանկացած ծառայողի գործունեություն, եթե նա նշանակվել է հովվի ժամանակավոր պարտականությունները կատարելու համար, և եթե նա շրջանային ասամբլեայի փակումից հետո շարունակելու է իր գործունեությունը: (531.6)

231.6. Ուսումնասիրել և վերանայել այն պատճառները, որոնք հանգեցրել են նրան, որ ձեռնադրված ծառայողը 2 վերջին տարիների ընթացքում, շրջանային ասամբլեային չի ներկայացրել իր գործունեության հաշվետվությունը: Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը հանձնարարում է շրջանային ասամբլեային, ձեռնադրված երեցների և սարկավագների շարունակական ցուցակներում, ծառայողի անվան հետագա հիշեցումների մասին:

231.7. Քննել ձեռնադրված ծառայողին վերաբերվող հաշվետվությունները, որոնք մատնանշում են այն մասին, որ ծառայողը դարձել է այլ եկեղեցական հարանվանության կամ խմբի անդամ, ինչպես նաև առանց պատշաճ թույլտվություն ստանալու նրա մասնակցությունը անկախ գործունեության մեջ: Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը հանձնարարում է շրջանային ասամբլեային պահպանելու այդ ծառայողի անունը Ծառայողների ցուցակում: (112, 538.13)

231.8. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը հանձնարարում է շրջանային ասամբլեային, հայցող ծառայողին տրամադրել թոշակառուի կարգավիճակ և բոլոր նրանց, ովքեր խորհրդի կարծիքով անաշխատունակ են (205.27, 536) կամ պայմանավորված ծերությամբ, ի վիճակի չէ շարունակել ծառայությունը:

231.9. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը հանձնարարում է շրջանային ասամբլեային, հոգևորական ծառայողներին տեղափոխել այլ եկեղեցական շրջաններ նաև այն անձանց, ովքեր շարունակում են իրենց աշխատանքը նրա կողմից նշանակված շրջաններում ներառյալ ժամանակավոր տեղափոխությունները, եթե դրա համար կա Շրջանային Խորհրդատվական Խորհրդի որոշումը: (205.9, 537-537.2)

231.10. Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը հանձնարարում է շրջանային ասամբլեային ընդունել այլ շրջաններից տեղափոխված անձանց, որոնք ունեն ծառայողի մանդատներ, հոգևորականության ներկայացուցիչներից նաև այն անձանց, ովքեր շարունակում են իրենց աշխատանքը նրա կողմից նշանակված շրջաններում, ներառյալ ժամանակավոր տեղափոխությունները, եթե դրա համար կա Շրջանային Խորհրդատվական Խորհրդի որոշումը: (205.8, 537-537.2)

Ժ. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդ

232. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհորդը կազմված է 5 կամ ավելի ձեռնադրված ծառայողներից, որոնք ընտրվել են շրջանային ասամբլեայի ժամանակ 4 տարի ժամանակով, մինչև ընտրվեն և վերջնականապես հաստատվեն նրանց փոխարինողները: Սակայն նրանց ծառայության ժամկետը կարող է կարգավորվել Խորհրդում որոշ պաշտոնների համար անցկացվող տարեկան ընտրություններով: (205.16)

232.1. Շրջանային ասամբլեայի ժողովների ընդմիջման ժամանակ թափուր տեղի առաջացման դեպքում, շրջանային սուպերինտենդենտի նշանակամամբ, թափուրը կարող է լրացվել շրջանի ծառայողներից: (215)

233. Շրջանային ասամբլեայի փակումից առաջ, որի ժամանակ ընտրվել են խորհրդի անդամները, շրջանային սուպերինտենդենտը կամ շրջանային քարտուղարը ժողով է անցկացնում խորհրդի բոլոր անդամների հետ, կազմակերպելու և բաշխելու հետևյալ պարտականությունները.

233.1. Իր կազմի անդամներից խորհուրդը ընտրում է խորհրդի քարտուղար: Խորհուրդը ընտրում է նաև քարտուղար, ով պետք լինի ձեռնադրված ծառայող և խորհրդի մյուս անդամների հետ խորհուրդը քննարկում է ուսանողների թեկնածությունները և հետևել ձեռնադրության համար, ծառայողների կրթական ծրագրում նրանց առաջխաղացմանը: Խորհուրդը պարտավոր է պահպանել ուսանողների բոլոր տվյալները: (233.5, 529.1-529.3)

233.2. Խորհրդի նախագահը նշանակում է խորհրդի մնացած անդամներին, որոնք պատասխանատու են ծառայողների ծրագրում ընդգրկված թեկնածուների համար: Այդ հանձնարարությունը ուժի մեջ է այնքան ժամանակ, որքան շարունակվում է խորհրդի անդամի գործունեությունը և մինչ թեկնածուն ակտիվ մասնակցում է կրթական ծրագրում, միչև որ նրանք չգան մեկ այլ համաձայնության:

233.3. Նախագահը պետք է այցելի խորհրդի բոլոր ժողովներին, եթե դրան չեն խոչընդոտում անկանխատեսելի հանգամանքներ, և նա պետք է հետևի խորհրդի աշխատանքներին ամեն տարի: Քարտուղարի հարկադիր բացակայության ժամանակ, նրա պարտականությունները ժամանակավորապես կատարում է քարտուղարը:

233.4. Խորհրդի քարտուղարը ծառայողների կրթության մասին պետք է ներկայացնի գրառումների համապատասխան համակարգ: Գրառումների հետ կապված ծախսերը, փակվում են շրջանային ասամբլեայի կողմից և հանդիսանում են շրջանի սեփականությունը: Նրանք օգտագործվում են *Ձեռնադրության Տեղեկատուի* հրահանգներին համապատասխան (Sourcebook on Ordination):

233.5. Խորհրդի մնացած անդամները պետք է հավատարմորեն մասնակցեն խորհրդի ժողովներին: Նրանց անհրաժեշտ է բոլոր թեկնածուների կրթությունը ղեկավարել հետևյալ կերպ: (1) խրախուսել, ուղղել համապատասխան խորհրդով; (2) սեփական օրինակով, զրուցելով, թեկնածուի մեջ զարգացնել բարոյական գիտակցությունը, հոգևորականի էթիկան և հատուկ ուշադրություն դարձնել այն հարցին, թե ինչպես պետք է հոգևորականը խուսափի անհարկի սեռական հարաբերություններից: (233.1)

233.6. Համագործակցելով շրջանային սուպերինտենդենտի և Հոգևորության Զարգացման Բաժնի հետ, Շրջանային Խորհուրդը թեկնածուներին, ովքեր կրթություն են ստանում քոլեջներում/համալսարաններում կամ Նազովրեցու Եկեղեցիների սեմինարիաներում, անհրաժեշտ կրթական դասընթացով խրախուսում, օգնում և ուղղորդում են:

234. Խորհուրդը կարող է կազմակերպել դասընթացներ կամ սեմինարներ, լիցենզավորված

ծառայողների կամ մնացած թեկնածուների համար, որոնք ձգտում են ուսումնասիրել տարբեր հաստատված դասընթացներ: Ֆոնդերի առկայության դեպքում, շրջանում կարող են կազմակերպվել Կենտրոնական գրադարաններ, որտեղից անհրաժեշտության դեպքում կարող են վերցվել համապատասխան գրականություն:

234.1. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհրդի նախագահը և քարտուղարը լիազորություն ունեն ուսանողին ցուցակագրել ծառայողների կրթության ծրագրին, խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ: (233.1-233.2, 529.1-529.3)

234.2. Խորհուրդը կատարում է իր պարտականությունները համապատասխան §*Ձեռնադրության Տեղեկատուի*:

234.3. Թեկնածուին վերաբերվող բոլոր տեղեկատվությունը խորհուրդը փոխանցում է Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդին կամ Շրջանային Ծառայողների Խորհրդին: Այդ տեղեկատվությունը նախապես են տրամադրվում, որպեսզի Մանդատային Խորհուրդը կարողանա մշակի այդ տվյալները մինչև շրջանային ասամբլեայի սկիզբը: Տեղեկատվությունը ընդգրկում է տվյալներ այն մասին, թե ուսանողը կրթական ի՞նչ փուլում է գտնվում, կամ նո՞ր է սկսում, տարբեր դիսցիպլինաներից նրա առաջընթացի մասին, ինչպես նաև այս կամ այն առարկայի ավարտելու մասին: Այդ տվյալները պետք է համապատասխանեն Հոգևորության Զարգացման Բաժնի հաստատված կանոններին, Ծառայողների Կրթության Շրջանային Խորհրդի համապատասխան դասընթացի միջոցով:

234.4. Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդը համագործակցելով տարածաշրջանային քոլեջի/համալսարանի և Հոգևորության Զարգացման Բաժնի հաստատված կանոններին, Ծառայողների Կրթության Շրջանային Խորհրդի համապատասխան, դասընթացի միջոցով և շրջանային սուպերինտենդենտի ընդհանուր ղեկավարության ներքո, կրում է խրախուսելու պարտականություն, շրջանի ձեռնադրված և այլ ծառայողներին, շարունակելու հետագա կրթությունը, որը պետք է ընդգրկի բարոյականության/էթիկայի տեսանկյունները և հատուկ ուշադրություն դարձնել այն հարցին, թե ինչպես պետք է հոգևորականը խուսափի անհարկի սեռական հարաբերություններից:

Ի. Ավետարանչության Շրջանային Խորհուրդ կամ Ավետարանչության Շրջանային Տնօրեն

235. Շրջանային ասամբլեան ընտրում է Ավետարանչության Շրջանային Խորհուրդ կամ ավետարանչության շրջանային տնօրենի: Նրանք, ովքեր շրջանային ասամբլեայի ժամանակ ընտրվել են այդ պաշտոնի համար, ծառայում են մինչև հաջորդ ասամբլեայի վերջնական արձակումը, և նրանց հետնորդների ընտրվելը և վերջնական հաստավելը: (205.19)

235.1. Ավետարանչության Շրջանային Խորհուրդ կամ ավետարանչության շրջանային տնօրենը, համագործակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, պետք է զարգացնեն ավետարանչության ծառայության անհրաժեշտության հասկացողությունը սրբության մասին ուսմունքը տարածելու գործում: Այդ նպատակին հասնելու համար, խորհուրդը հնարավորություն է տալիս կրթության համար անցկացնել համագումարներ և կոնֆերանսներ, ընդգծում է շրջանում եկեղեցիների վերածննդի անհրաժեշտությունը Աստծուց կանչված ավետարանիչների օգնությամբ, և օգտագործում է ցանկացած ուրիշ հնարավորությունները ընդգրկելու շրջանի եկեղեցիներին կատարելու Հիսուս Քրիստոսի կողմից տրված Մեծ Պատվիրանի կատարմանը, որը Քրիստոսի Մարմնի գլխավոր գործունեությունն է:

Լ. Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդ

236. Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդը պետք է կազմված լինի շրջանային սուպերինտենդենտի պարտականությունները կատարողից ոչ պակաս, 2 եկեղեցու ծառայողից և 2 այցելուից: Խորհրդի անդամները ընտրվում են շրջանային ասամբլեայի ժամանակ 4 տարի ժամանակով, կամ մինչ կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց փոխարինողները: Շրջանային ասամբլեայի հավանությամբ, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է կատարել Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհրդի գործառույթները:

237. Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհրդի պարտականությունները:

237.1. Աջակցել տեղական եկեղեցիների և այլ շենքերի շինարարությանը, որոնք անհրաժեշտ են շրջանի սահմաններում եկեղեցու գործունեության համար: Դա կատարվում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ համագործակցելով:

234.2. Հաստատել եկեղեցու անվանումը փաստաթղթերում, որոնք վկայում են տեղական եկեղեցու սեփականության իրավունքների մասին:

237.3. Քննարկել տեղական եկեղեցու կողմից ներկայացված հարցումը անշարժ գույք ձեռք բերելու համար, կառուցելու շենքեր կամ հովվի համար բնակարան: Կատարել խորհրդատվություն կատարված առաջարկների վերաբերյալ: (103-104)

237.4. Շրջանային սուպերինտենդենտի հետ միասին հաստատել կամ մերժել, եկեղեցիների կողմից ներկայացված ծրագրերը, եկեղեցական շենքեր կառուցելու, պարտքերի մասին, որոնք առաջացել են անշարժ գույք ձեռք բերելիս կամ կառուցելիս: Սովորաբար Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդը հաստատում է պարտքի ավելացման խնդրանքները, ուշադրություն դարձնելով հետևյալ հանգամանքներին.

1. Պարտքը ավելացնելու խնդրանքով, դիմող տեղական եկեղեցին մինչ խնդրանքի ներկայացնելը, լրիվ վճարել է վերջին 2 տարվա ֆինանսական փոխանցումները:
2. Մինչ խնդրանքի ներկայացնելը, պարտքի գումարը չի գերազանցում 3 տարվա հավաքված բոլոր գումարների միջին մեծությունը:
3. Շենքի վերականգնման կամ կառուցման պլանավորման դետալները, պետք է հաստատվեն Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդի կողմից:
4. Պարտքի մեծությունը և վճարման ժամանակները չեն վտանգի եկեղեցու հոգևոր կյանքին:

Եկեղեցական Անշարժ Գույքի Շրջանային Խորհուրդը կարող է բավարարել խնդրանքը, որը չի բավարարում վերը նշված պայմաններին, միայն շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի համաձայնությամբ: (103-104)

237.5. Շրջանային ասամբլեայի կողմից այլ պարտականությունների կատարում, որոնք վերաբերվում են տեղական եկեղեցու անշարժ գույքին:

Խ. Շրջանային Ասամբլեայի Ֆինանսական Հանձնաժողով:

238. Շրջանային Ասամբլեայի Ֆինանսական Հանձնաժողովի պարտականություններն են.

238.1. Հավաքվել մինչ շրջանային ասամբլեայի սկիզբը և շրջանային ասամբլեայի համար հանձնարարականներ մշակել շրջանի ֆինասական պարտականութ_ յունների վերաբերյալ, և դրանց բաշխումը առանձին տեղական եկեղեցիներին: (32.5)

238.2. Շրջանային ասամբլեայի այլ հանձնարարականների կատարում, որոնք վերաբերվում են շրջանի ֆինանսական հարցերին: (205.21)

238.3. Շրջանային հաշվետվության մեջ հրատարակել բոլոր ընդունված բյուջեների

բազաների որոշման համար օգտագործված մեթոդները և տոկոսները:

Ծ. Շրջանային Խորհրդատվական Հանձնաժողով

239. Շրջանային Խորհրդատվական Հանձնաժողովը (ՇՀՁ) պետք է բաղկացած լինի Շրջանային Խորհրդատվական Խորհրդից, Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Խորհրդի նախագահից, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի շրջանային բաժնի տնօրենից, Երիտասարդության Միջազգային Ծառայության բաժնի տնօրենից, շրջանի քարտուղարից և գանձապահից: Այդ հանձնաժողովը հանդիպում է անհրաժեշտության դեպքում: Քարտուղարը պետք է լինի շրջանային սուպերինտենդենտը կամ լիազորված գլխավոր սուպերինտենդենտը կամ նրա ներկայացուցիչը: (209)

Կ. Շրջանային Կապելլան

240. Շրջանային սուպերինտենդենտը կարող է ծառայողին նշանակել շրջանային կապելլանի պաշտոնում: Համագործակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, նա ձգտում է ճանապարհներ որոնել տարածելու սրբության վարդապետությունը հատուկ ծառայությունների անցկացման միջոցով: Կապելլանը աջակցում և օգնում է ավետարանչական ծառայությանը, օգտագործելով տարբեր հնարավորություններ, որոնք առաջանում են արտադրողական, համալսարանական, դպրոցական, քոլեջների ռազմական ոլորտներում: Կապելանը հատուկ ուշադրություն է դարձնում Նազովրեցու Եկեղեցու այն այցելուներին, որոնք գտնվում են ռազմական ծառայության մեջ, ինչպես նաև ռազմական բազաներում գտնվող զինծառայողների վրա: Նա օգնում է ռազմական բազաների մոտակայքերում գտնվող եկեղեցիների հովիվներին, ովքեր ծառայում և Քրիստոսի մասին վկայում են զինվորականներին և նրանց ընտանիքներին: Ռազմական ծառայության ընթացքում, նրանց հնարավորություն են տալիս մասնակցելու Նազովրեցու Եկեղեցու ծառայության մեջ, երբ նրանք ծառայում են իրենց երկրին: (211.9)

Հ. Կիրկնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհուրդ

241. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհուրդը, (ԿԴԱՄԾ) բաղկացած է շրջանային սուպերինտենդենտից, Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդության Միջազգային Ծառայության բաժնի տնօրենից, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի շրջանային բաժնի տնօրենից, ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդից, որոնք կազմում են Գործադիր Կոմիտե: Խորհրդի մեջ մտնում են երեքից ոչ պակաս լրացուցիչ անդամներ, որոնք ընտրվում են շրջանային ասամբլեայի կամ Կիրակնօրյա Դպրոցների Շրջանային Ծառայողների Կոնվենցիաների կողմից, 1-3 տարի կարգավորվող ժամանակահատվածով, մինչ կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց փոխարինողները: ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի նախնական հիմնադրման ժամանակ, այդ 3 լրացուցիչ թեկնածուները ընտրվում են 6 թեկնածուներից: Մեկ թեկնածու, ընտրվում է 3 տարի ժամանակով, մյուսը՝ 2 տարով և երրորդը մեկ տարով: Սակայն, եթե շրջանի եկեղեցիների անդամների քանակը գերազանցում է 5000-ը, առաջադրվող թեկնածուների քանակը և Խորհուրդ ընտրվողների քանակը կարող է կրկնապատկվել: Այս դեպքում, Խորհրդի 10 անդմներից 4-ը պետք է լինեն այցելուներից: ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի թափուր տեղերի դեպքում, որոնք առաջանում են շրջանային ասամբլեայի ժողովների ընդմիջման ժամանակ, կարող են լրացվել շրջանային սուպերինտենդենտի համապատասխան նշանակմամբ: (215)

Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի

պարտականությունները.

241.1. Կազմակերպչական գործունեության համար, անցկացնել Խորհրդի նիստը՝ նրա ընտրությունից հետո, առաջին շաբաթում: Այդ ժողովի ժամանակ ընտրվում է քարտողար, գանձապահ, երեխաների և մեծահասակների հետ աշխատանքի շրջանային առաջնորդներ, ինչպես նաև անձինք, ովքեր ներգրավված են այցելուների կրթության գործում: Բոլոր թվարկածները, ի պաշտոնե դառնում են Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի անդամ: Համապատասխան անհրաժեշտության դեպքում, Խորհուրդը կարող է իր կազմը ավելացնելու համար ընտրել այլ շրջանային առաջնորդների: Նրանց թեկնածությունները առաջադրվում է Խորհրդի Գործադիր Կոմիտեի կողմից:

241.2. Շրջանում ղեկավարել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության աշխատանքները:

241.3. Ընտրել երեխաների հետ աշխատանքի Խորհուրդ: Այդ Խորհրդի նախագահը, երեխաների հետ աշխատանքի շրջանային ղեկավարն է: Խորհրդի անդամներն են երեխաների հետ աշխատանքների շրջանային ղեկավարները, ինչպես մանկական եկեղեցու, տղաների և աղջիկների համար անցկացվող ճամբարների, կիրակնօրյա դպրոցի ավագ խմբի հանդիպումների, արձակուրդների ժամանակ Աստվածաշնչի ուսումնասիրություն, Աստվածաշնչյան վիկտորինայի, մսուր խմբերի և անհրաժեշտության դեպքում այլ առաջնորդներ:

Հղում: Երեխաների հետ աշխատանքի Խորհրդի մասին լրացուցիչ տեղեկությունը գտնվում է Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության աշխատանքների ձեռնարկում:

241.4. Ընտրել մեծահասակների հետ աշխատանքի Խորհուրդ: Այդ Խորհրդի նախագահը, մեծահասակների հետ աշխատանքի շրջանային ղեկավարն է: Խորհրդի անդամներն են մեծահասակների հետ աշխատանքի շրջանային ղեկավարները, որոնք պատասխանատու են հետևյալ ոլորտների համար՝ ընտանիք և ամուսնական կյանք, տարեցների համար ծառայություն, չամուսնացածների համար ծառայություն, եկեղեցու այցելուների համատեղ հանգստի կազմակերպում, ծառայություն տղամարդկանց, կանաց համար, և անհրաժեշտության դեպքում այլ առաջնորդներ:

241.5. Կազմակերպել Կիրակնօրյա Դպրոցների և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Ծառայողների Կոնվենցիաներ: (241)

241.6. Խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, որոշել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի անդամների և նախագահի ընտրության տեղը: Ընտրությունները կարող են անցկացվել շրջանային ասամբլեայի ժամանակ, կամ Կիրակնօրյա Դպրոցների Շրջանային Ծառայողների Կոնվենցիայի ժամանակ:

241.7. Հրավիրել Կիրակնօրյա Դպրոցների Շրջանային Ծառայողների Կոնվենցիաներին, բոլոր Կիրակնօրյա Դպրոցների ղեկավարներին, Նազովրեցու Եկեղեցու Միջազգայի Երիտասարդական Ընկերակցության բոլոր տնօրեններին և տարիքային խմբերի առաջնորդներին:

241.8. Շրջանի բաժանումը գոտիների և նշանակել գոտիների նախագահներ, որոնք օգնում են Խորհրդի աշխատանքներին, շրջանում տարածելու “Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության” ծառայությունը:

241.9. Եկեղեցու այցելուների համար, շրջանում կամ գոտիում, պլանավորել կամ անցկացնել դասընթացներ:

241.10. Օգնել Նազովրեցու Եկեղեցու Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության բաժնին, ապահովելով տեղեկատվությամբ, որը վերաբերվում է ԿԴԱՄԾ -ի շրջանային և տեղական մակարդակի գործունեությանը:

241.11. Հաստատել Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհուրդի բյուջեն, որպեսզի այն քննարկվի շրջանային ասամբլեայի Ֆինանսական Հանձնաժողովի կողմից:

241.12. Շրջանի եկեղեցիների այցելուների համար, կազմակերպել և անցակացնել համատեղ հանգիստ: Մեծահասակների հետ աշխատանքի ղեկավարը, ի պաշտոնե հանդիսանում է եկեղեցիների այցելուների համատեղ հանգստի կազմակերպման Շրջանային Հանձնաժողովի անդամ:

241.13. Շրջանային ասամբլեային ներկայացնելու համար, հաստատել Խորհրդի նախագահի զեկույցը:

241.14. Մասնակցել Խորհրդի ժողովներին, որոնց անցկացման հաճախականությունը սահմանում է շրջանային սուպերինտենդենտը կամ Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհուրդը: Ժողովը անցկացվում է պլանավորելու և Խորհրդի պարտականությունները արդյունավետ անցկացնելու համար:

242. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի նախագահը: Շրջանային ասամբլեայի կամ Կիրակնօրյա Դպրոցների Շրջանային Ծառայողների Կոնվենցիաների ժամանակ, Շրջանային Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովի կողմից առաջարկված երկու կամ ավելի թեկնածուներից, ընտրվում է Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի նախագահը, մեկ կամ երկու տարի ժամկետով: Պաշտոնավարող նախագահը կարող է վերընտրվել ձայների մեծամասնությամբ, քվեարկելով, «կողմ» կամ «դեմ», ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի երաշավորությամբ և շրջանային սուպերինտենդենտի համաձայնությամբ: ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի նախագահի թափուր տեղը, որը առաջանում է շրջանային ասամբլեաների ժողովների ընդմիջման ժամանակ, կարող է լրացվել համապատասխան պարագրաֆ 215 (241.6):

Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության Շրջանային Խորհրդի նախագահի պարտականությունները.

242.1. Պատասխանատու է ղեկավարելու Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության գործունեությունը շրջանում:

1. Նպաստել այն ծրագրերի անցկացմանը, որոնք ավելացնում են Կիրակնօրյա Դպրոցների հաճախելիությանը և թվաքանակը:

2. Համակարգել երեխաներին և մեծահասկներին վերաբերվող բոլոր ծրագրերը:

3.Համագործակցելով աշխատել Նազովրեցու Եկեղեցու Միջազգայի Երիտասարդական Ընկերակցության հետ, համակարգելու համար Կիրակնօրյա Դպրոցի, երիտասարդների փոքր խմբերի և Աստվածաշնչի ուսումնասիրության աշխատանքները:

242.2. Ներկա գտնվել շրջանային ասամբլեայի և Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության նիստերին, որոնց անդամն է նա ի պաշտոնե հանդիսանում:

242.3. Կիրակնօրյա Դպրոցի Շրջանային Խորհրդի անունից պատրաստել գրավոր հաշվետվություն, շրջանային ասամբլեայի արձանագրության համար:

Զ. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Շրջանային Ընկերակցություն

243. Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդական ծառայությունը շրջաններում, կազմակերպված է Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության և նրա Կանոնադրության հովանու ներքո: Այն գտնվում է շրջանային սուպերինտենդենտի,

Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և շրջանային ասամբլեայի ղեկավարության տակ: Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Շրջանային Ընկերակցությունը պետք է կազմվի Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության տեղական խմբերից և անդամներից, որոնք մտնում են այդ շրջանի մեջ:

243.1. ՆԵՄԵԸ-ի շրջանային բաժինը կազմակերպված է ՆԵՄԵԸ-ի համապատասխան շրջանային ծրագրի (պարագրաֆներ 810.200-810.219), որը կարող է փոփոխվել շրջանային ծառայության կարիքներին համապատասխան, որոնք համաձայնեցվում են ՆԵՄԵԸ-ի Կանոնադրությանը, և Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցին: (Պարագրաֆ 810.203)

Ղ. Նազովրեցու Համաշխարհային Միսիայի Շրջանային Ընկերակցությունը

244. Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Շրջանային Ընկերակցությունը ընդգրկում է Նազովրեցու Համշխարհային Միսիաների տեղական ընկերակցությունները, որոնք մտնում են այդ շրջանի մեջ: Շրջանային ընկերակցությունը, օժանդակող ստորաբաժանում է Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցությանը: (811)

244.1. Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Շրջանային Ընկերակցությունը, գործում է համապատասխան Նազովրեցու Համշխարհային Միսիայի կողմից հաստատած Շրջանային Ընկերակցության Սահմանադրությամբ: Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Շրջանային Ընկերակցությունը հաշվետու է շրջանային սուպերինտենդենտին, Շրջանային Խորհրդատվական Խորհրդին և շրջանային ասամբլեային: (811)

244.2. Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Շրջանային Ընկերակցության նախագահը չի վճարվում: Ի պաշտոնե նա շրջանային ասամբլեայի անդամ է: (201)

Ճ. Շրջանի վճարովի աշխատակիցները

245. Երբ շրջանը վճարովի աշխատակիցների կարիք է զգում, շրջանի ադմինիստրացիայի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, շրջանային սուպերինտենդենտը նշանակում է թեկնածուներ այցելուներից և հոգևորականներից, հաստատված գրավոր ձևով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից: Այդպիսի աշխատակիցները ընտրվում են Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից և հաստիքի են ընդունվում ոչ ավել, քան մեկ տարով, սակայն այդ ժամկետը կարող է երկարացվել շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի դրական քվեարկությամբ: (211.16)

245.1. Այսպիսի աշխատակիցներին ժամանակից շուտ հաստիքից ազատելը, կատարվում է շրջանային սուպերինտենդենտից ստացված հատուկ հանձնարարականով, ինչպես նաև Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամների համապատասխան քվեարկությամբ: (225.16)

245.2. Այդպիսի աշխատակիցների պարտականությունների շրջանը որոշվում է շրջանային սուպերինտենդենտի կողմից, որը ղեկավարում է նրանց գործունեությունը:

245.3. Շրջանային սուպերինտենդենտի հրաժարականի կամ ընդհատումից հետո վճարովի ծառայողների պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված, եթե երկրի աշխատանքային օրենսդրությունը չի նախատեսում այլ պայմաններ: Այնուամենայնիվ խմբի անդամներից մեկը կամ երկուսը կարող են մնալ իրավասու գլխավոր սուպերինտենդենտի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի գրավոր հաստատման դեպքում: Բայց ոչ ավելին քան նոր

սուպերինտենդենտի պարտականությունների ընդունման ժամկետը: (209.3-209.4)

245.4. Շրջանի կողմից վճարովի աշխատակցի հաստիքը, ծառայողին չի խանգարում զբաղեցնել այլ պաշտոններ, որին նա շրջանի կողմից կարող է նշանակվել կամ ընտրվել, օրինակ՝ ինչպես շրջանային քարտուղարը կամ շրջանային գանձապահը: Վճարովի շրջանային օգնականը կամ աշխատակիցը իրավասու չէ ծառայել Շրջանային Խորհրդատվական Խորհուրդում:

Մ. Շրջանի լուծարումը

246. Եթե Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին պարզ է դառնում, որ շրջանի գոյությունը հետագայում իմաստ չունի, ապա նրանցից տրված համապատասխան հանձնարարականով շրջանը կարող է լուծարվել: Դա տեղի է ունենում Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդի համապատասխան, քվեարկության ձայների երկու երրորդով և լուծարման մասին պաշտոնական ծանուցագրով: (200)

246.1. Շրջանի պաշտոնական լուծարման դեպքում, եկեղեցական սեփականությունը պետք է փոխանցվի Գլխավոր Խորհրդի հսկողության տակ, որպեսզի Գլխավոր Ասամբլեայի ցուցումով օգտագործվի Նազովրեցու Եկեղեցու կողմից: Եկեղեցական սեփականությունը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: Հոգաբարձուները, ովքեր ունեն շրջանի գույքի սեփականության իրավունք կամ կազմակերպությունը, որը ստեղծված է եկեղեցական գույքը տնօրինելու համար, կարող են վաճառել կամ այլ ձևով տնօրինել այն, միայն Գլխավոր Խորհրդի կողմից նշանակված պաշտոնական դեմքի հանձնարարականով և ղեկավարությամբ, հանձնելով նրան եկեղեցական ունեցվածքի վաճառքից գոյացած բոլոր նյութական արժեքները : (106.2, 106.5, 225.6)

III. ԳԼԽԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ա. Գլխավոր Ասամբլեայի կազմակերպումը և ֆունկցիաները

300. Գլխավոր Ասմբլեան, Նազովրեցու Եկեղեցու գերագույն ընտրական, օրենսդիր և վարդապետություններ ձևավորող իշխանության օրգան է, որը ենթարկվում է եկեղեցական սահմանադրության դրույթներին: (25-25.8)

300.1. Գլխավոր Ասմբլեայի ժամանակ նախագահում են գլխավոր սուպերինտենդենտները: (25.5, 307.3)

300.2. Գլխավոր Ասամբլեան ընտրում է իր պատասխանատու աշխատակիցներին և իրականացնում է իր գործունեությունը: (25.6)

300.3. Ժողովների վարման կարգը: Նկատի ունենալով գոյություն ունեցող օրենսդրությունը, ինչպես նաև եկեղեցու կանոնադրությունը և եկեղեցու կառավարման կարգը, Նազովրեցու Եկեղեցու հանդիպումները և վարույթները, տեղական, շրջանային, գլխավոր, և Նազովրեցու Եկեղեցու հանձնաժողովների պետք է անցկացվեն և հսկվեն համաձայն պառլամենտական նոր հայացողակարգի (Robert’s Rules of Order): (34)

Բ. Գլխավոր Ասամբլեայի անդամները

301. Գլխավոր Ասամբլեան կազմում են այցելուների և ծառայողների հավասար պատգամավորների քանակը, որոնք ընտրվել են ամեն 3-րդ մակարդակի շրջաններից: Շրջանային սուպերինտենդենտը նշանակված պատգամավոր է ձեռնադրված ծառայողներից, մնացած պատգամավորները նշանակված և ձեռնադրված ծառայողներից և եկեղեցու այցելուներից եղող պատգամավորները ընտրվում են Նազովրեցու Եկեղեցու շրջանային ասամբլեաների ժամանակ: Պատգամավորներ են նաև վաստակավոր գլխավոր սուպերինտենդենտները, Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Ընկերակցության նախագահը, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության նախագահը, պատասխանատու աշխատակիցներ և տնօրեններ, որոնք գլոբալ պատասխանատվություն և հաշվետու են Գլխավոր Խորհրդի սեսիաների ժամանակ: Տարածաշրջանային Կրթության Միջազգային Խորհրդից տարածաշրջանային ուսումնական հաստատությունների նախագահների կեսը ասամբլեայի քվեարկող անդամներ են, իսկ մյուս կեսը քվեարկելու իրավունք չունեն, որտեղ ընտրության ընթացքը և քանակը որոշում են Կրթության Միջազգային Խորհուրդը և Գլխավոր Խորհրդի հանձնարարությամբ, ամեն տարածաշրջանից նշանակված մեկ պայմանագրով միսիոներ, որը ընտրվում է այդ տարածաշրջանի մյուս միսիոներների կողմից, ովքեր ընտրված են Գլխավոր Խորհրդի կողմից: : Այդպիսի ընտրությունների բացակայության դեպքում, փոխնախագահը պետք է ընտրվի Միսիոներական Աշխատանքների Համաշխարհային հանձնաժողովի կողմից:

301.1. 3-րդ մակարդակի յուրաքանչյուր շրջան Գլխավոր Ասամբլեային պետք է ներկայացված լինի հետևյալ դեմքերով. ամեն 6000 կամ պակաս լիիրավ անդամներից 2 ձեռնադրված և 2 նշանակված ծառայողներ, և այցելուներից 2 ներկայացուցիչ, և հաջորդ 4 000 լիիրավ անդամների համար 1 լրացուցիչ ձեռնադրված և նշանակված ծառայող, և այցելուներից 1 ներկայացուցիչ, և ամեն հաջորդող 5000 լիիրավ անդամների համար: §Ձեռնադրված և նշանակված ծառայող¦ տերմինը ընդգրկում է ինչպես երեցներին այնպես էլ սարկավագներին: (Տես ներքևի աղյուսակը)

Լիիրավ անդամների քանակը	Պատգամավորների քանակը
0-6000	4(2 այցելու, 2 ծառայող)
6001-10000	6 (3 այցելու, 3 ծառայող)
10001-15000	8(4այցելու, 4 ծառայող)
15001-20000	10 (5 այցելու, 5 ծառայող)
20001-25000	12 (6 այցելու, 6 ծառայող)
25001-30000	14 (7 այցելու, 7 ծառայող)
30001-35000	16 (8 այցելու, 8 ծառայող)
35001-40000	18 (9 այցելու, 9 ծառայող)

Եվ այլն:

301.2. 2-րդ մակարդակի յուրաքանչյուր շրջան, Գլխավոր Ասամբլեայում պետք է ներկայացվի մեկ պագամավոր ծառայողներից, և մեկ պատգամավոր այցելուներից: Ձեռնադրված և նշանակված ծառայողներից, պատգամավոր պետք է լինի շրջանային սուպերինտենդենտը: Ամեն պագամավորի համար ընտրվում է փոխարինող թեկնածու:

301.3. Առաջին մակարդակի շրջանը, Գլխավոր Ասամբլեայում պետք է ներկայացվի մեկ պագամավորով, ով չի մասնակցում քվեարկությանը: Այն կարող է լինել շրջանային սուպերինտենդենտը այն պայմանով, որ նա լինի շրջանի եկեղեցու անդամ: Եթե շրջանային

սուպերինտենդենտը շրջանի եկեղեցու անդամ չէ, նրան փոխարինող թեկնածուն ընտրվում է որպես պատգամավոր:

301.4. Եկեղեցու նշանակված ծառայողներից ընտրված Գլխավոր Ասամբլեայի պատգամավորի իրավունքը կարող է վերացվել, եթե նա նոր ծառայության համար տեղափոխվում է ուրիշ շրջան կամ դուրս է գալիս ակտիվ նշանակված հոգևոր ծառայությունից, մինչև Գլխավոր Ասամբլեայի գումարումը: Եթե շրջանի ծառայողին պաշտոնապես տրամադրվել է թոշակառուի կարգավիճակ, ապա նա չի կարող ծառայել, որպես Գլխավոր Ասամբլեայի պատգամավոր:

301.5. Եկեղեցու այցելուներից ընտրված Գլխավոր Ասամբլեայի պատգամավորի իրավունքը կարող է վերացվել, եթե նա դառնում է այլ շրջանի եկեղեցու անդամ, մինչև Գլխավոր Ասամբլեայի գումարումը:

Գ.Գլխավոր Ասամբլեայի անցկացման տեղը և ժամանակը

302. Գլխավոր Ասամբլեայի գումարումը տեղի է ունենում ամեն 4 տարին մեկ հունիս ամսին: Տեղը և ժամանակը որոշվում է Գլխավոր Ասամբլեայի Հանձնաժողովի կողմից, որը կազմված է գլխավոր սուպերինտենդենտներից և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից ընտրված հավասար թվով մարդկանցից: Գլխավոր սուպերինտենդենտները և Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում լիազորված են փոխելու Գլխավոր Ասամբլեայի տեղը և ժամանակը:

302.1. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը խորհրդակցելով Գլխավոր Խորհրդի Գործադիր Հանձնաժողովի հետ անհրաժեշտության դեպքում իշխանություն ունի Գլխավոր Ասամբլեան անցկացնելու համար լրացուցիչ վայրեր ընտրել: Այդպիսի վայրերից քվեարկությունը, պատգամավորների քվեարկության հիմնական վայրի հետ միասին, համարվում է պաշտոնական:

302.2. Գլխավոր Ասամբլեան սկսվում է Աստծուց ներշնչված երկրպագությամբ: Անհրաժեշտ է հոգս տանել, որ երկրպագությունը և Գլխավոր Ասամբլեայի բոլոր գործունեությունը պատշաճ ու կանոնավոր կատարվի: Գլխավոր Ասամբլեան սահմանում է նիստերի փակման ժամանակը: (25.3)

Դ. Գլխավոր Ասամբլեայի արտահերթ գումարումները

303. Անհրաժեշտության դեպքում, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը կամ նրա մեծամասնությունը, բոլոր շրջանային սուպերինտենդենտների ձայների երկու երրորդ գրավոր համաձայնությամբ, իրավունք ունի գումարելու Գլխավոր Ասամբլեայի արտահերթ ժողովներ: Ժամանկը և տեղը որոշվում է գլխավոր սուպերինտենդենտների և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից ընտրված հանձնաժողովը:

303.1. Գլխավոր Ասամբլեայի արտահերթ գումարման դեպքում, անցած Գլխավոր Ասամբլեայի պատգամավորներն ու փոխարինողներ կամ նրանց կողմից ընտրած և լիազորված հետևորդները, պետք է ծառայեն որպես պատգամավորներ և փոխարինողներ:

Ե. Գլխավոր Ասամբլեայի Նախապատրաստման Հանձնաժողով

304. Գլխավոր քարտուղարը, գլխավոր գանձապահը և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից նշանակված 3 մարդ, Գլխավոր ասամբլեայի գումարումից ամենաքիչը մեկ տարի առաջ, կազմում են Գլխավոր Ասամբլեայի Նախապատրաստման Հանձնաժողովը:

304.1. Գլխավոր Ասամբլեայի Նախապատրաստման Հանձնաժողովը, իշխանություն ունի

Գլխավոր Ասամբլեայի վերաբերյալ նախապատրաստելու բոլոր անհրաժեշտ դետալները և կնքել բոլոր անհրաժեշտ պայմանագրերը:

304.2. Գլխավոր Ասամբլեայի Նախապատրաստման Հանձնաժողովը, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հետ միասին, ձևավորում են Գլխավոր Ասամբլեայի ծրագիրը ներառյալ՝ Գլխավոր մակարդակի վրա շոշափվող բոլոր հիմնական հարցերը, Հաղորդության անցկացվող երկրպագությունը, Գլխավոր Ասամբլեայի առաջին 3 օրերի ընթացքում անցկացվող այլ երկրպագությունների կատարումը կամ ձևավորում է Երկրպագության Ծառայությունների Նախապատրաստման Հանձնաժողով:

Հանձնաժողովի ամբողջ ծրագիրը պետք է հաստատվի Գլխավոր Ասամբլեայի կողմից:

Զ. Գլխավոր Ասամբլեայի գործունեությունը

305. Համաձայն Եկեղեցական Սահմանադրության պարագրաֆ 25.8-ի, Գլխավոր Ասամբլեայի գործունեության մեջ մտնում է հետևյալը.

305.1. Հանձնարարական Հանձնաժողովի միջոցով ուղղել քննարկման, Գլխավոր ասամբլեայի մշտական և հատուկ օրենսդիր հանձնաժողովների կամ պատգամավորների տարածաշրջանային ժողովին հանձնաժողովների կողմից առաջարկվող բոլոր բանաձևերը, օրինագծերը, ինչպես նաև՝ հանձնաժողովների հաշվետվությունները և բոլոր փաստաթղթերը, մինչև Գլխավոր Ասամբլեային ներկայացնելը: Հանձնարարական Հանձնաժողովը, որոշումներ կայացնելու համար, ներկայացնում է առանձին տարածաշրջաններ շոշափող օրինագծեր, Գլխավոր Ասամբլեայի տվյալ տարածաշրջանի պատգամավորների ժաղովների ժամանակ: Տվյալ Ուղեցույցում փոփոխությունները կարող են քննարկվել Գլխավոր Ասամբլեայի ընդհանուր ժողովի ժամանակ:

305.2. Քվեարկության ժամանակ, բոլոր ներկա գտնվող անդամների ձայների երկու երրորդով, ընտրել 6 գլխավոր սուպերինտենդենտներ, որոնք կզբաղեցնեն իրենց պաշտոնը մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի փակումից հետո 30 օրվա լրանալը, մինչև կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց հետնորդները.

ա. Առաջին քվեարկությունը– «կողմ» կամ «դեմ» - անցկացվում է տվյալ պահին ծառայող գլխավոր սուպերինտենդենտների համար:

բ. Առաջին քվեարկությունից հետո, մնացած թափուր տեղերը լրացվում են հետագա քվեարկությունների միջոցով, մինչև ավարտվեն ընտրությունները:

Այն դեպքում, երբ թեկնածուն չի կարող ընտրվել տվյալ պայմաններով, բայց առաջին քվեարկության ժամանակ նրա համար ձայներ են տրվել, ապա նրա անունը հեռացվում է ընտրվողի ցուցակից, իսկ առաջին քվեարկության հաշվետվությունը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. «Մեկ կամ ավել անուններ հեռացվել են, որովհետև այդ պաշտոնում չեն կարող ընտրվել »:

Եկեղեցու ոչ մի ձեռնադրված երեց, չի կարող ընտրվել գլխավոր սուպերինտենդենտ, եթե նա երբևէ կարգապահական պատճառներով կորցրել է իր մանդատը: Գլխավոր սուպերինտենդենտի պաշտոնին չի կարող ընտրվել այն մարդը, ում 35 տարեկանը չի լրացել և ում տարիքը գերազանցում է 68 -ը: (25.4, 307.16, 900)

305.3. Թոշակառուներից ընտրել պատվավոր գլխավոր սուպերինտենդենտ, եթե այն երաշխավորվում է այն դեպքում, եթե սուպերինտենդենտը կորցրել է աշխատունակությունը կամ հասել է թոշակի տարիքի: Թոշակառու պատվավոր գլխավոր սուպերինտենդենտի ընտրությունը հաստատվում է ցմահ: (314.1)

305.4. Թոշակի ուղարկել գլխավոր սուպերինտնդենտի, ով դրան արժանի է կամ Գլխավոր Ասամբլեայի կարծիքով անաշխատունակ է իր ֆիզիկական վիճակի կամ տարեց հասակի պատճառով, որը նրան խանգարում է կատարելու գլխավոր սուպերինտենդենտի պարտականաությունը համապատասխան ձևով: Այն կարող է իրականցվել միայն այն դեպքում, երբ տվյալ սուպերինտենդենտը իր պաշտոնը զբաղեցրել է մեկ լրիվ ժամանակահատված:

Եթե գլխավոր սուպերինտենդենտը պաշտոնաթողության խնդրանք է ներկայացնում Գլխավոր Ասամբլեայի ընդմիջումների ժամանակ, ապա նրա խնդրանքը կարող է բավարարվել Գլխավոր Խորհրդի հերթական նիստի ժամանակ, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ: (314.1)

305.5. Թոշակի անցած գլխավոր սուպերինտենդենտներին նշանակել համապատասխան թոշակ:

305.6. Ընտրել Գլխավոր Խորհուրդ, համապատասխան պարագրաֆներ 332.1-333.4, մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը, և մինչև նրանց հետնորդների ընտրվելը և վերջնականապես հաստատվելը: (331, 901)

305.7. Ընտրել Գլխավոր Վերաքննիչ Դատարան, կազմված 5 ձեռնադրված ծառայողներից մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը, և մինչև նրանց հետնորդների ընտրվելը և վերջնականապես հաստատվելը: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը ընտրում է նախագահի և քարտուղարի: (25.7, 611, 902)

305.8. Իրականցնել ցանկացած այլ գործունեություն, որը ուղղված է Նազովրեցու Եկեղեցու և Քրիստոսի սուրբ գործի բարորությանը, համաձայն Սուրբ Գրքի և եկեղեցական Սահմանադրության: (25.8)

Է. Գլխավոր Սուպերինտենդենտներ

306. Գլխավոր սուպերինտենդենտների դերը կայանում է նրանում, որպեսզի տրամադրվի առաքելական և հեռատես հոգևոր առաջնորդության.

- Արտահայտված առաքելություն
- Տեսիլքի հռչակմուն
- Հոգևորականների ձեռնադրում
- Աստվածաբանական միաբանության խթանում և
- Ամբողջ եկեղեցու համար տրամադրել ընդհանուր իրավասու և ընդհանուր ադմինիստրատիվ հսկողություն:

307.Գլխավոր սուպերինտենդենտների պարտականությունները և լիազորությունները.

307.1. Հսկել Նազովրեցու Եկեղեցու գործունեությունը, համապատսխան Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված օրենքների և կանոնների:

307.2. Ի պաշտոնե լինել Գլխավոր Ասամբլեայի անդամներ: (301)

307.3. Նախագահել Գլխավոր Ասամբլեայի և Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդի ժողովների ժամանակ: (300.1,335.3)

307.4. Կատարել ձեռնադրման արարողություն կամ նշանակել փոխարինողների ձեռնադրելու նրանց, ում արժանիորեն ընտրել են լինելու երեց կամ սարկավագ: (320, 538.5-538.6)

307.5. Նախագահել 3-րդ մակարդակի շրջանների շրջանային ասամբլեաներում կամ անհրաժեշտության դեպքում նշանակել նախագահողի: (202, 214)

307.6. Գլխավոր սուպերինտենդենտը նախագահում է շրջանային ասամբլեայի ժամանակ և շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և տեղական

եկեղեցիների պատգամավորների համաձայնությամբ նշանակում են տեղական եկեղեցու հովիվների այն եկեղեցիներում, ովքեր չունեն կանչված հովիվներ: (218.1)

307.7. Գլխավոր սուպերինտենդենտները խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, կարող են շրջաններում նշանակել շրջանային սուպերինտենդենտների, որոնց թափուր տեղերը առաջացել են շրջանային ասամբլեաների նիստերի ընդմիջման ժամանակ: Համապատասխան պարագրաֆ 208-ի, բոլոր ձեռնադրված երեցները դրա իրավունքը ունեն, ներառյալ նրանց, ովքեր պատկանում են այդ շրջանին: (209, 239)

307.8. Շրջանային սուպերինտենդենտի պաշտոնակատարի ժամանակավոր անաշխատունակության դեպքում, լիազորված գլխավոր սուպերինտենդենտը խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, կարող է կոմպետենտ ձեռնադրված երեցին նշանակել որպես շրջանային սուպերինտենդենտի ժամանակավոր պաշտոնակատարի: Աշխատունակության կորցնելու հարցը, որոշվում է լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից, խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ: (209.2)

307.9. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը կարող է երաշխավորել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդին, 3-րդ մակարդակի շրջանը ճանաչել ճգնաժամային իրավիճակում: (200.2, 322)

307.10. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը կարող է նախագահել եկեղեցու տարեկան կամ հատուկ ժողովի ժամանակ, կամ նշանակել իր ներկայացուցիչներին: (113.5)

307.11. Գլխավոր սուպերինտենդենտները չեն կարող լինել ձայնի իրավունքով Նազովրեցու Եկեղեցու ցանկացած խորհրդի անդամ, բացի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդից, եթե միայն այն նախատեսված չէ որոշակի խորհրդի օրենքով: (307.12)

307.12. Գլխավոր սուպերինտենդենտը եկեղեցում չի կարող լրացնել այլ պաշտոն, երբ նա ծառայում է որպես գլխավոր սուպերինտենդենտ: (307.11)

307.13. Գլխավոր սուպերինտենդենտների բոլոր պաշտոնական գործունեությունները ենթակա են Գլխավոր Ասամբլեայի կողմից ստուգումներին և աուդիտի:

307.14. Գլխավոր սուպերինտենդենտների բոլոր պաշտոնական գործունեությունները կարող են ճանաչվել անվավեր՝ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի մնացած անդամների միաձայն քվեարկությամբ: **307.15.** Գլխավոր սուպերինտենդենտի պաշտոնը կարող է հայտարարվել թափուր, եթե այն հիմնավորված է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի մնացած անդամների միաձայն քվեարկությամբ և Գլխավոր Խորհրդի ձայների երկու երրորդի աջակցությամբ:

307.16. Գլխավոր Ասամբլեայի կողմից ընտրված գլխավոր սուպերինտենդենտները ծառայում են Գլխավոր Ասամբլեայի վերջին սեսիայից հետո ևս 30 օր, մինչև կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց հետևորդները: (305.2)

Ը. Գլխավոր սուպերինտենդենտները թոշակում կամ պատվավոր թոշակ

314. Բոլոր գլխավոր սուպերինտենդենտները թոշակի մեջ կամ պատվավոր թոշակում, հանդիսանում են Գլխավոր Ասամբլեայի պատվավոր անդամներ: (301)

314.1. Թոշակի անցած կամ պատվավոր թոշակում գլխավոր սուպերինտենդենտը, չի կարող լինել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի անդամ, նրան հետևում է ազատել ցանկացած

պաշտոնական պատասխանա_ տրվություններից: Սակայն եթե, գլխավոր սուպերինտենդենտներից մեկը դառնում է անաշխատունակ հիվանդության կամ էլի մեկ ուրիշ պատճառով, որը արգելում է նրան կատարելու իր ֆունկցիաները, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը իշխանություն ունի ժամանակավորապես կանչելու հանգստի մեջ գտնվող գլխավոր սուպերինտենդենտին: (305.3-305.5, 900.1)

Թ. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդ

315. Գլխավոր սուպերինտենդենտները կազմում են խորհուրդ, որի անդամներին տրվում են տարբեր պարտականություններ, որոնց համար նրանք պետք է ունենան հատուկ լիազորություններ:

316. Թափուր պաշտոններ: Գլխավոր Ասամբլեայի ժողովների ընդմիջումների ժամանակ, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդում թափուր տեղի առաջացման դեպքում, թափուր տեղի լրացումը որոշվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդում: Գլխավոր քարտուղարը ստանալով խորհրդի որոշումը, այդ մասին տեղեկացնում է Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդին: Թափուր տեղը լրացնելու համար, Գլխավոր Խորհրդի քվեարկության երկու երրորդ ձայների մեծամասնությամբ, ընտրում են Նազովրեցու Եկեղեցու ձեռնադրված երեցներից մեկին, որպեսզի նա կատարի գլխավոր սուպերինտենդենտի պարտականությունները, մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի փակումից հետո 30 օրի լրանալը, մինչև կընտրվի և վերջնականապես կհաստատվի նրա հետնորդը: (25.4, 305.2)

316.1. Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի քվեարկության արդյունքները, որը հետո հայտարարում է Նազովրեցու Եկեղեցին:

317. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի պարտականությունները.

317.1. Ամբողջ եկեղեցու համար տրամադրում է ղեկավարություն, կառավարում և մոտիվացիա, և Նազովրեցու համաշխարհային Եկեղեցու կազմակերպման և ծառայության համար, պատշաճ ուշադրություն է դարձնում ղեկավարների հարաբերություններին և շրջանների աստվածաբանությանը:

317.2. Համաշխարհային Միսիայի և համապատասխան ազգային ադմինիստրատիվ տնօրենների և/կամ տարածաշրջանային տնօրենների օգնությամբ, հաստատել եկեղեցիների գործունեությունների աշխարհագրական սահմանները, որը նաև պետք է հաստատվի եկեղեցու Գլխավոր Խորհրդի կողմից:

317.3. Այդ խորհուրդը, եկեղեցու կառավարման և ծրագրերի վերաբերյալ ունի առաջնահերթ իշխանություն: Այդ հարցերով նա խորհուրդներ է տալիս Գլխավոր Խորհրդին, նրա հանձնաժողովներին և Նազովրեցու Եկեղեցու բոլոր խորհուրդներին: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը արտոնություն ունի Գլխավոր Խորհրդին և նրա հանձնաժողովներին ներկայացնել այն հանձնարարականները, որոնք նա անհրաժեշտ կհամարի: Նա հաստատում կամ մերժում է Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդին առաջարկված միսիոներական աշխատանքի համար թեկնածուներին, որը առաջադրվել է Համաշխարհային Միսիայի Հանձնաժողովի կողմից:

317.4. Գլխավոր Խորհրդի Գործադիր Հանձնաժողովի հետ համագործակցելով, առաջադրել և Գլխավոր Խորհրդին ներկայացնել մեկ կամ մի քանի թեկնածուների, գլխավոր քարտուղարի և գլխավոր գանձապահի պաշտոններում, նրանց ընտրության համար:

317.5. Ձայների երկու երրորդով թափուր են հայտարարվում այնպիսի պաշտոններ, ինչպես՝ գլխավոր քարտուղարի, գլխավոր գանձապահի, կամ բաժնի վարիչի պաշտոնները:

317.6. Լրացնել Գլխավոր Ասամբլեայի ժողովների ընդմիջումների ժամանակ առաջացած Գլխավոր Վերաքննիչ Դատարանում առկա թափուր տեղերը, ինչպես նաև ընտրել դատարանի

նախագահին և քարտուղարին: (305.7, 612, 902)

317.7. Լրացնել Գլխավոր Ասամբլեայի և Գլխավոր Խորհրդի ժողովների ընդմիջումների ժամանակ առաջացած հատուկ հանձնախմբերում և հանձնաժողովներում առաջացված թափուր տեղերը:

317.8. Գլխավոր սուպերինտենդներին նշանակել ուսումնական խորհրդատուներ բոլոր այն ուսումնական հաստատությունների համար, որոնք կապ ունեն Կրթության Միջազգային Խորհրդի հետ: (905)

317.9. Հոգևորականության Զարգացման Բաժնի հետ համագործակցելով, կազմակերպել դասընթացներ տեղական և լիցենզավորված ծառայողների և ծառայողների դերը կատարող անձանց (ինչպես այցելուների այնպես էլ հոգևորականության) համար: (529-530)

317.10. Գլոբալ միսիայի շահերի փրկարար ուղին է ծրագրավորելը, պահպանելը և նպաստելը, Ավետարանչության Համաշխարհային ֆոնդին: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը և Գլխավոր Խորհրդը լիազորված են և իշխանություն ունեն սահմանելու ֆինասավորման նպատակները և պատասխանատվությունները դեպի տեղական եկեղեցիները: (32.5, 317.11, 130, 335.7)

317.11. Գրավոր ձևով հաստատել նախքին ձեռնադրված երեցի կամ սարկավագի մանդատի վերականգնումը: (539.9, 539.10-539.11, 540.8)

318. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը լիազորություն ունի մեկնաբանելու Նազովրեցու Եկեղեցու օրենքները և վարդապետությունները, ինչպես նաև այս Ուղեցույցի հոդվածների նշանակություններն ու կիրառությունները, չբացառելով վերանայելու խնդրանքով դիմելու Գլխավոր Ասամբլեային:

319. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը պետք է քննարկեն և ընդունեն ծրագրեր, շրջանային կենտրոններ կազմակերպելու համար: Այդ ծրագրերը չեն իրականացվում, մինչև որ նրանք գրավոր ձևով չեն հաստատվել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդի կողմից: (225.12)

320. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը լիազորություն ունի ձեռնադրելու բաժանված մարդկանց: (307.4, 533.3, 534.3)

321. Եթե դա հիմնավորված է, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը գլխավոր սուպերինտենդենտի երաշխավորությամբ, կարող է 2-րդ և 1-ի մակարդակի շրջանների շրջանային սուպերինտենդենտի պաշտոնը թափուր հայտարարել, ինչպես նաև Շրջանային Խորհրդատվական Խորհրդի քվեարկության ձայների երկու երրորդի որոշմամբ, կարող է թափուր հայտարարել 3-րդ մակարդակի շրջանի շրջանային սուպերինտենդենտի պաշտոնը: (209.1, 239)

322. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը կարող է հաստատել, որ 3-րդ մակարդակի շրջանը գտնվում է ճգնաժամի մեջ: (200.2, 307.9)

323. Ամեն Գլխավոր Ասամբլեայից հետո, *Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի* խմբագրությունը պետք է ուժի մեջ մտնի և մատչելի լինի բոլոր օգտագործվող լեզուներով, երբ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը կհայտարարի նրա պաշտոնական թողարկման ամսաթիվը:

324. Նազովրեցու Եկեղեցու ծառայության մեջ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը լիազորված է կատարելու ցանկացած այլ ֆունկցիաներ, որոնք նախատեսված չեն այլ հոդվածներով, որոնք ներդաշնակ են եկեղեցու ընդհանուր կանոններին և համապատասխանում են եկեղեցական Սահմանադրությանը:

Ժ. Գլխավոր քարտուղար

325. Գլխավոր Խորհրդի կանոններին համապատասխան, Գլխավոր Խորհրդի կողմից ընտրված գլխավոր քարտուղարը պաշտոնավարում է մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը, և մինչև կընտրվի և վերջնականապես կհաստատվի նրա հետնորդը, կամ նրա պաշտոնանկությունը համաձայն պարագրաֆ 317.5, (900.2)

325.1. Գլխավոր քարտուղարը ի պաշտոնե Գլխավոր Ասմամբլեայի անդամ է: (301)

325.2. Եթե Գլխավոր Ասամբլեայի ժողովների ընդմիջման ժամանակ առաջանում են գլխավոր քարտուղարի թափուր պաշտոն, Գլխավոր Խորհուրդը այդ թափուրը լրացնում է այն թեկնածուներից, որոնք առաջադրվել են համապատասխան պարագրաֆ 317.4: (335.21)

325.3. Գլխավոր քարտուղարը հաշվետու է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին և Գլխավոր Խորհրդին:

326. Գլխավոր քարտուղարի պարտականությունները:

326.1. Ծառայել որպես Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդի և Գլխավոր Ասամբլեայի քարտուղար, լրացնել և պահպանել դրանց արձանագրությունները:

326.2. Մանրամասնորեն լրացնել և պահպանել Նազովրեցու Եկեղեցու ընդհանուր վիճակագրությունը:

326.3. Պահպանել Գլխավոր Ասամբլեային պատկանող բոլոր փաստաթղթերը և առանց ուշացնելու դրանք փոխանցել իր հետնորդին:

326.4. Մանրամասնորեն և անփոփոխ պահպանել Գլխավոր Վերաքննիչ Դատարանի բոլոր որոշումները: (614)

326.5. Լրացնել կատալոգ և պահպանել բոլոր ծառայողների մանդատները, որոնք հանձնվել են արխիվ կամ հանձնել են երբ զրկվել են մանդատներից, հանձնել են հանգստի անցնելուց կամ հեռացվել են անդամների ցուցակից, և ներկայացնել դրանք միայն շրջանի շրջանային ասամբլեայի համապատասխան հարցումի, ումից դրանք ստացվել են: (539-539.3, 539.8)

326.6. Ստուգել շրջանի վիճակագրական աղյուսակները, որոնք պատրաստվել են հրատարակության: (220.3)

326.7. Պահպանել գրառումների մշտական տվյալների բազան բոլոր մարդկանց մասին, ով ստացել է շրջանային ծառայողի լիցենզիա:

326.8. Մատչելի դարձնել Գլխավոր Ասամբլեային նիստերի գրառումները, այդ ասամբլեայի բոլոր պատգամավորների համար:

326.9. Բեռնելու համար, մատչելի դարձնել *Ուղեցույցի* վերջին տարբերակի լրիվ տեքստը:

326.10. Կատարել ցանկացած այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են այդ պաշտոնը կատարելու համար:

327. Գլխավոր քարտուղարը լինելով եկեղեցու վստահելի անձ, պետք է պահպանի ընդհանուր Նազովրեցու Եկեղեցուն պատկանող իրավաբանական փաստաթղթերը:

327.1. Գլխավոր քարտուղարը լիազորված է հավաքելու պատմական փաստաթղթեր, որոնք վերաբերվում են մեր հարանվանության պատմական զարգացմանը, և նա պետք է պահպանի այդպիսի գրառումները և նյութերը:

327.2. Գլխավոր քարտուղարը պետք է վարի գրքամատյան պատմական վայրերի և ուղենիշների մասին, համապատասխան պարագրաֆ: 913.

328. Գլխավոր քարտուղարը, գլխավոր սուպերինտենդենտի հետ մինչև Գլխավոր Ասամբլեայի բացումը, պետք է պատրաստի բոլոր անհրաժեշտ բլանկ- ձևերը ներառյալ վերանայելու համար պառլամենտական ընթացակարգերի կանոնների համառոտ հրատարակչությունը, ինչպես նաև

այն ամենը, ինչ անհրաժեշտ է Գլխավոր Ասամբլեայի անխափան աշխատանքի համար: Դրա հետ կապված ծախսերը, փակվում են ծախսերի համար Գլխավոր Ասամբլեայի կողմից տրամադրված ֆոնդից:

328.1. Գլխավոր քարտուղարը կարող է ունենալ այնքան օգնականներ, որքան կընտրվեն Գլխավոր Ասամբլեայի կողմից, կամ Գլխավոր Ասամբլեայի ժողովների ընդմիջումների ժամանակ կնշանակվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

Ի. Գլխավոր գանձապահը

329. Գլխավոր Խորհրդի կանոններին համապատասխան, Գլխավոր Խորհրդի կողմից ընտրված գլխավոր գանձապահը, պաշտոնավարում է մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը և մինչև կընտրվի և վերջնականապես կհաստատվի նրա հետնորդը, կամ նրա պաշտոնանկությունը համաձայն պարագրաֆ 317.5. (900.3)

329.1. Գլխավոր գանձապահը, ի պաշտոնե Գլխավոր Ասամբլեայի անդամ է: (301)

329.2. Գլխավոր գանձապահը հաշվետու է լիազորված գլխավոր սուպերինտենդենտին, ով պատասխանատու է Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Կառավարման Ֆինանսական Բաժնի համար, ինչպես նաև Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին և Գլխավոր Խորհրդին:

330. Գլխավոր Գանձապահի պարտականությունները:

330.1. Պահպանել ընդհանուր Նազովրեցու Եկեղեցուն պատկանող բոլոր միջոցները:

330.2. Ստանալ և վճարել Համաշխարհային Ադմինիստրացիային և ֆինանսների հանձնաժողովների, Հոգևորականության Զարգացման և Համաշխարհային Կրթության հանձնաժողովների, Համաշխարհային Միսիայի հանձնաժողովի ֆոնդերը, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք պատկանում են Գլխավոր Խորհրդին կամ նրա ցանկացած բաժնին, միջոցներ գլխավոր սուպերինտենդենտների ֆոնդերից, ընդհանուր ֆոնդից, որը նախատեսված է ծածկելու աննախադեպ հանգամանքների և դեպքերի համար, Գլխավոր Ասամբլեայի համար ֆոնդ, եկեղեցու ընդհանուր բարեգործական այլ միջոցներից, Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության և Նազովրեցու Եկեղեցու Համաշխարհային Միսիայի Համաշխարհային Ընկերակցության միջոցները: (331.3)

330.3. Տալ պարտատոմսեր պարտականությունների բարեխիղճ կատարման պայմանով, ինչպես նաև Գլխավոր Խորհրդի ցուցումով ներդրումներ կատարել վստահություն ներշնչող ապահովագրական ընկերություններում:

330.4. Բաժիններին և խորհուրդներին, իրենց պահանջով զեկուցել պահպանվող միջոցների մասին:

330.5. Գլխավոր Խորհրդի համար կազմել տարեկան հաշվետվություն Նազովրեցու Եկեղեցու բոլոր ֆինանսների վիճակի մասին, ներառյալ ներդրումները: (335.12)

330.6. Պահպանել անշարժ գույքի մեջ ներդրած վարձավճարները, համապատասխան ապահովագրություններով, հոգ տանել այդ ապահովագրությունների պահպանությունները:

Լ. Գլխավոր Խորհուրդ

331. Նազովրեցու Եկեղեցին բարեգործական կազմակերպություն է, որը գրանցված է համապատասխան Միսսուրի նահանգի Կանզաս Սիտի քաղաք ԱՄՆ: Գլխավոր Խորհուրդը պետք է կազմված լինի Գլխավոր Ասամբլեայի կողմից առաջադրված թեկնածուների

ընտրությամբ, համապատասխան պարագրաֆներ 332.1.-333.5-ի: Գլխավոր Խորհրդի ընտրված անդամ լինելու համար, որպես եկեղեցական տարածաշրջանի ներկայացուցիչ, անհրաժեշտ է լինել այդ տարածաշրջանի բնակիչ, ինչպես նաև այդ շրջանի տեղական եկեղեցու անդամ: (305.6, 334)

331.1. Ոչ ոք իրավունք չունի ընտրվել Գլխավոր Խորհրդի անդամ կամ մնալ նրա անդամ, եթե միաժամանակ հանդիսանում են Նազովրեցու Եկեղեցու վճարովի աշխատակից, կամ ինչ-որ հաստատությունների ծառայողներ են, (ներառյալ ուսումնական հաստատությունները), որոնք միջոցներ են ստանում ընդհանուր Նազովրեցու Եկեղեցուց: Շրջաններից և այլ հաստատություններից, Գլխավոր Խորհուրդ չեն կարող ընտրվել նաև այն մարդիկ, ովքեր դրամական միջոցներ են ստանում ընդհանուր եկեղեցուց:

331.2. Գլխավոր քարտուղարը, ի պաշտոնե Գլխավոր Խորհրդի քարտուղարն է:

331.3. Նազովրեցու Եկեղեցու գլխավոր գանձապահը, ի պաշտոնե Գլխավոր Խորհրդի և նաև նրա բաժամունքների գանձապահն է: (330.2.)

332. Թեկնածուների առաջադրումը Գլխավոր Խորհուրդ կատարվում է հետևյալ կերպ.

332.1. Գլխավոր Ասամբլեայի պատգամավորների ընտրությունից հետո, թեկնածուներ առաջադրելու համար ամեն 3-րդ մակարդակի շրջաններից հանդիպում են պատվիրակությունները: Ամեն 3-րդ մակարդակի շրջան առաջադրում է 2 նվիրված ծառայողի, և 2 թեկնածու այցելուներից: Թեկնածուներ առաջադրելիս պետք է հաշվի առնել որոշ շրջանների բազմազգ կազմը: Տարածաշրջանները, որոնք ունեն Տարաշաշրջանային Խորհրդատվական Խորհուրդներ, թեկնածուների անունները տրվում են ազգային խորհուրդ: Այնուհետև Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդը, հնարավոր է կկրճատի թեկնածուների քանակը Գլխավոր Խորհրդի ամեն տեղի համար, որոնք ամեն տարածաշրջանից առաջդրվում են տարածաշրջանային պատգամավորների ժողովում, մինչև 3 անձ: Այնուհետև, թեկնածուների ցուցակները անմիջապես ուղարկվում են գլխավոր քարտուղարի գրասենյակ, որտեղ մտցվում են ընտրական բյուլետենների մեջ և ներկայացվում են ամեն տարածաշրջանից Գլխավոր Ասամբլեայի պատգամավորներին: (205.23)

332.2. Թեկնածուների այդ ցուցակից, Գլխավոր Ասամբլեայի պատգամավորները առաջադրում են թեկնածուներ Գլխավոր Խորհուրդ ընտրվելու համար, և Գլխավոր Ասամբլեային առաջարկում են հետևյալ կերպ.

Յուրաքանչյուր տարածաշրջան, ով ունի 100 000 կամ քիչ լիիրավ անդամ, առաջադրում է մեկ ձեռնադրված ծառայողի և մեկ այցելուի: Ամեն տարածաշրջան, ով ունի 100 000-ից ավել բայց 200 000-ից պակաս լիիրավ անդամ, առաջադրում է 2 ձեռնադրված նշանակված ծառայող, մեկ շրջանային սուպերինտենդենտի, մեկ հովվի կամ ավետարանիչի և 2 այցելուների: Իսկ տարածաշրջանները, ովքեր ունեն 200 000-ից ավել լիիրավ անդամներ, լրացուցիչ առաջադրում են մեկ ձեռնադրված ծառայողի և մեկ այցելուի հաշվի առնելով հետևյալը.

200 000 -ից ավել լիիրավ անդամ ունեցող տարածաշրջանների համար, մեկ պետք է լինի հովիվ կամ ավետարանիչ, մյուսը պետք է լինի շրջանային սուպերինտենդենտ, իսկ երրորդ ձեռնադրված նշանակված ծառայողը կարող է պատկանել այս երկու կարգերից ցանկացածին:

Եկեղեցական շրջանները, իրենց շրջաններից իրավունք չունեն 2 անդամից ավել մարդ ունենալ Գլխավոր Խորհրդում, այնպես էլ տարածաշրջանները իրավունք չունեն ունենալ 6 –ից ավել անդամներ(բացառությամբ եկեղեցական հաստա_ տությունների ներկայացուցիչներից և Նազովրեցու Համաշխարհային Միսիայի անդամներից): Եթե շրջանից երկու թեկնածուից ավել թեկնածուներ ձայն են ստանում, քան տարածաշրջանի մյուս շրջանները, ապա այլ շրջանների ներկայացուցիչները պետք է ընտրվեն, որպես թեկնածուներ տարածաշրջանից:

Ամեն տարածաշրջանում այցելուն/այցելուները, հովիվը կամ ավետարանիչը, և/կամ շրջանային սուպերինտենդենտը, որոնք իրենց համապատասխան կարգերում ստացել են առավելագույն ձայները, ձայների մեծամասնությամբ առաջադրվում են Գլխավոր Ասամբլեա: Ավելի մեծ տարածաշրջանների համար, որտեղ անհրաժեշտ է ընտրել 6 ներկայացուցիչներ, այցելուն և ձեռնադրված նշանակված ծառայողը, ովքեր ստացել են երկրորդ մեծությամբ ձայների քանակը, պետք է դառնան լրացուցիչ թեկնածուներ:

Եթե շրջանային Խորհրդատվական Խորհուրդը որոշում է, որ ընտրված պատգամավորների մեծամասնությանը հավանական է չթույլատրվի մուտք ունենալ Գլխավոր Ասամբլեա, ապա կարելի է կատարել շրջանային քվեարկություն փոստով կամ առաջադրել թեկնածուներին էլեկտրոնային կապով, 6 ամիսների ընթացքում, մինչ կսկսվի Գլխավոր Ասամբլեան: Հատուկ արարողակարգը, որով կանցկացվի այդ փոստային կամ էլեկտրոնային թեկնածուների առաջադրումը Գլխավոր Ասամբլեային, Գլխավոր Խորհրդի թեկնածության համար պետք է առաջարկվի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից և մինչ այն կկիրառվի, հաստատվելու համար փոխանցվի գլխավոր քարտուղարի գրասենյակ: (305.6, 901.1)

332.3. Կրթության Միջազգային Խորհուրդը ուսումնական հաստատություններից Գլխավոր Ասամբլեա, առաջադրում է 4 թեկնածուների՝ 2 այցելու և 2 ձեռնադրված նշանակված ծառայող: Գլխավոր Ասամբլեան Գլխավոր Խորհրդի համար ընտրում է 2 ներկայացուցիչների, 1 այցելու և 1 ձեռնադրված նշանակված ծառայող: (331.1)

332.4. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Խորհուրդը Գլխավոր Ասամբլեա առաջադրում է վերընտրված ՄԵԸ նախագահին: Եթե վերընտրված ՄԵԸ նախագահը չի կարող ծառայել Գլխավոր Խորհրդում, ապա ՄԵԸ Համաշխարհային Խորհուրդը նշանակում է ՄԵԸ Համաշխարհային Խորհրդից մեկ այլ անդամի: (343.4)

332.5. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Միսիայի Ընկերակցության Համաշխարհային Խորհուրդը(ՆԵՄՄԸ), Գլխավոր Ասամբլեա առաջադրում է ՆԵՄՄԸ-ի Համաշխարհային Խորհրդից մեկ մարդ: Գլխավոր Ասամբլեան, Գլխավոր Խորհրդի համար պետք է ընտրի մեկ ներկայացուցիչ: (343.3.)

332.6. Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության (ԿԴԱՄԾ) տարածաշրջանային կոորդինատորները և ԿԴԱՄԾ-ի տնօրենը Գլխավոր Ասամբլեայի համար, պետք է նշանակեն մեկ մարդու: Գլխավոր Ասամբլեան, Գլխավոր Խորհրդի համար պետք է ընտրի մեկ ներկայացուցիչ:

333. Ընտրությունը Գլխավոր Խորհուրդ տեղի է ունենում հետևյալ կերպ:

333.1. Համապատասխան տարածաշրջաններից ներկայացված յուրաքանչյուր թեկնածուի, Գլխավոր Ասամբլեան ընտրական բյուլետեններում ընտրում է «կողմ», ձայների մեծամասնությամբ:

333.2. Կրթության Միջազգային Խորհուրդի կողմից առաջադրված թեկնածուներից, Գլխավոր Ասամբլեան ընտրում է 2 թեկնածու, որոնցից մեկը պետք է լինի այցելու, իսկ մյուսը՝ ձեռնադրված, նշանակված ծառայող:

333.3. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության առաջադրված թեկնածուներից, Գլխավոր Ասամբլեան ընտրական բյուլետեններում ընտրում է «կողմ», ձայների մեծամասնությամբ: (343.4, 903)

333.4. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Միսիայի Ընկերակցության Համաշխարհային Խորհրդի կողմից առաջադրված թեկնածուներից, մեծամասնությամբ §այո¦ քվեարկությամբ պետք է ընտրի Գլխավոր Ասամբլեան: (344.3, 904)

333.5. Տարածաշրջանային ԿԴԱՄԾ կոորդինատորների և գլոբալ ԿԴԱՄԾ-ի կողմից ներկայացված թեկնածուներից, Գլխավոր Ասամբլեան պետք է ընտրի §այո¦ քվեարկությամբ: (332.6)

334. Գլխավոր Խորհրդի անդամները պաշտոնավարում են մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը և կատարում են պարտականությունները, մինչև նրանց հետնորդների ընտրությունը և վերջնական հաստատումը: Եթե Գլխավոր Խորհրդի անդամը փոխում է իր եկեղեցու անդամությունը կամ մեկնում է այն տարածաշրջանից, որը նա ներկայացնում է, կամ ծառայողը փոխում է իր ծառայության կարգը, որով նա ընտրվել է, ապա ծառայողի նշանակումը դադարեցվում է, կամ, եթե սովորական անդամը խնդրում և ստանում է շրջանային ծառայողի լիցենզիա, ապա նրա անդամությունը անմիջապես դադարեցվում է: Առաջացած թափուր տեղը պետք է անմիջապես լրացվի: (331)

334.1. Գլխավոր Խորհրդի և նրա հանձնաժողովի կազմում առաջացած թափուր տեղերը, լրացվում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից առաջարկված և առաջադրված թեկնածուներով: Խորհուրդը շատ արագ գլխավոր քարտուղարին ներկայացնում է 2 թեկնածուների անուններ, որոնք ընտրվելու իրավունք ունեն: Այն տարածաշրջանների շրջաններում, որտեղ առաջացել են թափուր տեղերը, Շրջանի Խորհրդատվական Խորհուրդները ձայների մեծամասնությամբ, առաջադրված թեկնածուներից ընտրում է մեկին: Ընդ որում, 2-րդ և 3-րդ մակարդակի շրջաններում, յուրաքանչյուր Շրջանի Խորհրդատվական Խորհուրդը, մեկ քվեարկության իրավունք ունի: Ուսումնական կենտրոնների ներկայացուցիչների համար, թեկնածուները պետք է ներկայացվեն Գլխավոր Խորհրդին, որը ձայների մեծամասնությամբ ընտրում է մեկին: Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության ներկայացուցչության համար, թեկնածուների անունները ներկայացվում են Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Խորհրդին, որը ձայների մեծամասնությամբ ընտրում է մեկին: Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Միսիայի Ընկերակցության ներկայացուցչուցյան համար, ՆԵՄՄԸ Գլխավոր Խորհրդի գործադիր հանձնաժողովը, խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ և ստանալով Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությունը, անունները փոխանցում է ՆԵՄՄԸ Գլխավոր Խորհրդին, որը ձայների մեծամասնությամբ ընտրում է մեկին: Որպեսզի ներկայացվեն Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայությունը, թեկնածուների անունները պետք է փոխանցվեն Գլխավոր Խորհրդին և ձայների մեծամասնությամբ պետք է ընտրվի միայն մեկը: (332.3-332.6)

335. Գլխավոր Խորհրդի պարտականությունները: Գլխավոր Խորհուրդը ծառայում է Նազովրեցու Եկեղեցու տնօրենների խորհրդի պես և պետք է տիրապետի առաջնահերթ իշխանությամբ, ոչ եկեղեցական կանոնների և ծրագրերի վերաբերյալ: Գլխավոր Խորհուրդը խրախուսում է բոլոր ազգային, տարածաշրջանային, շրջանային, տեղական խորհուրդներին և ակնկալում է, որ նրանք կկատարեն Նազովրեցու Եկեղեցու միսիան, որը կայանում է Վեսլիական ավանդությամբ ստեղծելով Քրիստոսանման աշակերտներ ազգերում, տարածելու քրիստոնեական սրբությունը և նպաստել գլոբալ եկեղեցու ընդլայնմանը ամեն ազգի և/կամ տարածաշրջանի մեջ: Գլխավոր Խորհուրդը նյութական և ֆինանսական հարցերով պետք է նպաստի Նազովրեցու Եկեղեցու բոլոր հանձնաժողովներին, դրա հետ մեկտեղ հետևելով Գլխավոր Ասամբլեայի տրված հանձնարարականներին: Նա համակարգում, համաձայնեցնում, միաբանում է եկեղեցու բաղադրյալ հանձնաժողովների ծրագրերը և գործունեությունները այնպես, որ աջակցի Նազովրեցու Եկեղեցու գործունեության ընդհանուր քաղաքականությանը: Նա լիազորություն ունի ստուգման չափանիշեր հաստատելու Նազովրեցու Եկեղեցուն վերաբերվող բոլոր բաժինների և հաստատությունների ֆինանսական գործունեությունները ստուգելու համար, այնպես որպեսզի ապահովվի մեթոդների միաբանությունը և գոծունեության ձևերի առավել արդյունավետությունը: Այս բոլոր բաժինները, պետք է հետևեն Գլխավոր Խորհրդի բոլոր խորհուրդներին և առաջարկություններին:

335.1. Գլխավոր Խորհուրդը իրավունք ունի գնելու, տնօրինել, պահպանել, սեփականություն ունենալ, գրավ դնել, վաճառել և փոխանցել: Օրենսդրությանը համապատասխան, տնօրինել, զոհաբերել կամ այլ ձևով ձեռք բերել, գրավ դնել, Նազովրեցու Եկեղեցուն նվիրաբերված, կտակված, վաճառված կամ ուրշ կերպ փոխանցված անշարժ գույքը կամ սեփականությունը, ինչպես նաև, դրամ պարտք տալ և վերցնել, Նազովրեցու Եկեղեցու օրինական նպատակները իրականացնելու նպատակով:

335.2. Գլխավոր Խորհուրդը լրացնում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդում առաջացած թափուր տեղը, համաձայն պպ. 316 և 305.2:

335.3. Գլխավոր Խորհուրդը պետք է հանդիպի Գլավոր Ասամբլեայից առաջ կամ անմիջապես փակումից հետո, և ընտրում է իր պաշտոնավոր մարդկանց, հանձնաժողովները և նրանց անդամները, համաձայն Կազմակերպության Կանոնադրության և Գլխավոր Խորհրդի Կանոններով, 4 տարով մինչ կընտրվեն և կհաստատվեն նրանց հետնորդները: Գլխավոր սուպերինտենդենտները նախագահում են Գլխավոր Խորհրդի ժողովների ժամանակ:

335.4. Ժողովները: Գլխավոր Խորհրդի նիստերը անցկացվում են ոչ պակաս, քան 3 անգամ Գլխավոր Ասամբլեաների միջև: Նիստերի ժամանակը որոշվում է Գլխավոր Խորհրդի Կանոններով: Սակայն կանոնավոր հանդիպումների տեղը և ժամանակը ընդունվում է միաձայն, հատուկ կամ կանոնավոր ժողովների ժամանակ, Գլխավոր Խորհրդի և նրա հանձնաժողովների շահերից ելնելով:

335.5. Գլխավոր Խորհրդի հատուկ նիստերը կարող են գումարվել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի, նախագահի և քարտուղարի կողմից:

335.6. Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդը: Նազովրեցու յուրաքանչյուր տեղական եկեղեցի կազմում է գլոբալ գործողության մի մասը՝ «պատրաստելու քրիստոսանման աշակերտներ բոլոր ազգերից»: Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդը պետք է օգտագործվի հարանվանության համընդհանուր գործունեության համար՝ աջակցելու, պահպանելու և նպաստելու ընդհանուր միսիային և նրա հետ կապված գործունեություններին: Գլխավոր եկեղեցու տարեկան բյուջեները հիմնված կլինեն ներդրումային կանխատեսումների վրա, գլխավոր եկեղեցու բաժինների ու գործակալությունների ներդրումներով, և հաշվի առնելով գլխավոր գանձապետի ֆինանսական հաշվետվությունները: Ժամանակ առ ժամանակ Գլխավոր Խորհուրդը կորոշի գումարի քանակը, որը պետք է հատկացվի յուրաքանչյուր մասնաճյուղի ու ֆոնդի Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդից: Երբ այսպիսի հատակացումները համաձայնեցված են, ապա նրանք պետք է ներկայացվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին քննարկումների, առաջարկությունների կամ փոփոխությունների համար, մինչև այն վերջնականապես կընդունի Գլխավոր Խորհուրդը:

335.7. Երբ Գլխավոր Խորհուրդը հաջորդ տարվա համար որոշում է Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդի չափը, Գլխավոր Խորհուրդը և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը լիազորված են տարածաշրջաններին բաժանելու Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդի միջոցները, համաձայն նրանց հավասարության սկզբունքի և ընդհանուր հետաքրքրության: (130, 317.10)

335.8. Գլխավոր Խորհուրդը լիազորված է բարձրացնելու կամ իջեցնելու եկեղեցու կամ ֆոնդի խնդրած գումարի չափը: Գլխավոր Ասամբլեայում ընդունված ֆինանսական հարցերը փոխանցում են Գլխավոր Խորհրդին, որը լիազորված է, համաձայն գոյություն ունեցող տնտեսական պայմանների հաստատելու համամասնական տարեկան փոխանցումները, եկեղեցու բաժինների և հաստատությունների համար համապատասխան ընդհանուր եկեղեցու ֆինանսական պարտավորությունների:

335.9. Գլխավոր Խորհուրդը, իր հայացողությամբ հաստատում է Ավետարանչության

Համաշխարհային Ֆոնդից կատարված փոխանցումները Նազովրեցու Եկեղեցու Աստվածաբանական Սեմինարիային (ԱՄՆ) և Նազովրեցու Եկեղեցու Աստվածաշնչյան Քոլեջին (ԱՄՆ), համաձայն ընդհանուր ֆինանսական վիճակի:

335.10. Գլխավոր Խորհուրդը, Գլխավոր Ասամբլեայի նիստերի միջև եղած ընդմիջումների ժամանակ, ամեն տարի վերանայում է և համապատասխան ձևով փոխում է գլխավոր սուպերինտենդենտների աշխատավարձերը, և նրանց այլ արտոնությունները:

335.11. Զեկույցները: Գլխավոր Խորհուրդը իր կանոնավոր հանդիպումների ժամանակ, բաժիններից ստանում է մանրամասն զեկուցում, անցած տարվա գործունեության համար, ներառյալ ֆինանսականը: Յուրաքանչյուր բաժին տալիս է հաջորդ տարվա ծախսերի առաջարկվող բյուջեն:

335.12. Գլխավոր գանձապահը ամեն տարի Գլխավոր Խորհրդին ներկայացնում է մանրակրկիթ հաշվետվություն բոլոր ֆոնդերի մուտքի և ծախսերի մասին, որոնք նրա կողմից պահպանվել են անցած տարվա ընթացքում, ներառյալ վստահված ֆոնդերը և ներդրումները միասին, հաջորդ տարվա ենթադրյալ ծախսերի բոլոր այն միջոցների մանրակրկիթ հաշվետվությունները, որոնք չեն մտել Գլխավոր Խորհրդի բաժինների բյուջեների մեջ: Գլխավոր գանձապահը հաշվետու է Գլխավոր Խորհրդի առաջ իր պարտականությունների պատշաճ կատարման համար: (330.5)

335.13. Գլխավոր Խորհուրդը հավաքվում է Գլխավոր Ասամբլեայի սկսվելուց առաջ կամ հետո, և ընտրում է գլխավոր քարտուղարին, գլխավոր գանձապահին, համաձայն Գլխավոր Խորհրդի Կանոնների, մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը, մինչ կընտրվեն և կհաստատվեն նրանց հետնորդները:

335.14. Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածաշրջանները ներկայացնող Գլխավոր Խորհրդի անդամները ընտրում են ԱՄՆ-ի Թոշակի և Արտոնությունների Խորհուրդը, որը ընդգրկում է ԱՄՆ-ի ամեն տարածաշրջանից մեկ անդամ, և մեկ լրացուցիչ անդամ Գլխավոր Խորհրդից: Նրանց թեկնածուները առաջադրվում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից համապատասխան ԱՄՆ-ի Թոշակի և Արտոնությունների Խորհուրդի կանոնների: (337)

335.15. Գլխավոր Խորհուրդը, ամեն Գլխավոր Ասամբլեայից հետո ընտրում է Նազովրեցու Եկեղեցու Հրատարակչության Խորհուրդը, մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը, մինչ կընտրվեն և կհաստատվեն նրանց հետնորդները:

335.16. Գլխավոր Խորհրդի ցանկացած օրակարգի հարց, որը վերաբերվում է մեկ տարածաշրջանի կամ մեկ երկրի, Գլխավոր Խորհրդի Գործադիր Հանձնաժողովի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ, այդ հարցը քննարկվում են Գլխավոր Խորհրդի անդամների այն նիստերի ժամանակ, որոնց անդամները տվյալ տարածաշրջանի կամ երկրի ներկայացուցիչներ են:

335.17. Գլխավոր Խորհուրդը համապատասխան ձևով կապ է հաստատում, ինչպես նաև որոշում է բոլոր եկեղեցու բաժինների և հանձնաժողովների միջև եղած հարաբերությունները, ինչպես նաև Գլխավոր Ասամբլեայի և Գլխավոր Խորհրդի և ընդհանրապես բոլոր խորհուրդների միջև ամբողջապես: Որոշում է նրանց աշխատանքի ծավալը, պատասխանատվությունները և բյուջեն:

335.18. Բաժինների տնօրենները: Գլխավոր Խորհուրդը Նոզովրեցու Եկեղեցու յուրաքանչյուր բաժանմունքի համար, գաղտնի քվեարկությամբ ընտրում է տնօրեն: Նրանք պաշտոնավարում են մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի արձակումը մինչ կընտրվեն և կհաստատվեն նրանց հետնորդները, եթե նրանց պաշտոնանկ չեն արել: (317.5)

335.19. Բաժինների տնօրենների թեկնածությունը առաջադրվում է հետևյալ կերպ. Եթե

տնօրենի պաշտոնը ներկա պահին զբաղված է, Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովը կարող է առաջարկել քվեարկել «կողմ» և «դեմ», կամ առաջադրել մի քանի թեկնածուներ: Տվյալ պաշտոնի հնարավոր թեկնածուների որոնումը կատարվում է քննող հանձնաժողովի կողմից, համաձայն Գլխավոր Խորհրդի Կանոնների համաձայն: Այդ Հանձնաժողովը Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովին առաջարկում է երկու կամ ավել թեկնածուներ, առաջադրված թեկնածուների համապատասխան հիմնավորումներով:

Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովը կազմված վեց գլխավոր սուպերինտենդենտ_ներից և համապատասխան հանձնաժողովի Կադրերի Ղեկավարման Հաձնաժողովից, առաջադրում է Գլխավոր Խորհրդին մեկ կամ ավելի անուններ, որպեսզի ընտրությունը կատարվի համապատասխան Գլխավոր Խորհրդի հրահանգների:

335.20. Աշխատողների աշխատավարձերը: Գլխավոր Խորհուրդը հիմնավորում և փաստացիորեն հաստատում է կատարված աշխատանքի գնահատականը և փոխանցում է բաժնի տնօրենի, և եկեղեցու գրասենյակների ղեկավարների աշխատավարձերը: Նախատեսվում է աշխատավարձերի այնպիսի կառուցվածք, որը հաշվի է առնում աշխատանքի պատասխանատվության չափը, ինչպես նաև արժանիքները: Գլխավոր Խորհուրդը ամեն տարի վերանայում և հաստատում է իր կողմից լիազորված և ընտրված բաժինների տնօրենների և այլ աշխատակիցների աշխատավարձերը:

335.21. Գլխավոր Խորհուրդը Գլխավոր Ասամբլեայի և/կամ Գլխավոր Խորհրդի նիստերի ընդմիջումների ժամանակ, առաջնորդվելով Գլխավոր Խորհրդի Կանոնների և պարագրաֆ 317.4–ի առաջարկությունների, լրացնում է ցանկացած թափուր պաշտոններ, որոնք թվարկված են պարագրաֆներ. 335.13 և 335.18-ում և Գլխավոր Ասամբլեայի, Գլխավոր Խորհրդի կամ նրանց ընտրված հանաձնաժողովների կողմից ստեղծված այլ գործադիր պաշտոններ:

336. Պարագրաֆներ 335.13 և 335.18-ում թվարկված բոլոր ծառայողների և տնօրենների և Գլխավոր Խորհրդի կողմից նշանակված կամ նրա հանձնաժողովների կողմից ընտրված եկեղեցական ծառայողների **թոշակի անցնելը**, տեղի է ունենում նրանց 70 ամյակը լրանալուց հետո, անցկացվող Գլխավոր Խորհրդի ժողովի ժամանակ: Թափուր տեղերը պետք է լրացվեն համաձայն Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի:

Խ. Կենսաթոշակային պլաններ

337. Պետք է կազմակերպվի Կենսաթոշակային Խորհուրդ կամ նման լիազորված մարմին, յուրաքանչյուր եկեղեցական կենսաթոշակային ծրագրի հոգաբարձական պատասխանատվության համար: Կենսաթոշակային ծրագրերը կախված անհրաժեշտությունից, կարող են կիրառվել կազմակերպչական, շրջանային, միջշրջանային, ազգային, տարածաշրջանային կամ միջտարածաշրջանային մակարդակներով: (335.14)

337.1. Գլխավոր Խորհուրդը սահմանում և աջակցում է կենսաթոշակային ծրագրերի համար նախատեսված ցուցումները և հրահանգները, որոնք արդիական են ընդհանուր Նազովրեցու Եկեղեցու համար: Գլխավոր Խորհուրդը պատասխանատվություն չի կրում կենսաթոշակային ծրագրերի կորուստների կամ արժեզրկման համար: Գլխավոր Խորհուրդը չի երաշխավորում ցանկացած գումարի վճարում, որը հնարավոր է ցանկացած կենսաթոշակային ծրագրից, ցանկացած անձի, ինչպես նաև պատասխանատու չէ ցանկացած կենսաթոշակային ծրագրի չֆինանսավորման համար: (35.5)

337.2. Բոլոր կենսաթոշակային ծրագրերը Միջազգայի Կենսաթոշակային և Արտոնությունների Խորհրդի միջոցով, Գլխավոր Խորհրդին տալիս են տարեկան զեկույց, համապատասխան ձևով և ձևաչափով: (32.5)

Ծ. “Նազովրեցու Եկեղեցու” միավորման մասնաճյուղերը

338. “Նազովրեցու Եկեղեցի”-ի դուստր միավորումները պետք է կազմակերպվեն և ղեկավարվեն հետևյալ սկզբունքների՝

ա. Բացառիկ Անդամ

ա 1. Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներգրավված բոլոր դուստր մասնաճյուղերի Բացառիկ Անդամը պետք է կրի “Նազովրեցու Եկեղեցի”անվանումը:

բ. Տնօրենների Անդամակցության Խորհուրդ

բ.1. Կառուցվածք: Յուրաքանչյուր կազմակերպություն, ըստ կարիքների և նպատակի, կորոշի տնօրենների համապատասխան քանակը: Նվազագույն պահանջներն են՝

բ.1.1. Մեկ տնօրենը ի պաշտոնե Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդից է:

բ.1.2. Հարանվանության բարձրագույն պաշտոնակատարներից մեկը, պետք է նշանակված լինի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

բ.2. Բոլոր տնօրենները պետք է առաջադրվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից՝ խորհրդակցելով միության այլ տնօրենների հետ:

բ.3. Բոլոր տնօրենները պետք է ընտրվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից՝ հանդես գալով Բացառիկ Անդամի անունից: Նրանք պետք է պաշտոնավարեն մինչև իրենց իրավահաջորդները կընտրվեն և կորոկավորվեն:

բ.4. Հեռացում: Մեկ կամ ավելի տնօրեններ կարող են հեռացվել ինչ-որ պատճառով կամ առանց պատճառի, ցանկացած ժամանակ, այդ նպատակի համար կանչված ցանկացած հատուկ հանդիպմանը Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի քվեարկությամբ, որը հանդես է գալիս Բացառիկ Անդամի անունից:

գ. Պաշտոնյաներ ու ղեկավարներ: Յուրաքանչյուր կազմակերպության մեջ պաշտոնյաների քանակը և կոչումները որոշվում են համաձայն իրենց կանոնադրությունների:

դ. Միավորման ժողովները:

դ.1. Բացառիկ Անդամի ժողովները տեղի կունենան ժամանակ առ ժամանակ Բացառիկ Անդամի (Նազովրեցու Եկեղեցու) կողմից նշանակված օրը և վայրում:

դ.2. Տնօրենների ժողովը տեղի կունենա Միավորման հայեցողությամբ:

ե. Միավորման ղեկավարներ. Ընտրվում և հեռացվում են համապատասխան մասնաճյուղի կանոնակարգի:

զ. Ֆինասական տարի: Բոլոր մասնաճյուղերը պետք է ընդունեն ֆինանսական տարի, որը կհամապատասխանի “Նազովրեցու Եկեղեցու” ֆինասական տարուն:

է. Լուծարում: Միավորման լուծարման ժամանակ բոլոր միջոցները փոխանցվում են Բացառիկ Անդամին:

ը. Միավորման հոդվածները և կանոնադրությունները:

ը.1. Մասնաճյուղերը կարող են հիմնվել Բացառիկ Անդամի Գլխավոր Խորհրդի ձայների երկու երրորդ մասով: Միավորման հոդվածները ու կանոնադրությունները ենթակա են հաստատվելու Բացառիկ Անդամի Գլխավոր Խորհրդի կողմից:

ը.2. Փոփոխությունները առաջարկվում են Միավորման Տնօրենների Խորհրդի ձայների երկու երրորդի կողմից, և դրանք ենթակա են հաստատման Բացառիկ Անդամի Գլխավոր Խորհրդի կողմից:

Կ. Նազովրեցու Հրատարակչության Խորհուրդ

339. Նազովրեցու Հրատարակչության առաքելությունն է հրատարակել, կամ այլ կերպ ասած, արտադրել, վաճառել, ունենալ, լիցենզավորել և կառավարել բովանդակությունը ի շահ Նազովրեցու Եկեղեցու և քրիստոնեական այլ շուկաների համաձայն Եկեղեցու միսիայի: Նազովրեցու Եկեղեցու և նրա դուստր ձեռնարկությունների կողմից օգտագործվող մասսայական տեղեկատվական միջոցների կառավարման ու պաշտպանության նպատակով, Նազովրեցու Եկեղեցին վստահում է Նազովրեցու հրատարակչության Խորհրդին այս հիմնական պատասխանատվություններով:

Հ. Քրիստոնեական Վարքի Հարցերով Գլխավոր Հանձնաժողով:

340. Գլխավոր Ասամբլեայից հետո, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը նշանակում է Քրիստոնեական Վարքի Հարցերով Հանձնաժողով, որի կազմի մեջ են մտնում գլխավոր քարտուղարը, ով հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր Խորհրդին:

Քրիստոնեական Վարքի Հարցերով Հանձնաժողովի պարտականությունները.

340.1. Մշակել և եկեղեցու անդամներին ներկայացնել կառուցողական տեղեկություններ ալկոհոլային կախվածության, ծխելու, թմրանյութերի, մոլի խաղերի և մեր ժամանակի այլ բարոյասոցիալական հարցերի վերաբերյալ, համաձայն եկեղեցու վարդապետության, ինչպես նաև տարածել այդ ինֆորմացիան, օգտագործելով հարանվանության հաղորդակցության միջոցները:

340.2. Ընդգծել քրիստոնեական ընտանիքի ամուսնության սուրբ բնույթը, և ընդգծել բաժանման մեղավորությունը և բարդույթները: Հատուկ պետք է ուշադրություն դարձնել ամուսնության Աստվածաշնչյան հասկացողության մասին, որպես ուխտի ամբողջ կյանքի համար, որը դադարում է միայն մահվանից հետո:

340.3. Խրախուսել և աջակցել եկեղեցու անդամներին զբաղեցնելու ղեկավար պաշտոններ՝ ընկերակցություններում, կազմակերպություններում աշխատելու, քաղաքացիական և հասարակական օգուտի համար:

340.4. Հրահանգել եկեղեցու անդամներին Տիրոջ Օրը պահպանելու անհրաժեշտության մասին, լինել զերծ մնալ գաղտնի կազմակերպություններին անդամակցելուց, որոնք իրենց անդամներին պարտավորեցնում են երդումով, զերծ մնալու կոչ անել քրիստոնեական էթիկային հակառակ զվարճություններից և տեղեկացնել նմանօրինակ հարցերի մասին: (29.1)

340.5. Օգնել և խրախուսել յուրաքանչյուր շրջանի Քրիստոնեական Վարքի Հարցերով Հանձնաժողով հաստատելու գործում: Յուրաքանչյուր շրջանային հանձնաժողովի ներկայացնել տեղեկատվություն, մեր ժամանակի բարոյա- սոցիալական հարցերի վերաբերյալ, որպեսզի այնուհետև դրանք տարածեն տեղական եկեղեցիներում:

340.6. Հետևել բարոյասոցիալական հարցերի զարգացմանը, որոնք առաջանում են ազգային և միջազգային մակարդակներում, ներկայացնել այդ հարցերի վերաբերյալ Աստվածաշնչյան տեսակետներ:

Ձ. Աստծուց կանչված ավետարանիչների հետաքրքրությունները ներկայացնող Հանձնաժողով:

341. Աստծուց կանչված ավետարանիչների հետաքրքրությունները ներկայացնող հանձնաժողովը, բաղկացած է ավետարանչական աշխատանքները համակարգողից, որը ի պաշտոնե հանձնաժողովի նախագահն է, 4 ծառայող ավետարանիչներից և մեկ հովվից: ԱՄՆ/Կանադայի Ավետարանչության/Միսիայի տնօրենը, խորհրդակցելով ավետարանչական աշխատանքները համակարգողի հետ, փոխանցում է հանձնաժողով առաջադրված թեկնածուների ցուցակը Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդ, հաստատելու և նշանակելու համար: Հանձնաժողովը կամ նրա ներկայացուցիչը, պետք է անցկացնեն հարցազրույց նշանակված ավետարանիչի հետ, որոնք նրան երաշխավորվել են համապատասխան շրջանային ասամբլեաների ժամանակ «հաստիքային ավետարանիչի» կարգավիճակում: Հանձնաժողովը նաև ստուգում է Նազովրեցու Եկեղեցու կողմից անցկացվող ավետարանչական աշխատանքը, և հանձնարարականներ է տալիս Գլխավոր Խորհրդի համապատասխան հանձնաժողովին, ավետարանիչի և անցկացված ավետարանչական գործունեության վերաբերյալ: Թափուր տեղերը պետք է լրացվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից, ստանալով ԱՄՆ/Կանադայի Ավետարանչության/Միսիայի տնօրենից և ավետարանչական աշխատանքի համակարգողից: (317.7, 510.3)

Ղ. Կրթության միջազգային Խորհրդատվական Խորհուրդ

342. Գլխավոր Ասամբլեայից հետո, Հոգևորականության Զարգացման Համաշխարհային Բաժնի տնօրենը, խորհրդակցելով տարածաշրջանային կրթական համակարգողների հետ, պետք է ներկայացնի ծառայողների ցուցակը Կրթության Միջազգային Խորհրդատվական Խորհրդում (ԿՄՄԽ) ծառայելու: Թեկնածուների ցուցակը կարող է ընդգրկել ներկայացուցիչներ հովիվներից, ադմինիստրատորներից, այցելուներից և կրթության գործիչներից: ԿՄՄԽ կազմը պետք է ներկայացնի համաշխարհային եկեղեցին: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը պետք է նշանակի Կրթության Միջազգային Խորհրդատվական Խորհուրդ, 4 տարով:

Կրթության Միջազգային Խորհրդատվական Խորհուրդը պետք է հանդիպի ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ, տեղը որոշում է Հոգևորականության Զարգացման Համաշխարհային Բաժնի տնօրենը: (529.1-529.2, 529.5)

Ճ. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցություն

343. Նազովրեցու Եկեղեցու երիտասարդական ծառայությունը, ամբողջ աշխարհում կազմակերպված է Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության հովանու ներքո, համապատասխան Ընկերակցության Կանոնադրության և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի և Գլխավոր Խորհրդի ղեկավարությամբ: Համաշխարհային ընկերակցությունը պետք է կազմված լինի Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության (ՆԵՄԵԸ) շրջանային և տեղական կազմակերպությունների անդամներից: Համաշխարհային ընկերակցությունը առաջնորդվում է Ընկերակցության Կանոնադրությամբ, և ՆԵՄԵԸ-ի ծառայության համաշխարհային ծրագրով,

հաստատված Գլխավոր Ասամբլեյի կողմից:

343.1. Համաշխարհային կոնվենցիան հավաքվում է 4 տարին մեկ անգամ, այն ժամանակ, որը կորոշի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը խորհրդակցելով Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության Խորհրդի հետ: Համաշխարհային կոնվենցիայի կազմը որոշվում է համապատասխան ՆԵՄԵԸ-ի ծառայության համաշխարհային ծրագրի: (810)

343.2. Կոնվենցիան ընտրում է Գլոբալ ՆԵՄԵԸ-ի Խորհրդի նախագահ: Գլոբալ ՆԵՄԵԸ-ի Խորհուրդի փոխնախագահը ընտրվում է Գլոբալ ՆԵՄԵԸ-ի Գլոբալ Խորհրդի կողմից, առաջին հանդիպման ընթացքում կամ հաջորդ Գլխավոր Ասամբլեային: Գլոբալ ՆԵՄԵԸ-ի Խորհրդի նախագահը և փոխնախագահը ի պաշտոնե հանդիսանում են Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության անդամ և ծառայում են առանց աշխատավարձի:

343.3. ՆԵՄԵԸ-ի համաշխարհային Խորհուրդը պետք է բաղկացած լինի նախագահից, փոխնախագահից և, համաձայն ՆԵՄԵԸ-ի ծառայության Գլոբալ Ծրագրի, ամեն տարածաշրջանից՝ մեկ ներկայացուցիչ: Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցության տնօրենը ի պաշտոնե Խորհրդի անդամ է: Խորհուրդը Համաշխարհային Միսիայի Հանձնաժողովի միջոցով, հաշվետու է Գլխավոր Խորհրդին, և ՆԵՄԵԸ-ի համար լիազորված գլխավոր սուպերինտենդենտին: Նա վարում է իր գործունեությունը, համապատասխան Ընկերակցության Կանոնադրության և ՆԵՄԵԸ-ի ծառայության համաշխարհային ծրագրի: ՆԵՄԵԸ-ի Համաշխարհային Խորհրդի անդամները պաշտոնավարում են մինչև հաջորդ Գլխավոր Ասամբլեայի վերջին նիստի փակումը և մինչև կընտրվեն և վերջնականապես կհաստատվեն նրանց փոխարինողները: (810)

343.4. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցությունը(ՆԵՄԵԸ), ներկայացվում է Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդին Գլոբալ ՆԵՄԵԸ Խորհրդի Նախագահով՝ ընտրված Գլխավոր Ասամբլեայում, որի թեկնածությունը առաջադրված է ՆԵՄԵԸ Գլոբալ Խորհրդի կողմից: (332.4, 333.3)

343.5. Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Ընկերակցությունը Գլխավոր Ասամբլեայում պետք է ներկայացված լինի Գլոբալ ՆԵՄԵԸ-ի Խորհրդի նախագահով, ում պաշտոնավարման ժամկետը վերջանում է: (301)

Մ. Գլոբալ Նազովրեցու Համաշխարհային Միսիաների Գլոբալ Խորհուրդ

344. Գլոբալ Նազովրեցու Համաշխարհային Միսիայի Գլոբալ Խորհուրդը բաղկացած է գլխավոր նախագահից, գլխավոր տնօրենից, անդամների համապատասխան թվից, որոնք ընտրվել և նշանակվել են համապատասխան Գլոբալ ՆՀՄ-ի Սահմանադրությանը:

34.14. Գլոբալ Խորհուրդը կառավարում է համապատասխան ՆՀՄ-ի Սահմանադրության: Համաշխարհային Խորհուրդը պետք է օգնի Համաշխարհային Միսիաների Գլխավոր Խորհրդի հանձնաժողովին: (811)

344.2. Գլոբալ ՆՀՄ-յի Տնօրենի Առաջադրումը և Ընտրությունը: Գլոբալ ՆՀՄ գործադիր հանձնաժողովը և իրավասու գլխավոր սուպերինտենդենտը կազմում են որոնող հանձնաժողով, գտնելու հնարավոր թեկնածուներ Գլոբալ ՆՀՄ տնօրենի պաշտոնի համար: Հնարավոր

թեկնածուների առավելագույնը երկու անուն ներկայացվում են Գլոբալ Խորհրդի Գլոբալ Միսիայի Հանձնաժողով:

Գլխավոր Խորհրդի Գլոբալ Միսիայի Հնաձնաժողովը իրավասու գլխավոր սուպերինտեն-դենտի հետ հաշվի կառնի իրենց ներկայացված անունները և կհաստատի մինչև երկու անուն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից ընտրվելու համար:

Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը քվեարկությամբ ընտրում է Գլոբալ ՆՀՄ-ի տնօրեն այն անուններից, որոնք ներկայացված են Գլոբալ Խորհրդի Գլոբալ Միսիայի Հանձնաժողովին:

Գլխավոր ՆՀՄ-ի տնօրենը, ի պաշտոնե պետք է լինի Գլոբալ Խորհրդի անդամ և Համաշխարհային Միսիայի աշխատակազմի անդամ:

344.3. Գլոբալ ՆՀՄ-ն պետք է Գլխավոր Խորհրդում ներկայցվի մեկ մարդով, ով ընտրվել է Գլխավոր Ասամբլեայի կողմից այն թեկնածուներից, ով առաջադրվել է Գլոբալ ՆՀՄ-ի Գլոբալ Խորհրդի կողմից: (332.5, 333.4)

344.4. Գլոբալ ՆՀՄ-ի նիստերը անց են կացվում 4 տարին մեկ անգամ, Գլխավոր Ասամբլեայի հետ միաժամանակ, մինչև նրա կանոնավոր գումարումը և գտնվում է Գլոբալ ՆՀՄ-ի Գլոբալ Խորհրդի ղեկավարության տակ: Սահմանադրությանը համապատասխան, նիստը ընտրում է Գլոբալ ՆՀՄ-ի Գլոբալ Խորհուրդը և նրա գլխավոր նախագահին, որը ի պաշտոնե հանդիսանում է նրա անդամը:

Յ. Ազգային Խորհուրդներ

345. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ, կարող են հիմնվել ազգային խորհուրդներ, որոնք աջակցում են տվյալ երկրում եկեղեցու ստրատեգիայի և միսիայի կատարմանը: Այդպիսի ազգային խորհուրդը ունի իշխանություն, որը նա ստանում է տարածաշրջանային տնօրենից և 3-րդ մակարդակի շրջանի ազգային Խորհրդատվական Խորհրդից/ներից, խորհրդակցելով այդ տարածաշրջանի լիազորված գլխավոր սուպերինտենդենտի և այդ երկրի շրջանների հետ, որպեսզի գործեն եկեղեցու անունով և համապատասխան տարածաշրջանային ռազմավարության: Եթե տարածաշրջանային տնօրենը անհրաժեշտ համարի, խորհրդակցելով այդ տարածաշրջանի լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ, ազգային խորհուրդը այդ երկրում կարող է դառնալ իրավաբանորեն գրանցված Նազովրեցու Եկեղեցի: Եթե այլևս անհրաժեշտություն չկա իրավաբանական պահանջների կամ միսիայի կատարման համար, ապա ազգային խորհուրդը կարող է արձակվել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր ազգային խորհրդի կառուցվածքը և անդամությունը, պետք է անհրաժեշտ ձևով հաստատվի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

Այդպիսի խորհուրդների կանոնադրության և գրանցման կրկնօրինակը պահպանության համար, անմիջապես փոխանցվում է գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը պահպանում է նաև կանոնադրության մեջ արված բոլոր փոփոխությունները: Ազգային խորհրդի ցանկացած գործնական գործունեություն, պետք է հաստատվի տարածաշրջանային տնօրենի կողմից: Ազգային խորհրդի տարեկան և հատուկ նիստերի հաշվետվությունները, պետք է ներկայացվեն Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդին, որը հաստատում կամ մերժում է արձանագրության դրույթները, որից հետո արձանագրությունը ուղարկվում է գլխավոր քարտուղարին, ծանոթանալու և հաստատվելու Գլխավոր խորհրդի կողմից:(32.5)

Ն. Տարածաշրջան

346. Կազմակերպումը և նպատակը: Ամբողջ աշխարհում, եկեղեցու աճի հետևանքով, որոշակի աշխարհագրական շրջաններում ձևավորվեցին մի քանի շրջանների միավորումներ, որոնք անվանվեցին տարածաշրջաններ: Շրջանների հավաքածուն, որը հաշվետու է Նազովրեցու Եկեղեցու գլխավոր կառավարմանը և ունի ընդհանուր մշակութային և տեղական հատկանիշներ, Գլխավոր Խորհրդի գործողությամբ և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ կարող են ձևավորվել, որպես վարչական տարածաշրջաններ:

346.1. Տարածաշրջանային քաղաքականությունը: Համաձայն կազմակերպման ոչ սիմետրիկ մոտեցմանը, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը խորհրդակցելով Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, հաստատում է տարածաշրջանների վարչական սահմանները երկրագնդի տարբեր կետերում, համապատասխան հատուկ կարիքների, պոտենցիալ բարդությունների, ստեղծված պայմանների, տարբեր մշակույթների և կրթական ավանդույթների: Այսպիսի իրավիճակներում, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը հաստատում է գործունեության ծրագիր, որը հաստատուն պահպանում է եկեղեցու այն սկզբունքները և կանոնները, որոնք նրա վարդապետությունների անբաժանելի մասնիկն են կազմում, ներառյալ Հավատքի Դրույթները, հավատարմություն սրբության վարդապետությանը և սրբության կյանքին, և միսիոներական գործունեության ծավալուն աջակցություն:

346.2. Պարտականությունները: Տարածաշրջանների գլխավոր պարտականությունները:

1. Կատարել Նազովրեցու Եկեղեցու միսիան նոր շրջաններում, տարածաշրջաններում և եկեղեցու հաստատություններում:
2. Տարածաշրջանում զարգացնել փոխըմբռնումներ, շփում, ռազմավարություններ և հնարավորություններ Մեծ Պատվիրանի կատարման համար, պարբերաբար անցկացնել հանդիպումներ շրջանի ներկայացուցիչների և եկեղեցու հաստատությունների միջև զարգացնելու ծրագրեր, աղոթելու, շփվելու և ոգեշնչվելու համար:
3. Առաջադրել թեկնածուներ Գլխավոր Ասամբլեայի և Գլխավոր/Համաշխարհային կոնվեն-ցիաներին, Գլխավոր Խորհուրդ ընտրվելու համար:
4. Համաձայն *Ուղեցույցի* դրույթների, հիմնել և աջակցել դպրոցներին և քոլեջներին, ինչպես նաև եկեղեցու այլ հաստատություններին:
5. Տարածաշրջանից անցկացնել միսիոներների թեկնածուների հավաքագրում և ստուգում համաձայն պ.346.3–ի լիազորությունների:
6. Ծրագրավորել Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի ժողովներ և տարածա-շրջանային կոնֆերանսներ:
7. Օգնել Ազգային Խորհուրդներին, ինչպես նախատեսված է պարագրաֆներ 345 և 346.3-ի:

346.3. Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդ (ՏԽԽ): Տարածաշրջանը կարող է ունենալ Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդ, որը օգնում է տարածաշրջանային տնօրենին մշակելու տարածաշրջանային ռազմավարություն, ստուգում և երաշխավորում է հաստատելու կամ մերժելու ազգային խորհուրդների ժողովների արձանագրությունները, մինչև այն կհանձնվի գլխավոր քարտուղարին, անցկացնել հարցազրույցներ միսիոներական աշխատանքի համար ընտրված թեկնածուների հետ, գլոբալ նշանակման համար երաշխավորություն տալու Գլխավոր Խորհրդին, և ստանում է տարածաշրջանային տնօրենի, ռազմավարության համակարգողների, շրջանային միությունների, և եկեղեցու տարբեր ծառայությունների համակարգողների հաշվետվությունները:

Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի (ՏԽԽ) անդամների քանակը պետք է

այնպես ձևավորվի, որ այն համապատասխանի առանձին տարածաշրջանների պահանջներին, զարգացմանը և կարիքներին: Տարածաշրջանային տնօրենը երաշխավորում է խորհրդի անդամների թիվը, Համաշխարհային Միսիայի Բաժնի տնօրենին և լիազորված գլխավոր սուպերինտենդենտին հաստատելու համար: Ի պաշտոնե ՏԽԽ-ի անդամներն են. լիազորված գլխավոր սուպերինտենդենտը, Համաշխարհային Միսիայի Բաժնի տնօրենը, տարածաշրջանային տնօրենը, որը նաև կատարում է նախագահի ֆունկցիաները: Անձնակազմը, որը հաշվետու է Գլոբալ Միսիային չի կարող լինել ՏԽԽ-ի ընտրության համար թեկնածու, բայց կարող է ծառայել, որպես լրացուցիչ ծառայող: ՏԽԽ-ի անդամները ընտրվում են Գլխավոր Ասամբլեայի գաղտնի քվեարկությամբ, համաձայն վերը նշված անդամների համաձայնությամբ: Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդը ինքն է լրացնում թափուր տեղերը, որոնք առաջանում են Գլխավոր Ասամբլեաների նիստերի ընդմիջումների ժամանակ:

Խորհրդակցելով ՏԽԽ-ի հետ, տարածաշրջանային տնօրենը, անհրաժեշտությունից ելնելով, կարող է կանչել տարածաշրջանային կոնֆերանս կամ տարածաշրջանային ավետարանչական ժողով: (32.5)

346.4 Տարածաշրջանային տնօրեն: Տարածաշրջաններում, որտեղ անհրաժեշտություն կա Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը ընտրում է տարածաշրջանի տնօրենի, խորհրդակցելով Համաշխարհային Միսիայի տնօրենի հետ և վավերացնելով Գլխավոր Խորհրդի միջոցով, որպեսզի տնօրենը աշխատի համաձայն Նազովրեցու Եկեղեցու քաղաքականությամբ և պրակտիկայով, ղեկավարելու տարածաշրջանը, եկեղեցիները և տվյալ շրջանի հաստատությունները, կատարելու եկեղեցու միսիան, ստրատեգիան և ծրագրերը:

Տարածաշրջանային տնօրենի վերընտրվելուց առաջ, պետք է անցկացվի ստուգում Համաշխարհային Միսիայի տնօրենի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից, խորհրդակցելով Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ: Ստուգման դրական արդյունքը կարող է վերընտրության համար հիմք հանդիսանա:

Յուրաքանչյուր տարածաշրջանային տնօրեն, կրում է վարչական պատասխանատվություն Համաշխարհային Միսիայի և Գլխավոր Խորհրդի առաջ, իսկ իրավաբանական հարցերով հաշվետու է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին:

346.5 Շրջանային միությունների Ռազմավարության Համակարգող: Եթե տարածաշրջանային տնօրենը հարկ համարի կարող է տարածաշրջանում ստեղծել շրջանային միավորումների կառույցներ և հանձնարարել Համաշխարհային Միսիայի տնօրենին նշանակելու Ռազմավարության Համակարգողների համաձայն Համաշխարհային Միսիայի Կանոնների և Արարողակարգերի Ուղեցույցի: Ռազմավարության Համակարգողները հաշվետու են տարածաշրջանային տնօրենին:

346.6 Կրթության Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդը: Կրթության Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհուրդը (ԿՏԽԽ) պետք է բաղկացած լինի կրթության տարածաշրջանային համակարգողից, որը կարող է լինել հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև ներկայացուցիչներ, որոնք ընտրվել են տարածաշրջանային տնօրենի հետ հարցազրույցից հետո: ԿՏԽԽ-ի անդամները տարածաշրջանի համար պետք է ներկայացնեն բոլոր կրթությամբ հետաքրքրված ծառայողներին (հովիվներ, ադմինիստրա- տորներ, ուսուցիչներ և այցելուներ):

346.7 Կրթության Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի պարտակա- նությունները: ԿՏԽԽ-ի ուղիղ պարտականություններն են.

1. Մշակել տարածաշրջանային *Ձեռնադրման Տեղեկատու*, որտեղ նշված է տարածաշրջանում ձեռնադրման մինիմալ կրթական ստանդարտները: *Ձեռնադրման Տեղեկատուն* պետք է արտացոլի մինիմալ ստանդարտները, որոնք հաստատված են

Ուղեցույցում և Ձեռնադրության համար Զարգացող Ստանդարտների Համաշխարհային Տեղեկատու:

2. Մշակել արարողակարգեր տարածաշրջանում հաստատելու կրթական ծրագրեր տեղի ծառայողների համար, որպեսզի համոզվելու, որ ծրագրերը համապատասխանում են ԿՏԽԽ-ի և ԿՏԽԽՀՏ-ի տարածաշրջանային մինմալ պայմաններին:

3. Համագործակցելով տարածաշրջանային ներկայացուցիչների հետ, տեղափոխել այդ ստանդարտները ծառայողների համար կրթական ծրագրերի մեջ:

4. Բերել ծառայողների համար կրթական ծրագրերը տարածաշրջանային Տեղեկատուի և Միջազգային տեղեկատուի ստանդարտներին հավասար:

5. Տարածաշրջանային կրթական ծրագրերը տալ Միջազգային Կրթության Խորհրդատվական Հանձնաժողովին հաստատելու և աղապտացնելու համար:

ՄԱՍ V

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՔՈԼԵՋՆԵՐԸ / ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

I. Եկեղեցի և Քոլեջ / Համալսարան

400. Նազովրեցու Եկեղեցին իր ծառայության հենց սկզբից, իրեն նվիրել է բարձրագույն կրթությանը: Եկեղեցին քոլեջներին և համալսարաններին տրամադրում է ուսանողներ, ամինիստրատորներ, դասախոսներ, ինչպես նաև տալիս է ֆինանսական և հոգեբանական աջակցություն: Քոլեջները և համալսարանները կրթություն են տալիս եկեղեցու երիտասարդներին և շատ մեծահասակների ուղղում են նրանց ձեռք բերելու հոգևոր հասունություն, որը հարստացնում է եկեղեցին և աշխարհ է բերում մտածող և Տիրոջը սիրող ծառաներ: Եկեղեցական քոլեջները և համալսարանները տեղական համայնքներ չեն, բայց նրանք եկեղեցու անբաժանելի մասն են:

Նազովրեցու Եկեղեցին հավատում է մարդկային կյանքի արժեքավորության և արժանապատվությանը, ինչպես նաև միջավայր տրամադրելու անհրաժեշտությանը, որտեղ մարդիկ ստանում են քավություն, կհարստանան հոգևոր, մտավոր և ֆիզիկական, կլինեն «սրբագործված, Տիրոջն օգտակար, ամեն բարի գործերի համար» (2 Տիմ 2:21): Տեղական եկեղեցու հիմնական խնդիրներն ու նրա գործունեության ավանդական արտահայտություններն են՝ ավետարանչությունը, քրիստոնեական կրթությունը, գթասրտության ծառայությունը և Տիրոջ երկրպագությունը, որոնք արտահայտում են եկեղեցու սերը առ Աստված և հոգատարությունը մարդկանց նկատմամբ:

Տեղական մակարդակում քրիստոնեական կրթությունը, որը ընդգրկում է երիտասարդությանը և մեծահասակներին, որոնք գտնվում են տարբեր հոգևոր հասունացման էտապներում, ուժեղացնում է ավետարանական լուրի գործունակությունը: Համայնքները իրենց ծառայության մեջ, կարող են ընդգրկել տարբեր շաբաթական կրթական ծրագրեր՝ մանուկների համար նախատեսված նախապատրաստական ծրագրերից մինչև միջնակարգ կրթության ծրագրեր: Ընդհանուր մակարդակով, եկեղեցին առաջարկում է բարձրագույն կրթության պատմական ավանդությունը և ծառայողների պատրաստումը: Որտեղ էլ որ լինեն Նազովրեցու Եկեղեցու կրթական հաստատությունները, նրանք շարունակում են եկեղեցու աստվածաբանական ավանդությունները, որոնք սահմանված են Գլխավոր Ասամբլեայի կողմից և ներկայացված *Ուղեցույցում*:

400.1. Կրթության միսիայի կանոնակարգեր: Նազովրեցու Եկեղեցու կրթությունը հիմնված է Վեսլիական սրբության շարժի սկզբունքների վրա, հաշվետու է հարանվանության կողմից հաստատված միսիային, նպատակ ունի ղեկավարելու նրանց, ով ձգտում է դեպի իրեն ընդունելու, աջակցելու և արտահայտելու ծառայությունը եկեղեցուն և աշխարհին, հետևողական և ամբողջական քրիստոնեական հասկացողությամբ, անձնական և հասարակական կյանքում: Ավելին, բարձրագույն կրթության նմանատիպ հաստատությունները կներկայացնեն ծրագիր, կրթության որակ և ակադեմիական ձեռքբերումների հաստատություն, որը կօգնի ավարտական ուսանողների բարեհաջող նախապատրաստմանը, նրանց ընտրած մասնագիտություններում և աշխատանքում:

400.2. Գիտական կոչումներ տվող կրթական հաստատություններ հիմնելու համար, անհրաժեշտ է Կրթության Միջազգային Խորհրդի երաշխավորությամբ Գլխավոր Ասամբլեայի թույլտվությունը: Գոյություն ունեցող կրթական հաստատությունների կարգավիճակը զարգացնելու կամ փոփոխելու կարգադրություն կարող է տալ Գլխավոր Ասամբլեան, Կրթության

Միջազգային Խորհրդի երաշխավորությամբ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ ծառայողներ պատրաստող հաստատությունները, Նազովրեցու Եկեղեցու անունից, չեն կարող հիմնադրվել կամ ֆինանսավորվել տեղական եկեղեցու կամ եկեղեցիների կարգադրությամբ, առանց Կրթության Միջազգային Խորհրդի երաշխավորության:

II. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ:

401. Նազովրեցու Եկեղեցու Կրթության Համաշխարհային Կոնսորցիումի կազմը, բաղկացած է Կրթության Միջազգային Խորհրդի կազմի մեջ մտնող ուսումնական հաստատությունների նախագահները, ռեկտորները կամ տնօրենները (կամ նշանակված ներկայացուցիչները), կրթության տարածաշրջանային համակարգողները, կրթության հանձնակատարները, Գլոբալ Միսիայի տնօրենը, Կրթության Միջազգային Խորհրդի համար լիազորված գլխավոր սուպերինտենդենտից:

III. Կրթության Միջազգային Խորհուրդ

402. Կրթության Միջազգային Խորհուրդը պաշտպանում է Նազովրեցու Եկեղեցու կրթական հասատատությունների հետաքրքրությունները:

Այդ խորհուրդը, պետք է կազմված լինի 12 անդամներից: Նրանցից 8-ը ընտրվում են Գլխավոր Խորհրդի կողմից, զումարած նրանք ովքեր, ի պաշտոնե հանդիսանում են խորհրդի անդամ, երկու ներկայացուցիչ Գլխավոր Խորհրդի կրթության ոլորտից, Գլոբալ Միսիայի տնօրենը, Հոգևորականության Ծառայության բաժնի տնօրենը և կրթության համար համար լիազորված գլխավոր սուպերինտենդենտից: Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովը, որը բաղկացած է կրթության տարածաշրջանային համակարգողից, Գլոբալ Միսիայի տնօրենից, երկու ներկայացուցիչներ Գլխավոր Խորհրդի կրթության ոլորտից և գլխավոր սուպերինտենդենտներից, որոնք պատասխանատու են Կրթության Միջազգային Խորհրդի համար, Գլխավոր Խորհրդում ընտրության համար, առաջադրում է 8 թեկնածուներ, հաստատված Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Ամբողջ եկեղեցում ներկայացուցիչներ ապահովելու համար, Թեկնածուներ Առաջադրող Հանձնաժողովը թեկնածուներին ներկայացնում է հետևյալ կերպ՝ թեկնածուներից մեկը պետք է լինի տարաշրջանային կրթական համակարգողը, 3-ը պետք է լինեն այցելուներից, և 2 թեկնածուները պետք է լինեն ձեռնադրված նշանակված ծառայողներ, Գլոբալ Միսիայի 3 տարածաշրջաններից, որոնցից երբևէ չի առաջադրվել տարաշրջանային կրթական համակարգողի թեկնածություն, երկուսը պետք է լինեն ընդհանուր թեկնածուներ:

Գլոբալ Միսիայի յուրաքանչյուր տարածաշրջան, ունի մեկից ոչ ավել ԿՄԽ-ի անդամ այնքան ժամանակ մինչև ամեն տարածաշրջանից չեն ընտրվի ներկայացուցիչներ:

Թեկնածուների առաջադրման և ընտրության ընթացքում, անհրաժեշտ է ապահովել այն մարդկանց ընտրությունը, ովքեր ունեն տարբեր մշակույթներում ծառայելու/դասավանդելու փորձ:

Կրթության Միջազգային Խորհուրդի ֆունկցիաները.

402.1. Ապահովել կրթական հաստատությունների հսկողությունը համապատասխան կառավարողներով, ում սահմանդարությունները և կանոնները պետք է համապասխանեն

նրանց հաստատությունների կանոնադրություններին, ինչպես նաև Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի հաստատած կանոններին:

402.2. Ապահովել կառավարման անդամների կարգավիճակի մոնիտորինգը, ովքեր գերազանց հեղինակությամբ պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու հավատարիմ անդամներ:Նրանք պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու Հավատքի Դրույթների հետ լիովին համաձայնության մեջ, ներառյալ սրբության վարդապետությունը, ինչպես նաև այս *Ուղեցույցի* մեջ նշված եկեղեցու ավանդույթները և սովորությունները: Ինչքան հնարավոր է, եկեղեցու կրթական հաստատությունների կառավարական խորհուրդներում, պետք է լինեն հավասար քանակությամբ ծառայողներ և այցելուներ:

402.3.Կրթության համար ընդունել ֆինանսական միջոցներ, զոհաբերություններից և մահվան կտակներից, ինչպես նաև հաստատություններին, այդ միջոցների տարեկան բաշխումը համաձայն Գլխավոր Խորհրդի քաղաքականության: Ինստիտուտները ստանում են շարունակական ֆինանսական աջակցություն, եթե նրանք ներկայացնում են կազմակերպչական ծրագրեր, ֆինանսական հավետվություններ, ակադեմիական պահանջներ և կրթական ծրագրեր Կրթության Միջազգային Խորհրդին:

402.4. Ստանալ և քննել տարածաշրջանային համակարգողի կողմից ներկայացրած տարեկան հաշվետվություն, որը պարունակում է կարճ ներկայացված ինֆորմացիա, ստացված ԿՄԽ-ի կազմի մեջ մտնող բոլոր հաստատություններից: Հաշվետվությունը պետք է ընդգրկի. (1) տարեկան վիճակագրական հաշվետվություն. (2) աուդիտի արդյունքների տարեկան հաշվետվություն (3) ներկայիս տարեկան համար ֆինանսական տարեկան բյուջե:

402.5. Ներկայացնել աջակցություն և երաշխավորություն, ինչպես նաև Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի և Գլխավոր Խորհրդի ուսումնական հաստատությունների հետաքրքրությունների պաշտպանություն, հանդիսանալով է միայն խորհրդատվական օրգան:

402.6. Ծառայել եկեղեցուն բոլոր հարցերով, որոնք վերաբերվում են Նազովրեցու Եկեղեցու կրթական հաստատություններին, որպեսզի եկեղեցու և հաստատության միջև հաստատվի ամրության կապ:

402.7. Ներկայացնել երաշխավորություններ և հարցեր Գլխավոր Հանձնաժողովին:

403. Կրթական հաստատությունների բոլոր կանոնադրությունները և ընդհանուր կանոնները պետք է ունենան լուծարման և ունեցվացքի փոխանցման հոդված, ի օգուտ Նազովրեցու Եկեղեցու, որպեսզի այն օգտագործվի կրթական նպատակներով:

ՄԱՍ VI

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՆՉԸ ԵՎ ՈՐԱԿՆԵՐԸ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԵՐԸ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

I. ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՆՉԸ ԵՎ ՈՐԱԿՆԵՐԸ

Ծանոթագրություն: Ուղեցույցի Խմբագրական Հանձնաժողովը ընդունելով պարագրաֆ 500-ի սկսվող բառերը, փորձել է օգտագործել լեզու, որը արտահայտում է այս առանձնահատկությունը: Այնուամենայնիվ, Ուղեցույցի այս բաժնում «ծառայող» բառը կվերաբերվի մարդու, ով ունի լիցենզիա կամ ձեռնադրություն, կամ հատուկ նշանակում ինչպես միսիոները:

500. Նազովրեցու Եկեղեցին ընդունում է, որ բոլոր ծառայողները կանչված են ծառայելու բոլոր մարդկանց:

Ինչպես մեր Տերը կանչեց և կարգեց 12 առաքյալներին, մենք նաև հաստատում ենք, որ Քրիստոսը որոշ տղամարդկանց և կանաց կանչում է հատուկ և հասարակական ծառայության: Երբ Եկեղեցին, լուսավորված Սուրբ Հոգով ընդունում է, որ մարդու կյանքում կա Աստվածային կանչ, ապա եկեղեցին հաստատում և աջակցում է այդ մարդու մուտքը ծառայողական կյանքի ուղի:

501. Կանանց Ծառայության Աստվածաբանությունը: Նազովրեցու Եկեղեցին աջակցում է կանանց իրավունքը օգտագործելու Աստծո տված պարգևները եկեղեցու ներսում, և հաստատում է կանանց պատմական իրավունքը լինելու ընտրված և նշանակված Նազովրեցու Եկեղեցու ղեկավար ծառայություններում, ներառյալ երեցի և սարկավագի պաշտոնում:

Քրիստոսի քավչական գործունեության նպատակն է՝ ազատել Աստծո ստեղծագործությունը մեղքի անեծքից: Ովքեր «Քրիստոսում են», նրանք նոր արարած են (2 Կորնթացիս5:17): Այս փրկագնված համայնքում, ոչ մի մարդ չպետք է իրեն համարի անարժան իր սոցիալական կարգավիճակի, ռասսայի կամ սեռի պատճառով (Գաղատացիս 3:26-28):

Ընդունելով ակնհայտ պարադոքսը, որը ստեղծվել է Պողոսի կողմից Տիմոթեսի տրված խրատով (1 Տիմոթեոս 2:11-12) և Կորնթոսին ուղղված խոսքերը (1 Կորնթացիս 14:33-34), մենք հավատում ենք, որ այս հատվածների մեկնաբանությունը ի օգուտ կանանց ծառայության սահմանափակմանը, հակասում է Աստվածաշնչի հատուկ հատվածներին, որոնք խոսում են հոգևոր առաջնորդության մեջ կանանց դերի և մասնակցության մասին (Հովել 2:28-29; Գործք2:17-18; 21:8-9, Հռովմայեցիս 16:1, 3, 7; Փիլիպեցիս 4:2-3), և ավերում են սրբության վեսլիական ավանդույթի հոգին և փորձը: Վերջ ի վերջո, դա խիստ համապատասխանում է Աստծո բնավորությանը, որը ներկայացված է Աստվածաշնչում, հատկապես ինչպիսին է Նա հայտնվել Հիսուս Քրիստոսի անձում:

502. Ձեռնադրության Աստվածաբանություն: Երբ մենք հաստատում ենք բոլոր հավատացյալների համընդհանուր քահանայական ծառայության Աստվածաշնչյան սկզբունքը, միաժամանակ մենք հավատում ենք, որ ձեռնադրությունը արտացոլում է Աստվածաշնչյան հավատալիքը այն մասին, որ Աստված կանչում և օժտում է պարգևներով որոշակի տղամարդկանց և կանանց, որպեսզի նրանք լինեն ծառայողական առաջնորդներ եկեղեցում: Ձեռնադրությունը Եկեղեցու հաստատող և լիազորող գործողություն է, որը ընդունում և աջակցում է Աստծո կանչով կանչված ծառայողներին լինելու առաջնորդներ և նրանց, ովքեր հռչակում են Ավետարանը Հիսուս Քրիստոսի Եկեղեցում: Հետևաբար ձեռնադրությունը վկայում է համաշխարհային եկեղեցուն և աշխարհին այն մասին, որ այդ թեկնածուները ապրում են օրինակելի սրբության կյանքով, հասարակական ծառայության համար օժտված են պարգևներով և շնորհքով, ցուցադրել են գիտելիքների հանդեպ ծարավ, և հատկապես ճանաչելու Աստծո Խոսքը, և ունակություն ունեն փոխանցելու առողջ վարդապետությունը:

(Գործք 13:1-3, 20:28; Հռովմ. 1:1-2; 1 Տիմ. 4:11-16; 5:22; 2 Տիմ.1:6-7)

502.1 Նազովրեցու Եկեղեցին մեծամասամբ կախված է իր ծառայողների ապրելակերպից և հոգևոր որակներից: (538.17)

502.2. Ավետարանի և Նազովրեցու Եկեղեցու ծառայողը պետք է աշխարհում լինի Աստծո հետ, Հիսուս Քրիստոսի միջոցով և պետք է լիովին սրբագործված լինի Սուրբ Հոգու մկրտությամբ, կամ լցված լինի Սուրբ հոգով: Ծառայողը պետք է սեր ունենա անհավատների նկատմամբ, և հավատք, որ նրանք կործանվում են և Աստծուց կանչ ավետարանելու նրանց փրկության լուրը:

502.3. Քրիստոսի ծառայողները, ամեն ինչով պետք է օրինակ լինեն համայնքի համար, ճշտապահ, ողջամիտ, ջանացող, լուրջ, «սրբությունով, գիտությունով, երկայնամտությունով, քաղցրությունով, Սուրբ Հոգով, անկեղծ սիրով, ճշմարտության խոսքով, Աստծո զորությունով» (2 Կոր. 6:6-7):

502.4. Ծառայողը նաև պետք է համոզմունք ունենա, որ քրիստոնյաները պետք է կատարելության հասնեն և առօրյա կյանքում զարգացնեն քրիստոնեական առաքինությունները, որպեսզի նրանց կյանքում «սերը ավելի ու ավելի հարստանա գիտությունով և ամեն հասկացողությունով» (Փիլիպեցիս 1:9): Նազովրեցու Եկեղեցու ծառայողը պետք է հաստատ բռնի փրկությունը և քրիստոնեական էթիկան:

502.5. Ծառայողը պետք է օգտագործի հնարավորությունները, որպեսզի հորդորի ապագա ծառայողներին, շնորհալիներին օգնել բացահայտելու իրենց ծառայողական պարգևները աջակցել նրանց, ովքեր քրիստոնեական ծառայության համար զգում են Աստծո կանչը:

502.6. Այդ աշխատանքի համար, ծառայողը պետք է ունենա պարգևներ և առաքինություններ: Նրանք պետք է ունենան գիտելիքի ծարավ, հատկապես Աստծո Խոսքի գիտություն, պետք է ունենան պարզ դատողություն, խոհեմություն, Սուրբ Գրքում բացված փրկության և քավության մասին հստակ հասկացողություն: Նրանց ծառայության շնորհիվ, հավատացյալ սրբերը շինություն կստանան, իսկ մեղավորները դարձի կգան: Ավետարանի և Նազովրեցու Եկեղեցու ծառայողը, պետք է օրինակ լինի իր աղոթքի կյանքով:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Ա. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

503. Բոլոր քրիստոնյաները իրենց պետք է համարեն Քրիստոսի ծառայողներ և փնտրեն Աստծո կամքը, թե նրանք ինչպես կարող են ծառայել: (500)

503.1. Նազովրեցու Եկեղեցին ընդունում է այցելուների ծառայությունը: Այն նաև ընդունում է, որ այցելուները եկեղեցում կարող են ծառայել տարբեր կարողություններով (Եփեսեցիս 4:11-12): Եկեղեցին ընդունում է ծառայության հետևյալ կարգերը որում շրջանային ասամբլեան կարող է նշանակել այցելուին որպես հովիվ, ավետարանիչ, միսիոներ, ուսուցիչ, ադմինիստրատոր, կապելլան և հատուկ ծառայող:

Որպեսզի այցելուն համապատասխանի այս կատեգորիաներին, սովորաբար անհրաժեշտ է կամ մեծապես ցանկալի է պատրաստել այդ այցելուներին: (605.3)

503.2. Այցելու Ծառայող: Նազովրեցու Եկեղեցու ցանկացած անդամ, ով կանչ է զգում եկեղեցիներ հաստատելու և ծառայելու, համատեղության հետ աշխատում է ուսուցիչ, այցելուներից ավետարանիչ, երաժշտական ավետարանիչ, ադմինիստրատոր, եկեղեցական խորհրդի անդամ, և/կամ եկեղեցում ունի այլ ծառայություն, բայց տվյալ պահին չի լսում կանչ

դառնալու ձեռնադրված ծառայող, կարող է որպես այցելու սովորել և ստանալ ծառայության վկայագիր:

503.3. Տեղական եկեղեցու եկեղեցական խորհուրդը, հովվի հավանությամբ պետք է հավաստիանա, որ այցելուներից այդ ծառայողը դարձի եկած և փրկված քրիստոնյա է, ով ներքաշված է եկեղեցու ծառայության մեջ և տեղյակ է եկեղեցական աշխատանքի մասին:

503.4. Տեղական եկեղեցու եկեղեցական խորհուրդը, կարող է յուրաքանչյուրին այցելու ծառայողի, հովվի և եկեղեցական խորհրդի քարտուղարի ստորագրությամբ, վկայագիր տալ:

503.5. Այցելուներից ծառայողի վկայագիրը ամեն տարի հովվի երաշխավորությամբ թարմացվում է եկեղեցական խորհրդի կողմից, եթե այդ ծառայողը ամենաքիչը ավարտել է «այցելուների համար ծրագրի շարունակություն» ուսումնական ծրագրի 2 առարկա: Այցելուներից ծառայողը ամեն տարի պետք է հաշվետվություն տա եկեղեցական խորհրդի առաջ:

503.6. Այցելուներից ծառայողի համար, որը ծառայում է շրջանային սուպերինտենդենտի ղեկավարության տակ և հաստատում է նոր եկեղեցիներ, կամ հովվի օգնականն է կամ ներքաշված է այլ ծառայության մեջ, ինչպես նաև սովորում է, ապա ծառայության վկայականը կարող է տրվել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, ստորագրված շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի քարտուղարի կողմից: Այդպիսի վկայագիրը, թարմացվում է ամեն տարի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, շրջանային սուպերինտենդենտի երաշխավորությամբ:

503.7. Եթե այցելուներից ծառայողը, տեղական եկեղեցուց դուրս է ծառայում և որի անդամն է նա, ապա նա պետք է լինի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ղեկավարության տակ, և պետք է ամեն տարի հաշվետու լինի նրա առաջ: Երբ այդ ծառայությունը վերջանում է, դրա մասին հաղորդում են տեղական եկեղեցուն, որի անդամն է նա հանդիսանում, որպեսզի նա կարողանա հաշվետու լինի:

503.8. Այցելուների համար նախատեսած կրթական ծրագիրը վերջացնելուց հետո, այդպիսի այցելուներից, ծառայողը պետք է շարունակի իր կրթությունը համապատասխան իր ծառայության (Տես «Այցելուների ծառայության շարունակություն» տեղեկագիրքը):

503.9. Այցելուներից ծառայողը, չի կարող անցկացնել խորհուրդներ՝ հաղորդություն և մկրտություն, ինչպես նաև, չի կարող կատարել պսակադրություն:

Բ. Հոգևորականության ծառայություն

504. Նազովրեցու Եկեղեցին քարոզի ծառայության ժամանակ, ընդունում է միայն ձեռնադրված ծառայողի հոգևոր աստիճանը: Նա նաև ընդունում է, որ հոգևորականությունը կարող է ծառայել եկեղեցու տարբեր ճյուղերում (Եփեսեցիների 4:11-12): Եկեղեցին ընդունում է ծառայության հետևյալ կարգերը, որոնցով շրջանային ասամբլեան կարող է օժտել ձեռնադրված ծառայողին, սարկավագին կամ հանգամանքներով լիցենզավորված ծառայողին. հովվի, ավետարանիչի, միսիոների, ուսուցչի, ադմինիստրատորի, կապելլանի և հատուկ ծառայության: Այս շրջանակների ծառայությունները, որակավորվում են որպես «նշանակված ծառայողներ», ընդգրկում է գործունեություն, որի համար պահանջվում է հոգևոր կրթություն, այնուհետև նվիրաբերվել հոգևոր աստիճանի: *Ձեռնադրության տեղեկատուն* ներկայացնում է ուղեցույց բոլոր ծառայողական կարգերի համար, որը օգտակար կլինի շրջանային խորհուրդներին, որոշելու նշանակված ծառայողին անհրաժեշտ որակավորումը: Միայն նշանակված ծառայողները կարող են մասնակցել շրջանային ասամբլեայում:

504.1. Որոշակի ծառայության նշանակված բոլոր ծառայողները, պետք է ուղարկեն տարեկան հաշվետվություն, նրանց նշանակող շրջանային ասամբլեա:

504.2. Որոշակի ծառայության նշանակված բոլոր ծառայողները, իրենց նշանակած շրջանից կարող են խնդրել և տարեկան ստանալ վկայագիր, որը վկայում է ծառայությունում նրանց դերի մասին, ստորագրված շրջանային սուպերինտենդենտի և քարտուղարի կողմից:

504.3. Որոշակի ծառայության նշանակված բոլոր ծառայողները, անաշխատունակության բժշկական վկայություն ստանալու դեպքում, դասվում են «անաշխատունակ նշանակված ծառայող»: Ծառայողների դերերը ցուցակում գրվում են այբենական կարգով:[3]

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԵՐԸ

505. Ծառայության դերերը հետևյալն են՝

506. Ադմինիստրատոր: Ձեռնադրված երեցը կամ սարկավագը կարող է ադմինիստրատոր լինել, եթե նա Գլխավոր Ասամբլեայի ժամանակ ընտրվել է որպես ընդհանուր եկեղեցու ծառայող, կամ եթե նա հոգևորականության ներկայացուցիչ է, ով ընդհանուր եկեղեցում աշխատանքի է ընդունվել կամ ընտրվել է: Ադմինիստրատորը նաև կարող է լինել ձեռնադրված ծառայող, ով շրջանային ասամբլեայի ժամանակ ընտրվել է շրջանային սուպերինտենդենտ, կամ հոգևորականության ներկայացուցիչ, ով շրջանում ընտրվել կամ ընդունվել է աշխատանքի, եթե այդ աշխատանքը նրա հիմնական գործունեությունն է: Նրանք նշանակված ծառայողներ են:

507. Կապելլան: Կապելլանը ձեռնադրված ծառայող է, ով զգում է Աստծո հատուկ կանչը ծառայելու որպես կապելլան արտադրողական, կրթական կամ զինվորական ծառայության ոլորտներում: Բոլոր ծառայողները, ովքեր ովքեր ձգտում են ծառայել կապելլանի պաշտոնում, պետք է հաստատվեն շրջանային սուպերինտենդենտի կողմից: Ձեռնադրված ծառայողը, ծառայելով կապելլանի պաշտոնում ով իր հիմնական ժամանակը ծախսում է իր ծառայության վրա, ու իր գլխավոր գործունեությունը միայն դա է, պետք է լինի նշանակված ծառայող, և պետք է հատուկ ուշադրություն դարձնի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հանձնարարականներին և ներկայացնի տարեկան հավետվություն Շրջանային Ասամբլեային: Կապելլանը, խորհրդակցելով պաշտոնապես կազմավորված Նազովրեցու Եկեղեցու հետ, հետաքրքրված մարդկանց կարող է առաջարկել եկեղեցու ընկերակից անդամության թեկնածուի կարգավիճակ, անցկացնել խորհուրդներ, համաձայն *Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի*, կատարել հովվական ծառայություններ, մխիթարել սգավորներին, ոգևորել, հանդիմանել, մեղավորների դարձի գալու համար ճանապարհներ փնտրել, Աստծո ժողովրդին դաստիարակել հավատքի մեջ և օգնել հավատացյալների սրբագործությանը: (519, 538.9, 538.13)

508. Սարկավագուհի: Նազովրեցու Եկեղեցու անդամ կինը, ով հավատում է, որ Աստված իրեն ուղղորդում է ծառայելու կարիքավորին, մխիթարել սգավորներին, կատարել քրիստոնեական բարեգործություններ և ով իր կյանքով վկայել է իր ունակությունների՝ գթասրտության ու համապատասխանության մասին, և ով մինչև 1985 թվականը ստացել է վկայագիր կամ ձեռնադրվել է սարկավագուհու հոգևոր աստիճանում, կարող է շարունակել իր ծառայությունը: Սակայն կանայք, ովքեր կանչված են ակտիվ նշանակված ծառայության, բայց քարոզելու ծառայության կանչ չունեն, պետք է կատարեն պահանջներ, որոնք անհրաժեշտ են

[3] Հայերեն լեզվով այբենական կարգը կարող է չհամընկնել:

սարկավագուհու ձեռնադրության համար: Նրանք, ովքեր ցանկանում են ստանալ բարեգործական ծառայության մանդատ, պետք է կատարեն չձեռնադրված ծառայողների համար նախատեսված պահանջները: (113.9, 503.2-503.9)

509. Ուսուցիչ: Ուսուցիչ կարող է լինել ձեռնադրված երեցը, սարկավագը կամ լիցենզավորված ծառայողը, ով աշխատում է որպես ուսուցիչ և Նազովրեցու Եկեղեցու կրթական հաստատություններից մեկում աշխատանքի է ընդունվել, որպես ադմինիստրատոր կամ ուսուցիչ: Այդպիսի մարդկանց շրջանը սահմանում է, որպես այդ տեսակի ծառայության համար նշանակված ուսուցիչների:

510. Ավետարանիչ: Ձեռնադրված երեցներից կամ լիցենզավորված ծառայողներից ավետարանիչը նա է, ով ճանապարհորդությունների մեջ նվիրված է Ավետարանի քարոզչության ծառայությանը, եկեղեցուց լիազորված է անցկացնելու հավատքի վերածննդի ծառայություններ, քարոզել Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Նազովրեցու Եկեղեցին ընդունում է ավետարանչական ծառայության 3 մակարդակներ՝ գրանցված ավետարանիչ, նշանակված ավետարանիչ և հաստիքային ավետարանիչ, որոնք ծառայության են նշանակվում շրջանային ասամբլեայի կողմից: Ավետարանիչը, ով տեղական եկեղեցուց դուրս, իր ամբողջ ժամանակը ծախսում է իր ծառայության վրա, որպես իր հիմնական գործունեություն՝ եկեղեցուց կամ նրա բաժիններից ու հաստատություններից թոշակի մեջ չի գտնվում, պետք է համարվի նշանակված ծառայող:

510.1. Գրանցված ավետարանիչը, ձեռնադրված կամ լիցենզավորված ծառայող է, ով ցանկություն է հայտնել նվիրելու իրեն ավետարանչությանը: Այդպիսի գրանցումը կատարվում է մեկ տարի ժամանակով: Գրանցման թարմացումը տեղի է ունենում հաջորդ շրջանային ասամբլեայի ժամանակ, ամփոփելով մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքը:

510.2. Նշանակված ավետարանիչը ձեռնադրված երեց է, ով համապատասխանում է բոլոր պահանջներին, որոնք ներկայացվում են գրանցված ավետարանիչին ոչ պակաս, քան 2 տարիների ընթացքում: Նշանակումը օրինական է մեկ տարվա ընթացքում և կարող է թարմացվել հաջորդ շրջանային ասամբլեայի ժամանակ, եթե համապատասխանում է բոլոր պահանջներին:

510.3. Հաստիքային ավետարանիչը, ձեռնադրված երեց է, ով հաստիքը զբաղեցնելու դիմում տալու պահին, համապատասխանում է բոլոր պահանջներին, որոնք ներկայացվում են գրանցված ավետարանիչին ոչ պակաս քան չորս լրիվ տարիների ընթացքում: Նրա թեկնածությունը պետք է հաստատվի Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի, կամ Ծառայության Շրջանային Խորհուրդ և հաստատվի Աստծո Կողմից կանչված Ավետարանիչների Հանձնաժողովի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Այդ կոչումը պահպանվում է այնքան ժամանակ, մինչև ավետարանիչը համապատասխանում է նշանակված ավետարանիչի բոլոր պահանջներին, կամ մինչև նրա թոշակի անցնելը: (231.2, 536)

510.4. Շարունակական ստուգումները և ինքնագնահատումները, այնպիսիք, ինչպես հովվի և եկեղեցու հարաբերությունների գնահատումը, պետք է անցկացվեն ավետարանիչի և շրջանային սուպերինտենդենտի կողմից, 4 տարին մեկ անգամ հաստիքային ավետարանիչի պաշտոնում, ավետարանիչի ընտրությունից հետո: Շրջանային սուպերինտենդենտը պատասխանատու է այդպիսի հանդիպումների ժամանակացույցի համար: Այդ հանդիպումները պետք է անցկացվեն ավետարանիչի հետ խորհրդակցելով: Հարցազրույցից հետո, հաշվետվությունը պետք է ուղարկվի Աստծո Կողմից կանչված Ավետարանիչների Հանձնաժողովին, որպեսզի գնահատվի և հաստատվի պահանջվող որակավորումը: (211.21)

510.5. Ձեռնադրված կամ լիցենզավորված ծառայողը, կապված թոշակային ծրագրերի

եկեղեցու կամ նրա բաժինների հետ, եթե ցանկանում է ծառայել ավետարանչական ժողովներում, կամ հավատքի վերածննդի շարժման մեջ, կարող է ստանալ “թոշակառու ավետարանիչ”-ի ծառայության վկայագիր:

Այդպիսի վկայագիրը տրվում է մեկ տարի ժամանակով, շրջանային ասամբլեայի քվեարկությամբ և շրջանային սուպերինտենդենտի երաշխավորությամբ, և կարող է թարմացվել հետակա ասամբլեաների ժամանակ, մեկ տարվա ընթացքում կատարված փաստացի ավետարանչական աշխատանքի արդյունքներով:

510.6. Ձեռնադրված երեցի կամ լիցենզավորված ծառայողի թեկնածությունները, ովքեր ցանկանում են ավետարանիչ դառնալ շրջանային ասամբլեաների ընդմիջումների ժամանակահատվածում, շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ, կարող են ճանաչվել Հոգևորականության Գլխավոր Բաժնի կողմից: Պաշտոնում գրանցվելը կամ նշանակվելը, կատարվում է շրջանային ասամբլեայի համապատասխան քվեարկության միջոցով, և շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ:

510.7. Ավետարանիչի ծառայության սերտիֆիկացման արարողակարգը և ղեկավարությունը պարունակում են *Ձեռնադրության Ուղեցույցի* մեջ:

511. Քրիստոնեական կրթության ծառայող: Տեղական եկեղեցում քրիստոնեական կրթության ծրագրով աշխատող հոնորականության ներկայացուցիչը, կարող է նշանակվել որպես քրիստոնեական կրթության ծառայող:

511.1. Մինչև 1985 թ. վկայագիր ստացած կամ քրիստոնեական կրթության ոլորտում նշանակված ուսուցիչը, կարող է շարունակել իր աշխատանքը: Սակայն նրանք, ովքեր ցանկանում են սկսել աշխատել քրիստոնեական կրթության ոլորտում, պետք է կատարեն պահանջներ, որոնք առաջադրվում են սարկավագի ձեռնադրության համար, որը նրանց տալիս է իրավունք (մանդատ) կատարելու վերը նշված պարտականությունները:

512. Երաժշտական ծառայություն: Երաժշտական ծառայության մեջ կանչ զգացող Նազովրեցու Եկեղեցու անդամը, կարող է շրջանային ասամբլեայի կողմից, մեկ տարի ժամանակով և հետևյալ պայմաններով, նշանակվել որպես երաժշտության ոլորտի մեջ ծառայող.

1) այդպիսի ծառայողը, նշանակված եղել է տեղական եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամն է նա,

2) վկայություններ կան պարգևների, պիտանիության և շնորհքի մասին,

3) ունի մեկ տարուց ոչ պակաս, երաժշտական ծառայության փորձ,

4) մեկ տարուց ոչ պակաս, ստացել է վոկալի դասեր հավաստագիր ունեցող ուսուցչի մոտ, և սովորում կամ ավարտել է երաժշտական ծառայողի ուսումնական ծրագիր (կամ նրա համազորը)

5) պարբերաբար աշխատում է երաժշտական ծառայության ոլորտում:

6) բավարարում է այդ ոլորտին առաջադրվող նրա հոգևոր և ինտելեկտուալ որակավորման պահանջներին, ինչպես նաև այդ աշխատանքի համար ունի ընդհանուր պիտանիություն: Թեկնածության ուշադիր քննությունը անցկացվում է շրջանային ասամբլեայի ղեկավարության տակ, որի անդամն է թեկնածուն: (205.10)

512.1. Միայն նրանք, ովքեր մշտապես զբաղված են երաժշտական ծառայության մեջ և այն համարում են իրենց գլխավոր աշխատանքը, ինչպես նաև ծառայության համար մանդատ ունեն, կարող են համարվել նշանակված ծառայողներ:

513. Միսիոներ: Միսիոները հոգևորականության ներկայացուցիչ կամ ծառայող է այցելուներից, ով ծառայում է Գլոբալ Միսիայի վերահսկողության ներքո: Միսիոները, ով նշանակված է և ունի ծառայության մանդատ, կարող է համարվել նշանակված ծառայող:

514. Հովիվ: Հովիվը, ձեռնադրված երեց կամ լիցենզավորված ծառայող է, ով Աստծո և Նրա ժողովրդի կանչով ղեկավարում է տեղական եկեղեցին: Տեղական եկեղեցու հովիվը, նշանակված ծառայող է: (115, 213, 533.4)

515. Հովվի պարտականություններն են՝

515.1. Աղոթելը:

515.2. Խոսքի քարոզչությունը:

515.3. Սրբերին (հավատացյալներին) պատրաստել ծառայության:

515.4. Կատարել Հաղորդության և Մկրտության խորհուրդները: Հաղորդությունը պետք է իրականացվի ամանենաքիչը երեք ամիսը մեկ անգամ: Այդ խորհուրդը, որպես շնորհքի փոխանցման միջոց, հովիվները պետք է ձգտեն ավելի հաճախ կատարել: Շրջանային լիցենզավորված ծառայողը, ով չի համապատասխանում պարագրաֆ 532.7-ի պահանջներին, պետք է կազմակերպի այդ խորհրդի կատարումը ձեռնադրված ծառայողի միջոցով: Տեղական լիցենզավորված ծառայողը իրավասու չէ կատարելու Հաղորդության և Մկրտության խորհուրդը: Պետք է նաև, հոգս տանել այն մարդկանց համար, ովքեր չեն կարող տանից դուրս գալ, որպեսզի նրանք հովվի առաջնորդությամբ կարողանան մասնակցել հաղորդությանը: (531.7, 700)

515.5. Հոգ տանել մարդկանց համար այցելություններով, հատկապես հիվանդներին և կարիքավորներին:

515.6. Մխիթարել սգավորներին:

515.7. Ուղղել, հորդորել, ոգևորել, համբերատար և ջանասիրությամբ սովորեցնել:

515.8. Փնտրել մեղավորների դարձի գալը, դարձի եկածների լիակատար սրբագործումը և Աստծո ժողովրդի աճը սուրբ հավատքով: (19)

515.9. Հատուկ ուշադրություն դարձնել ամուսնական հարաբերությունների սրբությանը վերաբերվող հարցերին: Հովիվը սրբությամբ պետք է պահպանի քրիստոնեական ամուսնությունը, հատուկ ուշադրություն դարձնելով սեփական ամուսնության վրա, քարոզելով այն ամեն հնարավոր միջոցներով, ծառայելով ուրիշներին՝ամուսնության մասին հոգաբարձություններ անցկացնելով, և ամուսնական հարաբերությունների նկատմամբ հարգանք ցուցաբերելով: (538.19)

515.10. Աջակցել նրանց, ովքեր քրիստոնեական ծառայության համար կանչ են զգում, հաստատել նրանց այդ ծառայության համար, ուղղել նրանց ճանապարհը դեպի համապատասխան պատրաստություն:

515.11. Պատասխանել Աստծո և Եկեղեցու սպասումներին, հետևելով կրթության սկզբունքին, որը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: (538.18)

515.12. Աջակցել սեփական կանչը ծառայության բոլոր տարիների ընթացքում, վարել անձնական նվիրվածության կյանք, որը հագեցնում է հոգին, իսկ ով ամուսնացած է, պահպանել ընտանեական հարաբերությունների ամբողջականությունն ու կենսունակությունը:

516. Հովվի վարչական պարտականությունները.

516.1. Ընդունել տեղական եկեղեցու անդամ համաձայն 107 և 107.1 պարագրաֆների:

516.2. Հսկել տեղական եկեղեցու բոլոր բաժինները:

516.3. Նշանակել Կիրակնօրյա դպրոցի/Աստվածաշնչի դասերի/փոքր խմբերի ուսուցիչներ համաձայն պարագրաֆ 145.8:

516.4. Հավատքի համայնքին, մեկ տարվա ընթացքում կարդալ նազովրեցու Եկեղեցու Սահմանադրությունը և Քրիստոնեական Վարքի Պատվիրանները պարագրաֆներ 1-21 և 28-33, կամ Ուղեցույցի այդ բաժինը տպված ձևով բաժանել եկեղեցու անդամներին: (114)

516.5. Հետևել տեղական եկեղեցու բոլոր բաժինների վիճակագրական հաշվետվությունների

պատրաստմանը, և շրջանային քարտուղարի միջոցով ներկայացնել դրանք շրջանային ասամբլեային: (114.1)

516.6. Ղեկավարել տեղական եկեղեցու միջոցով անցկացվող ավետարանչական, կրթական, նվիրվածության և եկեղեցու աճը և գործունեությունը ընդլայնող ծրագրերը, համապատասխան շրջանի և ընդհանուր եկեղեցու եկեղեցիների զարգացման ծրագրերի և նպատակների հետ:

516.7. Եկեղեցու տարեկան ժողովին, հաշվետվություն ներկայցնել եկեղեցու և նրա բաժինների կարգավիճակի մասին, ինչպես նաև ապագա նպատակների զարգացման ծրագրերի մասին, եկեղեցու, նրա բաժինների և ծառայողների հավանությամբ, ուսումնասիրելու և/կամ ապագա ընդլայնման, աճի և պրոգրեսի իրականացման համար:

516.8. Եկեղեցու անդամին առաջադրած մեղադրանքի դեպքում, նշանակել 3 մարդուց բաղկացած հետաքննության հանձնաժողով: (605)

516.9. Հսկել, որպեսզի ժամանակին Գլխավոր Գանձապահին փոխանցվի Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդի համար, Նազովրեցու Եկեղեցու տեղական Համաշխարհային Միսիայի կողմից հավաքված միջոցները, ինչպես նաև տեղական գանձապետին ժամանակին փոխանցել այն միջոցները, որոնք հավաքվել են Շրջանային Ծառայության Ֆոնդի համար: (136.2)

516.10. Եկեղեցական խորհրդի քննարկմանը, ներկայացնել վճարովի ծառայողների ցուցակը և ղեկավարել նրանց գործունեությունը: (159.1-159.3)

516.11. Եկեղեցու քարտուղարի հետ ստորագրել բոլոր պայմանագրերը կապված անշարժ գույքի փոխանցման, գրավի, հիփոթեքի մարման, պայմանագրերի և եկեղեցու այլ պաշտոնական թղթեր, եթե եկեղեցական *Ուղեցույցով* այլ բան չի նախատեսվում: (102.3, 103-104.3)

516.12. Զգուշացնել հարևան եկեղեցու հովվին, շրջանի սահմաններում, տեղական եկեղեցու անդամներից կամ անդամության թեկնածուներից մեկի տեղափոխության դեպքում, եթե անդամի կամ թեկնածուի մասնակցությունը այդ եկեղեցում անհնար է տեղափոխության պատճառով, փոխանցելով նրա հասցեն այդ հովվին:

516.13. Եկեղեցական խորհրդի հետ միասին կազմակերպել դրամահավաք, հարանվանության բոլոր նպատակների և տեղական եկեղեցու նշված կարիքների համար, ներառյալ Ավետարանչության Համաշխարհային Ֆոնդը և շրջանային ծառայության ֆոնդերը, ինչպես նաև ցանկացած նպատակների համար, որոնք հաստատվել են շրջանային ու ազգային խորհուրդների կողմից: (32.2, 130, 153)

516.14. Անդամի խնդրանքի դեպքում, հովիվը կարող է տրամադրել անդամության տեղափոխություն, երաշխավորություն, և տվյալ եկեղեցում անդամության դադարեցման մասին նամակ: (111-111.1, 112.2, 815-818)

516.15. Հովիվը ի պաշտոնե պետք է լինի այդ եկեղեցու նախագահը, եկեղեցական խորհրդի նախագահը, ինչպես նաև բոլոր ընտրված և մշտական եկեղեցական խորհուրդների և հանձնաժողովների անդամ, որտեղ որ, նա ծառայում է: Հովվին պետք է մատչելի լինի տեղական եկեղեցու բոլոր գրառումները: (127, 145, 150, 151.1)

517. Հովիվը ձայնի իրավունք ունի առաջնորդների թեկնածուներ առաջադրելու, տեղական Նազովրեցու Եկեղեցու բոլոր բաժինների և մանկապարտեզ/դպրոցների համար:

518. Հովիվին, նրա ընտանիքի անդամներին և ընտանիքի մոտ բարեկամներին արգելված է ստեղծել ֆինանսական պարտավորություններ, ծախսել ֆոնդերը, հաշվել գումարը կամ անսահմանափակ մուտք ունենալ եկեղեցու ֆինասական հաշիվների մեջ: Եկեղեցու խորհուրդը կամ եկեղեցական ժողովը կարող է ձայների մեծամասնությամբ բացառության կարգով Շրջանային Խորհրդատվական Խորհրդից և շրջանային սուպերինտենդանտից պահանջել այդ կարգի փոփոխությունը: Եթե շրջանային սուպերինտեդենտը և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի մեծամսանությունը հաստատում է այդ բացառությունը, ապա շրջանային

սուպերինտենդենտը գրավոր ձևով հաստատում է այդ առաջարկը եկեղեցական խորհրդի քարտուղարին, ով կաձանագրի այդ որոշումը եկեղեցու արձանագրության մեջ: Մոտ ընտանիքը ընդգրկում է ամուսինը, երեխաները, եղբայրները և քույրերը կամ ծնողները: (129.1, 129.21-129.22)

519. Հովիվը պետք է հատուկ ուշադրություն դարձնի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և շրջանային սուպերինտենդենտի հետ համատեղ խորհրդին: (225.2, 538.2)

520. Եթե այլ հարանվանության լիցենզավորված կամ ձեռնադրված ծառայողը տեղական եկեղեցուն միանալու հարցում է կատարել, շրջանային ասամբլեաների գումարումների ընդմիջման ժամանակ, ապա հովիվը չի կարող այդպիսի թեկնածուին ընդունել եկեղեցու անդամ, առանց Շրջանային Խորհրդատվական Խորհրդի նախնական թույլտվության: (107, 228)

521. Իր պարտականությունները կատարելիս, հովիվը հաշվետու է շրջանային ասամբլեային, որտեղ նա ներկայացնում է տարեկան հաշվետվություն և կարճ վկայում է իր սեփական քրիստոնեական փորձի մասին: (205.3, 532.8, 538.9)

522. Հովիվը ավտոմատ դառնում է այն եկեղեցու անդամը, որը նա ղեկավարում է, եթե նրա ղեկավարության տակ կա մեկից ավել եկեղեցիներ, ապա նա ընտրում է եկեղեցի, որի անդամն է նա դառնում: (538.8)

523. Հովվական ծառայությունը ընդգրկում է եկեղեցու հովվի կամ նրա օգնականի կամ ասիստենտի ծառայությունը, քրիստոնեական ծառայության տարբեր ճյուղերում, ճանաչված ու հաստատված եկեղեցու բաժինների կողմից, որոնք ղեկավարում, աջակցում և համապատասխան պարտականությունները կատարելու համար տալիս են իրավունք և լիցենզիա: Եկեղեցում այդպիսի հովվական ծառայության համար կանչված հոգևորականության ներկայացուցիչը, կարող է համարվել կանչված ծառայող

524. Հովվի ժամանակավոր փոխարինողը: Շրջանային սուպերինտենդենտը իրավունք ունի նշանակելու հովվի փոխարինողի, ով ծառայում է հետևյալ պահանջներին համապատասխան.

1. Հովվի ժամանակավոր փոխարինողը կարող է լինել Նազովրեցու Եկեղեցու հոգևորականության ներկայացուցիչ, ով աշխատում է ինչ-որ քրիստոնեական ծառայության ոլորտում, որպես տեղական ծառայող կամ Նազովրեցու Եկեղեցու այցելուներից ծառայող, կամ ուրիշ հարանվանության պատկանող կամ տեղափոխված ծառայող:
2. Հովվի ժամանակավոր փոխարինողը, պատասխանատու է երկրպագության ծառայությունների, քարոզի, հոգաբարձության անցկացման համար, սակայն նա իրավունք չունի անցկացնել խորհուրդներ և պսակադրություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի իրավունքներ նրան տրված են այլ հիմքերով: Ժամանակավոր փոխարինողը չի կարող կատարել հովվի վարչական պարտականությունները, բացի հաշվետվությունների լրացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ նա շրջանային սուպերինտենդենտի կողմից լիազորված է այլ պարտականություններ կատարելու:
3. Հովվի ժամանակավոր փոխարինողի անդամությունը չի կարող փոխանցվել այն եկեղեցի, որտեղ նա կատարում է հովվի պարտականությունները:
4. Հովվի ժամանակավոր փոխարինողը, առանց քվեարկելու իրավունքի, դառնում է շրջանային ասամբլեայի անդամ, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամանակավոր փոխարինողը իրավունք ունի քվեարկելու այլ հիմունքներով: Հովվի ժամանակավոր փոխարինողը, շրջանային սուպերինտենդենտի կողմից ցանկացած պահի, կարող է հեռացվել կամ փոխարինվել:

525. Մայր Եկեղեցու հովիվ (ՄԵ): Երեցը կամ շրջանային լիցենզիայով ծառայողը, ով ղեկավարում է մայր եկեղեցին, պետք է լինի նշանակված ծառայող և շրջանը կարող է տալ “ՄԵ հովիվ”-ի կարգավիճակ:

526. Հովվի պարտականությունների ժամանակավոր կատարող: Երեցը կարող է շրջանային

ասամբլեայի կողմից հաստատվել, որպես շրջանի կողմից նշանակված հովվի պարտականությունների ժամանակավոր կատարող (ՇԺՆ), շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ, և կարող է ծառայել այդ որակում, երբ նրան կկանչի շրջանային սուպերինտենդենտը և եկեղեցական խորհուրդը: (212.1)

527. Երաժշտական Ծառայության Ավետարանիչ: Երաժշտական Ծառայության Ավետարանիչը, Նազովրեցու Եկեղեցու անդամ է, ով ձգտում է նվիրաբերել իր ժամանակի զգալի մասը ավետարանչությանը, ծառայելով երաժշտության միջոցով: Այն ավետարանիչը, ով անցկացնում է ակտիվ երաժշտական ծառայություններ, որպես իր գլխավոր գործունեության տեսակ, եկեղեցու կամ նրա բաժինների և հաստատությունների կողմից թոշակառու չէ, պետք է համարվի նշանակված ծառայող:

527.1. Երաժշտական ծառայության ավետարանիչների ծառայության սերտիֆիկացման արարողակարգը և ղեկավարությունը, պարունակում են *Ձեռնադրության Ուղեցույցի* մեջ:

528. Հատուկ Ծառայություն: Հոգևորականության ներկայացուցիչը, ով ակտիվ մասնակցում է ծառայության այնպիսի ոլորտներում, որը համաձայնեցված կամ նախատեսված չէ այլ տեղերում, պետք է նշանակվի հատուկ ծառայության, եթե այդ ծառայությունը հաստատվել է շրջանային ասամբլեայի կողմից: Այդ դեպքում, նա շրջանի ցուցակներում նշվում է որպես նշանակված ծառայող: Հատուկ ծառայության նշանակված մարդիկ պետք է հարաբերություններ պահպանեն Նազովրեցու Եկեղեցու հետ, և այդ հարաբերությունների մասին պետք է գրավոր ձևով տարեկան հաշվետվություն ներկայացնեն Շրջանայի Խորհրդատվական Խորհրդին և Շրջանային Մանդատայի Խորհրդին կամ Շրջանային Ծառայողական Խորհրդին:

528.1. Հոգևորականության ներկայացուցիչը, ով աշխատում է եկեղեցուն վերաբերվող կազմակերպության մեջ որպես ծառայող, Շրջանայի Խորհրդատվական Խորհրդի և շրջանային ասամբլեայի կողմից իրավիճակի ուշադիր գնահատումից հետո հաստատվել է կրթության, ավետարանչության ոլորտում, կամ միսիոներական կազմակերպությունում աշխատելու համար, որը անմիջականորեն չի վերաբերվում եկեղեցուն, նշանակվում է հատուկ ծառայության համաձայն պարագրաֆ 538.11:

IV. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. Կրթության Հիմունքները Ձեռնադրված Ծառայողների համար

529. Ծառայողների կրթությունը նախատեսված է աջակցելու Աստծուց կանչ ունեցող ծառայողներին, ում աշխատանքը անհրաժեշտ է ավետարանչական ծառայության նոր շրջաններում, սրբության լուրը տարածելու և ընդլայնելու համար: Մենք ընդունում ենք մեր առաքելության հստակ հասկացողության անհրաժեշտությունը, որը հիմնված է Եկեղեցուն տրված Քրիստոսի պատվիրանով, որն է. Մատթեոս 28:19-20 «պատրաստել Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում»: Պատրաստությունը հիմնվում է աստվածաբանական և աստվածաշնչյան բնույթ ունեցող առարկաների վրա, և նախատեսվում է Նազովրեցու Եկեղեցում ձեռնադրության համար: Շրջանի ծառայողների Մանդատային Խորհուրդը ուսանողներին բաշխում է դասընթացներով, և գնահատում է նրանց հաջողությունները կրթական ծրագրի շրջանակներում:

529.1. Նազովրեցու Եկեղեցին ամբողջ աշխարհով ներկայացնում է բազմաթիվ կրթական դասընթացներ և ծրագրեր: Ծառայության պատրաստելու համար, որոշ շրջաններում գոյություն ունեցող ռեսուրսները թույլ են տալիս մշակել մեկից ավել կրթական ծրագրեր: Ուսանողներից սպասվում է, որ նրանք կընտրեն լավագույն ծրագիրը, որը ներկայացված է շրջանում, եկեղեցու կողմից: Որոշ դեպքերում հանգամանքները ուսանողին թույլ չեն տալիս մասնակցել այդպիսի ծրագրում, և Եկեղեցին փորձում է օգտագործել ինչքան հնարավոր է ավելի բազմազան կրթական ծրագրեր, լիարժեք պատրաստելու յուրաքանչյուրին, ով Աստծուց կանչված է եկեղեցում ծառայելու: Ուսանողները կարող են անցնել հաստատված կրթական դասընթաց Ծառայողների Կրթական Շրջանային Խորհրդի ղեկավարության ներքո, կամ Նազովրեցու բարձրագույն ուսումնական հաստատության կողմից մշակված ու մատուցված ծրագիր: Հաստատված ուսումնական ծրագրի ցանկացած արտահայտում պետք է համապատասխանեն Զարգացման Համաշխարհային Տեղեկատուին, Ձեռնադրության Ստանդարտներին և շրջանային ձեռնադրության ստանդարտին: Երբ լիցենզավորված ծառայողը բարեհաջող ավարտում է համապատասխան կրթական ծրագիրը, ստանում է ավարտական վկայական: Լիցենզավորված ծառայողը պետք է ներկայացնի այդ ավարտական վկայականը Ծառայողների Կրթական Շրջանային Խորհրդին, ով պատասխանատու է երաշխավորելու Շրջանային Ասամբլեային համապատասխան կրթական ծրագրի ավարտի մասին:

529.2 Երբ լիցենզավորված ծառայողը հաջողությամբ ավարտում է համապատասխան կրթական ծրագիրը, ստանում է լիցենզավորված ծառայողի ավարտական ատեստատ: Լիցենզավորված ծառայողը ներկայացնում է ավարտական ատեստատը Շրջանային Ծառայողների Կրթական Խորհրդին, որը պատասխանատու է շրջանային ասամբլեային ներկայացնելու կրթության համապատասխան դասընթացի ավարտի մասին հանձնարա-րականը:

529.3. Ծառայողների կրթության դասընթացի ժամանակացույցի հիմնական բաժինները:

Չնայած դասընթացի ժամանակացույցը հիմնականում դիտվում են որպես ակադեմիական ծրագիր, որը ընդգրկում է առարկաների որոշակի քանակ, որոշակի բովանդակությամբ և այդ հասկացողությունը ունի ավելի լայն իմաստ: Ի լրացում ուսումնասիրվող կրթական առարկայի, կրթության լիարժեք ծրագիրը ընդգրկում է դասախոսի բնավորությունը, ուսանողի և դասախոսի հարաբերությունը, սովորողների միջավայրը և փորձը: Այնուամենայնիվ ուսանողներին կրթելու դասընթացների ժամանկացույցը ընդգրկում են առարկաների մինիմալ հավաքածու, որոնք ծառայության համար տալիս են հիմնական գիտելիքներ: Մշակութային տարբերությունները և հնարավոր ռեսուրսների անհամատեղելիությունը ծնում են տարբերություններ, կրթական ծրագրեր մշակելիս: Սակայն, կրթական բոլոր ծրագրերը, որոնք ձեռնադրության համար ապահովում են կրթական հիմք, և նրանց անհրաժեշտ է Հոգևորականության Զարգացման Բաժնի հավանությունը, պետք է ուշադրություն դարձնեն առարկաների բովանդակությանը, իրավասություն, բնավորությանը և կոնտեքստին: Հաստատված կրթական ծրագրի նպատակն է ընդգրկել այն ծրագրերը, որոնք տարբեր աստիճաններով ընդգրկում են բոլոր չորս էլեմենտները, և ծառայողներին օգտակար կլինեն Նազովրեցու Եկեղեցու միսիոներական խնդիրները կատարելիս, որը Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի համաձայնությամբ հետևյալն է.

«Նազովրեցու Եկեղեցու միսիան է. Պատրաստել Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում»:

«Նազովրեցու Եկեղեցու հինական նպատակն է տարածել Աստծո Արքայությունը քրիստոնեական սրբությունը պահպանելու և հռչակելու ճանապարհով, որը ներկայացված է Աստվածաշնչում»:

«Նազովրեցու Եկեղեցու հիմնական խնդիրն է. «քրիստոնյաների սուրբ հաղորդակցությունը,

մեղավորների դարձի գալը, հավատացյալների լիակատար սրբագործում, նրանց աճը սրբության մեջ, անքմահաճ կյանք և Նոր կտակարանային եկեղեցու հոգևոր ուժ, ինչպես նաև Ավետարանի քարոզչություն ամեն մարդու» (19):

Կրթական ծրագիրը նկարագրվում է հետևյալ կարգերով.

- **Բովանդակություն** – Հին և Նոր Ուխտերի բովանդակության գիտելիքները, քրիստոնեական հավատքի աստվածաբանությունը, եկեղեցու պատմությունը և միսիան ծառայության համար հենքային են: Առարկաները պետք է ընդգրկեն թեմաներ, որոնք կսովորեցնեն Աստվածաշնչի մեկնաբանություններ, մեր վեսլիական ավանդության մեջ սրբության վարդապետությունը, ինչպես նաև ծանոթացնել Նազովրեցու Եկեղեցու պատմության և կառավարման հետ:
- **Իրավասություն** - գրավոր և բանավոր շփման հմտություններ, կառավարման և ղեկավարման ոլորտի հմտություններ, գիտելիքներ ֆինանսների մասին, ինչպես նաև անալիտիկ մտածելակերպի զարգացումը անհրաժեշտ է ծառայության մեջ: Ի լրացում այդ առարկաներին, անհրաժեշտ է ընդգրկել այնպիսի դիսցիպլինաներ, ինչպես քարոզի կազմելը, հովվական ծառայությունը և հոգաբարձությունը, երկրպագությունը և ավետարանչությունը, քրիստոնեական կրթությունը և կառավարումը եկեղեցու մեջ: Դասընթացի ավարտը պահանջում է համագործակցություն կրթական հաստատությունների միջև, կրթական ծրագրի ներկայացնողը և տեղական եկեղեցին, ուսանողներին ուղղորդելու իրենց գործնական ծառայության մեջ և զարգացնելով նրաց արհեստավարժ կոմպետենտությունը:
- **Բնավորություն** - անձի բնավորության, էտիկայի, հոգևորության, անձնական և ընտանեական հարաբերությունների կատարելագործումը հանդիսանում են կենսականորեն անհրաժեշտ, հաջող ծառայության համար: Անհրաժեշտ է նաև ընդգրկել առարկաներ, որոնք շոշափում են քրիստոնեական էթիկայի, հոգևոր կյանքը ձևավորող, մարդկային անհատականությունը և ծառայողի բնավորությունը զարգացնող, ամուսնության և ընտանեական հարաբերությունների հարցերը:
- **Կոնտեքստ** - ծառայողը պարտավոր է հասկանալ պատմական և ժամանակակից կոնտեքստը, ինչպես նաև աշխարհայացքը, հասարակության սոցիալական և մշակութային արժեքները, որի մեջ եկեղեցին տալիս է իր վկայությունը: Դրա համար, կրթական առարկայի մեջ անհրաժեշտ է ընդգրկել առարկաներ, որոնք ուսումնասիրում են անտրապալոգիա, սոցիոլոգիա, տարբեր մշակույթների միջև շփման պրոբլեմներ, միսիոներական գործունեություն և սոցիալական կառուցվածք:

529.4. Ուրիշ կրթական հաստատություններում, ձեռնադրության համար վերցված դասընթացները, որոնք չեն վերաբերվում Նազովրեցու Եկեղեցուն, պետք է ատեստացիա անցնեն Ծառայողների Կրթության Շջանային Խորհրդում, համաձայն Ձեռնադրության Տեղեկատու-ի ուսումնական ծրագրի պահաջների, որը մշակված է համապատասխան այդ տարածաշրջանի/լեզվական խմբի:

529.5. Բոլոր դասընթացները, ակադեմիական պահանջները, պաշտոնական ադմինիստրատիվ կանոնները պետք է ընդգրկված լինեն *Ձեռնադրության Տեղեկատու*-ի մեջ, որը Հոգևորականության Ծառայության Բաժնի հետ մշակված է համապատասխան այդ տարածաշրջանի/լեզվական խմբի: Այդ տարածաշրջանային տեղեկատուն և նրա անհրաժեշտ փոփոխությունները պետք է հաստատվեն Ծառայողների Կրթության Միջազգային Խորհրդատվական Հանձնաժողովի, Գլխավոր Խորհրդի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությունը: *Ձեռնադրության Տեղեկատուն* պետք է համապատասխանի եկեղեցական Տեղեկատուին և Ձեռնադրության Զարգացման Միջազգային Ստանդարտների

Տեղեկատուին, որը հրատարակվում է Հոգևորականության Ծառայության Բաժնի, Ծառայողների Կրթության Միջազգային Խորհրդատվական Հանձնաժողովի կողմից: Վերջինս նշանակվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

529.6. Կրթության հիմնական պահանջները կատարելով, ծառայողը պետք է հետևի սկզբունքի, որի համաձայն նրա կրթությունը շարունակվում է ամբողջ կյանքում ամրապնդելու այն ծառայությունը, որի համար Աստված նրան կանչել է: Մինիմալ ակադեմիական պահանջը տարեկան 20 ակադեմիական ժամ է, կամ նրա էկվիվալենտը, հաստատված համաձայն Ձեռնադրության Տեղեկատուի ուսումնական ծրագրի պահաջների, որը մշակված է համապատասխան այդ տարածաշրջանի/լեզվական խմբի:

Բոլոր նշանակված և չնշանակված, ձեռնադրված և լիցենզավորված ծառայողները, իրենց շրջանային ասամբլեայի հաշվետվության մեջ պետք է զեկուցեն հետագա կրթական ծրագրերում իրենց առաջընթացի մասին: Եկեղեցու և հովվիհարաբերությունների գնահատման և հովվի կանչի գործընթացներում, նույնպես ընդունվում են հաշվետվություններ, հովվի հետագա կրթական ծրագրերում նրա առաջընթացի մասին: Տարածաշրջանային Ձեռնադրության Տեղեկատուն, որը մշակված է համապատասխան այդ տարածաշրջանի/լեզվական խմբի, պարունակում է ակրեդիտացիաների և հաշվետվությունների ներկայացման ձևերը:

529.7. Եթե ծառայողը այդ պահանջները 2 տարուց ավել չի կատարել, որը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում, ապա անհրաժեշտ է, որ այդ ձեռնադրված ծառայողը հանդիպի Շրջանային Ծառայողների Կրթության Խորհրդի հետ, իրենց սովորական ժողովների ժամանակ: Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդը, այդ ծառայողին պետք է խորհուրդ տա, թե ինչպես նա կարող է կատարել հետագա կյանքի կրթության պահանջները: (115, 123, 515.11, 538.18)

Բ. Ծառայողների Ձեռնադրության համար Կրթական Հիմունքների Մշակութային Ադապտացիան

530. Ձեռնադրվող ծառայողների համար Կրթական Ֆոնդի մշակութային ադապտացիան: Ամբողջ աշխարհում մշակութային կոնտեկստի տարբերությունը անհնար է դարձնում աշխարհի բոլոր երկրներում օգտագործել դասընթացների միևնույն դասացուցակը: Աշխարհի ամեն տարածաշրջան պատասխանատու է առարկաների հատուկ դասացուցակների զարգացման և կրթության պահանջների համար, որպեսզի ծառայողների համար պատրաստի կրթական բազա, որը նրացից սպասվում է այդ տարաշծաշրջանում: Շրջանում նախքան ծառայողների համար այդպիսի կրթական ծրագրի սկսվելը, պահանջվում է Համաշխարհային Կրթական Խորհրդատվական Հանձնաժողովի, Գլխավոր Խորհրդի և Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությունը: Նույնիսկ մեկ տարածաշրջանի ներսում ռեսուրսները տարբեր են, և կան տարբեր մշակութային տարբերություններ: Այդ պատճառով պետք է ցուցաբերել համբերություն և ճկունություն ծառայողների համար կրթական բազաներ պատրաստելիս, որոնք պետք է գտնվեն Ծառայողների Կրթական Շրջանային Խորհրդի ղեկավարության տակ: Ծառայողների տարածաշրջանային կրթական ծրագրերի ադապտացումը հաստատվում է Հոգևորականության Ծառայության Բաժնի և Ծառայողների Կրթության Միջազգային Խորհրդատվական Հանձնաժողովի կողմից, խորհրդակցելով տարածաշրջանի կրթական

համակարգողի հետ: (527.5)

530.1. Պահանջվող դասընթացներ, ներառյալ դասընթացներն ավարտելու անհրաժեշտ ընթացակարգեր նրանց համար, ովքեր ցանկանում են ստանալ երեցի կամ սարկավագի մանդատ, կամ այնպիսի կարգի ծառայության լիցենզիա, որը թվարկված է տարածաշրջանային *Ձեռնադրության Տեղեկատուի* մեջ:

530.2. Կրթության հաստատված բոլոր ծրագրերը, ղեկավարվում են համապատասխան տարածաշրջանային *Ձեռնադրության Տեղեկատուի* : (529.2-529.3, 529.5)

IV.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ

Ա. Տեղական ծառայող

531. Տեղական ծառայողը Նազովրեցու Եկեղեցու այցելու է և անդամ, ում տեղական եկեղեցական խորհուրդը, հովվի ղեկավարությամբ տվել է ծառայողի լիցենզիա, որպեսզի ամեն հնարավորության դեպքում բացահայտվեն, զարգանան և օգտագործվեն նրա ծառայողական պարգևները: Այժմ, նա հետևում է այն սկզբունքին, որ կրթությունը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:

531.1. Նազովրեցու Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, ով զգացել է քարոզելու կամ եկեղեցում ծառայություն ընդունելու Աստծո կանչը, կարող է ստանալ տեղական ծառայողի լիցենզիա մեկ տարի ժամանակահատվածով տեղական եկեղեցական խորհրդի կողմից, հովվի համաձայնությամբ, ով ձեռնադրված երեց է կամ տեղական եկեղեցական խորհրդի կողմից, ում հովիվը ձեռնադրված չէ, եթե լիցենզիան երաշխավորված է հովվի կողմից և հաստատված է շրջանային սուպերինտենդենտի կողմից: Մինչ լիցենզիայի տրամադրումը, պետք է թեկնածուին հարցնել նրա փրկության անձնական փորձի մասին, Աստվածաշնչի վարդապետությունների իմացության և եկեղեցու կանոնների մասին: Ծառայողը պետք է անցնի հավատարմության փորձաշրջան, որը անց է կացնում տեղական եկեղեցին: Տեղական եկեղեցու ծառայողը հաշվետվություն է ներկայացնում տեղական եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ: (113.9, 129.12, 211.12)

531.2. Եկեղեցական խորհուրդը յուրաքանչյուր տեղական ծառայողի լիցենզիա է տալիս, որը ստորագրված է հովվի և եկեղեցական խորհրդի քարտուղարի կողմից: Եթե եկեղեցում ծառայում է հովվի ժամանակավոր փոխարինող, ով չունի շրջանային լիցենզիա, նրան կարող է տրվել տեղական ծառայողի լիցենզիա կամ լիցենզիան կարող է թարմացվել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ: (211.12, 225.13)

531.3. Տեղական ծառայողի լիցենզիան կարող է թարմացվել տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, հովվի հավանությամբ, ով ձեռնադրված երեց է կամ տեղական եկեղեցական խորհրդի կողմից, ում հովիվը ձեռնադրված չէ, եթե լիցենզիան երաշխավորված է հովվի կողմից և հաստատված է շրջանային սուպերինտենդենտի կողմից: (129.12. 211.12)

531.4. Տեղական ծառայողները պետք է անցնեն պարտադիր դասընթացներ ծառայողների պատրաստման վերաբերյալ, Ծառայողների Կրթության Շրջանային Խորհրդի ղեկավարության ներքո: Տեղական լիցենզիան չի կարող թարմացվել երկու տարի անց, առանց շրջանային

սուպերինտենդենտի գրավոր հաստատման, եթե տեղական ծառայողը չի անցել ուսուցման ամենաքիչը երկու առարկա ծառայողների կրթության ծրագրից:

531.5. Տեղական ծառայողը ծառայելով իր պաշտոնում ամենաքիչը մեկ տարի և ավարտելով ուսուցումը, եկեղեցական խորհրդի կողմից կարող է երաշխավորել շրջանային ասամբլեային, որպեսզի նա ստանա շրջանային լիցենզիա: Եթե շրջանային ասամբլեան մերժի շրջանային լիցենզիայի տալը, ծառայողը պահպանում է տեղական եկեղեցու լիցենզիան: (129.12, 529, 532.1)

531.6. Հովվի ժամանակավոր փոխարինող նշանակված տեղական ծառայողը, պետք է հաստատվի Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողական Խորհրդի կողմից, եթե նա շարունակում է զբաղեցնել այդ պաշտոնը, նրա նշանակումին հետևող շրջանային ասամբլեայից հետո: (212, 231.5, 524)

531.7. Տեղական ծառայողը չի կարող անցկացնել Մկրտության և հաղորդության խորհուրդ-ներ, և չի կարող անցկացնել պաշտոնական պսակադրություն: (532.7)

Բ. Լիցենզավորված ծառայող

532. Շրջանային լիցենզիա ունեցող ծառայողը նա է, ում ծառայողական պարգևներն ու կոչումը պաշտոնապես ճանաչված է շրջանային ասամբլեայի կողմից: Շրջանային լիցենզիան ծառայողին լիազորություն է տալիս և նշանակում է ավելի բարձր և պատասխանատու դիրքի, քան տեղական ծառայողի լիցենզիան, որպես քայլ, որը տանում է երեցի կամ սարկավագի ձեռնադրությանը: Ծառայողի շրջանային լիցենզիան պետք է ընդգրկի հաստատություն այն մասին, թե ծառայողը պատրաստվում է ձեռնադրվելու երեցի կամ սարկավագի հոգևոր աստիճանի, թե՞ ոչ: (532.7)

532.1. Եթե Նազովրեցու Եկեղեցու անդամները հաստատում են ծառայության համար իրենց կանչը, նրանց կարող է տրվել շրջանային ասամբլեայի լիցենզիա հետևյալ պայմաններով:

1. Նրանք ունեցել են տեղական ծառայողի լիցենզիա մեկ տարվա ընթացքում:
2. Նրանք ավարտել են կրթական պարտադիր ծրագրի մեկ քառորդը, և հաստատված կրթական ծրագրի բարեհաջող ավարտին կարող են ցուցաբերել հարգանք, հասկանալու կարողություն, Ուղեցույցի, Նազովրեցու եկեղեցու պատմության և սրբության վարդապետության կիրառության կարողություն:
3. Նրանք երաշխավորվել են տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամներն են նրանք հանդիսանում: Այդ երաշխավորությանը պետք է կցել ուշադրությամբ լրացված «Ծառայողի Շրջանային լիցենզիա ստանալու դիմումը»:
4. Վկայություն կա, որ նրանք ունեն պարգևներ, շնորհք և ծառայության համար պիտանի են:
5. Այն շրջանում, որտեղ որ նրանք անդամակցում են շրջանային ասամբլեայի ղեկավարությամբ, ուշադրությամբ ստուգվել է նրանց ունեցած հոգևոր, ինտելեկտուալ և այլ որակները, որոնք նրանց պիտանի են դարձնում այդ ծառայության համար, ներառյալ այնպիսի ստուգումներ, որոնք պահանջվում են Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից:
6. Նրանք խոստացել են անմիջապես զբաղվել լիցենզավորված ծառայողների և թեկնածուների համար պարտադիր ուսուցման դասընթացով:
7. Ինչ-որ շրջանային ասամբլեայի կողմից նախկինում կիրառված որակազրկումը վերացվել է, տվյալ շրջանի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խարհրդատվական Խորհրդի կողմից գրված բացատրական նամակի արդյունքում, ինչպես նաև եթե նրա ընտանեական կարգավիճակը չի արգելում նրանց ձեռնադրվելու կամ շրջանում լիցենզիա ստանալ:

8. Ամուսնալուծության դեպքում, Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողական Խորհրդի երաշխավորությամբ, հաստատող փաստաթղթերը փոխանցվում են լիազորված գլխավոր սուպերինտենդենտին, որը կարող է վերցնել ձեռնադրվելու կամ լիցենզիա ստանալու այդ արգելքը:

Ծառայողը պետք է ավարտի Նազովրեցու Եկեղեցու հաստատված ծրագրի մեկ չորրորդը: Այս պահանջին որպես բացառություն կարող է անել Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը, եթե թեկնածուն կազմակերպված եկեղեցու հովիվ է, անցնում է հաստատված ծրագրով դասընթաց, ինչպես նաև ավարտում է կրթության մինիմալ ծավալը համաձայն Ուղեցույցի պահանջների, որոնք վերաբերվում են լիցենզիայի թարմացմանը, և եթե շրջանային սուպերինտենդենտը հաստատում է բացառությունը:

Այն դեպքում, եթե ստուգումը հայտնաբերում է քրեական անցյալի մինչև փրկության պահը, ապա այդ փաստը Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդի կողմից չպետք է մեկնաբանվի, որպես թեկնածուի ավտոմատ հեռացում լիցենզավորված ծառայությունից, բացառությամբ պարագրաֆ 538.9- ում նշված դեպքերի: (129.14, 207.6, 531.5)

532.2. Այլ ավետարանական հարանվանություններից լիցենզավորված ծառայողները, ովքեր ցանկանում են միանալ Նազովրեցու եկեղեցուն, կարող են ստանալ շրջանային ասամբլեայի լիցենզիա, եթե նրանք ներկայացնում են այն հարանվանության տված երաշխավորությունը, որի անդամն են նրանք եղել, ինչպես նաև.

1. Եթե նրանք ամենաքիչը անցել են Նազովրեցու Եկեղեցու տեղական ծառայողների համար հաստատված ուսումնական դասընթացների մեկ չորրորդը և հաստատված կրթական ծրագրի բարեհաջող ավարտին կարող են ցուցաբերել հարգանք, հասկանալու կարողություն, Ուղեցույցի, Նազովրեցու եկեղեցու պատմության և սրբության վարդապետության կիրառության կարողություն:
2. Նրանք երաշխավորվել են տեղական Նազովրեցու Եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամներն են նրանք այժմ:
3. Նրանք վկայել են շնորհքի, պարգևների և պիտանիության մասին:
4. Շրջանային ասամբլեայի ղեկավարությամբ, նրանք ուշադրությամբ քննվել են իրենց հոգևոր, ինտելեկտուալ, այլ որակների, որոնք նրանց պիտանի են դարձնում ծառայողի աշխատանքի համար:
5. Նրանք խոստացել են զբաղվել կրթական դասընթացով, որը պարտադիր է լիցենզավորված ծառայողների և ձեռնադրության թեկնածուների համար: (203.6)
6. Եթե նրանք որակազրկվել են իրենց շրջանային ասամբլեայի կամ դրան հավասարազոր իշխանության կողմից և այն վերացվել է, և դրա համար կա շրջանային սուպերինտենդի կամ նրան հավասարազոր ծառայողի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կամ նրան հավասարազոր խորհրդի գրավոր բացատրությունը, ով կիրառել է որակազրկումը: Ինչպես նաև նրանց ընտանեական կարգավիճակը չպետք է արգելք լինի շրջանային լիցենզիա ստանալուն:
7. Նախկին ամուսնալուծության դեպքում Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայության Ծրջանային Խորհրդի երաշխավորությամբ, հաստատող փաստաթղթերը փոխանցվում են լիազորված գլխավոր սուպերինտենդենտին, որը կարող է վերցնել ձեռնադրվելու կամ լիցենզիա ստանալու այդ արգելքը: (532.1)

532.3. Շրջանային ծառայողի լիցենզիան պետք է վերջանա հաջորդ շրջանային ասամբլեայի արձակումից հետո: Լիցենզիան կարող է թարմացվել համապատասխան ասամբլեայում, եթե.

1. Լիցենզիայի թարմացման համար թեկնածուն շրջանային ասամբլեային տալիս է ուշադրությամբ լրացված «Ծառայողի Շրջանային լիցենզիա ստանալու դիմումը»:

2. Թեկնածուն ավարտել է ամենաքիչը 2 առարկա, լիցենզավորված ծառայողի տարեկան պարտավոր ուսումնական ծրագրից:

3. Հովվի համապատասխան առաջադրությամբ, թեկնածուն երաշխավորվել է տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամն է նա հանդիսանում: Սակայն, եթե նա չի անցել պահանջված դասընթացը, շրջանային ասամբլեայի կողմից լիցենզիան կարող է թարմացվել, եթե միայն տրվում է գրավոր բացատրություն, պահանջները չկատարելու մասին: Նման բացատրագիրը պետք է բավարարի Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհուրդը կամ Ծառայության Շրջանային Խորհուրդը, և հավանություն ստանա իրավասու գլխավոր սուպերինտենդենտից, ով նախագահում է այդ ասամբլեայի ժամանակ: Շրջանային ասամբլեան ինչ-որ պատճառով և իր հայացողությամբ կարող է դեմ քվեարկել ծառայողի լիցենզիայի թարմացմանը: Լիցենզավորված ծառայողները, ովքեր ավարտել են կրթական դասընթացը և շրջանային ասամբլեայի կողմից տրվել է թոշակառուի կարգավիճակ, ստանում են իրենց լիցենզիայի թարմացումը Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ, առանց լրացնելու «Ծառայողի շրջանային լիցենզիա ստանալու դիմումը»: (205.4)

532.4. Որպեսզի ձեռնադրության համար որակավորված լինեն, թեկնածուները պետք է կրթության դասընթացները ավարտեն 10 տարիների ընթացքում, առաջին շրջանային լիցենզիայի ստանալուց հետո: Ցանկացած բացառություն, հատուկ հանգամանքների առկայության դեպքում, պետք է երաշխավորվի շրջանային ասամբլեայի ժամանակ, ներառյալ Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայության Շրջանային Խորհուրդը, կամ նշանակված ժամանակային սահմանափակումները, և ենթակա է իրավասու գլխավոր սուպերինտենդենտի հավանությանը:

Լիցենզավորված ծառայողը, ով որակազրկվել է ձեռնադրություն ստանալուց, կրթական դասընթացի պահանջները համապատասխան ժամանակում չկատարելու համար, կարող է շրջանային ծառայողի լիցենզիայի թարմացում ստանալ Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի և Շրջանային Խարհրդատվական Խորհրդի, կամ Ծառայության Շրջանային Խորհրդի, հավանությամբ:

Այդպիսի հանձնարարական տալը կախված է նրանից թե ծառայողը ավարտել է հաստատված ուսումնական դասընթացը, կամ վերջին տարվա ընթացքում ավարտել է առնվազն երկու դասընթացներ հաստատված ուսումնական դասընթացով:

532.5. Այն դեպքում, եթե լիցենզավորված ծառայողները ծառայում են որպես հովիվ, լիցենզիայի թարմացումը տրվում է Շրջանային Խարհրդատվական Խորհրդի կողմից: Այն դեպքում, եթե տեղական ծառայողը ծառայում է որպես հովիվ լիցենզիայի թարմացման երաշխավորությունը տրվում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: (225.13)

532.6. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը տալիս է լիցենզավորված ծառայողներին ծառայողի լիցենզիա, ստորագրված, լիազորված գլխավոր սուպերինտենդենտի, շրջանային սուպերինտենդենտի և շրջանային քարտուղարի կողմից:

532.7. Լիցենզավորված ծառայողները պետք է օժտված լինեն Խոսքը քարոզելու իրավունքով, և օգտագործեն իրենց պարգևները և շնորհքը տարբեր ծառայություններում, որպես Քրիստոսի Մարմնի ծառայող, և եթե նրանք ծառայում են նշանակված ծառայության մեջ, որը ճանաչված է իրենց անդամության շրջանում, ապա նրանք պետք է լիազորություններ ունենան իրենց համայնքներում անցկացնելու Մկրտության և Հաղորդության խորհուրդներ և կատարել պսակադրություններ, եթե նրանց տեղական օրենսդրությունը չի արգելում: (511-512, 515, 515.4, 523, 532.8, 533-533.2, 534-534.2, 700, 701, 705)

532.8. Բոլոր լիցենզավորված ծառայողները պետք է պահպանեն ծառայողի անդամությունը շրջանի շրջանային ասամբլեայի ժամանակ, որին պատկանում է տեղական եկեղեցին և որի անդամն են նրանք հանդիսանում, և նրանք պետք է տարեկան ասամբլեային հաշվետվություն ներկայացնեն կամ էլ ներկայացնեն թարմացման հայտ Շրջանային Ծառայողի Լիցենզիայի համար: (201, 205.3, 521)

532.9. Եթե լիցենզավորված ծառայողը դարձել է այլ հարանվանության անդամ կամ ծառայող, որը տարբերվում է Նազովրեցու Եկեղեցուց կամ մասնակցում է քրիստոնեական այլ ծառայությունների, որոնք Շրջանային Խարհրդատվական Խորհրդի կողմից հավանության չեն արժանացել, կամ առանց Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից գրավոր հաստատման, նա անմիջապես կհեռացվի ծառայությունից և Նազովրեցու Եկեղեցու անդամությունից: Շրջանային ասամբլեան արձանագրությունների մեջ կատարում է այսպիսի գրառում, «հեռացված է Նազովրեցու Եկեղեցու անդամությունից և ծառայությունից, այլ եկեղեցու, հարանվանության կամ ծառայության միանալու պատճառով»: (107, 112)

Գ. Սարկավագ

533. Սարկավագը դա ծառայող է, ում պարգևները, Աստծո կանչը, պիտանիությունը վկայվել և հաստատվել են համապատասխան կրթությամբ և փորձով: Նա Աստծուն ծառայելու համար որոշված ծառայող է, շրջանային ասամբլեայի քվեարկությամբ և ձեռնադրության արարողությամբ, և ով լիազորված է որոշակի տեսակի քրիստոնեական ծառայություններ կատարելու:

533.1. Սարկավագը չի վկայում քարոզելու հատուկ կանչի մասին: Եկեղեցին Սուրբ Գրքի հիմքի և փորձի վրա ընդունում է, որ Աստված մարդկանց կանչում է ցմահ ծառայության, որոնք չեն վկայում այդ որոշակի պարգևի առկայության մասին և հավատում է, որ սարկավագի ծառայության կանչված մարդիկ պետք է ճանաչվեն, հաստատվեն եկեղեցու կողմից և պետք է համապատասխանեն պահանջներին և օժտված լինեն եկեղեցու կողմից հիմնած պարտականություններով: Դա ծառայության մշտական հոգևոր աստիճան է:

533.2. Սարկավագը պետք է համապատասխանի հոգևոր աստիճանի պահանջներին, որոնք վերաբերվում են կրթությանը, համապատասխան պարգևներին, լինել ճանաչված և հաստատված եկեղեցու կողմից: Սարկավագը պետք է լիազորություն ունենա անցկացնել Մկրտության և Հաղորդության խորհուրդներ, և կատարել պսակադրություններ, եթե նրանց տեղական օրենսդրությունը չի արգելում, և որոշ դեպքերում կատարել երկրպագության ծառայություններ և քարոզ: Եկեղեցին ընդունում է, որ Աստված և եկեղեցին կարող են օգտագործել այդ մարդու պարգևները տարբեր օժանդակ ծառայություններում: Որպես այս աշխարհում Քրիստոսի Մարմնի ծառայության խորհրդանիշ, սարկավագը իր պարգևները կարող է օգտագործել եկեղեցուց դուրս: (515.4-515.9)

533.3. Սարկավագի թեկնածուն վկայում է, որ այդ ծառայությանը նա կանչված է Աստծո կողմից: Այդ թեկնածուն ունի շրջանային լիցենզիա, և նա ունեցել է այդ լիցենզիան ամենաքիչը վերջին երեք տարին: Թեկնածուն երաշավորված է թարմացնելու իր լիցենզիան տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամն է նա, կամ Շրջանային Խարհրդատվական Խորհրդի կողմից: Այնուհետև թեկնածուն.

1. Ծառայության վերաբերյալ կատարել է եկեղեցու բոլոր պահանջները,

2. հաջողությամբ ավարտել է լիցենզավորված ծառայողների և սարկավագության թեկնածուների համար կրթության ամբողջ դասընթացը,

3. թեկնածությունը ուշադրությամբ քննվել և հաստատվել է Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի Ծառայողների Շրջանային Խորհրդի կողմից և համապատասխան

երաշխավորությունը փոխանցվել է շրջանային ասամբլեային:

Այդպիսի թեկնածուն կարող է ընտրվել սարկավագի ձեռնադրության համար շրջանային ասամբլեայի ձայների երկու երրորդով, այն պայմանով, որ նա նշանակված ծառայող լինի վերջի երեք տարիների ընթացքում, և տվյալ պահին կատարում է իր պարտականությունները նշանակված ծառայության մեջ: Այն դեպքում, եթե թեկնածուն ծառայության մեջ մասնակիորեն է եղել ներքաշված, որպես հովվի օգնական կամ ասիստենտ, ապա նրա շարունակական ծառայության ժամկետը անհրաժեշտ է երկարացնել կախված տեղական եկեղեցում նրա ծառայության զբաղվածության աստիճանի: Եթե թեկնածուն անցյալում որակազրկվել է ինչ-որ շրջանային ասամբլեայի կողմից, նրա ձեռնադրությունը տեղի է ունենում միայն տվյալ շրջանի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խարհրդատվական Խորհրդի գրավոր ծանուցմամբ, որտեղ թեկնածուն որակազրկված է եղել, ինչպես նաև նրա ընտանեական կարգավիճակը չպետք է արգելք լինի նրա ձեռնադրության համար: (205.6, 320, 529)

533.4. Եթե իր ծառայության մեջ սարկավագը կանչ զգա ծառայելու որպես քարոզիչ, նա կարող է ձեռնադրվել որպես երեց, բոլոր պահանջները կատարելուց և սարկավագի մանդատը հանձնելուց հետո:

Դ. Երեցներ

534. Եկեղեցու երեցը (ձեռնադրված ծառայող) դա ծառայող է, ում Աստծուց քարոզի կանչը, պարգևները, ծառայության պիտանելիությունը, վկայվել և հաստատվել են համապատասխան կրթությամբ և փորձով, և ով սահմանված է Եկեղեցու կողմից ծառայելու Քրիստոսին, շրջանային ասամբլեայի քվեարկության միջոցով և ձեռնադրության արարողակարգով, և ով լիազորված է կատարելու բոլոր տեսակի քրիստոնեական ծառայությունները:

534.1. Մենք ընդունում են քարոզիչի միայն մեկ հոգևոր աստիճան՝ երեցը(ձեռնադրված ծառայող): Երեցը դա եկեղեցում մշտական հոգևոր աստիճան է: Երեցը պետք է բարեխղճորեն կառավարի եկեղեցին, քարոզի Խոսքը, կատարի Մկրտության և Հաղորդության խորհուրդներ, կատարի պսակադրության ծիսակատարություն, Քրիստոսի անվան և իշխանության ներքո Եկեղեցու Մեծ ղեկավարությամբ: (31, 514-515.3, 515.4, 515.9, 538.18)

534.2. Եկեղեցին ակնկալում է, որ այդպիսի պաշտոնական ծառայության կանչված մարդը, պետք է լինի Խոսքի ծառա, բոլոր իր ուժերը տալով Նրա ցմահ հռչակմանը:

534.3. Երեցության թեկնածուն վկայում է այդ ծառայության համար Աստծո կանչի մասին: Թեկնածուն ունի շրջանային լիցենզիա և նա ունեցել է այդ լիցենզիան ամենաքիչը վերջին երեք տարին: Նաև թեկնածուն երաշավորված է թարմացնելու իր լիցենզիան տեղական եկեղեցու եկեղեցական խորհրդի կողմից, որի անդամն է նա, կամ Շրջանային Խարհրդատվական Խորհրդի կողմից: Այնուհետև թեկնածուն.

1. Համապատասխանում է ծառայության համար եկեղեցու առաջադրած բոլոր պահանջներին:

2. հաջողությամբ ավարտել է լիցենզավորված ծառայողների և երեցների ձեռմադրման թեկնածուների համար կրթության ամբողջ դասընթացը:

3. թեկնածությունը ուշադրությամբ քննվել և հաստատվել է Շրջանի Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի կողմից, և համապատասխան երաշխավորությունը փոխանցվել է շրջանային ասամբլեային:

Այդպիսի թեկնածուն կարող է ընտրվել երեցի ձեռնադրության համար շրջանային ասամբլեայի ձայների երկու երրորդով, այն պայմանով, որ նա նշանակված ծառայող լինի վերջի երեք տարիների ընթացքում, և տվյալ պահին կատարում է իր պարտականությունները նշանակված ծառայության մեջ: Այն դեպքում, եթե թեկնածուն ծառայության մեջ մասնակիորեն է

եղել ներքաշված, որպես հովվի օգնական կամ ասիստենտ, ապա նրա շարունակական ծառայության ժամկետը անհրաժեշտ է երկարացնել, կախված տեղական եկեղեցում նրա ծառայության զբաղվածության աստիճանի: Եթե թեկնածուն անցյալում որակազրկվել է ինչ-որ շրջանային ասամբլեայի կողմից, նրա ձեռնադրությունը տեղի է ունենում միայն տվյալ շրջանի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խարհրդատվական Խորհրդի գրավոր ծանուցմամբ, որտեղ թեկնածուն որակազրկված է եղել, ինչպես նաև նրա ընտանեական կարգավիճակը չպետք է արգելք լինի նրա ձեռնադրության համար: (205.6, 320, 529)

Ե. Մանդատի ճանաչում

535. Այլ ավետարանական հարանվանությունից ծառայողները, ովքեր ցանկանում են միանալ Նազովրեցու Եկեղեցուն և ներկայացնում են իրենց հոգևոր աստիճանը ապացուցող փաստաթղթերը, կարող են ճանաչվել շրջանային ասամբլեայի կողմից, Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի կողմից, վարքի, անձնական փորձի և վարդապետությունը բավարար քննարկումից հետո այն պայմանով, որ.

(1) Պարտադիր դասընթացների համապատասխան բաժիններն ավարտելուց հետո, նրանք ցուցադրում են երախտագիտություն, հասկացողություն և պրակտիկայում կիրառում են Ուղեցույցի, Նազովրեցու Եկեղեցու պատմության և սրբության վարդապետության մասին գիտելիք- ները:

(2) Նրանք շրջանային ասամբլեային կներկայացնեն «Հոգևոր աստիճանի ձեռնադրության/Մանդատի ճանաչման» լրացված հարցաթերթիկը:

(3) Նրանք համապատասխանում են ձեռնադրության բոլոր պահանջներին, համապատասխան պարագրաֆներ 533-533.3 կամ 534-534.3:

(4) Նաև ներկա պահին թեկնածուն պետք է ծառայի որպես նշանակված ծառայող (205.7, 228, 529, 532.2):

535.1. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը նշանակված ծառայողին տալիս է ձեռնադրման ճանաչողական վկայական, որը ստորագրված է իրավասու գլխավոր սուպերինտենդենտի, շրջանային սուպերինտենդենտի և շրջանային քարտուղարի կողմից: (538.6)

535.2. Երբ այլ հարանվանության ծառայողի մանդատը համապատասխան ձևով ճանաչվել է, ապա այդ ծառայողին մանդատը պետք է հետ վերադարձվի և նրա վրա պետք է գրվի հետևյալ բովանդակությունը.

Ճանաչվել է _____ Նազովրեցու Եկեղեցու Շրջանային Ասամբլեայի կողմից:

_____ (օր, տարի) որպես հիմք նոր մանդատի ստեղծման համար:

_____, Գլխավոր Սուպերինտենդենտ

_____, Շրջանային Սուպերինտենդենտ

_____, Շրջանային Քարտողար

Զ. Ծառայողը թոշակի մեջ

536. Թոշակի մեջ ծառայողը նա է, ով Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի հավանությամբ թոշակի է անցել համապատասխան շրջանային ասամբլեայի հրամանագրով, և որտեղ պահպանվում է նրա անդամությունը:

Կարգավիճակի ցանկացած փոփոխություն Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի հավանությամբ, պետք է հաստատվի շրջանային ասամբլեայի կողմից:

536.1. Թոշակի անցնելը չի պարտադրում ծառայության դադարեցում, և չի վերացնում շրջանային ասամբլեայում անդամությունը: Նա, ով ծառայել է որպես նշանակված ծառայող, կարող է մնալ այդպիսին, բայց թոշակի մեջ: Թոշակի մեջ նշանակված ծառայողը շրջանային ասամբլեայի անդամ է: Սակայն ով, թոշակի անցնելիս չի ունեցել նշանակված ծառայողի կարգավիճակ, մնում է այդպիսին և չի հանդիսանում շրջանային ասամբլեայի անդամ: (201, 538.9)

536.2. Թոշակի անցած ծառայողները (նշանակված կամ չնշանակված) պարտավոր են տարեկան հաշվետվություն ներկայացնել շրջանային ասամբլեային: Թոշակառու ծառայողների դեպքում, ովքեր անկարող են զեկուցել, իրենց հսկողությունից դուրս գտնվող սահմանափակումների պատճառով, շրջանային ասամբլեան կարող է Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի հանձնարարականով այսպիսի ծառայողին շնորհել "ազատված" կարգավիճակ կապված հաշվետվությունների տրամադրման տարեկան պարտավորության հետ: (538.9)

Է. Ծառայողի տեղափոխություն

537. Եթե հոգևորականության ներկայացուցիչը ուզում է տեղափոխվել այլ շրջան, ապա նրա տեղափոխությունը կարող է իրագործվել շրջանային ասամբլեայի համապատասխան քվեարկությամբ, կամ շրջանային ասամբլեաների ընդմիջումների ժամանակ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի որոշմամբ, որտեղ պահպանվում է նրա ծառայողի անդամությունը: Ծառայողի այդպիսի տեղափոխությունը այլ շրջանից, շրջանային ասամբլեաների ընդմիջումների ժամանակ, կարող է ընդունվել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, որը տվյալ ծառայողին լիազորում է այդ շրջանի անդամության բոլոր արտոնություններով և իրավունքներով, որոնք նա ընդունում է մինչև մյուս շրջանային ասամբլեան: Շրջանային Խորհրդատվական Խորհրդի այդ որոշումը պետք է վերջնականապես հաստատվի Ծառայողների Մանդատային Խորհրդի և շրջանային ասամբլեայի կողմից: (205.8-205.9, 226, 231.9-231.10)

537.1. Լիցենզավորված ծառայողի տեղափոխությունը իրական է միայն այն պայմանով, եթե լիցենզավորված ծառայողների համար դասընթացների նրա ավարտական գնահատականները Ծառայողների Կրթության Շրջանային Խորհորդի կողմից, որտեղից նրան տեղափոխում են, համապատասխան ձևով սերտիֆիկացվել և ուղարկվել են ընդունող շրջանի Ծառայողների Կրթության Շրջանային Խորհորդի նախագահին: Ծառայողների Կրթության Շրջանային Խորհորդի նախագահը գնահատականները ստանալու համար, պետք է տեղեկացնի շրջանային քարտուղարին: Տեղափոխված ծառայողը, պետք է հետամուտ լինի իր գնահատականների ակտիվ ներկայացմանը ընդունող շրջանին: (233.1-233.2)

537.2. Տեղափոխությունը ընդունող շրջանային ասամբլեան, պետք է տեղյակ պահի նրա նախկին անդամության շրջանի շրջանային ասամբլեային, տեղափոխվողի անդամություն ստանալու մասին: Մինչև ընդունող շրջանային ասամբլեայի կողմից տեղափոխությունը չի հաստատվել քվեարկության միջոցով, տեղափոխվող անձը համարվում է նախկին շրջանի շրջանային ասամբլեայի անդամ: Այդպիսի տեղափոխությունը վավեր է միայն մինչև շրջանային ասամբլեայի ավարտը, ում ուղղված է տեղափոխությունը և որը հետևում է տեղափոխության հաջորդ օրվան: (205.8, 226, 231.10)

Ը. Ընդհանուր կանոններ

538. Հետևյալ սահմանումները ընդհանուր կանոններ են, որոնք վերաբերվում են Նազովրեցու Եկեղեցու ծառայողներին:

Հոգևորականություն – երեցներ, սարկավագներ, լիցենզավորված ծառայողներ: (530, 531, 532)

Այցելուներ – Նազովրեցու Եկեղեցու անդամներ, որոնք չեն մտնում հոգևորականների կազմի մեջ:

Ակտիվներ – Հոգևորականության անդամ, ով կատարում է իրեն տրված դերը:

Նշանակված ծառայողներ – հոգևորականության կարգ, որոնք ակտիվորեն ծառայում են ծառայության որևէ շրջանում, որոնք նկարագրված են պարագրաֆներ 505-528-ում:

Չնշանակված ծառայողներ – լավ համբավով հոգևորականության կարգ, որոնք տվյալ պահին ակտիվ չեն և ծառայության որևէ շրջանում, որոնք նկարագրված են պ. 505-528-ում:

Թոշակի մեջ նշանակված ծառայողներ – թոշակի անցած հոգևորականության կարգ, որոնք իրենց թոշակառուի կարգավիճակը ստանալուց նշանակված ծառայողներ են եղել:

Թոշակի մեջ չնշանակված ծառայողներ – թոշակի անցած հոգևորականության կարգ, որոնք իրենց թոշակառուի կարգավիճակը ստանալուց չնշանակված ծառայողներ են եղել:

Ծառայողների ցուցակը- շրջանի լիցենզավորված և ձեռնադրված ծառայողների ցուցակը, ովքեր ունեն լավ համբավ, որպես հոգևորականության անդամներ,և ովքեր չեն հանձնել իրենց մանդատները:

Բարի համբավ- հոգևորականության անդամի կարգավիճակը, ով տվյալ պահին ոչ մի բանում չի մեղադրվում, և ում վրա ոչ մի կարգապահական պատիժ դրված չէ:

Ցուցակից հեռացված- շրջանային ասամբլեայի կողմից իրականացվող գործողություն, որպեսզի ծառայողների Ցուցակից հեռացվեն հոգևորականների այն անունները, ովքեր թոշակի են անցել, կրճատվել են, կամ զրկված են եղել իրավասություններից, կամ նրանց իրավասությունները դադարեցված են:

Պատժված ծառայողներ– հեգևորականության կարգ, որոնք լրիվ կամ մասամբ զրկվել են հոգևորականության անդամի իրենց արտոնություններից, իրավունքներից և պատասխանատվություններից, կարգապահական պատճառներով:

Կասեցում-մի քանի կարգապահական գործողություններ բացառությամբ մանդատից զրկելը, որի հետևանքով ծառայողը ժամանակավոր զրկվում է բոլոր իրավունքներից, արտոնություններից և հոգևոր լինելու պատասխանատվությունից մինչև այն պահը երբ կատարվել են նրա իրավունքների վերականգնման բոլոր այն պայմանները:

Դադարեցված- հոգևորականության կարգ ով զրկվել է մանդատից և ով հեռացվել է Նազովրեցու Եկեղեցուց:

Մանդատային վկայականը պահպանության տված ծառայող – լավ համբավով հեգևորականության կարգ, որոնք սակայն չեն մասնակցում ակտիվ ծառայությունների մեջ, այլ հրաժարվել են հոգևորականության ներկայացուցիչների իրավունքներից և արտոնությունից և հանձնել են իրենց մանդատը գլխավոր քարտուղարին: Իր մանդատը հանձնած ծառայողը մնում է հոգևորականության կազմի մեջ և կարող է վերականգնվել իր իրավունքներում և արտոնություններում, և հոգևորական ծառայողի պատասխանատվության մեջ, համաձայն պարագրաֆներ 539.10, 539, 539.1:

Մանդատից զրկված ծառայողը – հեգևորականության կարգ, ում անհամապատասխան վարքագծի պատճառով, կարգապահական խորհրդի կողմից մեղադրվելուց և խոստովանվելուց

հետո կամ ինչ-որ կամավոր գործողությունների պատճառներով, բացառությամբ եթե զբաղված չէ ակտիվ ծառայությամբ, ազատվել է հոգևորականների իրավունքներից և արտոնություններից: Մանդատից զրկված զառայողը, ում նկատմամբ կիրառվել են կարգապահական միջոցներ, շարունակվում է համարվել հոգևորականության անդամ: Հոգևորականության ներկայացուցիչի արտոնությունները, իրավունքները կարող են վերականգնվել այն պայմանով, երբ վերականգնվել է նրա բարի հեղինակությունը և վերադարձվել է նրա մանդատը:

Պաշտոնաթող ծառայողը – հեգևորականության կարգ, ով անձնական պատճառներով որոշել է թողնել ծառայությունը, բայց դարձել է եկեղեցու այցելու: Վատ համբավ ունեցող հոգևորականը Շրջանային Խորհրդատվական Խորհրդի համաձայնությամբ նույնպես կարող է հանձնել իր մանդատը: (539.1, 539.5)

Հետ վերցված մանդատ – Մանդատային վկայության հոգևորականության դասի ներկայացուցիչներ, ովքեր զրկվել են իրավասություններից և հեռացվել են Նազովրեցու Եկեղեցու անդամությունից: Ծառայողների անունները ում մանդատները հետ են վերցվել պետք է հեռացվեն Ծառայողների Ցուցակից:

Մանդատի վերադարձ – գործողություն որը ընթանում է մանդատից զրկված հոգևորականության ներկայացուցիչի իրավունքների, արտոնությունների և հոգևորական ծառայողի պատասխանատվության վերականգնում, ում պարտականությունները դադարեցվել էին, կամ ով հեռացվել էր Ծառայողների ցուցակից:

Վերականգնման ընթացքը – կամավոր հրաժարված կամ իրավունքներից, արտոնություններից և հոգևորականության պատասխանատվությունից զրկված հոգևորականության ներկայացուցիչի, ինչպես նաև նրա կամ նրա կնոջ (ամուսնու) և ընտանիքի ամբողջականության և առողջության վերականգնման գործընթաց: Վերականգնման համար ուղղված ջանքերը պետք է ուղղված լինեն անկախ մանդատի վերականգնման գործընթացից:

Վերականգնում– իրավունքների, արտոնությունների և հոգևոր ծառայողի պատասխանատվությունների վերականգնում այն ծառայողի համար ով զրկվել է մանդատից, հեռացվել, զրկվել է իրավասություններից, կամ պաշտոնակ է արվել հաստատված բոլոր պահանջները կատարելով վերականգնելու պայմանով:

Մեղադրանք – Նազովրեցու Եկեղեցու ամենաքիչը 2 ծառայողի կողմից ստորագրված գրավոր փատատաթուղթ, որը նկարագրում է վարքի նկարագիր, որը ապացույցների առկայության դեպքում համաձայն եկեղեցական *Ուղեցույցի* պահանջվում է կարգապահական միջոցների կիրառություն:

Գիտելիքներ – զգայարանների միջոցով փաստերի գիտակցում:

Տեղեկատվություն – շրջապատի քաղված փաստերը:

Հավատամք – եզրակացություն, որին հանգել են բարի հավատքով, որը հիմնված է գիտելիքի և տեղեկության վրա:

Քննական հանձնաժողով- ենթադրյալ կամ կասկածելի հանցագործին վերաբերվող տեղեկատվություն հավաքող հանձնաժողով, որը նշանակված է համաձայն եկեղեցական *Ուղեցույցի*:

Մեղադրանք – Նազովրեցու Եկեղեցու անդամի վարքը ներկայացնող գրավոր փաստաթուղթ, որը լինելով ապացուցված, հիմք է հանդիսանում կարգապահական միջոցների կիրառման համար, համաձայն եկեղեցական *Ուղեցույցի*:

538.1. Եթե հոգևորականության ներկայացուցիչը առանց շրջանային ասամբլեայի Խորհրդատվական Խորհրդի, որտեղ նրա անդամությունն է, կամ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի գրավոր հավանության անցկացնում է պարբերական եկեղեցական գործունեություն, որը չի գտնվում Նազովրեցու Եկեղեցու ղեկավարության ներքո,

կամ գործում է որպես այլ կրոնական խմբի անկախ եկեղեցու հաստիքում, ապա ընդդեմ նրա կիրառվում են կարգապահական միջոցներ: (538.13, 606.1)

538.2. Հոգևորականության ներկայացուցիչը պետք է ուշադրություն դարձնի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի տրված խորհուրդներին: (519)

538.3. Ցանկացած հարցում, որը վերաբերվում է եկեղեցու կողմից հաստատված թոշակային կամ սոցիալական ֆոնդի, որը հաստատվել է ծեր և անաշխատունակ ծառայողների համար, հոգևորականության ներկայացուցչին և/կամ նրա ընտանիքի անդամներին, որոնք նյութականորեն կախված են նրանից, պետք է հիմնավորվել միայն ծառայողի պարբերական ակտիվ ծառայությամբ, որպես նշանակված հովիվ կամ ավետարանիչ, կամ պետք է հաստատվի շրջանային ասամբլեայի կողմից ծառայության այլ ոլորտում, նրա պարբերաբար ակտիվ ծառայության համար: Այս կարգը բացառում է այդ ֆոնդերում նրանց մասնակցությունը, ովքեր ծառայում են մասամբ, կամ ժամանակ առ ժամանակ:

538.4. Լիցենզավորված ծառայողը, ով Նազովրեցու եկեղեցում նշանակված է ակտիվ հովվական ծառայության կամ հովվի օգնական, կամ էլ ասիստենտ է, պետք է լինի շրջանային ասամբլեայի քվեարկող անդամ: (201)

538.5. Երեցի կամ սարկավագի ձեռնադրության համար թեկնածուն պետք է ձեռնադրվի գլխավոր սուպերինտենդենտի և ձեռնադրված ծառայողների կողմից ձեռք դնելու միջոցով, համապատասխան կրոնական արարողությամբ, նախագահող գլխավոր սուպերինտենդենտի ղեկավարությամբ: (307.4)

538.6. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտը պետք է ձեռնադրված ծառայողին տա ձեռնադրության վկայագիրը, ստորագրված լիազորված գլխավոր սուպերինտենդենտի և շրջանային քարտուղարի կողմից: (535.1)

538.7. Եթե ձեռնադրված երեցի կամ սարկավագի ձեռնադրության վկայականը կորել է, փչացել կամ ոչնչացվել է, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ նրան կարող է տրվել կրկնօրինակը: Նմանօրինակ հավանությունը փոխանցվում է անմիջապես լիազորված գլխավոր սուպերինտենդենտին և նրա հավանությամբ գլխավոր քարտուղարը տալիս է վկայագրի կրկնօրինակը: Կրկնօրինակի հակառակ կողմում դրվում է իսկական համարը ԿՐԿՆՕՐԻՆԱԿ բառի հետ մեկտեղ: Եթե գլխավոր սուպերինտենդենտի, շրջանային սոպերինտենդենտի կամ գլխավոր քարտուղարի ստորագրությունը բացակայում է, շրջանային սուպերինտենդենտը, և շրջանի շրջանային քարտուղարը, ով խնդրել է կրկնօրինակը, պետք է ստորագրեն կրկնօրինակը: Վկայականի հակառակ կողմում տպված կամ ձեռագիր պետք է կատարվի հետևյալ գրությունը, ստորագրված լիազորված գլխավոր սուպերինտենդենտի, շրջանային սուպերինտենդենտի և շրջանի շրջանային քարտուղարի կողմից.

Տվյալ վկայականը տրված է նախկին ձեռնադրության վկայականի փոխարեն, տրված (անուն), (ամսաթիվ), (տվող կազմակերպության անունը), երբ է ձեռնադրվել: Իսկական վկայականը ստորագրվել է_____ և _____:

Ձեռնադրության վկայականի բնօրինակը (կորել է, փչացել, ոչնչացվել):

_____, Գլխավոր սուպերինտենդենտ

_____, Շրջանային սուպերինտենդենտ

_____, Շրջանային քարտուղար

538.8. Հոգևորականության բոլոր անդամները (նշանակված ու չնշանակված) պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու ակտիվ ծառայողներ, որտեղ նրանք պետք է այցելեն եկեղեցի, տան տասանորդ և մասնակցեն եկեղեցու բոլոր ծառայություններում: Բացառությունները կարող են հաստատվել միայն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ: Հոգևորության յուրաքանչյուր անդամ ով չի հանդիսանում

այդ շրջանի Նազովրեցու տեղական Եկեղեցու անդամ, որտեղ նրան տրվել է մանդատը, և ում չի տրվել հատուկ թույլատրություն, ապա նա Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության: (522, 538.10)

538.9. Բոլոր ձեռնադրված հովիվները (երեցները) և սարկավագները պետք է պահպանեն իրենց ծառայողի անդամությունը այն շրջանային ասմբլեայում, որ շրջանին որ պատկանում է տեղական եկեղեցիները և նրանց անդամությունը: Ասամբլեայի ժողովին նրանք պետք է ներկայացնեն տարեկան հաշվետվություն: Այն ձեռնադրված հովիվը կամ սարկավագը, ով վերջին 2 տարիների ընթացքում շրջանային ասամբլեային գրավոր կամ բանավոր հաշվետվություն չի ներկայացրել, շրջանային ասամբլեայի համապատասխան որոշումով կհեռացվի շրջանային ասամբլեայի անդամությունից: (201, 205.3, 521, 536.1)

538.10. Եթե հոգևորականության որևէ անդամ դառնում է այլ հարանվանության, եկեղեցու , կամ այլ Քրիստոնեական ծառայության անդամ, որը տարբեր է Նազովրեցու Եկեղեցուց, ապա նա այդ պատճառով պետք է անմիջապես հեռացվի Նազովրեցու Եկեղեցու անդամությունից և Նազովրեցու Եկեղեցու ծառայողների ցուցակից, եթե նրանք չունեն շրջանային ասամբլեայի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությունը, որի անդամներն են նրանք: Այդպիսի իրավիճակում շրջանային ասամբլեան պետք է իր արձանագրությունների մեջ լրացնի հետևյալ բովանդակությամբ գրառումը. «Հեռացվել է եկեղեցու անդամությունից և Նազովրեցու եկեղեցու ծառայողների ցուցակից, քանի-որ միացել է այլ հարանվանության»: (107,112)

538.11. Քահանայության ցանկացած անդամ, ով դուրս է գալիս կամ հեռացվում է տեղական եկեղեցու անդամությունից, երբ նա լավ համբավ չունի, կարող է վերամիավորվել Նազովրեցու Եկեղեցու հետ շրջանային ասամբլեայի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի համաձայնությամբ, որի անդամությունից նա դուրս էր եկել կամ հեռացվել: Շրջանային Խորհրդատվական խորհուրդը կարող է տալ իր համաձայնությունը այն պայմանով, որ նախկին ծառայողը հետագայում մնա եկեղեցու այցելու կամ իրավասու շրջանային և գլխավոր սուպերինտենդենտների հավանությամբ, և նրանց վերահսկողությամբ նախկին ծառայողը վերընդունվի որպես քահանայության անդամ՝ հաստատելով իր ցանկությունը ակտիվորեն և հետևողականորեն մասնակցելով վերականգնման գործընթացին: (539.6)

538.12. Երեցը կամ սարկավագը, ում անունը հեռացվել է շրջանային ասամբլեայի ծառայողների ցուցակից, ով չի հանձնել իր մանդատը, չպետք է ճանաչվի ցանկացած այլ շրջանում, եթե նա չունի շրջանային ասամբլեայի գրավոր համաձայնությունը, որի անունը ծառայողների ցուցակից հեռացվել է, և եթե չկա այլ պատճառ: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է գործել ասամբլեաների միջև իրավասության փոփոխության առաջարկի հիման վրա: (538.11)

538.13. Հզևորականության անդամը պետք է ունենա Շրջանային Խորհրդատվական Խորհրդի տարեկան գրավոր համաձայնությունը՝ համաձայն հետևյալ կետերի՝

- պարբերաբար անցկացնել անկախ եկեղեցական գործունեություն, որը Նազովրեցու Եկեղեցու ենթակայության տակ չէ կամ
- իրականացնել անկախ միսիաներ ոչ լիազորված եկեղեցական գործունեություններ կամ
- կապված լինել այլ անկախ եկեղեցու ղեկավարության, կամ այլ կրոնական հարանվանության, խմբի կամ քրիստոնեական ծառայության հետ:

Եթե հոգևորականության անդամը չի կատարում այս պահանջները, նա Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանայի Խորհրդի անդամության ձայների երկու երրորդի առաջարկությամբ, կհեռացվի Նազովրեցու Եկեղեցու անդամությունից և

ծառայությունից:

Այն հարցի վերաբերյալ, թե ո՞ր գործունեությունն է համարվում անակախ միսիա կամ չլիազորված եկեղեցական գործունեություն, վերջնականապես որոշում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը: (112-12.1, 532.9)

538.14. Նախքան հոգևորականության անդամին անկախ եկեղեցական գործունեություններում մասնակցելու հավանություն շնորհելը, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը պետք է պահանջի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի գրավոր հավանությունը, երբ այսպիսի մասնակցությունը տեղի է ունենում ավելի քան մի քանի շրջաններում, կամ ոչ այն շրջանում, որտեղ այդ ծառայողը համարվում է հոգևորականության անդամ: Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը պետք է տեղեկացնի տվյալ Շրջանի Խորհրդատվական Խորհրդին, որ այդ գրավոր հավանությունը քննարկման ընթացքի մեջ է:

538.15. Նշանակված ծառայողը կարող է հիմնել տեղական եկեղեցի, եթե նա այդ գործողության համար լիազորված է շրջանային սուպերինտենդենտի կամ լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից: Եկեղեցու հաստատման պաշտոնական ծանացումը գլխավոր Քարտուղարի գրասենյակի հետ, պետք է լրացնի շրջանային սուպերինտենդը: (100, 211.1)

538.16. Ասամբլեայում անդամություն կարող է ստանալ այն նշանակված ծառայողը կամ հովիվը, ով ակտիվորեն աշխատում և եկեղեցու հետ պահում է աշխատանքային հարաբերություններ, ընդգրկված է պարագրաֆներ 505-528–ում նկարագրված ծառայողական դերերում և այդ ծառայությունը համարում է իր գլխավոր գործունեությունը:

538.17 Նազովրեցու Եկեղեցու յուրաքանչյուր ծառայողի պարտականությունն է պահպանել հոգաբարձության ժամանակ եկեղեցական այցելուի տված տեղեկատվության գաղտնիությունը, կամ հոգևոր խրատը պետք է տրվի խիստ գաղտնի միջավայրում: Արգելված է այդպիսի տեղեկատվության հրապարակումը առանց այդ անձնավորության համաձայնության, միայն եթե դա չի պահանջում օրենքը:

Այդ տեղեկատվության գաղտնիությունը կարող է չպահպանվի և դրա մասին ծառայողը պետք է անհապաղ հայտնի, եթե.

1. Երբ բացահայտ սպառնալիք կա իր կամ ուրիշ մարդկանց նկատմամբ:
2. Եթե կասկած կա, բռնության, կամ համաձայն տեղական օրենքների չկա հոգատարություն անչափահասի, անդամալույծի, տարեցի կամ այլ խոցելի մարդկանց նկատմամբ: Պետք չէ կատարել ինքնուրույն քննություն, այլ կասկածների մասին պետք է հաղորդել իշխանություններին: Անչափահասը ցանկացած մարդ է, ով 18 տարեկանից ցածր է, բացառությամբ այն դեպքերի, երբ չափահասության տարիքը տվյալ պետության մեջ ավելի բարձր է:
3. Երբ ծառայողին կանչել են դատարանում վկայություն տալու:

Ծառայողը պետք է պահպանի փոքրիկ գրառումները, որոնք կատարվել են նիստերի հանդիպման բովանդակության վերաբերյալ, ներառյալ ինչի մասին պատմվել է և ստացվել է տեղեկատվության ստանալու համաձայնությունը:

Մասնագիտական հոգաբարձությունից ստացված տեղեկատվությունը կարելի է օգտագործել կրթության, քարոզների, հասարակական ներկայացման կամ հոդվածների համար, եթե միայն ձեռնարկվել են բոլոր միջոցները այդ մարդու անունը բացարձակ անվտանգության մեջ պահելու և զրույցի բուն բովանդակության գաղտնիությունը պահպանելու համար:

Երբ անչափահասի հետ հոգաբարձությունից հետո ծառայողը իմանում է, որ այդ անչափահասի առողջությանը և բարորությանը սպառնում է լուրջ վտանգ, ապա այդ անչափահասի անվտանգությունը և բարորությունը ապահովելու համար ծառայողը պետք է

բացահայտի ինֆորմացիան և զրույցի բովանդակությունը փոխանցի ծնողներին կամ օրինական խնամակալին:

538.18. Բոլոր ձեռնադրված հովիվներին և սարկավագներին խորհուրդ է տրվում հետևել այն սկզբունքին, որի համաձայն կրթությունը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում, և նրանք տարեկան 20 ժամ պետք է մասնակցեն դասընթացներին, որոնք առաջարկում է Ծառայողների Կրթության Շրջանային Խորհուրդը: (529.6)

586.19. Ծառայողը պետք է հարգի նրանց ամուսնությունը, ովքեր այդ ամուսնության համար ունեն աստվածաշնչյան հիմք և այդ հարցի վերաբերյալ լուրջ հոգաբարձության կարիք ունեն:

Աստվածաշնչյան ամուսնությունը կարող է գոյություն ունենալ մեկ տղամարդու և մեկ կնոջ միջև: (31, 515.9)

538.20. Յուրաքանչյուր շրջան պետք է ունենա տարեկան վերանայվող համապարփակ ծրագիր, որը թույլ կտա ժամանակին ուղղորդելու իր ջանքերը ներկայացնելու կարեկցող ու իրազեկ պատասխան հոգևորականության այն անդամներին, որոնք ներգրավված են եղել ծառայողի անպատշաճ վարքի մեջ, իրենց ընտանիքներին և հոգևորականության այն անդամներին, որոնք ընդգրկված են դրանում: Շրջանային ծրագիրը պետք է համահունչ լինի Ուղեցույցի ցուցումների հետ, թե ինչպես պետք է կատարվեն ցանկացած ծառայողի կարգավիճակի փոփոխման փաստերի և հանգամանքների արձանագրությունների հաստատումը և պահպանումը, ով չի կարող տիրապետել հոգևորականի իրավունքներին, արտոնություններին և իրավասություններին: Այս արձանագրությունը ընդգրկում է բոլոր նամակագրությունները և պաշտոնական գործողությունները կապված հոգևորականության անդամի կարգավիճակի հետ, ինչպես նաև այդ անձանց անունները և վերականգնողական թիմի հետ նրանց հանդիպման ամսաթվերը համաձայն 540.1 պարագրաֆի: (225.5)

Թ. Մանդատի հանձնումը պահպանման համար, հրաժարական, պաշտոնաթողություն կամ մանդատի զրկում:

539. Գլխավոր քարտուղարը լիազորված է ընդունելու և պահելու բարի համբավով հոգևորականության անդամի մանդատը, ով որոշակի ժամանակահատվածում չի մասնակցում ակտիվ ծառայության մեջ և այդ պատճառով ցանկանում է պաշտոնաթողության դիմում տալ և պահպանության համար հանձնել մանդատը: Մանդատի փոխանցման ժամանակ, հոգևորականության ներկայացուցիչը գլխավոր քարտուղարին հավաստիացնում է, որ մանդատը չի փոխանցվում կարգապահական միջոցներից խուսափելու համար: Մանդատի փոխանցումը ծառայողին չի ազատում կարգապահական պատժից: Գլխավոր քարտուղարին փոխանցված մանդատը կարող է հետ վերադարձվել ծառայողին: (539.10.)

539.1. Բարի համբավով հոգևորականության անդամը, ում չի շնորհվել թոշակառուի կարգավիճակ և մնացել է չնշանակված չորս կամ ավելի հաջորդական տարիներ, չի համարվում հոգևորակնության անդամ և պահպանման համր պետք է հանձնի իր մանդատը: Շրջանային Մանդատային Խորհուրդը և Ծառայողների Շրջանային Խորհուրդը պետք է զեկուցի շրջանային ասամբլեային, որ «ոչ ակտիվ երեցի կամ սարկավագի մանդատը ընդունվել է պահպանվելու Շրջանային Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի կողմից»: Այդպիսի գործողությունները չպետք է դիտարկվեն որպես ծառայողի հեղինակությանը վնաս պատճառող գործողություններ: Մանդատը հանձնած մարդը կարող է վերականգնել այն: (539.10)

539.2. Երբ բարի համբավով ծառայողը լքում է նշանակված ծառայությունը այլ

գործունեությամբ զբաղվելու համար, որը չի վերաբերվում Նազովրեցու Եկեղեցու հոգևորականության զբաղմունքին, ապա նա կարող է հրաժարվել իրավունքներից, արտոնություններից և հոգևորականության ներկայացուցչի պարտականություններից: Շրջանային ասամբլեան, որի անդամն է ինքը, կընդունի մանդատը և կդնի գլխավոր քարտուղարի հոգածության ներքո: Շրջանային արձանագրության գրանցումը ցույց կտա, որ նա . «հեռացված է ծառայողների ցուցակից և հրաժարվել է ձեռնադրությունից»: Այն ծառայողը, ով հրաժարական է տվել կարող է վերադարձնել իր մանդատը: (539.11)

539.3. Եթե թոշակի չանցած ձեռնադրված ծառայողը դադարում է ակտիվորեն մասնակցել ծառայություններում, որպես հոգևորականության ներկայացուցիչ և մտնում է ոչ եկեղեցական կառույցում մշտական աշխատանքի, ապա դրանից 2 տարի անց Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը նրանից կարող է պահանջել, հանձնել մանդատը գլխավոր քարտուղարին կամ թողնել հոգևոր դասը: Այդ երկամյա ժամկետը սկսվում է շրջանային ասամբլեայի սկսվելուց, որը հետևում է հոգևորականության ներկայացուցիչի գործունեության դադարեցումից անմիջապես հետո: Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը զեկուցում է շրջանային ասամբլեային իր գործողության մասին: Այդպիսի գործողությունները չպետք է դիտարկվեն որպես ծառայողի հեղինակությանը վնաս պատճառող գործողություններ:

539.4. Հոգևորականության անդամի իրավունքները արտոնությունները և պատասխանատվությունները կարող են որոշ ժամանակ դադարեցվել, և իր անունը կարող է հեռացվել ծառայողների ցուցակից, եթե նա փոխում է իր բնակության հասցեն՝ մեկ տարվա ընթացքում չապահովելով նոր հասցեն Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդին կամ Ծառայողների Շրջանային Խորհրդին, կամ եթե նա չի ներկայացնում տարեկան զեկույց ինչպես պահանջվում է 532.8 և 538.9 պարագրաֆներում: Իրավասությունների դադարեցման այդպիսի գործողությունը Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի պատասխանատվությունն է:

539.5. Հոգևորականության ներկայացուցիչը, ով իր տեղական եկեղեցուց ստանում է երաշխավորագիր և մինչ հաջորդ շրջանային ասամբլեան չի միանում Նազովրեցու այլ եկեղեցու, կամ ով գրավոր հայտարարում է, որ նա հեռացվել է Նազովրեցու Եկեղեցուց կամ ով միանում է այլ հարանվանության կարող է հեռացվել Նազովրեցու Եկեղեցու ծառայությունից, շրջանային ասամբլեայի կարգով՝ Շրջանային Ծառայողների Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի առաջարկության հիման վրա, և նրա անունը հեռացվում է ծառայողների ցուցակից և տեղական եկեղեցու անդամության ցուցակից: (111.1, 815)

539.6. Վատ համբավ ունեցող հոգևորականության ներկայացուցիչը կարող է պաշտոնաթող լինել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի երաշխավորությամբ: (540)

539.7. Հոգևորականության անդամը կարող է հեռացվել Նազովրեցու Եկեղեցու ծառայությունից՝ համաձայն 539.5 և 540.10 պարագրաֆների, կամ կարգապահական կարգով՝համաձայն 606-609 պարագրաֆների:

539.8. Եթե ձեռնադրված ծառայողը կամ սարկավագը հեռացվում են ծառայողների ցուցակից, ապա շրջանային ասամբլեայի որոշմամբ՝ որի անդամն էր այդ ծառայողը, հեռացման պահին, նրա մանդատը պետք է ուղարկվի գլխավոր քարտուղարին, գրացուցակի մեջ լրացնելու համար: (326.5)

539.9. Հովիվները, տեղական եկեղեցիների խորհուրդները և այլ անձինք, ովքեր կիսում են եկեղեցու ծառայությունները, ծառայությունների մեջ չպետք է ներքաշեն հեղինակազրկված հոգևորականներին ցանկացած պաշտոնի կամ պատասխանատվության մեջ, ինչպես հովվի ժամանակավոր օգնական, երաժշտական տնօրեն, կիրակնօրյա դպրոցի տնօրեն կամ այլ

ծառայության մեջ, միչև նրա մանդատը չվերականգնվի: Բացառություն կարող է լինել այն շրջանի շրջանային սուպերինտենդի գրավոր հավանությանը, որտեղ եղել է նրա անդամությունը, և որտեղ նրա մանդատը վերցվել է, և նա զրկվել է հոգևորականության անդամ լինելու իրավունքներից և պատասխանատվությունից, ինչպես նաև այդ շրջանի իրավասու գլխավոր սուպերինտենդենտի գրավոր հաստատությամբ: (540.4)

539.10. Հանձնված մանդատի վերականգնումը: Եթե բարի համբավով երեցը կամ սարկավագը սեփական ցանկությամբ հանձնել է իր մանդատը, ապա այդպիսի մանդատը շրջանային ասամբլեայի կարգադրությամբ, կարող է ցանկացած ժամանակ վերադարձվել երեցին կամ սարկավագին (եթե նրա հեղինակությունը չի աղտոտվել), մի պայմանով, եթե մանդատի այդպիսի վերադարձը երաշխավորվել է շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից: Շրջանային ասամբլեաների միջև Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը կարող է քվեարկել՝ հավանություն տալով մանդատը հանձնած ծառայողի վերադարձին:

539.11. Մանդատի հրաժարականի կամ չեղարկման դեպքում լիազորությունների վերականգնումը: Բարի համաբավ ունեցող երեցը կամ սարկավագը, ով հրաժարվել է ծառայությունից կամ ում մանդատը չեղարկվել է այլ եկեղեցու, հարանվանության կամ ծառայության միանալու պատճառով, շրջանային ասամբլեայի կողմից նրան կարող է վերադարձվել իր մանդատը՝ ներկայացնելով Զեռնադրության Ճանաչման Դիմում, վերա-հաստատելով տվյալ ծառայության ուխտերը, անցնելով քննություն Շրջանային Մանդատային Խորհրդի կամ Շրջանային Ծառայողական Խորհրդի և ստանալով նրանց հավանությունը, որը երաշխավորված է շրջանային սուպերինտենդենտի և իրավասու գլխավոր սուպերինտենդենտի կողմից: (539.2)

539.12. Զեռնադրված ծառայողի մահի դեպքում, եթե նա իր մանդատը հանձնել է և նրա անունը չի կեղտոտվել մինչև մահվան պահը, ծառայողի ընտանիքը նրա մանդատը ստանալու համար, շրջանի իրավասու գլխավոր սուպերինտենդենտի հավանությամբ կարող է Նազովրեցու Եկեղեցու գլխավոր քարտուղարին նամակ խնդրանք ուղարկել, ում հանձնված է եղել պահպանելու նրա մանդատը:

539.13. Ամուսնալուծություն/բաժանում: Հոգևորականության ներկայացուցիչը ամուսնալուծության դիմում տալուց 48 ժամ հետո, կամ փաստացի ֆիզիկակական բաժանումից 48 ժամ անց, պետք է. (ա) դիմել շրջանային սուպերինտենդենտին և տեղեկացնել ձեռնարկված գործողությունների մասին; (բ) համաձայնվել հանդիպել շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ երկուսին հարմար ժամանակահատվածում, կամ շրջանային սուպերինտենդենտին հարմար ժամանակահատվածում; (գ) համաձայն (բ) կետի, հանդիպման ժամանակ հոգևորականության ներկայացուցիչը պետք է բացատրի այն հանգամանքները, որոնք բերեցին նման գործունեության, նկարագրել կոնֆլիկտի էությունը, ինչպես նաև աստվածաշնչյան հիմքը, որով նա կարող է շարունակել ծառայությունը, որպես բարի համաբավով հոգևորականության ներկայացուցիչ: Եթե հոգևորականության ներկայացուցիչը չի վարվում վերը նշված կետերով, ապա դա կարող է պատճառ հանդիսանալ կարգապահական տույժի կիրառման համար: Բոլոր ծառայողները՝ ակտիվ, ոչ ակտիվ, թոշակի մեջ, նշանակված, չնշանակված պետք է հնազանդվեն այս կանոններին և պետք է հարգանքով վերաբերվեն շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի խորհուրդներին: Ոչ մի ակտիվ կամ նշանակված ծառայող չի կարող շարունակել ծառայությունը առանց Շրջանային Խորհրդատվական Խորհրդի քվեարկության թույլտվության:

Ժ. Հոգևորականության ներկայացուցիչների վերականգնում

540. Նազովրեցու Եկեղեցին ընդունում է իր պատասխանատվությունը՝ տարածելու Աստծո բժշկող շնորհքը և հույսը, որը ազատագրում և նորոգում է իր ցանկացած ծառայողի, ով կամավոր կամ իր կամքից անկախ հրաժարվել է մանդատից և զրկվել հոգևորականության անդամ լինելու իրավունքներից, արտոնություններից և պատասխանատվություններից՝ ծառայողի անվայել պահվածքի պատճառով: Եկեղեցին ընդունում է նաև իր պարտավորությունը ամուսնուն և ընտանքին, համայնքին և այդ ծառայողի մոտ շրջապատին հրավիրելու Աստծո սիրող հոգածության մեջ: Այդ պատճառով այն գործընթացը, որը տանում է ծառայողի բարի համբավի վերականգնումը, պետք է անցկացվի երկու հստակ քայլերով՝

1) **Վերականգնում:** Անկախ ծառայողի վատ վարքագծի լրջությունից, նրա վերջնական վերադարձի հավանականությունը դեպի ծառայություն, կամ նրա շնորհքի նախնական ընդունումը, և օգնության առաջարկությունը ծառայողի, նրա ամուսնու/կնոջ և ընտանիքի բարօրության վերականգնման (հոգևոր և ոչ միայն) համար պետք է ջանասիրաբար, աղոթքով և հավատքով իրականացվի շրջանի կողմից՝ համաձայն 540.1-540.7 պարագրաֆների: Այսպիսի վերականգնումը այս քայլի միակ նպատակն է:
2) **Իրավասությունների վերականգնում**: Ծառայողի բարի համբավի վերականգնումը և նրա իրավասությունները վերադարձնելը պետք է քննարկվեն ծառայողի, իր ամուսնու/կնոջ և ընտանիքի առողջության և բարօրության վերականգնման հարցերից առանձին: (540.6-540.12)

540.1. Վերականգնող թիմի նշանակումը: Երբ հոգևորականության ներկայացուցչի սխալ վարքագիծը դառնում է ակնհայտ, ապա այդ ծառայողի, ամուսնու/կնոջ և նրա ընտանիքի, համայնքի և մոտ շրջապատի համար շատ կարևոր է ժամանակին պատշաճ և գթասիրտ միջամտությունը: Քանի որ այդպիսի իրադարձությունների զարգացումները անկանխատեսելի են, ապա այդպիսի իրավիճակներում շրջանի կարգավորման ծրագրերի համար շատ կարևոր է հոգևորականությունից և այցելուներից որակավորված անձանց առաջատար ընտրությունը և պատրաստումը: Այս մարդիկ պետք է ընտրվեն շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհդատվական Խորհրդի խորհրդակցությամբ: Հոգևորականի սխալ վարքագծի դեպքերում այս անձինք, որոնք գործում են որպես վերականգնող թիմ, պետք է անմիջապես աշխատեն շրջանային սուպերինտենդենտի հետ, ըստ շրջանային ծրագրի: Վերականգնող թիմը պետք է կազմված լինի ոչ պակաս քան երեք մարդուց: (211.20, 225.5, 540)

540.2. Վերականգնողական թիմի պարտականությունները: Վերականգնողական թիմը պատասխանատու է հեշտացնելու ծառայողի, իր ամուսնու/կնոջ և ընտանիքի առողջության և բարորության վերականգնումը: Այն պատասխանատվություն և իշխանություն չունի որոշում կայացնելու այդ ծառայողի համար հոգևորականության անդամ լինելու իրավունք-ները, արտոնությունները և պատասխանատվությունները վերականգնելու գործում: Իրադարձարցությունների հետ կապված վերականգնող թիմի պարտականություններն են:

1) հոգ տանել ծառայողի, ամուսնու/կնոջ, ընտանիքի համար,
2) վերականգնման նպատակով և ընթացքում ապահովել ծառայողին, ամուսնուն/կնոջը, բարեգործական օգնությամբ,
3) համակարգելով ծառայողի, շրջանի և համայնքի ցանկածած միահամուռ ուժերը, որոնք ընդգրկված են զարգացնելու ծրագիրը, որը վերաբերում է ֆինանսական, կենցաղային, բժշկական, էմոցիոնալ, հոգևոր և այլ կարիքներին, որոնք առաջանում են

այն հրատապ դեպքերում, երբ սխալ պահվածքը դարձել է ակնհայտ,

4) կիրառելով շրջանի կողմից հաստատված ծրագիրը, ներառյալ զեկուցելով շրջանին իր սեփական ջանքերի և ծառայողի ու ամուսնու/կնոջ, բարօրության և առողջության վերականգնման առաջընթացի կարգավիճակի մասին,
5) հաղորդակցվելով ծառայողի և նրա կնոջ/ամուսնու, շրջանային սուպերինտենդենտի հետ և համապատասխան շրջանային խորհրդի հետ, երբ խումբը համարում է, որ աշխատանքը մոտ է իր ավարտին, կամ առաջադիմել է այնքան, որքան կարելի է ակնկալել,
6) համաձայն ծառայողի հոգևորականության անդամ լինելու իրավունքների, արտոնությունների և պատասխանատվության վերականգնման դիմումի, Շրջանային Մանդատային Խորհրդին կամ Շրջանային Ծառայողական Խորհրդին կամ նշանակված հանձնաժողովին, որը պատասխանատու է վերականգնման համար, ներկայացնել երաշխավորություն ծառայողի բարի համաբավի վերականգնման պատշաճ լինելու մասին: (540.8)

540.3. Այն դեքում երբ կարգապահական տույժ ստացած ծառայողը անլրջորեն է վերաբերվում վերականգնման ընթացքին, պետք է գործադրվեն ակտիվ ջանքեր ծառայողի, կնոջ/ամուսնու, ընտանիքի վերականգնման համար, փորձելով ներգրավել կամ կրկին ընդգրկել ծառայողին վերականգնման ընթացքի մեջ: Վերականգնման ջանքերի վերանայումով և ծառայողի կնոջ/ամուսնու և ընտանիքի բարօրությանը բավականաչափ ուշադրություն դարձնելով՝ շրջանային սուպերինտենդենտը կարող է կասեցնել, վերջացնել կամ վերականգնման ջանքերին այլ ընթացք տալ:

Այն դեպքում երբ շրջանը չի նշանակում վերականգնող թիմ, կամ նշանակված վերականգնող թիմը չի իրականացնում իր պատասխանատվությունները ծառայողի պատժի նշանակումից 180 օր անց, պատժի տակ գտնվող ծառայողը կարող է միջնորդություն խնդրել Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդից, պատասխանատվությունը տեղափոխել այլ շրջան, որն իր վրա կվերցնի նրա վերականգնման ջանքերի կենտրոնացումը, և կգործի նրա բարեխոսությամբ, եթե այդպիսիք կան՝ հոգևորականության անդամի բարի համբավի, իրավունքների և պատասխանատվությունների վերականգնման համար: Այդ տարբերակը հասանելի նաև կասկածելի համբավով ծառայողին այն դեպքում եթե շրջանը չի պատասխանում նրա կարգավիճակի վերականգնման խնդրագրին: (540-540.2, 540.4-540.12)

540.4. Վատ համբավ ունեցող հոգևորականության անդամը եկեղեցում չպետք է զբաղեցնի որևէ պաշտոն կամ ունենա որևէ իշխանություն, չի կարող քարոզել, առաջնորդել փառաբանություն, դասավանդել կիրակնօրյա դպրոցում, վարել Աստվածաշնչյան ուսումնասիրություններ կամ լինել փոքր խմբի առաջնորդ: Ծառայողը կարող է կատարել այն պարտականությունները, որոնք երաշխավորվել են շրջանի վերականգնողական թիմի կողմից և Շրջանային Խորհրդակցական Խորհրդի, Շրջանի Մանդատային Խորհրդի, կամ Շրջանի Ծառայողների Խորհրդի, շրջանային սուպերինտենդենտի և իրավասու գլխավոր սուպերինտենդենտի կողմից: Դրական երաշխավորությունը ցույց է տալիս, որ մարդը և իր կինն (ամուսինը) ու ընտանիքը վերականգնման գործընթացում հասել են բավական առաջընթացի, որպեսզի այդ մարդուն թույլատրվի ծառայելու և եկեղեցում տրվի իրավասություններ: Եկեղեցում իշխանության և վստահության հետ կապված ծառայելու և դիրք գրավելու թույլատրությունը կարող է ներկայացվել սահմանափակումներով կամ առանց սահմանափակման, ինչպես նաև կարող է հետ վերցվել շրջանային սուպերինտենդենտի կողմից, խորհրդակցելով վերականգնման խմբի հետ: (606.1-606.2, 606.5, 606.11-606.12)

540.5. Համաձայն պարագրաֆ 540.6-ի բարի համբավը վերականգնելու համար կարգապահական տույժի տակ գտնվող ծառայողի դիմումը, վերականգնման թիմը կարող է երաշխավորել շրջանային սուպերինտենդենտին և համապատասխան շրջանային խորհրդին կամ նշանակված հանձնաժողովին, քննարկելու դիմումը համաձայն պարագրաֆ 540.8-ի, կամ որ ծառայողը շարունակի վերականգնման գործընթացը լրացուցիչ կամ որոշակի ժամանակահատվածում մինչ վերականգնման համար լրացուցիչ դիմումի տալը: Այն դեպքում եթե վերականգնման թիմը ավարտել է իր աշխատանքը և կարգապահական տույժի տակ գտնվող ծառայողը բարի համաբավը վերականգնելու համար դիմում չի ներկայացրել ապա նա մնում է կարգապահական տույժի տակ եթե չեն ձեռնարկվեն հետևյալ միջոցները՝ 1) ծառայողի հեռացումը եկեղեցու անդամությունից և Նազովրեցու Եկեղեցու ծառայողների կազմից կամ 2) ծառայողին առաջարկվի պաշտոնաթողություն և դառնալ եկեղեցու այցելու: Կարգապահական տույժի տակ գտնվող ծառայողի պաշտոնանկ լինելու դեպքում եթե կան վերականգնման համար հաստատուն և էական ապացույցներ, ապա անհրաժեշտ է շարունակել դրա համար հոգ տանել և համապատասխան ձևով ընդունել ու խրախուսել նման գործընթացը: (539.5, 540.10)

540.6. Բարի համբավի վերականգնման համար դիմում: Հոգևորականության անդամության իրավունքներից, արտոնություններից և պարտականություններից զրկված ծառայողը, կարող է դիմում տալ իր իրավասությունները և բարի համբավը վերականգնելու համար, հաշվի առնելով պարագրաֆ 540.7-ի պահանջների: Այդպիսի դիմումը պետք է տրվի շրջանային սուպերինտենդենտին ոչ ուշ քան շրջանային ասամբլեայից վեց ամիս առաջ և պետք է համապատասխանի շրջանի հաստատած ծրագրին: Շրջանային սուպերինտենդենտը դիմումի ընդունումը պետք է հաստատի 30 օրերի ընքացքում:

540.7. Բարի համբավը վերականգնելու և իր մանդատը վերցնելու համար ծառայողը կարող է դիմել այն պայմանով, որ ծառայողի համար նշանակված վերականգնման թիմը դրականորեն աջակցում է այդպիսի միջնորդությունը և կարող է հաստատել, որ ծառայողը լինելով խմբի հսկողության տակ առնվազն երկու տարի ակտիվ և հետևողական մասնակցել է վերականգնման աշխատանքներում: Ծառայողը, ով իր կարծիքով առնվազն չորս տարիների ընթացքում ձգտել է ակտիվ և հետևողական մասնակցություն ունենալ այդպիսի վերականողական գործընթացում, կարող է բարի համբավի վերականգնման համար դիմում տալ վերականգնող խմբի աջակցությամբ կամ առանց նրա: Այն դեպքում երբ տույժի տակ գտնվող ծառայողը հենց նոր է սկսել մասնակցությունը վերականգնման գործընթացին, ապա բարի համբավի վերականգնման համր դիմում տալու նվազագույն ժամանակը պետք է սկսվի ի սկզբանե վերականգնման թիմը նշանակվել է այդ ծառայողի համար: Այն դեպքերում, երբ ծառայողը հետաձգում կամ ընդհատում է իր մասնակցությունը վերականգնման գործընթացում, շրջանային սուպերինտենդենտը խորհրդակցելով վերականգնող թիմի հետ, սահմանում է թե բարի համբավը վերականգնելու դիմումի համարինչքանով է բավական նվազագույն ժամանակը: (538, 540.3)

540.8. Բարի համբավի վերականգնման դիմումին պատասխանելը: Շրջանային Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից նշանակված խորհուրդը, քննարկում է շրջանային սուպերինտենդենտի կողմից ստացված բարի համբավի վերականգնման համար ցանկացած միջնորդագիր և՝

1) ստուգում է դիմումը համապատասխանում է ներկայցնելու բոլոր պահանջներին,
2) հարցում է կատարում և գնահատում վերականգնման խմբի երաշխավորությունները,
3) կատարում է հարցազրույց բարի համբավը վերականգնել ձտող ծառայողի հետ, ինչպես

նաև նրանց հետ ում անհրաժեշտ կհամարի,

4) սահմանում է հոգևորականության անդամի բարի համբավի, իրավունքների, արտոնությունների և պարտականությունների վերականգնման կամ ծառայողին մանդատի վերադարձի երաշխավորությունը:

Եթե դիմումը տրվել է մինչ հաջորդ պլանավորվող ասամբլեայից ոչ պակաս քան 180 օր առաջ, դիմումը պետք է քննարկվի և երաշխավորվի շրջանային սուպերինտենդենտի կողմից մինչ այդ շրջանային ասամբլեան:

Հոգևորականության անդամի բարի համբավի, իրավունքների, արտոնությունների և պարտականությունների վերականգնման երաշխավորությունը, ում մանդատը հետ է վերցվել ոչ օրինական սեռական վարքագծի պատճառով, որոշվում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ձայների երկու երրորդով: Երաշխավորությունը պետք է ներկայացվի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին մեկ տարվա ընթացքում սկսված այն օրից երբ ծառայողը տվել է բարի համբավը վերականգնելու դիմումը: Այս կետում նշված ցանկացած ժամկետների բացառությունը պետք է ունենան իրավասու գլխավոր սուպերինտենդենտի նախնական գրավոր երաշխավորությունը: (540.2, 540.3, 540.6, 540.7, 540.12)

540.9. Այն մարդիկ, ովքեր մեղավոր են անչափահասների հետ կապված սեռական արարքների մեջ, որպես հոգևորականության անդամ չեն կարող վերականգնվել բարի համբավի մեջ, և նրան չի թույլատրվում ստանալ ծառայողի որևէ մանդատ, ծառայել ինչ-որ պատասխանատու պաշտոնում, կամ մասնակցել անչափահասների ծառայությունների մեջ, տեղական եկեղեցում ընտրվել կամ նշանակվել որևէ ղեկավար պաշտոնում: Անչափահաս համարվում է 18 տարեկանից ցածր ցանկացած մարդ, բացի այն դեպքերից երբ չափահասության տարիքը կարող է հասնել ավելի ուշ, համաձայն պետության օրենքների: (129.30, 600, 606.1-606.2, 606.5, 606.11-606.12, 916)

540.10. Շրջանային Մանդատային Խորհուրդը կամ Ծառայողների Շրջանային Խորհուրդը կամ նշանակված խորհուրդը քննարկելով ժամանակին տրված համբավի վերականգնման միջնորդությունը, կարող են շրջանային սուպերինտենդենտին և համապատասխան շրջանային խորհուրդներին երաշխավորել հետևյալը՝

1) որպեսզի ծառայողի հեղինակությունը վերականգնվի և մանդատը վերադարձվի,

2) որպեսզի ծառայողը որոշակի ժամանակաընթացքում շարունակի մասնակցել վերականգնման գործընթացին, մինչ բարի համբավի վերականգնման հաջորդ դոիմումը,

3) որպեսզի վերականգնման ժամանակահատվածը երկարացվի և վերա-կանգնման ծրագիրը վերանայվի (օրինակ՝ հսկողության տակ ծառայությունների մասնակցություն, նոր վերականգնող թիմի նշանակում, կամ անձնական, ընտանեկան կամ ամուսնական պրոբլեմների լուծում),

4) որպեսզի ծառայողը շարունակի մնալ կարգապահական տույժի մեջ,

5) որպեսզի ծառայողի բարի համբավը չվերականգնվի, բայց ընդունվի վերականգնման վկայությունները և ծառայողին պաշտոնաթող լինելու թույլատրություն տրվի,

6) որպեսզի ծառայողը հեռացվի եկեղեցու անդամությունից և Նազովրեցու Եկեղեցու ծառայողների կազմից: (539.5, 540.7, 540.12)

540.11. Կարգապահական տույժ կրող ծառայողի դիրքի վերականգնման երկու դիմումների մերժման դեպքում, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը կարող է բավարարել տվյալ ծառայողի խնդրանքը, փոխանցելու բարի համբավի

վերականգնման պատասխանատվությունը այլ շրջանի, որտեղ այդ միջնորդությունը կարող է քննարկվել: Եթե բարի համբավի, և հոգևորականության անդամի իրավունքների, պրատականությունների և արտոնությունների վերականգնման երրորդ միջնորդությունը մերժվել է, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ ծառայողը կարող է դառնալ այցելու : (538.13, 539.6)

540.12. Հոգևորականության անդամի իրավունքների, պատասխանատվությունների և արտոնությունների վերականգնումը:

Լավ համբավը կորցրած հոգևորականության անդամը և ում բարի համբավի վերա-կանգնման միջնորդագիրը հանգեցրել է այդ հոգևորականության անդամի իրավունքների, պատասխանատվությունների և արտոնությունների վերականգնման երաշխավորությանը, կարող է վերականգնվել լավ համբավում և նրա մանդատը կվերադարձվի հետևյալ կարգով՝

1. շրջանային սուպերինտենդենտի հավանության դեպքում,
2. Շրջանային Մանդատային Խորհրդի կամ Ծառայողների Շրջանային Խորհրդի հավանությամբ,
3. Շրջանային Խորհրդատվական Խորհրդի ձայների երկու երրորդի հավանությամբ,
4. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի հավանությամբ,
5. Այդ շրջանի շրջանային ասամբլեայի հավանությամբ, որտեղ բարի հեղինակության կարգավիճակը կորցվել է:

606.1-606.2, 606.5, 606.11-606.12)

ՄԱՍ VII

ԴԱՏԱԿԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ

ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔԻ ԴԵՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԵՄՔԻ ԱՆՎԱՅԵԼ ԱՐԱՐՔԻ ԴԵՄ ՌԵԱԿՑԻԱ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԴԵՄ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՄ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔ

I. ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

600. Եկեղեցական կարգապահության նպատակն է աջակցել եկեղեցու ամբողջականությանը և կատարելությանը, անարատներին պաշտպանել վնասից, պաշտպանել եկեղեցու վկայության արդյունավետությունը, զգուշացնել և ուղղել անհոգներին, մեղավորներին առաջնորդել դեպի փրկություն, վերականգնել մեղավորներին, վերականգնել նրանց ծառայությունը ովքեր ռեաբիլիտացվել են, եկեղեցու ռեսուրսների և մարդկանց պաշտպանությունը: Քրիստոնեական Բնավորության և Քրիստոնեական վարքի կանոնները խախտած եկեղեցու անդամները կամ նրանք, ովքեր դիտավորյալ և մշտապես խախտում են եկեղեցու անդամների ուխտերը, պետք է ենթարկվեն կարգապահական տույժերի, համապատասխան իրենց գործած արարքների: Նոր Կտակարանային չափանիշը, որին հետևում է Նազովրեցու Եկեղեցին՝ դա՛ սրտի և կյանքի սրբությունն է, հետևաբար եկեղեցին պնդում է ծառայության անաղարտություն, իր ծառայողներից պահանջում է հավատարմություն Աստվածաշնչի վարդապետություններին, և ապրել սրբության մեջ: Եկեղեցական կարգապահության նպատակը պատժել կամ վնասի հատուցելը չէ, այլ հասնել վերը թվարկած նպատակներին: Ծառայողի կարգավիճակի որոշումը, այսինքն՝ նրա հեղինակության և եկեղեցում ծառայությունը շարունակելու հնարավորությունը, նույնպես կարգապահական գործընթացի ֆունկցիաներից է:

II. ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔԻ ԴԵՄ ՊԱՏԱՍԽԱՆ

601. Ամեն անգամ պատասխանը անհրաժեշտ է, երբ համապատասխան իրավասություններ ունեցող անձնավորությունը իմանում է ինչ-որ տեղեկություն, որը նրան թվում է իրական: Ի լրացում այս ամենի, պետք է պատասխան լինի այն տեղեկությանը, որ եկեղեցուն վնաս է տրվել կամ անվայել վարքի պոտենցիալ զոհերին, կամ այլ մարդկանց մարդու անվայել վարքի պատճառով, ով եկեղեցում ղեկավարում և զբաղեցնում է կարևոր պաշտոն:

601.1. Եթե եկեղեցուց համապատասխան իրավասություններ չունեցող մարդը ստանում է ստույգ տեղեկություն եկեղեցուն հնարավոր վնաս հասցնելու և մարդու անվայել արարքի մասին, ով եկեղեցում զբաղեցնում է ղեկավարող և պատասխանատու պաշտոն, ապա նա պետք է դրա մասին հաղորդի համապատասխան իրավասություններ ունեցող մարդու, ով կարող է պատասխան տալ այդ տեղեկատվությանը:

601.2. Համապատասխան իրավասություններ ունեցող անձը, ով կարող է ընդունել համապատասխան միջոցներ, որոշվում է հետևյալ կերպ.

Եթե խախտումը կատարել է.

Եկեղեցու անդամ չհանդիսացող անձը – տեղական եկեղեցու հովիվը, որտեղ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել:

Եկեղեցու անդամը – տեղական եկեղեցու հովիվը, որի անդամն է այդ այցելուն:

Հոգևորականության ներկայացուցիչը – շրջանային սուպերինտենդենտը (համագործակցելով Շրջանի Խորհրդատվական Խորհրդի հետ), որի անդամն է այդ ներկայացուցիչը կամ եկեղեցու հովիվը, որտեղ տվյալ ներկայացուցիչը աշխատում է

Շրջանային սուպերինտենդենտը – իրավասու գլխավոր սուպերինտենդենտը:

Տարածաշրջանային տնօրեն- իրավասու գլխավոր սուպերինտենդենտը:

Տարածաշրջանային ռազմավարական կոորդինատոր -իրավասու գլխավոր սուպերինտեն-դենտ:

Այլ անձ – գլխավոր քարտուղարը:

Անձը, ով իրավասություններ ունի պատասխանելու և միջոցներ ձեռնարկելու, պետք է

ժամանակին տեղյակ պահի եկեղեցու ղեկավարությանը, շրջանային, տարածաշրջանային, համաշխարհային մակարդակներով առաջադրված մեղադրանքների համար: Այդ մարդը, ով լիազորություններ ունի պատասխանելու և միջոցներ ձեռնարկելու, փաստերը բացահայտելու կամ միջոցներ ձեռնարկելու համար, կարող է օգնության համար դիմել ուրիշ մարդկանց:

601.3. Եթե մեղադրանք չի առաջադրվել, քննության նպատակն է պարզաբանել, պահանջվու՞մ է արդյոք ձեռնարկել գործողություններ զգուշացնելու վնասի մասին կամ նախկինում պատճառած վնասի չափի նվազեցումը: Այն հանգամանքներում, երբ պարզ է դառնում որ վտանգը կասեցնելու կամ պատճառած վնասի չափի նվազեցման համար հետագա գործողությունները չի պահանջվում, հետաքննությունը չի շարունակվի, բացառությամբ երբ մեղադրությունը ներկայացված է պաշտոնապես: Հետաքննության հետևանքով պարզված փաստերը կարող են հիմք հանդիսանալ մեղադրանքի համար:

III. ԵԿԵՂԵՑՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԵՄՔԻ ԱՆՎԱՅԵԼ ԱՐԱՐՔԻ ԴԵՄ ՌԵԱԿՑԻԱ

602. Եթե համապատասխան իրավասություններ ունեցող անձը, իմանում է փաստերի մասին, որոնք մատանցույց են անում վնասի մասին, որը եկեղեցում ղեկավար և պաշտոնավոր դիրք գրավող մարդու անվայել վարքի պատճառ է, ապա անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել եկեղեցու համապատասխան ռեակցիայի համար: Դրա հետ մեկտեղ, պետք է կանխել անվայել վարքի պատճառով զոհերին հավելյալ վնաս պատճառելը, ձգտել օգնել տուժածներին, մեղադրվածներին, ինչպես նաև նրանց, ովքեր տուժել են պատահարի պատճառով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել մեղադրվողի ընտանիքի համար: Եկեղեցու ռեակցիան նույնպես պետք հաշվի առնի տեղական եկեղեցու կարիքները, որոնք վերաբերվում են հասարակության հետ հարաբերություններին, պաշտպանություն պատասխանատվությունից և վնասի հատուցման պահանջների համար, ինչպես նաև եկեղեցու ամբողջականությունը և կատարելությունը պաշտպանելու համար:

Նրանք ովքեր հանդես են գալիս եկեղեցու անունից, պետք է գիտակցեն, որ նրանց խոսքերը և գործողությունները կարող են ունենալ հետևանքներ, որոնց դեմ կարող են կիրառվել քաղաքացիական օրենքներ: Եկեղեցու պարտականությունը արձագանքելու անվայել վարքին, հիմնված է ընկերոջը սիրելու քրիստոնեական սկզբունքի վրա: Ոչ ոք իրավունք չունի ֆինանսական պարտավորություններ դնել տեղական եկեղեցու կամ շրջանի վրա, առանց եկեղեցական խորհրդի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի որոշման: Ով վստահ է, որ նման գործողությունը հնարավոր է, պետք է դիմի մասնագետի խորհրդին:

602.1. Ցանկացած տեղական եկեղեցում, եկեղեցական խորհուրդը իրավունք ունի արձագանքելու ստեղծված ճգնաժամային իրավիճակին: Սակայն, երբեմն ռեակցիան անհրաժեշտ է արտահայտել մինչև հաջորդ եկեղեցական խորհրդի հանդիպում: Յուրաքանչյուր եկեղեցի, անսպասելի ճգնաժամային իրավիճակի համար պետք է ունենա անհապաղ ռեակցիայի ծրագիր:

602.2. Յուրաքանչյուր եկեղեցական շրջանում, ճգնաժամային իրավիճակի համար համապատասխան ռեակցիայի պատասխանատվությունը կրում է Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը: Սակայն, երբ ռեակցիան անհրաժեշտ է մինչ հաջորդ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հանդիպումը, ապա յուրաքանչյուր շրջան անսպասելի ճգնաժամային իրավիճակի համար պետք է ունենա անհապաղ ռեակցիայի ծրագիր: Ծրագիրը կարող է ընդգրկել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից նշանակված նախաձեռնող խմբից, որը բաղկացած է հոգաբարձության, հոգեբանության, սոցիոլոգիայի, կապի և համապատասխան օրենսդրության մասնագետներից:

603. Եկեղեցում կոնֆլիկտների լուծումը և համաձայնությունները: Տարաձայնությունները կյանքի մի մաս են, դա նույնն է նաև եկեղեցու համար: Սակայն երբ այդ տարաձայնությունները դառնում են կոնֆլիկտ, որը բաժանում է կողմնակիցներին կամ խանգարում է եկեղեցու հաղորդակցությանը, իրավիճակի ոչ ֆորմալ վերլուծությունը պետք է նախորդի ցանկացած կարգավորման ֆորմալ ընթացակարգին: Կարծես ֆորմալ կամ ոչ ֆորմալ, բայց նպատակը պետք է լինի կոնֆլիկտի լուծումը և հաշտեցումը:

603.1. Ոչ ֆորմալ գործընթաց: Երբ եկեղեցում առաջանում է կոնֆլիկտ անհրաժեշտ է իրավիճակի ոչ ֆորմալ վերլուծության և հոգաբարձական խորհրդատվությունների համար սահմանել ժամանակահատված, և այդ ժամանակահատվածում բոլոր մարդկանց հետ անհրաժեշտ է ձգտել խաղաղության մեջ ապրելու ցանկությամբ: Բոլոր մասնակցող կողմերին կոչ է արվում աղոթքով այդ պրոբլեմը բերել Աստծո առջև և փաստորեն այդ ամբողջ գործընթացը պետք է ընկղմված լինի աղոթքի մեջ: Հակամարտող մարդիկ պետք է խոնարհությամբ և հաշտվելու հույսով հաղորդակցվեն մեկը մյուսի հետ:

603.2. Ֆորմալ գործընթաց: Այդ գործընթացի ձախողման դեպքում, մարդիկ կարող են որոշում կայացնել հաշտեցման ֆորմալ գործընթաց սկսելու մասին: Այդ հարցը պետք է որոշվի ներկայացուցիչների խբերի ներկայությամբ, որոնք կազմված կլինեն եկեղեցու հասուն և անաչառ մարդկանցից: Մեղքը որոշելու դեպքում այդ խումբը կարող է առաջարկել համապատասխան միջոցներ, որոնք նկարագրված են պարագրաֆ 604-ում:

604. Կարգապահական հարցերի լուծումը համաձայնության ճանապարհով:

Ուղեցույցում նկարագրված կարգապահական ընթացակարգը, իրենից ներկայացնում է մեղադրանքի և անհամապատասխան վարքի քննման ընթացակարգ, երբ այդպիսի մեղադրանքները ժխտվում են մեղավորի կողմից: Շատ դեպքերում, կարգապահական հարցերը տեղին է լուծել համաձայնության ճանապարհով: Մենք խորհուրդ ենք տալիս համաձայնությունը օգտագործել, երբ այն գործնականում արդարացված է:

604.1. Տեղական Կարգապահական Խորհրդի իրավասությանը վերաբերվող ցանկացած հարց, կարող է լուծվել հովվի և մեղադրվողի միջև համաձայնությամբ, եթե այն հավանության է արժանացել Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և շրջանային սուպերինտենդենտի կողմից: Այդպիսի համաձայնության պայմանները ունեն նույն ուժը, ինչ Տեղական Կարգապահական Խորհրդի գործողությունները:

604.2. Շրջանային Կարգապահական Խորհրդի իրավասությանը վերաբերվող ցանկացած հարց, կարող է լուծվել մեղադրվողի և շրջանային սուպերինտենդենտի միջև կնքված գրավոր համաձայնագրով, եթե համաձայանագիրը հաստատված է Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից: Այդպիսի համաձայնության պայմանները ունեն նույն ուժը, ինչ Շրջանային Կարգապահական Խորհրդի գործողությունները:

IV. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԴԵՄ

605. Եթե այցելուն մեղադրվում է անվայել արարք գործելու մեջ, ապա այդ մեղադրանքը պետք է շարադրվի գրավոր ձևով: Դիմումը պետք է ստորագրված լինի ամենաքիչը 2 այցելուի կողմից, ովքեր հավատարմորեն եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան 6 ամիս: Հովիվը նշանակում է հետաքննող հանձնաժողով, որը բաղկացած է տեղական եկեղեցու 3 անդամից, որը պետք է հաստատի շրջանային սուպերինտենդենտը: Հանձնաժողովը հետաքննության մասին ներկայացնում է գրավոր հաշվետվություն: Հաշվետվությունը պետք է ստորագրված լինի մեծամասնության կողմից, այնուհետև այն պետք է փոխանցվի եկեղեցական խորհրդին:

Հետաքննության արդյունքներին համապատասխան, անբիծ հեղինակությամբ տեղական եկեղեցու 2 հավատարիմ անդամ, կարող են մեղադրանք առաջադրել ընդդեմ հայտարարված

անձի և փոխանցել այն եկեղեցական խորհրդին: Դրան համապատասխան, շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ, եկեղեցական խորհուրդը նշանակում է տեղական Կարգապահական Խորհուրդ բաղկացած 5 մարդուց, որոնք ընդունակ են անկողմանակալ և արդար քննել գործի հանգամանքները: Եթե շրջանային սուպերինտենդենտի կարծիքով, տեղական եկեղեցու հինգ անդամի ընտրությունը աննպատակահարմար է անդամների քիչ քանակության, մեղադրանքի բնույթի, մեղադրվողների հասարակական ազդեցության պատճառով, ապա շրջանային սուպերինտենդենտը խորհրդակցելով հովվի հետ, տեղի Կարգապահական Խորհուրդ է նշանակում շրջանի այլ եկեղեցիներից 5 անդամներ: Այդ խորհուրդը պետք է անցկացնի գործի և նրան վերաբերվող հարցերի քննության նիստեր, երբ այն գործնականորեն հնարավոր կդառնա: Վկաներին քննելուց հետո, ուշադրություն դարձնելով համապատասխան ապացույցների վրա, Կարգապահական Խորհուրդը պետք է մեղադրվողին արդարացնի կամ համապատասխան ձևով պատժի: Հանձնաժողովի որոշումը պետք է լինի միաձայն: Կարգապահական միջոցները կարող են լինել նկատողության ձևով, դադրեցնելով անդամությունը կամ տեղական եկեղեցու անդամությունից հեռացնելը: (516.8)

605.1. Վերաքննիչ բողոքը տեղական Կարգապահական Խորհուրդի որոշմամբ 30 օրերի ընթացքում, տրվում է Շրջանային Վերաքննիչ Խորհրդին: Բողոքը կարող է տրվել եկեղեցական խորհրդի կամ մեղադրվողի կողմից:

605.2. Տեղական եկեղեցու անդամությունից հեռացված այցելուն, տեղական Կարգապահական Խորհուրդի որոշմամբ, կարող է միաբանվել այդ շրջանի Նազովրեցու Եկեղեցուն, միայն Շրջանային Խորհրդատվական Խորհրդի հավանությամբ: Հավանությունը ստանալուց հետո, նրան ընդունում են տեղական եկեղեցու անդամության մեջ, համաձայն հաստատված արարողակարգի: (21, 28-33, 112.1-112.4, 704)

605.3. Ղեկավար պաշտոններում ծառայող այցելուները պետք է ունենան բարձր բարոյական նորմեր: Հաճախ վատ վարքագծի հետևանքները լինում են շատ լուրջ: Մարդը՝ ով մեղադրվում է սեռական չարաշահումներում, որի մեջ ներգրավված է անչափահաս չի կարող ծառայել որևէ պաշտոնում, կամ մասնակցել անչափահասների ծառայությունների մեջ, ինչպես նաև տեղական եկեղեցում չի կարող ընտրվել կամ նշանակվել որևէ ղեկավար պաշտոնում: Անչափահաս համարվում է 18 տարեկանից ցածր ցանկացած մարդ, բացի այն դեպքերից երբ չափահասության տարիքը կարող է հասնել ավելի ուշ, համաձայն պետության օրենքների: (503.1)

V. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՄ

606. Նազովրեցու Եկեղեցու արդյունավետությունը և անպարտելիությունը կապված է նրա հոգևորականների հոգևոր որակներից, բնավորությունից և ապրելակերպից: Նազովրեցու Եկեղեցու հոգևորականության ներկայացուցիչները ձգտում են կատարել բարձրագույն կոչումի կանչը և կատարում են օծյալների ֆունկցիան, որով տրված է եկեղեցու վստահությունը: Նրանք ընդունում են կանչը և գիտակցում են, որ ում որ նրանք ծառայում են, նրանցից կպահանջեն վարքագծի բարձր չափանիշներ: Ծառայողների վրա դրված այդ բաձր չափանիշների պատճառով, նրանք և նրանց ծառայությունը հատկապես զգայուն են նրանց դեմ առաջադրված անվայել վարքի ամեն տեսակ մեղադրանքների նկատմամբ: Հետևաբար ներքևում բերված ընթացակարգերին պետք է հետևել իրական աստվածաշնչյան հասունությամբ և իմաստությամբ, որը վայել է Աստծո ժողովրդին:

606.1. Եթե հոգևորականության ներկայացուցիչը մեղադրվում է անվայել վարքագծում կամ իր հոգևոր աստիճանի համեմատ գործել է անհարիր արարք, կամ սովորեցրել է վարդապետություններ, որոնք չեն համապատասխանում Նազովրեցու Եկեղեցու վարդապետությանը, ապա այդպիսի

մեղադրանքները պետք է ներկայացվեն գրավոր և ստորագրվեն անբիծ հեղինակությամբ տեղական եկեղեցու 2 հավատարիմ անդամների կողմից: Սեռական բնույթի մեղադրանքները չեն կարող ստորագրել նմանօրինակ գործողություններում ներգրավված մարդու կողմից: Գրավոր մեղադրանքը պետք է ուղարկվի Շրջանային Խորհրդատվական Խորհրդին, որի անդամն է մեղադրյալը: Այն կցվում է այդ գործին վերաբերվող գրառումներին:

Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը պետք է մեղադրյալին տեղյակ պահի գրավոր մեղադրանքի փոխանցման մասին, երբ այն դառնա գործնականորեն իրագործելի, որը թույլ է տալիս ներկայացնել փաստացի ծանուցագիր: Եթե փաստացի ծանուցագիր ուղարկելը աննպատակահարմար է, այն կարելի է տալ այդ շրջանի իրավական փաստատթղթերի փոխանցման սովորական եղանակով: Մեղադրյալը և նրա փաստաբանը իրավունք ունեն ծանոթանալու առաջադրված մեղադրանքների հետ, և առաջին պահանջով ստանալ դրանց գրավոր կրկնօրինակը: (540.4, 540.9, 540.12)

606.2. Մեղադրանքի տակ դրված հոգևորականի ստորագրությունը, հավաստագիր է, ըստ որի ստորագրողը հայտարարում է, որ ինչքանով որ նրան հայտնի է և համաձայն ունեցած տեղեկության, և ուշադրությամբ քննելով գործը, նա հանգել է եզրակացության, որ մեղադրանքը հաստատվում է փաստերով: (540.4, 540.12)

606.3. Շրջանային սուպերինտենդենտին Շրջանային Խորհրդատվական Խորհրդին գրավոր մեղադրանքը փոխանցելիս, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը նշանակում է հանձնաժողով, բաղկացած երկու կամ ավել ձեռնադրված ծառայողներից և ոչ պակաս քան երկու այցելուներից, որոնք հաստատված են Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, փաստերի և գործի առիթով կատարելու հետաքննություն, այնուհետև արդյունքների մասին գրավոր հաշվետվություն ներկայացնել ստորագրված հանձնաժողովի անդամների մեծամասնության կողմից: Եթե հաշվետվության քննարկելիս պարզվում է, որ մեղադրանքի համար կան բավական հիմքեր, ապա պետք է պատրաստվի մեղադրանքի նախագիծ, որը պետք է ստորագրվի երկու ձեռնադրված ծառայողների կողմից: Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը դրա մասին պետք է մեղադրյալին տեղյակ պահի, երբ այն գործնականորեն հնարավոր է ցանկացած ձևով, որը հնարավորություն է տալիս ներկայացնել փաստացի ծանուցագիրը: Եթե փաստացի ծանուցագիր ուղարկելը աննպատակահարմար է, այն կարելի է տալ այդ շրջանի իրավական փաստատթղթերի փոխանցման սովորական եղանակով: Մեղադրյալը և նրա փաստաբանը իրավունք ունեն ծանոթանալու առաջադրված մեղադրանքների հետ, և առաջին պահանջով ստանալ դրանց գրավոր կրկնօրինակը: Մեղադրյալը չի պատասխանում այն մեղադրանքներին, որոնք նրան չեն տեղեկացրել այդ կետերին համապատասխան: (225.3)

606.4. Եթե հետաքննությունից հետո պարզվում է, որ հոգևորականության ներկայացուցչի դեմ մեղադրանքը առաջադրվել է անհիմն և անբարեխղճորեն, ապա այդ գործողությունները կարող են հիմք հանդիսանալ մեղադրանքը ուղարկողների հանդեպ կիրառելու կարգապահական մրջոցներ:

606.5. Եթե մեղադրանքը ներկայացվել է քննության համար, ապա Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը նշանակում է հանձնաժողով շրջանի 5 ձեռնադրված ծառայող, և ոչ պակաս քան երկու այցելուներ, որոնք հաստատված են քննելու մեղադրանքը շրջանի կողմից: Այդ 5 ձեռնադրված ծառայողները կազմում են Շրջանային Կարգապահական Խորհուրդը գումարելու նիստ և քննելու գործը համապատասխան եկեղեցու օրենքների: Ձեռնադրված կամ լիցենզավորված ծառայողի դեմ գործում, շրջանային սուպերինտենդենտը չի կարող հանդես գալ որպես մեղադրող կամ մեղադրողի օգնական: Կարգապահական Խորհուրդը կարող է մեղադրյալին արդարացնել կամ համապատասխան խախտման համար նշանակել

կարգապահական միջոցներ: Նրանք կարող են ընդգրկել միջոցներ, որոնք կիրառվում են մեղավոր կողմի փրկության և վերականգնման համար: Կարգապահական միջոցները կարող են ընդգրկել այնպիսի գործողություններ ինչպես՝ ապաշխարհություն, խոստովանություն, փոխհատուցում, երաշխավորություն և ծառայողին մանդատից զրկում, հեռացնել եկեղեցու ծառայությունից/անդամությունից, հանրային կամ փակ նկատողություն, ինչպես նաև այլ միջոցներ, ներառյալ փորձնական ժամանակահատվածում կարգապահական միջոցների կիրառություն կամ դադարեցում: (225.4, 540.4, 540.12, 606.11-606.12)

606.6. Մեղադրյալի կամ Շրջանային Խորհրդատվական Խորհրդի խնդրանքով, Կարգապահական Խորհուրդը կարող է նշանակվել տարածաշրջանային մակարդակով, որպես Տարածաշրջանային Կարգապահական Խորհուրդ: Յուրաքանչյուր առանձին գործի համար Տարածաշրջանային Կարգապահական Խորհուրդը նշանակվում է լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից, որի անդամն է մեղադրվող ծառայողը:

606.7. Նախատեսվում է, որ միսիոների նկատմամբ առաջին մակարդակի ոչ մի շրջան չի կարող կիրառել կարգապահական միջոցներ:

606.8. Կարգապահական Խորհրդի որոշումը պետք է լինի անանուն, գրավոր ձևավորված և ստորագրված բոլոր անդամների կողմից, ինչպես նաև ընդգրկել ամեն մեղադրանքի դեմ «մեղավոր է» կամ «անմեղ» որոշումով:

606.9. Կարգապահական Խորհրդի նիստերը միշտ պետք է անցկացվեն շրջանի տարածքում, որտեղ որ առաջադրվել են մեղադրանքները, և որտեղ որ որոշել է մեղադրանքը քննող Խորհուրդը:

606.10. Ցանկացած գործ լսելու նիստի արարողակարգը պետք է համապատասխանի ներքոհիշյալ Ընթացիք Արարողակարգերին: (225.3-225.4, 532.9, 538.13, 609)

606.11. Եթե անվայել վարքի մեջ մեղադրված ծառայողը ընդունում կամ խոստովանվում է իր մեղքը մինչ նրա դեմ մեղադրանքի առաջադրելը, ապա Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը որոշում է կարգապահական միջոց համապատասխան պարագրաֆ 606.5-ի: (540.4, 540.12)

606.12. Եթե անվայել վարքի մեջ մեղադրված ծառայողը ընդունում կամ խոստովանվում է իր մեղքը մինչև Կարգապահական Խորհրդի հետ հանդիպումը, ապա Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը որոշում է կարգապահական միջոց համապատասխան պարագրաֆ 606.5-ի: (540.4, 540.12)

607. Կարգապահական Խորհրդի որոշումից հետո մեղադրյալը, Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը, կամ մեղադրանքը ստորագրողները կայացված որոշման վերաքննության վերաբերյալ կարող են դիմել Տարածաշրջանային Վերաքննիչ դատարան: Վերաքննության բողոքը պետք է տրվի Կարգապահական Խորհրդի որոշումից հետո 30 օրերի ընթացքում, իսկ դատարանը պետք է գործը վերանայի ամբողջովին և հետևի թե՞ ինչպիսի քայլեր են ձեռնարկվել: եթե դատարանը հայտնաբերում է մարդու իրավունքների խախտման էական սխալներ, նա ուղղում է դրանք նոր լսումներ նշանակելու միջոցով, որպեսզի օգնի նրան, ով տուժել է գործի նախորդ քննելուց և կայացված որոշումներից:

608. Այն դեպքում, եթե Կարգապահական Խորհրդի որոշումը մեղավոր ծառայողի դեմ է, և այդ որոշումը նախատեսում է ծառայության դադարեցում կամ ծառայողական մանդատի զրկում, ապա այդ որոշման համապատախան, ծառայողը դադարեցնում է իր ծառայողական գործունեությունը: Հակառակ դեպքում, խորհրդի որոշմանը չինազանդելը կզրկի Վերաքննիչ Դատարան դիմելու իրավունքից:

608.1. Երբ Կարգապահական Խորհրդի որոշումը նախատեսում է ծառայողի գործունեության դադարեցումը կամ ծառայողի մանդատից զրկվելը, և մեղադրված ծառայողը ցանկանում է

վերաքննության տալ, նա պետք է դատարանի քարտուղարին ուղարկի բողոքը, վերաքննության ծանուցման և ծառայության մանդատի հետ: Վերաքննության դիմելը պետք է հիմնավորված լինի այս ընթացակարգի ճշգրիտ կատարմամբ: Ծառայողի մանդատը պահպանվում է քարտուղարի կողմից, մինչև գործի համար չի կայացվում վերջնական որոշում: Այնուհետև, մանդատը փոխանցվում է կամ գլխավոր քարտուղարին, կամ էլ դատարանի որոշմամբ վերադարձվում է ծառայողին:

608.2. Վերաքննությունները, Գլխավոր Վերաքննիչ Դատարան կարող են ուղարկել մեղադրվողը կամ Կարգապահական Խորհուրդը, եթե համաձայն չեն Տարածաշրջանային Վերաքննիչ Դատարանի որոշման հետ: Նրանք Գլխավոր Վերաքննիչ Դատարան են ուղարկվում նույն կանոնների համապատասխան, ինչպես մնացած վերաքննությունները:

VI. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

609. Գլխավոր Վերաքննիչ Դատարանը ընդունում է միասնական Կանոնակարգերի Սկզբունքներ, որով վերաքննիչ դատարաններում դատական գործեր քննելիս, առաջնորդվում են բոլոր կարգապահական խորհուրդները: Կանոնակարգերի ընդունելուց և հրապարակելուց հետո, նրանք դատական արարողակարգերում ունենում են վերջնական ուժ: Հրատարակված Կանոնա_ կարգերի հրատարակչությունը ներկայացվում է գլխավոր քարտուղարի միջոցով: Կանոնակարգի Սկզբունքների փոփոխությունները ընդունվում են Գլխավոր Վերաքննիչ Դատարանի կողմից, ցանկացած ժամանակ, և հաստատվելուց ու հրատարակվելուց հետո բոլոր գործերի նկատմամբ ուժի մեջ են մտնում: Ցանկացած քայլերը, որոնք ձեռնարկվում են սրանից հետո, ցանկացած ընթացակարգի մեջ, պետք է համապատասխանեն այդպիսի փոփոխություններին: (606.1)

VII. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

610. Յուրաքանչյուր կազմավորված շրջան, պետք է ունենա Շրջանային Վերաքննիչ Դատարան, բաղկացած երկու այցելուից և երեք ձեռնադրված ծառայողից, ներառյալ շրջանային սուպերինտենդենտից, որոնք ընտրվել են շրջանային ասամբլեայի կողմից համաձայն պարագրաֆ 205.22-ի: Այդ դատարանը քննում է եկեղեցու անդամների վերաքննության դիմումները, որոնք վերաբերվում են տեղական կարգապահական խորհուրդների գործունեություններին: Վերաքննության ծանուցագրերը տրվում են գրավոր ձևով այդպիսի գործունեություններից հետո 30 օրերի ընթացքում, կամ այն բանից հետո երբ վերաքննություն տվողին հայտնի է դառնում այդ գործողության մասին: Այդ ծանուցագիրը ուղարկվում է Վերաքննիչ դատարան կամ նրա անդամներից մեկին, իսկ պատճեն ուղարկվում է տեղական եկեղեցու հովվին և համապատասխան եկեղեցու քարտուղարին: (205.22)

610.1. Շրջանային Վերաքննիչ Դատարանը լիազորություն ունի վերաքննելու և որոշումներ կայացնելու եկեղեցու անդամների բոլոր բողոքների համար կամ եկեղեցիների, ովքեր համաձայն չեն Կարգապահական Խորհրդի գործողությունների հետ, ով լիազորություն ունի այցելուների նկատմամբ որոշումներ կայացնելու:

VIII. ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

611. Գլխավոր Ասամբլեան ընտրում է հինգ ձեռնադրված նշանակված ծառայողների, Գլխավոր Վերաքննիչ Դատարանի անդամների համար, որոնք ծառայում են այդ պաշտոնում հաջորդ չորս տարիների ընթացքում, մինչև կընտրվեն և կհաստատվեն նրանց փոխարինողները: Դատարանն ունի հետևյալ լիազորությունները.

611.1. Քննել և կայացնել որոշումներ, Կարգապահական Խորհուրդների և Շրջանային Վերաքննիչ Դատարանների գործողությունների վերաքննությունների կապակցությամբ: Երբ դատարանը կայացնում է վերաքննությունների վճիռը, ապա դրանք պարտադիր և վերջնական են: (305.7)

612. Գլխավոր Ասամբլեաների նիստերի ընդմիջման ժամանակ առաջացած Գլխավոր Վերաքննիչ Դատարանի թափուր տեղերը, լրացվում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: (317.6)

613. Գլխավոր Վերաքննիչ Դատարանի անդամների օրակապահիկները և նախատեսված ծախսերը պետք է լինեն նույնը, ինչ-որ եկեղեցու Գլխավոր խորհրդի անդամների օրակապահիկները և նախատեսված ծախսերը, երբ նրանք մասնակցում են դատարանի պաշտոնական գործունեության մեջ: Վճարումը կատարվում է գլխավոր գանձապահի միջոցով:

614. Գլխավոր քարտուղարը պահպանում է Գլխավոր Վերաքննիչ Դատարանի բոլոր գրառումները և որոշումները: (326.4)

IX. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

615. Տարածաշրջանի Վերաքննիչ Դատարանը պետք է լինի ամեն տարածաշրջանում: Յուրաքանչյուր Տարածաշրջանի Վերաքննիչ Դատարան կազմված է 5 ձեռնադրված ծառայողներից, որոնք ընտրվում են ամեն Գլխավոր Ասամբլեայից հետո, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Թափուրը լրացվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից: Տարածաշրջանի Վերաքննիչ Դատարանի Կանոնակարգի սկզբունքները նույնն են ինչ-որ Գլխավոր Վերաքննիչ Դատարանինը, ինչպես եկեղեցական *Ուղեցույցում*, այնպես էլ *Դատական Ուղեցույցում*: Պահանջվում է քվորում 5 մարդուց բաղկացած, որպեսզի վերաքննության բողոքը վերանայվի դատարանի կողմից:

X. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔ

616. Ծառայողների և այցելուների դեմ առաջադրված մեղադրանքների ճշմարիտ և անաչառ վերաքննությունը չպետք է մերժվի, կամ ապորենիորեն հետաձգվի: Գրավոր մեղադրանքները պետք է վերաքննվեն շատ կարճ ժամանակահատվածում, որպեսզի անմեղները արդարացվեն իսկ մեղավորները պատժվեն: Յուրաքանչյուր մեղադրվող պետք է ունենա անմեղության կանխավարկած, մինչև չապացուցվի նրա մեղավորությունը: Մեղադրող կողմը մեղադրության ամեն կետի համար, պետք է բերի բարոյապես արդարացված և կասկած չհարուցող ապացույցներ մեղադրվողի մեղքի վերաբերյալ:

616.1. Ծառայողի համար դատական գործի բոլոր նախապատրաստական գրառումների ծախսերը, ներառյալ բոլոր վկաների բառացի վկայությունների գրառումները, Գլխավոր Վերաքննիչ Դատարան վերաքննիչ բողոք տալու նպատակով, վճարվում են շրջանի կողմից, որտեղ կատարվել են գործի լսումներ և նշանակվել են կարգապահական միջոցներ: Յուրաքանչյուր բողոքարկող ծառայող բողոքարկման ժամանակ, իրավունք ունի ներկայացնելու

իր փաստարկները բանավոր կամ գրավոր, բայց այդ իրավունքից մեղադրվողը կարող է հրաժարվել գրավոր ձևով:

Այցելուի համար դատական գործի բոլոր նախապատրաստական գրառումների ծախսերը, ներառյալ բոլոր վկաների բառացի վկայությունների գրառումները, Շրջանային Վերաքննիչ Դատարան վերաքննիչ բողոք տալու նպատակով, վճարվում են շրջանի կողմից, որտեղ կատարվել են գործի լսումներ և նշանակվել են կարգապահական միջոցներ: Յուրաքանչյուր բողոքարկող այցելու բողոքարկման ժամանակ, իրավունք ունի ներկայացնելու իր փաստարկները բանավոր կամ գրավոր, բայց այդ իրավունքից մեղադրվողը կարող է հրաժարվել գրավոր ձևով:

616.2. Ծառայողների համար բարձրագույն վերաքննիչ դատարանը հանդիսանում է Գլխավոր Վերաքննիչ Դատարանը, իսկ այցելուների համար Շրջանային Վերաքննիչ Դատարանը:

616.3. Անվայել վարքի կամ եկեղեցու *Ուղեցույցի* խախտման մեջ մեղադրվող ծառայողը կամ այցելուն, ում դեմ առաջադրվել են մեղադրանքներ, իրավունք ունի երես առ երես հանդիպելու մեղադրողների հետ և մեղադրող կողմի վկաներին ենթարկել խաչաձև հարցաքննության:

616.4. Կարգապահական Խորհրդին վկաների տված վկայությունները հաշվի չեն առնվում, եթե այդ վկայությունները ամրացված չեն երդումով կամ հանդիսավոր հայտարարությունով:

616.5. Անվայել վարքի խախտման մեջ մեղադրվող ծառայողը կամ այցելուն, ում դեմ առաջադրվել են մեղադրանքներ, և ով պետք է կանգնի Կարգապահական Խորհրդի առջև, իրավունք ունի ընտրելու իր պաշտպանին այն պայմանով, որ նա անբիծ հեղինակությամբ Նազովրեցու Եկեղեցու անդամ է: Այդպիսի պաշտպան կարող է լինել կազմակերպված եկեղեցու ցնկացած անդամ, ում դեմ առաջադրված չէ գրավոր մեղադրանք:

616.6. Ծառայողից կամ անդամից չի պահանջվում պատասխանել մեղադրանքներին, որոնք տեղի են ունեցել մեղադրանքը տալուց 5 տարի առաջ, լսումների ժամանակ ոչ մի վկայի ցուցմունք հաշվի չի առնվի, եթե տուժվածը և մեղադրող կողմը դա շուտ չեն արել անչափահասության կամ հոգեկան խանգարման կամ խելացնորության պատճառով, ապա 5 տարին հաշվվում է մեղադրողի 18 տարին լրանալուց կամ հոգեկան առողջությունը վերականգնելուց հետո: Անչափահասի դեմ սեռական ոտնձգության դեպքում ժամկետ գոյություն չունի: Անչափահաս համարվում է 18 տարեկանից ցածր ցանկացած մարդ, բացի այն դեպքերից երբ չափահասության տարիքը կարող է հասնել ավելի ուշ, համաձայն պետության օրենքների:

Եթե ծառայողը քրեական դատարանով մեղադրվել է քրեական հանցանք գործելու մեջ, նա պետք է հանձնի իր մանդատը շրջանային սուպերինտենդենտին, ծառայողի խնդրանքով, և եթե այդ գործում չի ներքաշվել Կարգապահական Խորհուրդը, ապա Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը քննում է գործի հանգամանքները և եթե հարկ համարի, կարող է վերականգնել ծառայողի մանդատը:

616.7. Ծառայողը կամ այցելուն չպետք է կրկնակի անգամ պատասխանատվություն կրեն միևնույն արարքի համար: Սակայն, եթե վերաքննող դատարանի կողմից հայտնաբերվել է սխալ, որը եղել է Կարգապահական Խորհուրդի լսումների ժամանակ և որը հիմք է տալիս հետաձգելու որոշումը, ապա հնարավոր է բացառություն այդ կանոնից:

ՄԱՍ VIII

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ

Ծանոթություն. Ողեցույցի ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐ բաժնում ուղղումներ կամ լրացումներ կատարելու դեպքում պահանջվում է Գլխավոր Ասամբլեայի թույլատրող գործողությունը:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ

I. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

700. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Մինչ Հաղորդության խորհուրդը կատարելը ընթերցվում է Սուրբ Գիրքը. 1 Կորնթացիս 11:23–29, Ղուկաս 22:14–20 կամ Աստվածաշնչից այլ հատված: Այնուհետև ծառայողը ասում է՝

Տերունական ընթրիքը սահմանվել է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից որպես խորհուրդ, որը հռչակում է Նրա կյանքը, տառապանքները, քավչական մահը և այն հույսը, որ Նա կրկին կգա: Այն հռչակում է Նրա մահվան մասին, մինչ Նրա գալուստը:

Հաղորդությունը շնորհքի միջոց է, որտեղ Քրիստոսը ներկա է Հոգու միջոցով: Այս խորհուրդը պետք է ընդունվի ակնածանքով, հարգանքով և երախտապարտությամբ այն ամենի համար ինչ արել է Քրիստոսը:

Ամեն ոք, ով անկեղծորեն ապաշխարել է, թողել է իր մեղքերը և հավատում է Քրիստոին, փրկության համար հրավիրվում է մասնակցելու Քրիստոսի մահվանը և հարությանը: Մենք մոտենում ենք սեղանին նրա համար, որպեսզի կյանքում և փրկության մեջ նորոգվենք և Հոգու միջոցով դառնանք ամբողջական: Եկեղեցու հետ միաբան դավանենք մեր հավատքը՝ Քրիստոսը մահացավ, Քրիստոսը հարություն առավ, Քրիստոսը կրկին կգա: Դրա համար մենք աղոթում ենք.

Ծառայողը կարող է մեղքերի խոստովանության աղոթք ասել, վերջացնելով այն հետևյալ խոսքերով.

Սուրբ Աստված,

Մենք հավաքվել ենք Քո սեղանի շուրջը, Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, Ով, օծված էր Քո Սուրբ Հոգով, որպեսզի աղքատներին քարոզեր Բարի Լուրը, գերիներին ազատություն հռչակեր և ազատ արձակեր ճնշվածներին: Քրիստոսը բժշկում էր հիվանդներին, կերակրում էր սովածներին, ուտում էր մեղավորների հետ և մեղքերի թողության համար հաստատում էր նոր ուխտը: Մենք ապրում ենք Նրա վերադարձի հույսով:

Այդ գիշեր մեր Տերը մատնվեց Նա վերցրեց հացը և գոհանալով կոտրեց և տվեց Իր աշակերտներին ասելով. «Սա Իմ մարմինն է, որ ձեզ համար տրվում է, սա արեք Իմ հիշատակի համար»:

Այնպես էլ ընթրիքից հետո Նա վերցրեց գավաթը, գոհացավ և ասեց. «Խմեք դրանից, որովհետև դա Նոր Ուխտն է Իմ արյունով, որ ձեր մեղքերի թողության համար թափվում է: Այս արեք իմ հիշատակի համար»: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ: Ամեն:

Այսպիսով մենք հավաքվել ենք այստեղ որպես Քրիստոսի Մարմին, որպեսզի փառաբանությամբ և գոհությամբ մեզ նվիրաբերենք Քեզ: Լից Քո Հոգին մեր վրա ու այս բարիքների վրա: Քո Հոգու զորությամբ դարձրու դրանք մեզ համար Քրիստոսի մարմինն ու արյունը, որպեսզի մենք աշխարհի համար դառնանք Քրիստոսի Մարմինը, փրկագնված Նրա արյունով:

Քո Հոգով մեզ Քրիստոսի հետ մեկ դարձրու, մեկ մեկս մյուսիս հետ և մեկ ամբողջ աշխարհին Քրիստոսի ծառայությամբ ծառայելու համար, միչև վերջնական

հաղթանակով Քրիստոսը կրկին կգա: Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու, Ամեն:

Եվ այժմ ինչպես մեր Քրիստոս Փրկիչը սովորեցրել է եկեք աղոթենք (համայնքը կարող է աղոթել "Հայր Մեր" աղոթքը):

«Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը, գա Քո արքայությունը, լինի Քո կամքը, ինչպես երկնքում այնպես էլ երկրի վրա: Մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր: Եվ մեզ ներիր մեր պարտքերը, ինչպես մենք կներենք մեր պարտապաններին: Եվ մի տանիր մեզ փորձության մեջ, այլ ազատիր մեզ չարիցը, քանի որ քոնն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից, Ամեն»:

Հացը բաշխելու ժամանակ, ծառայողն ասում է.

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինը, որը կոտրվել է մեզ համար, ձեզ անարատ պահի հավիտենական կյանքի համար: Առեք և կերեք ի հիշատակ նրա, որ Քրիստոսը մեռավ ձեզ համար և եղեք շնորհակալ»:

Երբ գավաթը փոխանցվում է, ծառայողն ասում է.

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի արյունը, թափված ձեզ համար, ձեզ անարատ պահի հավիտենական կյանքի համար: Խմեք հիշատակի համար, որ Հիսուսի արյունը թափվել է ձեզ համար և եղեք շնորհակալ»:

Երբ բոլորը մասնակցել են հաղորդության խորհրդում, ծառայողը ասում է երախտագիտության և նվիրվածության վերջին աղոթքը: (29.5, 515.4, 532.7, 533.2, 534.1)

Նշում: Միայն չխմորված գինին կարող է օգտագործվել Հաղորդության մեջ:

701. ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԵԼԻ՛ ԵՂԲԱՅՐՆԵՐ և ՔՈՒՅՐԵՐ. Քրիստոնեական մկրտությունը խորհուրդ է, որը խորհրդանշում է հավատքով մասնակցություն Հիսուս Քրիստոսի մահվանը և հարությանը, և միացում Նրա Մարմնին՝ Եկեղեցուն: Դա Հիսուս Քրիստոսին Տեր և Փրկիչ հռչակող շնորհքի միջոց է:

Պողոս Առաքյալը հաստատում է, որ մենք բոլորս, ով մկրտվել է Հիսուս Քրիստոսի անունով, մկրտվել ենք Նրա մահվանը: Այսպիսով մենք Նրա հետ մկրտվելով թաղվել ենք մահվան մեջ, ինչպես որ Քրիստոսը մեռելներից հարություն առավ, այնպես էլ մենք նորոգված կյանքով քայլենք: Որովհետև եթե Նրա մահով միացանք Նրան, ապա հարության ժամանակ էլ Նրան նման կլինենք:

Քրիստոնեական հավատքին, որին դուք այսօր միանում եք պատրաստվելով մկրտության հաստատվում է Հավատքի Առաքելական Հանգանակության մեջ, որը ասում է.

Ծառայողը համայնքին առաջնորդում է հավատքի հանգանակության ընթերցանության մեջ.

«Մենք հավատում ենք Հայր Աստծուն, երկնքի և երկրի Ամենակարող ստեղծողին: Եվ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Աստծո Միածին Որդուն, Սուրբ Հոգու միջոցով կույս Մարիամից ծնված, տանջված Պոնտացի Պիղատոսի օրերում, խաչված, մահացած և թաղված, դժոխք իջած, մեռելներից երրորդ օրը հարություն առած, համբարձված երկինք և Հոր Աստծո աջ կողմը նստած, որտեղից Նա կգա դատելու կենդանիները և մեռելները:

Մենք հավատում եմ Սուրբ Հոգուն, քրիստոնեական ընդհանրական սուրբ Եկեղեցուն,

սրբերի հաղորդակցությանը, մեղքերի թողությանը, մարմնի հարությանը և հավիտենական կյանքին»:

Կմկրտվե՞ս այս հավատքին:

Պատասխան. «Այո՛, կմկրտվեմ»

Ընդունու՞մ ես Հիսուս Քրիստոսին, որպես քո Փրկիչ և հավատու՞մ ես, որ Նա հիմա էլ քեզ փրկում է:

Պատասխան. «Այո՛»

Կկատարե՞ս Աստծո սուրբ կամքը և պահել Նրա պատվիրանքները քո կյանքի բոլոր օրերում:

Պատասխան. «Այո՛»

Որպես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ, քո ամբողջ կյանքի ընթացքում կհետևե՞ս Նրան աճելով շնորհքի մեջ և սիրելով Աստծուն և մերձավորիդ:

Պատասխան. «Այո՛, Աստծո օգնությամբ

Ծառայողը տալով մկրտվողի լրիվ անունը և օգտագործելով մկրտության ձևերից մեկը՝ ցողելու, ջրելու կամ ջրի մեջ ամբողջությամբ ընկղմվելու միջոցով և պետք է ասի.

_____, ես մկրտում են քեզ հանուն Հոր, Որդու, և Սուրբ Հոգու: Ամեն:

702. ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Մինչ խնամակալները կներկայացնեն երեխային/ներին, ծառայողը պետք է ասի.

ՍԻՐԵԼԻ՛ ԵՂԲԱՅՐՆԵՐ և ՔՈՒՅՐԵՐ.

Մկրտությունը, դա Նոր Կտակարանի շնորհքի խորհուրդն ու կնիքն է: Չնայած որ մենք չենք հավատում, որ երեխայի մկրտությունը փոխանցում է Աստծո վերափոխող շնորհքը, մենք հավատում ենք, որ Քրիստոսը տվել է մեզ այդ սուրբ խորհուրդը, որպես Նոր Կտակարանի խորհուրդ և կնիք: Այս փոքրիկ երեխայի համար քրիստոնեական մկրտությունը նշանակում է, որ Աստծտված նրան ընդունում է քրիստոնեական հավատքի համայնք, նախնական շնորհքի հիմքի վրա: Այդ շնորհքը ապագայում նախատեսում է նրա գիտակցված հավատքի անձնական դավանությունը Հիսուս Քրիստոսի նկատմամբ:

Ներկայացնելով այս երեխային մկրտության համար, դրանով վկայում եք ձեր անձնական հավատքի և նպատակի մասին, կյանքի սկզբում ուղղորդելու նրան ճանաչելու Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի: Հետևաբար ձեր պարտականությունն է սովորեցնել նրան, երբ նա կկարողանա հասկանալ, այս սուրբ խորհրդի էության և բնույթի մասին, հետևել նրա կրթությանը, որպեսզի նա չհեռանա, ուղղել նրա ոտքերը եկեղեցի, պահել նրան վտանգավոր սովորություններից և վատ մարդկանց հետ շփվելուց, և ինչքան ձեզ համար հնարավոր է, աճեցնել և հաստատել նրան Տիրոջ մեջ:

Խոստանու՞մ եք Աստծո օգնությամբ այդպես վարվել, եթե այո, պատասխանեք. «Այո՛ կանենք»:

Ծառայողը կարող է խնդրել ծնողներին կամ խնամակալներին անվանել երեխայի անունը և դրանից հետո մկրտել երեխային, կրկնելով նրա լրիվ անունը և ասելով.

_____, Ես մկրտում եմ քեզ հանուն Հոր, Որդու, և Սուրբ Հոգու: Ամեն:

Հովիվ: Մկրտությունը նաև խորհրդանշում է նաև այս երեխայի մուտքը քրիստոնեական հավատքի համայնք: Հիմա ես հարցնում եմ ձեզ, համա՛յնք, կնվիրաբերե՞ք ձեզ որպես Քրիստոսի Մարմին աջակցելու և օգնելու այս ծնողներին, երբ նրանք կկատարեն իրենց պարտականություններն այս երեխայի հանդեպ և կօգնե՞ք դաստիարակելու նրան, որպեսզի լինի հոգևոր աճ և հասունություն:

Պատասխան. «Այո՛ կանենք»:

Ծառայողը կարող է ասել հետևյալ աղոթքը, ինչպես նաև կարող է աղոթել իր խոսքերով:

Երկնային Հայր, մենք խոնարհաբար աղաչում ենք, որպեսզի Դու այս երեխային վերցնես Քո հովանավորության տակ: Շնորհիր նրան Քո երկնային շնորհքի հարստությամբ, ապահովությամբ առաջնորդիր նրան բոլոր մանկական խնդիրների միջով, ազատիր նրան պատանեական գայթակղություններից, հասցրու նրան ճանաչելու Քրիստոսին որպես անձնական Փրկիչ, օգնիր նրան աճելու իմաստությամբ, և՛ հասակի, և՛ Աստծո և՛ մարդկանց սիրո մեջ, և այսպիսով պահպանիր նրան մինչև վերջ: Շնորհիր ծնողներին սեր և հոգատարություն, որպեսզի իմաստուն խորհուրդներով և սուրբ օրինակով նրանք հավատարմորեն կատարեն իրենց պարտականությունները երեխայի և Քո հանդեպ: Հիսուս Քրիստոսի մեր Տիրոջ անունով: Ամեն:

II. ԾԵՍԵՐ

703. ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ

Երբ ծնողները կամ խնամակալները կներկայացնեն երեխային/ներին, ծառայողը պետք է ասի.

«Այն ժամանակ երեխաներ բերվեցին Նրա մոտ՝ որ ձեռք դնի նրանց վրա և աղոթքն անի, իսկ աշակերտները հանդիմանում էին նրանց: Բայց Հիսուսը ասաց. «Թույլ տվեք այդ երեխաներին՝ և դրանց մի արգիլեք գալ, որովհետև այդպիսիններինն է երկնքի արքայությունը» (Մատթ. 19:13–14):

Բերելով այս երեխային նվիրաբերության, դուք ոչ միայն հռչակում եք ձեր հավատքը դեպի Տեր Հիսուսը, այն ձեր ցանկությունը, որպեսզի նա կարողանա ինչքան հնարավոր է շուտ ճանաչի Աստծո կամքը և հետևել նրան, ապրել և մահանալ Քրիստոսում, և մոտենալ Նրա հավիտենական շնորհքին:

Այդ սուրբ նպատակին հասնելու համար, ծնողների (խնամակալների) դերը կայանում է նրանում, որպեսզի սովորեցնեն նրան ապրել Տիրոջ պատվիրաններով, հետևել նրա կրթությանը, որպեսզի նա մոլորության չգնա, ուղղել նրա գիտակցությունը ուսումնասիրելու Աստվածաշունչը և նվիվելու եկեղեցուն, հետ պահել նրան արատավոր հասարակությունից և վատ սովորություններից, և անել այն ամենը, ինչ կախված է ձեզանից, որպեսզի նա մեծանա Տիրոջ պատվիրաններով:

Կձգտե՞ք արդյոք անել դա Տիրոջ օգնությամբ: Եթե այո, ապա պատասխանեք. «Այո՛ կանենք»:

Հովիվ. Հիմա ես ձեզ ձեզ եմ հարցնում քույրեր եղբայրներ. Լինելով Քրիստոսի Մարմին պարտավորվու՞մ եք խրախուսել և աջակցել այս ծնողներին (խնամակալներին), կատարելու

իրենց պարտականությունները այս երեխայի հանդեպ և օգնել _____ նրա հոգևոր աճի համար:

Պատասխան. «Այո՛ կանենք»:

Հովիվ. Մեր սիրող Երկնային Հայր, մենք այժմ նվիրաբերում ենք _____ հանուն Հոր, Որդու Սուրբ Հոգու: Ամեն:

Ծառայողը կարող է ասել հետևյալ աղոթքը, ինչպես նաև կարող է աղոթել իր խոսքերով:

«Երկնային Հայր, մենք խոնարհությամբ աղօթում ենք, որպեսզի Դու այս երեխային վերցնես Քո հովանավորության տակ: Շնորհիր նրան Քո երկնային շնորհքի հարստությամբ, ապահովությամբ առաջնորդիր նրան բոլոր մանկական դժվարությունների միջով, ազատիր նրան պատանեական գայթակղություններից, հասցրու նրան ճանաչելու Քրիստոսին, որպես անձնական Փրկիչ, օգնիր նրան աճելու հոգևորապես և ֆիզիկապես, նրա ամբողջ կյանքի ընթացքում: Աջակցիր ծնողներին (խնամակալներին) սիրող հոգատարությամբ, որպեսզի իմաստուն խորհուրդներով և սուրբ օրինակով նրանք հավատարմորեն կատարեն իրենց պարտականությունները երեխայի և Քո հանդեպ Տեր: Հիսուս Քրիստոսի մեր Տիրոջ անունով: Ամեն:

704. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որախալի է, որ եկեղեցու անդամ դառնալ ցանկացողները դավանել են իրենց քրիստոնեական հավատքը և կրթվել են Նազովրեցու Եկեղեցու ուսմունքով և գործնական ծառայությամբ: Նրանք առաջ են գալիս և կանգնում եկեղեցու զոհասեղանի առաջ: Հովիվը դիմում է նրանց հետևյալ խոսքերով:

ՍԻՐԵԼԻ՛ ԵՂԲԱՅՐՆԵՐ և ՔՈՒՅՐԵՐ:

Երբ մարդը Քրիստոսի Եկեղեցու մի մասնիկն է, նա ձեռք է բերում բազմաթիվ հրաշալի օրհնություններ և արտոնություններ: Եկեղեցում մարդը գտնում է սուրբ շփում, աջակցություն և հոգատարություն, որոնք ուրիշ ոչ մի տեղ չեն գտնվում, բացի Աստծո ընտանիքից:

Այստեղ կա հովվական հոգատարություն, Աստծո Խոսքի ուսմունք և ոգեշնչում ընդհանուր երկրպագության պաշտամունքների ժամանակ: Եկեղեցում մարդը գտնում է համատեղ ծառայություն, որի շնորհիվ կարելի է անել այն, ինչ ուրիշ կերպ անել հնարավոր չէ:

Այսօր մենք կրկին հաստատում ենք եկեղեցու ուսմունքը և գործնական ծառայությունը:

Մենք հավատում ենք Մեկ Աստծո՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Մենք հավատում ենք, որ մարդը ծնվել է մեղքի մեջ և Հիսուս Քրիստոսով ներման և Սուրբ Հոգուց վերստին ծննդյան կարիք ունի: Հավատում ենք, որ վերստին ծննդից հետո Սուրբ Հոգին ավելի խորն է մաքրագործում մարդու սիրտը, լուսավորելով և լցնելով այն, և մարդուն տալիս է այդ շնորհքի գործողության մասին վկայություն:

Մենք հավատում ենք, որ Տերը նորից կգա, մեռելները հարություն կառնեն և վերջին դատաստանում բոլոր մարդիկ կկանգնեն Տիրոջ առաջ, արդարանալու կամ դատապարտվելու համար:

Նշում. Ծառայողը, որպես այլընտրանքային տարբերակ կարող է օգտագործել

Հավատքի Հիմունքները (Ուղեցույց պարագրաֆ 20):

Այսօր մենք կրկին հաստատում ենք Նազովրեցու Եկեղեցու Հավատքի Հիմունքները, որտեղ արտահայտված են հավատքի մեր համոզմունքները:

Միակ Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Նրան, որ Հին և Նոր Ուխտերի Գրքերը տրվել են Աստվածային ներշնչման միջոցով և պարունակում են ամեն ճշմարտություն, որոնք անհրաժեշտ են հավատքի և քրիստոնեական կյանքի համար:

Նրան, որ ամբողջ մարդկությունը ծնված էապականված բնությամբ և այդ պատճառով հակված է մեղք գործելու:

Մենք հավատում ենք նրան, որ չզղջացող մարդիկ կլինեն անհույս և հավիտյան կորած:

Նրան, որ Հիսուս Քրիստոսով քավությունը նախատեսված է բոլոր մարդկանց համար և նրանք, որոնք կապաշխարեն և կհավատան Տեր Հիսուս Քրիստոսին կարդարացվեն, կվերածնվեն և կփրկվեն մեղքի իշխանությունից:

Նրան, որ հավատացյալները պետք է լինեն լիակատար սրբագործված, Հիսուս Քրիստոսի հավատքի միջոցով:

Նրան, որ Սուրբ Հոգին հավատացյալներին վկայում է վերստին ծննդյան և լիակատար սրբագործման մասին և որ մեր Տերը կվերադառնա, որ մեռելները հարություն կառնեն և տեղի կունենա վերջին դատաստանը: (Ուղեցույց պարագրաֆներ 20.1-20.8)

Ամբողջ սրտով հավատու՞մ եք այս ճշմարտություններին: Եթե այո պատասխանեք «Ե՛ս հավատում եմ»:

Ընդունու՞մ եք Հիսուս Քրիստոսին ձեր անձնական Փրկիչը և հասկանում եք, որ Նա հիմա էլ փրկում է ձեզ:

Պատասխան. Այո՛ հավատքով:

Ցանկանալով միաբանվել Նազովրեցու Եկեղեցուն, Դուք կսիրե՞ք ձեր Տեր Աստծուն ամբողջ ուժով, սրտով, հոգով և բանականությամբ և ձեր մերձավորին ձեր անձի պես ինչպես գրված է Քրիստոնեական Բնավորության և Քրիստոնեական Վարքի Պատվիրաններում: Կնվիրե՞ք ձեզ Աստծո առաքելությանը, ինչպես ներկայացված է Նազովրեցու Եկեղեցու վարդապետության, գործունեության և հաղորդակցության արտահայտության մեջ: Կաջակցե՞ք արդյոք Նազովրեցու Եկեղեցու ուսմունքները և կձգտե՞ք Աստծո օգնությամբ աճել այդ ուսմունքի և գործնական ծառայության մեջ, որպեսզի զորացնեք եկեղեցու վկայությունը:

Արդյո՞ք կփորձեք փառաբանել Աստծուն ձեր ամբողջ կյանքում, ապրել խոնարհ կյանքով, ունենալ բարեպաշտ խոսք, նվիրաբերվել Աստծո ծառայությանը, հավատարմորեն կիսվել սեփական միջոցներով, հավատարիմ մասնակցել պաշտամունքներին, ամբողջ կյանքի ընթացքում հետևել Քրիստոսին, հրաժարվել ամեն տեսակ չարիքից և անկեղծորեն ձգտել սրտի սրբության և աստվածավախ կյանքի:

Պատասխան: Այո:

Հիմա ծառայողը կարող է ասել մարդուն կամ մարդկանց.

Ես ողջունում եմ ձեզ Նազովրեցու Եկեղեցում, իր սրբազան հաղորդակցությունում, նրա պատասխանատվություններով և արտոնություններով: Թող Հիսուս Քրիստոսը, ով Եկեղեցու Գլուխն է, օրհնի Ձեզ, պահպանի Քեզ, թող Նա օգնի Ձեզ ամեն բարի գործում լինել հավատարիմ, որպեսզի Ձեր կյանքը և վկայությունը օգնի աղքատ և տանջված մարդկանց , և առաջնորդի նրանց գալու Աստծո մոտ:

705. ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամուսնության վերաբերյալ ընդունելով տարբեր միջազգային և մշակութային համատեքստը Նազովրեցու Եկեղեցին առաջարկում է հետևյալ սկզբունքները՝

- Տղամարդու և կնոջ հավասարություն
- Ուխտի հարաբերություններ, որոնք արտացոլում են Քրիստոսի և Նրա եկեղեցու ուխտով կապած հարաբերությունները:
- Լեզվի և բառերի օգտագործում, որոնք համապատասխանում են մշակույթին և օրենսդրությանը: Այս ծեսը չի փոխարինում կամ չեղյալ համարում ցանկացած պետության օրինական պահանջներին:

Հետևյալ արարողակարգը ներկայացվում է, որպես տեղեկատվական ռեսուրս:

Միչև պսակադրության արարողությունը, ամուսնացող զույգը պետք է կատարի քաղաքացիական ամուսնության օրենքի պահանջները, ինչպես նաև հանդիպել եկեղեցու հովվի հետ, խորհրդատվության համար: Պսակադրության համար նշանակված օրին և ժամին ամուսնացողները միասին կանգնում են դեմքով դեպի ծառայողը:

Հովիվը պետք է դիմի համայնքին:

ՍԻՐԵԼԻ՛ ԵՂԲԱՅՐՆԵՐ և ՔՈՒՅՐԵՐ:

Մենք հավաքվել ենք այստեղ Աստծո առաջ, այս վկաների ներկայությամբ, սուրբ ամուսնությամբ միացնելու (փեսայի անունը) և (հարսի անունը), որը հաստատվել է Եդեմի պարտեզում մեր Տիրոջ կողմից մարդկային անմեղության ժամանակաշրջանում, որը խորհրդանշում է մեզ համար խորհրդավոր միությունը, որը գոյություն ունի Քրիստոսի և Նրա Եկեղեցու միջև: Գալիլեայի Կանա քաղաքում, այդ սուրբ ամուսնությունը Քրիստոսը օծեց Իր ներկայությամբ և առաջին հրաշքով: Եբրայեցիս Թղթի հեղինակը նշում է, որ ամուսնությունը պատվական է բոլոր մարդկանց միջև: Սակայն չպետք է ամուսնանալ անխոհեմաբար, այլ պատկառանքով և շրջհայացորեն, Աստծո վախով:

Այս զույգը հիմա այստեղ է, որպեսզի ամուսնանա:

Դիմելով ամուսնացող զույգին, ծառայողն ասում է.

_____ և

_____, ես հորդորում եմ

և խրատում եմ ձեզ, Աստծո առջև կանգնածներիդ, հիշել, որ ամուսնությունում մեկը մյուսին նվիրվածությունը մշտական է և անփոփոխ: Աստված ցանկանում է, որպեսզի ձեր ամուսնությունը պահպանվի ամբողջ կյանքի ընթացքում և միայն մահը կարողանա բաժանել ձեզ:

Եթե դուք չխախտեք խոստումը, որը մեկդ մյուսին տվել եք այսօր, և եթե ձեր ձգտումը լինի հասկանալ և կատարել Աստծո կամքը, ձեր կյանքը կլինի օրհնված Նրա ներկայության մեջ, և ձեր տունը կմնա Նրա խաղաղության մեջ:

Հորդորելուց հետո ծառայողը դիմում է տղամարդուն:

_____, վերցնու՞մ ես այս

կնոջը քեզ կին, որպեսզի ապրես նրա հետ միասին Աստծո կողմից հաստատված Սուրբ ամուսնության մեջ: Արդյո՞ք կսիրես նրան, կմխիթարես կհարգես և կպահպանես նրան

հիվանդության և առողջության մեջ, թողնելով մնացածներին, և ամբողջ կյանքի ընթացքում պահպանել քեզ, միայն նրա համար:

Պատասխան. Այո՛.

Այնուհետև ծառայողը դիմում է կնոջը.

_____, վերցնու՞մ ես այս

Տղամարդուն քեզ ամուսին, որպեսզի ապրես նրա հետ միասին Աստծո կողմից հաստատված Սուրբ ամուսնության մեջ: Արդյո՞ք կսիրես նրան, կմխիթարես կհարգել և կպահպանես նրան հիվանդության և առողջության մեջ, թողնելով մնացածներին, և ամբողջ կյանքի ընթացքում պահպանել քեզ, միայն նրա համար:

Պատասխան. Այո.

Այնուհետև ծառայողը պետք է հարցնի.

Օրհնում եք դուք (հարսի և փեսայի ծնողները, ընտանիքի անդամները կամ աստծո ընտանիքի անդամները) այս միությունը

Պատասխքն: Այո՛ օրհնում ենք:

Շուռ գալով միմյանց և միացնելով աջ ձեռքերը, ամուսնացողները փոխանակվում են հետևյալ խոստումներով.

Տղամարդը կրկնում է ծառայողից հետո.

Ես,_____, վերցնում եմ քեզ,

_____, կին, որպեսզի այսօրվանից լինեմ քեզ հետ և հավիտյան, լավ և վատ ժամանակներում, հարստության և աղքատության, հիվանդության և առողջության մեջ, որպեսզի սիրեմ քեզ, հոգ տանեմ քեզ համար, մինչև Տիրոջ Սուրբ հրամանով մահը չի բաժանի մեզ: Դրանում ես երաշխավորում եմ քեզ իմ հավատքով:

Կինը կրկնում է ծառայողից հետո.

Ես,_____, վերցնում եմ քեզ,

_____, ամուսին, որպեսզի այսօրվանից լինեմ քեզ հետ և հավիտյան, լավ և վատ ժամանակներում, հարստության և աղքատության, հիվանդության և առողջության մեջ, որպեսզի սիրեմ քեզ, հոգ տանեմ քեզ համար, մինչև Տիրոջ Սուրբ հրանմանով մահը չի բաժանի մեզ: Դրանում ես երաշխավորում եմ քեզ իմ հավատքով:

Եթե ցանկություն կա, մատանիների արարողությունը կարելի է անցկացնել հետևյալ կերպ: Մատանին անցնելով հարսի մատին փեսացուն ծառայողից հետո կրկնում է.

Այս մատանին ես հանձնում եմ քեզ, որպես իմ սիրո և մշտական նվիրվածության խորհրդանշան:

Դա կրկնվում է նաև հարսնացուի հետ:

Այնուհետև զույգը ծնկի է գալիս, և ծառայողը առաջարկում է հետևյալ աղոթքը կամ աղոթում է ոգեշնչված:

Հավիտենական Աստված, բոլոր մարդկանց Ստեղծող և Պահապան, շնորհք կատարող, հավիտենական կյանքի Արարիչ, Քո ծառաներին օրհնող, (փեսայի անունը) և (հարսի անունը), որոնց մենք հիմա օրհնում ենք Քո անունով, ինչպես Իսահակը և Ռեբեկան հավատարիմ ապրեցին միասին, այնպես էլ նրանք թող պահեն երդումը և ուխտը, որը կնքվեց այս ժամին, միշտ մնալով սիրո և խաղաղության մեջ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Ամեն:

Այնուհետև ծառայողը արտասանում է.

Քանի-որ այս տղամարդը և կինը փոխադարձ համաձայնությամբ միանում են Սուրբ ամուսնությամբ, նրանք վկայեցին Աստծո և այս մարդկաց առաջին և հաստատեցին ձեռքերը միացնելով, ես հռչակում եմ նրանց ամուսին և կին, հանուն Հոր Որդու և Սուրբ Հոգու անունով: Նրանց ում Աստված միացրել է, թող մարդը չբաժանի: Ամեն

Այնուհետև ծառայողը լրացնում է իր օրհնությունը.

Հայր, Որդի Սուրբ Հոգի Աստվածը օրհնի և պահպանի ձեզ, Տերը գթասիրտ և բարեհաճորեն նայի ձեր վրա, և ուղարկի ձեզ հոգևոր օրհնությունները և շնորհքը: Ապրեցեք միասին այնպես, որ ապագայում ժառանգեք հավիտենական կյանքը:

Ծառայողը կարող է վերջացնել արարողությունը աղոթքով կամ օրհնությամբ: (532.7, 533.2, 534.1, 538.19)

706. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԵԼԻ՛ ԵՂԲԱՅՐՆԵՐ և ՔՈՒՅՐԵՐ:

Մենք այսօր այստեղ ենք հավաքվել, որպեսզի տանք հարգանքի վերջին տուրքը հանգուցյալին, ում մենք սիրում էինք և ով մեր ընկերն է եղել: Ընտանիքի անդամներին, ովքեր սգում են իրենց կորուստը, մենք հղում ենք մեր խորին և անկեղծ ցավակցությունը: Մենք ցանկանում ենք կիսվել ձեզ հետ այն մխիթարությունով, որը բերում է Աստծո Խոսքը, այսպիսի վշտալի պահերին, ինչպիսին սա է.

"Ձեր սրտերը չխռովի, Աստծուն հավատացեք և Ինձ հավատացեք: Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, ապա թե ոչ ես ձեզ կասեի, Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ , դարձյալ կգամ և ձեզ ինձ մոտ կառնեմ, որ ուր որ Ես եմ, դուք էլ լինեք " (Հովհաննես 14:1-3):

"Ես եմ հարությունը և կյանքը , Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի" (Հովհաննես 1:25-26).

ԱՂՈԹՔ (ծառայողը ասում է իր խոսքերը կամ հետևյալը.)

Ամենակարող Աստված, մեր Երկնային Հայր, մենք հիմա տխրության մեջ ենք, հասկանալով մեր ամբողջական կախվածությունը Քեզանից: Մենք գիտենք, թե որքան շատ ես դու մեզ սիրում և գիտենք, որ Դու կարող ես մահվան ստվերը դարձնես առավոտյան լույս: Օգնիր մեզ հիմա ընդունելու Քո կամքը խոնարհ ու հնազանդ սրտերով:

Դու մեր ամրոցն ու ուժն ես, Դու օգնում ես մեզ տխրության մեջ, ցույց տուր մեզ Քո ողորմությունը: Տուր նրանց, ովքեր սգի մեջ են, գտնելու հանգստություն և բժշկություն Քո հաստատող շնորհքով: Մենք խոնարհությամբ աղաչում ենք այդ ամենը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով:

ՀԻՄՆ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԵՐԳ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ Իր առատ ողորմության համեմատ մեզ վերստին ծնեց դեպի Կենդանի լույսը Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելովը: Դեպի այն անեղծ և անարատ և անթառամ ժառանգությունը, որ երկնքում պահված

է ձեզ համար: Որ Աստծո զորությամբ պահպանվում եք հավատքով դեպի պատրաստված փրկությունը, որը հայտնվելու էր հետին ժամանակումը: Որ նրանով կուրախանանք, թեև հիմա ինչպես որ հարկը պահանջում է մի քիչ տրտմած եք կերպ կերպ փորձանքների մեջ: Որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի քան, կորստեան ոսկին, որ կրակով է փորձվում, գովութեան պատիվի և փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունումը: Որին չտեսած սիրում եք, որ Նրան հավատացիք, թեև հիմա չեք տեսնում, և ուրախ եք անպատմելի և փառավոր խնդությունով: Ձեր հավատքի վախճանն ընդունելով, այսինքն հոգիների փրկությունը.» (1 Պետրոս 1:3-9)

(Սուրբ Գրքից այլ հատվածներ նույնպես կարող եք օգտագործել, ինչպես՝ Մատթ. 5:3-4, 6, 8; Սաղմոս 26:3-5, 11, 13-14; 45:1-6, 10-11):

ՔԱՐՈԶ
ՀԻՄՆ ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ԵՐԳ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՂՈԹՔ

* * *

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Երբ մարդիկ հավաքվել են ծառայողը կարող է կարդալ Աստվածաշնչից ցանկացած այս համարները:

«Իսկ ես գիտեմ, որ Փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնե հողի վրա: Եվ իմ մորթը այսպես թափվելուց հետո, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն: Որին որ ես ինքս եմ տեսնելու և իմ աչքերն են նայելու նրան, և ոչ թե ուրիշը, իմ երիկամունքները հալվում են իմ ներսումը:» (Հոբ 19:25–27)

«Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ, ոչ թե ամենքս կննջենք, այլ ամենքս կփոխվենք: Հանկարծ մի ակնթարթում հետին փողի ժամանակին, որովհետև փողը կփչվի և մեռելները հարություն կառնեն անապականելի, և մենք կփոխվենք»:

«Եվ երբ այս ապականացուն անապականությունը կհագնի, և այս մահկանացուն անմահությունը, այն ժամանակ կ՛լինի այն խոսքը, որ գրված է թե մահն ընկղմվեցավ հաղթության մեջ: Ով մահ, ու՞ր է քո հաղթությունը: Մահի խայթոցը մեղքն է և մեղքի զորությունը օրենքը: Բայց շնորհակալություն Աստծուն, որ տվավ մեզ հաղթությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով: Ուրեմն սիրելի եղբայրքս, հաստատ եղեք, անշարժ կացեք, ամեն ժամանակ ավելի առաջացեք Տիրոջ գործումը, գիտեցեք, որ ձեր աշխատանքը զուր չէ Տերումը»: (1 Կորնթացիս 15:51–52, 54–58):

«Եվ երկնքից մի ձայն լսեցի, որ ասում էր ինձ . Գրիր, երանելի են այն մեռելները, որ Տերումն են ննջում այսուհետև այո, Հոգին ասում է, որ իրենց աշխատանքիցը հանգիստ կառնեն, և նրանց գործերը գնում են նրանց հետևից»: (Հայտնություն 14:13):

ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՀԱՄԱՐ.

Ննջեցյալի հոգին վերադարձավ Տիրոջ մոտ, ով և տվել էր նրան կյանք: Մենք հողին ենք հանձնում նրա մարմինը, մեռելների հարության և կյանքի հաստատ համոզմամբ և հույսով, որ ապագայում դա կլինի մեր Տեր Հիսուս Քրիստոսվ, ով տալիս է մեզ նոր մարմին, այնպիսին ինչպիսին Իր հրաշալի մարմինն է: «Երանելի են այն մեռելները, որ Տերումն են ննջում»

ՈՉ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՀԱՄԱՐ.

Մենք հիմա եկել ենք ննջեցյալի մարմինը հողին հանձնելու: Նրա հոգին մենք հանձնում ենք Տիրոջը և գիտենք, որ ամբողջ երկրի գթասիրտ Դատավորը ամեն ինչ ճիշտ և արդար կկատարի: Մենք՝ այստեղ մնացողներս, կրկին նվիրենք մեր անձերը Տիրոջ վախով և սիրով լցված կյանքին, որպեսզի կարողանանք մտնել Աստծո Արքայությունը:

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ.

Մեր Տեր Հիսուս Քրիստոսով, հավիտենական կյանքի հարության վստահությամբ և հույսով, մենք հողին ենք հանձնում այս երեխայի մարմինը: Եվ ինչպես Հիսուսը Իր երկրային կյանքի ժամանակ, թույլ տվեց երեխաներին գալ Իր մոտ և օրհնեց նրանց, թող հիմա Նա ընդունի Իր մոտ այս երեխային, որովհետև ասված է. «Այսպիսիններինն է Երկնքի Արքայությունը»:

ԱՂՈԹՔ.

Մեր Երկնային Հայր, գթասիրտ Աստված, մենք տխրության և ծանր կորստի այս պահին դիմում ենք Քեզ: Մխիթարիր նրանց, ում սիրտը ծանր ու տխուր է: Եղիր միշտ մեզ հետ: Հաստատիր նրանց սիրո և ծառայության մեջ, տուր Քո խոստումների կատարումը գալիք աշխարհում:

«Եվ խաղաղության Աստվածը, որ մեռելներից վեր հանեց ոչխարների մեծ Հովվին, հավիտենական ուխտի արյունովը՝ մեր Տեր Հիսուսին: Հաստատե ձեզ ամեն բարի գործի մեջ Նրա կամքն անելու, և գործե ձեզանում ինչ-որ հաճոյ է Նրա առաջին Հիսուս Քրիստոսի ձեռով, որին լինի փառք հավիտյանս հավիտենից: Ամեն» (Եբրայեցս 13:20–21):

707. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼԸ

Համապատասխան հիմն երգելուց հետո, քարտուղարը հայտարարում է այն ծառայողների անունները ու դիրքերը, որոնք պետք է մտնեն պաշտոնի մեջ: Նրանք պետք է դուրս գան առաջ և դեմքով կանգնեն ծառայողի դիմաց: Նրանք պետք է ունենան խոստումներով քարտ: Ծառայողը արտաբերում է հետևյալ խոսքերը:

Ընդունելով Աստծո ընտրության մեթոդը, քրիստոնեական ծառայության հատուկ ոլորտներում, կոնկրետ ծառայողների համար, մենք մոտեցել ենք այս ծառայողներին և/կամ ուսուցիչներին ծառայողական դիրքի մեջ մտցնելու պահին, որոնք համապատասխան ընտրությամբ ընտրվել են այս տարի մեր եկեղեցում ծառայելու համար: Արեք տեսնենք Տիրոջ հրահանգները մեզ համար Իր Սուրբ Խոսքից:

«Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրք Աստծո ողորմությունովը, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը: Եվ մի կերպարանվիք այս աշխարհքի կերպարանքով, այլ նորոգվեցեք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք Աստծո կամքը՝բարին, հաճելին և կատարյալը» (Հռովմայեցիս 12:1-2):

«Ջանք արա, որ քո անձը ընտիր կանգնեցնես Աստծո առաջին իբր մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես» (2 Տիմոթեոս 2:15):

«Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր միջումն առատապես ամեն իմաստությունով, իրար սովորեցրեք և խրատեցեք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգեցեք Տիրոջը ձեր սրտում» (Կողոսացիս 3:16):

«Խոսքին աշակերտողը թող վարդապետին մասնակից անե ամեն բարի բաներով» (Գաղատացիս 6:6):

Մենք այժմ մոտեցել ենք այն կարևոր պահին, երբ մենք կանգնած ենք զոհասեղանի առաջ,

վերցնում եք ձեր վրա պարտականություն հոգ տանելու եկեղեցու, Նազովրեցու Համաշխարային Միսիաների, Երիտասարդության Համաշխարհային Ընկերակցության, և Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Համաշխարհային Ծառայության համար: Այն առաջադրանքները, որոնք դուք ստանում եք, դիտեք որպես մեր Տիրոջը ծառայելու հնարավորություններ, և երբ դուք կկատարեք ձեր պարտականությունները, թող այդ ամենը ձեզ ուրախություն և հոգևոր օրհնություն պատճառի:

Դրանք ձեզ համար հեշտ պարտականություններ չեն, որովհետև եկեղեցու գոյությունը և հոգիների ճակատագիրը ձեր ձեռքերում է: Ձեր պատասխանատվությունը, դա քրիստոնեական բնավորության զարգացումն է, և ձեր գլխավոր նպատակն է չփրկվածներին բերել Հիսուս Քրիստոսին: Թող Տերը ձեզ իմաստություն և ուժ տա, այն ժամանակ, երբ կկատարեք Նրա աշխատանքը ի փառս Նրա:

Ձեզ քարտեր են տվել, որոնց վրա գրված են ձեր խոստումները: Մենք կկարդանք դրանք միասին, և երբ կկարդանք, արեք ընդունենք դրանք որպես անձնական խոստումներ:

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՔՍՏԸ

Հաշվի առնելով այն վստահությունը, որ իմ մեջ կա, որով եկեղեցին հանձնարարված ծառայության համար ընտրել է ինձ, այստեղ և հիմա ես խոստանում եմ.

Պահպանել քրիստոնեական կյանքի բարձրագույն չափանիշները, լինել Նազովրեցու Եկեղեցու իդեալներին և չափանիշներին համապատասխան օրինակ:

Որպես քրիստոնյա, զարգացնել իմ անձնական փորձը և ամեն օր ժամանակ ունենալ աղոթելու և Աստվածաշունչ կարդալու համար:

Շարունակաբար հաճախել կիրակնօրյա դպրոց, առավոտյան և երեկոյան ծառայությունները, ինչպես նաև եկեղեցու շաբաթական աղոթքի ծառայությունները, միայն եթե ինձ չեն խանգարի հանգամանքները:

Մշտապես հաճախել այն բոլոր ժողովերին և խորհուրդներին, որոնցում ես ընդգրված եմ կամ կընդգրկվեմ:

Խոստանում եմ ղեկավարությանը տեղյակ պահել, եթե չկարողանամ ներկա լինել որոշակի ժամանակահատվածում կամ չկարողանամ կատարել իմ պարտա_ կանությունները:

Խոստանում եմ պարբերաբար կարդալ մեր հարանվանության կողմից հրատարակվող գրականությունը և այլ գրքեր և գրականություն, որոնք կօգնեն կատարելու իմ պարտականությունները:

Զարգացնել ինձ և իմ տաղանդները, հնարավորության դեպքում մասնակցելով այցելուների համար նախատեսած կրթական ծրագրերում:

Մարդկանց Հիսուսին բերելու համար ջանքեր գործադրել, այցելելով եկեղեցու բոլոր ավետարանական ժողովները, ինչպես նաև հետաքրքրված լինելով ուրիշների հոգևոր վիճակի բարօրությունով:

Այնուհետև ծառայողը պետք է աղոթի համապատասխան աղոթքով, կարելի է երգել համապատասխան հիմն, որից հետո ծառայողը կարող է ասել:

Այսպիսով դուք տվեցիք հանդիսավոր խոստում, սրտով և ձեռքերով կատարելու այս եկեղեցու որոշակի պարտականություններ, և ես նշանակում եմ ձեզ այն դիրքի վրա, որի համար դուք ի սկզբանե ընտրված եք եղել: Դուք այժմ եկեղեցական կազմակերպչական կառուցվածքի կենսական կարևոր մասն եք և նրա առաջնորդները: Դուք օրինակ եղեք հորդորանքի և ջանասեր ծառայության, ինչպես նաև եղեք Տիրոջ այգում արդյունավետ աշխատողներ:

Ծառայողը պետք է համայնքին խնդրի կանգնել և նրան դիմի այսպիսի խոսքերով.

Դուք լսեցիք այս առաջնորդների տված խոստումը հաջորդ տարվա համար: Հիմա ես խնդրում եմ ձեզ, որպես համայնք, լինել հավատարիմ օգնականներ և աջակցել նրանց: Այն բեռը, որ մենք դրել ենք նրանց վրա շատ ծանր է, և նրանց անհրաժեշտ է ձեր օգնությունը և աղոթքները: Եղեք հասկացող նրանց խնդիրների վերաբերյալ և եղեք համբերող նրանց թվացյալ անհաջողությունների նկատմամբ: Թող ձեր օգնությունը, որին մենք կոչ ենք անում, տրամադրվի ուրախությամբ, որպեսզի երբ մենք աշխատենք միասին, մեր եկեղեցին կորածներին Քրիստոսին բերելու համար լինի արդյունավետ գործիք:

Այնուհետև ծառայողը կարող է համայնքին առաջնորդել վերջին աղոթքով կամ համայնքը կարող է կրկնել «Հայր մեր» աղոթքը:

708. ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շրջանային սուպերինտենդենտ. Քրիստոսով սիրելիներ, մենք Տիրոջ Օրը հավաքվել ենք հատուկ նպատակով, որպեսզի պաշտոնապես կազմակերպենք (*անվանումը*) Նազովրեցու Եկեղեցին: Իրականում, դուք արդեն եկեղեցի եք, բայց այսօր այս համայնքի կյանքը անցնում է նոր մակարդակի, երբ համաձայն Նազովրեցու Եկեղեցու Սահմանադրության և կառավարման, դուք ընդունում եք կազմակերպված համայնքի բոլոր արտոնություններն ու իրավունքները, ինչպես նաև պատասխանատվությունները:

Նազովրեցիների համաշխարհային ընտանիքի անունից, ես երաշխավորում եմ ձեր տեսիլքը, ձեր հավատքը, ձեր ջանասեր աշխատանքը, որ դուք աշխատել եք ձեռք ձեռքի և սիրտ սրտի տված, որպեսզի լինեք հավատքի համայնք, որը այս աշխահում ապրում է որպես Նազովրեցու Եկեղեցու ճշմարիտ ներկայացում: Համայնքի կազմակերպման այս պաշտոնական գործողությամբ, դուք հռչակում եք ձեր մտադրությունը, կիսելու նազովրեցիների համաշխարհային ընտանիքի առաքելությունը՝ «Պատրաստել Քրիստոսին նման աշակերտներ բոլոր ազգերում»:

Մեր միսիայում, մեզ առաջնորդում են երեք հիմնական արժեքներ.

Մենք ***Քրիստոսի*** ժողովուրդն ենք: Մենք, աշխարհի բոլոր քրիստոնյաների հետ հաստատում ենք մեր հավատքը, երրորդության մասին պատմական հավատքի հանգանակությունը, և մենք խորությամբ գնահատում ենք մեր հատուկ ժառանգությունը՝ սրբության վեսլիական ավանդությունը: Մենք Աստվածաշունչը հաստատում ենք մեր ճշմարտության հիմնական աղբյուր, երբ նա մեզ համար հռչակում է Քրիստոսի մասին լուրը, «և այն ամենը ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար»:

Մենք ***սրբության*** ժողովուրդ ենք: Մենք հավատում ենք, որ Աստծո շնորհքը, ոչ միայն տալիս է մեղքերի թողություն, այլ նաև հավատքով մաքրում է մեր սրտերը: Սուրբ հոգու այդ գթասիրտ գործողությամբ, մենք սրբագործված ենք, և այս աշխարհում որպես քրիստոնյա ապրելու ուժով:

Մենք ***առաքելության*** ժողովուրդ ենք: Մենք հավատում ենք, որ Աստված մեզ կոչ է անում մասնակցելու Արքայության հաշտեցման առաքելությունում: Մենք դա անում ենք քարոզելով ավետարանը, կատարելով արդարության և գթասրտության գործողություններ, ինչպես նաև պատրաստելով Քրիստոսին նման աշակերտներ:

Շրջանային սուպերինտենդենտը դիմում է հովվին: Հովիվ կարո՞ղ եք ներկայացնել նրանց, ովքեր պետք է լինեն (*անվանումը*) Նազովրեցու Եկեղեցու հիմնադիրները:

Հովիվ. (*տալով շրջանային սուպերինտենդենտի անունը),* ինձ համար պատիվ է ներկայացնելու այս համայնքի հիմնադիրների անունները: Ես երաշխավորում եմ նրանց ձեզ, որպես Քրիստոսով եղբայրների և քույրերի, որոնք նվիրված են մեր ընդհանուր

առաքելությանը, որպես Նազովրեցու Եկեղեցու անդամներ:

(Հովիվը կարդում կամ ներկայացնում է յուրաքանչյուր անդամին կամ ընտանիքին:)

Շրջանային սուպերինտենդենտ. Եղբայրներ քույրեր, ես խնդրում եմ հիմա որպես եկեղեցու անդամներ կրկնել ձեր խոստումները:

Ընդունու՞մ եք Հիսուս Քրիստոսին որպես ձեր անձնական Փրկիչը, և հավատու՞մ եք, որ Նա հիմա էլ է ձեզ փրկում:

Պատասխան: Այո՛ հավատքով:

Խոստանու՞մ եք Նազովրեցու Եկեղեցու հետ, ձեզ նվիրել հաղորդակցության և Աստծո աշխատանքին, ինչպես գրված է քրիստոնեական Վարքի և Բնավորության Պատվիրաններում: Կջանաք բոլոր միջոցներով փառաբանել Աստծուն, խոնարհությամբ քայլել Նրա առաջ, բարեպաշտ խոսքով և սուրբ ծառայությամբ, մշտապես զոհաբերելով սեփական միջոցները, հավատարմորեն ընդունելով շնորհքի միջոցները: Հեռանալով ցանկացած չարությունից, ազնվորեն կձգտե՞ք աստվածավախ կյանքի և սրտի սրբության կատարելությանը:

Պատասխան: Այո՛:

Շրջանային սուպերինտենդենտ. Այսպիսով, ինձ տրված իշխանությամբ, որպես Նազովրեցու Եկեղեցու (անվանումը) Շրջանի սուպերինտենդենտ, ես հռչակում եմ (անվանումը) Նազովրեցու Եկեղեցու պաշտոնական կազմակերպությունը: Բարի գալուստ Նազովրեցիների համաշխարհային ընտանիքի ընկերակցություն: Թող Տերը Իր մեծ ողորմությամբ ամեն օր ձեզ տա Իր բարիքները, որպեսզի կատարվի Իր կամքը: Եվ Քրիստոսի խաղաղությունը լինի ձեզ հետ:

709. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ

Ծառայող.

Լինելով Աստծո ձեռքով օրհնված, այս շենքի ձեռք բերմամբ Իր փառքի համար, մենք հիմա կանգնած ենք Նրա ներկայության մեջ, որպեսի նվիրաբերենք այս շենքը Նրա ծառայության համար:

Հայր Աստծո փառքի համար, որից բխում է ամեն բարիք և կատարյալ պարգև, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի պատվի համար, և մեր Լուսավորիչ Սուրբ Հոգուն գովաբանելու համար, որը լույսի, կյանքի և ուժի Աղբյուր է:

Համայնք.

Հիմա մենք ուրախությամբ և զոհությամբ, խոնարությամբ նվիրաբերում ենք այս շենքը Տիրոջը:

Ծառայող.

Երկրպագելու աղոթքով և երգեցողությամբ, քարոզելու Խոսքը, սովորելու Սուրբ Գիրքը և սրբերի հաղորդակցության համար:

Համայնք.

Մենք խոնարությամբ նվիրաբերում ենք այս շենքը մեր Տիրոջը:

Ծառայող.

Տառապյալներին մխիթարելու, հաստատելու թույլերին, օգնելու փորձվողներին, բոլոր նրանց, ովքեր գալիս են այստեղ տալու հույս և ոգեշնչում:

Համայնք.

Մենք խոնարությամբ նվիրաբերում ենք այս շենքը մեր Տիրոջը:

Ծառայող.

Վկայելու մեղքից փրկված լինելու մասին, սովորելու Աստվածաշնչյան սրբության մասին, հորդորելու և արդարության, ծառայելու մեր եղբայրներին և քույրերին:

Համայնք.

Մենք խոնարհությամբ նվիրաբերում ենք այս շենքը մեր Տիրոջը:

Միասին (Ծառայող և Համայնք):

Մենք Տիրոջ գործակիցներս, միացնելով մեր ձեռքերը և սրտերը, կրկին նվիրում ենք մեզ այն սրբազան նպատակի համար, ինչին որ նվիրաբերված է այս շենքը: Մենք խոստանում ենք հավատարիմ ծառայել, որպեսզի Հիսուս Քրիստոսի անունը փառավորվի և Նրա Արքայությունը աճի: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով: ԱՄԵՆ:

ՄԱՍ IX

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ /ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ / ՕՐԵՆՔՆԵՐ

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՍԻԱՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I

810. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ոչ ոք քո մանկությունը չանարգի, այլ օրինակ եղիր հավատացյալներին, խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով» (1 Տիմոթեոս 4:12)

810.001 Մեր միսիան

Նազովրեցու Եկեղեցու Միջազգային Երիտասարդական Կազմակերպության միսիան (այսուհետև ՆԵՄԵԿ) կայանում է, կանչել մեր սերնդին Քրիստոսում դինամիկ կյանք ապրելու համար:

810.002 Մեր անդամները

Յուրաքանչյուր ոք, ով մասնակցում է երիտասարդական ծառայություններում, և ով որոշել է հետևել սահմանված տեսակետներին և արժեքներին, հանդիսանում է մեր կազմակերպության անդամ:

810.003 Մեր տեսիլքը

Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ երիտասարդ մարդիկ Եկեղեցու բաղկացուցիչ մասն են: ՆԵՄԵԿ-ը գոյություն ունի ուղղորդելու երիտասարդ մարդկանց և օգնելու նրանց Հիսուս Քրիստոսի հետ հարաբերություններ կառուցելու համար, ինչպես նաև նպաստում է որպեսզի նրանք աճեն քրիստոնեական ծառայության մեջ, որպես Քրիստոսի աշակերտներ:

810.004 Մեր արժեքները

1. Մենք գնահատում են **երիտասարդ մարդկանց**…կարևոր Աստծո Արքայության համար:
2. Մենք գնահատում ենք **Աստվածաշունչը**… Աստծո անփոփոխ Ճշմարտությունը մեր կյանքի մեջ:
3. Մենք գնահատում ենք **Աղոթքը**… մեր Երկնային Հոր հետ կենդանացնող հաղորդակցությունը:
4. Մենք գնահատում ենք **Եկեղեցին**… հավատքի միջազգային սուրբ համայնքը, տարբեր մշակույթներով, բայց Քրիստոսով միաբան:
5. Մենք գնահատում ենք **Երկրպագությունը**…անձնական հաղորդակցություն Աստծո հետ, որը փոխում է կյանքը:
6. Մենք գնահատում ենք **Աշակերտությունը**…ապրելակերպ որով ավելի նմանվում ենք Քրիստոսին:
7. Մենք գնահատում ենք **Համայնքը**… որտեղ կառուցվում են հարաբերություններ, որոնք միացնում են մեզ և Աստծուն:

8. Մենք գնահատում ենք Ծառայությունը…Աստծո առատ շնորհքը մեր աշխարհին:

9. Մենք գնահատում ենք **Վկայությունը** … որի օգնությաբ, գործերով և խոսքերով, մենք մարդկանց վկայում ենք Աստծո սիրո մասին:

10. Մենք գնահատում ենք Սրբությունը… շնորհքի գործողություն, երբ Աստված Սուրբ Հոգու միջոցով օժտում է մեզ կյանք Քրիստոսով, որով մենք ապրում և գործում ենք:

Այս արժեքները կարևոր են սուրբ կյանքի համար և դրանք պետք է իրական լինեն ՆԵՄԵԿ –ի կյանքի և գործունեության Եկեղեցու ծառայությունների բոլոր ոլորտների մեջ :

(Ամբողջական տեղեկատվության համար խնդրում ենք դիմել Նազովրեցու Եկեղեցու այս Ուղեցույցում Հավատքի դրույթներին:) Օգտագործելով այս արժեքները մենք ճանաչում ենք հետևյալ ղեկավար սկզբունքները:

810.005 Մեր ղեկավար սկզբունքները

1. ՆԵՄԵԿ–ը գոյություն ունի երիտասարդության համար

ՆԵՄԵԿ–ը գոյություն ունի աջակցելու և ընդունելու երիտասարդներին Աստծո Արքայության մեջ ծառայելու համար, ինչպես նաև խթանում է երիտասրդների ինտեգրացիան Նազովրեցու Եկեղեցում:

2. ՆԵՄԵԿ–ը իր ուշադրությունը շեշտադրում է Քրիստոսի վրա:

Քրիստոսը մեր բոլորի ուշադրության կենտրոնն է, Աստծո Խոսքը մեր գործերի համար հեղինակավոր աղբյուր է, Սրբությունը կյանքի օրինակ:

3. *ՆԵՄԵԿ–ը կառուցված է տեղական եկեղեցիներում ծառայելու երիտասարդությանը* Տեղական եկեղեցում, երիտասարդական ծառայության արդյունավետությունը *ՆԵՄԵԿ–ի համար* շատ կարևոր է: Վերափոխող ծառայությունները և հարաբերությունները ձևավորում են Նազովրեցու Եկեղեցու երիտասարդական ծառայությունը:

4. ՆԵՄԵԿ–ը աջակցում և կատարելագործում է երիտասարդ մարդկանց:

ՆԵՄԵԿ–ը օգնում է բացահայտելու առաջնորդներին, հոգատարության և աջակցության մթնոլորտում զարգացնելու և օգտագործելու նրանց պարգևները, և այդպիսով ապագայում Նազովրեցու Եկեղեցու համար ապահովում է ուժեղ առաջնորդություն: Ղեկավարության կրթելը, ծառայության գնահատման մեխանիզմները և պատասխանատվությունները, ծառայության բարելավումը, ՆԵՄԵԿ–ի կենսականորեն անհրաժեշտ գործառույթներն են:

5. ՆԵՄԵԿ–ը լիազորված է առաջնորդելու

Որոշակի երիտասարդական ծառայությունը պահանջում է, որպեսզի ծառայության ժամանակ որոշակի լուծումները և գործունեությունը համապատասխանեն ՆԵՄԵԿ–ի սահմանած կանոններին: Պատկանելիության զգացողությունը, ծառայության ձգտումը և որոշումներ կայացնելու ներդրումը, ՆԵՄԵԿ–ի երիտասարդ մարդկանց լիազորելու համար հիմնական բաղկացուցիչներն են:

6. ՆԵՄԵԿ–ը ընդունում է Քրիստոսում տարբեր մարդկանց պարգևների և ունակությունների բոլոր բազմազանությունը:

ՆԵՄԵԿ–ը ուրախությամբ ընդունում է, որ հավատացյալ մարդիկ խոսում են տարբեր լեզուներով, ունեն մաշկի տարբեր գույներ, տարբեր ռասսաների, սեռերի և դասակարգերի ներկայացուցիչներ են: Այն փաստը, որ մենք տարբեր ենք, չի քայքայում մեր միաբանությունը, այլ հակառակը ուժեղացնում է մեր ներուժը և արդյունավետությունը: Վկայությունը և փրկությունը Հիսուս Քրիստոսով, այս կամ այն տարածաշրջանում

համապատասխան մշակութային առանձնահատկությունների, հանդիսանում է կազմակերպության առաջնահերթությունը:

7. ՆԵՄԵԿ–ը ստեղծում է կապեր և զարգացնում է գործընկերային հարաբերություններ

Համագործակցության մթնոլորտը բնորոշ է ՆԵՄԵԿ–ի բոլոր մակարդակների համար: Եկեղեցում կապերը ամրապնդում են ծառայության համար երիտասարդների ոգևորությունը և զարգացումը: ՆԵՄԵԿ–ը ակտիվորեն մասնակցում է երիտասարդներին ծառայության մեջ ներգրավելու փորձին:

810.006 Մեր ծառայության կառուցվածքը:

ՆԵՄԵԿ–ի կանոնադրությունը ապահովում է կազմակերպության հիմքը: Այն օգնում է պլանավորելու և կիրառելու երիտասարդական ծառայությունը Նազովրեցու Եկեղեցու բոլոր մակարդակներում: Ծառայության ստանդարտ ծրագրերը ուղարկվում են եկեղեցիներ, որպեսզի ՆԵՄԵԿ–ի տեղական, շրջանային և տարածաշրջանային խմբերը ունենան հաստատուն հիմք և հեշտությամբ հարմարվեն այս կամ այն կարիքներին և իրավիճակներին, որպեսզի իրագործեն երիտասարդական ծառայությունները: Ծառայություններ անցկացնելու ծրագրերը, պետք է մշտապես համապատասխանեցվեն ՆԵՄԵԿ–ի և Նազովրեցու Եկեղեցու կանոնադրությանը:

810.007 Կանոնադրության փոփոխությունները

ՆԵՄԵԿ–ի կանոնադրությունը կարող է փոփոխությունների ենթարկվել, ՆԵՄԵԿ–ի միջազգային համագումարի ժամանակ, բանաձևերի ընդունումով, համաձայն Ծառայության Միջազգային Ծրագրի:

ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ա. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ծառայություն

810.100 Ավետարանչություն

ՆԵՄԵԿ–ը մշակում և անցկացնում է ծառայություններ և հանդիպումներ երիտասարդության հետ, Հիսուս Քրիստոսի հետ նրանց ծանոթացնելու նպատակով:

810.101 Աշակերտություն

ՆԵՄԵԿ–ը մշակում և անցկացնում է ծառայություններ, հանդիպումներ, տարբեր միջոցառումներ պատրաստելու, կանչելու երիտասարդ մարդկանց աճելու Քրիստոսում, անհատապես ուսումնասիրելու Աստվածաշունչ, ծառայելու և հաղորդակցվելու համար:

810.102 Առաջնորդների զարգացումը

ՆԵՄԵԿ–ը մշակում և անցկացնում է ծառայություններ, հանդիպումներ, երիտասարդ մարդկանց հաստատելու և ապահովելու բոլոր անհրաժեշտ բաներով եկեղեցում աշխատելու համար:

Կանոնադրության փոփոխությունները

810.103 Դրույթներ

1. Տեղական ծառայության ծրագիրը, տեղական մակարդակով ապահովում է ՆԵՄԵԿ–ի ստանդարտ կազմակերպման, կառավարման և գործունեության ձևը: ՆԵՄԵԿ–ի տեղական խումբը, Միջազգային Կանոնադրության համապատասխան, կարող է ադապտացնել ստանդարտ ծրագիրը համապատասխան տեղական երիտասարդական ծառայության կարիքների:

2. Ծրագրում չընդգրկված շրջանները գտնվում են տեղական ՆԵՄԵԿ–ի խորհրդի ղեկավարության տակ:

810.104 Ընթացքը

1. ՆԵՄԵԿ–ի խորհուրդը պետք է քննի և հաստատի ծառայության ծրագրում ներմուծված փոփոխությունները:

2. Տեղական ծրագրին առաջարկված փոփոխությունները պետք է ներկայացվեն ՆԵՄԵԿ–ի բոլոր անդամներին, մինչ տարեկան ժողովի սկսելը:

3. Տարեկան ժողովի ժամանակ փոփոխությունները պետք է հաստատվեն ՆԵՄԵԿ–ի բոլոր ներկա գտնվող անդամների ձայների 2/3 մեծամասնությամբ, և այնուհետև պետք է հաստատվի եկեղեցական կառավարման կողմից:

4. Տեղական ծրագրի փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի ավարտից հետո 30 օրերի ընթացքում: Վերանայված ծրագիրը պետք է հրատարակվի տպագիր ձևով և միայն դրանից հետո այն կարող է ուժի մեջ մտնի:

Ծառայության ուղղությունը և անդամակցությունը

810.105 Փոխադարձ հաշվետվությունը և Կազմը

1. ՆԵՄԵԿ–ի անդամություն ունի ամեն ոք, ով մասնակցում է ՆԵՄԵԿ–ի երիտասարդական ծառայություններում և միացել է տեղական խմբին:

2. Տեղական ՆԵՄԵԿ–ն վարում է իր բոլոր ակտիվ անդամների ցուցակը:

3. Տեղական ՆԵՄԵԿ–ն հաշվետու է իր անդամներին, տեղական եկեղեցական ղեկավարությանը և հովվին:

4. Տեղական ՆԵՄԵԿ–ն ամեն ամիս հաշվետվություն է տալիս տեղական եկեղեցական ղեկավարությանը և տարեկան հաշվետվություն եկեղեցական տարեկան ժողովի ժամանակ:

810.106 Ծառայության ուղղությունը

1. Ավանդաբար ՆԵՄԵԿ–ի տեղական ծառայությունը ուղղված է 12 տարեկան և բարձր երեխաների, քոլեջների/համալսարանների ուսանողներին և երիտասարդ մարդկանց: Արդյունավետությունը բարձրացնելու համար, տեղական ՆԵՄԵԿ–ն կարող է մոդիֆիկացնել իր ծառայությունը հովվի և եկեղեցական ղեկավարության համաձայնությամբ:

2. Ծրագրի պլանավորման և ներկայացման նպատակով, ՆԵՄԵԿ–ի տեղական խորհուրդը սահմանում է տարիքային խմբերը, կարիքների բավարարման և արդյունավետ աշխատանքի համար:

Կառավարումը

810.107 Կառավարիչները

1. Տեղական ՆԵՄԵԿ–ի կառավարիչներն են նախագահը և ամենաքիչը 3 անդամներ, որոնք ընտրվել են ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի ժամանակ, որոնց տրված են որոշակի պարտականություններ, տեղական եկեղեցու կարիքներին համապատասխան:

2. Տեղական ՆԵՄԵԿ–ի կառավարիչները պետք է լինեն տեղական եկեղեցու անդամներ, որտեղ գոյություն ունի ՆԵՄԵԿ–ն, նրանք պետք է լինեն ակտիվ երիտասարդաց ծառայողներ:

3. Այն եկեղեցիներում, որտեղ չկա ՆԵՄԵԿ–ի տեղական խումբ (ինչպես նաև ՆԵՄԵԿ–ի տեղական խորհուրդ), հովիվը տեղական եկեղեցու ղեկավարության հավանությամբ կարող է նշանակել ՆԵՄԵԿ–ի նախագահին, երիտասարդների հետ աշխատանք սկսելու և պատասխանել երիտասարդ մարդկանց հոգևոր կարիքներին:

810.108 Ընտրություններ

1. Կառավարիչները ընտրվում են ամեն տարի տեղական ՆԵՄԵԿ–ի անդամների կողմից, և կատարում են իրենց աշխատանքը մինչև վերընտրությունը:

2. Ընտրական հանձնաժողովը նշանակում է ՆԵՄԵԿ–ի կառավարիչներին: Տվյալ հանձնաժողովը նշանակվում է հովվի կողմից և բաղկացած է ՆԵՄԵԿ–ի անդամներից, հովվից և ՆԵՄԵԿ–ի նախագահից: Բոլոր ընտրվածները պետք է ընտրված լինեն հովվի և եկեղեցու խորհրդի կողմից: Նրանք, ովքեր ընտրվում են որպես տեղական ՆԵՄԵԿ–ի նախագահներ, ընտրման պահին չպետք է 15 տարեկանից ցածր լինեն:

3. Տարեկան ժողովի ժամանակ ծառայողները ընտրվում են ՆԵՄԵԿ–ի ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Երբ հաստիքի համար կա միայն մեկ թեկնածու, քվեարկության ժամանակ օգտագործվում է բյուլետեն «կողմ» կամ «դեմ» կետերով, և հաստատվում է ձայների 2/3 –ով: Միայն Նազովրեցու Եկեղեցու անդամները կարող են քվեարկել նախագահի ընտրության ժամանակ:

4. Հաստիքում գտնվող կառավարիչը կարող է վերստին ընտրվել օգտագործելով բյուլետեն «կողմ» կամ «դեմ» կետերով, քվեարկության այդպիսի ձևը ընտրական կոմիտեին առաջարկվում է ՆԵՄԵԿ–ի խորհրդի կողմից, պետք է հաստատվի տարեկան ժողովի ձայների 2/3 –ով և հովվի կողմից:

5. ՆԵՄԵԿ–ում ծառայողի տեղը կարող է ազատվել նրա տեղափոխությունից կամ եկեղեցու անդամություն փոխելիս, պաշտոնաթողության կամ երբ ձայների 2/3 դեմ կքննարկի այդ թեկնածուի դեմ, կապված նրա պարտականությունների կատարելուց ազատելու հետ: Եթե կառավարիչի տեղը ազատվում է, ՆԵՄԵԿ–ի խորհուրդը լրացնում է տվյալ ազատ տեղը քվեարկության ձայների 2/3-ով, այն դեպքում, եթե թեկնածուն միայն մեկն է կամ ձայների մեծամասնությամբ, եթե երկու թեկնածուից ավել է: Եթե ազատվում է նախագահի տեղը, անցկացվում է ժողով, որը ղեկավարում է հովիվը, երիտասարդաց հովիվը կամ նրա կողմից լիազորված մարդը:

810.109 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի նախագահի պարտականություններն են.

ա.Նախագահը ՆԵՄԵԿ–ի խորհրդի ղեկավարն է, որտեղ որոշվում է եկեղեցու երիտասարդական ծառայության ուղղությունը:

բ.Նախագահը նպաստում է երիտասարդական ծառայության զարգացմանը և աշխատում է ՆԵՄԵԿ–ի խորհրդի հետ, որոշելու ուղղությունը համապատասխան եկեղեցու երիտասարդ մարդկանց կարիքների:

գ.Նախագահը կատարում է եկեղեցու կառավարման աշխատանքը և ներկայացնում է ամսեկան հաշվետվություն ղեկավարությանը: Ընտրություններից առաջ եկեղեցու ղեկավարությունը կարող է հաստատել ՆԵՄԵԿ–ի նախագահի մինիմալ տարիքը:

դ.Տարեկան եկեղեցական ժողովի ժամանակ, նախագահը պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն կատարված աշխատանքների և ֆինանսական վիճակի մասին:

ե.Նախագահը հավանություն է տալիս ՆԵՄԵԿ–ի տեղական եկեղեցական ղեկավարությանը բյուջեի համար, որը հաստատվել է ՆԵՄԵԿ–ի խորհրդի կողմից:

զ.Նախագահը ավտոմատ կերպով դառնում է եկեղեցու կիրակնօրյա դպրոցներում երիտասարդների հետ աշխատանքների գործում, «կիրակնօրյա դպրոցների» կառավարման անդամ:

է.Նախագահը ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Համագումարի և Տարածաշրջանային Ասամբլեայի անդամ է: Եթե նախագահը չի կարող մասնակցել համագումարում, ապա նշանակվում է նրա ներկայացուցիչը:

2. ՆԵՄԵԿ–ի մյուս ծառայողների պարտականությունների մեջ մտնում են.

ա.Կրթել և նշանակել առաջնորդներ, ՆԵՄԵԿ–ի տարբեր տեսակի աշխատանքների սահմաններում աշխատելու համար:

բ.Երիտասարդների համար լինել հոգևոր կյանքի օրինակ, ինչպես եկեղեցու մեջ, այնպես էլ նրանից դուրս:

գ.Երիտասարդական ծառայության մեջ պարտականությունների բաշխում ելնելով տեղական եկեղեցու կարիքներից:

դ.Պատասխանատվություն և արդյունավետություն ապահովելու համար, բաշխել հետևյալ պարտականությունները.

1. Կատարել գրառումներ և կազմել հաշվետվություններ ՆԵՄԵԿ–ի խորհրդի յորաքանչյուր նիստի համար, այցելել ՆԵՄԵԿ–ի բոլոր ժողովները, որոնք անհրաժեշտ են տեղական ՆԵՄԵԿ–ի նորմալ աշխատանքի համար:
2. ՆԵՄԵԿ–ի միջոցների ստանալու և բաշխելու մասին, կատարել գրառումներ համապատասխան եկեղեցու կառավարման սահմանադրության:
3. Եկեղեցու տարեկան ժողովի ժամանակ, ներկայացնել միջոցների հավաքման և ծախսման մասին հաշվետվություն:
4. ՆԵՄԵԿ–ի նախագահի հետ կազմել տարեկան բյուջե, ներկայացնելու ՆԵՄԵԿ–ի խորհրդին և եկեղեցու ղեկավարությանը:
3. Նախագահի հետ համատեղ աշխատել տեղական ՆԵՄԵԿ–ի արդյունավետությունը և աշխատունակությունը բարձրացնելու համար:
4. Անցկացնել ՆԵՄԵԿ–ի Խորհրդի կողմից նշանակված ծառայությունները:

810.110 Վճարվող անձնակազմը

1. Երիտասարդական հովիվ նշանակելու ժամանակ, եկեղեցու հովիվը, եկեղեցու ղեկավարության և ՆԵՄԵԿ–ի Խորհրդի հետ նշանակում է պատասխանատվության ոլորտներ ՆԵՄԵԿ–ի կառավարման շրջաններում: Այդ դեպքում, տեղական ՆԵՄԵԿ–ի նախագահի որոշակի պարտականություններ կարող են անցնել երիտասարդական հովվին: Սակայն ՆԵՄԵԿ–ի նախագահը մնում է կազմակերպության գլխավոր, ապահովելով կենսականորեն անհրաժեշտ ղեկավարումը, աջակցությունը և ժողովներում ներկայացնում է կատարված երիտասարդկան աշխատանքներ տեղեկատվությունը: Հովիվը, երիտասարդական հովիվը և ՆԵՄԵԿ–ի խորհուրդը, աշխատում են միասին որոշելու նախագահի և երիտասարդական հովվի պարտականությունները և դերը, ինչպես նաև

աշխատում են միասին բարելավել երիտասարդական ծառայության ոլորտի աշխատանքները:

2. Երիտասարդական հովիվը պարտադիր չէ լինի ՆԵՄԵԿ–ի նախագահ:

3. Երիտասարդական հովիվը ծառայում է ՆԵՄԵԿ–ի խորհրդի հաստիքում, գործադիր կոմիտեում, և ՆԵՄԵԿ–ի թեկնածուներ առաջադրող կոմիտեում:

4. Երիտասարդական հովիվը կարող է ծառայել որպես հովվի լիազորված անձ, կատարելու ՆԵՄԵԿ–ին վերաբերվող պարտականությունները:

5. Եթե եկեղեցում շատ մարդ կա, ում աշխատանքը վճարվում է եկեղեցական բյուջեից, և որոնք աշխատում են ՆԵՄԵԿ–ի տարբեր տարիքային խմբերի հետ, եկեղեցին կառավարիչի ղեկավարությամբ կարող է նշանակել ծառայողներին աշխատանքի յուրաքանչյուր տարիքային խմբում աշխատելու համար, և այդպիսով ՆԵՄԵԿ կներկայացվի եկեղեցական խորհրդում:

Խորհուրդը

810.111 Կազմը

1. ՆԵՄԵԿ–ի տեղական խորհուրդը, բաղկացած է ՆԵՄԵԿ–ի ծառայողներից, այլ նշանակված կամ ընտրված երիտասարդական ներկայացուցիչներից և առաջնորդներից, հովվից և/կամ երիտասարդական հովվից, որոնք համատեղ որոշում են տեղական երիտասարդական ծառայության ուղղությունը:

2. ՆԵՄԵԿ–ի խորհրդի անդամները, պետք է լինեն տեղական ՆԵՄԵԿ–ի անդամներ: Նաև նրանց անհրաժեշտ է աջակցել, որպեսզի նրանք լինեն կամ դառնան Նազովրեցու Եկեղեցու անդամներ:

810.112 Ընտրություններ

1. ՆԵՄԵԿ–ի ընտրական կոմիտեն առաջադրում է ՄԵԿ–ի տեղական անդամներին ՆԵՄԵԿ–ի Խորհուրդ:

2. ՆԵՄԵԿ–ի անդամություն ստանում են նրանք, ով ստացել է ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի քվեարկության ձայների մեծամասնությամբ:

3. ՆԵՄԵԿ-ի ծառայողի տեղը կարող է ազատվել եթե նա տեղափոխվում է կամ փոխում է անդամությունը, պաշտոնաթողության կամ քվեարկության միջոցով, եթե կապված նրա կատարած պարտականություններից ազատելու հետ ձայների 2/3-ը դեմ է քվեարկել տվյալ թեկնածուի դեմ: Եթե ազատվում է խորհրդի անդամի պաշտոնը, ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը թափուրը լրացնում է քվեարկելով և հաստատելով ձայների 2/3-ով, եթե թեկնածուն մեկն է, և ձայների մեծամասնությամբ եթե 2 թեկնածուից ավել են:

4. Եթե եկեղեցում ՄԵԿ–ի անդամները յոթ հոգուց պակաս են, ապա հովիվը կարող է նշանակել նոր անդամներՆԵՄԵԿ–ի Խորհուրդ, որպեսզի բարձրանա երիտասարդական ծառայության պտղաբերությունը, և երիտասարդ մարդկանց դարձը դեպի Տեր Հիսուսը:

810.113 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը պատասխանատու է տեղական եկեղեցու սահմաններում, երիտասարդական ծառայության ամբողջ սպեկտորի պլանավորման և կազմակերպման համար: Տնօրենի և ծառայողների օգնությամբ, այդ խորհուրդը նախաձեռնում և առաջնորդում է երիտասարդ մարդկանց հետ աշխատանքը, որպեսզի նրանք դառնան դեպի Քրիստոսը և պատասխանել նրանց հոգևոր կարիքներին, համապատասխան այն ուղղության, որին հետևում է տեղական եկեղեցին:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը որոշում է տեղական ՆԵՄԵԿ–ի ծառայության ուղղությունը, համապատասխան տեղական երիտասարդական ծառայության կարիքների և որոշում է ծառայության տնօրենի պարտականությունները:

3. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը կատարում է կիրակնօրյա դպրոցի աշխատանքների կառավարումը, այցելելով երիտասարդական ժողովներին, նշանակելով և կրթելով առաջնորդներին, ինչպես նաև Կիրակնօրյա դպրոցի ծրագրին համապատասխան, երաշխավորում է կրթական գրականություն:

4. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը համագործակցում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի հետ, առաջադրելու երիտասարդ մարդկանց ՄԵԿ–ի ծառայության շրջանային, տարածաշրջանային և գլոբալ մաշտաբներով:

5. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը առաջադրում և հաստատում է փոփոխություններ տեղական ծառայության ծրագրում:

810.114 Հանձնաժողովներ

1. ՆԵՄԵԿ–ի գործադիր հանձնաժողովը բաղկացած է ՆԵՄԵԿ–ի ընտրված ծառայողներից, հովվից կամ երիտասարդական հովվից: Անհրաժեշտության դեպքում գործադիր հանձնաժողովը կարող է կատարել ՆԵՄԵԿ–ի Խորհրդի դերը: Գործադիր Հանձնաժողովի գործունեության մասին բոլոր տեղեկատվությունը ներկայացվում է խորհրդի բոլոր անդամներին, և տվյալ հանձնաժողովի գործունեությունը պետք է հաստատվեն խորհրդի կողմից, նրա հաջորդ ժողովի ժամանակ:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը երիտասարդական ծառայության կարիքներին համապատասխան կարող է հիմնել հատուկ ծառայություն, որոշակի տարիքային խմբի համար:

810.115 Վճարովի անձնակազմը

1. Հովիվը որոշում է երիտասարդական հովվի պարտականությունները, նախապես խորհրդակցելով եկեղեցական ղեկավարության և ՆԵՄԵԿ–ի Խորհրդի հետ:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը և երիտասարդական հովիվը աշխատում են հարմոնիայի մեջ, համագործակցելով իրար հետ:

3. Եթե եկեղեցում կան շատ մարդիկ, ովքեր աշխատում են տարբեր տարիքային խմբերի հետ, ՄԵԿ–ի գործունեության շրջաններում, որոնց աշխատանքը վճարվում է եկեղեցական բյուջեից: Անհրաժեշտության դեպքում, եկեղեցին կարող է ստեղծել համակարգող խորհուրդ:

Ժողովները

810.116 Տեղական ՆԵՄԵԿ–ի ժողովները

1. Բազմակի հանդիպումները, օգնում են ավելի արդյունավետ կատարել երիտասարդական ծառայությունները:

2. ՆԵՄԵԿ–ի տեղական խումբը մասնակցում է ՆԵՄԵԿ–ի շրջանային, տարածաշրջանային և միջազգային ժողովներին, որը օգնում է բարձրացնել երիտասարդական ծառայությունների արդյունավետությունը:

810.117 ՆԵՄԵԿ–ի Խորհրդի ժողովը

1. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը շարունակաբար հանդիպում է կատարելու ՆԵՄԵԿ–ի միսիան, և հետևելու նշված ուղղությամբ:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը հանդիպում է համաձայն ժողովների կազմած գրաֆիկի, ինչպես նաև այն կարող է գումարվել նախագահի կամ հովվի կողմից:

810.118 Տարեկան ժողովները

1. Տեղական ՆԵՄԵԿ–ի ժողովը գումարվում է Տարածաշրջանային Ասամբլեայի անցկացնելուց հետո, 60 օրերի ընթացքում:

2. Խորհրդի անդամները և ծառայողները, ինչպես նաև ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային համագումարի պատգամավորները, ընտրվում են ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի ժամանակ: Տեղական ՆԵՄԵԿ–ի ծառայության պլանը կարող է վերանայվել, եթե ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի ժամանակ, փոփոխությունների համար քվեարկեն ձայների մեծամասնության 2/3-ը:

Բ. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ծառայություն

810.200 Ավետարանչություն

Շրջանային ՆԵՄԵԿ–ը մշակում և իրականացնում է ծառայություններ և հանդիպումներ երիտասարդության հետ, որպեսզի ծանոթացնի նրանց Հիսուսի հետ:

810.201 Աշակերտություն

Շրջանային ՆԵՄԵԿ–ը մշակում և իրականացնում է ծառայություններ հանդիպումներ և զանազան միջոցառումներ, պատրաստելու կանչված երիտասարդ մարդկանց աճելու Քրիստոսի մեջ, անհատապես ուսումնասիրելու Աստվածաշունչը, ծառայելու և շփվելու համար:

810.202 Առաջնորդի զարգացումը

Շրջանային ՆԵՄԵԿ–ը և իրականացնում է ծառայություններ և հանդիպումներ, հաստատելու և ապահովվելու երիտասարդ մարդկանց այն ամենով, որպես նրանք Քրիստոսի և եկեղեցու համար դառնան առաջնորդներ:

Կանոնադրության փոփոխությունները

810.203 Դրույթները

1. Շրջանում ծառայության համար ծրագիրը ապահովում է ՆԵՄԵԿ–ի տեղական մակարդակով կազմակերպման ստանդարտ ձև, գործունեություն և կառավարում: Շրջանային ՆԵՄԵԿ–ը կարող է ծրագիրը համակարգել համապատասխան տեղի երիտասարդական ծառայության կարիքների, և ՆԵՄԵԿ–ի Համաշխարային Կանոնադրությամբ:

2. Ծրագրում չընդգրկված տարածքը գտնվում է շրջանային ՆԵՄԵԿ–ի իրավասության տակ:

810.204 Ընթացքը

1. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը սահմանում և տեղեկացնում է համակարգման ընթացքը և ծառայության ծրագրի վերանայումը, ինչպես նաև հաստատում է առաջարկված փոփոխությունները, որպեսզի դրանք ներկայացվեն տարեկան ժողովին:

2. Տեղական ծրագրի համար առաջարկված փոփոխությունները, պետք է ներկայացվեն շրջանային ՆԵՄԵԿ–ի բոլոր անդամներին, մինչև տարեկան համագումարի սկիզբը:

3. Փոփոխությունները պետք է հաստատվեն ՆԵՄԵԿ–ի տարեկան համագումարի ժամանակ, շրջանային ՆԵՄԵԿ–ի ներկա գտնվող անդամների

քվեարկության ձայների 2/3 մեծամասնությամբ, այնուհետև այն պետք է հաստատվի շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից:

4. Տեղական ծառայության բոլոր փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՆԵՄԵԿ–ի տարեկան համագումարի ավարտից հետո, 60 օրերի ընթացքում: Վերանայված ծրագիրը պետք է հրատարակվի տպագիր ձևով, և այնուհետև այն կարող է մտնել ուժի մեջ:

Ծառայության անդամությունը և ուղղությունը

810.205 Հաշվետվությունը և կազմը

1. Շրջանի կազմի մեջ մտնող ՆԵՄԵԿ–ի տեղական խմբերը և ՆԵՄԵԿ–ի անդամները կազմում են շրջանային ՆԵՄԵԿ–ը:

2. Շրջանային ՆԵՄԵԿ–ը հաշվետու է իր անդամներին, շրջանային սուպերինտենդենտին և Շրջանային Խորհրդատվական Խորհրդին:

3. ՆԵՄԵԿ–ի նշանակված նախագահը ամեն ամիս հաշվետվություն է տալիս ՆԵՄԵԿ–ի շրջանային ժողովին և ՆԵՄԵԿ–ի շրջանային ասամբլեային:

810.206 Ծառայության ուղղությունը

1. Շրջանային ՆԵՄԵԿ–ի ավանդական ծառայությունը ուղղված է 12 տարեկան և բարձր երեխաներին, քոլեջների/համալսարանների ուսանողներին և երիտասարդ մարդկանց: Շրջանային ՆԵՄԵԿ–ը իր ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, շրջանային սուպերինտենդենտի և Շրջանային Խորհրդատվական Խորհրդի համաձայնությամբ, կարող է մոդիֆիկացնել իր ծառայությունները:

2. Շրջանային ՆԵՄԵԿ–ն ծրագիրը ներկայացնելու և պլանավորելու նպատակով, սահմանում է տարիքային խմբերը, կարիքները ապահովելու և նշանակված շրջանում արդյունավետ աշխատելու նպատակով:

Կառավարումը

810.207 Ծառայողները

1. Շրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն են նախագահը, փոխնախագահը, քարտուղարը և գանձապահը:

2. Տեղական ՆԵՄԵԿ–ի ծառայողները պետք է լինեն տեղական Նազովրեցու Եկեղեցու անդամներ, որը գտնվում է տվյալ շրջանի մեջ, կատարել ակտիվ երիտասարդական ծառայություններ և լինել օրինակ այն բանի, թե ինչպես պետք է անցկացնել երիտասարդական ծառայությունը:

3. Շրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն աշխատում են անվճար: Ադմինիստրատիվ ծախսերը փակվում են շրջանային ՆԵՄԵԿ–ի բյուջեյով:

4. Եթե չկա կազմակերպված շրջանային ՆԵՄԵԿ, ապա շրջանային սուպերինտենդենտը կարող է նշանակել շրջանային ՆԵՄԵԿ–ի նախագահ, հոգևոր կարիքների համապատասխան օգնելու եկեղեցիներին, երիտասարդների հետ աշխատանքներում:

810.208 Ընտրություններ

1. Շրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն ընտրվում են ՆԵՄԵԿ–ի շրջանային համագումարի ժամանակ և ծառայում են մեկ տարի ժամանակով, սկսած համագումարի փակման պահից և ավարտվում է, երբ կընտրվեն և կհաստատվեն նրանց փոխարինողները:

Ընտրական Հանձնաժողովի երաշխավորությամբ և շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ, ծառայողը կարող է ընտրվել երկու տարի ժամանակով:

2. Ընտրական Հանձնաժողովը ընտրվում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի կողմից և բաղկացած է առնվազը ՆԵՄԵԿ–ի շրջանային խորհրդի չորս անդամից, ինչպես նաև շրջանային սուպերինտենդենտից և ՆԵՄԵԿ–ի նախագահից: Բոլոր թեկնածուները պետք է հաստատվեն ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի և շրջանային սուպերինտենդենտի կողմից: Ընտրական Հանձնաժողովը նշանակում է ծառայողներ շրջանային ՆԵՄԵԿ:

3. Ծառայողները ընտրվում են տարեկան ժողովի ժամանակ, ՆԵՄԵԿ–ի անդամների ձայների մեծամասնությամբ: Եթե հաստիքի համար կա միայն մեկ թեկնածու, ապա քվեարկության համար օգտագործվում է բյուլետեն «կողմ» կամ «դեմ», կետով, և հաստատվում է ձայների 2/3 մեծամասնությամբ: Ընտրական Հանձնաժողովի երաշխավորությամբ, կոնվենցիան կարող է քվեարկել, որպեսզի ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդը թույլտվություն ունենա նշանակելու ՆԵՄԵԿ–ի շրջանային քարտուղարի և գանձապահի:

4. Ծառայության մեջ գտնվող ծառայողը կարող է կրկին ընտրվել օգտագործելով բյուլետեններ «կողմ» կամ «դեմ» կետերով, երբ նման քվեարկության ձևը առաջարկվում է ՆԵՄԵԿ Ընտրական Հանձնաժողովին ՆԵՄԵԿ–ի Խորհրդի կողմից, որը հաստատվում է շրջանային սուպերինտենդենտի և ՆԵՄԵԿ–ի տարեկան ժողովի քվեարկության ձայների 2/3 մեծամասնությամբ:

5. ՆԵՄԵԿ–ի ծառայողի հաստիքը կարող է ազատվել նրա տեղափոխության կամ եկեղեցու անդամությունը փոխելու կամ պաշտոնաթողության դեպքում, կամ էլ նրա պարտականություններից ազատելու կապակցությամբ կատարված քվեարկության արդյունքում, եթե նրա դեմ քվեարկել են 2/3 ձայների մածամասնությամբ: Եթե ազատվում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի նախագահի պաշտոնը, ապա փոխնախագահը կատարում է նրա պարտականությունները մինչև հաջորդ տարեկան ժողով: Եթե թափուր տեղեր են առաջանում այլ աշխատողների համար, ապա ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը լրացնում է թափուրը քվեարկությամբ, և այն հաստատվում է ձայների 2/3 մեծամասնությամբ, եթե թեկնածուն մեկն է կամ էլ ձայների մեծամասնությամբ եթե թեկնածուները մեկից ավելին են:

810.209 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի նախագահի պարտականություններն են.

ա.Ապահովել շրջանային ՆԵՄԵԿ–ի ղեկավարությունը համագործակցելով ՆԵՄԵԿ–ի հետ:

բ.Անցկացնել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի ժողովները, որտեղ որոշվում են եկեղեցու երիտասարդական ծառայությունների ուղղությունները:

գ.Աջակցել երիտասարդական ծառայության զարգացմանը: ՆԵՄԵԿ–ի Խորհրդի հետ որոշել աշխատանքի ուղղությունը, համաձայն եկեղեցում երիտասարդական ծառայության կարիքների:

դ.Նախագահել ՆԵՄԵԿ–ի Շրջանային համագումարի ժամանակ:

ե.Տվյալ շրջանին պատկանող տեղական եկեղեցիներում աջակցել ՆԵՄԵԿ–ի ծառայության զարգացումը:

զ.Ներկայացնել ՆԵՄԵԿ–ի հետաքրքրությունները բոլոր համապատասխան հանձնաժողովներում և Շրջանային Խորհուրդներում:

է.Շրջանային ասամբլեային և շրջանային համագումարին ներկայացնել տարեկան հաշվետվություն:

ը.ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարին և շրջանային ասամբլեային ներկայացնել բյուջեն հաստատման համար:

թ.Նախագահը ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի պատգամավոր է: Եթե նախագահը չի կարող մասնակցել համագումարին, ապա նշանակվում է նրա ներկայացուցիչը:

ժ.Ծառայել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդում, եթե դա պահանջում է տարածաշրջանային ծառայության ծրագիրը:

2. **Փոխնախագահի պարտականություններն են.**

ա.Համագործակցել նախագահի հետ և իրագործել այդ շրջանում երիտասարդական աշխատանքների ծրագրերը:

բ.Կատարել նախագահի պարտականությունները նրա բացակայության ընթացքում:

գ.Կատարել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի կամ համագումարի կողմից առաջադրված այլ աշխատանքները:

3. **Քարտուղարի պարտականություններն են.**

ա.Կատարել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի նիստերի, Գործադիր Հանձանաժողովի և ՆԵՄԵԿ–ի Շրջանային Համագումարների որոշումների, ճշգրիտ փաստաթղթային գրառումներ:

բ.Այցելել ՆԵՄԵԿ–ին վերաբերվող շրջանային բոլոր ժողովներին:

գ.Ներկայացնել ՆԵՄԵԿ–ի Գլխավոր Գրասենյակին և ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային նախագահին տեղեկատվություն, շրջանային ՆԵՄԵԿ–ի իրենց հաստիքներում ընտրված տարբեր ծառայողների և տնօրենների անուններն ու հասցեները:

դ.Կատարել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի և համագումարի կողմից հանձնարարված աշխատանքները:

4. **Գանձապահի պարտականությունները.**

ա.Կատարել շրջանային ՆԵՄԵԿ–ի միջոցների մուտքերի և բաշխումների գրանցումները:

բ.Կազմել հաշվետվություն հավաքված և ծախսված միջոցների մասին և այն ներկայացնել ՆԵՄԵԿ–ի տարեկան Շրջանային Համագումարին:

գ. Աշխատել նախագահի հետ կազմելու տարեկան բյուջե, ներկայացնելու համապատասխան մարմիններին:

5. Ծառայողների վրա կարող են դրվել այլ պարտականություններ, համաձայն շրջանային երիտասարդական ծառայությունների կարիքների:

810.210 Վճարվող աշխատակիցները

1. Եթե շրջանում ՆԵՄԵԿ–ի շրջանային երիտասարդական հովվի պաշտոնը զբաղված է, ապա շրջանային սուպերինտենդենտը խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի հետ, ՆԵՄԵԿ–ի շրջանային պարտականությունների պատասխանատվությունները դնում են երիտասարդական հովվի վրա: Այդ դեպքում, երիտասարդական հովիվը իր պարտականությունները կատարում է այլ կերպ, քան որոշ հանգամանքներում կկատարեր ՆԵՄԵԿ–ի նախագահը: Սակայն ՆԵՄԵԿ–ի շրջանային նախագահի թափուր տեղի լրացումը չպետք է անտեսվի, քանի որ այն հնարավորություն է տալիս ապահովելու լրացուցիչ ղեկավարություն, աջակցություն և շրջանային երիտասարդական ծառայության ներկայացուչություն: ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը և շրջանային սուպերինտենդենտը որոշում են երկու ծառայությունների դերերը,

և ինչպես պետք է, նրանք տարածաշրջանում կօգտագործվեն ի շահ երիտասարդական ծառայության:

2. ՆԵՄԵԿ–ի շրջանային երիտասարդական հովիվը իրավունք չունի զբաղեցնելու ՆԵՄԵԿ–ի նախագահի պաշտոնը:

3. ՆԵՄԵԿ–ի շրջանային երիտասարդական հովիվը, ի պաշտոնե ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի, Գործադիր հանձնաժողովի և շրջանային ՆԵՄԵԿ–ի Թեկնածուներ Առաջադրող հանձնաժողովի անդամ է:

4. ՆԵՄԵԿ–ի շրջանային երիտասարդական հովիվը կարող է ծառայել, որպես շրջանային սուպերինտենդենտի կողմից նշանակված անձ, որպեսզի կատարի այն գործերը, որոնք վերաբերվում են ՆԵՄԵԿ–ի գործունեությանը:

Խորհուրդը

810.211 Կազմը

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը բաղկացած է ՆԵՄԵԿ–ի շրջանային անդամներից, այլ նշանակված երիտասարդական առաջնորդներից և ներկայացուցիչներից, ում կարիքը Խորհուրդը զգում է, ինչպես նաև շրջանային սուպերինտենդենտից և երիտասարդական հովվից:

2. Միայն Նազովրեցու Եկեղեցու անդամները, ովքեր գտնվում են շրջանային ՆԵՄԵԿ–ի իրավասության տակ կարող են լինել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի անդամ:

810.212 Ընտրությունները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Ընտրական Հանձնաժողովը առաջադրում է անդամներ շրջանային ՄԵԿ ընտրվելու ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդ:

2. Այնուհետև ՆԵՄԵԿ–ի Շրջանային Համագումարը ձայների մեծամասնությամբ ընտրում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի անդամներին:

3. ՆԵՄԵԿ Խորհրդի անդամի հաստիքը կարող է ազատվել, նրա տեղափոխության կամ եկեղեցու անդամությունը փոխելու կամ պաշտոնաթողության դեպքում, կամ էլ նրա պարտականություններից ազատելու կապակցությամբ կատարված քվեարկության արդյունքում, եթե նրա դեմ քվեարկել են 2/3 ձայների մածամասնությամբ: Եթե ազատվում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի նախագահի պաշտոնը, ապա փոխնախագահը կատարում է նրա պարտականությունները մինչև հաջորդ տարեկան ժողով: Եթե թափուր տեղեր են առաջանում այլ աշխատողների համար, ապա ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը լրացնում է թափուրը քվեարկությամբ և այն հաստատվում է ձայների 2/3 մեծամասնությամբ եթե թեկնածուն մեկն է կամ էլ ձայների մեծամասնությամբ, եթե թեկնածուները մեկից ավելին են:

4. Ընտրական Հանձնաժողովը կարող է լիազորել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդին նշանակելու շրջանային տնօրենների:

810.213 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը պատասխանատու է տեղական եկեղեցու սահմաններում, երիտասարդական ծառայության ամբողջ սպեկտորի պլանավորման և կազմակերպման համար: Տնօրենի և ծառայողների օգնությամբ, այդ խորհուրդը նախաձեռնում և առաջնորդում է երիտասարդ մարդկանց հետ աշխատանքը, որպեսզի նրանք դառնան դեպի Քրիստոսը և պատասխանել նրանց հոգևոր կարիքներին համապատասխան այն ուղղության, որին հետևում է տեղական եկեղեցին:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը որոշում է տեղական ՆԵՄԵԿ–ի ծառայության ուղղությունը համապատասխան տեղական երիտասարդական ծառայության կարիքների, և որոշում է ծառայության տնօրենի պարտականությունները:

3. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը, ամբողջ շրջանով մատակարարում և ոգեշնչում է տեղական եկեղեցիները, որոնք մտնում են ՆԵՄԵԿ–ի շրջանային գործունեության ոլորտի մեջ:

4. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը կատարում է կիրակնօրյա դպրոցի աշխատանքների կառավարումը այցելելով երիտասարդական ժողովներին, նշանակելով և կրթելով առաջնորդներին, ինչպես նաև Կիրակնօրյա դպրոցի ծրագրին համապատասխան, երաշխավորում է կրթական գրականություն:

5. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը անցկացնում է ուղղորդված ծառայություններ, որոնք որոշված են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի ժամանակ, ինչպես նաև տեղական ՆԵՄԵԿ–ի խմբերում ապահովվում է կազմած ծրագրերի աշխատանքը:

6. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը առաջարկություններ է անում ՆԵՄԵԿ–ի Շրջանային համագումարին, ՆԵՄԵԿ–ի աշխատանքների վերաբերյալ: Համագումարը կարող է դրանք վերանայի մինչ դրանց ընդունումը:

7. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը առաջադրում և հաստատում է փոփոխություններ տեղական ծառայության ծրագրում:

810.214 Հանձնաժողովները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Գործադիր Հանձնաժողովը բաղկացած է շրջանում ՆԵՄԵԿ–ի ընտրված ծառայողներից, շրջանային սուպերինտենդենտից և/կամ երիտասարդական հովվից: Եթե Գործադիր Հանձնաժողովում անհրաժեշտ է նշանակել քարտուղարի և գանձապահի, ապա նրանց նշանակումը կատարվում է քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ: Այդ ծառայողները ընտրվում են ՆԵՄԵԿ–ի Շրջանային Գործադիր Հանձնաժողովի անդամներից: Գործադիր Հանձնաժողովի գործունեության մասին բոլոր տեղեկատվությունը ներկայացվում է խորհրդի բոլոր անդամներին, և տվյալ հանձնաժողովի գործունեությունը պետք է հաստատվեն խորհրդի կողմից, նրա հաջորդ ժողովի ժամանակ:

2. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը երիտասարդական ծառայության կարիքներին համապատասխան կարող է հիմնել հատուկ ծառայություն, որոշակի տարիքային խմբի համար:

10.215 ՆԵՄԵԿ–ի զոնան

1. Համագործակցելով շրջանային ղեկավարության հետ, ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը կարող է շրջանի գոյություն ունեցող ներքին կառուցվածքներում նշանակել տարբեր զոնաներ, կազմակերպելու ՆԵՄԵԿ–ի ղեկավարությունը, համակարգումը և ՆԵՄԵԿ–ի ծառայության արդյունավետության բարձրացումը ամբողջ շրջանով:

2. Կարող է կազմվել ՆԵՄԵԿ–ի զոնաների խորհուրդ, տարբեր զոնաներում հատուկ տեսակի ծառայությունների պարտականությունների բաշխման համար:

3. Յուրաքանչյուր զոնայի ներկայացուցիչ կամ նախագահ կարող է լինել ՆԵՄԵԿ–ի Խորհրդում, եթե այն հաստատված է ՆԵՄԵԿ–ի Շրջանային համագումարի կողմից:

810.216 Վճարովի անձնակազմը

1.Շրջանային սուպերինտենդենտը որոշում է երիտասարդական հովվի պարտականությունները, նախապես խորհրդակցելով Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի Խորհրդի հետ:

2. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը և երիտասարդական հովիվը աշխատում են հարմոնիայի մեջ, համագործակցելով իրար հետ:

Ժողովները

810.217 ՆԵՄԵԿ–ի Շրջանային ժողովները

1. Բազմակի հանդիպումները օգնում են ավելի արդյունավետ ծառայել երիտասարդ մարդկանց:

2. Շրջանային ՆԵՄԵԿ–ը նաև պետք է նպաստի տեղական ՆԵՄԵԿ-ի խմբերի աշխատանքին տարբեր օժանդակ նյութերով, և ոգևորի նրանց ծառայելու:

3. Շրջանային ՆԵՄԵԿ–ը մասնակցում է ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային և միջազգային ժողովներին, որը հետագայում օգնում է բարձրացնել երիտասարդական ծառայությունների արդյունավետությունը:

810.218 ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի ժողովները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը շարունակաբար հանդիպում է իր միսիան կատարելու համար, և հետևելու նշված ուղղությամբ:

2. ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը հանդիպում է համաձայն ժողովների կազմած գրաֆիկի, ինչպես նաև այն կարող է գումարվել նախագահի կամ շրջանային սուպերինտենդենտի կողմից:

810.219 ՆԵՄԵԿ–ի Շրջանային Համագումարները

1. ՆԵՄԵԿ–ի շրջանային ժողովների ժամանակ անցկացվում են նիստեր և կազմվում են տարբեր ծրագրեր, շրջանում խթանելու երիտասարդների հետ աշխատանքները: Կատարվում են զեկույցներ, ընտրվում է ղեկավարություն, քննարկվում են գործեր, որոնք վերաբերվում են ՆԵՄԵԿ–ին: Կատարվում է պատվիրակների ընտրություն ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի համար:

2. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը համագործակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, վերանայում են համագումարի ընթացքում ընդունված լուծումները: Համագումարը, շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ, գումարվում է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի որոշած ժամանակ, շրջանային ասամբլեայի ավարտից հետո, 60 օրերի ընթացքում:

3. Շրջանային համագումարը կազմված է ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի անդամներից, շրջանային սուպերինտենդենտից, տեղական հովիվներից, պատգամավորներից և ծառայության այլ ներկայացուցիչներից:

4. ՆԵՄԵԿ–ի շրջանային համագումարների պատգամավորները պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու անդամներ, որը նրանք ներկայացնում են:

5. Պատգամավորների քանակը տեղական ՆԵՄԵԿ–ից ամեն եկեղեցու համար որոշվում է եկեղեցու անդամների քանակից, համապատասխան ցուցակի, որը շրջանային ասամբլեային ներկայացնում է հովիվը: ՆԵՄԵԿ–ի շրջանային ղեկավարությունը հրահանգում է տեղական եկեղեցիներին այն պատգամավորների ծախսերի վերաբերյալ, ովքեր ուղևորվելու են շրջանային ՆԵՄԵԿ–ի համագումար:

6. 30 հոգուց պակաս եկեղեցիների պատգամավորները դեպի ՆԵՄԵԿ–ի շրջանային համագումար պետք է լինեն.

ա.Հովիվը և երիտասարդական հովիվը, կամ նրանք, ովքեր գտնվում են մշտական աշխատանքի մեջ, որպես ծառայողներ երիտասարդների հետ աշխատանքներում:

բ.Տեղական ՆԵՄԵԿ–ի նորընտիր նախագահը:

գ.4 պատգամավորներ, որոնցից գոնե 2-ը զբաղվում են երիտասարդական ծառայությամբ:

դ.Տեղական եկեղեցիները յուրաքանչյուր տեղական ՆԵՄԵԿ–ի 30 մարդուն կարող են ավելացնել մեկ պատգամավոր կամ/և յուրաքանչյուր 19-29 ակտիվ անդամներին, ով ինչ-որ ձևով ներգրավված են երիտասարդական ծառայությունների մեջ:

7. Պատգամավորներից մեկը կարող է լինել ցանկացած տեղական եկեղեցու հովիվ կամ բարեգործական ընկերության նախագահը, եթե տվյալ եկեղեցում չկա տեղական ՆԵՄԵԿ:

Անդամների թիվը	Պատգամավորների քանակը	Անդամների քանակը	Պատգամավորների քանակը
5-45	4	136-165	8
46-75	5	166-195	9
76-105	6	196-225	10
106-135	7	226-255	11

Ամեն տեղական ՆԵՄԵԿ–ի ընտրված պատգամավորների քանակի մեջ չեն մտնում հաստիքային պատգամավորներ (ՆԵՄԵԿ–ի նախագահը, հովիվը, երիտասարդական հովիվը, տեղական եկեղեցիների ներկայացուցիչներ, ովքեր տեղական ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհրդի անդամ են և այլն):

Գ. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ծառայություն

810.300 Ավետարանչություն

Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը մշակում և իրականացնում է ծառայություններ և կազմակերպում է հատուկ իրադարձություններ նրա համար, որպեսզի երիտասարդությանը բերի Հիսուսի Քրիստոսին:

810.301 Աշակերտություն

Տարածաջանային ՆԵՄԵԿ–ը մշակում և իրականացնում է ծառայություններ, հանդիպումներ և զանազան միջոցառումներ, պատրաստելու կանչված երիտասարդ մարդկանց աճելու Քրիստոսի մեջ, անհատապես ուսումնասիրելու Աստվածաշունչը, ծառայելու և շփվելու համար:

810.302 Առաջնորդի զարգացումը

Տարածաջանային ՆԵՄԵԿ–ը և իրականացնում է ծառայություններ և հանդիպումներ հաստատելու և ապահովվելու երիտասարդ մարդկանց այն ամենով, ինչը անհրաժեշտ է եկեղեցում աշխատելու համար:

Փոփոխություններ

810.303 Դրույթները

1. Շրջանում ծառայության համար ծրագիրը ապահովում է ՆԵՄԵԿ–ի տեղական մակարդակով կազմակերպման ստանդարտ ձև, գործունեություն և կառավարում:

Տարածաջանային ՆԵՄԵԿ–ը կարող է ծրագիրը համակարգել համապատասխան տեղի երիտասարդական ծառայության կարիքների, և ՆԵՄԵԿ–ի Համաշխարային Կանոնադրությամբ:

2. Ծրագրում չընդգրկված տարածքը գտնվում է տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի իրավասության տակ:

810.304 Գործունեությունը

1. Տարածաջանային ՆԵՄԵԿ–ի Խորհուրդը, համագործակցելով տարածաշրջանի հետ, սահմանում և տեղեկացնում է համակարգման ընթացքը և ծառայության ծրագրի վերանայումը, ինչպես նաև հաստատում է առաջարկված փոփոխությունները, մինչ դրանք կներկայացվեն տարեկան ժողովին:

2. Տարածաշրջանային ծրագրի համար առաջարկված փոփոխությունները պետք է ներկայացվեն տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի բոլոր անդամներին, մինչև տարեկան համագումարի սկիզբը:

3. Փոփոխությունները պետք է հաստատվեն ՆԵՄԵԿ–ի տարեկան տարածաշրջանային համագումարի ժամանակ, տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ներկա գտնվող անդամների քվեարկության ձայների 2/3 մեծամասնությամբ, այնուհետև այն պետք է հաստատվի տարածաշրջանային տնօրենի և Տարածաշրրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից:

4. Տեղական ծառայության բոլոր փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՆԵՄԵԿ–ի տարեկան համագումարի ավարտից հետո 90 օրերի ընթացքում: Վերանայված ծրագիրը պետք է հրատարակվի տպագիր ձևով, և այնուհետև այն կարող է մտնել ուժի մեջ:

Անդամությունը և ծառայության ուղղությունը

810.305 Հաշվետվությունը և կազմը

1. Տարածաշրջանի կազմի մեջ մտնում է ՆԵՄԵԿ–ի տեղական խմբերը, ՆԵՄԵԿ–ի շրջանային աշխատողները և տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը:

2. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը հաշվետու է իր անդամներին, տարածաշրջանային տնօրենին, Գլոբալ ՆԵՄԵԿ–ի տնօրենին, Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի Խորհրդին և Գլոբալ ՆԵՄԵԿ–ի Խորհրդին:

3. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը կազմում է տարեկան հաշվետվություն և ներկայացնում է ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարին, և երբ դա անհրաժեշտ է տարածաշրջանային տնօրենին, ինչպես նաև Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդին:

810.306 Ծառայության ուղղությունը

1. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ավանդական ծառայությունը ուղղված է 12 տարեկան և բարձր երեխաներին, քոլեջների/համալսարանների ուսանողներին և երիտասարդ մարդկանց: Շրջանային ՆԵՄԵԿ–ը իր ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, տարածաշրջանային տնօրենի և տարածաշրջանի շրջանների համաձայնությամբ, կարող է մոդիֆիկացնել իր ծառայությունները:

2. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը, ծրագիրը պլանավորելու և ներկայացնելու նպատակով սահմանում է տարիքային խմբերը, կարիքները ապահովելու և նշանակված տարածաշրջանում արդյունավետ աշխատելու նպատակով:

Կառավարումը

810.307 Ծառայողները

1. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն են՝ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը: Այս ծառայողները և տարածաշրջանային երիտասարդական համակարգողը կազմում են Գործադիր Հանձնաժողովը:

2. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողները պետք է լինեն տեղական Նազովրեցու Եկեղեցու անդամներ, որը գտնվում է տվյալ շրջանի մեջ, կատարել ակտիվ երիտասարդական ծառայություններ, և լինել օրինակ այն բանի, թե ինչպես պետք է անցկացնել երիտասարդական ծառայությունը:

3. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն աշխատում են անվճար: Ադմինիստրատիվ ծախսերը փակվում են շրջանային ՆԵՄԵԿ–ի բյուջեով:

810.308 Ընտրությունները

1. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն ընտրվում են ՆԵՄԵԿ–ի շրջանային համագումարի նախընտրական նիստի ժամանակ: Նրանց թեկնածությունները պետք է հաստատվեն համագումարում: Ծառայողները աշխատում են են 4 տարի ժամանակով, սկսած համագումարի փակման պահից և ավարտվում է հաջորդ համագումարի փակման ժամանակ:

2. Տարածաշրջանային Ընտրական Հանձնաժողովը նշանակում է ծառայողներին տարածաշրջանային ՆԵՄԵԿ: Ընտրական Հանձնաժողովը ընտրվում է ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանի Խորհրդի կողմից և բաղկացած է առնվազը ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի չորս անդամից, ինչպես նաև տարածաշրջանային տնօրենից և ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային նախագահից: Բոլոր թեկնածուները պետք է հաստատվեն ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի և տարածաշրջանային տնօրենի կողմից:

3. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի նախագահը ընտրվում է ՆԵՄԵԿ–ի շրջանային համագումարի, նախընտրական նիստի ժամանակ:

4. Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի նախագահի պարտականությունները կատարողին կարող է վերընտրվել երկրորդ անգամ, քվեարկելով «Կողմ» կամ«Դեմ» քվեարկության միջոցով և հաստատվելով Տարածաշրջանային ՆԵՄԵԿ Խորհրդի, տարածաշրջանային տնօրենի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի նախընտրական նիստի ժամանակ, քվեարկող ձայների 2/3 մեծամասնությամբ:

5. ՆԵՄԵԿ–ի նախագահի հաստիքը, կարող է ազատվել նրա տեղափոխության կամ եկեղեցու անդամությունը փոխելու կամ պաշտոնաթողության դեպքում, կամ էլ նրա պարտականություններից ազատելու կապակցությամբ ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի կողմից կատարված քվեարկության արդյունքում, եթե թեկնածուի դեմ քվեարկել են 2/3 ձայների մածամասնությամբ, եթե թեկնածուն մեկն է կամ էլ ձայների մեծամասնությամբ, եթե թեկնածուները մեկից ավելին են: Եթե հայտնվում է այդպիսի թափուր, ապա տարածաշրջանը կատարում է նոր նախագահի ընտրությունները ՆԵՄԵԿ–ի ծառայության միջազգային ծրագրին համապատասխան:

810.309 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային Խորհրդի նախագահի պարտականություններն են.

ա.Ապահովվել տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ղեկավարությունը և ուղղությունը, համագործակցելով ՆԵՄԵԿ–ի հետ:

բ. Անցկացնել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի ժողովները, որտեղ որոշվում են տարածաշրջանային երիտասարդական ծառայությունների ուղղությունները:

գ. Աջակցել երիտասարդական ծառայության զարգացմանը: Նախագահը աշխատում է համագործակցելով ՆԵՄԵԿ–ի Խորհրդի հետ, որոշելու ծառայության ուղղությունը, համապատասխան եկեղեցում երիտասարդ մարդկանց կարիքների:

դ. Նախագահը, նախագահում է ՆԵՄԵԿ–ի Միջազգային համագումարի ժամանակ:

ե. Տվյալ տարածաշրջանին պատկանող տեղական եկեղեցիներում, աջակցել ՆԵՄԵԿ–ի ծառայության զարգացումը:

զ. Ներկայացնել տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի հետաքրքրությունները բոլոր համապատասխան հանձնաժողովներում, և եթե այդպիսին կա տարածարջանային հանձնաժողովներում:

է. Ներկայացնել հաշվետվություն ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդին, տարածաշրջանային տնօրենին, Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդին (եթե այն գոյություն ունի), և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդին:

ը. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդին և տարածաշրջանային գրասենյակին, ներկայացնել երաշխավորություն, տարեկան բյուջեի մասին:

թ. Նախագահը ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի պատգամավոր է, ինչպես նաև Միջազգային Խորհրդի անդամ է բացառությամբ ԱՄՆ-ի, որտեղ բոլոր տարածաշրջանային ՆԵՄԵԿ-ի նախագահներից ընտրվում են 2 ներկայացուցիչ : Եթե նախագահը չի կարող մասնակցել համագումարին, ապա ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը նշանակում է նրա ներկայացուցչին:

2. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային ծառայողների պարտականություններն են.

ա. Տարբեր ծառայությունների համար առաջնորդների բացահայտումը և ծառայության նշանակումը:

բ.Տարածաշրջանային կարիքներին համապատասխան աշխատանքների սահմանումը և համապատասխան որոշումների ընդունումը:

գ. Պատասխանատվության և արդյունավետ աշխատանքի ապահովման համար, բաշխել հետևյալ պարտականությունները:

1. Ճշգրիտ լրացնել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի հանդիպումների փաստաթղթային գրառումները, այցելել բոլոր անհրաժեշտ հանդիպումներին, որոնք վերաբերվում են տարածաշջանային ՆԵՄԵԿ–ի հետաքրքրություններին:

2. Ստանալ և բաշխել միջոցները և կատարել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային ֆոնդերի ծախսերի գրառումները, ըստ ՆԵՄԵԿ Միջազգային Խորհրդի, ՆԵՄԵԿ կառավարման, սահմանած կարգերի, և ՆԵՄԵԿ գրասենյակների ընդունած ներքին կանոնների:

3. Օգնել նախագահին կազմելու բոլոր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ստացվել և ծախսվել են Տարածաշրջանային ՆԵՄԵԿ-ում: Հաշվետվությունը ներկայացվում է ՆԵՄԵԿ-ի Միջազգային Խորհրդին, Գլխավոր Խորհրդին և համապատասխան այլ կազմակերպությունների:

4. Աշխատել նախագահի հետ տարեկան բյուջեն պլանավորելու համար, որը հաստատելու համար պետք է ներկայացվի Տարածաշրջանային Խորհրդին, տարածաշրջանային տնօրենին (եթե այդպիսին կա):

5. Շտապ ծանուցել ՆԵՄԵԿ-ի գլխավոր գրասենյակին և տարածաշրջանային գրասենյակին, տարբեր պաշտոններում նոր նշանակումների մասին, նրանց անունները և հասցեները:

ա.Համագործակցել նախագահի հետ երիտասարդական ծառայության բոլոր հարցերում:

բ.Կատարել այլ աշխատանքներ, որոնք որոշվում են ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի կողմից:

810.310 Վճարվող աշխատակիցները

1. Եթե ՆԵՄԵԿ-ի տարածաշրջանային համակարգողը վարձվում է տարածաշրջանի կողմից, ապա տարածաշրջանային տնօրենը, ով պատասխանատու է այդ տարածքի համար, խորհրդակցելով Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի հետ, սահմանում է ՆԵՄԵԿ-ի տարածաշրջանային համակարգման աշխատանքների պարտականությունները: Սակայն, նախագահական աշխատանքը մնում է շատ կարևոր, ապահովվելով լրացուցիչ կառավարումը, աջակցությունը և ներկայացնում է ՆԵՄԵԿ-ի տարածաշրջանային հետաքրքրությունները: ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը և տարածաշրջանային տնօրենը, միասին որոշում են նախագահի և համակարգողի դերերը և պարտականությունները, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները տարածաշրջանում երիտասարդական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար:

2. Աշխատավարձ ստացող ծառայողը չի կարող լինել ՆԵՄԵԿ-ի տարածաշրջանային նախագահ:

Խորհուրդը

810.311 Կազմը

1. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը բաղկացած է ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային անդամներից, այլ նշանակված երիտասարդական առաջնորդներից և ներկայացուցիչներից, ում կարիքը Խորհուրդը զգում է, տարածաշրջանային տնօրենից և/կամ տարածաշրջանային համակարգողից:

2. Միայն Նազովրեցու Եկեղեցու անդամները, ովքեր գտնվում են շրջանային ՆԵՄԵԿ–ի իրավասության տակ, կարող են լինել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի անդամ:

3. Որոշակի տարածաշրջանների համար, Նազովրեցու եկեղեցու ԲՈՒՀ-երի (քոլեջների և համալսարանների) ներկայացուցիչները կրթությանը զուգահեռ, կարող են զբաղվել երիտասարդական ծառայությամբ, ինչպես նաև հանդիսանալ ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի անդամ:

810.312 Ընտրությունները

1. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Ընտրական Հանձնաժողովը առաջադրում է անդամներ տարածաշրջանային ՆԵՄԵԿ ընտրվելու ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդ:

2. Այնուհետև ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Համագումարը ձայների մեծամասնությամբ ընտրում է ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի անդամներին: Տարածաշրջանային Համագումարը լիազորություններ է տալիս ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդին, տարբեր ծառայությունների համար ընտրելու տնօրեններին:

3. ՆԵՄԵԿ Խորհրդի անդամի հաստիքը կարող է ազատվել, նրա տեղափոխության կամ եկեղեցու անդամությունը փոխելու կամ պաշտոնաթողության դեպքում, կամ էլ նրա պարտականություններից ազատելու կապակցությամբ կատարված քվեարկության արդյունքում, եթե նրա դեմ քվեարկել են 2/3 ձայների մածամասնությամբ: Եթե ազատվում է խորհրդի անդամի տեղը, ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրուրդը թափուրը լրացնում է

քվեարկությամբ, և այն հաստատվում է ձայների 2/3 մեծամասնությամբ, եթե թեկնածուն մեկն է, կամ էլ ձայների մեծամասնությամբ, եթե թեկնածուները մեկից ավելին են:

810.313 Պարտականությունները

1.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը պատասխանատու է տեղական եկեղեցու սահմաններում, երիտասարդական ծառայության ամբողջ սպեկտորի պլանավորման և կազմակերպման համար: Տնօրենի և ծառայողների օգնությամբ, այդ խորհուրդը նախաձեռնում և առաջնորդում է երիտասարդ մարդկանց հետ աշխատանքը, որպեսզի նրանք դառնան դեպի Քրիստոսը և պատասխանել նրանց հոգևոր կարիքներին, համապատասխան այն ուղղության, որին հետևում է տեղական եկեղեցին:

2. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը որոշում է տեղական ՆԵՄԵԿ–ի ծառայության ուղղությունը, համապատասխան տեղական երիտասարդական ծառայության կարիքների և որոշում է ծառայության տնօրենի պարտականությունները:

3. ՆԵՄԵԿ–ի Շրջանային Խորհուրդը, ամբողջ շրջանով մատակարարում և աջակցում է տարածաշրջանները, որոնք մտնում են ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային գործունեության մեջ, արդյունավետ երիտասարդական ծառայություն ապահովվելու համար:

4. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը կատարում է կիրակնօրյա դպրոցի աշխատանքների կառավարումը, այցելելով երիտասարդական ժողովներին, նշանակելով և կրթելով առաջնորդներին և կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին, ինչպես նաև Կիրակնօրյա դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության ծրագրին համապատասխան, երաշխավորում է կրթական գրականություն:

5. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը, խթանում է ՆԵՄԵԿ–ի միջազգային ծառայությունները, և տարածաշրջանում եկեղեցիների անդամների համար տարբեր ծրագրերը:

6. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը, ուղղորդում է ընդլայնված ֆինանսավորումը , իրադարձությունների անցկացման և գործընկերների ներգրավման հաշվին:

7. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը, երաշխավորում է տարածաշրջանային համագումարին, ՆԵՄԵԿ–ի անհրաժեշտ աշխատանքների անցկացման համար: Խորհուրդը նաև նշանակում է մինչև 2 ներկայացուցիչներ ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Համագումարի Բանաձևերի ընդունման Հանձնաժողով, համապատասխան Ծառայության Միջազգային ծրագրերի:

8. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը, համաձայնությամբ աշխատում է տարածաշրջանային տնօրենի հետ, որպեսզի ընտրեն մեկ ներկայացուցիչ, ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդում աշխատելու համար:

9. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը առաջադրում և հաստատում է փոփոխություններ տեղական ծառայության ծրագրում:

810.314 Հանձնաժողովները

1.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Գործադիր Հանձնաժողովը բաղկացած է տարածաշրջանում ՆԵՄԵԿ–ի ընտրված ծառայողներից, տարածաշրջանային տնօրենից և/կամ տարածաշրջանային համակարգողից: Գործադիր Հանձնաժողովը կարող է կատարել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի աշխատանքը, եթե չի հաջողվում գումարել ողջ Խորհուրդը: Գործադիր Հանձնաժողովի գործունեության մասին, բոլոր տեղեկատվությունը ներկայացվում է խորհրդի բոլոր անդամներին, և տվյալ հանձնաժողովի գործունեությունը պետք է հաստատվեն խորհրդի կողմից, նրա հաջորդ ժողովի ժամանակ:

2.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը երիտասարդական ծառայության կարիքներին համապատասխան կարող է ստեղծել ծառայության նոր ուղղություն, որոշակի տարիքային խմբի համար:

3. Այն երկրներում, որտեղ կան մի քանի տարածաշրջաններ, ապա տարածաշրջանը կարող է կազմավորել ՆԵՄԵԿ–ի ազգային ղեկավարություններ, որպեսզի կարողանան համակարգել երիտասարդական ծառայությունները այդ երկրում:

810.315 ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանների միավորումը

1. Այնտեղ, որտեղ անհրաժեշտ է համագործակցելով տարածաշրջանային ղեկավարության հետ, ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը կարող է տարածաշրջանի ներսում գոյություն ունեցող կառուցվածքներում կարող է կազմակերպել տարբեր շրջանների միավորում, որպեսզի կազմակերպի ՆԵՄԵԿ–ի արդյունավետ կառավարում, և ամբողջ տարածաշրջանում ՆԵՄԵԿ–ի ծառայության արդյունավետության և համակարգման համար:

2. Անհրաժեշտության դեպքում, ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը կարող է ստեղծել տարբեր հանձնաժողովներ, տարբեր ուղղություններով աշխատելու համար:

3. Յուրաքանչյուր շրջանից ընտրված թեկնածուն կարող է լինել ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդում, եթե դա հաստատվել է ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային համագումարի կողմից:

810.316 Վճարովի անձնակազմը

1. Տարածաշրջանային տնօրենը որոշում է տարածաշրջանային երիտասարդական համակարգողի պարտականությունները, նախապես խորհրդակցելով Տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի հետ:

2. ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը և տարածաշրջանային համակարգողը աշխատում են հարմոնիայի մեջ, համագործակցելով իրար հետ:

Ժողովները

810.317 ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային ժողովները

1.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային բազմակի հանդիպումները օգնում են ավելի արդյունավետ ծառայել երիտասարդ մարդկանց:

2.Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը նաև պետք է նպաստի շրջանային ՆԵՄԵԿ խմբերի աշխատանքին տարբեր օժանդակ նյութերով և ռգևորի նրանց ծառայելու:

3.Տարածաշրջանի ՆԵՄԵԿ–ը մասնակցում է ՆԵՄԵԿ–ի միջազգային ժողովներին, երիտասարդական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

810.318 ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի ժողովները

1.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը շարունակաբար հանդիպում է իր միսիան կատարելու համար, և հետևելու նշված ուղղությամբ:

2.ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհուրդը հանդիպում է համաձայն ժողովների կազմած գրաֆիկի, կամ այն կարող է գումարվել տարածաշրջանային տնօրենի կամ ՆԵՄԵԿ–ի Գլոբալ տնօրենի կողմից:

810.319 ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Համագումարները

1.Տարածաշրջանային համագումարները գումարվում են ՆԵՄԵԿ–ի միջազգային ժողովների ժամանակ: Տարածաշրջանային ժողովների ժամանակ անցկացվում են նիստեր և կազմվում են տարբեր ծրագրեր, տարածաշրջանում կատարելագործելու

երիտասարդական ծառայությունները: Համագումարի ժամանակ ներկայացվում են զեկույցներ, ընտրվում է ղեկավարություն, քննարկվում են օրենքներ, որոնք վերաբերվում են տարածաշրջանում ՆԵՄԵԿ–ի աշխատանքին:

2.Տարածաշրջանային համագումարները գումարվում են ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի կողմից, համագործակցելով ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի:

3. Տարածաշրջանային համագումարների ժամանակ ներկա են ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի անդամները, տարածաշրջանային տնօրենից և/կամ տարածաշրջանային համակարգողից (եթե այդպիսին կա), ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանից պատգամավորներ, որոնք ընտրվում են Ծառայության Միջազգային Ծրագրին համապատասխան:

4. Տարածաշրջանային համագումարները գումարվում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի ժամանակ: Համագումարի տեղը և ժամանակը որոշվում է ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի կողմից: ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի, տարածաշրջանային տնօրենի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի հավանությամբ, համագումարը կարող է գումարվել էլեկտրոնային փոստի կամ փոստի միջոցով, միջազգային համագումարի սկսվելուց 6 ամիս առաջ, ծրագրերը անցկացնելու և քվեարկելու նպատակով, երբ հանգամանքները պատգամավորներից շատերին չեն թույլատրում մասնակցելու Միջազգային Համագումար:

Դ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ծառայությունը

810.400 Ավետարանչություն

ՆԵՄԵԿ–ը միջազգային մակարդակով մշակում է ծրագրեր, տարբեր ծառայություններ և միջոցառումներ իրականացնելու և խրախուսելու համար, որպեսզի երիտասարդությունը դառնա Հիսուս Քրիստոսին:

810.401 Աշակերտություն

ՆԵՄԵԿ–ը մշակում և իրականացնում է աշխատանքներ, և հանդիպումներ պատրաստելու կանչված երիտասարդ մարդկանց աճելու Քրիստոսի մեջ, անհատապես ուսումնասիրելու Աստվածաշունչը, ծառայելու և շփվելու համար:

810.402 Առաջնորդի զարգացումը

Տարածաջանային ՆԵՄԵԿ–ն մշակում և իրականացնում է ծառայություններ և հանդիպումներ հաստատելու և ապահովվելու երիտասարդ մարդկանց այն ամենով, ինչը անհրաժեշտ է եկեղեցում, որպես առաջնորդներ աշխատելու համար:

Փոփոխություններ

810.403 Դրույթները

1. ՆԵՄԵԿ–ի կանոնադրությունը և Ծառայության Միջազգային Ծրագրը ՆԵՄԵԿ–ին միջազգային մակարդակով ապահովում է կազմակերպությանը կառուցվացքով, նրա գործունեության և կառավարման համար: ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարը, բանաձևերի ընդունման միջոցով, կարող է վերանայել կանոնադրությունը և ծրագիրը, համապատասխան ամբողջ աշխարհում ծառայության փոփոխման կարիքների:

Միջազգային ծառայության ծրագրի բոլոր փոփոխությունները պետք է համապատասխանեն ՆԵՄԵԿ–ի կանոնադրությանը:

2. Ծրագրում կամ կանոնադրության մեջ չընդգրկված տարածքը գտնվում է ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի տնօրենի իրավասության տակ:

810.404 Գործունեությունը

1. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը համագործակցելով ՆԵՄԵԿ–ի տնօրենի հետ, սահմանում և տեղեկացնում է ադապտացիայի ընթացքի և ներկայացված բանաձևերի միջոցով, ՆԵՄԵԿ–ի կանոնադրության և Ծառայության Միջազգային Ծրագրի վերանայման մասին:

2. Այդ բանաձևերը կարող են ներկայացվել ՆԵՄԵԿ–ի ցանկացած Տեղական, Տարածաշրջանային և Միջազգային Խորհրդի կողմից, կամ ծայրահեղ դեպքում միջազգային համագումարի 6 պատգամավորների հովանավորությամբ: Բանաձևերը պետք է կազմվեն համապատասխան ձևով:

3. ՆԵՄԵԿ–ի կենտրոնական գրասենյակը պետք է ստանա բոլոր բանաձևերը ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի տարեկան ժողովի սկսվելուց 30 օր առաջ:

4. Բանաձևերը պետք գրավոր ձևով տարածվեն միջազգային համագումարի բոլոր պատգամավորներին, մինչ կսկսվեն նիստերը:

5. Բանաձևերը սկզբում ընդունվում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Համագումարի Բանաձևերի Կոմիտեի կողմից, որը բաղկացած է յուրաքանչյուր ՆԵՄԵԿ–ի Տարածաշրջանային Խորհրդի կողմից նշանակված 2 պատգամավորներից: Այնուհետև այդ բանաձևերը պետք է հաստատվեն ձայների մեծամասնությամբ և ներկայացվում են համագումարին:

6. Բանաձևերը պետք է հաստատվեն համագումարում ներկա գտնվող ընդհանուր պատգամավորների ձայների քվեարկության 2/3 մեծամասնությունով:

7. ՆԵՄԵԿ–ի կանոնադրության և Ծառայության Միջազգային Ծրագրի բոլոր հաստատված փոփոխությունները ուժի մեջ են մտնում համագումարի փակման օրից հետո, 90 օրերի ընթացքում: Վերանայված ծրագիրը պետք է գրավոր ձևով տարածվեն, և այնուհետև այն կարող է մտնել ուժի մեջ:

Անդամությունը և ծառայության ուղղությունը

810.405 Հաշվետվությունը և կազմը

1. Բոլոր ՆԵՄԵԿ–ի տեղական խմբերը, ՆԵՄԵԿ–ի շրջանային աշխատողները և տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ը, ինչպես նաև նրանց ամբողջ աշխատանքը կազմում է համաշխարհային ՆԵՄԵԿ–ը:

2. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ը հաշվետու է իր անդամներին, ՆԵՄԵԿ-ի պատասխանատու գլխավոր սուպերինտենդենտին, ՆԵՄԵԿ-ի ընդհանուր Կառավարման Բաժնին, ինչպես նաև Կիրակնօրյա Դպրոցների աշխատանքներով զբաղվող բաժիններին:

3. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը ներկայացնում է տարեկան հաշվետվություն ՆԵՄԵԿ–ի Միջազգային Կոնվենցիային, Գլխավոր Խորհրդին և Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Ասամբլեային:

4. ՆԵՄԵԿ–ի տնօրենը, ՆԵՄԵԿ–ի միջոցով պատասխանատու է Նազովրեցու Եկեղեցու երիտասարդական ծառայության զարգացման համակարգման և ղեկավարման համար:

5. ՆԵՄԵԿ–ի ծառայողները ամբողջ աշխարհով աշխատում են ՆԵՄԵԿ–ի Համաշխարհային Գլխավոր Խորհրդի հետ, Նազովրեցու Եկեղեցում երիտասարդական ծառայությունը արդյունավետ իրականացնելու համար:

810.406 Ծառայության ուղղությունը

1.Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի ավանդական ծառայությունը ուղղված է 12 տարեկան և բարձր երեխաներին, քոլեջների/համալսարանների ուսանողներին և երիտասարդ մարդկանց: Տարածաշրջանային, շրջանային և տեղական ՆԵՄԵԿ–ը իր ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարող է մոդիֆիկացնել իր ծառայությունները:

2.ՆԵՄԵԿ–ը երիտասարդների հետ միջազգային մակարդակում աշխատելու համար, ծրագրերը պլանավորելու և ներկայացնելու նպատակով, սահմանում է 3 ստորաբաժանումներ. մեկը՝ կենտրոնացած է աշխատելու կրտսեր տարիքի աշակերտների հետ, մյուսը՝ դեռահասների, և երրորդը՝ ուսանողների, ապահովելու արդյունավետ աշխատանքը:

Կառավարումը

810.407 Ծառայողները

1. ՆԵՄԵԿ–ի պաշտոնատար անձիք են նախագահը և փոխնախագահը:
2. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի պաշտոնատար անձիք պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու և ՆԵՄԵԿ–ի անդամներ, կատարել ակտիվ երիտասարդական ծառայություններ, և լինել օրինակ այն բանի, թե ինչպես պետք է անցկացնել երիտասարդական ծառայությունը:
3. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ում պաշտոնատար անձանց աշխատանքը չի վարձատրվում: Ադմինիստրատիվ ծախսերի ֆինանսավորումը փակվում են շրջանային ՆԵՄԵԿ–ի բյուջեյով:
4. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ծառայողը կարող է ընտրվել մեկ լրիվ ոչ ավել, քան մեկ լրիվ ժամկետ:

810.408 Ընտրություններ

1. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ծառայողներն ընտրվում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային համագումարին: Ընտրված պաշտոնավոր անձիք աշխատում են են 4 տարվա ընթացքում, սկսած Գլխավոր ասամբլեայի փակման պահից և ավարտվում է հաջորդ Ասամբլեայի փակման ժամանակ:
2. ՆԵՄԵԿ–ի միջազգային համագումարների նախընտրական ժողովները առաջադրում են թեկնածուներ Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի համար: Տարածաշրջանային Ընտրական Հանձնաժողովը նշանակում է ծառայողներին տարածաշրջանային ՆԵՄԵԿ: Նախընտրական հանձնաժողովը ամեն պաշտոնի համար կարող է առաջադրի 2 թեկնածու, ժողովի ժամանակ ընտրված ձայների մեծամասնությամբ: Այնուհետև, ամեն տարածաշրջանից առաջադրված թեկնածուները ընտրվում են Համագումարի կողմից:
3. ՆԵՄԵԿ–ի նախագահի հաստիքը կարող է ազատվել նրա տեղափոխության կամ եկեղեցու անդամությունը փոխելու կամ պաշտոնաթողության դեպքում, կամ էլ նրա պարտականություններից ազատելու կապակցությամբ ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի կողմից կատարված քվեարկության արդյունքում, եթե թեկնածուի դեմ քվեարկել են 2/3 ձայների մածամասնությամբ: Եթե հայտնվում է թափուր միջազգային ծառայողներից, ապա ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը փոխարինող է ընտրում իր անդամներից:

810.409 Պարտականությունները

1. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի նախագահի պարտականություններն են.

ա. Վարել ՆԵՄԵԿ–ի Միջազգային համագումարը և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի հանդիպումները:

բ. Կատարել Համագումարի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի այլ պարտականությունները:

2.Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի փոխնախագահի պարտականություններն են.

ա. Համագործակցել նախագահի հետ բոլոր անհրաժեշտ ոլորտներում, երիտասարդական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար:

բ. Ճշտորեն լրացնել ՆԵՄԵԿ–ի Միջազգային համագումարի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի նիստերի արձանագրությունները: Հաշվետվությունը պահպանվում է Գլխավոր Խորհրդին հանձնելու համար:

գ.Վարել ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի նիստերը, ներկայացնելով այլընտրանքային հետաքրքրություններ խորհրդի ցանկացած նիստերի ժամանակ, և Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի նախագահի բացակայության ժամանակ կատարել նշանակված պարտականությունները:

դ. Կատարել ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի նշանակված պարտականությունները:

810.410 Վճարվող աշխատակիցները

1. ՆԵՄԵԿ–ի լիազորված գլխավոր սուպերինտենդենտը և Գլխավոր Խորհուրդը սահմանում են ՆԵՄԵԿ–ի տնօրենի պարտականությունները: ՆԵՄԵԿ–ի տնօրենը ենթարկվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին:

2. ՆԵՄԵԿ–ի տնօրենը ընտրվում է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից, Գլխավոր Խորհրդի ընտրական կանոնակարգերի համաձայն:

3. Երբ առաջանում է թափուր, ապա այն լրացվում է հետևյալ կերպ.

ա. Լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից ներկայացվում է ՆԵՄԵԿ–ի տնօրենի թեկնածությունը, որը պետք է հաստավի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի կողմից:

բ. Այնուհետև բյուլետենները ներկայացվում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդին, հաստատելու ձայների մեծամասնությամբ, այնուհետև ընտրությունների համար Գլխավոր Խորհրդին:

4. Գլխավոր Ասմբլեայի փակվելուց հետո առաջին նիստի ժամանակ, ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը ձայների մեծամասնությամբ հաստատում է ՆԵՄԵԿ–ի պատասխանատու լիազորված գլխավոր սուպերինտենդենտին: Այնուհետև, թեկնածուները հաստատվում են Կիրակնօրյա Դպրոցների Ժողովի և ՆԵՄԵԿ–ի Ընդհանուր Ժողովի կողմից և ընտրվում են Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

5. ՆԵՄԵԿ–ի տնօրենը միաժամանակ չի կարող լինել Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ընտրված ծառայող:

6. ՆԵՄԵԿ–ի տնօրենը ի պաշտոնե ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի, ԳործադիրՀանձնաժողովների, ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային հանձնաժողովների և այլ անհրաժեշտ հանձնաժողովների գործող անդամ է:

Խորհուրդը

810.411 Կազմը

1. Տարածաշրջանի ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը բաղկացած է Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ծառայողներից, ՆԵՄԵԿ–ի տնօրենից, ԱՄՆ-ից դուրս տարածաշրջանային ներկայացուցիչներից և ԱՄՆ-ն ներկայացնող 2 նախագահներից:

2. ՆԵՄԵԿ–ի տարածաշրջանային համակարգողները և ԱՄՆ-ի ՆԵՄԵԿ–ի համակարգողները, ավտոմատ դառնում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի անդամներ: Եթե անհրաժեշտ է, Միջազգային Խորհուրդը կարող է նշանակել այլ անդամների, որոնք Խորհրդի նիստի ժամանակ ձայնի իրավունք չեն ունենա:

3. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի բոլոր անդամները, պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու անդամներ:

810.412 Պարտականությունները

1. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը սահմանում է ՆԵՄԵԿ–ի միջազգային ծրագրերի կատարման արարողակարգը, բոլոր մակարդակների վրա ուղղություն է տալիս ծառայությունները աջակցելու համար աղբյուրներ փնտրել: Ծրագրերի արարողակարգերը պետք է հաստավեն Գլխավոր Խորհրդի ժողովի ժամանակ, ՆԵՄԵԿ–ի պատասխանատու լիազորված գլխավոր սուպերինտենդենտի կողմից: Կազմակերպությունների տնօրենների և նրանց ծառայողների փոխադարձ աշխատանքի միջոցով, այդ ծրագրերը, իրադարձությունները և աղբյուրները որոշվում են երիտասարդ մարդկանց Քրիստոսին բերելու նպատակով և պատասխանելու նրանց հոգևոր կարիքներին և հոգևոր աճին:

2. Միջազգային Խորհուրդը անցկացնում է ֆորումներ, աջակցելու և զարգացնելու երիտասարդական կազմակերպության արդյունավետ աշխատանքները, համապատասխան ծառայության միջազգային ծրագրերի, պատասխանելու երիտասարդների կարիքներին:

3. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը բացում է «լայն ճանապարհ», ներկայացնելու իր հետաքրքրությունները տարածաշրջանային, շրջանային և տեղական կազմակերպությունների Խորհրդի անդամներին: Խորհրդի անդամները ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի անունից մշտապես կապ են պահպանում տարածաշրջանային, շրջանային և տեղական կազմակերպությունների հետ:

4. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը օգնում է Միջազգային Համագումարին ծրագրավորման և ադմինիստրատիվ հարցերով, որը հավաքվում է չորս տարին մեկ անգամ:

5. Տարածաշրջանի ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը իրականացնում է կիրակնօրյա դպրոցներում երիտասարդական աշխատանքների կառավարումը, այցելելով երիտասարդական ժողովներին, նշանակելով և կրթելով առաջնորդներին և կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին, ինչպես նաև երաշխավորում է կրթական գրականություն, որը համապատասխանում է Կիրակնօրյա դպրոցի աշխատանքների ուղղությանը:

6. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը վերանայում է ՆԵՄԵԿ–ի կենտրոնական գրասենյակի տարեկան բյուջեն և ծախսերը, որը ներկայցվել է ընդհանուր կառավարման կողմից:

7. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը բաշխում է ֆոնդերը, որոնք նախատեսված են ապահովելու ՆԵՄԵԿ–ի միջոցառումները, և դրանք ներկայացնում է գլխավոր սուպերինտենդենտի քննարկմանը:

810.413 Հանձնաժողովները

1. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի Գործադիր Հանձնաժողովը բաղկացած է Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ընտրված ծառայողներից, ՆԵՄԵԿ–ի տնօրենից և այլ

խորհրդի անդամներից, ովքեր ընտրվել են ձայների մեծամասնությամբ: Գործադիր Հանձնաժողովը կարող է կատարել աշխատանքներ, որոնք վերաբերվում են ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդին, երբ հնարավոր չէ գումարել ամբողջ Խորհուրդը: Գործադիր Հանձնաժողովի գործունեության մասին տեղեկությունը ներկայացվում է Խորհրդի բոլոր անդամներին, և այդ հանձնաժողովի գործունեությունը հաջորդ ժողովի ժամանակ պետք է հաստատվի Խորհրդով:

2. Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը կարող է ձևավորել նոր կառույցներ և հանձնաժողովներ:

810.414 Վճարովի անձնակազմը

1. ՆԵՄԵԿ–ի տնօրենը պատասխանատու է Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի առաջ և հաշվետու է Կրակնօրյա Դպրոցի ծառայության և ՆԵՄԵԿ–ի հանձնաժողովների առաջ: ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը կարող է առաջարկել վերանայելու այդ պարտականությունները, խորհրդակցելով ՆԵՄԵԿ–ի պատասխանատու լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

2. ՆԵՄԵԿ–ի տնօրենը խորհրդակցելով ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի հետ, սահմանում է ՆԵՄԵԿ–ի վճարովի ծառայողների պարտականությունները ներառյալ նրանց, ովքեր աշխատում են ԱՄՆ-ում և Կանադայում: ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը և ՆԵՄԵԿ–ի ծառայողները աշխատում են համագործակցելով և փոխըմբռնումով:

3. ՆԵՄԵԿ–ի տնօրենը չի կարող աշխատել որպես Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի նախագահ:

Ժողովները

810.415 Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ժողովները

1. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի տարբեր հանդիպումները, երիտասարդ մարդկանց օգնում է ավելի արդյունավետ ծառայելու: Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ղեկավարությունը աշխատում է համագործակցելով տարածաշրջանային, շրջանային և տեղական ՆԵՄԵԿ–ի ղեկավարության հետ, կազմելու երիտասարդության հետ աշխատանքի Նազովրեցու Եկեղեցու ծառայության ընդհանուր ծրագիրը:

2. Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի առաջնորդները և անձնակազմը ակտիվորեն ներգրավված են ՆԵՄԵԿ–ի աշխատանքների բոլոր մակարդակներում, երիտասարդական ծառայության համար ապահովվելով ամուր հիմք:

810.416 ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի ժողովները

1. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհուրդը ամեն տարի հավաքվում է ՆԵՄԵԿ–ի խնդիրների պլանավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2. ՆԵՄԵԿ–ի ծառայողները կամ տնօրենը անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրել չպլանավորված ժողովներ, նախապես համաձայնեցնելով դա լիազորված սուպերինտենդենտի հետ:

810.417 ՆԵՄԵԿ–ի Համաշխարհային Համագումարը

1. Երիտասարդական ծառայությունը կատարելագործելու նպատակով, Համաշխարհային Համագումարը անց է կացնում տարբեր ծրագրեր և սեսիաներ: Համագումարի ժամանակ ներկայացվում են զեկույցներ, անցկացվում են ղեկավարության ընտրություններ, քննարկվում են օրենքներ, որոնք վերաբերվում են ՆԵՄԵԿ–ի աշխատանքին:

2. ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի և Գլխավոր Ասամբլեայի Հանձնաժողովի հավանությամբ, Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը ժամանակ է նշանակում, որի ընթացքում կաշխատի համագումարը և նրա գումարումը: ՆԵՄԵԿ–ի ծառայողները, տնօրենը և անձնակազմը ինչպես նաև համակարգողը ՆԵՄԵԿ–ի Միջազգային Խորհրդի օգնությամբ, անց են կացնում համագումարը:

3. Համաշխարհային Համագումարի բոլոր պատգամավորները պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու և ՆԵՄԵԿ–ի անդամներ, և համագումարի պահին 12 տարեկանից ոչ պակաս: Նաև շրջանային ՆԵՄԵԿ–ի յուրաքանչյուր պատգամավոր պետք է լինի եկեղեցու անդամ և ապրի այն շրջանում, որտեղից նա ուղարկվում է համագումար:

4. Միջազգային համագումարում ներկա են Համաշխարհային ՆԵՄԵԿ–ի ծառայողները, ՆԵՄԵԿ–ի տնօրենները, Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի նախագահները, տարածաշրջանի համակարգողները, շրջանային ՆԵՄԵԿ–ից պատգամավորներ: Պատգամավորները.

ա. Այն շրջանում, որտեղ ՆԵՄԵԿ–ի անդամները 1000-ից պակաս, են կարող են ուղարկել հետևյալ պատգամավորներին.

(1) Տեղական ՆԵՄԵԿ–ի մեկ նախագահի, ով համագումարի անցկացման պահին աշխատում է:

(2) ՆԵՄԵԿ–ի կառավարման կազմի մեջ մտնող մեկ պատգամավոր, ով տվյալ շրջանում երեց, սարկավագ կամ լիցենզավորված ծառայող է:

(3) 23 տարեկան պատգամավոր, ով ՆԵՄԵԿ–ի ծառայության ակտիվ մասնակից է:

(4) Միջազգային Համագումարի գումարման ժամանակ 12-ից մինչև 23 տարեկան, մեկ երիտասարդական պատգամավոր:

բ. Միջազգային Համագումարի գումարման ժամանակ, տարածաշրջանը ՆԵՄԵԿ–ի ամեն 1500 անդամի կարող է նաև ուղարկել 12-ից մինչև 23 տարեկան մեկական երիտասարդական առաջնորդ:

գ. Տարածաշրջանի պատգամավորների քանակը կախված է անդամների թվից, ում անունները ուղարկվել են Գլխավոր Ասամբլեա մինչև համագումարի սկիզբը:

դ. Բոլոր տարածաշրջանային պատգամավորները պետք է ձայների մեծամասնությամբ ընտրվեն Տարածաշրջանային Համագումարի ժամանակ, Միջազգային Համագումարը սկսվելուց 18 ամիս կամ 24 ամիս առաջ, եթե վիզաներ ստանալու կամ այլ ադմինիստրատիվ աշխատանքների համար պահանջվում են ավելի երկար ժամանակ: Մնացած տեղերի համար այլընտրանքային պատգամավորները կարող են ընտրվել ձայների մեծամասնության քվեարկությամբ: Օրինակ՝ առաջին թեկնածուն ստանում է այսքան քանակությամբ ձայներ, երկրորդը, այնքան և այլն: արդյունքում ազատ տեղերին համապատասխան պատգամավորները մեկնում են համագումար: Պատգամավորները պետք է ընտրված լինեն համագումարին նախորդող տարվա, մինչև դեկտեմբերի 31-ը:

ե. Նազովրեցու Եկեղեցու յուրաքանչյուր ԲՈՒՀ-ի ուսանողական խորհրդի նախագահը նույնպես կարող է լինել համագումարի պատգամավոր: Եթե նա կարող է մասնակցել համագումարին, ապա նա ներկայացուցիչ է դառնում ուսանողական խորհրդի քվեարկության միջոցով:

5. Եթե տարածաշրջանում չկա ՆԵՄԵԿ–ի կազմակերպված ստրուկտուրա, տարածաշրջանը ներկայանում է մեկ պատգամավորով: Եթե պատգամավորը ինչ-որ պատճառով չի մեկնում համագումար, ապա նրա փոխարեն տարածաշրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից, նշանակվում է այլ որակավորված պատգամավոր:

6. ՆԵՄԵԿ–ի Համաշխարհային Համագումարի չափանիշները պետք է սահմանվեն այնպես, որ բոլոր պատգամավորներին հնարավորություն տրվի մասնակցելու ՆԵՄԵԿ–ի Համաշխարհային Համագումարի քվեարկությանը: Քվեարկությունը կարող է անցկացվել անհրաժեշտության դեպքում:

7. Յուրաքանչյուր տարածաշրջանի նիստը անց է կացվում համագումարի ժամանակ և բաղկացած է Տարածաշրջանային ՆԵՄԵԿ–ի Խորհրդներից, տարածաշրջանային տնօրենից և համակարգողից, (եթե այդպիսին կա), ինչպես նաև տարածաշրջանից ընտրված պատգամավորներից:

Անդամների քանակը	Պատգամավորների քանակը	Անդամների քանակը	Պատգամավորների քանակը
4-1750	3	4751 6250	12
1751-3250	6	6251 7750	15
3251-4750	9	7751 9250	18

ԳԼՈՒԽ II

811. ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՍԻԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված I. Անվանումը

Այս ընկերակցության անունն է «Նազովրեցու Եկեղեցու Նազովրեցիների Համաշխարային Միսիաներ» (ՆՀՄ):

Հոդված II. Գործունեությունը

Ընկերակցության գործունեությունը պետք է լինի եկեղեցու մոբիլիզացիան, մասնակցելու միսիոներական շարժմանը աղոթքի, աշակերտության, զոհաբերության և կրթության միջոցով:

Հոդված III. Կառուցվածքը

Մաս 1. Տեղական ընկերակցությունը

Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների(ՆՀՄ) տեղական ընկերակցությունը պետք է լինի տեղական եկեղեցու ընկերակցությունը: Տեղական ՆՀՄ–ի խորհուրդը պետք է աշխատի հովվի և եկեղեցու խորհրդի հետ:

Տեղական ՆՀՄ–ի ընկերակցությունը, ՆՀՄ–ի նպատակներին հասնելու համար, կարող է ընտրել մեկ կամ, մի քանի խմբեր (այսինքն՝ Կիրակնօրյա Դպրոցները, մանկական եկեղեցիներ, երիտասարդական խմբերը, և այլ գործունեություն, որը ուշադրություն է դարձնում միսիայի վրա): Այդպիսի խմբերը և նշանակված/ընտրված ծառայողները, պետք է հաստատվեն ՆՀՄ–ի խորհրդի կողմից և հավանության արժանանան հովվի և այլ առաջնորդների կողմից, ովքեր կապ ունեն այդ գործունեության հետ:

Մաս 2. Շրջանը

Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների շրջանային միսիաները պետք է լինեն _____ Շրջանի ընկերակցություն և նրա գորունեությունը ղեկավարվում է շրջանային սուպերինտենդենտի, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի և ՆԵՄԵԿ–ի շրջանային խորհրդի առաջնորդների կողմից:

ՆՀՄ–ի բոլոր տեղական ընկերակցությունները _____Շրջանի սահմաններում հանդիսանում են ՆՀՄ–ի շրջանային ընկերակցության անդամներ:

Մաս 3. Համաշխարհային մակարդակը

Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների Միջազգային ընկերակցությունը, Նազովրեցու Եկեղեցու ընկերակցություն է, և աշխատում է ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհրդի, Համաշխարհային Միսիայի բաժնի, Գլխավոր Խորհրդում Համաշխարհային Միսայի հանձնաժողովի և լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

Բոլոր շրջանային և տեղական ՆՀՄ–ի ընկերակցությունները կազմում են Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների ընկերակցությունը:

Հոդված IV. Անդամությունը

Ա. Անդամները: Յուրաքանչյուր մարդ ով Նազովրեցու Եկեղեցու անդամ է, և ով աջակցում է Նազովրեցիների Համաշխարհային Միսիաները, կարող է լինել տեղական եկեղեցում ՆՀՄ–ի անդամ:

1. Ընկերակցությունում աշխատանքը և քվեարկությունը սահմանափակված է միայն այն մարդկանց համար, ովքեր 15 տարեկան են և բարձր, բացի երեխաների և երիտասարդների խմբերի համար:

2. Եթե այս սահմանադրությունում այլ ձևով չի համձայնեցվում, ապա «անդամ» տերմինը վերաբերվում է ՆՀՄ–ի անդամներին, ովքեր եկեղեցու անդամ են:

Բ. Սահմանափակված իրավունքներով անդամները: Յուրաքանչյուր ոք, ով Նազովրեցու Եկեղեցու անդամ չէ և աջակցում է Նազովրեցիների Համաշխարհային Միսիաները, կարող է դառանալ ընկերակցության սահմանափակված իրավունքով անդամ:

Հոդված V. Խորհուրդներ և Աշխատակիցներ

Մաս 1. Տեղական Խորհուրդ

Ա. Նպատակը. Տեղական խորհուրդը օգնում է իրագործելու Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների նպատակները տեղական եկեղեցում:

Բ. Կազմը

1. Խորհուրդը պետք է բաղկացած լինի 4 ծառայողներից. Նախագահից փոխնախագահից, քարտուղարից և գանձապահից:

2. Խորհրդի անդամները պատասխանատու են մոբիլիզացնելու եկեղեցին միսիայի համար, աղոթքի, աշակերտության, զոհաբերության և կրթության միջոցով: Խորհրդի անդամները իրավունք ունեն զբաղեցնելու մեկից ավել պաշտոններ, բայց քվեարկության ժամանակ նրանք ունեն մեկ ձայնի իրավունք:

3. Գործադիր Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են հովիվը, ՆՀՄ–ի ծառայողները և խորհրդի երկու այլ անդամներ:

4. ՆՀՄ–ի Շրջանային Խորհրդի անդամը պետք է լինի տեղական ՆՀՄ–ի անդամ և հաստատված լինի ՆՀՄ–ի Տեղական Խորհրդի կողմից:

Գ. Թեկնածուները, ընտրությունները, նշանակումները և թափուր պաշտոնները:

1. Թեկնածուները. Խորհուրդը պետք է առաջադրվի հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է ոչ պակաս 3, և ոչ ավել, 7 մարդուց: Բոլոր թեկնածուները պետք է լինեն տեղական Նազովրեցու Եկեղեցու անդամներ:

2. Ընտրությունները. 100 ակտիվ անդամից ավել եկեղեցիները, տարեկան ժողովը պետք է ընտրի մինիմում խորհրդի 6 անդամներ. նախագահին, փոխնախագահին, քարտուղարին, գանձապահին և 2 այլ ծառայողների: Այն եկեղեցիներում, որտեղ կան 100 ակտիվ անդամներից պակաս անդամներ, տարեկան ժողովը պետք է ընտրի մինիմում 4 աշխատակիցների: Ընտրված առաջնորդները պետք է սկսեն ծառայությունը իրենց ընտրությունից հետո, եկեղեցական տարվա հենց առաջին օրը: 50-ից պակաս ակտիվ անդամ ունեցող եկեղեցին պետք է ընտրի 2 աշխատակցի. նախագահին և փոխնախագահին: Եթե տեղական եկեղեցում կա մեկ գանձապահ, ով պատասխանում է եկեղեցական ֆոնդերի համար, ներառյալ ՆՀՄ–ի միջոցների համար, ապա ով որ ընտրվի եկեղեցական խորհրդի կողմից, այդ մարդը պետք է լինի ՆՀՄ–ի գանձապահը և տեղական ՆՀՄ–ի անդամ, բոլոր իրավունքներով և պարտականություններով, մինչև տեղական եկեղեցին չորոշի այլ կերպ:

ա. Նախագահը

(1) Ընտրական Հանձնաժողովը, պետք է նախագահի պաշտոնի համար առաջարկի մեկ կամ երկու թեկնածուների , և նրանք պետք է երաշխավորված լինեն եկեղեցական խորհրդի կողմից:

(2) Պաշտոնը զբաղեցնող թեկնածուները կարող են վերընտրվել կողմ/դեմ վերընտրությամբ, երբ այդպիսի քվեարկությունները հաստատված են հովվի և ընտրական հանձնաժողովի կողմից:

(3)Նախագահը պետք է ընտրվի գաղտնի քվեարկության միջոցով, ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ, մեկից երկու տարի ժամանակով: ՆՀՄ–ի խորհուրդը և հովիվը պետք է երաշխավորեն այդ ժամանակահատվածի երկարատևությունը:

բ. Յուրաքանչյուր մնացած ծառայողը ընտրվում է մեկ կամ երկու եկեղեցական տարվա ժամանակահատվածով: Այդպիսի ժամանակահատվածը որոշվում է ՆՀՄ–ի տեղական խորհրդի և հովվի որոշմամբ:

(1) Հասարակ մեծամասնական քվեարկությամբ, կամ

(2)Կողմ/դեմ քվեարկությամբ, երբ այդպիսի քվեարկությունները հաստատվել են Ընտրական Հանձանժողովների և հովվի կողմից:

գ. Խորհրդի լրացուցիչ անդամներր, ում ծառայության ժամանակահատվածր մեկ տարի է, կարող են լինել.

(1) Հատուկ պարտականություններ կատարելու համար ընտրվածները կամ

(2) խորհրդում որպես խումբ ընդունվածները, որոնց պարտականությունները կորոշվեն հետագայում, կամ

(3) Նշանակված են Գործադիր Հանձանաժողովի կողմից:

գ. Շրջանային կոնվենցիայի պատգամավորներր և այլընտրանքային ներկայացուցիչները ընտրվում են տարեկան ժողովի ժամանակ գաղտնի քվեարկությամբ, պարզ մեծամասնության միջոցով: Այլընտրանքային ներկայացուցիչները կարող են ընտրվել առանձին քվեարկության միջոցով, կամ նույն ցուցակով ինչ-որ պատգամավորները, եթե նրանք երաշխավորված են տեղական խորհրդի կողմից (Ծոդված VI, Մաս 2, Ա.3, որպեսզի պարզաբանվի թեկնածուների քանակը:)

3. Նշանակումը. Խորհրդակցելով հովվի հետ, խորհրդի անդամները կարող են նշանակվել Գործադիր Հանձնաժողովի կողմից մեկ եկեղեցական տարվա ժամանակահատվածով, և իրենց ծառայությունը սկսում են իրենց նշանակումից հետո, նոր եկեղացական տարվա առաջին օրը:

4. Թափուր պաշտոնները

ա. Նախագահը. Գործադիր Հանձնաժողովը, եկեղեցկան խորհրդի հավանությամբ պետք է առաջադրի մեկ կամ երկու թեկնածուներ: Գումարված ժողովի ժամանակ ընտրությունը, եկեղեցական խորհրդի հավանությամբ կատարվում է ՆՀՄ–ի անդամների գաղտնի քվեարկությամբ:

բ. Գործադիր Հանձանաժողովի այլ անդամներ. Գործադիր Հանձնաժողովը պետք է առաջադրի մեկ կամ երկու անդամների անուններ: Ընտրությունները անցկացվում են ՆՀՄ–ի անդամների գաղտնի քվեարկությամբ, սովորական կամ հատուկ գումարված ժողովների ժամանակ: Եթե տեղական եկեղեցում կա մեկ գանձապահ, ապա այդ թափորը լրացվում է եկեղեցական խորհրդի կողմից:

գ. Խորհրդի այլ անդամներ: Գործադիր Հանձնաժողովը նշանակում և լրացնում է մնացած թափուր պաշտոնները:

դ. Խորհրդի Անդամների պարտականությունները

1. Նախագահը

ա. Ղեկավարում է տեղական եկեղեցում ՆՀՄ–ի աշխատանքները:

բ. Ղեկավարում է ՆՀՄ–ի հատուկ և կանոնավոր ժողովները:

գ. Ներկայացնում կամ բաշխում է բոլոր նրանց պարտականությունները, ով ընտրության ժամանակ, կամ խորհրդի շնորհիվ դրանք չի ստացել:

դ. ց Տեղական Խորհրդին հաստատելու համար ներկայացնում է տարեկան բյուջեն:

ե. Եկեղեցական տարեկան ժողովին, տեղական եկեղեցու հովվին և ՆՀՄ–ի շրջանային քարտուղարին, ներկայացնում է տարեկան հաշվետվություն:

զ. Ծառայել որպես եկեղեցական խորհրդի, Կիրակնօրյա Դպրոցի, շրջանային ՆՀՄ–ի կոնվենցիայի, և շրջանային ասամբլեայի անդամ: Այն դեպքում, եթե նախագահը հովվի կինն է և նա չի ցանկանում ծառայել եկեղեցական խորհրդում, փոխնախագահը իրավունք ունի եկեղեցական խորհրդում նախագահի փոխարեն ծառայելու:

2. Փոխնագահը:

ա.Նախագահի բացակայության ժամամանակ, կատարում է նրա բոլոր պարտականությունները:

բ. Ծառայում է բոլոր այն ոլորտներում, որոնք նրան հանձնարարել է տեղական ՆՀՄ–ի խորհուրդը:

3. Քարտուղարը

ա. Զբաղվում է ՆՀՄ –ի նամակագրությամբ, պահպանում է բոլոր վիճակագրական և գործնական նիստերի հաշվետվությունները:

բ. Պահպանում է ՆՀՄ –ի բոլոր անդամների լրիվ ցուցակը:

4. Գանձապահը

ա. Կատարում է բոլոր հավաքված և ծախսված միջոցների գրառումներր:

բ. Ստուգում է, որպեսզի բոլոր զոհաբերությունները ժամանակին փոխանցվեն նշանակված գանձապահին:

գ. Բոլոր հաշվետվությունները ներկայացնում է խորհրդին և եթե պետք է, եկեղեցական գանաձապահին:

5. Գործադիր Հանձնաժողովը

ա. Նշանակում է խորհրդի լրացուցիչ անդամներին կամ լրացնում է խորհրդի թափուրը:

բ. Խորհրդի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ապահովում է գործունեությունը:

գ. Նախագահի պաշտոնի համար առաջադրում է մեկ կամ երկու թեկնածուների, եթե այդ պաշտոնը ազատվում է տարեկան ժողովների միջև:

6. Խորհրդի այլ անդամներ

ա. Կատարում են նրանց համար նախատեսված պարտականությունները (տես ՆՀՄ–ի Ուղեցույցը):

Մաս 2: Շրջանային Խորհուրդը

Ա. Նպատակը. Շրջանային խորհուրդը օգնում է շրջանում իրականացնելու Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների նպատակներր:

Բ. Կազմը

1. Խորհուրդը պետք է կազմված լինի 4 ծառայողներից, նախագահից, փոխնախագահից, քարտուղարից և գանձապահից:

2. Խորհրդի անդամները պատասխանատու են մոբիլիզացնելու եկեղեցին միսիայի համար, աղոթքի, աշակերտության, զոհաբերության և կրթության միջոցով: Խորհրդի անդամները իրավունք ունեն զբաղեցնելու մեկից ավել պաշտոններ, բայց քվեարկության ժամանակ նրանք ունեն մեկ ձայնի իրավունք: Խորհրդի անդամը կարող է զբաղեցնել մեկից ավելի պաշտոններ:

3. Գործադիր Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են շրջանային սուպերինտենդենտը, ՆՀՄ–ի ծառայողները և խորհրդի 2 այլ անդամ:

Ա.Թեկնածուները, ընտրությունները, նշանակումները և թափուր պաշտոնները:

1. Թեկնածուները. Խորհուրդը պետք է բաղկացած լինի 5-ից ոչ պակաս ՆՀՄ–ի անդամներից: Այդ ընտրական հանձնաժողովը նշանակում է Շրջանային Խորհրդատվական Խորհուրդը: Շրջանային սուպերինտենդենտը որպես այդ հանձանաժողովի նախագահ ծառայում է որպեսզի նշանակի շրջանային նախագահին: Շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ ՆՀՄ–ի նախագահը այլ թեկնածուների համար կարող է ծառայի որպես ընտրական հանձնաժողովի նախագահ: Բոլոր թեկնածուները պետք է լինեն տվյալ շրջանի տեղական Նազովրեցու Եկեղեցու անդամներ, որտեղ նրանք ծառայում են:

2. Ընտրությունները. Նախագահը և ամենաքիչը 4 Խորհրդի անդամ, որոնցից մեկը նշանակված է փոխնախագահ շրջանի տարեկան ժողովի ժամանակ, պետք է գաղտնի քվեարկությամբ ընտրվեն: (Այդ 4 հաստիքներր չեն ընդգրկում քարտուղարին և գանձապահին Հոդված V, մաս 2, Գ.2.գ.): Ծառայության տևողությունր կազմում է մեկից երկու տարի: Այդպիսի տարին նշանակում է շրջանային ժողովների միջև ընկած ընդմիջումը:

ա. Նախագահը:

(1) Ընտրական հանձանաժողովը նախագահի թեկնածության համար պետք է առաջադրվի մեկ կամ երկու թեկնածու, բացի այն դեպքերից, երբ նախագահի պարտականություններր կատարողր վերրնտրվում է ևս մեկ ժամկետով:

(2) Հաստիքը զբաղեցնող ծառայողը կարող է վերընտրվել կողմ/դեմ քվեարկությամբ, երբ այդպիսի քվեարկությունը երաշխավորված է շրջանային սուպերինտենդենտի և շրջանային հանձնաժողովի կողմից:

(3) Նախագահը ընտրվում է ներկա գտնվող անդամների քվեարկության երկու երրորդ ձայների մեծամասնությամբ, մեկ կամ երկու տարի ժամանակով, միչև որ կընտրվի նրա փոխարինողը: ՆՀՄ–ի Շրջանային Խորհուրդը և շրջանային սուպերինտենդենտը պետք է երաշխավորեն այդ ժամանակահատվածի տևողությունը:

(4) Եթե մեկ շրջանում նախագահը 10 տարի ծառայելուց հետո հեռանում է, ապա ՆՀՄ–ի շրջանային խորհուրդը և շրջանային սուպերինտենդետը կարող են առաջարկել պարզ քվեարկություն(Կողմ կամ Դեմ) ընտրելու «ժամանակավոր նախագահ», որը ծառայում է մեկ տարի: Այդ ժամանակավոր նախագահը իրավունք ունի առաջադրվելու անմիջապես այն բանից հետո, երբ վերջանում է այդ ժամանակավոր տարին:

բ. Փոխնախագահը ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, հետևյալ ճանապարհներով.

(1) Հատուկ պարտականությունների համար, և այդ հաստիքի համար առաջադրվում են 2 թեկնածուներ, կամ

(2) Խորհրդում ընտրվում է ընդհանուր հիմքերով, բայց խորհրդի կողմից առաջադրվում է հատուկ հաստիքի համար, կամ

(3) Կողմ/Դեմ քվեարկությամբ, երբ այդպիսի քվեարկությունը երաշխավորվում է Ընտրական Հանձնաժողովի կողմից և հաստատվում է շրջանային սուպերինտենդենտի կողմից:

գ. Քարտուղարը և գանձապահը կարող են ընտրվել գաղտնի քվեարկությամբ:

(1) Շրջանային ժողովի կողմից: Ընտրական Հանձնաժողովի երաշխավորությամբ և շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ ընտրությունները կարող են անցկացվել Կողմ/Դեմ գաղտնի քվեարկությամբ, մեկ կամ երկու տարի ժամկետով, կամ

(2) Նոր ընտրված Շրջանային Խորհրդի կողմից Ընտրական Հանձնաժողովի երաշխավորությամբ և շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ ընտրությունները կարող են անցկացվել Կողմ/Դեմ գաղտնի քվեարկությամբ, մեկ կամ երկու տարի ժամկետով:

(3) Եթե շրջանում կա քարտուղար, ով պատասխանատու է շրջանի ֆոնդերի համար, ներառյալ ՆՀՄ–ի միջոցների, ապա այդ մարդը պետք է նշանակվի ՆՀՄ–ի գանձապահ, որպես բոլոր իրավունքներով և պատասխանատվությամբ օժտված ՆՀՄ–ի Շրջանային Խորհրդի անդամի պարտականությունները կատարող, եթե միայն Շրջանային Խորհրդի կողմից չկա այլ պայմանավորվածություն:

դ. Ծառայողներին որպես լրացում, մեկից երկու տարի ժամանակահատվածով, գաղտնի քվեարկությամբ պետք է ընտրվեն 3 լրացուցիչ անդամներ, և Խորհուրդը նրանց համար որշում է պարտականություններ: Գործադիր Հանձնաժողովը և շրջանային սուպերինտենդենտը պետք է երաշխավորեն ծառայության ժամանակահատվածը:

ե. Խորհրդի լրացուցիչ անդամները, ներառյալ ՆՀՄ–ի զոնաների համակարգողները կարող են

(1) Ընտրվել կատարելու հատուկ պարտականություններ, կամ

(2) Խորհուրդ ընդունվել որպես խումբ, ում պարտականությունները Խորհրդի կողմից կսահմանվեն ավելի ուշ, կամ

(3) Նշանակվել Գործադիր Հանձնաժողովի կամ Շրջանային Խորհրդի կողմից, ինչպես սահմանում է Գործադիր Հանձնաժողովը:

Ծառայության ժամկետը կարող է լինել մեկից երկու տարի: Գործադիր Հանձնաժողովը և շրջանային սուպերինտենդենտը պետք է երաշխավորեն ծառայության ժամանակահատվածը:

զ. Երիտասարդական ներկայացուցիչները

(1) Շրջանային Կոնվենցիան գաղտնի քվեարկությամբ, Շրջանային Խորհուրդ կարող է ընտրել մեկ կամ երկու երիտասարդական ներկայացուցիչների, կամ

(2) Վերընտրված Շրջանային Խորհուրդը կարող է ընտրել մեկ կամ երկու երիտասարդական ներկայացուցիչների:

(3) Թեկնածուներին կարող են պահանջել ՆԵՄԵԿ–ի Շրջանային Գործադիր Հանձնաժողովից:

(4) Ծառայության ժամկետը պետք է լինի մեկ տարի:

է. Գործադիր Հանձնաժողովի երկու անդամները (ոչ ծառայողները), Շրջանային Խորհրդի կողմից պետք է ընտրվեն գաղտնի քվեարկությամբ, մեկ տարի ժամանակահատվածով ծառայելու համար, միչև կընտրվեն նրանց փոխարինողները:

ը. Տարեկան Շրջանային ժողովի ժամանակ, Գլխավոր կոնվենցիայի անդամները պետք է ընտրվեն գաղտնի քվեարկությամբ: Փոխարինողները կարող են ընտրվել առանձին քվեարկությամբ կամ պատգամավորների նույն ցուցակով (ՀոդվածVI, Մաս 3, Ա.3.բ. պատգամավորների քանակի և ընտրության ժամանակի համար:)

3. Նշանակումը. Խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ լրացուցիչ անդամները կարող են նշանակվել Գործադիր Հանձնաժողովի կամ Շրջանային Խորհրդի կողմից, ինչպես սահմանված է Գործադիր Հանձնաժողովի կողմից:

4. Թափուր պաշտոնները

ա. Նախագահը. Գործադիր Հանձնաժողովը պետք է առաջադրի մեկ կամ երկու թեկնածուների անուններ: Ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ,

Շրջանային Խորհրդի ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ: Ընտրված մարդը պետք է ծառայի մինչև հաջորդ շրջանային ժողովը:

բ. Խորհրդի այլ անդամներ. Գործադիր Հանձնաժողովը կամ Շրջանային Խորհուրդը պետք է կատարեն հաստիքների նշանակում: Խորհրդի վերընտրված անդամները պետք է ծառայեն մինչև հաջորդ շրջանային ժողովը:

գ. Միասնական գանձապահ. Եթե շրջանում կա գանձապահ, ապա այդ հաստիքը պետք է զբաղեցնի Շրջանային Խորհրդատվական Խորհրդի կողմից նշանակված մարդը:

դ. Խորհրդի անդամների պարտականությունները

1. Նախագահը

ա. Շրջանում ղեկավարում է ՆՀՄ–ի աշխատանքները:

բ. Ղեկավարում է Շրջանային Խորհրդի, Գործադիր Հանձնաժողովի, և շրջանային ժողովների բոլոր հատուկ և կրկնվող ժողովները:

գ. Ներկայացնում և բաշխում է բոլոր նրանց պարտականություններ, ովքեր դրանք չեն ստացել ընտրությունների ժամանակ կամ խորհրդի գործունեության շնորհիվ:

դ. Պատրաստում է տարեկան բյուջե, որպեսզի այն հաստատի Շրջանային Ֆինանսական Հանձնաժողովի կողմից:

ե. Ներկայացնում է տարեկան հաշվետվություն ՆՀՄ–ի տարեկան Շրջանային Ժողովին և Գլխավոր ՆՀՄ–ի Խորհրդի ներկայացուցիչին:

զ. Ծառայում է Շրջանային Խորհրդատվական Խորհրդում, Կիրակնօրյա Դպրոցների ծառայության շրջանային խորհրդի և շրջանային ասամբլեայում, որպես անդամ:

2. Փոխնախագահը

ա. Նախագահի բացակայության ժամամանակ կատարում է նրա բոլոր պարտականությունները:

բ. Ծառայում է բոլոր այն ոլորտներում, որոնք նրան հանձնարարել է տեղական ՆՀՄ–ի խորհուրդը:

3. Քարտուղարը

ա. Զբաղվում է ՆՀՄ–ի նամակագրությամբ, կատարում է բոլոր գործնական նիստերի արձանագրությունները:

բ. ՆՀՄ–ի բոլոր տեղական նախագահներին ուղարկում է բոլոր հաշվետվությունները:

գ. Լրացնում և վարում է բոլոր վիճակագրական հաշվետվությունները և փոխանցում է շրջանային նախագահին, ՆՀՄ–ի գլխավոր տնօրենին, Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչին, և եթե անհրաժեշտ է տարածաշրջանում Համաշխարհային Միսայի ՆՀՄ–ի ծրագրերի համակարգողին:

4. Գանձապահը

ա. Կատարում է բոլոր հավաքված և ծախսված միջոցների գրառումները:

բ. Ժամանակին ֆոնդերը փոխանցում է նշանակված գանձապահներին:

գ. Բոլոր հաշվետվություններր ներկայացնում է Շրջանային Խորհրդին և պատրաստում է տարեկան հաշվետվություն Շրջանային Ժողովին:

դ. ՆՀՄ–ի գանձապետերի համար, շրջանի համապատասխան անդամների հետ պատրաստում է տարեկան գանձապետական ստուգման գրքեր:

5. Գործադիր Հանձնաժողովը

ա.Նշանակում է խորհրդի լրացուցիչ անդամներին կամ լրացնում է խորհրդի թափուրը:

բ.Խորհրդի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում ապահովում է գործունեությունը:

գ. Նախագահի պաշտոնի համար առաջադրում է մեկ կամ երկու թեկնածուների, եթե այդ պաշտոնը ազատվում է տարեկան ժողովների միջև:

6. Խորհրդի այլ անդամները

ա. Կատարում են նրանց համար նախատեսված պարտականությունները (տես ՆՀՄ–ի Ուղեցույցը):

Մաս 3: Համաշխարհային Խորհուրդը

Ա. Նպատակը. ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհուրդը օգնում է իրականացնելու Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների նպատակները:

Բ: Կազմը

1. ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհուրդը կազմված է Համաշխարհային Միսիայի տնօրենից, ՆՀՄ–ի Համաշխարհային Ընկերակցության տնօրենից, ՆՀՄ–ի Համաշխարհային Ընկերակցության նախագահից, և Նազովրեցու Եկեղեցու ամեն տարածաշրջանից մեկական ներկայացուցչից:

2. Գործադիր Հանձնաժողովը կազմված է Համաշխարհային Միսիայի տնօրենից, ՆՀՄ–ի Համաշխարհային Ընկերակցության տնօրենից, ՆՀՄ–ի Համաշխարհային Ընկերակցության փոխտնօրենից, ՆՀՄ–ի Համաշխարհային Ընկերակցության քարտուղարից և խորհրդի այլ անդամներից:

Գ: Թեկնածուները, ընտրությունները, նշանակումները և թափուր պաշտոնները:

1. Թեկնածուի առաջադրումը և Համաշխարհային տնօրենի ընտրությունը:

ա.Համաշխարհային տնօրենը պետք է առաջադրվի Համաշխարհային Միսիայի բաժնի տնօրենի կողմից, խորհրդակցելով Համաշխարհային Միսիայի բաժնի լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

բ. Համաշխարհային Խորհուրդը կհաստատի Համաշխարհային տնօրենի թեկնածությունը գաղտնի քվեարկության, ձայների մեծամասնությամբ:

գ. Գլխավոր Խորհրդի Համաշխարհային Միսայի Հանձանաժողովը պետք է թեկնածությունը հաստատի ձայների մեծամասնությամբ և թեկնածուին երաշխավորի Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին:

դ. Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը պետք է ընտրի Համաշխարհային տնօրենին:

2. Թեկնածուի առաջադրումը և Համաշխարհային նախագահի ընտրությունը:

ա. Ընտրական Հանձնաժողովը, որը կազմված է Համաշխարհային տնօրենից, Գլխավոր Խորհրդի 3 տարածաշրջանային ներկայացուցիչներից և 5 ներկայացուցիչներից, որոնք Գլխավոր Խորհրդի անդամ չեն, պետք է հաստատվի Գործադիր Հանձնաժողովի կողմից: Ընտրական Հանձնաժողովի երկու անդամ չեն կարող լինել նույն տարածաշրջանից:

բ. Համաշխարհային տնօրենը Ընտրական Հանձնաժողովի նախագահն է:

գ. Հանձնաժողովր պետք է ներկայացնի երկու կամ երեքից ոչ ավել մարդկանց անուններ, Համաշխարհային նախագահի հաստիքի համար: Թեկնածությունները պետք է հաստատվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդի կողմից:

դ.Այդ թեկնածուներից Համաշխարային Համագումարը(կոնվենցիան) պետք է գաղտնի քվեարկության ձայների երկու երրորդով ընտրի Համաշխարհային նախագահին:

ե. Համաշխարհային նախագահը պետք է ծառայի Համաշխարհային Համագումարի (կոնվենցիայի) ավարտից հետո, մինչև հաջորդ Համաշխարհային Համագումարի ավարտը, մինչև կընտրվի և կնշանակվի նրա փոխարինողը:

զ. Համաշխարհային նախագահը կարող է ծառայի միայն երկու լրիվ ժամկետ, կամ 4 տարի: Եթե մարդը ընտրվել է Համաշխարհային նախագահի թափուր տեղի համար, ապա նա նույնպես կարող է ծառայել երկու լրիվ ժամկետ:

3. Թեկնածուի առաջադրումը և Համաշխարհային Խորհրդի անդամների ընտրությունը:

ա. Տարածաշրջանային ներկայացուցիչների և թեկնածուների քվեարկության համար, յուրաքանչյուր շրջանային ՆՀՄ–ի Խորհուրդ, իր տարածաշրջանից կարող է Համաշխարհային ՆՀՄ–ի Գրասենյակին առաջարկել մեկ կամ երկու անուն:

(1) Այդ մարդիկ պետք է լինեն իրենց ներկայացրած տարածաշրջանի բնակիչներ և անդամներ: (Այն դեպքում, եթե խորհրդի անդամը տեղափոխվում է այդ տարածաշրջանից, հաջորդ Գլխավոր կոնվենցիայի սկսվելուց 6 ամիս առաջ, ապա այդ անդամը ավարտում է իր ծառայության ժամկետը:)

(2) Այն ընդունելի չէ ցանկացած մեկին, ով ապրում է տարածաշրջանի սահմաններից այն կողմ, որտեղ նա եկեղեցու անդամ է:

բ. Թեկնածուների ցուցակներից ամեն տարածաշրջան Համաշխարհային համագումարի փակ նիստի ժամանակ, գաղտնի քվեարկությամբ պետք է ընտրի երկու թեկնածուներ: Ձայների ամենաշատ քանակություն ստացած մարդիկ պետք է հռչակվեն թեկնածուներ, սակայն այդ 2 թեկնածուները չեն կարող լինել մեկ տարածաշրջանից: Եթե այդպիսի բան տեղի ունենա, ձայների երկրորդ քանակություն հավաքած թեկնածուն պետք է փոխարինվի մեկ այլ տարածաշրջանի թեկնածուի հետ, ով հավաքել է ձայների ամենաշատ մեծամասնությունը:

գ. Դրանից հետո գաղտնի քվեարկության ժամանակ, տարածաշրջանը պետք է ձայների մեծամասնությամբ ընտրի մեկ մարդու, Համաշխարհային Խորհրդում, որպես տարածաշրջանի ներկայացուցիչ:

դ. Խորհրդի անդամները պետք է ծառայեն Համաշխարհային Համագումարի ավարտից հետո, մինչև հաջորդ Համագումարի ավարտը, կամ մինչև որ ընտրվի և նշանակվի նրա փոխարինողը:

ե. Ծառայության ժամկետը պետք է սահմանափակվի երկու լրիվ ժամկետով: Ծառայության ժամկետը 4 տարի է: Եթե մարդը ընտրվել է Համաշխարհային Խորհրդի անդամի թափուր տեղի համար, ապա նա նույնպես կարող է ծառայել երկու լրիվ ժամկետ:

4. Թեկնածուների առաջադրումը և ընտրությունը Գործադիր Հանձնաժողովում:

ա. Համաշխարհային Խորհուրդը իր առաջին գումարման ժամանակ, պետք է առաջադրի և ընտրի փոխնախագահ, քարտողար և Գործադիր Հանձնաժողովի մեկ լրացուցիչ անդամ:

բ. Ընտրությունը կատարվում է ներկա գտնվող և ընտրող պատգամավորների գաղտնի քվեարկության ձայների մեծամասնության միջոցով:

5. Թեկնածուների առաջադրումր և ընտրությունր Գլխավոր Խորհրդում որպես ՆՀՄ–ի ներկայացուցիչ:

ա. Համաշխարային Խորհուրդը պետք է առաջադրի Գլխավոր Խորհուրդ մեկ անդամի, Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Խորհրդում որպես ՆՀՄ–ի ներկայացուցիչ:

բ. Գլխավոր Ասամբլեան պետք է քվեարկությամբ ընտրի ՆՀՄ–ի ներկայացուցիչ:

6. Թափուր պաշտոնները

ա. Եթե Համաշխարհային նախագահը ազատվում է իր պաշտոնից Համաշխարհային Համագումարների միջև եղած ժամանակահատվածում, ապա խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ, նոր Համաշխարհային նախագահը պետք է ընտրվի

Գործադիր Հանձնաժողովի ընտրած թեկնածուներից, Համաշխարհային Խորհրդի ձայների երկու երրորդ քվեարկությամբ: Ընտրված մարդը պետք է կատարի Համաշխարհային նախագահի պարտականությունները մինչև հաջորդ Համաշխարհային Համագումարը: Թափուր պաշտոնը լրացնելու համար ընտրություն գումարելու հարցը, պետք է քննարկվի Համաշխարհային Խորհրդում, խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

բ. Եթե Խորհրդում հաստիք է ազատվում Համաշխարհային Համագումարների միջև եղած ժամանակահատվածում, ապա համապատասխան տարածաշրջանում յուրաքանչյուր Շրջանային Գործադիր հանձնաժողով, տարածաշրջանից Համաշխարհային Գործադիր Հանձնաժողովի համար պետք է առաջադրի մեկ թեկնածուի: Այդ անուններից Համաշխարային Գործադիր Հանձնաժողովը ներկայացնում է երկու թեկնածուների անուններ: Այդ հաստիքը զբաղեցնում է նա, ով տարածաշրջանի շրջանային ՆՀՄ–ի նախագահների քվեարկության ժամանակ հավաքել է ձայների մեծամասնություն: Թափուր պաշտոնը լրացնելու համար ընտրություն գումարելու հարցը, պետք է քննարկվի Համաշխարհային Խորհրդի Գործադիր հանձանժողովի կողմից, խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

գ. Եթե ազատվում է Համաշխարհային տնօրենի հաստիքը, ապա պետք է հետևել թեկնածուների առաջադրման և Համաշխարհային տնօրենի ընտրման ընթացակարգին: (Տես Հոդված V. Մաս 3. Բ.1):

դ. Եթե Գործադիր հանձնաժողովում հաստիք է ազատվում Համաշխարհային Համագումարների միջև եղած ժամանակահատվածում, ապա Համաշխարհային Խորհուրդը պետք է առաջադրի երկու թեկնածուներ: Այդ հաստիքը զբաղեցնում է նա, ով ՆՀՄ–ի Համաշխարային Խորհրդի գաղտնի քվեարկության ժամանակ հավաքել է ձայների մեծամասնություն:

ե. Եթե ազատվում է ՆՀՄ–ի Գլխավոր Խորհրդի ներկայացուցիչի հաստիքը, ապա Համաշխարհային գործադիր Հանձնաժողովը խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ և հաստատելով Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդում, առաջադրում է 2 թեկնածուներ: ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհուրդը պետք է ձայների մեծամասնությամբ ներկայացուցիչ ընտրի Գլխավոր Խորհրդի համար:

Դ. Պարտականությունները

1. Համաշխարհային Խորհրդի անդամները

ա. ՆՀՄ–ի ղեկավարման և ծրագրերի զարգացման համար, համատեղ աշխատում են ՆՀՄ–ի Համաշխարհային տնօրենի հետ:

բ. Աջակցում են իրագործելու ՆՀՄ–ի բոլոր ծրագրերը, այն աշխարհագրական տարածաշրջանում, որը նրանք ներկայացնում են:

գ. Տարածաշրջանում ՆՀՄ–ի աշխատանքների համար ներկայացնում է տարեկան հաշվետվություն, ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհրդի յուրաքանչյուր ժողովին:

դ. Գլխավոր Ամբլեային ներկայացնում է 2 թեկնածուների, որպես Գլխավոր Խորհրդում ՆՀՄ–ի ներկայացուցիչներ:

ե. Գործում է Գլխավոր Ասամբլեայի կողմից առաջադրած ցանկացած օրենքով, որը վերաբերվում է տարածաշրջանային ներկայացուցիչներին:

զ. Գործադիր Հանձնաժողովի համար ընտրում է փոխնախագահի, քարտուղարի և խորհրդից մեկ անդամ:

2. Համաշխարհային տնօրենը

ա. Ծառայում է որպես ՆՀՄ–ի գործադիր տնօրենի կատարող:

բ. Աշխատելով համատեղ Համաշխարհային Խորհրդի հետ, աջակցել ՆՀՄ–ի միսիայի հետաքրքրությունների իրագործմանը ամբողջ աշխարհի տարածաշրջաններում:

գ. Բացատրել *ՆՀՄ–ի Սահմանադրությունը և Ուղեցույցը*:

դ. Ղեկավարել Համաշխարհային Գրասենյակի անձնակազմը և աշխատանքները:

դ. ՆՀՄ–ի բոլոր հրատարակչություններում ծառայել, որպես գլխավոր խմբագիր:

ե. Ղեկավարել բոլոր հաշվետվությունների և գրառումների հավաքելը և պահպանելը:

զ. Համաշխարհային Խորհրդի, Համաշխարհային Միսիայի հանձնաժողովի և Գլխավոր Խորհրդի համար պատրաստել տարեկան ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:

է. Գլխավոր Խորհրդի Համաշխարհային Միսիայի Հանձնաժողովին հաստատման համար,, ներկայացնել կարճ հաշվետվություն, Խորհրդի յուրաքանչյուր ժողովի գործունեության մասին:

ը. Համաշխարհային Խորհրդի հետ համատեղ ղեկավարել Համաշխարհային Համագումարի ծրագրերի կազմակերպումը:

թ. Գլխավոր Ասամբլեայի համար ներկայացնել Համաշխարհային Համագումարի, և Համաշխարհային Միսիայի ֆինանսական և վիշակագրական կարճ հաշվետվութ_ յունները:

ժ.Ծառայել որպես Գլխավոր Ասամբլեայի անդամի պարտականությունների կատարող:

ի. Ստեղծել և աջակցել համացանցում մեծ հնարավորություններով կայքի աշխատանքները, համագործակցելով ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհրդի հետ:

Ե. Համաշխարհային Նախագահը

ա. Նախագահում է Համաշխարհային Խորհրդի, Գործադիր Հանձնաժողովի և Համաշխարհային Համագումարի նիստերի ժամանակ:

բ. Աջակցել իրագործելու Նազովրեցիների Համաշխարհային Միսիաների Ընկերակցության նպատակները:

4. Փոխնախագահը

ա. Կատարում է նախագահի պարտականությունները նրա բացակայության ժամանակ:

5. Գործադիր հանձնաժողովը

ա. Աջակցում է խորհրդի նիստերի միջև ընկած ժամանկահատվածի գործունեությունը:

բ. Առաջադրում է երկու թեկնածուների Համաշխարհային նախագահի հաստիքի համար, եթե այն ազատվում է Համաշխարհային Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում:

գ. Առաջադրում է երկու թեկնածուների Գործադիր Հանձնաժողովի թափուր տեղի համար:

դ. Նշանակում է Համաշխարհային նախագահի ընտրական հանձնաժողովը:

Հոդված VI. Ժողովները

Մաս 1. Տեղական ժողովները

Ա. Ամենամսյա:

Ամեն ամիս պետք է անցկացվի մեկ կամ մի քանի ժողովներ հաղորդակցության և աղոթքի համար, որպեսզի տարածվի միսիոներական տեղեկատվությունը:

1. Այդ ժողովները կարող են անցկացվել որպես միսիոներական ծառայություններ կամ հատուկ ծառայություններ, ներգրավելով միսիոներ զեկուցողների, ներկայացնելով դասեր, միջոցառումներ և այլն:

2. ՆՀՄ–ի նախագահը և Խորհուրդը պետք է աշխատեն հովվի հետ միասին, և պլանավորեն միսիոներական կրթությունը և տեղական եկեղեցու ներգրավվածությունը:

Բ. Տարեկան:

1. Ընկերակցության տարեկան ժողովները պետք է անցկացվեն շրջանային կոնվենցիայի գումարումից ամենաքիչը 30 օր առաջ, որպեսզի հաջորդ տարվա համար ընտրվի Գործադիր Հանձնաժողովը/Խորհուրդը և շրջանային կոնվենցիայի համար պատգամավորները:

2. Քվեարկությունը և ընտրությունը դեպի տեղական խորհուրդ, տեղի են ունենում միայն ՆՀՄ–ի 15 և բարձր տարիքի անդամների համար:

Գ. Խորհրդի ժողովը

Տեղական խորհուրդը պետք է հանդիպի երեք ամիսը մեկ անգամ, որպեսզի գնահատի, պլանավորի, տեղեկացնի, ոգեշնչի, և կատարի տեղական կազմակերպության աշխատանքը: Խորհրդի անդամների մեծամասնությունը ձևավորում է քվորումը:

Դ. Էլեկտրոնային ժողովները և շփումները:

1.ՆՀՄ–ի բոլոր համագումարները, խորհուրդները, հանձնաժողովները, ենթահանձնաժողովները և այլ ժողովները իրավունք ունեն հանդիպելու հեռախոսային կոնֆերանսների կամ այլ էլեկտրոնային ԶԼՄ-ների և մեդիա միջոցներով, եթե բոլոր անդամները կարող են մեկը մյուսին նորմալ լսել և մասնակցել ժողովին:

2. Եթե միայն անդամները չեն որոշում այլ ձևով, ապա բոլոր հաղորդագրությունները, որոնք պահանջվում են այս սահմանադրությամբ, կարող են ուղարկվել էլեկտրոնային միջոցներով:

Մաս 2. Շրջանային ժողովները

Ա. Կոնվենցիա

1.Պետք է անցկացվի շրջանային կոնվենցիա, որպեսզի ներկայցվեն ծրագրեր և հաշվետվություններ, աղոթել, տեղեկացնել, ոգեշնչել և կատարել աշխատանքներ, որոնք վերաբերվում են կազմակերպությանը:

2.Կոնվենցիայի անցկացման տեղը և ժամանակը պետք է որոշի Շրջանային Խորհուրդը, խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ, և անց է կացվում շրջանային ասամբլեայի սկսվելուց 30 օր առաջ:

3. Անդամությունը

ա. Միայն համապատասխան շրջանի անդամները կարող են ընտրվել պատգամավոր և կատարել պարտակնությունները:

բ. Կոնվենցիայի գործող անդամներր պետք է լինեն ՆՀՄ–ի շրջանային խորհուրդր, շրջանային սուպերինտենդենտը, բոլոր նշանակված ծառայողները և տեղական եկեղեցու բոլոր վճարվող ծառայողները, լրիվ դրույքով աշխատողները, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի անդամները, ավարտվող տարվա ասամբլեաների ՆՀՄ–ի նոր ընտրված տեղական նախագահները, կամ նոր ընտրված փոխնախագահները, եթե նախագահները չեն կարող ներկա գտնվել, ՆՀՄ–ի Գլավոր Խորհրդի անդամը, թոշակի մեջ նշանակված ծառայողները, թոշակառու միսիոներները, հանգստի մեջ գտնվող միսիոներները կամ նրանք, ովքեր նոր են նշանակվել միսիոներ, նախկին շրջանային նախագահները, որոնք ապրում են այն շրջանում, որտեղ որ նախկինում ծառայել են:

գ. Յուրաքանչյուր տեղական եկեղեցու պատգամավորները պետք է լինեն ՆՀՄ–ի անդամներ (15 տարեկան և բարձր): Ընտրված պատգամավորների քանակը պետք է հիմնվի հետևյալ բանաձևի վրա. Յուրաքանչյուր 25 և քիչ անդամ ունեցող տեղական ՆՀՄ–ից երկու պատգամավորներ (բացառությամբ ասոցացված անդամներից), և մեկ լրացուցիչ պատգամավոր յուրաքանչյուր 25 և ավել անդամների դեպքում: Անդամությունը պետք է հիմնավորվի տեղական տարեկան ժողովի, անդամության հաշվետվության արդյունքներով, երբ տեղի են ունենում ընտրությունները: ՆՀՄ–ի տեղական նոմինացիոն հանձնաժողովը պետք է առաջադրի թեկնածուներ: Պատգամավորները կարող են ընտրվել տեղական տարեկան ժողովի ժամանակ, կամ նշանակվեն տեղական ՆՀՄ–ի Խորհրդի Գործադիր Հանձնաժողովի կողմից, երբ դա հաստատված է տեղական տարեկան ժողովի կողմից:

դ. Յուրաքանչյուր եկեղեցի իրավունք ունի Ժողով ուղարկելու 4 կամ ավել պատգամավորների, համաձայն Հոդված VI, Մաս 2.Ա.3, և պետք է ընտրի գոնե մեկ պատգամավորի 15 տարեկանից ոչ պակաս և 30-ից ոչ ավել տարիքի: Եկեղեցին կարող է անցկացնել հատուկ ընտրություններ այդպիսի երիտասարդ պատգամավորների համար, երբ տեղի են ունենում ընտրությունները:

4. Ներկա գտնվող պատգամավորները կազմում են քվորումը:

Բ. Խորհուրդը

Շրջանային Խորհուրդը պետք է հանդիպի, ամենաքիչը տարին երկու անգամ, որպեսզի կատարեն աշխատանք տարեկան շրջանային կոնվենցիաների միջանկյալ ժամանկահատվածում: Պատգամավորների մեծամասնությունը կազմում են քվորումը:

Գ. Էլեկտրոնային ժողովները և շփումները:

1.ՆՀՄ–ի բոլոր համագումարները, խորհուրդները, հանձնաժողովները, ենթահանձնաժողովները և այլ ժողովները, իրավունք ունեն հանդիպելու հեռախոսային կոնֆերանսների կամ այլ էլեկտրոնային ԶԼՄ-ների և մեդիա միջոցներով, եթե բոլոր անդամները կարող են մեկը մյուսին նորմալ լսել և մասնակցել ժողովին:

2. Եթե միայն անդամները չեն որոշում այլ ձևով, ապա բոլոր հաղորդագրությունները, որոնք պահանջվում են այս սահմանադրությամբ, կարող են ուղարկվել էլեկտրոնային միջոցներով:

Մաս 3. Համաշխարհային Համագումարը

Ա. Համագումարը

1. Համաշխարհային Համագումարը պետք է անցկացվի անմիջապես Գլխավոր Ասամբլեայից առաջ, որպեսզի որպեսզի ներկայցվեն ծրագրեր և հաշվետվություններ, աղոթել, տեղեկացնել, ոգեշնչել և կատարել աշխատանքներ, որոնք վերաբերվում են կազմակերպությանը: Գրանցված պատգամավորների մեծամասնությունը կազմում են քվորումը: Եթե Համաշխարհային Համագումարի ժողովները տեղի են ունենում տարբեր տեղերում, և եթե մի անգամ արդեն քվորում ձևավորվել է, համարվում է, որ նա կա մինչև համագումարի ավարտը, նույնիսկ այն դեպքում, եթե կապը երկու տեղերի մեջ ընդհատվել է:

2. Կոնվենցիայի անցկացման տեղը և ժամանակը պետք է որոշի Համաշխարհային Խորհուրդը, խորհրդակցելով լիազորված գլխավոր սուպերինտենդենտի հետ:

ՆՀՄ–ի Համաշխարհային Խորհուրդը պետք է հաստատի անցկացման պաշտոնական տեղերը և այդ տեղերում կատարել անհրաժեշտ նախապատրաստություններ:

3. Անդամությունը

ա. Համաշխարհային Համագումարի գործող անդամներն են՝ Համաշխարհային Խորհրդի անդամները, տարածաշրջաններում ՆՀՄ–ի ծրագրերի Համաշխարհային Միսիաների համակարգողը, շրջանային ՆՀՄ–ի նախագահները կամ նախագահների բացակայության դեպքում, նոր ընտրված փոխնախագահները կարող են ներկայացնել այդ շրջանը:

բ. Համաշխարհային Համագումարի պատգամավորները և փոխարինողները պետք է գաղտնի քվեարկությամբ ընտրվեն շրջանային կոնվենցիայի ժամանակ: Փոխարինողները կարող են ընտրվել առանձին քվեարկությամբ կամ Շրջանային Խորհրդի երաշխավորությամբ նույն քվեարկությամբ ինչպես որ պատգամավորները: Պագամավորները և փոխարինողները կարող են ընտրվել ձայների մեծամասնությամբ, շրջանային կոնվենցիայի երկու երրորդ ձայների հավանությամբ և Շրջանային Խորհրդի երաշավորությամբ (տես Հոդված VI, Մաս 3.Ա,3գ. Պատգամավորների քանակը և ընտրությունների անցկացման ժամանակը որոշելու համար):

գ. Համաշխարհային Համագումարի պատգամավորների ընտրությունը պետք է հիմնավորվի հետևյալ բանաձևով. Ամեն 2-րդ և 3 –րդ մակարդակի շրջաններից, որոնք ունեն 1000 կամ պակաս մարդ, բացառությամբ ասոցացված անդամների, 2 պատգամավորներ և մեկ լրացուցիչ պատգամավոր, յուրաքանչյուր 700 և ավել անդամների դեպքում: Անդամությունը պետք է հիմնավորվի ՆՀՄ–ի շրջանային կոնվենցիայի ժամանակ, ՆՀՄ–ի անդամության հաշվետվության արդյունքներով, երբ տեղի են ունենում ընտրությունները: ՆՀՄ–ի շրջանային նոմինացիոն հանձնաժողովը պետք է առաջադրի թեկնածուներ (տես Ուղեցույց պարագրաֆ 200.2 շրջանի մակարդակի սահամանումը) ՆՀՄ–ի Շրջանային Խորհուրդը պետք է որոշի փոխարինող պատգամավորների թիվը, որոնց պետք է ընտրի շրջանային կոնվենցիան:

դ. 2-րդ և 3-րդ մակարդակի շրջանները կարող են ընտրել Համաշխարհային Համագումարի 4 և ավել պատգամավորներ համաձայն Հոդված VI, մաս 3.Ա., 3.գ., բանաձևի և այդ պատգամավորների մեջ պետք է լինի մեկ պատգամավոր 15 տարեկանից ոչ պակաս և 30-ից ոչ ավել տարիքի: Շրջանը շրջանային կոնվենցիայի ժամանակ կարող է անցկացնել հատուկ ընտրություն, այդպիսի երիտասարդ թեկնածուի համար:

ե. Ամբողջ աշխարհի բոլոր տարածաշրջանների Համաշխարհային Միսիաներից 50 կամ պակաս միսիոներներից մեկ պատգամավոր, կամ յուրաքանչյուր տարածաշրջանում պետք է ընտրվեն 2 պատգամավորներ միսիոներներից 51 կամ ավել միսիոներների քանակի դեպքում, ՆՀՄ–ի Համաշխարհային տնօրենի գրասենյակի կողմից հաստատված մեթոդի օգնությամբ:

զ. Պատգամավորները շրջանային կոնվենցիայի ժամանակ, պետք է ընտրվեն գաղտնի քվեարկությամբ 16 ամիսների ընթացքում, մինչև Համաշխարհային Համագումարի սկսվելը, կամ 24 ամիսների ընթացքում, շրջաններում, որտեղ անհրաժեշտ են վիզաներ կամ այլ փաստաթղթեր պատրաստելու համար:

է. Բոլոր ընտրված պատգամավորները Համաշխարհային Համագումարի ժամանակ պետք է ապրեն այն շրջանում որի անդամներն են հանդիսանում նրանք ընտրության ժամանակ: Եթե որևէ պատգամավորներ տեղափոխվում են շրջանից, ապա նրանք կորցնում են այդ շրջանը ներկայացնելու արտոնությունը: Դա չի վերաբերվումնրանց ովքեր ապրում են պարզապես շրջանների սահմանի վրա:

ը. Եթե շրջանային նախագահը, շրջանային փոխնախագահը, ընտրված պատգամավորը, ընտրված փոխարինողները կամ նշանակված փոխարինող պատգամավորները չեն կարող հաճախել Համաշխարհային Համագումար(և այդ փաստը

պարզվել է նախկին Համաշխարհային Համագումարից մինչև հաջորդ Համաշխարհային Համագումարը), այդ դեպքում փոխարինող պատգամավորները կարող են նշանակվել ՆՀՄ–ի Շրջանային Խորհրդի կողմից, կամ եթե չկա ՆՀՄ–ի շրջանային խորհուրդ, ապա ՆՀՄ–ի շրջանային նախագահի կողմից, շրջանային սուպերինտենդենտի հավանությամբ:

Բ. Խորհուրդների հանդիպումները:

1. Համաշխարհային Համագումարում կրկին ընտրված Համաշխարհային Խորհուրդը, կարող է հանդիպել մինչև Գլխավոր Ասամբլեայի սկսվելը, կազմակերպման և պլանավորման նպատակով:

2. Համաշխարհային Խորհուրդը պետք է հանդիպի 4 տարվա մեջ ամենաքիչը երեք անգամ, որպեսզի անցկացնի կազմակերպչական աշխատանքներ: Անդամների մեծամասնությունը կազմում է քվորումը:

գ. Էլեկտրոնային ժողովները և շփումները:

1.ՆՀՄ–ի բոլոր համագումարներր, խորհուրդներր, հանձնաժողովներր, ենթահանձնաժողովներր և այլ ժողովներր իրավունք ունեն հանդիպելու հեռախոսային կոնֆերանսների կամ այլ էլեկտրոնային ԶԼՄ-ների և մեդիա միջոցներով, եթե բոլոր անդամները կարող են մեկը մյուսին նորմալ լսել և մասնակցել ժողովին:

2. Եթե միայն անդամները չեն որոշում այլ ձևով, ապա բոլոր հաղորդագրությունները, որոնք պահանջվում են այս սահմանադրությամբ, կարող են ուղարկվել էլեկտրոնային միջոցներով:

Հոդված VII. Միջոցներ

Մաս 1. Տեղական եկեղեցիներից բարձրացված միջոցներ

Ա. Համաշխարհային Ավետարանչության ֆոնդը:

1. Տվյալ ընկերակցության միջոցով հավաքված միջոցները Ավետարարանչության Համաշխարհային ֆոնդի համար, ուղարկվում են անմիջապես գլխավոր գանձապահին:

2. Ավետարարանչության Համաշխարհային ֆոնդի համար միջոցները պետք է հավաքվեն հետևյալ կերպ.

ա. Կանոնավոր զոհաբերություններ ԱՀՖ–ին:

բ. Զատկի կապակցությամբ և Գոհության օրվա զոհաբերություններ:

գ. ԱՀՖ–ի մի մասը Հավատքի Խոստումների զոհաբերությունում:

դ. Աղոթքի և Ծոմի զոհաբերությունները:

Բ. Հաստատված Հատուկ Միսիաները

1. Անհրաժեշտ է ԱՀՖ–ի Հաստատված Հատուկ Միսիաների համար լրացուցիչ զոհաբերելու հնարավորություն տալ:

2. Լրացուցիչ Հաստատված Հատուկ Միսիաները կարող են հաստատվել Նազովրեցու Համաշխարհային կենտրոնի (գլխամասային գրասենյակի) համապատասխան անձնակազմի կողմից:

3. ԱՀՖ–ի Համաշխարհային Խորհուրդը պետք է հաստատի բոլոր Հաստատված Հատուկ Միսիաները, որոնք առաջադրվում և հավաքվում են ԱՀՖ–ի համաշխարհային մակարդակում:

Գ. Հատուկ Ֆոնդեր

Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդի և Հաստատված Հատուկ Միսիաների ֆոնդերի ոչ մի մասը չպետք է օգտագործվի տեղական եկեղեցիների, շրջանի կարիքների, կամ այլ բարեգործական նպատակների համար:

Դ. Տեղական ծախսերը

1. Տեղական ծախսերի ֆոնդերը պետք է ներկայացվեն ԱՀՖ–ին, ինչպես որոշված է Տեղական ԱՀՖ–ի Խորհրդով և հաստատված է եկեղեցական խորհրդով:

2. Տեղական ծախսերի մի մասը պետք է տրամադրվի շրջանային կոնվենցիայի պատգամավորներին:

Մաս 2. Շրջանից բարձրացված միջոցներ

Ա. Շրջանի ծախսերը

1. Շրջանի ծախսերի ֆոնդը պետք է ներկայացվի ԱՀՖ–ին, ինչպես որոշված է Շրջանային ԱՀՖ–ի Խորհրդով և հաստատված է Շրջանային Խորհրդով:

2. Շրջանի ծախսերի ֆոնդերի մի մասը պետք է տրամադրվի Համշխարհային Համագումարին մասնակցող պատգամավորների ծախսերի համար:

3. Համաշխարհային Ավետարանչության Ֆոնդի և Հաստատված Հատուկ Միսիաների ֆոնդերի ոչ մի մասը չպետք է օգտագործվի շրջանի ծախսերի համար:

Մաս 3. Վճարումները

Ա. ԱՀՖ–ի ծառայությունները եկեղեցում պետք է լինեն սիրո ծառայություններ: Ոչ մի աշխատավարձ, ոչ մի մակարդակում, չպետք է վճարվի ծառայողներին՝ տեղական, շրջանային, գլխավոր, բացառությամբ գլխավոր տնօրենին, ով ընտրվում է Գլխավոր Խորհրդի կողմից:

Բ. Համապատասխան վճարումներ պետք է ներկայացվեն խորհրդի անդամների ծախսերի համար, բոլոր մակարդակներում՝ տեղական, շրջանային և համաշխարհային:

Հոդված VIII. Կազմակերպում և Արարողակարգեր

ԱՀՖ–ի Համաշխարհային Խորհուրդը պետք է ԱՀՖ–ի համար մշակի լրացուցիչ արարողակարգեր, կազմակերպչական կանոններ և աշխատանքային ցուցումներ, որոնք ԱՀՖ–ի Սահմանադրության հետ համատեղ, ԱՀՖ–ի Ուղեցույցի բովանդակությունն են:

Հոդված IX. Կանոններ

Robert's Rules of Orders newly Revised, -ում գրված կանոնները պետք է օգտագործվեն կազմակերպության կառավարման համար, եթե դրանք չեն հակասում օգտագործվող օրենքներին, Նազովրեցու Եկեղեցու Կորպորատիվ և ԱՀՖ–ի ընդունած այլ կանոններին:

Հոդված X. Լրացումներ և փոփոխություններ

ԱՀՖ–ի տվյալ Սահմանադրության համար լրացումները և փոփոխությունները կատարվում են ԱՀՖ–ի Գլխավոր Կոնվենցիայի ներկա գտնվող անդամների գաղտնի քվեարկության ձայների երկու երրորդով, և Գլխավոր Խորհրդի Համաշխարհային Միսիայի Հանձնաժողովի հավանությամբ:

ԳԼՈՒԽ III

812. ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՄԻՍԻԱ

Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայությունը իրագործում է Հիսուս Քրիստոսի Մեծ Հանձնարարությունը երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին ծառայելով, որպեսզի պատրաստեն Քրիստոսի նման աշակերտներ բոլոր ազգերում:

ՆՊԱՏԱԿ

Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Միջազգային Ծառայության նպատակը բաղկացած է 4 մասերից:

Ա. Միտումնավոր հարաբերություններ զարգացնել չապաշխարհած մարդկանց հետ այնքան ժամանակ մինչև նրանք դառնան Քրիստոսին նման աշակերտներ, որոնք կհաստատեն Քրիստոսին նման աշակերտներ:

Բ. Աստծո Խոսքը սովորեցնել այնքան ժամանակ, մինչև երեխաները, երիտասարդները և մեծահասակները չեն ստանա փրկություն, կդառնան կատարյալ սրբագործված և կհասունանան ձեռք բերելով քրիստոնեական փորձառություն:

Գ. Քրիստոնյաներին օգնել աճել հոգևորապես, ներգրավելով նրանց ավետարանչության, քրիստոնեական կրթության և աշակերտներին սովորեցնելու մեջ:

Դ. Աջակցել երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին, որպեսզի նրանք մասնակցեն և հավատարմորեն այցելեն Կիրակնօրյա Դպրոց:

Հոդված I. ԿԴԱՄԾ Անդամությունը

Պատասխանատվությունների ցուցակը

Յուրաքանչյուր տեղական եկեղեցի պետք է իր վրա պատասխանատվություն վերցնի հասնելու հասարակության մեջ չփրկված մարդկանց: Յուրաքանչյուր տարիքային խումբ, որը ամեն շաբաթ գոնե կես ժամով հանդիպում է ուսումնասիրելու աստվածաշնչյան սկզբունքները և/կամ ունի պարապմունքների հաստատված դասացուցակ, պետք է ընդգրկվի պատասխանատվությունների ցուցակի մեջ: Յուրաքանչյուր ուսուցիչ կամ առաջնորդ պատասխանատվություն է կրում նրանց համար, ովքեր գտնվում են նրա պատասխանատվության ցուցակի մեջ: ԿԴԱՄԾ –ի պատասխանատվությունների ցուցակում գտնվող մարդկանց համար պետք է լինեն հաշվետվություններ (այն ներառում է իր մեջ կիրակնօրյա դպրոցի աշակերտության ցուցակները\լայնածավալ ծառայության\աշակերտության\ Աստվածաշնչյան դպրոցի բոլոր տարիքային խմբերի համար)(20-23 տողերը Տարեկան Հովվական Հաշվետվությունից են):

ՄԱՍ 1. Հետևյալ ծառայությունների մասնակիցները պետք է ընդգրկված լինեն պատասխանատվության ցուցակում, հետևելով հետևյալ ուղեցույցին:

ա. Մսուրային խումբ: Մինչև 4 տարեկան երեխաները, որոնք ինչպես և նրանց ծնողները չեն հաճախում կիրակնօրյա դպրոց, կարող են ընդգրկվել Մսուրային խումբ անունով ցուցակում:

1. Երեխաները դիտվում են որպես կիրակնօրյա դպրոցի նախապատրաստական դասարանների պոտենցիալ անդամներ, իսկ նրանց ծնողները մեծահասակների ծառայության պոտենցիալ մասնակիցներ:

2. Կիրակնօրյա դպրոցի սուպերինտենդենտը և մանկական ծառայության տնօրենը, խորհրդակցելով հովվի հետ, պետք է ամեն տարի նշանակեն Մսուրային խմբի տնօրենի, ով պատասխանատու է այդ ընտանիքների կանոնավոր այցելության և նրանց ծրագրեր և գրականություն ներկայացնելու համար:

3. Երբ նրանք սկսում են բավականին կանոնավոր այցելել ԿԴԱՄԾ –ի, կամ հասնում են 4 տարեկան հասակին, ապա նրանց անունները գրանցվում են համապատասխան տարիքային խմբում:

բ. Տնային կրթության բաժին: Նրանք, ովքեր ի վիճակի չեն կանոնավոր հաճախել ԿԴԱՄԾ–ի պարապմունքներին, գրանցվում են տնային կրթության բաժնում, կամ գտնվում են ցուցակում հետևյալ ցուցումների համապատասխան.

1. Կիրակնօրյա դպրոցի սուպերինտենդենտը և մեծահասակների ծրագրերի համար ծառայության առաջնորդը, խորհրդակցելով հովվի հետ պետք է ամեն տարի նշանակեն տնային կրթության բաժնի պատասխանատու աշխատակից, ում պարտականությունների մեջ մտնում են ամեն շաբաթ այցելել այդպիսի մարդկանց և նրանց հետ անցկացնել Աստվաշնչյան դասեր:

2. Այդպիսի մարդկանց, ում ամեն շաբաթ այցելում են աստվածաշունչ ուսումնասիրելու, անհրաժեշտ է ընդգրկել ցուցակ (20-23 տողեր) և ընդգրկել նրանց անունները ԿԴԱՄԾ–ի ցուցակներում, որպես պարապմունքներին կանոնավոր հաճախողներ(24 և 24ա տողեր):

գ. Հիվանդանոցներ/ծերանոցներ/վերականգնողական կենտրոններ. Նրանք ովքեր պատկանում են նման կենտրոններին, ովքեր հաճախում են շաբաթական պարապմունքներին, որոնք անցկացվում են հաստատված դասացուցակով և աջակցվում են տեղական եկեղեցու կողմից, կարող են պատասխանատվության ցուցակներում ընդգրկել (20-23 տողեր) և հաշվետու լինել շաբաթական միջին վիճակագրական հաշվետվություններում (24 և 24ա տողեր):

դ. Եկեղեցական տիպի միսիա: Տեղական եկեղեցու կողմից աջակցվող խումբ, որը ամեն շաբաթ անց է կացնում Կիրակնօրյա Դպրոցի առանձին ժողովներ, կազմակերպված Նազովրեցու Եկեղեցի դառնալու նպատակով, ընդգրկվում է պատասխանատվությունների ցուցակի մեջ(20-23 տողեր), ինչպես նաև հաշվետու լինել շաբաթական միջին վիճակագրական հաշվետվություններում (24 և 24ա տողեր) այն եկեղեցուն, որը աջակցում է տվյալ խմբին, որտեղ անվանվում է նոր ծառայության տեղը և անվանումը:

1. Ցուցակում եկեղեցական տիպի միսիա այցելող մարդկանց քանակը, հաշվում են եկեղեցու աջակցվող կիրակնօրյա դպրոց հաճախողների հետ, երբ պատրաստվում են շրջանի համար ամսեկան հաշվետվությունները և ընդգրկվում են շրջանի ամսեկան հաճախումների թիվը:

2. Եթե շրջանը կամ տեղական եկեղեցին այդպիսի նոր տեղերում աջակցում է այդպիսի մեծ խմբերի, ապա այդպիսի Եկեղեցական տիպի միսիաները կարող են առանձին նշվել տեղերով և անուններով, եթե շրջանի կողմից այդպես է որոշվել:

Ե. Մանկապարտեզներ և Դպրոցներ. Նազովրեցու Եկեղեցու մանկապարտեզի կամ կրտսեր դպրոցի ցանկացած խումբ, որը հովանավորվում է տեղական Նազովրեցու Եկեղեցու կողմից (բայց ոչ ԿԴԱՄԾ–ի ցուցակներում ընդգրկվածները), և ամեն շաբաթ մասնակցում են աստվածշնչյան սկզունքների ուսումնասիրությանը կամ շբաթական զոնե կես ժամ պարապում են դասացուցակով, ընդգրկվում են պատասխանատվության ցուցակներում (20-23 տողեր) և հաշվետու լինել շաբաթական միջին վիճակագրական հաշվետվություններում (24 և 24ա տողեր):

ՄԱՍ 2. Ցուցակներից անունների հեռացնելը :

Այն պահից երբ անունը մտցվում է պատասխանատվությունների ցուցակ, տեղական եկեղեցին պետք է տվյալ մարդու համար ծառայության ճանապարհներ փնտրի, որպեսզի այդ մարդուն բերի եկեղեցու հաղորդակցության մեջ: Ցուցակներից անունների հեռացումը տեղի է ունենում հովվի հավանությամբ եթե.

ա. Տեղափոխություն այլ քաղաք:

բ. Միանալով մեկ այլ եկեղեցու կամ Կիրակնօրյա Դպրոցի:

գ. Մասնակցի կողմից ցուցակներից անունի հեռացման համար հատուկ խնդրանք:

դ. Մարդու մահվան դեպքում:

Հոդված II. ԿԴԱՄԾ–ի հաճախումները

Տեղական եկեղեցու Կիրակնօրյա Դպրոցի հաճախումների պարզաբանման նպատակն է տվյալ եկեղեցու ծառայության արդյունավետության չափումը, Քրիստոսին նման աշակերտների պատրաստման գործում: Կիրակնօրյա Դպրոցի աշխատանքը պետք է ուղղված լինի նրան, որ յուրաքանչյուր մարդ դառնա Քրիստոսին նման աշակերտ, եկեղեցու անդամ և ինքը դաստիարակի աշակերտներին:

Անհրաժեշտ է հասկանալ, որ նրանց անունները, ովքեր մասնակցում են կիրակնօրյա Դպրոցի մի քանի ծրագրերում, պետք է կանոնավոր հաճախելիության ցուցակում ընդգրկվեն միայն մեկ անգամ:

ԿԴԱՄԾ հաճախելիությունը բաժանված է երկու կատեգորիայի. Սովորական Կիրակնօրյա Դպրոց (24 տող) և աշակերտության խմբեր (փոքր խմբեր\ օղակներ): Այդ կատեգորիաները յուրաքանչյուր տեղական եկեղեցում պետք է առանձին հաշվարկվեն համաձայն ներքևում նշված կանոնների, ինչպես նաև համաձայն Հոդված I, Մաս 1:

Կիրակնօրյա Դպրոցի տարածաշրջանային ծառայության բաժինը, կարիք ունի յուրաքանչյուր շրջանից ստանալու ամենամսյա հաշվետվությունները, պատասխանատվության ցուցակները և ամեն շաբաթվա այցելությունների թվերի միջին վիճակագրական տվյալները, որպեսզի կազմի հարանվանությունում Կիրակնօրյա Դպրոցի աճի ամեն տարվա ճշգրիտ հաշվետվությունը (տողեր 23 և 23ա):

ՄԱՍ 1. Կիրակնօրյա Դպրոցի կանոնավոր պարապմունքները: Կիրակնօրյա Դպրոցի կանոնավոր պարապմունքները սահմանվում են, որպես մարդկանց կազմակերպված խումբ, ովքեր ամեն շաբաթ հանդիպում են որոշակի տեղում և որոշակի ժամանակահատվածում: Այդ հանդիպումների նպատակն է կրթել աշակերտներին, ուսումնասիրելով Աստվածաշնչյան սկզբունքները և/կամ օգտագործելով հաստատված ծրագրեր, ամենաքիչը 30 րոպե: Դա կազմում է Կիրակնօրյա դպրոցի շաբաթական կանոնավոր հաճախելիությունը (տող 24):

ա. Հաճախելիության հաշվարկը ավարտվում է ոչ ուշ, քան կանոնավոր պարապմունքի կեսին: Այդ կանոնը օգտագործվում է նաև միավորված կամ հատուկ ժողովների ժամանակ, երբ Կիրակնօրյա Դպրոցը, եկեղեցու հատուկ ծառայությունների դեպքում չի անցկացվում:

բ. Տեղական Կիրակնօրյա Դպրոցի մասնակիցը համարվում է Կիրակնօրյա Դպրոցի պարապմունքներին ներկա, եթե տվյալ կիրակի նա ներկա է եկեղեցու տեղական, զոնային, շրջանային, տարածաշրջանային, և գլխավոր միջոցառումների ժամանակ, ինչպես միացյալ վերապատրաստում, ասամբլեա, ճամբար, ժողով և այլն, եթե նա ընդգրկված չէ այլ Կիրակնօրյա Դպրոցի ներկա գտնվողների թվում: Բոլոր վերը թվարկած հավաքույթների տեսակները պետք է ընդգրկեն Աստվածաշնչյան դաս ոչ պակաս, քան 30 րոպե տևողությամբ:

գ. Կիրակնօրյա Դպրոցի բոլոր կանոնավոր ժողովները հաշվարկվում են միջին տարեկան հաճախելիությամբ: Հաշվարկի արդյունքները փոխանցվում են շրջանին: Եկեղեցիների մեծամասնության համար, Կիրակնօրյա Դպրոցի կանոնավոր ժողովների թիվը 52-ն է: Կիրակնօրյա Դպրոցի Շրջանային Խորհուրդը խորհրդակցելով շրջանային սուպերինտենդենտի հետ որոշում է թույլատրելի բացառությունները:

դ. Տնային պարապմունքների(տող 24), ծերանոցների, վերականգնողական կենտրոնների, եկեղեցական տիպի միսիաների, Նազովրեցու եկեղեցու դպրոցների և Աստվածաշնչի ուսումնասիրության փոքր խմբերի հաճախումները, կարող են ընդգրկվել ցուցակ և հաշվարկվում են որոշելով միջին հաճախելությունը համաձայն Հոդված I, Մաս 1-ի:

ՄԱՍ 2. Աշակերտության խմբերը (փոքր խմբերը կամ խմբակները): Բոլոր աշակերտության խմբակների հաճախելիությունը (փոքր խմբերը կամ խմբակները) (տող 24ա) պետք է սահմանվի որպես Աստվածաշունչ ուսումնասիրելու համար, շաբաթական ամենաքիչը 30 րոպեով հանդիպող մարդկանց խումբ, ովքեր ոչ մի կապ չունեն Կիրակնօրյա դպրոցի հետ:

ա. Եթե տեղական եկեղեցին աջակցում է մեկից ավել տվյալ տիպի աշակերտության ծառայություն, ապա տարեկան և շաբաթական հաճախումների հաշվետվությունները այդ ամենը պետք է հաշվի առնեն:

բ. Քանի որ աշակերտության ծառայությունը և այլ նոր նախագծերը կարող են սկսվել և ավարտվել եկեղեցական տարվա ցանկացած պահի, տարեկան միջինը պետք է որոշվի ընդհանուր թիվը բաժանելով անցկացված ծառայությունների շաբաթների թվին:

Հոդված III. Կիրակնօրյա Դպրոցների Դասարանները և բաժինները

ՄԱՍ 1. Կիրակնօրյա Դպրոցը բաժանվում է երեխաների և երիտասարդների դասարանների համապատասխան տարիքային խմբերի պատկանելության: Մեծահասակների դասարանները բաժանվում են թեմաների, հետաքրքրությունների և համաձայն ընտրված միսիայի:

ՄԱՍ 2. Երբ տարիքային խմբերի շրջանակներում աճում է մանկական, երիտասարդական և ավագ դասարանների քանակը, ապա Կիրակնօրյա Դպրոցի կողմից նշանակված տեսուչի միջոցով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դասարանների բաժանմանը ըստ բաժինների:

ՄԱՍ 3. Բաժնի տեսուչի պարտականությունների մեջ մտնում են.

ա) բաժնի ուսուցիչների աշխատանքի համակարգումը;

բ) անհրաժեշտության դեպքում անցկացնել բաժնի ժողով;

գ) բաժնի յուրաքանչյուր ուսուցչի ապահովվել անհրաժեշտ ծրագրերով, ռեսուրսներով և սարքավորումներով;

դ) քարտուղարի միջոցով բաժնի համար պատվիրել անհրաժեշտ նյութեր;

ե) համագործակցել Կիրակնօրյա Դպրոցի Խորհրդի համապատասխան տնօրենի հետ, որպեսզի հատուկ կամպանիաներ անցկացնելու ժամանակ, ավելանա Կիրակնօրյա Դպրոցների հաճախելությունը;

զ) համապատասխան բաժինների ղեկավարների առջև ներկայացնել բաժնի ուսուցիչների հետաքրքրությունները, որպեսզի այն փոխանցվի Կիրակնօրյա Դպրոցի Խորհրդին:

է) համապատասխան բաժինների համար կատարել հաճախելիությունների ցուցակների ուշադիր հաշվառումներ, և բացակաների հետ պահպանել աջակցություն:

ը) համագործակցել բաժնի ուսուցիչների/բաժնի առաջնորդների հետ, որպեսզի ուսուցման համար դասասենյակները լինեն գրավիչ և բարենպաստ:

թ) բաժնի ուսուցիչների փոխարինողների ապահովումը:

Հոդված IV. Կիրակնօրյա Դպրոցի և փոքր խմբերի ուսուցիչները և առաջնորդները

ՄԱՍ 1. Բաժինների տեսուչներր և ուսուցիչներր/բաժինների առաջնորդներր ամեն տարի նշանակվում են համաձայն Ուղեցույցի 145.8-ի:

ՄԱՍ 2. Ցանկալի է, որ ուսուցիչը աշխատի ամբողջ տարվա ընացքում, սակայն որոշ դեպքերում կարելի է ուսուցիչներին նշանակել ավելի քիչ ժամանակով:

ՄԱՍ 3. Վարդապետության սխալ մեկնաբանությունը ապացուցելու, անհամապատասխան վարքի, պարտականությունները չկատարելու դեպքում, Կիրակնօրյա Դպրոցի Խորհուրդր իրավունք ունի ծառայողին կամ ուսուցչին հեռացնելու պաշտոնից:

ՄԱՍ 4. Բոլոր ուսուցիչները պետք է.

Ա. Կանոնավոր այցելել աշխատակիցների ժողովները:

Բ. Պահպանել բոլոր ուսանողների հետ կանոնավոր հաղորդակցությունը, համապատասխան նրանց պատասխանատվության ցուցակների:

Գ. Որակավորումը բարձրացնելու համար օգտագործել բոլոր հնարավորությունները:

Դ. Սովորողների համար ժամանակ առ ժամանակ տրամադրել շփման ժամանակ:

Ե. Պահպանել կարգ ու կանոնը դասասենյակներում:

Զ. Ամեն շաբաթ բարեխղճորեն պատրաստել դաս:

Է. Օգտագործել Ավետարանի մասին պատմելու հնարավորությունը և կոչ անել ընդունելու Հիսուս Քրիստոսին:

Հոդված V. Կիրակնօրյա Դպրոցի և փոքր խմբերի առաջնորդները և նրանց պարտականությունները

ՄԱՍ 1. Տեղական ԿԴԱՄԾ սուպերինտենդենտը, ամեն տարի ընտրվում է համաձայն Ուղեցույցի 113.9-13.10 և 127-ի: ԿԴԱՄԾ սուպերինտենդենտի պարտականություններն են.

Ա. Լինել ԿԴԱՄԾ սուպերինտենդենտ հովվի ղեկավարությամբ:

Բ. Ներկայացնել ԿԴԱՄԾ–ն եկեղեցու ամսեկան ժողովների ժամանակ:

Գ. Պլանավորել ուսուցիչների և առաջնորդների կանոնավոր ժողովներ:

Դ. Ներկայացնել հնարավորություններ ուսուցիչների, նրանց փոխարինողների և ապագա ուսուցիչների որակավորումը բարձրացնելու համար:

Ե. Ներգրավել բոլոր աշախատակիցներին այն միջոցառումների մեջ, որոնք ավելացնում են ԿԴԱՄԾ հաճախականությունը:

Զ. Շրջանին և շրջանի ասոցացիաներին ներկայացնել վիճակագրական տեղեկատվություն ԿԴԱՄԾ աշխատանքի մասին:

Է. Ապահովվել ԿԴԱՄԾ հաճախականությունը տեղական, շրջանային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակով:

ՄԱՍ 2. Տարիքային խմբերի ղեկավարության պարտականությունները համաձայն *Ուղեցույցի* պարագրաֆներ 47.1-47.9; 148.2 –ի:

ՄԱՍ 3. ԿԴԱՄԾ Խորհուրդը ընտրում է աշխատակցի, ում պարտականություններն են ԿԴԱՄԾ-ի փաստաթղթերի հաշվառումը: Նա պետք է հաշվառի պատասխանատվությունների ցուցակը, հաճախելիության ցուցակը, հաճախորդների և այլ վիճակագրական տեղեկատվությունը, որոնք կպահանջվեն ԿԴԱՄԾ բոլոր ծառայությունների համար:

ՄԱՍ 4. ԿԴԱՄԾ Խորհուրդը ընտրում է գանձապահ, բոլոր ֆինանսական միջոցների հաշվառման համար, որոնք հավաքվել են ԿԴԱՄԾ –ի կողմից ամբողջ շաբաթվա ընթացքում: Գանձապահը բաշխում է ստացված միջոցները համապատասխան Խորհրդի որոշման և ամսեկան հաշվետվությունը ներկայացվում է ԿԴԱՄԾ Խորհրդին:

ՄԱՍ 5. ԿԴԱՄԾ Խորհուրդը նշանակում է ծառայողի, ով պատասխանատու է ԿԴԱՄԾ և այլ ծրագրերով նյութեր պատվիրելու համար, համաձայն տարիքային խմբերի և/կամ բաժինների տեսուչների խնդրանքների: Նշանակված ծառայողը փոխանցում է տարիքային խմբերի ղեկավարներին ամբողջ տեղեկատվությունը, ստացված Նազովրեցու Եկեղեցու Հրատարակության կողմից, և պատրաստում է պատվերը հովվի և սուպերինտենդենտի հավանությունից հետո:

Հոդված VI. Ադմինիստրացիան և հսկողությունը

ՄԱՍ 1. ԿԴԱՄԾ-ն գտնվում է հովվի հսկողության տակ, հաշվետու է տեղական եկեղեցական խորհրդին, գտնվում է ընդհանուր ԿԴԱՄԾ Խորհրդի հսկողության և տարիքային խմբերի ղեկավարների և սուպերինտենդենտի ղեկավարության տակ:

ՄԱՍ 2. Այն եկեղեցին, որը աշխատանքի է ընդունել քրիստոնեական կրթության տնօրենի և ցանկանում է նրան ընտրել ԿԴԱՄԾ սուպերինտենդենտ, անհրաժեշտ է հետևել հետևյալ արարողակարգին.

Ա. Տեղական եկեղեցու ընտրական հանձնաժողովը երաշխավորում է եկեղեցու տարեկան ժողովին, որ սուպերինտենդենտի ընտրությունը չի կայանա, քանի որ սուպերինտենդենտը կլինի վճարովի ծառայող:

Բ. Համայնքը ձայների մեծամասնությամբ հաստատում է որոշումը:

Գ. Վճարովի ծառայողը դառնում է ԿԴԱՄԾ սուպերինտենդենտ, և պետք է հաճախի եկեղեցական խորհրդի ժողովներին քննարկելու քրիստոնեական կրթությանը վերաբերվող հարցեր, սակայն նա քվեարկող անդամ չէ (համաձայն Ուղեցույցի 161.4 պարագրաֆի): Այդպիսի արարողակարգ է նախատեսված աշխատանքի ընդունված ծառայողների համար, ում դիմում են ընդունելու մանկական կամ մեծահասակների խմբերի ծառայության ղեկավարի պարտականություններր: Անհրաժեշտ է հասկանալ, որ այդպիսի նշանակումները ժամանակավոր են, քանի որ անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավել տեղական եկեղեցու անդամներին ընդունել այդպիսի հաստիքներում:

ՄԱՍ 3: Երբ եկեղեցին երեխաների, երիտասարդների կամ մեծահասակների հետ աշխատանքի հովիվ է վարձում, հովիվը խորհրդակցելով եկեղեցական խորհրդի, ԿԴԱՄԾ Խորհրդի կամ ՆԵԵՄԾ-ի խորհրդի հետ, նշանակում է մանկական, երիտասարդական ծառայության հովվի կամ մեծահասակների հետ աշխատող հովվի: Այդ դեպքում երեխաների, երիտասարդների կամ մեծահասակների հետ աշխատանքների հովիվը կատարում է տեղական մանկական տնօրենի, ՆԵԵՄԾ-ի նախագահի կամ մեծահասակների

հետ աշխատանքի տնօրենի պարտականությունները: Սակայն տեղական մանկական տնօրենի, ՆԵԵՄԾ-ի նախագահի կամ մեծահասակների հետ աշխատանքի տնօրենի գլխավոր խնդիրն է ապահովել իսկական առաջնորդությունը և աջակցությունը այցելուների մեջ, ինչպես նաև երեխաների, երիտասարդների և մեծահասակների տեղական ծառայության համար լինել ներկայացուցիչներ: Հովիվը, մանկական, երիտասարդական կամ մեծահասակների հովիվը, և ԿԴԱՄԾ կամ ՆԵԵՄԾ-ի Խորհուրդները աշխատում են միասին, որպեսզի որոշեն այդ երեք հաստիքների պարտականությունները, և այդպիսով նրանք աշխատում են միասին, որպեսզի եկեղեցու բոլոր ծառայությունների մեջ կարողանան բարգավաճել:

Հոդված VII. ԿԴԱՄԾ Համագումարները

ՄԱՍ 1. ԿԴԱՄԾ Շրջանային Համագումարը: Անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր շրջան պլանավորի անցկացնել տարեկան ԿԴԱՄԾ Շրջանային Համագումարներ, որպեսզի բարձրացվի ԿԴԱՄԾ բոլոր ծառայողների որակավորումը: Համագումարի նպատակն է տարածել տեղեկատվություն Կիրակնօրյա Դպրոցի և փոքր խմբերի աշխատանքների մասին:

ա. ԿԴԱՄԾ Շրջանային Համագումարի գործող անդամներն են՝ շրջանային սուպերինտենդենտը, բոլոր հովիվները, շրջանային լիցենզավորված ծառայողները, թոշակում գտնվող նշանակված ծառայողները, լրիվ հաստիքով աշխատակիցները, ԿԴԱՄԾ շրջանային նախագահողը, ԿԴԱՄԾ սուպերինտենդենտը, ով ընտրվել է մինչ համագումարը և համագումարի պահին պաշտոնի մեջ է, երեխաների և մեծահասակների հետ աշխատանքների տեղական և շրջանային ղեկավարները, ԿԴԱՄԾ շրջանային նախագահը և բոլոր տեղական ՆԵԵՄԾ-ի նախագահները,ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի անդամները, Շրջանային Խորհրդատվական Խորհրդի այցելուներից եղող ներկայացուցիչները, տվյալ շրջանի անդամ Նազովրեցու Եկեղեցու բոլոր ներկայացուցիչները:

բ. Եկեղեցական տարեկան ժողովի ժամանակ, յուրաքանչյուր տեղական ԿԴԱՄԾ, ընտրում է համագումարին մասնակցելու համար լրացուցիչ ներկայացուցիչներ, որը կազմում է ԿԴԱՄԾ ուսուցիչների և ծառայողների ընդհանուր թվի 25%-ը:

գ. ԿԴԱՄԾ Շրջանային Խորհուրդը, թեկնածուներ առաջադրելու համար հանդես է գալիս որպես ընտրական հանձանաժողով, որը առաջադրում է երկու անգամ ավել թեկնածուների քանակ, որոնք անհրաժեշտ են ձայների մեծամասնությամբ ընտրվելու համար: Այդ անդամները պետք է լինեն Նազովրեցու Եկեղեցու անդամներ, ունենան ակտիվ մասնակցություն ԿԴԱՄԾ ծառայություններից մեկում, պետք է ներկայացնեն տարբեր տարիքային խմբեր (մանկական, դեռահասների, երիտասարդական, մեծահասակների): Այն դեպքում, եթե ընտրված ներկայացուցիչները չեն կարող ներկա գտնվել, ապա ստացված ձայներին համապատասխան անհրաժեշտ է նշանակել փոխարինող ներկայացուցիչների:

դ. ԿԴԱՄԾ Շրջանային Համագումարի մասնակցող ներկայացուցիչներր կարող են ընտրել շրջանային ԿԴԱՄԾ-ի ծառայության նախագահի, ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի ընտրված անդամների համաձայն Ուղեցույցի 239 պարագրաֆի, ինչպես նաև ընտրվում են ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի պատվիրակներ, որը տեղի է ունենում 4 տարին մեկ անգամ:

ՄԱՍ 2. ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարը: ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարը տեղի է ունենում Գլխավոր Ասամբլեայի կապակցությամբ: Ընտրված ներկայացուցիչները (և հյուրերը) հանդիպում են ոգեշնչվելու, մոտիվացիայի նպատակով, ինչպես նաև հնարավորություն ընձեռնել Կիրակնօրյա Դպրոցի բոլոր ծառայողներին

որակավորումը բարձրացնելու համար, և որպեսզի համաշխարհային մաշտաբով կատարվեն ԿԴԱՄԾ նպատակները:

ա. ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի գործող ներկայացուցիչներն են շրջանային սուպերինտենդենտը, ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարը ներկայացնող շրջանային ներկայացուցիչները, երեխաների և մեծահասակների հետ աշխատանքների շրջանային ղեկավարները, Նազովրեցու Եկեղեցու քոլեջների, համալասարանների և սեմինարիաների դասախոսները, ԿԴԱՄԾ Համաշխարհային Բաժնի տնօրենները և աշխատակիցները:

բ. Յուրաքանչյուր շրջան ընտրում է լրացուցիչ 4 ներկայացուցիչների, որը համապատասխանում է շրջանի գործող անդամների թվին, կամ շրջանում գործող կազմակերպված եկեղեցիների թվի 10% -ին:

գ.ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի ներկայացուցիչներ ընտրելուց, պահպանվում են հետևյալ արարողակարգերը:

1. Ընտրական Հանձնաժողովը բաղկացած է շրջանային սուպերինտենդենտից, ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի նախագահից, ԿԴԱՄԾ Շրջանային Խորհրդի կողմից ընտրված ամենաքիչը 3 ներկայացուցիչից: Նրանք առաջադրում են թվով երեք անգամ ավելի թեկնածուներ, քան նախատեսված է ընտրության համար:

2. Շրջանային Համագումարը ընտրում է ԿԴԱՄԾ բոլոր ծառայություններից հավասար թվով ներկայացուցիչներ և փոխարինողներ ներկայացուցիչներ(ներառյալ երիտասարդների հետ աշխատանքների աշխատակիցներին/ուսուցիչներին): Ընտրված ծառայողները պետք է ակտիվորեն աշխատեն այն ծառայության ոլորտում, որը նրանք ներկայացնում են: Փոխարինող ներկայացուցիչների թիվը պետք է ընդգրկի պատվավոր անդամների փոխարինող ներկայացուցիչներին նույնպես: Չպետք է ընտրվեն նրանք, ովքեր արդեն պատգամավոր են Նազովրեցու Համաշխարհային Համագումարին կամ Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդական Միջազգային Ծառայության Համաշխարհային Համագումարին, որովհետև այդ երեք կոնվենցիաները տեղի են ունենում միաժամանակ:

3. Ներկայացուցիչները ընտրվում են Կիրակնօրյա Դպրոցի Շրջանային Համագումարի գաղտնի քվեարկության ժամանակ, Գլխավոր Ասամբլեան սկսվելուց 16 ամիս առաջ, կամ 24 ամիսների ընթացքում, այն շրջաններում, որտեղ անհրաժեշտ է վիզա ստանալ և իրագործել այլ նախապատրաստություններ:

4. Հնարավորության դեպքում, միևնույն ժամանակ ընտրվում են ծառայողների և այցելուների հավասար քանակությամբ ներկայացուցիչներ (50 % այցելուներից և 50 % ծառայողներից՝հովիվներից կամ լիցենզավորված ծառայողներից): Եթե ընդհանուր ընտրվածների թիվը կենտ է, ապա այցելուներից ընտրվում է ևս մեկ ներկայացուցիչ:

5. Մինչ Համագումարի գումարումը, նոր ընտրվածները և Համաշխարհային Համագումարի անցկացման ժամանակ, ովքեր հաստիքի մեջ են, համարվում են Համագումարի պատվավոր անդամներ:

6. ԿԴԱՄԾ Շրջանային Համագումարի բոլոր ընտրված, գործող ու ներկա գտնվող ներկայացուցիչները, կարող են մասնակցել ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի ներկայացուցիչների ընտրությանը:

7. Ընտրությունների համար բավարար է համարվում ձայների մեծամասնությամբ քվեարկությունը:

8. Այն դեպքում, եթե ներկայացուցիչները չեն կարող ներկա լինել, ապա ստացված ձայներին համապատասխան անհրաժեշտ է նշանակել փոխարինող ներկայացուցիչների:

9. ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի անցկացման ժամանակ, յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է լինի այդ շրջանի Նազովրեցու Եկեղեցու անդամ (Այդ կանոնը չի տարածվում նրանց վրա, ովքեր ապրում են շրջանների սահմանի վրա):

10. Եթե շրջանը ի վիճակի չէ ֆինասավորել ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի բոլոր ներկայացուցիչների համար, ապա ԿԴԱՄԾ Շրջանային Խորհուրդը կարող է ընտրել ներկայացուցիչների այնպիսի քանակ, որը շրջանը ի վիճակի կլինի ֆինանսավորել:

11. Համագումարի աշխատանքներին մասնակցող ներկայացուցիչները, պետք է շրջանից ունենան ֆինանսական աջակցություն, ինչպես դա ունեն ԿԴԱՄԾ և ՆՀՄ-ի պատգամավորները:

12.Եթե ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի ներկայացուցիչների ընտրությունը տեղի չի ունենում Շրջանային Ժողովի ժամանակ, ապա այն անցկացվում է Շրջանային Ասամբլեայի ժամանակ:

ՄԱՍ 3. ԿԴԱՄԾ Համաշխարհային Խորհուրդ

Ա. Նպատակը: Առաջ տանել ԿԴԱՄԾ ամբողջական ծրագիրը:

Բ. Կազմը:

1. ԿԴԱՄԾ Համաշխարհային Խորհրդի կազմը ընդգրկում է մեկ ԿԴԱՄԾ տարածաշրջանային համակարգող, յուրաքանչյուր տարածաշրջանից և ԿԴԱՄԾ Համաշխարհային տնօրենից, ով նախագահող է:

2. ԿԴԱՄԾ տարածաշրջանային համակարգողը պետք է ընտրվի ԿԴԱՄԾ Համաշխարհային Համագումարի տարածաշրջանային ֆորումների ժամանակ, պատգամավորների ձայների մեծամասնությամբ: Յուրաքանչյուր տարածաշրջանային տնօրեն, ԿԴԱՄԾ Համաշխարհային տնօրենի հետ, տարածաշրջանային ֆորումին ներկայացնում է 2 անուն: Յուրաքանչյուր շրջան իր տարածաշրջանային տնօրենի միջոցով, կարող է քննարկելու համար անուններ փոխանցի:

3. ԿԴԱՄԾ տարածաշրջանային համակարգողի պաշտոնակատարը, ով ծառայել է մեկ ժամկետ, կարող է վերընտրվել կողմ կամ դեմ քվեարկությամբ:

Գ. ԿԴԱՄԾ տարածաշրջանային համակարգողի պարտականություններն են.

1. Ներկայացնել իր տարածաշրջանը:

2. Տալ հաշվետվություն ԿԴԱՄԾ Համաշխարհային Խորհրդի տարեկան հանդիպման ժամանակ:

3. Առաջադրել ԿԴԱՄԾ ներկայացուցիչների թեկնածությունը Գլխավոր Խորհուրդ և Գլխավոր Ասամբլեա համաձայն Ուղեցույցի 332.6 պարագրաֆի, «Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտություն Միջազգային Ծառայության տարածաշրջանային համակարգողը (ԿԴԱՄԾ) և ԿԴԱՄԾ Համաշխարհային տնօրենը պետք է Գլխավոր Ասամբլեայի համար նշանակեն մեկ մարդու: Գլխավոր Ասամբլեան պետք է Գլխավոր Խորհրդի համար ընտրի մեկ ներկայացուցչի»:

Հոդված VIII. Լրացումներ և փոփոխություններ

Տվյալ Կանոնակարգերի լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել Գլխավոր Խորհրդի ներկա գտնվող և քվեարկող անդամների ձայների մեծամասնությամբ:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՑՔՆԵՐ

III. ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

906. Ռենտա: Գլխավոր Խորհրդին և եկեղեցու հաստատություններին արգելվում է օգտագործել կտակով նվեր տրված ռենտան, մինչև այն նվիրատուի մահից հետո չի դառնում նրանց իրական սեփականությունը: Նմանօրինակ նվերները անհրաժեշտ է ներդնել ֆոնդերի մեջ, որոնք սովորաբար դիտարկվում են որպես հողային դատարանների կողմից հավատարմագրված միջոցներ: (2005)

907. Պարտք: Ոչ մի հաստատություն չի կարող օգտագործել բարեգործական ներդրումները գրավի միջոցով, պարտք վերցնելու համար: (2017)

908. Աստվածաշնչյան Ընկերակցություն

(1) Հաստատված Աստվածաշնչյան Ընկերակցություններ

Նազովրեցու Եկեղեցին հատուկ ուշադրություն է դարձնում Աստվածաշնչի վրա, որպես Աստծո գրված հայտնություն և մենք հավատում ենք, որ նա միակ միջոցն է Հիսուս Քրիստոսի նոր հետևորդների ներգրավման համար, քանի որ ավելի շատ մարդիկ են ցանկանում ձեռք բերել Աստվածաշունչը, որոշում ենք.

Առաջինը. Գլխավոր Ասամբլեան ամբողջ աշխարհում ամեն կերպ աջակցում է Աստվածաշնչյան Ընկերակցությունները:

Երկրորդ. Մենք աջակցում են Համընդհանուր Աստվածաշնչյան Կիրակիի պահելը, հետևաբար այդ օրը անհրաժեշտ է հավատացյալների ուշադրությունը հրավիրել յուրաքանչյուր քրիստոնիայի կյանքում Աստվածաշնչի դերի վրա:

(2) *Զոհաբերություններ Աստվածաշնչյան Ընկերակցությունների համար*

Որոշում ենք, որ Նազովրեցու եկեղեցին ամեն տարվա դեկտեմբերի երկրորդ կիրակին սահմանում է որպես հատուկ ժամանակ, քննարկելու ամբողջ աշխարհում Աստվածաշնչյան Ընկերակցությունների համար զոհաբերություններ հավաքելու կարևոր հարցը: Աստվածաշնչյան Ընկերակցությունների համար զոհաբերություններ ստացողը պետք է լինի Միացյալ Համաշխարհային Աստվածաշնչյան Ընկերակցությունների անդամ (լիիրավ անդամ կամ անդամության թեկնածուի կարգավիճակ): Այդպիսի անդամի բացակայության դեպքում, զոհաբերությունը փոխանցվում է շրջանի կողմից ընտրված ցանկացած Միացյալ Աստվածաշնչյան Ընկերակցության: Անհրաժեշտ է, որպեսզի զոհաբերությանը մասնակցեն բոլոր եկեղեցիները: Բոլոր եկեղեցիները պետք է խորհրդակցեն իրենց շրջանային գրասնյակների հետ, թե ինչպես կարելի է օգնություն ուղարկել այլ երկրների Աստվածաշնչյան Ընկերակցություններին: (2017)

909. Ուղեցույցի խմբագրման որոշում

Որոշում ենք, որ Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը նշանակում և լիազորություն է տալիս Ուղեցույցի Խմբագրական Հանձնաժողովին, համաձայնեցնել հակասող որոշումները, որոնք կարող են հայտնվել Քսանիններորդ Գլխավոր Ասամբլեայի գրառումներում կապված Ուղեցույցի հետ, ինչպես նաև խմբագրել այս Ուղեցույցի լեզուն և տեքստը, նաև տեքստի նոր լրացումները կատարել այնպես, որ չաղավաղվի նրա միտքը: Սրան համապատասխան, Խմբագրական Հանձնաժողովը լիազորվում է հասկացողության համար դժվար բառերը և արտահայտությունները փոխարինելու ավելի պարզ և հասկանալի արտահայտությունների, ուղղել էջերի, պարագրաֆների և Ուղեցույցի այլ բաժինների համարակալումը, ինչպես նաև պատրաստել գլխացանկը համաձայն Քսանիններորդ

Գլխավոր Ասամբլեայի որոշումների:

Որոշում ենք, որ Ուղեցույցի բոլոր թարգմանությունների հսկողությունը Ուղեցույցի Խմբագրական Հանձնաժողովի պարտականությունն է: (2017)

910. Ուղեցույցում լրացումների վերանայումը: Ուղեցույցի III և IV բաժինների ցանկացած դրույթների լրացումները(պարագրաֆներ 906-933), որոնք չեն վերանայվել չորս տարիների ընթացքում, պետք է Խմբագրական Հանձնաժողովի կողմից փոխանցվեն Գլխավոր Ասամբլեայի համապատասխան հանձնաժողովին, որպեսզի այն վերանայվի Գլխավոր Ասամբլեայի կողմից: (2013)

911. Հանձնաժողովի գործունեության ժամանակահատվածը

Ցանկացած հանձնաժողով, որը ստեղծվել է ցանկացած նպատակով, եթե չի նախատեսվում այլ բան, դադարեցնում է իր գործունեությունը հաջորդ Գլխավոր Ասամբլեայի ժամանակ: (2017)

912. Գլխավոր Ասամբլեայի գործունեությունը

(Գլխավոր Ասամբլեայի Ուղեցույցից 2017 թ.)

ԲԱՆԱՁԵՎԵՐ ԵՎ ԽՆԴՐԱԳՐԵՐ

Կանոն №14. Գլխավոր Ասամբլեային բանաձևերի և խնդրագրերի ներկայացումը: Շրջանային ասամբլեաները, շրջանային ասամբլեայի կողմից լիազորված հանձնաժողովները, տարածաշրջանային խորհուրդները, Գլխավոր Խորհուրդը կամ նրա լիազորված բաժինները, պաշտոնական խորհուրդները կամ համընդհանուր եկեղեցու հանձնաժողովները, Նազովրեցու Համաշխարհային Միսիաների ընկերակցության Համաշխարհային Համագումարի, Նազովրեցու Եկեղեցու Երիտասարդական Միջազգային Ընկերակցության Կոնվենցիան, Գլխավոր Ասամբլեայի հինգ կամ ավել անդամներ, կարող են Գլխավոր Ասամբլեային ներկայացնել բանաձևեր և խնդրագրեր, հետևյալ կանոններով.

ա. Բանաձևեր և խնդրագրերը պետք է տրվեն կրկնակի օրինակներով, հավաքված գլխավոր քարտուղարի կողմից ներկայացված պաշտոնական ձևաչափով:

բ. Ցանկացած բանաձև և խնդրագիր պետք է պարունակի քննարկման թեմա, ինչպես նաև պատգամավորների կամ խմբի անունները, ովքեր ներկայացնում են բանաձևը կամ խնդրագիրը:

գ. Բոլոր այն խնդրագրերը, որոնք պահանջում են ֆինանսական ծախսեր, պետք է պարունակեն արժեքի մոտավոր չափը, որպեսզի այդ գործողությունները կարողանան կատարվել:

դ. Ուղեցույցում փոփոխությունների առաջարկները պետք է ներկայացվեն գրավոր և պետք է պարունակեն Ուղեցույցի մասը/գլուխը, որոնք առաջարկվում են փոփոխության համար, ինչպես նաև փոփոխության համար առաջարկվող տեքստը:

ե. Բանաձևերը և խնդրագրերը պետք է գլխավոր քարտուղարին տրվեն Ասամբլեայի սկսվելուց առաջ մինչև **դեկտեմբերի 1-ը,** որպեսզի գրանցվեն և փոխանցվեն Երաշխավորող Հանձնաժողովին հետագա գործողությունների համար, համաձայն Կանոն №24 և Ուղեցույցի պարագրաֆ 305.1-ի:

զ. Ուղեցույցին չվերաբերվող բանաձևերը պետք է բաշխվեն համաձայն կազմակերպությունների, որոնք ըստ օրենքի պետք է զբաղվեն դրանով:

Կանոն № 15: Ավելի ուշ փոխանցման բանաձևեր և խնդրագրեր: Գլխավոր Ասամբլեայի քննարկման համար ներկայացված բանաձևերը, խնդրագրերը և այլ հարցերը, կարող են փոխանցվել գլխավոր քարտուղարին, որպեսզի նա փոխանցի օրենսդիր հանձնաժողովներին ոչ ուշ, քան **հունիսի 1-ը**, մինչև կգումարվի Ասամբլեան:

Համաշխարհային համագումարներից և կոնվենցիաներից ներկայացված բանաձևերը, որոնք գումարվում են մինչև Գլխավոր Ասամբլեայի նիստերը, պետք է փոխանցվեն քննարկվելու համար:

Կանոն № 16. Ուղեցույցի փոփոխություններ: Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված բանաձևերը փոխանցվում են Խմբագրող հանձնաժողովին, որպեսզի դրանք համաձայնեցվեն Ուղեցույցի այլ դրույթների հետ:

913. Պատմական վայրեր և օբյեկտներ: Շրջանային և տարածաշրջանային ասամբլեաները կարող են իրենց սահմանների ներսում նշանակել պատմական նշանակություն ունեցող վայրեր, որպես Եկեղեցու Պատմական Վայրեր: Նրանից հետո, երբ ինչ-որ տեղ դարձել է պատամականորեն կարևոր վայր, ապա ամենաքիչը պետք է անցնի 50 տարի, որպեսզի այն համարվի Եկեղեցու համար Պատմական Վայր: Դրա հետ մեկտեղ պարտադիր չէ, որպեսզի Եկեղեցու Պատմական Վայրում գտնվեն շենքեր կամ ժամանակահատվածի կառույցներ, որտեղ այդ տեղը ձեռք է բերել պատմական նշանակություն: Ժողովի կամ ասամբլեայի քարտուղարը պետք է գլխավոր քարտուղարին տեղեկացնի նոր Պատմական Վայրերի նշանակման մասին, նրան փոխանցի ասամբլեայի կամ ժողովի համապատասխան որոշման հաշվետվությունը, ինչպես նաև Պատմական Վայրի մասին տեղեկություն և այդ վայրի պատամական նշանակության նկարագիրը:

Շրջանային և տարածաշրջանային ասամբլեաները կարող են խնդրել Գլխավոր Ասամբլեային հաստատել Պատմական Օբկյեկտները, որոնք համընդհանուր եկեղեցու համար ունեն պատմական նշանակություն: Տվյալ դեպքում առաջարկված օբյեկտները սահմանափակվում են եկեղեցու կողմից արդեն նշանակված Պատմական տեղերով: Գլխավոր սուպերինտենդենտը կամ հանձնաժողովը, ովքեր նշանակված են եղել ընտրելու առաջադրված տեղերը, պատմական օբյեկտի կարգավիճակ տալու համար, պետք է զան մեկ մտքի, մինչև Գխավոր Ասամբլեայի քննարկումը: Գլխավոր քարտուղարը պահպանում է Պատմական Տեղերի գրանցամատյանը և համապատասխան ձևով այդ տեղեկատվությունը հասցնում է հասրակությանը: (327.2) (2009)

IV

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՑՔՆԵՐ

914. Օրգանների զոհաբերությունը: Նազովրեցու Եկեղեցին քաջալերում է իր անդամներին, ովքեր չունեն անձնական առարկություններ աջակցելու անատոմիական օրգաններ ընդունելու կամ զոհաբերելու ծրագրերին «կյանքի կտակի», փոխանցման կամ էլ վստահագրի միջոցով: Մենք կոչ ենք անում կարիքավորներին օրգաններ տրամադրելու գործում, պահպանել բարոյականության և էթիկայի կանոնները: (2013)

915. Ռասսայական դիսկրիմինացիա: Նազովրեցու Եկեղեցին ընդգծում է պատմակա- նորեն ձևավորված մեր համոզմունքը, որ քրիստոնեական գթասրտությունը նախատեսված է բոլոր ռասսայի մարդկանց համար: Մենք հավատում ենք, որ մարդիկ Աստծո ստեղծագործությունն են, հետևաբար ստեղծված են որպես արյունակից բարեկամներ:

Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ անկախ ռասսայից, մաշկի գույնից, սեռից

կամ դավանանքից, օրենքի առաջ հավասար են, ներառյալ ընտրական և կրթական իրավունքը, բոլոր հասարակական հաստատություններում մուտքի իրավունք և ապրուստ վաստակելու համար բոլորին հավասար հնարավորություններ, համապատասխան նրանց գիտելիքների և փորձի, չենթարկվելով տնտեսական դիսկրիմինացիայի:

Մեր համայնքներին, մենք կոչ ենք անում աջակցել ռասսաների և ազգերի միջև փոխըմբռնման և ներդաշնակության ամրապնդման ձգտումները: Մենք համոզված ենք, որ մեր եկեղեցու անդամները պետք է առաջնորդվեն Աստվածաշնչյան հորդորով. «հետևեցեք խաղաղության ամենի հետ» (Եբրայեցիս 12:14):

Մեր եկեղեցու յուրաքանչյուր անդամին, մենք կոչ ենք անում խոնարհությամբ գիտակցել սեփական հայացքները և հարաբերությունները այլ ազգերի և ռասսաների նկատմամբ: Դրանով կկատարվի քրիստոնեական նպատակին հասնելու առաջին քայլը. յուրաքանչյուր մարդու լրիվ մասնակցությունը եկեղեցու և ամբողջ համայնքի կյանքում:

Մենք կրկին ընդգծում ենք, որ կյանքի և սրտի սրբագործումը առաքինի կյանքի հիմքն է: Եթե մարդիկ իրենց ամբողջությամբ նվիրում են Քրիստոսին և նա փոխում է նրանց կյանքը, և աճում է քրիստոնեական գթասրտությունը դեպի այլ ռասսաներ և այլ սեռի ներկայացուցիչներ:

Իսկական քրիստոնեության էությունն է. Սիրել Աստծուն մեր ամբողջ սրտով, հոգով և էությամբ, և ընկերոջդ քո անձի պես:

Հետևաբար մենք մերժում ենք ցանկացած ռասսայական և էթնիկ անտարբերության, բացառման, ենթադրության և ճնշման ձև, որպես ծանր մեղք Աստծո և մեր եղբայրների դեմ: Մենք ցավում ենք ամբողջ աշխարհում բոլոր տեսակի ռասիզմի ժառանգության համար, և մենք ձգտում ենք դիմակայել այդ ժառանգությանը ապաշխարությամբ, հաշտությամբ և աստվածաշնչյան ճշմարտությամբ: Մենք ձգտում ենք ապաշխարել այն ամեն գործողության համար, որի մեջ մենք բացահայտ կամ գաղտնի մասնակից ենք եղել ռասիզմի մեղքին, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում և սգալով և խոստովանվելով այդ մեղքը փնտրում ենք ներում և հաշտություն:

Բացի դրանից մենք ընդունում ենք, որ առանց մարդկանց պայքարի չի կարող լինել ոչ մի հաշտեցում և հաղթահարում ցանկացած անձնական, ինստիտուցիոնալ և կառուցվածքային նախապաշարումներ, որոնք ծնում են ռասսայական և էթնիկ ստորացումներ և ճնշումներ: Մենք ամբողջ աշխարհի Նազովրեցիներին կոչ ենք անում հայտնաբերել մարդկանց նկատմամբ կողմնակալ գործողությունները և կառույցները և ձգտել վերացնել դրանք, աջակցել հասնելու ներման ու հաշտեցման ցանկացած հնարավորության, և միջոցներ ձեռնարկել ընդլայնելու նրանց իրավունքները, ովքեր մերժվել են: (2017)

916. Բռնության կանխում: Նազովրեցու Եկեղեցին դեմ է հանդես գալիս յուրաքանչյուր մարդկային ռասսայի ներկայացուցչի դեմ բռնության դրսևորման դեմ, անկախ տարիքից և սեռից, և իր հրապարակումներում և կրթական ծրագրերում կոչ է անում հրապարակորեն գիտակցել բռնության վտանգի մասին:

Նազովրեցու Եկեղեցին հաստատում է իր պատամական դիրքորոշումն այն մասին, որ եկեղեցու կողմից լիազորված բոլոր անձանց արգելված է սեռական անպատշաճ վարքագիծը, ինչպես նաև բռնության այլ ձևերը: Նազովրեցու Եկեղեցում պատասխանատու պաշտոնի նշանակման ժամանակ ենթադրվում է, որ անցյալ վարքը կդրսևորի իրեն նաև ապագայում:

Եկեղեցին պատասխանատու պաշտոններից կհեռացնի նրանց, ովքեր օգտագործել են իրենց դիրքը, գործելու անպատշաճ սեռական գործողություններ կամ այլ բռնություններ, և եթե այդ մարդիկ քայլեր չեն ձեռնարկի կանխելու այդ ամենը ապագայում: Մեղավորի

կողմից զղջման դրսևորումը դեռ չի կարող բավարար հիմք լինել ենթադրելու համար, որ հետագայում նման արարքները չեն կրկնվի, եթե միայն զղջման այդ արտահայտությունները չուղեկցվեն երկարատև ժամանակաընթացքում վարքի տեսանելի փոփոխություններով, որը և ենթադրության հիմք կլինի, որ անպարկեշտ վարքը ապագայում չի կրկնվի: (2009)

917. Աղքատների հանդեպ պատասխանատվության մասին: Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ Հիսուս Քրիստոսը աղքատ մարդկանց նկատամամբ, իր աշակերտներից սպասում է հատուկ վերաբերմունք: Հետևաբար, Նրա Եկեղեցին պետք է ապրի առանց շքեղության, չընդգծելով հարստություն և շքեղություն: Քրիստոսի Եկեղեցին պետք է նվիրի իրեն աղքատներին, հոգս տանի նրանց համար, կերակրի, հագցնի և ապրելու տեղ տա նրանց: Աստվածաշնչում և Հիսուս Քրիստոսի կյանքի օրինակով, Աստված մեզ ցույց է տալիս, որ Նա Իրեն նույնացնում է աղքատների հետ, հոգ է տանում հասարակության կողմից ճնշված և մերժվածների հանդեպ: Մենք նույնպես պետք է մեզ նույնացնենք կարիքավորների հետ, անկեղծ գթասրտությամբ նրանց օգնություն ցուցաբերելով:

Մենք վստահ ենք, որ աղքատ և ճնշված մարդկանց ծառայելը ընդգրկում է ինչպես բարեգործական ակցիաներ, այնպես էլ նրանց հավասար և արդար իրավունքի հնարավորություններ տալու ջանադիր ձգտում: Մենք նաև հավատում ենք, որ աղքատների հանդեպ պատասխանատվության զգացողությունը, բնորոշ է յուրաքանչյուր քրիստոնյայի, ով ունի կենդանի հավատք հիմնված սիրո վրա:

Կյանքը սրբության մեջ անբաժանելի է աղքատներին և չքավորներին ծառայելու հետ, և մեզ առաջնորդում է սեփական կատարելության սահմաններից դուրս աշխարհում ստեղծելու ավելի արդար հասարակություն և աշխարհ: Սրբությունը մեզ չի բաժանում մեր մերձավորների կարիքներից: Այն մեզ օգնում է օգտագործել մեր հնարավորությունները կարիքավորների իրավիճակը բարելավելու համար, և ուղղել անձնական ցանկությունները ուրիշների համապատասխան կարիքների հունի մեջ: (2001)

(Ել. 23:11; Երկր. Օր. 15:7; Սաղ. 41:1, 82:3; Առ. 19:17, 21:13, 22:9; Եր. 22:16; Մատթ. 19:21; Ղուկ. 12:33; Գործք 20:35; 2 Կոր. 9:6; Գաղ. 2:10)

918. Մեռական պատկանելիության տերմինների օգտագործումը: Նազովրեցու Եկեղեցին ողջունում և աջակցում է այն տերմինների օգտագործումը, որոնք մարդկանց մասին հիշեցնելիս ցույց են տալիս երկու սեռը: Հրատարակությունները, ներառյալ Ուղեցույցը և հասարակության կողմից օգտագործված բառերը, պետք է արտացոլեն երկու սեռերի հավասարությունը, ինչպես գրված է պարագրաֆ 501-ում: Փոփոխությունները չպետք է վերաբերվեն Աստվածաշնչի մեջբերումներին և Աստծո մասին հիշատակումներին: (2009)

919. Եկեղեցու և մարդու ազատության մասին: Մտածելով, որ մեր մեծ քրիստոնեական ժառանգությունը պետք է հասկանալի լինի ու պահպանվի, մենք հիշեցնում ենք մեր մարդկանց, որ քաղաքական և կրոնական ազատությունը հիմնված է մարդկային արժանապատվության Աստվածաշնչյան հասկացողության վրա, որը ստեղծվել է Աստծո կողմից և սեփական խղճի անձեռնմխելիության գիտակցությունով: Հետևաբար, մենք խրախուսում ենք մեր մարդկանց մասնակցել Աստվածաշնչյան սկզբունքների պաշտպանությանը, աննահանջ հակառակ հանդես գալ այդ ազատությունը սահմանափակելու փորձերի դեմ:

Քանի որ այդ ազատությունը հաճախ վտանգի է ենթարկվում, մենք աջակցում ենք պետական պաշտոններում այնպիսի մարդկանց ընտրությունները, ովքեր հավատարիմ են այդ սկզբունքներին և պատասխանատվություն են զգում Աստծո և ընտրողների առաջ: Մենք դեմ ենք հանդես գալիս, երբ մեկ կրոնական խմբին տրվում են հատուկ արտոնություններ:

Եվ մենք համերաշխ ենք մեր քույր եղբայրների հետ, ովքեր զրկվել են այդպիսի ազատությունից քաղաքական կամ սոցիալական սահմանափակումների պատճառով:

Մենք հավատում ենք, որ եկեղեցին ունի մարգարեական ծառայություն, և մարդկանց անընդհատ պետք է հիշեցնի, որ «արդարությունը բարձրացնում է ազգը» (Առակաց 14:34): (2017)

920. Մարդու իրավունքների հաստատումը և հռչակումը: Միաժամանակ, որպես Նազովրեցիներ, մեք ընդունում ենք սրբության կյանքի, ամբողջականության և վերականգնողական ապրելակերպի աստվածային կոչին, որտեղ բոլոր բաները և բոլոր ժողովուրդները հաշտված են Աստծո հետ: Ի պատասխան Սուրբ Հոգին բերում է ազատություն մերժվածներին, ճնշվածներին, կոտրվածներին և վիրավորվածներին ինչպես նաև ճշմարտություն, որպեսզի ուղղվի անարդարությունը և դադարեցվի մեղքի պատճառով առաջացած էգոիստական ազդեցությունը, մինչ որ ամեն ինչ կվերականգնվի Աստծո Արքայության մեջ:

Մեր ժառանգության համեմատ և սրբության Վեսլիական աստվածաբանության բնավորությամբ, մենք ընդդիմանում ենք ներկայիս գոյություն ունեցող ժամանակակից ստրկության աղետի, անօրինական և ստիպողական աշխատանքին, մարդկանց և մարմինների առևտրի դեմ:

Եվ համաձայն այդ հաստատումների, մենք որոշում ենք կայացնում, որ միջազգային Նազովրեցու Եկեղեցու ցանկացած անդամ կկատարի՝

1. որպես սրբության ժողովուրդ ճշմարտության մեր ձգտումով, ընդունել որ մենք կանչված ենք ապաշխարելու մեր անցյալի ցանկացած անարդարության համար, փոխելու մեր ներկան և ստեղծել ճշմարիտ ապագա,

2. պատասխանատվության կանչել նրանց, ովքեր ճնշում են ուրիշներին,

3. գթասրտորեն հոգ տանել նրանց համար, ում ստիպել են մասնակցել անօրինական և ստիպողական աշխատանքի, օրգանների առևտրի և սեռական ստրկության մեջ (ինչպես նաև մեզ անհայտ ցանկացած նոր զարգացող ճշումների մեջ),

4. ուշադրությամբ լսել և բարձրացնել չնշվածների ձայները,

5. դատապարտել անարդարությունը և խոնարհությամբ պայքարել անարդարության պատճառների դեմ,

6. որպես համերաշխության նշան գործել քրոջ և եղբոր հետ, ցանկացած սահմանափակումների դեմ, որպեսզի միասին շարժվեն դեպի ազատության, և

7. քայլել միասին նրանց հետ, ով տուժվել է և խոցելի է, գործնական բարի գործերով, որոնք բերում են քավություն, վերականգնում, բժշկություն և ազատություն (1 Հովհաննու 3:8):

Հենվելով մեր քրիստոնեական ժառանգության՝ Վեսլիական սրբության աստվածաբանության վրա, և կոչ անելով սրբության, մենք հաստատում ենք հետևյալ՝

1. Մենք հաստատում ենք, որ արդարության, հաշտեցման և ազատության ձգտումը գտնվում է Աստծո սրբության կենտրոնում, որը արտացոլված է մարդկանց մեջ: Մենք նվիրում ենք մեզ և մեր եկեղեցական ռեսուրսները, որպեսզի չեղյալ համարվի բոլոր տեսակի ստրկության ձևերը, մարդկանց առևտուրը և ճնշելը, ինչպես նաև դիտավորությամբ մասնակցել մարդկանց միություններում, գործողություններում և խոսակցություններում, որոնք ապահովում են հուսադրող այլընտրանք:

2. Մենք հաստատում ենք, որ եկեղեցիները պետք է բարեխղճորեն արձագանքեն Աստծո սուրբ սիրո պոռթկմանը, գործելով Աստծո տիրապետության համար, որպեսզի այն

լինի ավելի տեսանելի: Մենք սուրբ Աստծո առջև կանչված ենք լինելու հավատարիմ վկաներ մտքով, բառերով ու գործերով: Աստված լսում է նրանց լացը, ովքեր ճշված են, բանտարկված են բանտում, ծախված է ստրկության, և ովքեր ճնշվում են տնտեսական, քաղաքական, էգոիստական և չար սիստեմների և մարդկանց կողմից: Աստված կոչ է անում արձագանքել այդ ամենին խոնարհությամբ, կարեկցանքով և արդարությամբ:

3. Մենք հաստատում ենք, որ ճշմարիտ գործողությունները, իրենց մեջ ընդգրկում են կարեկից հոգատարություն նրանց հանդեպ, ովքեր գտնվում են մեր անմիջական շրջապատում, ինչպես նաև պատմելու անարդարության մասին և դատապարտել այն ուժերը, որոնք դրանք առաջացնում են: Արդարությամբ շարժվելու ցանկությունը և գթասրտություն սիրելը հաճախ Աստծո ժողովրդին հանգեցնում է կոնֆլիկտի ժամանակակից աշխարհի իշխող ուժերի և իշխանությունների հետ: Աստծո արդարությունը մեզ պարզապես կոչ չի անում հավասարության, մեզանից տարբեր մարդկանց համբերելու, կամ էլ փոխել ճնշվածների դերը ճնշողներով: Հիսուսի օրինակով մենք կանչված ենք արդարության, երբ մենք պատրաստ ենք մեր անձերը տալ հանուն ուրիշների:

4. Մենք հաստատում ենք, որ քրիստոնեական արդարադատությունը պահանջում է խորը նվիրվածություն, անձնական և հավաքական խոստովանություն և ապաշխարության ու ներման քայլեր:

5. Մենք հաստատում ենք, որ մենք կյանքի բոլոր ոլորտներում պետք է հանդես գանք արդար ու հուսադրող գործելակերպով: Բոլոր մարդկանց նկատմամբ արտացոլելով Քրիստոսի կարեկցող հույսը և սերը, մենք մեզ նույնականացնում ենք այն պայմանների հետ որոնք բերում են անմարդկային հանգամանքների: Մենք կխոսենք նրանց փոխարեն, ով լսված չէ, և կգնանք բոլոր տուժվածների հետ առաջարկելով այն գործնական քայլերը, որոնք կբերեն քվություն, վերականգնում, բժշկություն և ազատություն:

6. Մենք հաստատում ենք, որ մենք կանչված ենք լինելու ազգ, ով իր մեջ կարտացոլի անարդարության ու ճնշվածությանը հակառակ լավատե- սական այլընտրանք: Մենք կանչված ենք սուրբ կյանքերով արտացոլելու Սուրբ Աստծուն, արդարություն բերելու, ըստ մարդկանց մտադրությունների և հանգամանքների, ինչպես նաև սիստեմների և տարբեր ազգերի համար: Չնայած մենք չենք կարող վերջ դնել բոլոր տառապանքներին, սակայն որպես Քրիստոսի մարմին մենք պարտավոր ենք ամբողջ ստեղծագործության վերականգնման համար բերել Աստծո սրբությունը, որպես քավչական և բժշկող գործունեու- թյուն:

7. Մենք հաստատում ենք, որ միասին համագործակցելով, մենք պետք է խորը մտածենք, աշխատենք ամբողջականորեն և մասնակցենք իրադարձություններին տեղական և գլոբալ մակարդակներով: Բարդ պրոբլեմները ծնում են ժամանակակից ստրկություն, հետևաբար անհրաժեշտ է ընդունել բազմաթիվ որոշումներ:

Այս ամենը տեղի կունենա այն պատճառով, թե ով ենք մենք քրիստոնեական համայնքներում, և այն բնականաբար կարտացոլվի մեր արած գործով:

Հետևաբար մենք խոստանում ենք.

1. Գործելով առանձին և միասին, որպես անհատներ և միություններ, համապատասխան մեր Վեսլիական սրբության վարդապետության, ծառայել կարեկցանքով և մարգարեական մարտահրավեր նետել ճնշող սիստեմներին:

2. Աջակցե՛լ, ոգևորե՛լ, մատակարարել ռեսուրսներով, պլանավորել և միասին մասնակցել արդյունավետ, իմաստուն և մշտական գործունեություններում:

3. Քրիստոսին կենտրոնում ունենալով գործել որպես համայնք, լցվելով Հոգու զորությամբ, որպես հույսի շարժում:
4. Խորապես մտածել, սպասումով աղոթել և գործել արիությամբ:

Դրա համար մենք ապրում և աշխատում ենք, մինչև որ Աստծո Արքայությունը կգա "ինչպես որ երկնքում է այնպես էլ երկրի վրա " (2017)

921. Երեխաների և երիտասարդների արժեքավորությունը: Աստվածաշունչը պատվիրում է յուրաքանչյուր քրիստոնյայի. «Դո բերանդ բաց համրի համար, և ամեն անխնամների դատի համար» (Առակաց 31:8): Շեմա-ն (Երկրորդ Օրինաց 6:4-7) մեզ կոչ է անում Աստծո օրհնությունը փոխանցել մեր երեխաներին: Սաղմոս 78:4. «Մենք նրանց չենք թաքցնում որդիներիցը, եկող սերունդին պատմում ենք Տիրոջ գովասանքը, և Նրա զորությունը ու հրաշքները որ արավ»: Հիսուսը դա հաստատում է Ավետարան ըստ Ղուկասի 18:16: «Թույլ տվեք երեխաներին Ինձ մոտ գալ, և մի արգելեք դրանց, որովհետև այդպիսիններինն է Աստծո Արքայությունը»:

Այդպիսի աստվածաշնչյան հեռանկարին, Նազովրեցու Եկեղեցին որպես պատասխան ընդունում է, որ երեխաները կարևոր են Աստծո համար, և Նրա Արքայությունում ունեն առաջնահերթություն: Մենք հավատում ենք, որ Աստված ուղղորդում է հոգ տանելու բոլոր երեխաներին. սիրել, կերակրել, պաշտպանել և աճեցնել, ուղղորդել և տեր կանգնել նրանց: Դա է Աստծո ծրագիրը, որպեսզի մենք երեխաներին ծանոթացնենք փրկության կյանքին և շնորհքով աճին: Փրկությունը, սրբությունը և աշակերտությունը հնարավոր են և պետք է լինեն երեխաների կյանքում: Մենք ընդունում ենք, որ երեխաները ոչ թե միջոց են, այլ Քրիստոսի Մարմնի լիիրավ մասնակիցներ են: Երեխաները աշակերտներ են, որոնք սովորում են, իսկ ոմանք սպասում են կրթությանը:

Այսպիսով երեխաներին և նրանց ծնողներին ամբողջական և վերափոխող ծառայությունը, յուրաքանչյուր տեղական եկեղեցում կլինի առաջնահերթ, եթե կան հետևյալ վկայությունները.

- Երեխայի համար ապահովել արդյունավետ, լիարժեք և ամբողջական ծառայություն ֆիզիկական, մտավոր, էմոցիոնալ, սոցիալական և հոգևոր բաղկացուցիչներով:
- Սոցիալական արդարության արդիական հարցերով քրիստոնեական տեսակետների ձևավորում, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները:
- Երեխաների համար ծառայություն պետք է գտնվի հավատքի համայնքի և միսիայի ծառայության կենտրոնում:
- Աշակերտություն երեխաների համար, և նրանց նախապատրաստել, որ նրանք կարողանան ուրիշներին սովորեցնել:
- Ծնողներին նախապատրաստել, որ նրանք կարողանան դաստիարակել և հոգևորապես ձևավորել իրենց երեխաներին:

Քանի որ եկեղեցու կրթական բաժինները (կիրակնօրյա դպրոց, քոլեջներ, համալսարաններ և սեմինարիաներ) սովորողներին նախապատրաստում են առաջնորդության համար, ապա նրանք վճռական դեր են խաղում, որպեսզի իրագործեն

երեխաների արժեքավորության մասին միսիան: Նրանք տեղական եկեղեցիների և ընտանիքների հետ միասին պատասխանատու են, որպեսզի անդամներ պատրաստեն հոգևորականությունից և այցելուներից, դաստիարակելու երեխաների և երիտասարդների նոր սերունդ, տալու նրանց աստվածաշնչյան և աստվածաբանական կրթություն, որպեսզի նրանք կարողանան լուծել այն ոլորտի բարդույթները, որոնք կապված են ավետարանչության, աշակերտության և նրանց հասարակությունը փոխակերպելու հետ:

Նազովրեցու Եկեղեցին իրենից ներկայացնում է տարբեր սերունդների հավատքի համայնք, որտեղ գնահատում և սիրում են երեխաներին և երիտասարդներին, որտեղ նրանց ծառայում են, և նրանք ներգրավված են Եկեղեցական ընտանիքում տարբեր միջոցներով և մեթոդներով, որտեղ նրանք ըստ իրենց տարիքի, զարգացման ընդունակություններով և հոգևոր պարգևներով, հնարավորություն ունեն ծառայելու ուրիշներին: (2009)

922. Պատերազմ և Զինվորական Ծառայություն: Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ խաղաղությունը իդեալական պայման է մարդկության գոյության համար: Քրիստոնեական Եկեղեցին պարտավոր է օգտագործել իր ազդեցությունը գտնելու հնարավորություններ, որոնք կկարողանային օգնել աշխարհի ազգերին ապրել խաղաղության մեջ և իրենց գործունեությունը նվիրել խաղաղության մասին Բարի Լուրի քարոզչությանը, որը տրված է Քրիստոսի կողմից: Սակայն մենք գիտակցում ենք, որ աշխարհում որտեղ մենք ապրում ենք, չարի ուժերը ակտիվ բախման մեջ են քրիստոնեական իդեալների հետ: Հետևապես կարող է առաջանալ միջազգային ծայրահեղ իրավիճակ, որը ազգին կհարկադրի դիմել պատերազմի պաշտպանելու իր իդեալները, ազատությունը և գոյությունը: Խաղաղության գործին նվիրված լինելով նազովրեցու Եկեղեցին նաև ընդունում է, որ քրիստոնյան առաջին հերթին ենթարկվում է Բարձյալ Աստծուն:

Եկեղեցին չի ցանկանում կաշկանդել իր անդամների խիղճը, պատերազմի ժամանակ զինվորական ծառայության մեջ մասնակցելու հարցում և հավատում է, որ քրիստոնյաները որպես քաղաքացիներ միշտ պետք է ծառայեն իրենց ժողովրդին, եթե դա համատեղելի է քրիստոնեական հավատքին և ապրելակերպին: Մենք նաև ընդունում ենք, որ քրիստոնեական ուսմունքը տարածելու և երկրի վրա խաղաղություն հաստատելու ձգտումով, մեր համայնքի որոշ անդամներ կարող են հրաժարվել զինվորական ծառայության որոշակի ձևերից, ելնելով կրոնական և էթիկական համոզմունքներից: Հետևաբար Նազովրեցու Եկեղեցին պահանջում է այդ անդամներին ազատել զինվորական ծառայությունից, ինչպես դա կիրառվում է այլ ճանաչված կրոնական կազմակերպության անդամների համար, ովքեր ընդհանրապես մասնակցություն չեն ունենում զինվորական ծառայության մեջ: Նազովրեցու Եկեղեցին իր գլխավոր քարտուղարի միջոցով, պետք է հաստատի պաշտոնական ցուցակ, որտեղ նշված են անձինք, ներկայացնելով Նազովրեցու Եկեղեցու համայնքի անդամության ապացույցներ, կարող են հաստատել իրենց դիրքորոշումները, որպես զինվորական ծառայությունից կրոնական և էթիկական համոզմունքների պատճառով հրաժարվողներ: (2017)

923.Արարում: Նազովրեցու Եկեղեցին հավատում է աշխարհի արարման աստվածաշնչյան ավանդապատությանը («Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» Ծննդոց 1:1): Մենք բաց ենք ստեղծագործության հետ կապված գիտական բացատրություններին և միաժամանակ դեմ ենք տիեզերքի և մարդու ստեղծագործության

ցանկացած տեսությանը, որտեղ Աստված որպես Արարիչ մերժվում է (Եբրայեցիս 11:3): (պարագրաֆներ1, 5.1, 7) (2017)

924. Հոգատարություն Արարչության նկատմամբ: Ունենալով մեծ հարգանք Աստվածային արարչագործությանը, մենք հավատում ենք, որ պետք է ձգտենք ցուցադրելու լավ ծառաների որակներ և օգնենք պահպանելու Նրա աշխատանքը: Ընդունելով, որ մեզ հանձնարարված է պահպանել մեր շրջապատի ամբողջականությունը, մենք ընդունում ենք այդ գործունեության անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը: (2009) (Ծննդոց 2:15, Սաղմոս 8:3–9; 19:1–4; 148)

925. Սուրբ Հոգով մկրտվելու ապացույցներ: Նազովրեցու Եկեղեցին հավատում է, որ Սուրբ Հոգին վկայում է վերստին ծննդի և սրտի մաքրման հետագա աշխատանքի կամ Սուրբ Հոգով լցվելով ամբողջական սրբագործման մասին:

Մենք հաստատում ենք, որ ամբողջական սրբագործման կամ Սուրբ Հոգով լցվելու աստվածաշնչյան վկայություններից մեկը, դա ադամական մեղքից հավատքի միջոցով սրտի մաքրագործումն է և զետեղված է Գործք Առաքելոց գրքում15: 8-9. « Եվ սրտագետ Աստվածը վկայություն տվավ նրանց, Սուրբ Հոգին տալով նրանց, ինչպես մեզ: Եվ ոչինչ խտրություն չարավ մեր և նրանց մեջ, հավատքով սրբելով մեր սրտերը»: Այդ սրբագործությունը դրսևորված է Հոգու պտուղներում, սուրբ կյանքի մեջ. «Բայց Հոգու պտուղն է սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն: Այդպիսիների դեմ օրենք չկա: Բայց նրանք, որ Քրիստոսինն են իրենց մարմինը խաչը հանեցին կիրքերով և ցանկություններով միասին» (Գաղատացիներին 5: 22-24):

Այն պնդումը, որ Սուրբ Հոգով մկրտվելու ապացույց է համարվում հատուկ կատարված կամ ենթադրյալ ֆիզիկական վկայություն, կամ հատուկ «աղոթքի լեզու», հակասում է եկեղեցու պատմական և աստվածաշնչյան դիրքորոշմանը: (2009)

926. Պոռնոգրաֆիա: Պոռնոգրաֆիան չարիք է, որը քանդում է հասարակության բարոյականությունը: Տպագրական և վիզուալ արտադրանքը անթույլատրելի է, քանի որ այն արժեզրկում է մարդու արժանապատվությունը, հակասում է սրբազան ամուսնության մասին աստվածաշնչյան հասկացողությունը և սեռական կյանքի բարերարությունը:

Մենք հավատում ենք, որ ստեղծված ենք Աստծո պատկերով, մինչդեռ պոռնոգրաֆիան արժեզրկում, շահագործում և ստորացնում է տղամարդկանց, կանանց և երեխաներին: Պոռնոգրաֆիայի արտադրությանը դրդում է հարստանալու մոլուցքը, այն ընտանիքի թշնամին է, որը տանում է բռնության և հանցագործությունների, ապականում է միտքը և պղծում է մարմինը:

Որպեսզի Աստծուն պատիվ տանք, որպես Արարչի և Փրկչի, մենք կոչ ենք անում ակտիվորեն հակազդել պոռնոգրաֆիային բոլոր օրինական միջոցներով, և գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի Քրիստոսին բերենք նրանց, ովքեր ներգրավվել են այդ չարիքի մեջ: (1997)

927. Քրիստոնեական համեստությունը հագուստի մեջ: Մենք գիտակցում ենք, որ ուժեղանում է անհամեստ հագուստի օգտագործման միտումը հասարակական վայրերում: Մենք հիշեցնում ենք «համեստություն, որը վերաճում է սրբության» սկզբունքի մասին, և քրիստոնյաներին կոչ ենք անում օրինակ լինել ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ: (2017)

928. Բարեկեցություն: Աստվածաշունչը բոլոր հավատացյալներին կոչ է անում պահպանել ճիշտ հավասարակշռությունը, կապված առողջության և անձի ամբողջականության հետ, որը փոխակերպվում է Սուրբ Հոգու ուժով: Անկշտությունը

մարմնին, հասարակությանը և հոգևոր կյանքին վնասելու սպառողական գործելակերպ է: Մինչ գիրությունը կարող է լինել գենետիկական հակման, մշակութային կամ ֆիզիկական սահմանափակումների հետևանք, մյուս կողմից անկշտությունը արտացոլում է կյանքի սպառողական ապրելակերպի վերաբերմունքը դեպի Աստծո բարի արարչությանը, ուտելիքին, ռեսուրսներին և փոխհարաբերություններին, որոնք վնասում են առանձին մարդկանց և ընդհանուր հասարակությանը: Քրիստոնեական գործելակերպը մեզ կոչ է անում ջանք գործադնել պահպանելու առողջությունը և մեր մարմնի աշխատունակությունը, որպես Սուրբ Հոգու տաճար, և ապրել խելամտորեն օգտագործելով Աստծո կողմից տրված ռեսուրսները և փոխհարաբերությունները: (2009)

(Առ.23:19-21; Մատթ. 11:19; 23:25; 1 Կոր. 9:27; Գաղ. 5:23; Փիլ.3:19; Տիտոս 1:8; 2:12; Եբ. 12:16; 2 Պետ. 1:6)

929. Կախվածություն առաջացնող թունավոր նյութերի չարաշահումը: Նազովրեցու Եկեղեցին դիմակայում է ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահմանը, որպես հասարակության սպառնալիք: Մենք կոչ ենք անում մեր եկեղեցու անդամներին, բռնել ակտիվ և բացահայտ պայքարի դիրք, կործանարար սովորությունների և չարաշահող հարաբերությունների դեմ տարվող կրթական ծրագրերում մասնակցելու գործում, որոնք բացահայտում են այդ չարաշահումների վտանգավորությունը, ինչպես նաև կոչ ենք անում վկայել նմանօրինակ գործողությունների անհամատեղելիությունը քրիստոնեական փորձի և սրբության կյանքի հետ: (2013)

930. Ալկոհոլի դեսոցիալիզացիա: Նազովրեցու Եկեղեցին բացահայտ պաշտպանում է այն գաղափարը, որ հասարակության կողմից ալկոհոլի օգտագործումը մշակույթի մաս չէ: Մենք կոչ ենք անում քաղաքացիական, գործարար, արհեստավարժ, սոցիալական, մասնավոր կազմակերպություններին նպաստելու այնպիսի գործողությունների, որոնք կհակազդեն գովազդին և զանգվածային լրատվամիջոցներին, եթե վերջիններս ձգտում են հասարակության տեսակետով ընդունելի դարձնել «ալկոհոլի օգտագործման մշակույթը»: (2013)

931. Ծխախոտի օգտագործումը և գովազդը: Նազովրեցու Եկեղեցին, իր անդամներին կոչ է անում ծխախոտի օգտագործմանը դեմ հանդես գալ, որը վնասակար է առողջությանը և սոցիալական չարիք է: Մեր պատմական տեսակետը հիմնված է Աստծո Խոսքի վրա, որը մեզ հիշեցնում է, որ մենք պետք է պահպանենք մեր մարմինները որպես՝ Սուրբ Հոգու տաճար (1 Կորնթացիս 3:16-17; 6:19-20):

Մեր հակադրվելը ծխախոտի օգտագործման յուրաքանչյուր ձևին աջակցվում է բժշկական հետազոտությունների արդյունքով, հաստատվում է բազմաթիվ սոցիալական և կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ աշխարհում առողջապահության բաժինների կողմից: Նրանք ցուցադրում են, որ ծխելը քայքայում է առողջությունը, առաջացնելով օրգանիզմի նորմալ գործունեության փոփոխություններ, որոնք ունենում են լուրջ և անդառնալի հետևանքներ:

Մենք ընդունում ենք, որ մեր երիտասարդությունը ենթարկվում է միլիոնավոր դոլարներով վճարված ծխախոտի և ալկոհոլի գովազդի ազդեցությանը: Մենք միանում ենք ցուցանակներում, ամսագրերում, ռադիոյով և հեռուստատեսությամբ ալկոհոլի և ծխախոտի գովազդների լրիվ արգելմանը: (2013)

932. ՄԻԱ/ՁԻԱ (Մարդու իմունային անբավարարություն/Ձեռքբերովի իմունային ախտանիշ): 1981 թվականից մեր աշխարհը բախվում է առավել կործանարար հիվանդության հետ, ինչպես ՄԻԱ/ՁԻԱ-ն: Ուշադրություն դարձնելով ՄԻԱ/ՁԻԱ-ից

տուժվածներին, քրիստոնեական կարեկցությունը մեզ ստիպում է ստանալ ՄԻԱ/ՁԻԱ-ի մասին ամբողջական տեղեկատվություն: Հիսուսը կուզենար, որ մենք այդ տուժածների նկատմամբ Նրա սիրո և հոգատարության արտահայտության մջոցները գտնեինք, աշխարհի յորաքանչյուր երկրում: (2013)

933. Մասսայական տեղեկատվության միջոցների օգտագործումը: Նախ և առաջ տեղեկատվությամբ մենք պետք է կիսվենք հարգանքով: Ինչպես բոլոր միջանձնական հարաբերություններում, մենք համարում ենք, որ մեր մասսայական տեղեկատվության միջոցները նույնպես պետք է սրբագործված սրտերի արտացոլանքը լինեն, որին էլ մենք ձգտում ենք: Հոգևորականությունը և այցելուները պետք է հիշեն, թե ինչպես է նրանց գործունեությունը ազդում Քրիստոսի և Նրա Եկեղեցու պատկերի և համայնքներում նրա առաքելության վրա: Մեր գործունեությունը պետք է լինի կյանք հաստատող և աջակցող, և պետք է ուղղված լինի բարձրացնելու բոլոր մարդկանց: (2017)

(Առակաց 15:4, 15:28, 16:24; Ժողովող 5: 2-4; Մատթեոս 15: 11; Գաղտացիս 5: 13-15; Եփեսեցիս 4: 29; Կողոսացիս 4: 62; 2 Տիմոթեոս 2: 16; Հակոբոս 3: 1-13)